

ISSN 0135-0536

Պ Ա Տ Մ Ա Բ Ա Ն Ա Մ Ի Ր Ա Կ Ա Ն
Ն Ա Ա Դ Ե Ս
ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ

1

2020

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА

Պ Ա Տ Մ Ա Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն
Ի Տ Ա Ն Դ Ե Ս
ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ

2020, 1 (213)

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА

ԵՐԵՎԱՆ

2020

ЕРЕВАН

Հանդեսը լույս է տեսնում 1958 թվականից
Հիմնադիր խմբագիր՝ Մ. Գ. Ներսիսյան

Журнал выходит с 1958 года
Редактор-основоположник М. Г. Нерсисян

Խ մ ր ա գ ր ա կ ա ն ի խ ո ղ ո յ ն ի ղ

Ն ա խ ա գ ա հ՝ ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Գ լ խ ա վ ո ղ ի խ մ ր ա գ ի ղ՝ ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Գ լ խ ա վ ո ղ ի խ մ ր ա գ ի ղ տ Ե ղ ա կ ա լ՝ ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Ա ն ղ ա մ ն Ե ղ՝ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԼԵՎՈՆ, ԱՎԵՏԻՍՅԱՆ ՊԱՎԵԼ, ԲԱՐԴԱԿՉՅԱՆ ԳԵՎՈՐԳ
(ԱՄՆ), ԴԵՎՐԻԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ, ԶԵԿԻԱՆ ԼԵՎՈՆ (Իտալիա), ԿԱՏՎԱԼՅԱՆ ՎԻԿՏՈՐ,

ՀԱՍՐԱԹՅԱՆ ՄՈՒՐԱԴ, ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԵՆՐԻԿ, ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ, ՄՈՎՍԻՍՅԱՆ
ԱՐՏԱՎ, ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԱՄՎԵԼ, ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ ՎԱՀԱՆ, ՏԵՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ (ԱՄՆ),
ՏՈՆԱՊԵՏՅԱՆ ԱՆԱՀԻՏ (Ֆրանսիա)

Редакционная коллегия

Председатель – АШОТ МЕЛКОНЯН

Главный редактор – АНУШАВАН ЗАКАРЯН

Заместитель главного редактора – АЭЛИТА ДОЛУХАНИЯН

Члены – АБРАМЯН ЛЕВОН, АВЕТИСЯН ПАВЕԼ, АСРАТЯՆ ՄՈՐԱԴ,

ԲԱՐԴԱԿՅԱՆ ԳԵՎՈՐԳ (ՄԱ), ԴԵՎՐԻԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ, ԶԵԿԻԱՆ ԼԵՎՈՆ (Իտալիա),

ԿԱՏՎԱԼՅԱՆ ՎԻԿՏՈՐ, ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ, ՄՈՐԱԴՅԱՆ ՍԱՄՎԵԼ, ՕԳԱՆԵՍՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ,

ՕԳԱՆԵՍՅԱՆ ԳԵՆՐԻԿ, ՏԵՐ-ԳԵՎՈՆԴՅԱՆ ՎԱՀԱՆ, ՏԵՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ (ՄԱ),

ՏՈՆԱՊԵՏՅԱՆ ԱՆԱՀԻՏ (Ֆրանսիա)

Պատմաբանասիրական հանդես, 2020

© Историко-филологический журнал, 2020

Հապավումը՝ ՊԲՀ

Аббревиатура – ИФЖ

I

«ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ»-Ի ՀԻՄՆԱԴԻՐ ԽՄԲԱԳԻՐԸ
(Ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանի ծննդյան 110-ամյակի առթիվ)*

ՄԿՐՏԻՉ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Բանալի բառեր՝ Մ. Գ. Ներսիսյան, «Պատմաբանասիրական հանդես», հայոց պատմություն, հայ-ուսական հարաբերություններ, ազգային-ազատագրական շարժում, նարոդնիկական խմբակներ, կազմակերպություններ, Ցեղապանություն, ուսական կողմնորոշում:

Ականավոր պատմաբան, հայագետ, արևելագետ, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս Մկրտիչ Գեղամի Ներսիսյանը հայ պատմագիտության այն ներկայացուցիչներից է, որի գիտական ժառանգությունն իր արդիական նշանակությունն այսօր էլ չի կորցրել: Ստեղծագործելով թե՛ խորհրդային և թե՛ հետխորհրդային ժամանակաշրջանում՝ նա կարողացավ ստեղծել պատմագիտական մնայուն արժեքներ, որոնք ուղենիշ դարձան պատմաբանների մի քանի սերունդների համար:

Մ. Ներսիսյանը ծնվել է 1909 թ. հոկտեմբերի 28-ին Հայաստանի Աշտարակի շրջանի Փարպի գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի գյուղում, ապա ուսումը շարունակել է Երևանի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցում, որն ավարտել է 1927 թ.: Նույն տարում ընդունվել է Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) պատմաբանասիրական ֆակուլտետը, որն ավարտել է 1931 թ.: 5 տարի գիտական աշխատող է եղել Կուսակցության պատմության ինստիտուտում, այդ ընթացքում 1 տարի սովորել է Մոսկվայի փիլիսոփայության, գրականության և պատմության ինստիտուտի ասպիրանտուրայում: 1937–1941 թթ. աշխատել է ԽՍՀՄ ԳԱ պատմության և նյութական կուլտուրայի ինստիտուտի հայկական մասնաճյուղում՝ նախ որպես գիտաշխատող, ապա՝ տնօրեն: Թեկնածուական ատենախոսությունը նա պաշտպանել է 1939 թ., դոկտորական ատենախոսությունը՝ 1946 թ.: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին. վիրավորվել է և վերադարձել Երևան: 1944–1945 թթ. վարել է ԵՊՀ-ի պատմության ֆակուլտետի դեկանի, այնուհետև՝ 1944–1946 թթ., ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի (ՀԳԱ) պատմության ինստիտուտի փոխտնօրենի պաշտոնները: 1946–1950 թթ. եղել է Կուսակցության պատմության ինստիտուտի փոխ-

* Ներկայացվել է 18. XI. 2019 թ., գրախոսվել է 12. II. 2020 թ., ընդունվել է տպագրության 25. II. 2020 թ.:

տնօրենը: 1950 թ. Մ. Ներսիսյանն ընտրվել է ՀԳԱ-ի իսկական անդամ և ակադեմիայի հասարակական գիտությունների գծով փոխնախագահ: Մի քանի տարի եղել է ԳԱ խմբագրական-հրատարակչական խորհրդի նախագահ, հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար: 1958 թ. Մ. Ներսիսյանը հիմնադրել է «Պատմաբանասիրական հանդես»-ը: 1961 թ. նրան շնորհվել է ՀԽՍՀ գիտություն վաստակավոր գործչի կոչում: 1966–1977 թթ. եղել է ԵՊՀ-ի ռեկտոր, ապա՝ Պատմության ինստիտուտի Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնի վարիչ:



Մ. Ներսիսյանի գիտական գործունեությունը սկզբնավորվում է 1930-ական թվականներից, երբ Խորհրդային Միության մեջ փաստացի արդեն իշխում էր ստալինյան ռեժիմը, որն ամենախիստ վերահսկողություն էր հաստատել հասարակական կյանքի բոլոր ոլորտների, այդ թվում՝ գիտության վրա: Նույնիսկ այս միջոցառում պատմաբանն աշխատում էր գիտական օբյեկտիվիզմի սկզբունքներով ներկայացնել Հայ ժողովրդի պատմության տարբեր հիմնախնդիրները: Այդ շրջանում Ներսիսյանը հրապարակեց մի շարք աշխատություններ՝ հոդվածներ և գրքույկներ հեղափոխական

շարժումների, Դաշնակցության, Մայիսյան ապստամբության, «Սպարտակ» կազմակերպության, Ստեփան Շահումյանի, Բաքվի կոմունարների վերաբերյալ¹:

Հետագայում 1990 թ., «Պատմաբանասիրական հանդես»-ին տված հարցազրույցում, խոսելով այս շրջանի մասին՝ Ներսիսյանը նշում էր. «Հայտնի է, որ այդ տարիների խորհրդահայ պատմագիտության, ինչպես նաև հասարակական գիտությունների մյուս բնագավառներում իշխում էին գուհիկ սոցիոլոգիզմի դոգմաները: Հայ ժողովրդի պատմության հարցերը հիմնականում, մեծ մասամբ լուսաբանվում էին ոչ թե գիտական դիրքերից, այլ ղեկավար պաշտոնական շրջաններում ընդունված որոշումների ոգով: Շատ դեպքերում արհամարհվում էին փաստերը. կարևորը զգոնությունը և քաղաքական-ներկուսակցական հաշիվներն էին: Առանձնապես նենգափոխվում էին Հ. Հ. Դաշնակցության պատմության հետ կապված հարցերը: Բնորոշ է, որ 1928 թ. ՀԿԿ Կենտկոմի պլենումի ընդունած հատուկ որոշմամբ դաշնակցություն կուսակ-

¹ Առաջին մասսայական-հեղափոխական շարժումները Հայաստանում (Մայիսյան ապստամբություն): Նյութեր և փաստաթղթեր: Կազմ. Կ. Ղազարյան և Մ. Ներսիսյան, Երևան, 1932, «Դաշնակցական դրախտավայրը» կամ սովի և մահվան աշխարհը, Երևան, 1932, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում. — «Երիտասարդ բոլշևիկ» (Երևան), 1932, № 5, էջ 29–42, № 6, էջ 51–59, «Սպարտակի» ապստամբության առթիվ. — «Լենինյան ուղի» (Երևան), 1932, № 6–7, էջ 92–98, Բաքվի 26 կոմունարները. — «Խորհրդային Հայաստան», 20. IX. 1939:

ցուցվումը համարվեց բուրժուա-նացիոնալիստական, ֆաշիստական կուսակցություն: Հասկանալի է, որ այս պայմաններում դաշնակցութ-
յան մասին գրող բոլոր հեղինակները միայն հայհոյում էին նրան: Դժբախտաբար ես ևս տուրք տվեցի այդ ընդհանուր տրամադրությունը: 20–24 տարեկան հասակում մեր օրթողոքս ուսուցիչների ազդեցության տակ, նրանց ղեկավարությամբ լույս ընծայվեցին իմ մի շարք գրվածք-
ները, որոնցում կրկնվում էին օրենքի ուժ ստացած հակադաշնակ-
ցական դոգմաները: Պետք է նկատել, որ ես, ինչպես և այլ սկսնակներ, դեռևս աղոտ գաղափար ունենալով շատ հարցերի մասին, ազնվորեն հավատում էինք մեր գրածներին: Բայց իմ սխալը ես հասկացա արդեն 30-ական թթ. վերջերին, որի հետևանքով դեռ այդ շրջանից դադարեցի գրադվել դաշնակցական կուսակցության պատմության հետ կապված հարցերով: Ինձ համար պարզ դարձավ, որ հնարավոր չէր ճշմարիտ խոսք ասել այդ կուսակցության մասին: Սկսեցի գրադվել հայ ժողովրդի XVIII և XIX դարերի պատմության հարցերով»²:

Այս կապակցությամբ ակադեմիկոս Վ. Բարխուդարյանը դիպուկ նշում է. «Անտարակույս, Մ. Ներսիսյանը (ինչպես և նրա սերնդակից մյուս մասնագետները) տուրք պիտի տար ժամանակի խիստ քաղաքա-
կանացված սոցիալ-դասակարգային գաղափարախոսությունը: Սակայն Մ. Ներսիսյանի մոտ այդ նկատվում է գերազանցապես երիտասար-
դական տարիներին գրած հոդվածներում և դրանք որակ չեն կազմում: Նկատի պետք է առնել նաև այն պարագան, որ առանց դրա հնարավոր չէր լինի գրադվել պատմագիտական վերոհիշյալ հրատապ հարցերով»³: Խորհրդային շրջանում պատմաբաններից և, ընդհանրապես, հասարա-
կագետներից խստորեն պահանջվում էր առաջնորդվել դասակարգային մոտեցման սկզբունքով, ու գրաքննությունը հազիվ թե թույլ տար որևէ մասնագետի դուրս գալ այդ կաղապարից:

1935 թ. Ներսիսյանը հրատարակեց «Նոյեմբերյան հեղափոխությունը Հայաստանում» աշխատությունը, որը, սակայն, խիստ քննադա-
տություն ենթարկվեց գուհիկ սոցիոլոգների կողմից: Նա դասվեց, այս-
պես կոչված, այն «սպեցիֆիկ պատմաբանների» շարքին, որոնք ստեղ-
ծել են մի ամբողջ գրականություն, որտեղ Հայաստանի հեղափոխական շարժումների և երկրում խորհրդային իշխանության հաստատելու պատմությունը կտրված է Անդրկովկասի և Ռուսաստանի հեղափոխա-
կան շարժումների պատմությունից»⁴: Ըստ այդմ «այդ գրքում... ան-
տեսվում ու լուռվում է մատնվում անդրկովկասյան և ընդհանուր կու-
սակցական կենտրոնների ղեկավար դերը, ընկերներ Լենինի և Ստալինի դերը Անդրկովկասի և Հայաստանի կուսակցությունների հեղափոխա-
կան շարժումների ու աշխատանքի ղեկավարման գործում»⁵:

² Հարցազրույց Մ. Գ. Ներսիսյանի հետ. – ՊԲՀ, 1990, № 4, էջ 175:

³ Վ. Բ. Բարխուդարյան. Մկրտիչ Գեղամի Ներսիսյան (գիտնականն ու հասարակական գործիչը). – ՊԲՀ, 1999, № 1, էջ 17:

⁴ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 818, ց. 1, գ. 961, թ. 12:

⁵ Նույն տեղում, թ. 14:

Արդյունքում Մ. Ներսիսյանին և Կուսակցության պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող Գ. Սարգսյանին վտարեցին կոմկուսի շարքերից, ու նրանց առաջադրված մեղադրանքը բնորոշ էր այդ ժամանակաշրջանի համար: Դրանում նշվում էր. «Այս երկու անձնավորություններն էլ կուսակցության մեջ էին սողոսկել թաքցնելով իրենց կեղտոտ անցյալը և երկերեսանիորեն մնալով կուսակցության մեջ, քայքայիչ աշխատանք էին տանում:

Մկրտիչ Ներսիսյանը կուսակցությունից թաքցրել է իր ծնողների հակահեղափոխական լինելը (հայրը 1920 թ. ակտիվ կերպով կռվել է խորհրդային իշխանության դեմ, եղել է առևտրական, ձայնագուրկ և մինչև 1928 թ. շահագործել է ուրիշի աշխատանքը):

Աշխատելով Կուսպատմության ինստիտուտում, Ներսիսյանը, կատարելով ժողովրդի թշնամի Խանջյանի պատվերը, ջանացել է ամեն կերպ կեղծել, Ֆալսիֆիկացիայի ենթարկել Հայաստանի կուսակցական կազմակերպությունների ու քաղաքացիական կռիվների պատմության վերաբերյալ փաստաթղթերը»⁶:

Մ. Ներսիսյանը թեկնածուական ատենախոսությունն Անդրկովկասի նարոդնիկական խմբակների գործունեության վերաբերյալ 1940 թ. տպագրվեց առանձին գրքով: Աշխատության մեջ, հենվելով նորահայտ արխիվային վավերագրերի, ժամանակակիցների հուշերի և այլ սկզբնաղբյուրների վրա, հեղինակը ցույց է տալիս, որ 1870–1880-ական թվականներին Անդրկովկասում մասնավորապես Թիֆլիսում, նույնպես ստեղծվել են նարոդնիկական խմբակներ ու կազմակերպություններ, որոնց հիմնադիրները Ռուսաստանի համալսարանական կենտրոններում սովորող հայ և վրացի երիտասարդներն էին: Այս կապակցությամբ Մ. Ներսիսյանն այն միտքն է առաջ քաշում, որ Անդրկովկասում ևս առկա էին սոցիալ-տնտեսական ու քաղաքական նույն պայմանները, որոնք նպաստավոր միջավայր էին ստեղծում նարոդնիկական խմբակների ու կազմակերպությունների հանդեպ գալու համար, և այս առումով նարոդնիկությունը չպետք է դիտել բացառապես ռուսական երևույթ: Միաժամանակ Ներսիսյանը բացահայտում է այն իրողությունը, որ, ի տարբերություն ռուս նարոդնիկների, որոնց համար առաջնային էին սոցիալ-տնտեսական խնդիրները, հայ իրականության մեջ նարոդնիկական գաղափարների որոշակի էվոլյուցիա տեղի ունեցավ, և հայ նարոդնիկներն իրենց գործունեության մեջ չեշտը դնում էին ազգային-ազատագրական պայքարի, Արևմտյան Հայաստանն օսմանյան լծից ազատագրելու վրա: Մ. Ներսիսյանի այս ուսումնասիրությունը նույնպես խիստ քննադատության ենթարկվեց, թեպետ աշխատությունը թե՛ գիտական շրջանառության մեջ դրված նորահայտ փաստաթղթերով և թե՛ առաջ քաշած տեսակետներով այսօր էլ չի կորցրել իր գիտական նշանակությունը:

Ինչպես ասվեց, քննադատությունները պայմանավորեցին, որ Մ. Ներսիսյանն իր գիտական հետաքրքրությունների շրջանակը մասամբ

⁶ Նույն տեղում, թ. 25–26:

⁷ Մ. Գ. Ներսիսյան. Նարոդնիկական խմբակներն Անդրկովկասում, Երևան, 1940:

փոխեր և ուշադրությունը կենտրոնացնեն XVIII–XIX դդ. հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումների, ինչպես նաև հայ-ուսական հարաբերությունների պատմության ուսումնասիրության վրա: 1946 թ. պաշտպանած դոկտորական ատենախոսությունը «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ» թեմայով⁸ նույնպես առաջ բերեց ծայրահեղ ձախ մարքսիստների դժգոհությունը: Որոշ քննադատներ նրան մեղադրեցին այն բանում, որ «հետևելով բուրժուա-նացիոնալիստական պատմագրության տրադիցիաներին ... իր դոկտորական դիսերտացիայում, հակառակ մարքսիզմ-լենինիզմի այն դրույթին, որ կապիտալիզմի ժամանակաշրջանի ազգային շարժումները իրենց էությունով բուրժուական են, հայ ազգային շարժումները փորձում է ներկայացնել իբրև ժողովրդական դեմոկրատական շարժումներ: Չկարողանալով իր այդ սխալը, հակագիտական տեսակետը հիմնավորել կոնկրետ փաստերով, նա դեմոկրատ է մկրտում այնպիսի բուրժուական նացիոնալիստների, ինչպիսիք են Պատկանյանը, Բաֆֆին և ուրիշները: Պրոֆեսոր Մ. Ներսիսյանը գովաբանում է բուրժուական նացիոնալիզմի գաղափարախոս Գրիգոր Արծրունուն և դրանով իսկ ապակողմնորոշում սովետական երիտասարդ պատմաբանների մի մասին, լուրջ վնաս հասցնելով նրանց գաղափարական դաստիարակությանը»⁹:

Բնականաբար, գիտական այս մեծարժեք հետազոտությունը, որը պատմագիտության մեջ բնութագրվում էր առաջադրված հարցերի համակողմանի և հիմնավոր քննարկմամբ, նոր ու համարձակ եզրահանգումներով, այդ տարիներին չէր կարող հրատարակվել. այն լույս տեսավ միայն 1955 թ.:

Խնդրո առարկա աշխատության մեջ Մ. Ներսիսյանը նախ ներկայացնում է արևմտահայերի սոցիալ-տնտեսական ու քաղաքական ծանր դրությունը և բազմաթիվ փաստերով հիմնավորում, որ թուրքական բռնապետությունն է արգելակում արևմտահայերի բնականոն զարգացումը: Օսմանյան կայսրությունում թե՛ հայերը և թե՛ ոչ թուրք ու քրիստոնյա ժողովուրդները տնտեսական ճնշումներից բացի ենթարկվում էին ազգային և կրոնական հայածանքների, որը հատկապես սուր բնույթ ընդունեց XIX դ. կեսերին: Օսմանյան իշխանությունները ձգտում էին վերացնել Զեյթունի, Սասունի և այլ շրջանների կիսանկախ իշխանությունները, ամեն կերպ արգելակել արևմտահայերի ազգային միավորումը: Այդ նպատակով նրանք խոչընդոտում էին հայերի մշակութային կյանքի զարգացումը և Արևմտյան Հայաստանի հայաշատ վայրերում վերաբնակեցնում այլազգի, հատկապես իսլամ դավանող զանգվածների:

Հայահալած այս քաղաքականության սաստկացումը Մ. Ներսիսյանն իրավացիորեն կապում է պանթուրքիստական ձգտումներ ունեցող Օսմանյան կայսրության բուրժուազիայի պատմական ասպարեզ գալու հետ: Մյուս կողմից՝ Բալկաններում ազգային-ազատագրական պայքարի ծավալումը հանգեցրեց օսմանյան լծից Հունաստանի ու Սերբիայի

⁸ ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 981, թ. 15:

⁹ Նույն տեղում, գ. 961, թ. 32: Փաստաթղթում քննադատների անունները չեն հիշատակվում:

ազատագրմանը և Թուրքիայի դիրքերի թուլացմանը տարածաշրջանում: Իսկ դա իր հերթին վերջինիս ստիպում էր երկյուղ կրել կայսրութ-
յան արևելյան շրջաններում բալկանյան օրինակի տարածումից և ավե-
լի սաստկացնել ազգային ճնշումների քաղաքականությունը¹⁰:

Այստեղից էլ Մ. Ներսիսյանը եզրակացնում է, որ հայ ժողովրդի ազ-
գային-ազատագրական պայքարը Օսմանյան կայսրությունում ստեղծ-
ված իրավիճակի, արևմտահայերի նկատմամբ կիրառվող սոցիալ-տնտե-
սական, ազգային և կրոնական հալածանքների հետևանք էր: Ընդ որում՝
հեղինակը շեշտում է հետևյալ հանգամանքը. արևմտահայ ազատագրա-
կան ու ինքնապաշտպանական պայքարի շարժիչ ուժը գյուղացիութ-
յունն էր, որը ձգտում էր ինչպես սոցիալական, այնպես էլ ազգային
ազատագրության: Անվանի պատմաբանի այս հիմնավոր դիտարկումով
ժխտվեցին թուրք պատմաբանների այն տեսակետները, որ, իբր, արևմ-
տահայերի պայքարը իրավական և սոցիալական հիմքեր չունեի, այլ
դրսից հրահրված երևույթ էր: Միաժամանակ հերքվեցին թուրքական
պատմագիտության այն պնդումները, որ արևմտահայերը Օսմանյան
կայսրությունում գտնվում էին բարեկեցիկ վիճակում, օգտվում էին լայն
իրավունքներից և հիմքեր չունեին դժգոհելու: Այս առումով հեղինակը
նույնպես հիմնավորապես հակադրվում է պատմության թուրք կեղծա-
րարներին և Օսմանյան Թուրքիայում բարենորոգումների հնարավորութ-
յունները գնահատում իրատեսորեն, այն է՝ 1830 թ. հաթիթը շերիֆը,
արևմտահայերի՝ 1860 թ. ընդհանուր Ազգային ժողովի կողմից ընդունած
և 1863 թ. օսմանյան կառավարության հաստատած Ազգային սահմանա-
դրությունը «թղթի կտորներ» էին, որոնք իրավական տեսակետից չէին
կարող թեթևացնել արևմտահայության վիճակը: Սահմանադրությունը,
որ փաստացի գործել էր Կ. Պոլսում, Զմյուռնիայում ու մի քանի գավառ-
ներում, ուներ սոսկ կրոնադավանաբանական, մշակութային-կրթական
երկրորդական նշանակություն և, բնականաբար, չէր կարող թեթևացնել
բացարձակ իրավազուրկ արևմտահայության դրությունը: Այս կապակ-
ցությունը Մ. Ներսիսյանը, հենվելով փաստական հարուստ նյութի և
բազմաթիվ տվյալների հիման վրա, ցույց է տալիս, որ XIX դ. երկրորդ
կեսին Օսմանյան Թուրքիայի կիրառած ազգային ճնշումների քաղաքա-
կանությունը նախորդ տարիների¹¹ համեմատությամբ էլ ավելի է խստա-
նում: Դա դրսևորվեց, մասնավորապես, Զեյթունի և Սասունի դեմ նոր
«կտրուկ միջոցների» կիրառումով, արևմտահայերի դեմ ուղղված քաղա-
քական ու վարչական որոշումներով, հայկական բնակավայրերում մահ-
մեղական բնակչության տեղաբաշխումով, 1860–1880-ական թվականնե-
րին Վանի և Ալաշկերտի շրջաններում հայկական ջարդերի կազմակերպ-
մամբ, այդ նպատակով քրդական ցեղերի օգտագործմամբ ու համանման
այլ քայլերով¹²:

¹⁰ Մ. Գ. Ներսիսյան. Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրք-
ական բռնապետության դեմ 1850–1870 թթ., Երևան, 1955, էջ 79:

¹¹ Նույն տեղում, էջ 74–75:

¹² Նույն տեղում, էջ 76:

Մենագրության մեջ Մ. Ներսիսյանը զգալի տեղ է հատկացնում արևմտահայերի ինքնապաշտպանական պայքարի կոնկրետ դրվագներին և լուսաբանում 1862 թ. Ջեյթունի ապստամբությունը, դրա ընթացքը, գեյթունցիների տարած հաղթանակները, նրանց սխրագործությունները: Հեղինակն իրավացիորեն նշում է, որ ապստամբությունը դուրս եկավ գուտ տեղական նշանակության շրջանակներից և լայն արձագանք գտավ թե՛ Արևմտյան Հայաստանում, թե՛ Արևելյան Հայաստանում: Արևմտահայությունը, նրա մտավորականության աչքի ընկնող ներկայացուցիչները՝ Հ. Սվաճյանը, Ս. Թազվորյանը, Մ. Պեշիկթաշյանը և ուրիշներ, նյութական ու բարոյական մեծ աջակցություն ցույց տվեցին գեյթունցիներին:

Աշխատության մեջ Մ. Ներսիսյանի առաջ քաշած այն տեսակետը, որ ոչ թե Արևմտյան Հայաստանում ծայր առած ազգային-ազատագրական շարժումները պատճառ դարձան Օսմանյան կայսրության հայահալած, ջարդարարական քաղաքականությանը, այլ, ընդհակառակը, շարժումներն այդ քաղաքականության հետևանքներն էին, հակադրվում է թուրք պատմաբանների կեղծ, ոչ հիմնավոր տեսակետին, որոնք մինչև հիմա էլ պնդում են, որ հայերի ապստամբությունները ստիպեցին թուրքական իշխանություններին խստացնել նրանց նկատմամբ քաղաքականությունը:

Նշենք, որ 1850–1870-ական թվականների ազգային-ազատագրական շարժման ընթացքը և ազդեցությունը վերլուծելիս Մ. Ներսիսյանը քննադատում է հայտնի պատմաբան Լեոյին: Վերջինս իր «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը» աշխատության մեջ XIX դ. երկրորդ կեսի ազատագրական շարժման սկիզբը կապում է բացառապես նարոզնիկական շարժման հետ և շարժման պատճառները տեսնում ոչ թե արևմտահայության նկատմամբ կիրառվող անմարդկային ճնշումների ու կեղեքումների մեջ, այլ, իբրև, դրսից եկած գաղափարների և ազդեցությունների արդյունք: Իր մեկ այլ աշխատության մեջ Մ. Ներսիսյանը ցույց է տալիս, որ Լեոն թե՛ «Նոջայական կապիտալում», թե՛ «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը» աշխատության մեջ և թե՛ իր հուշերում XVIII–XIX դդ. ազատագրական շարժումները գնահատել է գոեհիկ սոցիոլոգիզմի ու ազգային նիհիլիզմի դիրքերից¹³: Այս քննադատությունը, սակայն, չի խանգարել Մ. Ներսիսյանին բարձր գնահատելու Լեոյի գիտական ժառանգության մնայուն արժեքները:

«Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850–1870 թթ.» աշխատության մեջ շատ կարևոր է նաև Ներսիսյանի այն եզրահանգումը, որ Արևմտյան Հայաստանում թուրքական բռնապետության դեմ պայքարը չպետք է մեկուսացված դիտել: Այն ոչ միայն արևմտահայերի, այլև ողջ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարն էր, նրա ազգային զարթոնքի արտահայտությունը: Բնութագրական է, որ ազատագրական շարժման գաղափարախոսության ձևավորման մեջ մեծ դեր խաղացին արևելահայ նշանավոր գործիչներ Մ. Նալբանդյանը, Բաֆֆին, Ռ. Պատկանյանը: Օրինաչափ

¹³ Մ. Գ. Ներսիսյան. Հայ ժողովրդի նոր պատմության էջերից (հոդվածների ժողովածու), Երևան, 1982, էջ 263:

է, որ աշխատութեան մեջ հեղինակը զգալի տեղ է հատկացրել 1860–1870-ական թվականներին թե՛ Արևմտյան և թե՛ Արևելյան Հայաստանում ստեղծված տարբեր կազմակերպություններին ու խմբակներին, որոնք հետագայում հիմք դարձան ազգային կուսակցությունների ձևավորման համար:

Մ. Ներսիսյանի խնդրո առարկա աշխատութեամբ Հայ պատմագիտութեան մեջ սկիզբ դրվեց Արևմտյան Հայաստանի նոր պատմութեան գիտական ուսումնասիրութեանը: Այն բարձր գնահատականի արժանացավ ոչ միայն ՀԽՍՀ-ում, այլև միութենական գիտական պարբերականներում¹⁴:

Ի դեպ, անհրաժեշտ է հաշվի առնել աշխատութեան հրատարակման ժամանակ քաղաքական այն մթնոլորտը, որը պատմաբաններին պարտադրում էր չչեղվել գաղափարախոսական կաղապարներից: Դեռևս 1946 թ. ընդունվեց Համամիութենական կոմկուսի Կենտրոնական կոմիտեի որոշումը և Կենտկոմի քարտուղար Ա. Ժդանովի զեկուցումը «Ձվեզդա» ու «Լենինգրադ» ամսագրերի մասին: Խստագույն պահանջներ դնող այդ փաստաթղթերում գաղափարական աշխատանքները դրվում էին «պրոկրուստյան մահիճի» մեջ¹⁵: Այս առումով Վ. Բարխուդարյանն իրավացիորեն նշում է, որ շիկացած նման մթնոլորտում, մանավանդ նույն տարում Մ. Ներսիսյանի դոկտորական ատենախոսութեան պաշտպանությունը, իսկ ավելի ուշ գրքի հրատարակությունը պետք է դիտել որպես գիտական խիզախում¹⁶:

Սորհրդահայ պատմագրութեան մեջ գիտական շրջանառութեան մեջ դնելով Հայ ժողովրդի ազատագրական շարժման թեման՝ Ներսիսյանը վերլուծութեան է ենթարկել այդ շարժման առավել աչքի ընկած ներկայացուցիչների գործունեությունը: Այս առումով բնութագրական է ազգային հերոս Անդրանիկին նվիրված հոդվածը, որը նույնպես կարելի է համարել գիտական սխրանք՝ հաշվի առնելով այն հրատարակելու ժամանակաշրջանը¹⁷: Վերլուծութեան ենթարկելով Անդրանիկի գործունեությունը՝ պատմաբանը տալիս է նրա դիպուկ և հիմնավորված բնութագիրը, որը իր գիտական նշանակությունը պահպանել է առ այսօր: Բարձր գնահատելով զորավարի անձնվեր հայրենասիրությունը, նրա քաջությունը և խիզախությունը՝ Ներսիսյանը գրում է. «Հարագատ ժողովրդի իղձերով ու հույսերով ապրող քաջ գարահիսարցին սակայն ունեցել է վրիպումներ և մոլորություններ: Նա, օրինակ, միշտ չէ, որ հստակ պատկերացում ուներ իր ժողովրդի ազատագրութեան ճիշտ ուղու մասին, միշտ չէ, որ ըմբռնել է բարեկամի ու հովանավորի դիմակ հագած մեծ տերություններ

¹⁴ Տե՛ս, օրինակ, Е. К. Саркисов, В. Г. Меликсетян. Рец. на кн.: М. Г. Нерсисян. Освободительная борьба армянского народа против турецкого деспотизма. 1850–1870 гг. Ереван, 1955, 531 с. (на арм. яз.).– «Вопросы истории» (М.), 1957, № 1, с. 150–151.

¹⁵ Վ. Բ. Բարխուդարյան. նշվ. հոդվ., էջ 11–12:

¹⁶ Նույն տեղում, էջ 12:

¹⁷ Մ. Գ. Ներսիսյան. Ժողովրդական հերոսը (Զորավար Անդրանիկի ծննդյան 100-ամյակի առթիվ).– «Սովետական Հայաստան», 25. II. 1965:

րի խարդախ քաղաքականությունը և այլն: Բայց Անդրանիկը ո՛չ քաղաքագետ էր և ո՛չ էլ դիվանագետ: Չնայած այն բանին, որ նա օժտված էր առողջ դատողությամբ և ժողովրդական իմաստության բարեմասնություններով, այնուամենայնիվ, նրա համար երբեմն դժվար էր ճիշտ կողմնորոշվել հայկական ազատագրական շարժման և ժամանակի միջազգային հարաբերությունների բավական բարդ ու խճճված հարցերում: Նա մարտիկ էր, պարտիզան ու զորավար: Նրա կոչումն էր կազմակերպել զինված ելույթներ բռնակալների դեմ ու զենքը ձեռքին կոչվել ժողովրդի ազատության համար: Եվ այդ նա անում էր չզերազանցված հերոսությամբ ու վարպետությամբ»¹⁸:

Պաշտոնական մամուլում ազգային հերոսի դերը բնութագրող Ներսիսյանի այս հորվածի հրապարակումից հետո, ըստ էության, հնարավոր դարձավ, որպեսզի Անդրանիկի մասին սկսեն գրվել աշխատություններ:

Մ. Ներսիսյանն առաջինն էր, որ անդրադարձավ հայ ժողովրդի պատմության այնպիսի կարևոր հիմնահարցի, ինչպիսին Հայոց ցեղասպանությունն էր: 1966 թ. ուսերեկնով լույս տեսավ Մեծ եղեռնին նվիրված փաստաթղթերի և նյութերի մեծարժեք ժողովածուն¹⁹: Մինչ այս աշխատության հրատարակումը, Մ. Ներսիսյանն այն թեզն էր առաջ քաշում, որ «օսմանյան պետության գոյությունը անհամատեղելի էր և հակադիր էր հպատակ բնիկ ժողովուրդների գոյության իրողության հետ»: Օսմանյան կայսրության փլուզման դեպքում թուրքերն այլ ելք չէին տեսնում, եթե ոչ կամ որոշակի տարածքի բնակչության թուրքացում, կամ իսլամացում, կամ էլ՝ ազատագրական պայքարի ելած բնակչության ֆիզիկական բնաջնջում: Եվ հենց այդ քայլին գնացին երիտթուրքական իշխանությունները նոր թուրքիա ստեղծելու համար:

Ընդհանրապես, ժողովածուն պարունակում է արխիվային բազմաթիվ նորահայտ վավերագրեր մեծ պետությունների բարձրաստիճան պաշտոնյաների՝ արտաքին գործերի նախարարների, դեսպանների ղեկուցազրեր, կոտորածների ակնառես տարբեր ազգությունների ներկայացուցիչների վկայություններ և այլ նյութեր: Դրանք քաղված են անգլիական, գերմանական, ֆրանսիական, ռուսական, թուրքական, արաբական, հայկական աղբյուրներից: Մ. Ներսիսյանը ժողովածուի առաջաբանում վերլուծության է ենթարկում և բացահայտում թուրքերի կողմից իրագործված պատմության մեջ առաջին ցեղասպանության դրդապատճառները, մեծ տերությունների հանցագործ անտարբերությունն ու նաև անուղղակի մասնակցությունը Հայոց ցեղասպանությանը: Ժողովածուն կարևոր քայլ էր լայն հանրությանը ներկայացնելու երիտթուրքական կառավարության ոճրագործությունները խաղաղ բնակչության նկատմամբ և հայ ժողովրդի մեծ ողբերգությունը: Օրինաչափ էր, որ ժողովածուի հրատարակումը լայն արձագանք գտավ նաև այլազգի ընթերցողների շր-

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов. Сост. М. Г. Нерсисян, Р. Г. Саакян. Редактор и автор предисловия М. Г. Нерсисян. Ереван, 1966.

Ղանում, իսկ արտասահմանյան մամուլը շատ բարձր գնահատեց այս աշխատությունը՝ շեշտելով ժողովածուն կազմողների զուտ գիտական և օբեկտիվ վերաբերմունքը թուրք-հայկական հարաբերությունների հարցի նկատմամբ. «Մ. Ներսիսյանն ընդգծում է այն միտքը, որ իրագործված ցեղասպանությունը եղել է սոսկ օսմանյան կառավարության քաղաքականության արդյունք, որը, օգտվելով կրոնական և ազգային ֆանատիզմից, ձգտում էր ոչնչացնել ազգային փոքրամասնությանը, մինչդեռ իրենք իսկ թուրք բնակիչները բազմաթիվ առիթներով օգնում էին իրենց հայ համաքաղաքացիներին»²⁰:

Հայոց ցեղասպանության հարցում Մ. Ներսիսյանի կարծիքը բնութագրելու համար բերենք նրա խոսքերը. «Հայերի մասսայական կոտորածների ողջ պատասխանատվությունը ընկնում է սուլթան Աբդուլ Համիդի կառավարության և հատկապես երիտթուրքերի վրա: Հեղինակը միաժամանակ ցույց է տալիս այն երկերեսանի քաղաքականությունը, որով հանդես էին գալիս եվրոպական մեծ տերությունների ու Միացյալ Նահանգների քաղաքագետները»²¹: Ընդհանրապես, ժողովածուի նկատմամբ հետաքրքրությունն այնքան մեծ էր, որ նոր նյութերով հարստացված վերահրատարակվեց 1983 թ., այնուհետև 1991 թ. թարգմանվեց հայերեն:

Մյուս հիմնահարցը, որն ակադեմիկոս Մ. Ներսիսյանը շրջանառություն մեջ դրեց հայ պատմագիտության մեջ, դա հայ-ռուսական հարաբերությունների խնդիրն էր: Ուշագրավ է, որ նա այս հարցով սկսեց զբաղվել հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունն ուսումնասիրելուն զուգահեռ՝ խորապես ըմբռնելով այս երկու հիմնախնդիրների միջև առկա փոխկապակցվածությունը և ներքին տրամաբանական կապը: Ուսումնասիրության օբեկտ դարձնելով հայ ժողովրդի պատմության նոր ու նորագույն շրջանները՝ Մ. Ներսիսյանը վերլուծության է ենթարկում մեր ժողովրդի պատմական ճակատագրում մի կողմից Ռուսաստանի, մյուս կողմից՝ Թուրքիայի միանգամայն տարբեր դերն ու նշանակությունը:

1944 թ. հրատարակվեց ռուս գորավար, գեներալիսիմոս Ա. Սուվորովին և, ընդհանրապես, հայ-ռուսական հարաբերություններին նվիրված Մ. Ներսիսյանի աշխատությունը, որը հետագայում լրացումներով լույս տեսավ ռուսերեն²²: Հեղինակը, հենվելով բազմաբնույթ փաստաթղթերի վրա, հանգամանորեն ներկայացնում է Սուվորովի կողմից 1778 թ. Ղրիմից դեպի Հարավային Ռուսաստան (ներկայիս Դոնի Ռոստովի շրջան) հայ բնակչության գաղթի կազմակերպումը: Մեկ այլ աշխատության մեջ²³ իրավացիորեն շեշտում է, որ դա ամենևին չվերածվեց բռնագաղթի, ինչպես բազմիցս եղել է հայ ժողովրդի պատմական ճակատագրում:

²⁰ ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 977, թ. 6:

²¹ Նույն տեղում:

²² Մ. Ներսիսյան. Սուվորովը և ռուս-հայկական հարաբերությունները 1770–1790 թթ., Երևան, 1944, ն ու յ ն ի՝ Ա. В. Суворов и русско-армянские отношения в 1770–1790 гг. Ереван, 1981.

²³ М. Г. Нерсисян. Из истории русско-армянских отношений, в 2-х кн., кн. 1. Ереван, 1956.

տագրում: Այս տեսակետը հիմնավորելու համար, նա բազմաթիվ փաստեր է բերում Սուվորովի զբառումներից, այլ սկզբնաղբյուրներից ու նշում, որ «անհիմն է որոշ պատմաբանների պնդումը, թե Ղրիմից 1778 թ. քրիստոնյաների դուրս բերումը կրել է բռնի բնույթ»²⁴: Մյուս կողմից, սակայն, Մ. Ներսիսյանը Ղրիմից հայերի գաղթը ներկայացնում է իրատեսորեն՝ առանց այն գովաբանելու: Նա գրում է. «Գաղթականները ինչպես Ղրիմից Ազովի նահանգ գնալու ճանապարհին, այնպես էլ նրանց համար հատկացված նոր վայրերում գտնվելու սկզբնական շրջանում շատ տառապանքներ, զրկանքներ ու կորուստներ կրեցին: Ցարական կառավարությունը, իր էությունը հավատարիմ, զգալի օգնություն չցուցաբերեց: Ավելին, ժողովուրդը հայտնվեց ծայրահեղ ծանր վիճակում և մեծ զոհեր կրեց ոչ միայն սովից, ցրտից և համաճարակներից, այլև պաշտոնյաների սանձարձակություններից»²⁵: Իշխանությունները նույնիսկ պահանջեցին, որպեսզի Ռուսաստանի սահմանն անցնող գաղթականներն իրենց ապրանքների համար, բացի անասուններից, մաքս վճարեն: Տեղեկանալով այդ մասին՝ Ա. Սուվորովը դիմում է Եկատերինա երկրորդի Ֆավորիտ Գ. Պոտյոմկինին՝ որոշումը մեղմացնելու, վեց ամսով կամ մեկ տարով հետաձգելու, իսկ չքավորների համար այն չեղյալ հայտարարելու խնդրանքով²⁶: Հեղինակը ցույց է տալիս, որ Սուվորովը, վերահասցեագրելով հայերի խնդրագրերը, իր կողմից ոչ միայն միջնորդում էր բավարարելու նրանց խնդրանքը, այլև բողոքները համարում էր արդարացի, հիմնավորված և քննադատում էր պետական մեծ նշանակություն ունեցող միջոցառումների նկատմամբ շատ պաշտոնյաների անտարբեր վերաբերմունքը²⁷:

Բարձր գնահատելով Սուվորովի մարդասիրական այս վերաբերմունքը Ղրիմահայ գաղթականների նկատմամբ՝ անվանի պատմաբանը միաժամանակ իրավացիորեն նշում է, որ «ցարական Ռուսաստանի պայմաններում Սուվորովի հաճախակի դիմումներն ու միջնորդությունները հօգուտ գաղթականների չէին կարող քիչ թե շատ շոշափելի արդյունքներ ունենալ և հական դեր խաղալ նրանց ճակատագրում: Ավելին, ինքը Սուվորովը, լինելով ցարական գեներալ և տիրող դասակարգի վարած քաղաքականության իրականացնողներից մեկը, այդ հարցերը չէր դնում լայն և սկզբունքային: Միամիտ կլինեք կարծել, թե նրան հատկապես խորն էին հուզում գաղթականների կարիքներն ու ճակատագրերը: Սակայն, չնայած դրան, չի կարելի հերքել այն փաստը, որ մեծ գորավարը, ի տարբերություն այլ գեներալների և բարձրաստիճան անձանց, որոշ փորձեր էր կատարել Ղրիմի գաղթողների ծանր ճակատագիրը դյուրացնելու համար»²⁸:

Մ. Ներսիսյանի ներկայացմամբ Ա. Սուվորովի ակտիվ մասնակցությունը հայ-ռուսական հարաբերություններում դրսևորվեց 1780 թ., երբ

²⁴ Նույն տեղում, էջ 24–25:

²⁵ Նույն տեղում, էջ 28:

²⁶ Նույն տեղում, էջ 29–30:

²⁷ Նույն տեղում, էջ 30–34:

²⁸ Նույն տեղում, էջ 34–35:

նա բանակցություններ էր վարում հայ ազատագրական շարժման հարցերի հետ կապված հայտնի գործիչներ Հովսեփ Արղուժյանի և Հովհաննես Լազարյանի հետ: Սակայն այս անգամ, ինչպես դիպուկ նկատում է Մ. Ներսիսյանը, հարցը վերաբերում էր ոչ թե հայկական մեկ գաղութին, այլ ամբողջ հայ ժողովրդին. «Այդ կապակցությամբ մեծ գործարարի առջև դրվել էին լայն մասշտաբի խնդիրներ»²⁹: Նշելով, որ 1870-ական թվականների վերջին և 1880-ական թվականների սկզբին Ռուսաստանը իր գործերը դեպի Անդրկովկաս ուղարկելու ծրագրեր էր մշակում՝ Ներսիսյանը տալիս է այդ փաստի ճիշտ գնահատականը՝ գրելով. «Այդ ծրագիրը, որ մեծ մասով նման էր Պետրոս I-ի «պարսկական արշավանքին», լայն արձագանք գտավ ողջ Այսրկովկասում: Այն, մասնավորապես, մեծ հույսեր և սպասումներ արթնացրեց հայ քաղաքական գործիչների մոտ, որոնք ձգտում էին ռուսական գործերի օգնությամբ ազատագրել Հայաստանը պարսից խաների և թուրք փաշաների անտանելի լծից: Ցարիզմի հետ, որ Այսրկովկասի ժողովուրդների նկատմամբ ընդունել էր «ազատարարի կեցվածք», կապվում էին ոչ քիչ պատրանքներ: Ցարական կառավարությունը, հասկանալի է, հետապնդում էր ոչ թե ազատագրական, այլ իր դասակարգային նվաճողական նպատակները: Սակայն ռուսական գործերի նախատեսվող արշավանքը Անդրկովկաս օբյեկտիվորեն կարող էր ունենալ առաջադիմական նշանակություն, քանզի այն ժամանակ ստեղծված քաղաքական ծանր պայմաններում լավագույն ելքը Անդրկովկասի միացումն էր Ռուսաստանին»³⁰:

Այս տեսակետը Մ. Ներսիսյանն ավելի շեշտված հիմնավորեց հայ ռուսական հարաբերությունների պատմությանը նվիրված փաստաթղթերի ժողովածուի մեջ, որի առաջաբանում էլ նա ամբողջացրել է հիմնախնդրի նկատմամբ իր մոտեցումները³¹:

Անվանի պատմաբանն Ա. Սուվորովի գործունեությունը և, ընդհանրապես, հայ-ռուսական հարաբերությունների պատմությանն անդրադառնում է նաև երկհատորանոց մեկ այլ աշխատության մեջ, որը մեծ ներդրում էր այդ հիմնախնդրի ուսումնասիրության գործում³²: Այստեղ ներկայացվում են XVIII դ. երկրորդ ռուս-թուրքական պատերազմի ժամանակ (1787–1791 թթ.) Ա. Սուվորովի շփումները Մոլդովայի և Վալախիայի հայ բնակչության հետ: Փայլուն հաղթանակներից հետո տեղի հայ բնակչությանը Ռուսաստան գաղթեցնելու համար գործող բանակ է հրավիրվում ռուսահայերի հոգևոր առաջնորդ Հ. Արղուժյանը: Զորավարը հանդիպումներ է ունենում նաև Ա. Խաստատովի, Հ. Աբրամովի և հայ հասարակական այլ գործիչների հետ: Մ. Ներսիսյանն ընթերցողին է ներկայացնում Անդրկովկասի ճանապարհների, ամրոցների, քաղաքների, բնակչության պատմական անցյալի մասին գեներալխիմուսի զեկուցա-

²⁹ Նույն տեղում, էջ 43:

³⁰ Նույն տեղում, էջ 44:

³¹ Армяно-русские отношения в XVIII веке. 1760–1800 гг. Сборник документов, т. IV. Редактор и автор предисловия М. Г. Нерсисян. Ереван, 1990.

³² М. Г. Нерсисян. Из истории русско-армянских отношений, в 2-х кн. Ереван, 1956, 1961.

գրերում եղած ուշագրավ նկարագրությունները, ինչպես նաև՝ Սուլփո-րովի ստորագրությունը պահպանված պատմական Հայաստանի քարտեզը: Ընդհանրապես, այս երկհատորյակում հիմնավորապես վերլուծություն են ենթարկվել Հայ-ռուսական հարաբերությունների պատմության առնչվող տարաբնույթ բազմաթիվ հարցեր:

Մ. Ներսիսյանը Հայ-ռուսական հարաբերություններին անդրադարձել է 1812 թ. Հայրենական պատերազմին և դրան Կովկասի ժողովուրդների մասնակցությունը նվիրված աշխատության մեջ³³: Գրքի մեծ արժեքը պայմանավորված է նաև նրանով, որ հեղինակը ոչ միայն բացահայտում է Կովկասի ժողովուրդների հայրենասիրական վերաբերմունքը, այլև նոր փաստերի հիման վրա վերլուծում է սևծովյան կազակների, Հյուսիսային Կովկասի կենտրոնական ու արևելյան շրջանների բնակիչների վերաբերմունքն արտահայտող նախաձեռնությունները նապոլեոնյան բանակի դեմ հաղթանակն ապահովելու համար: Գրքի «Հայրենական պատերազմը և Հայ ժողովուրդը» բաժնում Մ. Ներսիսյանը ներկայացնում է Ռուսաստանի հայկական համայնքների, մասնավորապես՝ Նոր Նախիջևանի, Աստրախանի, Ղզլարի, Մոզդոկի, նաև Թիֆլիսի, Բաքվի բնակչության կատարած կամավոր նվիրատվությունները: Նոր Նախիջևանի հայ բնակչությունը նախաձեռնում է աշխարհազորային զորաջոկատների կազմակերպումը, իսկ Աստրախանի հայերը, այդ թվում «Կանանց միություն»-ը նվիրաբերում են 120 հազար ռուբլի, որն այն ժամանակ մեծ գումար էր: Ռուսական բանակի կազմում կռվում էին հայազգի այնպիսի հայտնի զորահրամանատարներ, ինչպիսիք էին՝ Վ. Մադաթովը, Դ. Դեյանովը, Դ. Աշխարումովը, Պ. Մելիքովը, Պ. Հայրապետովը, Աբամելեք եղբայրները, Ա. Լազարյանը, Գ. Մելիք-Օսիպովը, Վ. Բեբուկովը և ուրիշներ:

Մենագրության վերջին մասում Մ. Ներսիսյանը վերլուծում է Կովկասի շուրջ ձևավորված միջազգային հարաբերությունները, ցույց է տալիս, որ Նապոլեոնի հարձակումը Ռուսաստանի վրա Պարսկաստանի և Թուրքիայի իշխող շրջաններին նոր հույսեր ներշնչեց՝ վերականգնելու իրենց կորցրած դիրքերը Կովկասում: Այս երկրները հովանավորվելով Անգլիայի ու Ֆրանսիայի կողմից, տարբեր բնույթի աջակցություն ստանալով՝ ակտիվացրեցին իրենց հակառուսական քաղաքականությունը: Անգլիան զենք էր մատակարարում Իրանին, անգլիական սպաները վարժեցնում էին պարսկական բանակը, և այս առումով Անգլիայից հետ չէր մնում Ֆրանսիան: Մ. Ներսիսյանը, հավատարիմ մնալով գիտական օբյեկտիվիզմի սկզբունքին, ցույց է տալիս, որ նրանց հաջողվեց որոշ խաների ու բեկերի, ինչպես նաև վրաց թագաժառանգ Ալեքսանդրին ակտիվ գործողությունների մղել Ռուսաստանի դեմ: Հակառուսական շարժում սկսվեց Կովկասի լեռնականների շրջանում, 1812 թ. գյուղացիական խոշոր ապստամբություն բռնկվեց Կախեթում: Սակայն ընդհանուր առմամբ Կովկասում հակառուսական քաղաքականությունը ձախողվեց:

³³ М. Г. Персиян. Отечественная война 1812 года и народы Кавказа. Ереван, 1965.

Հայ-ռուսական հարաբերությունների պատմությունը նվիրված ակադեմիկոս Մ. Ներսիսյանի աշխատություններում ուշագրավ է ռուս ազնվականական հեղափոխականների՝ դեկաբրիստների մասին ուսումնասիրությունը, որը հրատարակվեց և՛ հայերեն, և՛ ռուսերեն³⁴: Օգտվելով Մոսկվայի, Լենինգրադի, Հայաստանի արխիվներից, Վրաստանի պատմության թանգարանի ձեռագրական ֆոնդերից, ինչպես նաև նախահեղափոխական ռուսական պարբերականներից՝ Մ. Ներսիսյանը հայտնաբերել է հսկայական քանակությամբ նյութեր, վավերագրեր, նշանավոր դեկաբրիստների օրագրեր, հուշագրություններ: Աշխատության մեջ վեր է հանվել 1826–1828 թթ. ռուս-պարսկական և 1828–1829 թթ. ռուս-թուրքական պատերազմներում դեկաբրիստների ունեցած դերը: Բացահայտվում են, հատկապես, Ե. Լաչինովի, Ի. Բուրցովի, Մ. Պուշչինի, Ն. Դեպրե-րազովիչի, Ա. Գանգբելովի, Ն. Սեմիչևի, Վ. Սուխորուկովի և մյուս նշանավոր դեկաբրիստների գործունեությունը: Նրանցից շատերը կապեր հաստատեցին հայ գործիչներ Հարություն Ալամդարյանի, Ներսես Ալտարակեցու, Շահան Զրպետյանի, գորավարներ՝ Վասիլի Բեբուկովի, Վալերիան Մադաթովի, Լազար Լազարյանի և ուրիշների հետ: Դեկաբրիստներից Լաչինովը, Պուշչինը, Բեստյուժև-Մաուլինսկին և ուրիշներն ուշագրավ նկարագրություններ թողեցին հայ ժողովրդի կյանքի ու կենցաղի, Հայաստանի հուշարձանների, գյուղերի և քաղաքների, գյուղացիության ծանր վիճակի, ռուսների նկատմամբ հայերի վերաբերմունքի մասին:

Այս մենագրություններից բացի, ակադեմիկոս Մ. Ներսիսյանը հրատարակել է բազմաթիվ հոդվածներ՝ նվիրված Հայաստանի նոր պատմության սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական տարբեր հարցերի, առանձին հայ գործիչների և այլն³⁵:

1972 թ. Մ. Ներսիսյանը հրատարակեց «Հայ ժողովրդի պատմություն: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» բուհական դասագիրքը, որը կրթեց պատմաբանների մի քանի սերունդ:

³⁴ Մ. Ներսիսյան. Դեկաբրիստները Հայաստանում, Երևան, 1958, ն ու յ - ն ի՝ Декабристы в Армении. Ереван, 1975.

³⁵ Հովսեփի էմին.՝ ՍՍՌՄ ԱրմՖանի «Տեղեկագիր» (այսուհետ՝ «Տեղեկագիր»), 1941, № 1, էջ 41–60, Դավիթ-Բեկի շարժման արձագանքները Վասպուրականում և հարևան գավառներում.՝ «Տեղեկագիր», 1941, № 5–6, էջ 73–75, Ռուսոյի «Հասարակական դաշինքի» հայերեն թարգմանությունը 1829 թվին.՝ «Տեղեկագիր», սերիա I, 1943, № 1, էջ 83–87, Հայաստանի տնտեսական և քաղաքական դրությունը 1860–1880 թթ.՝ ՀՍՄԻ ԳԱ «Տեղեկագիր», 1946, № 10, էջ 33–59, Քաղաքացիական պատերազմը Ամերիկայում հայ պարբերական մամուլի լուսաբանությամբ.՝ ՊԲՀ, 1961, № 2, էջ 47–66, Զեյթունի 1862 թվականի ապստամբությունը.՝ ՊԲՀ, 1962, № 4, էջ 59–68, Հայ առաջին ուսուսիրատ-սոցիալիստը (Դմիտրի Աշխարումով).՝ «Բանբեր Երևանի համալսարանի», 1967, № 2, էջ 62–69, Նոր դարագլուխ հայ ժողովրդի պատմության մեջ (Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին).՝ ՊԲՀ, 1978, № 3, էջ 3–12, Армянские волонтеры в русско-турецкой войне 1787–1791 годов.՝ ИФЖ, 1979, № 3, с 105–111; Ա. Վ. Սուվորովի հայ բարեկամներն ու զինակիցները (Մեծ գորավարի ծննդյան 250 ամյակի առթիվ).՝ ՊԲՀ, 1980, № 4, էջ 45–56:

Վերլուծության ենթարկելով հայ ժողովրդի պատմության բազմաբնույթ և բազմաթիվ հիմնահարցեր՝ ակադեմիկոս Մ. Ներսիսյանն իր վերջին «Պատմության կեղծարարները (հոգվածներ և հաղորդումներ)» վերնագրով ժողովածուի մեջ վերլուծում և քննադատության է ենթարկում թուրք պատմաբանների կողմից հայոց պատմության մի շարք հիմնահարցերի նենգափոխումը³⁶։ Աշխատության մեջ հիմնավորապես հերքվում են թուրք պատմաբաններ Ա. Ինանի, Է. Ուրասի, Օ. Բարքանի, Թ. Գյոլբիլգի, Շ. Աթնդավի, Մ. Քյոփրուլքլյուի և նրանց «ճայնակցող» հեղինակների ստեղծած կեղծ առասպելը սուլթանների կողմից Ասիայի ու Եվրոպայի երկրներում, իբր, օրինականություն հաստատելու, հպատակ ժողովուրդների մեջ «քաղաքակիրթ առաքելություն» իրականացնելու մասին։ Գրքում ցույց է տրված, որ թուրքական պատմագիտական միտքը 1930-ական թվականներից կատարում է պանթուրքիզմի գաղափարական պատվերը՝ առաջնորդվելով բացարձակապես քաղաքական հրահանգներով ու պատվերներով։ Մ. Ներսիսյանը չի անտեսում նաև Արևմուտքի մի շարք արևելագետ-պատմաբանների, որոնց դիրքորոշումն այս հարցում չի սահմանափակվում միայն գաղափարական շահախնդրություններով, այլ մեծ մասամբ մատնում է նյութական բավարարված նախասիրություններ։ Ակադեմիկոսը հատկապես մեծ ուշադրություն է դարձրել պատմության կեղծարարների այն եզրակացություններին, որ, իբր, Մեծ եղեռնի հիմնական պատճառը 1914 թ. կամավորական շարժումն էր և Վանի հայության 1915 թ. գինված պայքարը թուրքական բանակի ու իշխանությունների դեմ։ Նա բերում է անժխտելի փաստարկներ՝ գրելով. «Իրականում Մեծ ոճրի պատճառը թուրք ազգայնամուլների պանթուրքիստական ծրագրերն էին, ... որոնք մշակվեցին և ընդունվեցին իթթիհաթականների (երիտթուրքերի) կողմից դեռևս 1910–1911 թթ. Սալոնիկում կայացած նրանց գաղտնի ժողովներում և համագումարներում»³⁷։

Մ. Ներսիսյանը վերլուծության է ենթարկում մեր պատմագրության մեջ գրեթե չհետազոտված մի հարց, թե ինչպիսին է եղել Եղեռնին նախորդող ժամանակաշրջանի (1912–1914 թթ.) հայ հասարակության տրամադրվածությունը։ Նա նշում է, որ մամուլի որոշ օրգաններ կարողացան կռահել առաջիկա զանգվածային կոտորածների նախապատրաստումը՝ հաշվի առնելով գավառներում սանձազերծված անգուսպ բռնություններն ու ոճրագործությունները։ Այստեղից էլ հեղինակի այն հիմնավորված եզրակացությունը, որ «Վանի հայերը ոչ թե ապստամբել են, այլ ստիպված են եղել դիմել ինքնապաշտպանության»³⁸։

Գրքում նաև ամբողջացվում են տարբեր տարիներին Մ. Ներսիսյանի գրած աշխատությունները XX դ. առաջին տասնամյակների ազատագրական շարժումների վերաբերյալ։ Ըստ հեղինակի՝ այս շրջանում շարժումը տեսական աննախընթաց հիմնավորում գտավ XIX դ. երկրորդ

³⁶ Մ. Գ. Ներսիսյան. Պատմության կեղծարարները (հոգվածներ և հաղորդումներ), Երևան, 1998։

³⁷ Նույն տեղում, էջ 53։

³⁸ Նույն տեղում։

կեսին արմենականների, հնչակյանների և դաշնակցականների կողմից: Հայ ազատագրական շարժման քաղաքական կողմնորոշումը վերլուծության է ենթարկվում պատմության կեղծարարներին հերքելու տեսանկյունից: Մ. Ներսիսյանը հիմնովին մերժում է այն տեսակետը, ըստ որի՝ Հայ ազատագրական շարժումները Ռուսաստանի կողմից արհեստականորեն բորբոքվել են: Այս կապակցությամբ խոսելով Ռուսաստանին և դաշնակիցներին հայերի աջակցության մասին՝ մի այլ առիթով շեշտում է. «Հայ ժողովուրդը օգնում էր դաշնակիցներին այնքանով, որքանով նրա հետ էր կապում իր ազատագրական հույսերը: Ստեղծված կոնկրետ իրադրության մեջ թուրքիայի և նրա դաշնակից Գերմանիայի ճիրաններից ազատագրվելու ուրիշ ելք նա չուներ: Հայ ժողովուրդի փրկության միակ խարխիլը Ռուսաստանն էր»³⁹:

Մ. Ներսիսյանը հերքում է պատմության կեղծարարների այն փաստարկը, ըստ որի՝ հայերը Օսմանյան կայսրության մեջ ապրել են բարեկեցիկ կյանքով և որ նրանց հակակառավարական ընդվզումները հրահրվել են արևելահայ գաղտնի կազմակերպությունների կողմից ու չեն վայելել ժողովրդի համակրանքը և աջակցությունը: Այս տեսակետի շինծու լինելն ակադեմիկոսը բացատրում է դրա հակապատմական բնույթով և նշում, որ Հայ ժողովուրդը թուրքական բռնապետության դեմ ապստամբել է դեռևս 1722 թ.: Մ. Ներսիսյանը իրավացիորեն շեշտում է, որ ազատագրական պայքարի միակ և հիմնական պատճառը օսմանյան լուծն էր, որից վաղուց ցանկանում էին ազատագրվել կայսրության տակ գտնվող ժողովուրդները՝ հայերը, հույները, բուլղարները, սերբերը և այլք:

Ակադեմիկոս Մ. Ներսիսյանն ակտիվորեն զբաղվել է մանկավարժական գործունեությամբ: Նրա նախաձեռնությամբ ԵՊՀ-ում հիմնվեցին արևելագիտության ֆակուլտետը, հայագիտական հետազոտությունների պրոբլեմային լաբորատորիան, Գիտությունների ակադեմիայում՝ արևելագիտության սեկտորը, որի առաջին ղեկավարն էր: Նա հայ և ռուս ժողովուրդների պատմություն է դասավանդել Երևանի պետական համալսարանում, Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում և Հանրապետության մի շարք բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Մ. Ներսիսյանը մեծ ներդրում ունի գիտական հրատարակչության աշխատանքների կազմակերպման գործում: Նա խմբագրել է ԳԱ «Տեղեկագիր» (այժմ՝ «Լրաբեր հասարակական գիտությունների») ամսագիրը, ԵՊՀ-ում աշխատելու տարիներին հիմնադրել է «Բանբեր Երևանի համալսարանի» և «Երևանի համալսարան» պարբերականները: Ժամանակի ընթացքում տեսնելով, որ ԳԱ «Տեղեկագիրը» սպասարկում է հասարակական բոլոր գիտություններին և հնարավորություն չունի ըստ արժանվույն հայագիտության հարցերով զբաղվելու, ինչպես վերը նշվեց՝ 1958 թ. հիմնադրեց «Պատմաբանասիրական հանդես»-ը: Մ. Ներսիսյանի ջանքերի շնորհիվ այն դարձել է միջազգային մեծ հեղինակություն վայելող

³⁹ ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 99, թ. 12:

Հայագիտական պարբերական»։ Մինչև իր կյանքի վերջը՝ 1999 թ., նա եղել է Հայագիտական այս ծանրակշիռ հանդեսի գլխավոր խմբագիրը⁴⁰։

Ակադեմիկոս Վ. Բարխուդարյանը, ներկայացնելով Մ. Ներսիսյանի հասարակական գործունեությունը, գրում է. «Գիտակրթական բազում պաշտոններ վարելու ընթացքում, իր խառնվածքին հավատարիմ, Մ. Ներսիսյանը մշտապես արձագանքում էր հանրությանը հուզող հարցերին։ Ձեր խոսափում նաև զուտ հասարակական բնույթի աշխատանքներին։ Նա երկար տարիներ գլխավորել է Սովետաբուլղարական ընկերություն հայկական մասնաճյուղը։ Քսանութ տարի եղել է Գիտությունների ակադեմիայի նախագահություն անդամ։ Մ. Ներսիսյանը եղել է Հայկական ԽՍՀ և ԽՍՀՄ Գերագույն խորհուրդների դեպուտատ, բազմիցս ընտրվել է ՀԿԿ Երևանի քաղաքային կոմիտեի և Կենտրոնական կոմիտեի անդամ։ Իր ծառայությունների համար պարգևատրվել է Լենինի, Աշխատանքային կարմիր դրոշի, Ժողովուրդների բարեկամություն շքանշաններով և բազմաթիվ մեդալներով»⁴¹։

Մ. Ներսիսյանը Հայաստանի Հանրապետության գիտնականների մեջ առաջինն էր, ով արժանացավ բարձր գնահատականի։ «Հայ պատմագիտության զարգացման ասպարեզում ունեցած նշանակալի ավանդի, Հայաստանում գիտություն և բարձրագույն կրթության կազմակերպման գործում ակնառու ներդրումների համար» 1995 թ. նոյեմբերին նա պարգևատրվեց Մովսես Խորենացու մեդալով։

Արձանագրենք գիտական և հասարակական գործունեությամբ ակադեմիկոս Մ. Ներսիսյանը դաստիարակել է պատմաբանների մի քանի սերունդ, նրա գիտական ժառանգությունը խոր հետք է թողել Հայ պատմագրություն մեջ։

Մկրտիչ Դանիելյան – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նոր պատմության բաժնի ավագ գիտաշխատող։ Գիտական հետաքրքրությունները՝ Հայ ազգային նարոզնիկություն և ազգային կուսակցությունների պատմության հիմնահարցեր։ Հեղինակ է 20 հոդվածի։ m.danielyan@mail.ru

REFERENCES

- Arajin massayakan–heghapokhakan sharzhumnere Hayastanum (Mayisyan apstambutyun): Nyuter ev pastatghter. Kazm. K. Ghararyan ev M. Hersisyan, Yerevan, 1932 (In Armenian).
- Armyano-russkie otnosheniya v XVIII veke. 1760–1800 gg. Sbornik dokumentov, t. IV. Redaktor i avtor predisloviya M. G. Nersisyan. Yerevan, 1990 (In Russian).
- “Banber Yerevani Hamalsarani”, 1967, № 2 (In Armenian).
- “Eritasard bolshevik” (Yerevan), 1932, № 5, № 6 (In Armenian).

⁴⁰ Այդ մասին տե՛ս Պ. Մ. Մուրադյան. «Պատմա-բանասիրական հանդեսի» հիմնադիր խմբագիրը. – ՊԲՀ, 1999, № 1, էջ 62–66։

⁴¹ Վ. Բ. Բարխուդարյան. նշվ. հոդվ., էջ 20։

- Genotsid armyan v Osmanskoi imperii. Sbornik dokumentov i materialov. Sost. M. G. Nersisyan, R. G. Sahakyan. Redaktor i avtor predisloviya M. G. Nersisyan. Yerevan, 1966 (In Russian).
- Hayastani azgayin arxiv (HAA), f. 818, c. 1, g. 99, t. 12; g. 961, t. 12, t. 14, t. 25–26, t. 32, t. 41; g. 977, t. 6; g. 981, t. 15, t. 18 (In Armenian).
- HSSR GA “Teghekagir”, 1946, № 10 (In Armenian).
- “Leninyan ughi” (Yerevan), 1932, № 6–7 (In Armenian).
- “Khorhrdayin Hayastan”, 20. IX. 1939 (In Armenian).
- Nersisyan M. G. “Dashnakcakan draxtavayre” kam sovi ev mahvan ashxarhe, Yerevan, 1932 (In Armenian).
- Nersisyan M. G. Noyemberyan heghapokhutyune Hayastanum, Yerevan, 1935 (In Armenian).
- Nersisyan M. G. Narodnikakan xmbaknern Andrkovkasum, Yerevan, 1940 (In Armenian).
- Nersisyan M. G. Hay zhoghovrdi azatagrakan payqare turqakan brnapetutyun dem 1850–1870 tt., Yerevan, 1955 (In Armenian).
- Nersisyan M. Suvorove ev rus-haykakan haraberutyunnere 1770–1790 tt., Yerevan, 1944 (In Armenian).
- Nersisyan M. Dekabristnere Hayastanum, Yerevan, 1958 (In Armenian).
- Nersisyan M. G. Patmutyan keghdsararnere (hodvadsner ev haghordumner), Yerevan, 1998 (In Armenian).
- Nersisyan M. G. Hayeri ceghaspanutyune Osmanyanyan kaysrutyunum, Yerevan, 1991 (In Armenian).
- Nersisyan M. G. Iz istorii russko-armyanskikh otnoshenii, v 2-kh kn. Yerevan, 1956, 1961 (In Russian).
- Nersisyan M. Dekabristy v Armenii. Yerevan, 1975 (In Russian).
- Nersisyan M. G. A. V. Suvorov i russko-armyanskie otnsheniya v 1770–1790 gg. Yerevan, 1981 (In Russian).
- Nersisyan M. G. Otechestvennaya voyna 1812 goda i narody Kavkaza. Yerevan, 1965 (In Russian).
- Nersisyan M. G. Hay zhoghovrdi nor patmutyan ejerits (hodvadsneri zhoghovadsu), Yerevan, 1982 (In Armenian).
- «Patmabanasirakan handes» (PBH), 1961, № 2; 1962, № 4; 1978, № 3; 1979, № 3; 1980, № 4; 1990, № 4; 1999, № 1 (In Armenian, In Russian).
- “Sovetakan Hayastan”, 25. II. 1965 (In Armenian).
- SSRM ArmFani “Teghekagir”, 1941, № 1; № 5–6; seria I, 1943, № 1 (In Armenian).
- “Voprosy istorii” (M.), 1957, № 1 (In Russian).

РЕДАКТОР-ОСНОВОПОЛОЖНИК
«ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКОГО ЖУРНАЛА»
(К 110-летию со дня рождения академика М. Г. Нерсисяна)

МКРТИЧ ДАНИЕЛЯН

Резюме

Ключевые слова: М. Г. Нерсисян, «Историко-филологический журнал», история армянского народа, армяно-русские отношения, национально-освободительное движение, народнические кружки, организации, Геноцид, русская ориентация.

Академик М. Г. Нерсисян (1909–1999) является выдающимся представителем советско-армянской историографии. Он первым исследовал такие проблемы, как влияние русского революционного народничества на армянскую действительность, национально-освободительная борьба армянского народа против турецкого ига, основные вопросы армяно-русских отношений, а также Геноцид армян.

Начальное образование М. Г. Нерсисян получил в родном селе Парпи Аштаракского района Армении, затем продолжил учебу в средней школе им. Х. Абовяна г. Еревана, которую окончил в 1927 г. В том же году поступил на исторический факультет Ереванского государственного университета (ЕГУ), который окончил в 1931 г. М. Г. Нерсисян пять лет проработал научным сотрудником в Институте истории партии, в этот же период один год учился в аспирантуре Института философии, литературы и истории в Москве. В 1937–1941 гг. работал в армянском филиале Института истории и материальной культуры АН СССР, сначала как научный сотрудник, затем – директор. Кандидатскую диссертацию он защитил в 1939 г., докторскую – в 1946 г.

М. Г. Нерсисян участвовал в Великой Отечественной войне, получил ранение.

В 1944–1945 гг. М. Г. Нерсисян занимал должность декана исторического факультета ЕГУ, затем заместителя директора Института истории Академии наук АрмССР (1944–1946 гг.). В 1946–1950 гг. был заместителем директора Института истории партии. В 1950 г. был избран действительным членом АН Армении. Несколько лет являлся председателем редакторско-издательского совета АН, академиком-секретарем Отделения общественных наук. В 1966–1977 гг. был ректором ЕГУ, затем заведующим отделом Армянского вопроса и Геноцида армян Института истории.

В 1961 г. М. Г. Нерсисян был удостоен звания заслуженного деятеля науки АрмССР. Он награжден орденами Ленина, Трудового Красного Знамени, Дружбы народов, медалью Мовсеса Хоренаци.

М. Г. Нерсисян обладал ярковыраженным организационным талантом в научно-издательской деятельности. Был редактором журнала «Известия» АН АрмССР (ныне «Вестник общественных наук» НАН РА), основателем журналов «Вестник Ереванского университета» и «Ереванский университет».

В 1958 г. М. Г. Нерсисян основал «Историко-филологический журнал» и на протяжении сорока лет был его главным редактором. Под его руководством журнал стал авторитетным арменоведческим изданием, имеющим международное признание.

Выдающийся ученый активно занимался также педагогической деятельностью: преподавал историю армянского и русского народов в ЕГУ, в Педагогическом институте им. Х. Абовяна и других вузах Армении, воспитал несколько поколений армянских историков.

Академик М. Г. Нерсисян автор и составитель десятков книг, сборников, брошюр, в частности, «Народнические кружки в Закавказье», «Освободительная борьба армянского народа против турецкого деспотизма. 1850–1870 гг.», «А. В. Суворов и русско-армянские отношения в 1770–1790 гг.», «Из истории русско-армянских отношений», «Отечественная война 1812 года и народы Кавказа», «Декабристы в Армении», «Геноцид армян в Османской империи», «Фальсификаторы истории» и т. д.

Научное наследие М. Г. Нерсисяна оставило глубокий след в армянской историографии.

Մկրտիչ Դանիելյան – կ. ւ. ո., օրինակային գիտնական և պատմաբան, ՀՀ ԳԱԱ Ինստիտուտի պատմության բաժնի վարիչը։ Գիտական շահեր: արևմտահայերենի և ռուսերենի արևմտահայերենի և ազգային պատմության և ազգային կուլտուրայի խնամարարական շահերը։ 20 հոդվածներ։ m.danielyan@mail.ru

EDITOR - FOUNDER OF THE
“HISTORICAL-PHILOLOGICAL JOURNAL”
(To the 110th birthday anniversary of Academician M. G. Nersisyan)

MKRTICH DANIELYAN

S u m m a r y

Key words: M. G. Nersisyan, “Historical-Philological Journal”, history of the Armenian people, Armenian-Russian relations, national liberation movement, populist circles, organizations, Genocide, Russian orientation.

Academician M. G. Nersisyan (1909–1999) is an outstanding representative of Soviet-Armenian historiography. He was the first to study such problems as the influence of Russian revolutionary populism on Armenian reality, the struggle of the Armenian people against the Turkish yoke, the main issues of Armenian-Russian relations, as well as the Armenian Genocide.

M. G. Nersisyan received his primary education in the native Parpi village of Ashtarak region of Armenia, then he continued his studies at the Yerevan secondary school named after Kh. Abovyan which he left in 1927. In the same year he entered the Faculty of History of Yerevan State University (YSU) which he graduated from in 1931. M. G. Nersisyan worked for five years as a

researcher at the Institute of Party History. During the same period he studied for one year at the graduate school of the Institute of Philosophy, Literature and History in Moscow. From 1937 to 1941 he worked at the Armenian branch of the Institute of History and Material Culture of the USSR Academy of Sciences first as a researcher then as a director. He defended his Candidate dissertation in 1939 and his doctoral dissertation in 1946.

M. G. Nersisyan participated in the Great Patriotic War and was injured.

From 1944 to 1945 M. G. Nersisyan held the post of the Dean of the YSU Faculty of History then Deputy Director of the Institute of History of the Academy of Sciences of Soviet Armenia (1944–1946). From 1946 to 1950 he was Deputy Director of the Institute of Party History. In 1950 he was elected a full member of the Academy of Sciences of Armenia. He served as Chairman of the Editorial and Publishing Board of the Academy of Sciences for several years. He was Academician-Secretary of the Department of Social Sciences. From 1966 to 1977 he was the Rector of YSU then the Head of the Department of the Armenian Question and the Armenian Genocide of the Institute of History.

In 1961, M. G. Nersisyan was awarded the title of Honored Worker of Sciences of ArmSSR. He was awarded the Orders of Lenin, the Red Banner of Labor, Friendship of Peoples, Movses Khorenatsi Medal.

M. G. Nersisyan had a clearly expressed organizational talent in scientific and publishing activities. He was the Editor of the journal “Bulletin” of the Academy of Sciences of ArmSSR (now “Herald of Social Sciences” of the NAS RA), the founder of the magazines “Bulletin of Yerevan University” and “Yerevan University”.

In 1958 M. G. Nersisyan founded the “Historical and Philological Journal” and was its Editor-in-Chief for forty years. Under his leadership the magazine has become an authoritative Armenian scholarly publication with international recognition.

The outstanding scientist was also actively engaged in pedagogical activity: he taught the history of the Armenian and Russian peoples at YSU, at the Pedagogical Institute named after Kh. Abovyan and other universities of Armenia, brought up several generations of Armenian historians.

Academician M. G. Nersisyan is the author and compiler of dozens of books, collections, brochures, in particular, “Narodnik Circles in the Transcaucasus”, “The Liberation Struggle of the Armenian People against Turkish Despotism. 1850–1870”, “A. V. Suvorov and Russian-Armenian Relations”, “From the History of Russian-Armenian Relations”, “The 1812 Patriotic War and the Peoples of the Caucasus”, “Decembrists in Armenia”, “Armenian Genocide in the Ottoman Empire”, “Falsifiers of History”, etc.

The scientific heritage of M. G. Nersisyan left a deep mark in Armenian historiography.

Mkrtich Danielyan – Candidate of Sciences in History, Senior Researcher at the Department of New History of the NAS RA Institute of History. Scientific interests: problems of the history of Armenian national populism and national parties. Author of 20 articles.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Ա ՎԱՆԵՑԻ
ԽՐԻՍՅԱՆԸ ԵՎ ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ*

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

Բանալի բառեր՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Մկրտիչ Ա Վանեցի Խրիմյան, Արշակ Չոպանյան, Կոմիտաս, Էջմիածնի հոգևոր ձեմարան, Մ. Եկմալյանի «Պատարագ», Հայրապետական կոնգակ, բազմաձայնովության մուտքը հայ եկեղեցի, հայ երաժշտություն:

*«Ժողովուրդ Հայոց, շուրջդ նայէ.
ագգերն ամէն առողջացած անդամալոյծ
վիճակէն՝ դէպի նոր կեանք կը վագեն ... Այո՛, չկայ
աշխարհիս վրայ ոչ ոք քեզ օգնական, ընդունայն
յուսով մի՛ սպասեր, դու ինքն ես քո օգնական,
ջանք արա, շարժի՛ր ...»:*

ԽՐԻՍՅԱՆ ՀԱՅՐԻԿ

Ճիշտ 200 տարի առաջ՝ 1820 թ. ապրիլի 4-ին, Վանի Այգեստանի ամենահին ու հայտնի գերդաստաններից մեկում ծնված մանչուկի մասին հետագայում՝ 1878 թ., Բեռլինի վեհաժողովին ընդառաջ, օտարներն ասելու էին. «Մեծ մարդ մըն էր անիկա»¹, իսկ հարազատ ժողովուրդը, որին նա նվիրվեց անմնացորդ, նրան իրավամբ մեծարելու էր «Հայոց Հայրիկ» պատվանունով:

Ինչպես և Մեծն Կոմիտասը՝ Մ. Խրիմյանը մանուկ հասակում զրկվում է ծնողներից ու «դաստիարակում է իւր բարեպաշտ հօրեղբոր Խաչատուրի մօտ: Նա ծանօթ էր Ս. Գրքին և իւր ծանօթութիւնն էլ աւանդում է իւր եղբօրորդուն, ուշիմ Մկրտչին»²:

1848–1850-ին Մ. Խրիմյանն ուսուցչություն է անում Կ. Պոլսի Խազյուղ թաղամասի դպրոցում՝ հանդես գալով հայրենասիրական քարոզներով, իսկ 1851-ին՝ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի հանձնարար-

* Ներկայացվել է 23. III. 2020 թ., գրախոսվել է 03. IV. 2020 թ., ընդունվել է տպագրության 18. IV. 2020 թ.:

¹ Ա. Չոպանյան. Երկեր, Երևան, 1988, էջ 435:

² Հանգիստ Տ. Տ. Մկրտիչ Ա. Կաթողիկոսի Ամենայն Հայոց.— «Արարատ» (Էջմիածին), 1907, թիւ Ժ-ԺԱ, էջ Դ:

րությամբ, մեկնում է Կիլիկիա, ուսումնասիրում տեղի հայության կյանքը և փորձում իր նպաստը բերել կրթական գործի զարգացմանը:



Դառը ճակատագրի բերումով կորցնելով կնոջը, ում հետ ամուսնացել էր 1846 թվականին, ու դստերը՝ 1853 թ. 33-ամյա Մ. Խրիստոսյանն ընտրում է եկեղեցական ասպարեզը և վերադառնալով Վան՝ Աղթամարի վանքում 1854-ին ձեռնադրվում է վարդապետ: 1855-ին նա Կ. Պոլսում սկսում է հրատարակել «Արծուի Վասպուրական» պարբերականը, 1856-ին վերադառնում է Վան, դառնում Վարազա վանքի վանահայրը և 1857 թ. հիմնադրում Ժառանգավորաց գիշերօթիկ վարժարանը: Վարազա դպրոցի հիմնադրումով Մկրտիչ վարդապետը դարձավ «հայ ազգագրութեան և ժողովրդական

կեանքի ուսումնասիրութեան հիմնադիրը»³:

1860-ին Վասպուրականի Արծիվն այցելում է Արևելյան Հայաստան և ծանոթանում տեղի հայության կյանքին, իսկ 1862-ին ստանալով Տարոնի հոգևոր առաջնորդի պաշտոնն ու Ս. Կարապետ վանքի վանահայրությունը՝ հիմնադրում է նոր Ժառանգավորաց վարժարանը և հրատարակում «Արծուիկ Տարօնոյ» երկչաբաթաթերթը (1863–1865)՝ դրանց տնօրինությունը հանձնելով Գարեգին Սրվանձտյանին: Տարոնի հայկական գյուղեր կատարած այցելությունների ընթացքում նա փորձում է սահմանափակել թուրք և քուրդ աղաների հարստահարությունները, թեթևացնել հայ գյուղացու ծանր վիճակը:

1868-ին էջմիածնում եպիսկոպոս օժված Մ. Խրիստոսյանը 1869 թ. սեպտեմբերի 4-ին ընտրվում է Կ. Պոլսի Հայոց պատրիարք և պայքարում Ազգային սահմանադրության վերանայման, ի մասնավորի՝ գավառաբնակ արևմտահայության պատվիրակների թիվն Ազգային ժողովում ավելացնելու համար: Կ. Պոլսում Խրիստոսյանը դարձավ առաջին «Հայաստանցի պատրիարքը», ինչպես նրան անվանում էին այդ օրերին: Մ. Խրիստոսյանի ընտրողները վստահ էին, որ սահմանադրական պայքարի այդ օրերին միայն նա կարող էր իր հեղինակությամբ և հմայքով, խոսքով ու գրչով իրականություն դարձնել հայ ժողովրդի նվիրական իղձերը և հույսերը: Հատկանշական է, որ նորընտիր Պատրիարքն իր պատրիարքական ուխտի ճառի մեջ 1869 թ. նոյեմբերի 12-ին ասել է. «Իմ վրաս Պոլսո պատրիարքի պես մի՛ նայիք, ես Հայաստանի ցավոց պատկերն եմ: Չգիտեմ, թե իմ նախորդքս ի՞նչպես միջնորդած են տերության՝ այս ցավոց դարմանը խնդրելու համար, բայց ես ազգու միջնորդություն մը պիտի ընեմ ...»⁴: Եվ, իսկապես, Մ. Խրիստոսյանի պատրիարքության օրոք «Հայաստանի վիշտը» դարձավ

³ Նույն տեղում, էջ 6:

⁴ Խմբագրական. Վասպուրականի արծիվը. — «էջմիածին», 1957, ԺԱ, էջ 5:

«Հայաստանի հարց», «Հայկական խնդիր»: Իր ողջ կյանքում Հայոց Հայրիկը՝ «պատրիարքի և կաթողիկոսի գահին վրան իսկ Հայաստանէն հետը բերած փուշէ պսակը գլխէն բնաւ վայր չառաւ: «Հայկական խնդիրը» իր պայուսակին մէջ դրած, իրեն հետը կը ճամփորդէր Վասպուրականէն Պոլիս, Փարիզ, Լոնտոն, Պերլին և մինչև գերեզման»⁵: Նա առաջին պատրիարքն էր, որի նախաձեռնութեամբ Ազգային ժողովում քննութեան է առնվում գավառահայութեան հարստահարութեան խնդիրը, և 1872-ին թուրքական կառավարութեանը ներկայացվում տեղեկագիր-բողոքագիր: Հայրիկը պահանջում է Ազգային Մահամանադրութեան վերաքննութեանը և դրա գործադրումը նաև գավառում:

Իր գործունեութեամբ Մ. Խրիմյանը հարուցում է թուրքական կառավարութեան և Կ. Պոլսի հայ մեծահարուստների թշնամանքը, ինչի հետևանքով 1873-ին հրաժարվում է պատրիարքութեանից: Նույն թվականին հայ մեծ վիպասան Բաֆֆին նկատել է. «Խրիմյանը հոգով բանաստեղծ է, իսկ սրտով առաքյալ: Նա հիշեցնում է մեզ հինգերորդ դարու անձնուրաց արեղաներին, որք հոգևոր գինվորութեան ցուպը ձեռքներնին կրած, հուրի և սուրի միջից անցնելով պտտում էին Հայաստանում, ուսում, գիտութեան և կրոնք տարածում»⁶:

1873–1878 թթ. Մ. Խրիմյանը «նստած էր Պոլսում անպաշտօն»⁷. նա զբաղվում է գրական գործունեութեամբ՝ իրար ետևից գրում «Յիսուսի վերջին շաբաթը» (1876), «Վանգոյժ» և «Հայգոյժ» (1877), «Դրախտի ընտանիքը» (1878) աշխատութեաններն ու մի շարք բանաստեղծութեաններ:

1874-ին Կ. Պոլսի Հայոց պատրիարք ընտրված Ներսես եպիսկոպոս Վարժապետյանի առաջարկութեամբ 1878-ին Մ. Խրիմյանը ղեկավարում է Բեռլինի կոնգրեսի հայկական պատվիրակութեանը: «Պատվիրակութեան մեկնումի պահին հարց տվեցին Խրիմյան Հայրիկին, թե ի՞նչ լեզվով պիտի խոսի Բեռլինում, քանի որ, բացի հայերենից, նա այլ լեզու չգիտեր: Խրիմյան Հայրիկը պատասխանեց. «Ես պիտի գնամ Բեռլին, պիտի ներկայանամ վեհաժողովին ու պիտի արտասուվեմ»: Նա հավատում էր, թե իր արտասուքով պիտի շարժեր խիղճն աշխարհի մեծամեծների: Եվ Խրիմյան Հայրիկը գնաց Բեռլին ու արտասուեց, սակայն մեծամեծների խիղճը չշարժվեց: Վերադարձին, հայոց դարավոր վշտի նվազող Հայրիկին իր առաքելութեան մասին պատմեց հետևյալը. «Ժողովուրդ հայոց, Բեռլին գնացինք, ներկայացանք վեհաժողովին ու տեսանք, որ ժողովի մեջտեղում դրված էր մի կաթսա՝ մեջը լիքը հարիսա: Բոլոր ազգերը իրենց ձեռքերում երկաթե շերեփներ բռնած՝ իրենց բաժին հարիսան էին վերցնում: Մենք հայերս էլ մեր շերեփը մտցրեցինք հարիսայի մեջ, սակայն այն պոկվեց մեր ձեռքից ու հալվեց կաթսայի մեջ: Մեր շերեփը թղթից էր»:

⁵ Հ. Ա ճ է մ ե ս ն. Հայոց Հայրիկ. «Նուագող վշտից հայրենեաց Հայոց»: Կենսագրութիւն, առաջին հատոր, Հայր Սիմոն Երեմեան-Ատրուշանի յառաջաբանով, Թաւրիզ, 1929, էջ 21:

⁶ «Մշակ» (Թիֆլիս), 13. XII. 1873:

⁷ Հանգիստ Տ. Տ. Մկրտիչ Ա. Կաթողիկոսի Ամենայն Հայոց, էջ 7:

Հայ ազգը այդ օրվանից մանավանդ, հասկացավ երկաթե շերեփի պատմություն իմաստը: Հետագա պատմական դեպքերը, հայերի հերոսական մարտնչումներն ու խարխափումները այլ բան չէին, եթե ոչ որոնումը մի երկաթյա փրկարար շերեփի, որը մի հուժկու հարվածով կարողանար փոխել սև ճակատագիրը հայ ազգի»⁸:

Բեռլինի կոնգրեսից հետո Մ. Խրիմյանը հիասթափվում է եվրոպական պետություններից և հանդես է գալիս ազգային-ազատագրական պայքարի կոչով: Հայ ժողովրդի փրկությունը, ուժը միասնականություն, իր բազկի, իր հայրենասիրության մեջ է: «Ահա այն դասը, որը քաղել էր Խրիմյանը եվրոպական իր պատվիրակությունից»⁹. դաս և պատգամ, որն արդիական է նաև այսօր:

1879-ին Մ. Խրիմյանն ընտրվում է Վանի հոգևոր առաջնորդ, 1880 թ. այստեղ բացում է երկրագործական ուսումնարան, աջակցում Վանի «Սև խաչ» և Կարինի «Պաշտպան հայրենյաց» ազգային-ազատագրական գաղտնի կազմակերպությունների ստեղծմանն ու գործունեությունը, որի համար հետ է կանչվում Կ. Պոլիս: 1890-ին Ազգային ժողովը Մ. Խրիմյանի նախաձեռնությամբ 2 տեղեկագիր-բողոքագիր է ներկայացնում թուրքական կառավարությանը. վերջինս ուխտի ուղարկելու անվան տակ նրան աքսորում է Երուսաղեմ:

1892 թ. մայիսին Մ. Խրիմյանն ընտրվում է Ամենայն Հայոց կաթողիկոս և շարունակում հարազատ մնալ ազգային-ազատագրական շարժման իր դիրքորոշմանը: Այսպես՝ 1895-ին մեկնում է Պետերբուրգ և Նիկոլայ Երկրորդ ցարից հայցում նրա պաշտպանությունն Արևմտյան Հայաստանում խոստացած բարենորոգումների իրականացման համար, իսկ 1895–1896 թթ. թուրքական կառավարության կազմակերպած հայկական ջարդերի ժամանակ խնդրագրեր հղում ցարական պաշտոնյաներին, հանգանակություններ հավաքում, նյութապես օգնում Արևելյան Հայաստան անցած արևմտահայ գաղթականությանը: Միևնույն ժամանակ նա պայքարում է հայ եկեղեցապատկան ունեցվածքը բռնագրավելու մասին 1903-ի հունիսի 12-ի ցարական օրենքի դեմ՝ հայկական եկեղեցական թեմերին արգելելով ենթարկվել այդ որոշմանը:

Խրիմյան Հայրիկը վախճանվեց 1907 թ. հոկտեմբերի 29-ին՝ երկուշաբթի առավոտյան՝ ժամը 9-ին՝ ապրելով 87 տարի, 6 ամիս և 25 օր: Հուղարկավորվեց Էջմիածնի Կաթողիկեի հովանու տակ՝ Մայր Տաճարի Զանգակատան հարավային կողմում՝ Կաթողիկոս Ներսես Աշտարակեցու շիրմին առնթեր:

1910 թ. հունիսի 6-ին տեղի է ունենում Խրիմյան Հայրիկի՝ երկու մետր բարձրությամբ կապույտ գրանիտե պատվանդանի վրա հաստատված սպիտակ մարմարյա տապանաքարի բացումը. տապանաքարը Էջմիածնի Սինոդի հանձնարարությամբ Հայ եկեղեցու Թիֆլիսի թեմի առաջնորդ Գարեգին արքեպ. Սաթուրյանը պատրաստել էր տվել Թիֆլիսում: Մար-

⁸ Վեհափառ Հայրապետի խոսքը՝ արտասանված Խրիմյան Հայրիկի աղբյուր-հուշարձանի բացման առիթով (12 հոկտեմբերի 1982).– «Էջմիածին», 1982, ժ, էջ 10–11:

⁹ Խմբագրական. Վասպուրականի արժիվը, էջ 5:

մարե շիրմաքարի չորս կողմերում շրջանաձև քանդակված են նուրբ և գեղեցիկ ծաղիկներ: Գլխավերևում հայրապետական թագն է և զույգ զավազաններն ու զարդերը՝ բարձրաքանդակ և ուռուցիկ: Բարձրաքանդակ և ընտիր տառերով փորագրված է տապանագիրը. «ՆՈւԱԳՈՂ ՎՇՏԻՑ ՀԱՅՐԵՆԵԱՑ ՀԱՅՈՑ...», որը գրել էր Իզմիրլեան Կաթողիկոսը¹⁰. չէ՞ որ Խրիմյան Հայրիկը «հանդիսացավ դառն երգիչը հայ խոնարհ ժողովուրդի ցավերուն»¹¹: Իսկ 1982 թ. հոկտեմբերի 12-ին տեղի ունեցավ Խրիմյան Հայրիկի հիշատակը հավերժացնող աղբյուր-հուշարձանի բացումը, որի վրա գրված է. «Հայ մարդ, հիշի՛ր դու միշտ երկաթե շերեփը Հայրիկի»:

* * *

Արշակ Չոպանյանը «Ժամանակակից Հայաստանի առաքեալը. Ն. Վ. Մկրտիչ Խրիմեան» վերտառությամբ հոգվածում, որի ֆրանսերեն բնագիրը լույս էր տեսել “Mercure de France”-ի 1906 թ. նոյեմբերի 15-ի համալրում, իրավացիորեն նկատել է. «Խրիմեանի կեանքն ու տիպարը ստույգ հատորի մը նիւթ կրնան կազմել, և այդ հատորը օր մը պիտի գրուի անշուշտ և պիտի ամփոփէ ամենայն մանրամասնութեամբ՝ այդ եզական դէմքին բոլոր գծերը...»¹²:

Ու թեև անցած տասնամյակների ընթացքում բազմիցս անդրադարձ է արվել Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Մկրտիչ Ա Վանեցի Խրիմյանի (1820–1907) կյանքին ու գործունեությունը, նրա մասին գրվել են բազմաթիվ մենագրություններ և հոդվածներ, սակայն մինչ օրս առանձին ուսումնասիրություն անարկա չի դարձել նրա դերը հայ երաժշտություն մեջ¹³:

Նկատենք, որ Մ. Խրիմյանը սիրել է երգել: Ավ. Իսահակյանի «Թույլ տվեք, վեհափառ Հայրիկ, հարցնել, թե ինչ երգեր կերգեք» հարցին ի պատասխան նա ասել է. «Շարականներ կերգեմ, ներբողներ, սուրբ հարց երգերեն՝ Շնորհալու, Կեչառեցու, Պետրոս Ղափանցու, Գրիգորիս Աղթամարցու, և Բաղդասար դպիրի սիրտ տաղերն ալ կերգեմ: Ղափանցին լավ տաղասաց է, Քուչակ Նահապետ անորից վեր է, բայց ժողովրդի երգեր

¹⁰ Տե՛ս Հ. Ա ճ է մ ե ա ն. նշվ. աշխ., էջ 855:

¹¹ Հայկական բարեգործական ընդհանուր միություն նախագահ Ալեք Մանուկյանի խոսքը՝ արտասանված Խրիմյան Հայրիկի հուշարձանի բացման առթիվ (12 հոկտեմբերի 1982).– «Էջմիածին», 1982, Ժ, էջ 25:

¹² Ա. Չոպանյան. Ժամանակակից Հայաստանի առաքեալը. Ն. Վ. Մկրտիչ Խրիմեան. – «Անահիտ» (Փարիզ), 1907, յունվար-փետրվար, թիւ 1–2, էջ 1:

¹³ Այդ ուղղությունում առաջին փորձը եղել է մեր «Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Վանեցի Խրիմյանը և հայ երաժշտությունը» թեմայով գեկուցումը, որով հեռակա կարգով մասնակցել ենք 2019 թ. հոկտեմբերի 8-ին Լոս Անջելեսում (ԱՄՆ) Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ԱՄՆ Արևմտյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հովնան արք. Տերտերյանի նախաձեռնությամբ գումարված «Հայոց եկեղեցույ 20-րդ դարի ականաւոր հոգևորականները» գիտաժողովի աշխատանքներին:

ամենից վեր են. ես շատ կերգեմ մեր Վանա և Մուշի գեղջկական երգեր, որ սովորել եմ վաղուց Վարազա և Ս. Կարապետի ուխտավորներից: Բայց ամենից շատ կսիրեմ Խորենացու ողբը, անոր համար ես մի եղանակ եմ շինել ու կերգեմ: Ինձի կթվա, թե այդ ողբը Հայ Ազգի ճակատագիրն է ու ամեն դարու ողբը, ինձի այնպես կերևա, թե Քերթողահայրն Մովսես այս օրերին համար է գրել ...»¹⁴:

Հորինվել և հաջողությամբ կատարվել են Մ. Խրիմյանին նվիրված երգեր ու խմբերգեր: Դրանց շարքում աչքի է ընկնում հատկապես նրան նվիրված երգերից ամենամեծ ժողովրդականության վայելած «Հայրիկ, Հայրիկ, քո հայրենիք» խմբերգը, որի տեքստի հեղինակն է վանեցի Մեսրոպ Զանիկյանը և որն առաջին անգամ հրատարակվել է Կոմիտասի «Երկերի ժողովածու»-ի 4-րդ հատորում¹⁵:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Ս. Տ. ՄԿՐՏԻՉ Ա ԽՐԻՄՅԱՆԻ
ԴԵՐԸ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՃԱԿԱՏԱԳՐՈՒՄ

Անուրանալի է այն բախտորոշ նշանակությունը, որն ունեցավ Մ. Խրիմյանը Կոմիտասի՝ որպես անհատի և երաժշտի կայացման ու ձևավորման գործում: 1892-ի մայիսի 5-ին կաթողիկոսական ընտրության օրը Սողոմոն Սողոմոնյանը, վանքի պատերի ներսում իմանալով քվեարկության արդյունքները, մի թերթիկի վրա գրում է՝ «Էջմիածնում յոթանասուններկու տարեկան հասակում, յոթանասուններկու քվեով կաթողիկոս ընտրվեցավ Խրիմյան Հայրիկը»¹⁶, ծալում է թուղթն ու պատուհանից դուրս նետում՝ մեծ իրարանցում առաջացնելով հակախրիմյանականների շրջանում: Խրիմյանի ընտրությունը «ժողովրդի սիրտն էր բազմում Հայրապետական գահի վրա»¹⁷:

Խորհրդանշական էր, որ Խրիմյանը կաթողիկոս օծվեց հենց Կոմիտասի ծննդյան օրը՝ 1893 թ. սեպտեմբերի 26-ին՝ Վարազա Ս. Խաչի տոնի օրը, էջմիածնի Մայր տաճարում. «Օրը մռայլ էր և ամպամած: Օծման արարողության ժամանակ փայլատակեց արևը: Հանդիսությունը մասնակցող ժողովուրդը ցնծագին աղաղակներով թնդացրեց օդը՝ երևույթը համարելով երկնային նախանշան»¹⁸:

Նորընտիր կաթողիկոսի օծման արարողության ընթացքում Ղ. Աղաջանի «Առ Հայրիկն Խրիմյան» բանաստեղծության հիման վրա Քրիստափոր Կարա-Մուրզայի ղեկավարած երգչախումբը կատարել է նրա

¹⁴ Ավ. Ի ս ա հ ա կ յ ա ն. Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 5, Երևան, 1977, էջ 19: Տե՛ս նաև ն ու յ ն ի. Խրիմյան Հայրիկը. – «Էջմիածին», 1957, ԺԱ, էջ 42–43:

¹⁵ Տե՛ս Կ ո մ ի տ ա ս. Երկերի ժողովածու, հ. 4. Խմբերգեր և մեներգեր, Երևան, 1976, էջ 51–52, 174–175:

¹⁶ Կոմիտաս (կազմ.՝ Ղ. Միրզոյան, Ա. Մխիթարյան), Երևան, 2015, էջ 202:

¹⁷ Տե՛ս Խմբագրական. Վասպուրականի արձիվը, էջ 6:

¹⁸ Է. Կ ո ս տ ա ն դ յ ա ն. Մկրտիչ Խրիմյան (մահվան 90-ամյա տարելիցի առթիվ). – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1997, № 3, էջ 43:

հորինած «Մաղթանք Խրիմյան Հայոց Հայրիկին» վերնագրով օրհներգը: Այնուհետև վանքի սեղանատանը տրվել է հանդիսավոր ճաշկերույթ, որի ընթացքում «ստեպ առ ստեպ երգում է ձեմարանի երգչախումբը՝ Սողոմոն ավագ սարկավագ Սողոմոնյանի մասնակցությամբ»¹⁹:

Այդ օրվանից մինչև Նորին Վեհափառության կենաց վախճանը Կոմիտասը վայելեց նրա հոգատար վերաբերմունքն իր անձի ու կատարած գործի հանդեպ: Ասում են, թե իր կաթողիկոսության առաջին իսկ օրերին Խրիմյանը Կոմիտասին էր նվիրել Խաչատուր Աբովյանի լուսանկարը, որը նա պահել-պահպանել է մի առանձին խնամքով: «Այս Խաչատուր Աբովյանի լուսանկարը, – խոստովանել է Կոմիտասը, – իմ ամենասիրած իրս է, իմ էության հետ մաս կազմող... Մոտ կամ հեռու՝ ուր որ ճամփորդեմ՝ հետս կտանիմ զայն: Այս թանկագին նվեր-հիշատակը ինձ տվավ Խրիմյան Հայրիկը՝ իր կաթողիկոսության առաջին օրերուն»²⁰:

Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմյանի պաշտոնավարման տարիներին էջմիածնի հոգևոր ճեմարանում մեծ ուշադրություն դարձվեց երաժշտության դասավանդման գործին: 1893 թ. մայիսի վերջին Սողոմոնն ավարտել էր ճեմարանի լսարանական բաժնի եռամյա դասընթացը՝ ներկայացնելով «Շնորհալին. նորա դարը և նորա ժամանակ յուզուած կրօնական խնդիրները»²¹ վերնագրով ավարտական շարադրությունը, և հոկտեմբերի 5-ին Նորին Վեհափառության հրամանով նշանակվեց ճեմարանի երաժշտության ուսուցիչ՝ այդ պաշտոնում փոխարինելով Ք. Կարա-Մուրզային: Երաժշտության նորանշանակ ուսուցիչն անմիջապես գործածություն մեջ դրեց եվրոպական ճայնագրությունը, քանի որ առանց դրա իմացություն անհնար էր հաղորդակցվել համաշխարհային երաժշտությանը²²:

Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմյանի հրամանով Կոմիտասը ստանձնեց նաև էջմիածնի Մայր Տաճարի խմբավարի պաշտոնը: 1893 թ. նոյեմբերի 21-ին Մայր Տաճարում Սողոմոնի ղեկավարած քառաձայն երգչախումբն առաջին անգամ կատարեց «Հայր մեր»-ը: «Տպավորությունը հսկայական էր, – գրում է ունկնդիր Աշոտ Աթանասյանը, – եթե դա աղոթք չլիներ, այլ կոնցերտ, անշուշտ դրան կհետևեին բուռն ծափահարություններ»²³:

Նկատենք նաև, որ Կ. Պոլսի Ազգային ժողովը Խրիմյանին Հայոց պատրիարք էր հաստատել 1869 թ. սեպտեմբերի 4-ին՝ Կոմիտասի ծննդ-

¹⁹ Տե՛ս Խ. Սամվելյան. Կոմիտասի կյանքի և գործունեության տարեգրությունից. – «էջմիածին», 2007, ԺԱ, էջ 129:

²⁰ Ա. Գ. Մեսրոպյան. Հուշեր. – Կոմիտասը ժամանակակիցների հուշերում և վկայություններում, Երևան, 2009, էջ 330:

²¹ Կոմիտաս վարդապետ. Ուսումնասիրություններ եւ յօդուածներ, Երկու գրքով, Գիրք Ա, Աշխատասիրութեամբ Գուրգէն Գասպարեանի եւ Մարինէ Մուշեղեանի, Երևան, 2005, էջ 15–54:

²² Այդուամենայնիվ՝ Կոմիտասն իր ողջ կյանքում օգտվեց հենց նոր հայկական ճայնագրությունից:

²³ Ղազարոս Աղայանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1967, էջ 336:

յան օրից ընդամենը 24 օր առաջ²⁴: Եվ, ահավասիկ, էջմիածնում 1894 թ. սեպտեմբերի 11-ին Ամենայն Հայոց կաթողիկոսի բանավոր հրամանի հիման վրա Մեսրոպ արքեպ. Սմբատյանը Գայանե վանքում, Նորին Վեհափառության ներկայությամբ, ի թիվս հոգևոր ճեմարանի շրջանավարտ վեց սարկավազների, կուսակրոն արեղա է ձեռնադրում նաև Սողոմոն սարկավազ Սողոմոնյանին: «Նորին Վեհափառութիւնը բարեհաճել էր ուշադրութիւն դարձնել նոյն իսկ նոցա անունների վրայ»²⁵, և նրա հաճությամբ քեռթահիացի Սողոմոն սարկավազ Սողոմոնյանը, ձեռնադրվելով արեղա, ստանում է Կոմիտաս անունը՝ ի պատիվ Կոմիտաս Ա Աղցեցի կաթողիկոսի, ով նաև բանաստեղծ-երաժիշտ էր, հայ շարականագրության նշանավոր ներկայացուցիչներից մեկը, «Անձինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի» շարականի հեղինակը²⁶:

Իր այս ընտրությունը Վեհափառը, մեր համոզմամբ, ոչ միայն ընդգծել է երիտասարդ հոգևորականի գործունեությունը՝ շեշտված երաժշտական հետադա ուղղվածությունը, այլև հանձին նրա, գուցե և, տեսել Հայ եկեղեցու ապագա Հայրապետի: Եթե Կոմիտասը չհեռանար էջմիածնից և չբավարարվեր վարդապետի աստիճանով, ապա, թերևս, ինքն էլ դառնար կաթողիկոս: Մանավանդ, որ նման օրինակ ունենք: Հայտնի է, որ հայ արվեստաբանության մեջ լրջագույն ներդրում ունեցող նշանավոր հայագետ ու արվեստաբան Գարեգին Հովսեփյանը, ով հավաքել, կազմել է մինչև 1250-ը գրված ձեռագրերի 459 հիշատակարան, 1951 թ. հրատարակել է «Հիշատակարանք ձեռագրաց» բացառիկ նշանակություն ունեցող հատորը, հեղինակել «Մանրանկարչության արվեստը հայոց մեջ» (1902), «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակութի պատմության» քառահատորը (1935–1951), «Հեթում Ա-ի նկարագրող Ավետարանի մնացորդները» ու այլ աշխատություններ, զբաղվել կերպարվեստի պատմությամբ, մանրարվեստով, 1943 թ. ընտրվել է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս՝ Հայրենական մեծ պատերազմի ժամանակ մեծ աջակցություն ցուցաբերելով «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան ստեղծմանը, նաև 1946 թ. Հայրենազարծության կազմակերպմանը²⁷:

1895-ի փետրվարի 26-ին Նորին Վեհափառության հրամանով Մ. արքեպ. Սմբատյանը Ս. Աստվածածին եկեղեցում Կոմիտասին և ուրիշ չորս արեղաների շնորհում է վարդապետական աստիճան ու գավազան: Հենց Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնությամբ երիտասարդն ընտրեց երաժշտական կրթությունը ...

... Ինչպես հետագայում խոստովանել է Կոմիտասը. «Եթե բախտը ինձ չժպտար, և ես Ս. էջմիածին և ապա իմ անգին բարերար պ. Աղեքսանդր Մանթաշյանի միջոցով Գերմանիա չգնայի, կլինեի իմ հայրենիքում՝ Կուտինայում, շատ-շատ մի կոշկակար, որովհետև որբիս խնա-

²⁴ Տե՛ս է. Կոստանդյան. նշվ. հոդվ., էջ 39:

²⁵ «Արարատ», 1894, թիւ Թ, էջ 290:

²⁶ Հայկական սովետական հանրագիտարան, հ. 5, Երևան, 1979, էջ 541:

²⁷ Հայկական սովետական հանրագիտարան, հ. 6, Երևան, 1980, էջ 580:

մող Հարուժյուն հորեղբայրս էլ կոչկակար էր»²⁸: Մեզ մնում է ավելացնել, որ հայտնի նավթարդյունաբերող և բարերար Ալ. Մանթաշյանը, ով արտասահմանում սովորելու համար տաղանդավոր հայ ուսանողներին կրթաթոշակ էր տրամադրում, Կոմիտասի ուսումը Գերմանիայում Ֆրանանսավորեց հենց Նորին Վեհափառության հորդորով: «Արարատ» հանդեսի հաղորդմամբ. «Ճեմարան աւարտած սաներից արժ. Կոմիտաս վարդապետը, որ երգեցողութեան ուսուցիչ էր ձեմարանում անցեալ տարի և այս տարի Թիֆլիզում պ. Եկմալեանին էր աշակերտում, իրաւունք ստացաւ Նորին Վեհափառութիւնից արտասահման գնալու և երաժշտական արուեստում կատարելագործուելու: Հայր Կոմիտաս վարդապետի ուսման ծախքն հոգալ խոստացել է յայտնի բարեգործ պ. Աղէքսանդր Մանթաշեանը, որին այդ առթիւ ազգիս Վեհափառ Կաթողիկոսն իւր առաքելական օրհնութիւնն հաճեցաւ տալ յատուկ կոնդակով»²⁹:

Պահպանվել են Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա. Խրիմյանին հասցեագրված Կոմիտասի երկու նամակները: Դրանցից առաջինը, որը Կոմիտասը գրել է 1895 թ. հուլիսի 25-ին, ներկայացնում է հայ ժողովրդական երգերի ու պարերգերի գրառման ուղղությամբ անցած յոթ տարիների ընթացքում իր կատարած աշխատանքը: Հայտնի է, որ 1884 թ. Բուն Բարեկենդանի տոներին ձեմարանի երկրորդ դասարանի աշակերտ Սողոմոնը հյուրընկալվում է իր դասընկերներից մեկի տանը՝ Երևանի նահանգի էջմիածնի գավառի Քյորփալու (այժմ՝ Արշալույս) գյուղում. «Այստեղ «չինականի ախոռում առաջին անգամ լսում է ժողովրդական երգը», որը նրա համար մի հայտնություն է լինում: Անմիջապես ձայնագրում է լսած երգը և խնդրում է՝ ուրիշներն էլ երգեն, և դարձյալ ձայնագրում է»³⁰: Մեկ տարի անց՝ 1885-ին, Սողոմոնը ծանոթանում է Գևորգյան ձեմարանի լսարանականի շրջանավարտ Մանուկ Աբեղյանի հետ: Վերջինս գրում է. «Այդ ժամանակ նա սկսել էր գրավվել հայ ժողովրդական երգերի եղանակներով, հեշտությամբ սովորել էր այդ եղանակները և երգում էր, ես էլ իմ կողմից հետաքրքրվում էի ժողովրդական երգերով և ընդհանրապես ժողովրդական բանահյուսությամբ: Այս հանգամանքը ահա առիթ եղավ մեզ ընկերանալու»³¹: Մոտ մեկ տարի անց՝ 1886-ին, Մ. Աբեղյանի խոսքերով Սողոմոնը կգրի իր «Սիփանա քաղեր» խմբերգը, որով միշտ եզրափակում էր իր կազմած խմբական երգեցողությունները:

Եվ այսպես՝ իր նամակում Կոմիտասը, արժևորելով և կարևորելով իր գրառած հայ ժողովրդական երգերն ու պարերգերը, խնդրում է Վեհափառին միջոցներ հատկացնել և աջակցել՝ փրկելու այն գանձերը, որոնք

²⁸ Խ. Ս մ վ է լ յ ա ն. Կոմիտասի կյանքի և գործունեության տարեգրությունից. – «Էջմիածին», 2007, Ե, էջ 94–95, «Ժամանակ» (Կ. Պոլիս), 25. IX. 1910:

²⁹ «Արարատ», 1896, թիւ Դ, էջ 189:

³⁰ Խ. Ս մ վ է լ յ ա ն. Կոմիտասի կյանքի և գործունեության տարեգրությունից. – «Էջմիածին», 2007, Ե, էջ 101:

³¹ Մ. Ա բ ե ղ յ ա ն. Երկեր, հ. է, Երևան, 1975, էջ 431:

Թաղված են մնացել անհայտություն մեջ: Վերջում Կոմիտասը խնդրում է թույլատրել տպագրել դրանք: Նպատակահարմար ենք համարում նամակը մեջբերել ամբողջությամբ.

«Վեհափառ Հօրն

Տ. Տ. Մկրտչի Ա.

Սրբազնագոյն Կաթողիկոսին Ամենայն Հայոց:

Քահանայապետ սուրբ,

Եօթն ամս անցուցեալ է իմ ի վերայ, յորմէ հետէ ժողովեմ զՀայոց ժողովրդական երգս և զպարերգս, զորոց տակաւին կարի սակաւ ինչ է յայտ գեղանակացն, զկազմութեանցն և զկնի:

Ժողովրդական եղանակքն Հայոց ի պարզութիւն և ի վեհութիւն իւրեանց զնմանութիւն բերեն զնուազաց շարականաց նախնեաց մերոց սրբոց, յորս արտայայտին կեանք և միտք Հայկեան սեռիս. և սոքա ցարդ կան թաղեալ ի թագստի և ի կողմն յուշից և յուրուշից յիմաստնոց՝ ի փիլիսոփայից. և արդ ևեթ պահեալ կան ի գեղջկական հանճարի նախնեաց թարմ և անխառն զգացմանց երաժշտութիւն, որ և խոուն առ խոուն ի կորուստ դիմեալ յառաջէ յերևումն օտար եղանակաց: Եթէ ո՛չ տարածեսցէ զձեռան, ի բարձր բազուկ, յօճուն լինիլ, հօտապետդ քարշել, հանել ի կորստենէն իսպառսպուռ յանյայտութիւն և ի մոռացօնս դատապարտեսցին:

Բաց յայդմանէ, ի ժողովրդական եղանակսն Հայոց իբրև զծիր իմն կարմիր նկատեն առընչութիւնք սոցա եղանակաց շարականաց: Ի մէն միում յերգսն գեղջկայինսն որպէս զշող ցոլայ բնատուր հանճար Հայաստան ազին, որ և կարօտի բազմապիսի ուսումնասիրութեանց:

Ուստի համարձակիմ խնդրել ի համբոյր Ս. Աջոյդ Հայրապետիդ, թոյլատրել, ի բան բարձր հրամանի Ձերոյ, ի տպագրել զանգին գանձան, զորս աւանդեալ է մեզ բազմահարուստ հանճարոյ նախնեաց մերոց սրբացելոց:

Քահանայապետիդ

Ամենախոնարհ ծառայ և որդի

Կոմիտաս Վարդապետ Սողոմոնեան

1895 ամի ի 25-ն հուլիսի ի Ս. Էջմիածին»³²:

Փաստորեն, այս նամակում արդեն շեշտվում են Կոմիտասի երաժշտական ֆոլկլորագիտական հետազոտությունների կարևոր ուղղություններից երկուսը՝ հայ ժողովրդական երգերի գրառումը և դրանց հրատարակումը: Մյուս կողմից, ահավասիկ, այս նամակում արդեն Կոմիտասը գիտական շրջանառության մեջ է դնում այն միտքը, որ հայ ժողովրդական երգերն իրենց կազմությամբ մոտ են շարականներին, գաղափար, որը հետագայում պիտի բյուրեղանար և դառնար կոմիտասյան հայտնագործությունը՝ հայ ժողովրդական ու հոգևոր եղանակները քույր և եղբայր են, հայ ժողովրդական ու հոգևոր երաժշտության

³² Գր. Հարությունյան. Կոմիտասի կյանքն ու գործունեությունը նորահայտ վավերագրերի լույսի տակ. – «Բանբեր Հայաստանի արխիվների», 1966, № 2, էջ 156–157:

լազերի հիմքում ընկած են շղթայված տետրախորդները, և դրանով իսկ դրանք տարբերվում են եվրոպական մաժորից ու մինորից:

Վեհափառին հասցեագրված երկրորդ նամակում, որը գրել է Բեռլինից 1898 թ. նոյեմբերի 19-ի³³, Կոմիտասն իր անհանգստությունն է հայտնում երկու հայ որբ պատանիների վիճակի կապակցությամբ, որոնց ծնողները զոհվել էին 1896 թ. հայկական ջարդերի ժամանակ: Գերմանահայկական ընկերության միջոցով այդ որբերը փոխադրվել էին Բեռլին և ընդունվել Վիլհելմսդորֆի ինստիտուտ: Նրանց ծանր վիճակով մտահոգ Կոմիտասը դիմում է կաթողիկոսին և խնդրում օժանդակել, որպեսզի այդ պատանիները հնարավորություն ստանան ավարտել ուսումը³⁴:

Էջմիածնի Գեորգյան ճեմարանի երկարամյա տեսուչ, հայագետ, բանասեր և մանկավարժ Կարապետ Կոստանյանին Թիֆլիսից 1895 թ. հոկտեմբերի 30-ին ուղղված Կոմիտասի նամակից տեղեկանում ենք, որ նա ևս մեկ նամակ է գրել Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմյանին³⁵, որը, սակայն, մինչ օրս չի գտնվել³⁶:

Կոմիտասը ջերմ հարաբերություններ է ունեցել նաև Մ. Խրիմյանի ընտանիքի անդամների հետ. վերջինիս կարգադրությամբ՝ Կոմիտաս արեղան 1893 թ. երաժշտության և երգեցողության դասեր է տվել Խրիմյան Հայրիկի եղբոր երկու թոռնուհիներին: Հետագայում նրանցից Կարինե Խրիմյանը կհիշի. «Հաճախ, մեծ տոներու, պոլսաբնակ մեր հարազատները տուփերով ընտիր շաքարեղեններ կուղարկեին Խրիմյան Հայրիկին: Այդպիսի օրեր Հայրիկը գիտնալով Կոմիտասին քաղցրասիրտությունը, մեզ հետ քանի մը տուփ նվեր կուղարկեր Կոմիտասին, և մենք շատ աղեկ գիտեինք և կտեսնեինք, որ այդ շաքարները Կոմիտաս գրպանները լեցուցած կբաժներ իր ճամփաները կտրող երեխաներուն:

Շատ հաճախ ալ ծնողքս, ի նշան երախտագիտության, երբ հարգի նվեր մը կուտային իրեն, Կոմիտաս կմերժեր զայն, ըսելով. «Վայելած ծնողական գուրգուրանքներս ալ բավական են, որ մինչև կյանքիս վերջ երախտագետ ըլլամ Խրիմյան հարազատներուս»³⁷:

Կ. Խրիմյանի հուշագրության մեջ նկարագրված է, թե ինչպես է Հայրիկը Բյուրականի իր ամառանոցում դիմավորել 1899 թ. Գերմանիայից վերադարձող Կոմիտասին: «Առտու մը, երբ, ըստ սովորության, Հայրիկը ծառի մը տակ նստած սուրճ կխմեր, հանկարծ իր հզոր ձայնով իր մոտ կանչեց մեզ և այլայլված ըսավ. «Աղջկերք, կես ժամե ի վեր ականջիս երգ ու երաժշտության ձայներ մը կուզան, սա ցնո՞րք

³³ Ի դեպ, այս նամակի վերաբերյալ իր հաղորդման մեջ Գր. Հարությունյանը նշում է նոյեմբերի 7-ի ամսաթիվը (տե՛ս Գր. Հարությունյան. *Նշվ. հոգվ.*, էջ 159), մինչդեռ Կոմիտասի «Նամականի»-ում նոյեմբերի 19-ի ամսաթիվն է (տե՛ս Կոմիտաս. *Նամականի*, Երևան, 2000, էջ 75, նաև Կոմիտաս. *Նամականի*, Երևան, 2009, էջ 54):

³⁴ Տե՛ս Կոմիտաս. *Նամականի*, էջ 54:

³⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 29:

³⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 302:

³⁷ Ա. Գ. Մեսրոպյան. *Նշվ. աշխ.*, էջ 361–362:

է, թե իրականություն»։ Եվ իրոք՝ հետզհետե մեր ականջներուն ալ պայծառացան երգ ու երաժշտություն ելևէջները ...

Հայրիկի առաջարկին վրա, մայրս և երկու քույրերս վագեցինք ձայների ուղղությունը՝ բլուրի մը գագաթը, և ի՛նչ տեսնենք— մոտակա դաշտի մը արահետեն դեպի գյուղ եկող սայլի մը վրան՝ մեր Խորեն հայրիկը (Խրիմյան Հայրիկի եղբոր որդին.— Ա. Ա.) և մեր տան հարազատ բարեկամ նկարիչներ Փանոս Թերլեմեզյանն ու Եղիշե Թադևոսյանը, որոնք կանգնած շրջապատեր էին տարիներե ի վեր սպասված Բեռլինեն գալիք մեր դաշնամուրը։ Անոր առջև նստած Կոմիտաս կերպեր ու կնվագեր Հայրիկի սիրած ուրախ երգերեն»³⁸։ Երբ սայլը տեղ հասավ, Վեհափառի ամառանոցում հավաքվել էին բազմաթիվ բյուրականցիներ։ «Այնտեղ մեծ ուրախություն եղավ։ Հայրիկը ողջագուրեց իր կարոտալի սանը և հուզված շեշտով մը ըսավ. «Իզուր չէ, որ Հայրիկի բացառիկ սիրույն ու գուրգուրանքին արժանացած ես, տարիներ առաջ տված խոստումդ այսօր արդեն կատարեցիր... Թեև ու՛շ բայց նու՛շ եղավ ... Խոստանալ և կատարել շատ հաճախ իր անասելի դժվարությունները ունի և ես գիտեմ, որ դուն այդ դժվարություններուդ լեղի պատանները ի սեր Հայրիկին մարսեցիր ... Խոստանալ և կատարելը առաքինությունաց բանալին է ...»։ Եվ Հայրիկը կրկին ու կրկին անգամ ողջագուրեց իր «բլբուլ» սանը և օրհնեց զայն»³⁹։

Վեհափառի մահից հետո, որը տեղի ունեցավ 1907 թ. հոկտեմբերի 29-ին, Կոմիտասը որբացավ երրորդ անգամ։ Նոյեմբերի 4-ին տեղի ունեցած պատարագին «Հ. Կոմիտաս վարդապետի նոր պատրաստած խումբը իւր ներդաշնակ երգեցողությունեամբ օրուայ տխուր հանդիսաւորութիւնը աւելի վսեմ էր դարձնում և սրբազան»⁴⁰։

Մ. Խրիմյանի մահից հետո հանգամանքներն այնպես դասավորվեցին, որ կարճ ժամանակ անց Կոմիտասը ստիպված էր հեռանալ Էջմիածնից։ Բանն այն է, որ կաթողիկոսական ընտրություններում Կոմիտասը պաշտպանեց Կ. Պոլսո պատրիարք, ազգային և եկեղեցական մեծ գործիչ Մաղաքիա Օրմանյանի թեկնածությունը, քանի որ գտնում էր՝ նա «... շատ խելօք, դիւանագէտ, զգոյշ, շրջահայեաց, քաղաքավար, միւլենոյն ժամանակ հայրենասէր, յառաջադիմական, բարձր ուսումով, աստուածաբան, պատմագէտ, ջերմեռանդ հաւատացեալ, մի խօսքով՝ կատարեալ և յարմար եկեղեցու պետ, ժողովրդի հայր...»⁴¹ էր։ Բայց... 1908 թ. կաթողիկոս ընտրվեց Մատթևոս Բ Կոստանդնուպոլսեցի Իգմիրլյանը։ Եվ Կոմիտասը դարձավ ծայրաստիճան հուսախաբ, դյուրագրգիռ, դժգոհ, բարկացկոտ և «իր սիրելի ժպիտը և գուարթութիւնը կորսնցուց։ Ընտրութենէն ետքն ալ կը շարունակէր Օրմանեանի գով-

³⁸ Նույն տեղում, էջ 362։

³⁹ Նույն տեղում, էջ 363։

⁴⁰ Հանգիստ Տ. Տ. Մկրտիչ Ա. Կաթողիկոսի Ամենայն Հայոց, էջ ԺԲ։

⁴¹ Մ. Մ ա Ր ա ն ջ ե ա ն. Կոմիտաս Վարդապետ.— Կոմիտասը ժամանակակիցների հուշերում և վկայություններում, էջ 68։

քը և կը նշէր ընտրողներու կարճամտութիւնը: Հայր Սուրբն այլևս տխուր էր, փոխուած, յուսախաբ»⁴²:

Կոմիտասի շնորհիվ պահպանվել է Խրիմյան Հայրիկին խիստ բնորոշ դրվագներից մեկը, որով հանրագիտակ, հայագետ, հրապարակագիր և գրող Մկրտիչ Պոտուրյանը եզրափակել է «Բազմավեպ»-ի երեք՝ 1907 թ. 12-րդ, 1908 թ. 2-րդ և 4-րդ համարներում շարունակաբար տպագրված, Խրիմյան Հայրիկին նվիրված ծավալուն հոդվածը: Ահա այն.

«Գերմանացի հնախոյզ մը էջմիածին կ'այցելէ. յետոյ Վեհափառ Խրիմեանի կ'ուզէ ներկայանալ:

Ո՞վ է այս պարոնը, կը հարցնէ Խրիմեան:

Գերմանացի հնախոյզ մը:

Հա՛, ըսեք իրեն որ ես թանկագին հնութիւն մը ունիմ. հարցուցէ՛ք քանի տարուան հնութիւն կը կարծէ:

Հինգերորդ դարու, կը պատասխանէ օտարականը թարգմանին բերնով:

Անկե՛ց ալ հին:

Քրիստոսի ժամանակէն:

Անկեց ալ հին:

Ու հնախոյզը հետաքրքրուած այս հնութենէն կ'ըսէ:

Տեսնեմ վեհափառ տէր, ի՛նչ է այդ թանկագին հնութիւնը:

Իմ Ազգս է, Քրիստոսէ ալ հին, Մովսէսէ՛ն ալ հին. իմ թշուառ ա՛զգը, որ անտեսած այս թանկագին հնութիւնը՝ հին քար մը կամ առարկայ մը փնտռելու կ'ելլեք»⁴³:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Ա. ԽՐԻՄՅԱՆԸ
ԵՎ ԲԱԶՄԱԶԱՅՆՈՒԹՅԱՆ ՄՈՒՏՔԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻ

Ինչպես հայտնի է, Կարա-Մուրզան տարիներ շարունակ պայքարում էր, որպեսզի բազմաձայնությունը մուտք գործի Հայ եկեղեցի: Ու թեև նա արդեն ստեղծել էր Պատարագի բազմաձայն մշակումը, սակայն այն եկեղեցում կատարելու թույլտվություն չէր ստանում⁴⁴: Հոգևորականները նրան առարկում էին՝ պատճառաբանելով, թե «Աստված մեկ է, երգեցողությունն էլ պետք է միաձայն լինի» և այլն:

Մակար Եկմալյանի «Պատարագի» լույս տեսնելուց հետո Կարա-Մուրզան հրաժարվում է իր բազմաձայնած Պատարագից և ձեռնամուխ լինում Եկմալյանի Պատարագի կատարմանը, որը շրջանառություն մեջ մտավ շնորհիվ Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմյանի:

⁴² Նույն տեղում:

⁴³ Հ. Մ. Պոտուրյան. Խրիմեան Հայրիկ. – «Բազմավեպ» (Վենետիկ), 1908, № 4, էջ 191:

⁴⁴ Տե՛ս Կ. Խուրաբաչյան. Քրիստափոր Կարա-Մուրզա (1853–1902). – Նշանավոր ճեմարանականներ, պր. Ա, Մայր Աթոռ Ս. էջմիածին, 2005, էջ 304–305:

1895 թ. հունիսի 7-ի Հայրապետական կոնդակով կաթողիկոսը թույլատրեց Մ. Եկմալյանի «Պատարագի» տպագրությունը և կատարումը բոլոր հայկական եկեղեցիներում. «Ուստի այսու կոնդակով թոյլ տամք քեզ պսակել զաշխատութիւն քո առ ի կիր արկանել յեկեղեցիս մեր, եւ միանգամայն յորդոր կարգամք առ ձեռնահաս եւ ջերմեռանդ ազգայինս, զի բարերար ձեռնտուութեամբ օժանդակ լինիցին քեզ, որով կարող լինիցիս գերկասիրութիւնդ ի լոյս ածել յօգուտ եւ ի պայծառութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ»⁴⁵:

Ավելին՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի՝ 1898 թ. դեկտեմբերի 14-ի «Մակար Եկմալյանի պատարագի երգեցողությունը սովորելու համար թեմերից ներկայացուցիչների ուղարկելու մասին» կոնդակով «Հանձնարարվում էր եկեղեցական թեմերին՝ տեղերում կարող ուժեր ընտրել և Թիֆլիս ուղարկել Եկմալյանին աշակերտելու, նրա ձեռքի տակ խմբավարական արվեստում վարժվելու, Ս. Պատարագի կանոնավոր երգեցողության կատարման մեջ հմտանալու նպատակով»⁴⁶:

Կարա-Մուրզան առաջիններից էր, ով ծանոթանալով Եկմալյանի Պատարագի պարտիտուրին՝ «իր հրճվալից շնորհավորանքն ուղղեց իր գործընկերոջը, նշելով Պատարագի գեղարվեստական բացառիկ արժանիքները»⁴⁷: «Մշակ» թերթում նա գրում է. «Մանրամասն խոսելը թողնելով մի այլ ժամանակի, այնքանը կասեմ, որ Մ. Եկմալյանի այդ «Երգեցողութիւնքը» թե հիանալի և թե գարմանալի գրվածք է: Չայնների միութեան մեջ հիանալի ներդաշնակություն է լսվում ամեն տեղ, և գարմանալի գեղարվեստական հմտությամբ է գրված ամեն բան: Միևնույն ժամանակ պահված է եղանակների ճշտությունը: Ինչպես երևում է՝ պ. Եկմալյանն օժտված է բացի գիտությունից և մի առանձին տոկունությունամբ, առանց որի, կարելի է ասել, անհնարին է այդպիսի մի մեծ աշխատություն լույս ընծայել այդքան ճշտությամբ: Սա կարելի է համարել պ. Եկմալյանի գլուխգործոցը, որով նա լրացրեց եկեղեցական երաժշտության այն պակասությունը, որ գնալով ավելի ու ավելի զգալի էր դառնում մեզանում: Ցանկալի կլիներ, որ ինչքան կարելի է աշխատեին ամեն տեղ «Պատարագի երգեցողությունքը» գործադրել: Այստեղի խումբը վերջացրեց իր պարապմունքը և արդեն երգում է եկեղեցում՝ Ստ. Հովհաննիսյանի ղեկավարությամբ»⁴⁸:

Մ. Եկմալյանին հասցեագրված նամակում Կարա-Մուրզան Պատարագի մասին գրում է. «Դուք պէտք է պարծենաք, դա Ձեր գլուխգործոցն է, դրանով Դուք Ձեր հեղինակությունը անմահացրիք և որ գլխաւորն է՝ ազգին մատուցիք այն մեծ ծառայութիւնը, որոյ ծարաւը գնալով ամեն ընդհանր և զգալի էր լինում: Պէտք է աշխատել և ամեն ջանք գործ դնել, որ ինչքան կարելի է շուտ ու շատ տարածւի այդ Պատարագը ամեն տեղ»⁴⁹:

Իսկ Կոմիտասը Եկմալյանի «Պատարագ»-ի մասին գրեց. «Յարգելի երաժիշտ Պ. Մակար Եկմալեանը մեր երգեցողութեան ամայի անդաս-

⁴⁵ Մակար Եկմալյան (վավերագրեր, նամակներ, հուշեր, հոգվածներ), Երևան, 2006, էջ 18:

⁴⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 72:

⁴⁷ Նույն տեղում, էջ 223:

⁴⁸ Նույն տեղում, էջ 28–29:

⁴⁹ «Հորիզոն» (Թիֆլիս), 09. VII. 1911:

տանի մէջ ներդաշնակութեան անդրանիկ բուրաստանը տնկեց: Սրտանց ուրախ ենք, որ Հայերս այժմ կարող ենք պարծել, թէ մենք էլ յետ չենք մնացել վսեմ գեղարուեստի ու կատարելագոյն երաժշտութեան զարգացումից»⁵⁰:

Տեղեկութիւններ կան, որ 1898 թ. նոյեմբերի 1-ին Պատարագը ԿարաՄուրզայի նախաձեռնութեամբ հնչել է Թեոդոսիայի Սուրբ Սարգիս եկեղեցում, և որ Պատարագը հետաքրքրութեամբ է ունկնդրել ու նրա հաջողութեամբ ուրախացել Հովհաննես Այվազովսկին⁵¹:

Այսպիսով Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Մկրտիչ Ա Խրիմյանն իր կաթողիկոսութեան շրջանում՝ 1892–1907 թվականներին, մեծ դեր ունեցավ հայ երաժշտութեան առաջընթացի գործում:

1. Կոմիտասի՝ որպես անհատի ու երաժշտի կայացման և ձևավորման հարցում անուրանալի է Վեհափառի բախտորոշ դերը,
2. մեծ ուշադրութիւն դարձվեց էջմիածնի հոգևոր ճեմարանում երաժշտութեան դասավանդման գործին. կաթողիկոսի հրամանով ճեմարանի երաժշտութեան ուսուցիչ նշանակված Կոմիտասն անմիջապես գործածութեան մեջ դրեց եվրոպական ճայնագրութիւնը, քանի որ առանց դրա իմացութեան անհնար էր հաղորդակցվել համաշխարհային երաժշտութեանը,
3. 1895 թ. հունիսի 7-ի Հայրապետական կոնդակով թույլատրվեց Մ. Եկմալյանի «Պատարագի» տպագրութիւնը և կատարումը հայկական բոլոր եկեղեցիներում: Դրա շնորհիվ բազմաձայնութիւնը մոտաք գործեց հայ եկեղեցի, և նոր հորիզոններ բացվեցին հայ երաժշտութեան հուժկու առաջընթացի համար:

ԱճՆԱ Ասատրյան – արվ. դ., պրոֆ., ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ, երաժշտութեան բաժնի վարիչ: Գիտական հետաքրքրութիւնը՝ նոր և նորագույն շրջանի հայ երաժշտութեան ուսումնասիրութիւն: Հեղինակ է 12 մենագրութեան և ավելի քան 160 հոդվածի: instart@sci.am

REFERENCES

- Abeghyan M. Erker, h. E, Yerevan, 1975 (In Armenian).
 Ajemyan H. Hayots Hayrik. “Nvagogh vshtic hayreneac Hayots”: Kensagrutivn, arajin hator, Hayr Simon Eremean-Atrushani yarajabanov, Tavriz, 1929 (In Grabar).
 “Ararat” (Edjmiadsin), 1894, tiv T; 1896, tiv D; 1898, tiv G ev D; 1907, tiv Zh–ZhA (In Grabar).
 “Anahit” (Pariz), 1907, yunvar-petrvar, tiv 1–2 (In Grabar).
 “Banber Hayastani arkhivneri”, 1966, № 2 (In Armenian).
 “Bazmavep” (Venetik), 1908, № 4 (In Grabar).
 Chopanyan A. Erker, Yerevan, 1988 (In Armenian).
 “Edjmiadsin”, 1957, ZhA; 1982, Zh; 2007, E; 2007, ZhA (In Armenian).

⁵⁰ Կոմիտաս Վարդապետ. Երգեցողութիւնք Ս. Պատարագի. – «Արատ», 1898, թիւ Գ և Դ, էջ 117:

⁵¹ Մակար Եկմալյան (վավերագրեր, նամակներ, հուշեր, հոդվածներ), էջ 223:

- Ghazaros Aghayane zhamanakakitsneri husherum, Yerevan, 1967 (In Armenian).
 Haykakan sovetakan hanragitaran, h. 5, Yerevan, 1979; h. 6, Yerevan, 1980 (In Armenian).
 ՀՀ ԳԱԱ «Լրաբեր hasarakakan gitutyunneri», 1997, № 3 (In Armenian).
 «Horizon» (Tiflis), 09. VII. 1911 (In Grabar).
 Isahakyan Av. Erkeri zhoghovadsu 6 hatorov, h. 5, Yerevan, 1977 (In Armenian).
 «Jamanak» (K. Polis), 25. IX. 1910 (In Armenian).
 Khudabashyan K. Qristapor Kara-Murza (1853–1902).– Nshanavor jemaranakanner, pr. A, Mayr Ator S. Edjmiadsin, 2005 (In Armenian).
 Komitas (kazm.՝ Gh. Mirzoyan, A. Mkhitaryan), Yerevan, 2015 (In Armenian).
 Komitas. Erkeri zhoghovadsu, h. 4. Khmberger ev menerger, Yerevan, 1976 (In Armenian).
 Komitase jamanakakitsneri husherum ev vkayutyunnerum, Yerevan, 2009 (In Armenian).
 Komitas Vardapet. Usumnasirutivnner ev yodvadsner, Erku grqov, Girq A, Ashkhatasiruyeam Gurchen Gaspareani ev Marine Mushegheani, Yerevan, 2005 (In Grabar).
 Komitas. Namakner, Yerevan, 2000 (In Armenian).
 Komitas. Namakani, Yerevan, 2009 (In Armenian).
 Makar Ekmalyan (vaveragrger, namakner, husher, hodvadsner), Yerevan, 2006 (In Armenian).
 «Mshak» (Tiflis), 13. XII. 1873 (In Armenian).

КАТОЛИКОС ВСЕХ АРМЯН МКРТИЧ I ВАНЕЦИ ХРИМЯН И АРМЯНСКАЯ МУЗЫКА

АННА АСАТРЯН

Резюме

Ключевые слова: Католикос Всех Армян Мкртич I Ванеци Хримян, Аршак Чопанян, Комитас, Эчмиадзинская духовная семинария, «Патараг» М. Екмаляна, Патриарший кондак, вхождение многоголосия в армянскую церковь, армянская музыка.

В течение прошедших десятилетий о жизни и деятельности Католикоса Всех Армян Мкртича I Ванеци Хримяна (1820–1907) было написано большое количество монографий и статей, однако до настоящего времени степень его участия в развитии армянской музыки не становилась предметом отдельного исследования. Между тем Католикос, этот ревностный пропагандист армянской культуры, развернувший во время своего патриаршества (1892–1907) обширную национально-просветительскую деятельность, сыграл существенную роль в развитии армянской музыки.

I. Невозможно переоценить роль Святейшего Патриарха в выявлении и дальнейшем становлении Комитаса как индивидуальности и музыканта. М. Хримян вступил на престол главы Армянской Апостольской церкви в Эчмиадзинском кафедральном соборе 26 сентября 1893 г. (по случайному

совпадению – в день рождения Комитаса). С этого дня и до своей кончины Католикос с подчеркнутой душевностью относился к личности Комитаса и его деятельности. В соответствии со словесным приказом Католикоса и в его присутствии, 11 сентября 1894 г. дьякон Согомон Согомонян был рукоположен в монахи и по выбору самого Католикоса наречен Комитасом – в честь Католикоса VII века Комитаса I Ахцеци, помимо прочих талантов наделенного также талантами поэта и музыканта.

Именно с благословения М. Хримяна Комитас выбрал стезю профессионального музыканта. Впоследствии он признавался: «Если бы судьба не улыбнулась мне, и я бы не поехал в Св. Эчмиадзин, а затем, при поддержке моего бесценного благодетеля г-на Александра Манташяна, в Германию, был бы я сейчас в моей родной Кутине не иначе как сапожником, ибо сапожником был папин брат Арутюн, опекавший меня, сироту». Отметим, что Александр Манташян оплатил учебу Согомона Согомоняна в Германии по увещанию М. Хримяна.

Вскоре после кончины М. Хримяна Комитас был вынужден покинуть Эчмиадзин.

II. В период патриаршества М. Хримяна преподаванию музыки в Эчмиадзинской духовной семинарии уделялось большое внимание. Назначенный по приказу Католикоса на должность учителя музыки, Комитас незамедлительно приступил к обучению студентов европейской системе нотации, ибо только через нее было возможно приобщиться к мировой музыкальной культуре.

III. Благодаря М. Хримяну в армянскую церковь вошло многоголосие. Тем самым был дан мощный толчок и открылись новые перспективы для развития армянской музыки.

Патриаршим кондаком (приказом) от 7 июня 1895 года (№ 325) Католикос дал разрешение на печатание и исполнение «Сурб Патарага (Божественной Литургии)» Макара Екмаляна во всех армянских церквях.

Анна Асатрян – д. иск., проф., заслуженный деятель искусств РА, заместитель директора Института искусств НАН РА, заведующая отделом музыки. Научные интересы: исследование армянской музыки нового и новейшего времени. Автор 12 монографий и около 160 статей. instart@sci.am

CATHOLICOS OF ALL ARMENIANS MKRTICH I VANETSI KHRIMYAN AND ARMENIAN MUSIC

ANNA ASATRYAN

Summary

Key words: Catholicos of All Armenians Mkrtych I Vanetsi Khrimyan, Arshak Chopanyan, Komitas, Etchmiadzin Theological Seminary, M. Yekmalyan's

“Patarag”, Patriarchal Order, introduction of polyphony to the Armenian Church, Armenian music.

During the past decades, numerous monographs and articles on the life and activities of the Catholicos of All Armenians Mkrtych I Vanetsi Khrimyan (1820–1907) were written. Nonetheless, to date, no specific research has been conducted to evaluate the impact he had on Armenian music. Meanwhile, the Catholicos – a zealous advocate of Armenian culture, who initiated and fulfilled extensive national and educational programs during his pontificate (1892–1907), played an essential and priceless part in the development of Armenian music.

I. It is hard to overestimate the role of His Holiness in revealing and promoting Komitas’ progress as an individual and musician. M. Khrimyan was anointed Catholicos in the Mother See of Etchmiadzin on 26 September, 1893 (coincidentally, on Komitas’ birthday). From that day on and until his death, the Catholicos showed his heartfelt attitude to Komitas, highly appreciating his personality and activities. According to the verbal order of the Catholicos and in his presence, on 11 September 1894, deacon Soghomon Soghomonian was ordained as a monk and according to the will of the Catholicos – named after the 7th century Catholicos Komitas I Aghtsetsi who, in addition to his multiple talents, was also a renowned poet and musician. It was with the blessing of M. Khrimyan that Komitas chose to study music. Subsequently, he related, “Hadn’t the fate smiled at me, and I wouldn’t have gone to Holy Etchmiadzin, then, with the support of my dear benefactor Mr. Alexander Mantashyan, traveled to Germany, I’d have stayed in my native Kutina and become none other than a shoemaker, like my father’s brother Harutyun, who took care of me as an orphan”. It should be noted, M. Khrimyan was the one who encouraged Alexander Mantashyan to sponsor Soghomon Soghomonian’s study in Germany.

Shortly after M. Khrimyan’s death, Komitas had to leave Etchmiadzin.

II. Throughout M. Khrimyan’s pontificate, much attention was paid to teaching music at the Etchmiadzin Theological Seminary. Komitas, the newly appointed music teacher, did not hesitate to start familiarizing the students with the European system of notation, since only through that knowledge it was possible to access the world music culture.

III. Thanks to the Catholicos of All Armenians Mkrtych I Khrimyan, polyphony was introduced to the Armenian Church, thereby opening vast horizons for the rapid progress of Armenian music.

By Patriarchal Order (#325) as of 7 June 1895, the Catholicos gave his permission to print Makar Yekmalyan’s “Surb Patarag [Divine Liturgy]” and celebrate it in all the Armenian churches.

Anna Asatryan – Doctor of Sciences in Arts, Professor, RA Honored Worker of Arts, Deputy Director of the NAS RA Institute of Arts, Head of the Department of Music. Scientific interests: study of Armenian music of the new and newest periods. Author of 12 monographs and over 160 articles. instart@sci.am

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ*

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՅԱՆ

Բանալի բառեր՝ Հայրենական մեծ պատերազմ, Հայ գրականություն, 1941–1945 թթ., ռազմաճակատ, զինվոր, գրող, նահանջ, հաղթանակ, Չարենց, Իսահակյան, Դեմիրճյան, Զորյան, Զարյան, Սահյան:

1941 թ. հունիսի 22-ին գերմանական զորքերը հարձակվեցին ԽՍՀՄ-ի վրա և գրեթե առանց լուրջ դիմադրության հանդիպելու թափանցեցին երկրի խորքը: Պատերազմը Հայտարարվեց Հայրենական, և զորակոչի ենթարկվեց վիթխարի երկրի բազմազգ բնակչությունը: Հայրենական մեծ պատերազմին մասնակցեց նաև բազմաչարՀար Հայ ժողովուրդը: Պատերազմն սկսվելուց անմիջապես հետո «Պրավդա»-ն «Հայ ժողովուրդը Սովետական Միության ազատագրական պատերազմի մարտական մասնակիցն է» առաջնորդողում ազդարարեց. «Հայ ժողովուրդը <...> առավել խորապես զգաց մեր երկրի վրա կախված մահացու վտանգն այն պատճառով, որ նա իր բազմադարյան պատմության մեջ քանիցս ենթարկվել է օտար բռնակալների հարձակումներին: Նա գիտե, թե ինչ բան են կոտորածը, ավերը, սովը, բռնությունները: Հայ ժողովուրդը չի մոռացել հայերի ֆիզիկական բնաջնջումը, որ կազմակերպել էր արյունոտ շիտերի նախորդ Վիլհելմ կայսրը Առաջին իմպերիալիստական պատերազմի տարիներին: Այդ պատճառով <...> Հայ ժողովուրդը մեկ մարդու պես ոտքի կանգնեց հայրենիքը պաշտպանելու: <...> հարձակում գործելու լուրը ստիպեց զգայուն կերպով արթուն կենալ Հայ ժողովրդի նաև այն զավակներին, որոնք ապրում են ԽՍՀՄ սահմաններից դուրս: Նրանց ամբողջ սերը, նրանց ամբողջ համակրանքը խորհրդային Միության կողմն է»¹:

Հայտնի է, որ պատերազմին մասնակցել է 600.000 հայ՝ 300.000-ը Հայաստանից, կեսը չի վերադարձել: Սա մեծ հարված էր ընդամենը տարիներ առաջ ցեղասպանություն տեսած, իր գյուղերից ու քաղաքներից տեղահան եղած, 1937-ի բռնությունների՝ աքսորի և գնդակահարության միջով անցած հայությանը: Բայց ժողովուրդը տոկաց և, իր վերքերն ամռքելով, հաղթական ելքով տարավ նաև այս ծանր հարվածը:

* Ներկայացվել է 23. III. 2020 թ., գրախոսվել է 06. IV. 2020 թ., ընդունվել է տպագրության 20. IV. 2020 թ.:

¹ «Սովետական Հայաստան», 25. VIII. 1941:

Պատերազմին հայ ժողովրդի զավակները մասնակցեցին նաև այլ երկրների կողմից: Ամենուր հակաֆաշիստական միջոցառումներ էին: Հանրահավաքներով ոտքի կանգնեց նաև ամերիկահայությունը: Այդ փաստի կապակցությամբ վերոհիշյալ առաջնորդողում «Պրավդա»-ն շարունակում է. «ԱՄՆ-ում ապրող հայերի զանգվածային հանրահավաքը խորհրդային դեսպանությունն ուղարկել է հետևյալ հեռագիրը. «Մենք՝ ամերիկահայերս, որոնց հայրենի երկրի պաշտպանը Կարմիր բանակն է, զգում ենք, որ պարտավոր ենք օգնելու խորհրդային Միությունը նրա մղած պայքարում ...»²: Համանման մի հանրահավաք 3.000 հայություն մասնակցությամբ 1941-ի նոյեմբերի 29-ին՝ Հայաստանի խորհրդայնացման օրը, անցկացվում է նաև Նյու Յորքում:

Հանուն մարդկության ապագայի ընկան Ֆրանսիական Դիմադրություն շարժման մասնակիցներ, բանաստեղծ Գեղամ Աթմաջյանը (Սեմա) և արձակագիր Լուիզա Ասլանյանը (Լաս), 1944-ին համակենտրոնացման ճամբարում գնդակահարվեց Դիմադրության շարժման եռանդուն կազմակերպիչներից բանաստեղծ Միսաք Մանուչյանը:

Սիյուռքի միջոցներով հանգանակվեց և ստեղծվեց «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը:

Սիյուռքի կողմից յուրահատուկ գրական անդրադարձ էր Վահան Թեքեյանի «Հայաստանը Ռուսաստանին» (12. VII. 1944, Կահիրե) բանաստեղծությունը, որ տպագրվեց հայերեն և ֆրանսերեն: Դրանում ասվում է. «Ճշմարտապես սրբազան Ռուսաստան, <...> // Նայի՛ր հինավուրց Հայաստանին, որ քո շնորհիվ // Վերագտել է իր ուժն ու հանճարը // Մարտերի մեջ, որ քեզ հետ մղում է նա...»³:

Երկրորդ համաշխարհային պատերազմը և, մասնավորապես, Հայրենական մեծ պատերազմը նաև հայ ժողովրդի պատերազմն էր: Ամբողջ ժողովրդի հետ ոտքի կանգնեց նաև հայ գրականությունը:

Հասունացող պատերազմի շունչն առաջին իսկ պահին զգաց և դատապարտեց Ե. Չարենցը: 1934-ին լույս տեսած «Գիրք ճանապարհի» ժողովածուի մեջ գետեղած «Գիրք իմացություն» շարքի «Ռուբայիներ» բաժնի ժէ գործում նա գրում է.

Արևմուտքում, Գուտենբերգի հայրենիքում հարազատ,
Խարույկներ են վառում այսօր, այրում գրքեր բյուրհազար.
Այսպես՝ նրանք, որ սրբազան արչալանք են քարոզում
Ընդդեմ երկրի մեր հոյաչեն – դառնում են հոն ու գազան⁴:

Այսպես հանճարների հայրենիք Արևմուտքն աչքի առաջ դառնում է «խժղժուկյանց մի կրկես», քանի որ ըստ Չարենցի՝ «Մեծ Հայների հայրենիքից երգի ոգին վտարվեց» և զգոնության ու արթնության է

² Նույն տեղում:

³ Վ. Թեքեյան. Երկեր, Երևան, 1958, էջ 428:

⁴ Ե. Չարենց. Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 4, Երևան, 1968, էջ 413:

կոչում «մեր մեծ երկրի» երգիչներին՝ բորբոք պահելու քերթության լույսերն ընդդեմ մոտեցող խավարի:

Նույն տաղնապաներն են 1936-ին Չարենցի գրած իսպանական շարքի գործերում՝ «Իսպանիա», «Օ՛, պատմութիւն, օ՛, կյանք իսպանական...», «Կրկի՛ն, կրկի՛ն, Իսպանիա, քո դաշտերի վրա...», «Արչավում է և՛ քո, և՛ աշխարհի վրա...»: Ահա վերջինը.

Արչավում է և՛ քո, և՛ աշխարհի վրա՝
Վարձկան ոհմակների գլուխն անցած՝
Հագած գարմանալի գրահ՝
Քո միջնադարյան անցյալը...⁵

Միջնադարյան անցյալն արյունոտ հավատաքննութիւնն էր: Կանխազգացման հանճարեղ ուժով Չարենցը տեսնում էր ապագան. «Շղթան կտրած շունը հաչող // Եվ հիտլերյան դունչը գագիր // Թող օրհնեղովի խունկ ու խաչով»:

Հասունացող պատերազմի վտանգը զգացին նաև Ավ. Իսահակյանն ու Դ. Դեմիրճյանը, իսկ երիտասարդ Թ. Հուրյանը ճիշտ ժամանակին զգուշացնում էր. «Խտանում են ամպերը պատերազմի ու մահի // Եվ ուր որ է երկինքը շուտով անձրև կմաղի...»⁶:

Սակայն մինչև պատերազմը 1937 թվականն իր գործն արեց: Դեռևս 1922-ից գրական առաջատար դիրք գրավելու նպատակով պայքար էր ծավալվել գրողների միջև: Հայտնի «Երեք»-ից հետո այս ընթացքում ձևավորվեցին երկու հիմնական խմբակցութիւններ՝ Չարենցի «Նոյեմբեր»-ը և Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիան, որին անդամակցում էին Ազատ Վշտունին, Նաիրի Զարյանը, Վահրամ Ալազանը, Նորայր Դաբալյանը, Գուրգեն Վանանդեցին, Հրաչյա Քոչարը և ուրիշներ: Թիֆլիսում նրանց հետ էր Հակոբ Հակոբյանը: Չարենցի կողքին էին Բակունցը, Մահարին, Մկրտիչ Արմենը. վերջիններիս գրական տեսակետները պաշտպանում էին քննադատներ Հարութիւն Սուրխաթյանը, Պողոս Մակինցյանը, Սուրեն Երզնկյանը: Գրապայքարը սուր էր և թեժ, բայց աստիճանաբար գրական հիմնահարցերից շեղվեց ու ձեռք բերեց քաղաքական բովանդակութիւն: Չարենցի խմբի ներկայացուցիչներին մեղադրեցին ազգայնամոլութիւն, ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի ղեկավարութիւն դեմ ահաբեկութիւն նախապատրաստելու մեջ, նրանց հռչակեցին հակահեղափոխական, ժողովրդի թշնամի և գնդակահարեցին կամ աքսորեցին, ոմանք էլ՝ վիրավորանքից ու հոգեկան կտտանքներից կիսախելագար, մեռան բանտերում կամ աքսորի ճանապարհներին: Մոտավոր հաշվումներով այս դաժան բռնութիւններին ենթարկվեց մոտ 100 հայ գրող, քննադատ, գրական գործիչ ու գեղարվեստական ոլորտի մտավորական:

1936–1937 թվականներից սկսած՝ այս արժանավոր դեմքերին փոխարինեցին կուլյր ու գուլ աշուղները, որոնք գաղափարապես ավելի

⁵ Ե. Չարենց. Անտիպ և չհավաքված երկեր, Երևան, 1984, էջ 88:

⁶ Թ. Հուրյան. Աստղ, Բաքու, 1943, էջ 74:

վստահելի էին իշխանությունների համար, որովհետև առանց մտածելու, չոնգուրն առած, Լենին ու Ստալին, «կոլխոզ» ու «ստանոկ» էին երգում: Նրանց համար՝ որպես ստեղծագործողի օրինակելի նմուշ, ներկայացվում էին դադստանցի Սուլեյման Ստալսկին և դազախ Ջամբուլ Ջաբաևը, որոնց «մուսան» հայր Ստալինի փառքն արեգակի փայլով ոսկեզօծելն էր:

Միաժամանակ, այս տարիներին ստեղծվում էր խորհրդային բանահյուսություն կոչված ամոթալի կեղծիքը, որ տպագրվում էր մամուլում և լույս տեսնում առանձին գրքերով:

Ազգային ոգին դատապարտվում էր. կեղծ ինտերնացիոնալիզմի կոչերի դիմաց ինչ հայրենիք, ինչ պատմական անցյալ, ինչ ազգային հերոսներ ու ազգային առանձնահատկություններ: Իսկ գեղարվեստի բարձր պահանջը իջեցված էր կիսագրագիտության, քաղաքագիտության աստիճանի:

Եվ ահա այս պայմաններում պայթեց պատերազմը: Ամբողջ ժողովրդի պես արվեստի և գիտության ներկայացուցիչները դարձան մի բռունցք՝ ուղղված թշնամու դեմ: Ամենուր հակապատերազմական ժողովներ էին, հանրահավաքներ, քննարկումներ, գեկուցումներ... Գրողներն առաջին գծում էին: Գրքերի ու գրական երկերի վերնագրերը դարձան «Պատերազմ», «Հայրենիք», «Հայրենիքի համար», «Հայրենական», «Մարտակոչ», «Ռազմակոչ», «Ռազմի շեփոր», «Ռազմի քնար», «Ռազմի երգեր», «Վրեժ», «Հատուցում», «Մարտիկի երգումը», «Կրակե լեզվով», «Շրկացած հոգով» ... Հաճախակի դարձան գրական բրիգադների այցելությունները գործասեր և գործող ճակատ: Այսպես հայ գրողների մի մեծ բանակ մասնակցեց պատերազմին և գեղարվեստական միջոցներով կռեց ու կոփեց հաղթանակի բերկրանքը:

Զարմանալի բան. անգամ պատերազմի դժվարին տարիներին՝ սպանված զինվորների ամենօրյա գույժերի, սովի ու տագնապի պայմաններում չդադարեց մշակութային կյանքի կենսագործունեությունը, ինչն իր հերթին նպաստեց թե՛ մտավորականության, թե՛ ժողովրդի ոգու ամրապնդմանը: Այս տեսակետից ավելորդ չէ մտաբերել պատերազմի թե՛ տարիների որոշ իրադարձությունների շատ համառոտ տարեգրությունը:

1942 թ. հունվարի 18-ին Երևան է ժամանում Մոսկվայի Գորկու անվան գեղարվեստական ակադեմիական և Փոքր թատրոնների արտիստների խումբը, ապրիլի 16-ին Կառավարական տան ճարտարապետական նախագծի համար Ալեքսանդր Թամանյանը ետմահու արժանանում է Ստալինյան (Պետական) երկրորդ կարգի մրցանակի, մայիսին Թատերական ընկերությունը կազմակերպում է բանավեճ՝ «Շեքսպիրի «Համլետ»-ի բեմադրության և մեկնաբանության հարցերը», հունիսի 12-ին Արվեստի տանը կազմակերպվում է Վահրամ Փափազյանի ստեղծագործական երեկոն, հունիսի 14-ին բացվում է Այվազովսկու նկարների ցուցահանդեսը, պատերազմի տարելիցի օրը Երևանում բացվում է Երաժշտական կոմեդիայի թատրոնը, Սունդուկյանի անվան թատրոնը բեմադրում է «Գևորգ Մարզպետունի» դրաման:

1943 թ. մարտի 23-ին նշվում է Թուամանյանի մահվան 20-րդ տարելիցը, մայիսի 7-ին՝ Սպենդիարյանի մահվան 15-րդ տարելիցը, հուլիսի 12-ին և 16-ին կազմակերպվում է գրականության լեզվի հարցերին նվիրված բանավեճ, նոյեմբերի 10-ին որոշում է կայացվում Գիտությունների ակադեմիա կազմակերպելու մասին, ինչը հանդիսավոր պայմաններում հիմնադրվում է նոյեմբերի 29-ին, նկարահանվում ու ղեկավարվում է «Դավիթ Բեկ» գեղարվեստական շարժանկարը:

1944 թ. հունվարին Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնը հյուրախաղերի է մեկնում Մոսկվա, նշվում է Թուամանյանի ծննդյան 75-ամյակը, ապրիլի 22–30 Երևանում հրավիրվում է շեքսպիրագիտական համամիութենական VI նստաշրջանը, ապրիլի 30-ին Գիտությունների ակադեմիայի դահլիճում Ջիվեղիգովը զեկուցում է «Եվրոպական վաղ վերածնությունը» նյութով, Օրբելին դասախոսում է X–XII դդ. քաղաքային մշակույթի մասին, նշվում է Չեխովի մահվան 40-րդ տարելիցը:

Գրական-մշակութային միջոցառումներով հարուստ է նաև 1945 թ.՝ ընդհուպ հաղթանակի օրը, իսկ դրանից հետո կյանքն աստիճանաբար ընկնում է բնականոն հունի մեջ:

Ավելացնենք՝ այս տարիներին երբեք չզաղարեց գրահրատարակչությունը: Տպագրվում էին ոչ միայն ժամանակակից գրողների, այլև՝ դասականների ստեղծագործությունները, լույս էր տեսնում գրականագիտական-հայագիտական, նաև թարգմանական բավարար գրականություն: Այս ամենը հիշեցնում ենք՝ ասելով՝ Հայրենական մեծ պատերազմում ժողովուրդը հաղթեց, որովհետև Փաշիգամի դեմ կանգնած էր ամբողջ ճակատով՝ մահվան դիմաց՝ կյանք, ավերումի դիմաց՝ ստեղծարար աշխատանք և ոչ թե կառույցների կազմաքանդում ու դասալքություն:

Հայ ժողովուրդը հերթական անգամ համախմբվեց հայրենիքի շուրջ: Ավ. Իսահակյանի, Մ. Սարյանի, Հ. Մանանդյանի, Դ. Դեմիրճյանի, Հ. Աճառյանի, Մ. Աբեղյանի, Հ. Օրբելու, Հ. Դանիելյանի, Ա. Տիգրանյանի, Ա. Տերտերյանի, Ն. Զարյանի, Հ. Ստեփանյանի, Վ. Վաղարշյանի և արվեստի ու գիտության այլ գործիչների ստորագրությամբ «Սովետական Հայաստան» օրաթերթում տպագրվում է և կոչ ուղղված արտասահմանի հայությունը. «... մենք դիմում ենք և կոչ անում – համախմբել բոլոր ուժերը՝ կանխելու համար վերադարձը դեպի միջնադար, կանխելու համար համաշխարհային կոլտուրայի ոչնչացումը, որ բերում է իր հետ գազանացած Փաշիգամը <...>: Մենք դիմում ենք ձեզ և կոչ ենք անում – համախմբել ձեր բոլոր ուժերը՝ հանուն Սովետական Միության պաշտպանության, հանուն մարդկության խարդախ ու վտանգավոր թշնամու – Փաշիգամի ոչնչացման»⁷:

Ավ. Իսահակյանը պատերազմին դիմադարձեց «Ռազմակոչ»-ով (26 հունիս, 1941, էսենտուկի), շարունակեց «Սիրելի հերոս Գ. Զաքիյանի անմահ հիշատակին» (4 ապրիլ, 1942), «Ժողովրդի երգը» (1943, օրը

⁷ «Սովետական Հայաստան», 17. VIII. 1941:

նշված չէ, գրված է որպես «Դավիթ-Բեկ» պատմագեղարվեստական կինոնկարի երգի խոսք) գործերով և ավարտեց «Հաղթանակի օրը» (9 մայիսի, 1945) բանաստեղծությունը⁸:

Այս ընթացքում՝ մինչև 1946-ին Հայաստանի գրողների միությունն նախագահ ընտրվելը, Իսահակյանը մասնակցել է տարբեր ժողովների ու համաժողովների, ունեցել ելույթներ, որոնք ամփոփված են առանձին հոդվածներում՝ «Ֆաշիզմը պիտի խորտակվի», «Մահ գերմանական օկուպանտներին», «Հայրենական պատերազմը և հայ ժողովուրդը», «Հաղթանակը պրոգրեսի կողմն է», «Հաղթանակն արդար գործի կողմն է», «Մղձավանջը վերջացավ»⁹:

Ավագ սերնդի գրողներից պատերազմի առաջին իսկ օրերից գրիչը ձեռքին ոտքի կանգնեցին Դ. Դեմիրճյանն ու Ստ. Զորյանը: Երկուսն էլ տեսել էին Առաջին համաշխարհային պատերազմի արհավիրքները, Հայոց ցեղասպանությունն ու հետագա անասելի իրադարձությունները և պատկերել իրենց ստեղծագործությունների մեջ, երկուսն էլ անցել էին նոր կազմավորվող խորհրդահայ գրականության բովով, երկուսն էլ պրոլետարական գրողների կողմից հորջորջվել էին «ուղեկից»-ներ, որ նշանակում էր՝ գրական ճանապարհի տերը իրենք՝ պրոլետար գրողներն են, ովքեր «մեծահոգաբար» հանդուրժում են, որպեսզի հեղափոխությունից առաջ իրենց գործունեությունն սկսած գրողները «ուղեկցեն» իրենց: Ահա նրանք՝ Դեմիրճյանը՝ որպես նախագահ, Զորյանը՝ քարտուղար, 1927-ին ստեղծեցին Աշխատավորական գրողների միությունը, 1929-ից հրատարակեցին «Նոր ուղի» գրական ամսագիրը և փորձեցին հավասարակշիռ քաղաքականություն վարել անհավասարակշիռ ժամանակներում: Ինչպես շատերը, նրանք ևս 1920–1930-ական թվականներին չէին կարող բացահայտել իրենց ամբողջ գրական ներուժը՝ հատկապես պատմահայրենասիրական հայեցակարգը, որովհետև ժամանակին պահանջվող և խրախուսվող հայրենասիրությունը միմիայն մեկ հասցե ուներ՝ սոցիալիստական ու ինտերնացիոնալ:

Եվ ահա պատերազմը սթափեցրեց, հատկապես նահանջի առաջին տարիներին, երբ հող հայրենին երերում էր ոտքի տակ, պահանջ գգացվեց պատմական անցյալի նորոգման: Անցյալի սնուցիչ անոթները նորից արյուն մղեցին գրականության սիրտը, և 1920–1930-ականներին ձևավորված սխեմատիզմի խրտվիչակը տապալվեց:

Դ. Դեմիրճյանն ու Ստ. Զորյանն իրենց գրավոր ու բանավոր խոսքն ասացին հնարավոր բոլոր ձևերով:

Դ. Դեմիրճյանը հանդես եկավ «Չարագործությունների «գիտական» սիստեմ», «Անցավ 1943 թիվը ...», «Նոր ֆաշիստական աշխարհագրություն և պատմություն», «Անցավ մի տարի ևս ...», «Ընկավ և մյուսը ...», «Նրանք հայրենիք են վերադառնում», «Իմաստուն ուրախություն»,

⁸ Ավ. Իսահակյան. Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 1, Երևան, 1973, էջ 357, 364, 367, 372:

⁹ Ավ. Իսահակյան. նշվ. ժող., հ. 5, Երևան, 1977, էջ 325–376:

«Մեծ հաղթանակ»¹⁰, «Հայ գրականությունը Հայրենական պատերազմի օրերին», «Կարմիր բանակը և կուլտուրան», «Տապալվեց ոճիրների միջնաբերդը»¹¹ և շատ այլ հոդվածներով: Նա հազավ զինվորական համագգեստ, մեկնեց դիրքեր, հանդիպեց ճակատայիններին և իր խոսքով ու ներկայությունով ոգեշնչեց նրանց: Բայց նրա ամենամեծ սխրանքը «Վարդանանք» վեպն էր, որին ձեռնարկեց 66 տարեկան հասակում: Ավարայրի դաշտում նույն այդ տարիքում իր սխրանքը գործեց նաև Վարդան Մամիկոնյանը:

Դեմիրճյանն առողջական խնդիրներ ուներ, շտապում էր ճակատային Հայ զինվորին տալ Ավարայրի հերոսական անցյալը հիշեցնող մատյանը: Վարդանանց պատերազմի մասին գրելը նրա հին երազանքներից էր՝ դեռևս 1912-ին գրած «Վասակ» դրամայի օրերից: Վարդանանց պատերազմը նա համարում էր Հայ ժողովրդի մղած Հայրենական պատերազմ: Դժվարին ժամանակներում, երբ հավատքն ու կրոնը մերժվում էին, գտավ նաև հարցի պատմական ճիշտ լուծումը, որովհետև գիտեր. «Ամբողջ երկու հարյուր տարի կրոնի հարցի ձևով էր գալիս պարսից ճնշումը»¹²: Եվ ահա եկել էր պատասխանատու պահը: Վեպի առաջին հատորն սկսել է գրել 1943-ի փետրվարին, նոյեմբերին արդեն պատրաստ էր, լույս տեսավ 1943-ի տարեվերջին, երկրորդը 1946-ին: Վեպին զուգահեռ գրեց և տպագրեց «Վարդանանց պատերազմը»¹³ աշխատությունը՝ ամփոփ ներկայացնելով իր պատմափիլիսոփայական հայեցակարգը, պատմական ժամանակն ու աշխարհագրությունը, հերոսների պատմաքաղաքական և հոգեբանական կերտման նախադրյալները¹⁴:

«Վարդանանք»-ը Դեմիրճյանը ձեռնարկեց որպես ինքն իրեն տված մարտական հանձնարարություն. ««Վարդանանք» պատմավեպը ես գրեցի Հայրենական պատերազմի ժամանակ: Այն արտակարգ, ժողովրդական ուժերի գերազանց լարման օրերին, կամ լավ է ասել այն օրերին, երբ վճռվում էր մեր Հայրենիքի լինել-չլինելու ճակատագրական խնդիրը: Ես զգացի, որ «Վարդանանքի» պահանջը օգի մեջ է: <...>: Ես գիտակցում էի, որ պատերազմը Հայրենական է <...>: Ես հիշեցի հինգերորդ դարը ...»¹⁵:

Վեպի երկրորդ հրատարակության համար (1951) գրել է առաջաբան՝ «Հեղինակի կողմից», որ ժամանակին մնացել է անտիպ. «Հազար հինգ հարյուր տարի առաջ Ավարայրի դաշտում Հայ ժողովուրդը կատարեց իր ամենամեծ ճիգը, ամենամեծ գործը – փրկեց իր ազատությունը: Այն օրից ամեն տարի տոնում է նա Վարդանանց իր հերոսական տոնը: Այն օրից, երբ անց կենալու համար որևէ Հայ ոտը դնում է այդ դաշտի վրա սկսում է երգել Վարդանանց նվիրված հազարհինգհարյուրամյա երգը – սուրբ ավանդ նրա համար: <...>: Ես ևս երգեցի <...> Վարդանանց երգը, որը

¹⁰ Դ. Դեմիրճյան. Երկերի ժողովածու 14 հատորով, հ. 14, Երևան, 1987, էջ 479, 483, 486, 489, 490, 494, 495:

¹¹ Դ. Դեմիրճյան. նշվ. ժող., հ. 12, Երևան, 1985, էջ 291, 365, 377:

¹² Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Դ. Դեմիրճյանի ֆ., թ. 467, էջ 65:

¹³ «Սովետական գրականություն և արվեստ» (Երևան), 1943, թիվ 3, 4–5:

¹⁴ Դ. Դեմիրճյան. նշվ. ժող., հ. 12, էջ 298–351:

¹⁵ Դ. Դեմիրճյան. «Վարդանանքի» մասին. – «Սովետական Հայաստան» (ամսագիր), 1952, № 10, էջ 34:

և նվիրաբերում եմ բոլոր ազատագրված, ազատագրվող և ազատագրության դաշտին ոտը դնելուն սպասող բոլոր ժողովուրդներին»¹⁶:

1944 թ. փետրվարին Իսահակյանը գրախոսեց Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպի առաջին հատորը՝ ժամանակի ոգուն շատ համապատասխան գնահատության խոսքեր ասելով. «Այս արժեքավոր վեպը՝ տողորված ազգային արժանապատվության բարձր գիտակցությամբ, իր հուզականությամբ ապրեցնում է մեզ: Կրթիչ, դաստիարակիչ վեպ է՝ բարձրացնող, ոգի կազդուրող: Մեր ներկա մեծ էպոխային Հայրենական պատերազմի օրերին բացարձակ համընկնող, ոգևորիչ խոսք՝ իր ժամանակին ասված: Նա պիտի խանդավառի մեր մարտիկներին օրինակ առնելու մեր հերոսական նախնիներից՝ վարդաններից, անձնագոհաբար կովելու հայրենիքի ազատության համար, կուլտուրայի պաշտպանության համար նոր Հազկերտի՝ Հիտլերի դեմ, որ եկել էր ընկճելու մեր հայրենիքը, ոչնչացնելու մեր կուլտուրան, ոտքի տակ տալու մեր պատիվն ու ազատությունը»¹⁷:

Դեմիրճյանը հետագայում ևս շարունակեց աշխատանքը՝ կրճատեց, լրացրեց, հղկեց «Վարդանանք»-ը, որն ունեցավ բազմաթիվ նոր հրատարակություններ, թարգմանվեց ռուսերեն ու այլ լեզուներով և դարձավ Հայ արձակի հաղթական կոթողային գործերից մեկը: Նա պատմությամբ այնքան էր տարվել, որ սկսեց «Մեսրոպ Մաշտոց» վեպը, ինչը, սակայն, մնաց անավարտ:

Ստ. Զորյանը 1943 թ. հանդես եկավ «Պատմական թեմատիկա և այլ հարցեր» հոդվածով՝ հիմնավորելով պատմական նյութի անհրաժեշտությունն ու հայտնելով, որ իրեն առաջարկել են գրել Վահան Մամիկոնյանի և Սմբատ Բագրատունու մասին: «Սմբատ Բագրատունի» պատմվածքն արդեն գրել և հրատարակել էր 1941-ին, իսկ Վահան Մամիկոնյանի փոխարեն նրա մտքում արթնացել էր Պապ թագավորը, որի վիպական կերպարն ստեղծեց համանուն վեպում¹⁸:

Զորյանը պատմական նյութի փորձ ուներ՝ թարգմանել էր Լև Տոլստոյի «Պատերազմ և խաղաղություն», Վ. Յանի «Չինգիզ խան» պատմական վեպերը, և հիմա, կանգնած հայոց պատմության ամենացայտուն հերոսներից մեկի կերպարը մարմնավորելու առջև, այսպես էր խորհում՝ պատմական երկը «որոշ պահանջ է, որոշ դեր է կատարում այս օրերին: Դրա ապացույցը ես ամեն օր տեսնում եմ թատրոններում և կինոներում» և բերում է «պերճախոս» այս փաստը. «... բանակային թերթի խմբագիր Բրազիլը եկավ մեզ մոտ և, ի միջի այլոց, ասաց, որ բանակայիններին շատ հետաքրքրում են առանձնապես պատմական վեպերը ... «Տվեք մեզ նաև պատմական վեպեր», – ասավ նա»¹⁹:

Ստ. Զորյանը վկայակոչում է նաև ցավալի մի իրողություն. «... ոչ միայն Հայ բանակայինները, այլև Հայ հրամանատարները չգիտեն Հայոց պատմությունը, Հայ անցյալը, որ Ավարայրը եղել է ազատագրական

¹⁶ Դ. Դեմիրճյան. նշվ. ժող., հ. 7, Երևան, 1983, էջ 441:

¹⁷ Ավ. Իսահակյան. նշվ. ժող., հ. 5, էջ 221–222:

¹⁸ Ստ. Զորյան. Պապ թագավոր, Երևան, 1944:

¹⁹ Ստ. Զորյան. Երկերի ժողովածու 12 հատորով, հ. 12, Երևան, 1990, էջ 460:

պատերազմ»²⁰: «Սրա մեղքը ո՞ւմն է», – հարցնում է գրողը, և ինքն էլ պատասխանում. «Ամենից առաջ հարկավ մեր Լուսժողովոմատինը, որ այս 23 տարվա ընթացքում չկարողացավ հայոց պատմության մի դասագիրք հրատարակել, որ մեր երիտասարդ սերունդն իմանա, թե ի՞նչ անցյալի տեր է իր ժողովուրդը, իր հայրենիքը, որ սիրի նրան»²¹:

Մեծ հաշվով «մեղքը» ոչ էլ «Լուսժողովոմատինն» էր, այլ բոլշևիկյան գաղափարախոսությունը, որը փորձում էր ամեն կերպ մոռացություն մատնել ազգային անցյալը և ամեն ինչ սկսել հեղափոխությունից: Անցյալի հիշողությունը գրականության մեջ դատապարտվում էր որպես նացիոնալիզմ, իսկ եթե՝ անցյալ, ապա միմիայն գաղափարական թունդ քննադատությամբ: Այդպես՝ որպես անցյալի իդեալականացում և փախուստ արդիականությունից, դատապարտվեց Վանի հիշողությունը Գ. Մահարու «Մանկություն» և «Պատանեկություն», Խարբերդի հիշողությունը Վ. Թոթովենցի «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» վիպակներում: Եվ դա այն դեպքում, երբ Վանն ու Խարբերդը նրանց ծննդավայրերն էին: Արգելվում էր հիշել 1915 թվականը, հայոց պետականության վերականգնումը 1918-ին, անգամ՝ Սարդարապատի հերոսամարտը, մի խոսքով, այն ամենը, ինչը կարմիր գծից անդին էր:

Ահա այս արգելանքն էլ պատնեշել էր նոր սերունդի գիտակցությունը, զրկել պատմության իմացությունից, դրա հետևանքով նաև հայրենասիրական տարերքից ու խանդավառությունից: Հայոց պատմության դասագրքերին, որոնք այդ տարիներին այդպես էլ չստեղծվեցին, փոխարինեցին պատմական վեպերը: Գեղարվեստական գրականությունը եկավ լրացնելու պատմության բացը, ահա թե ինչու մեր ժողովուրդի մեջ հարգի էր պատմավեպը:

Վերոհիշյալ հոդվածում Զորյանը նաև ասում է. «Սրա մեղքը մասամբ և գրողներինն է», – շատ լավ իմանալով 1920–1930-ական թվականներին գրողները գաղափարական խիստ վերահսկողության ներքո էին, ուստի չէին կարող պատմության դասեր տալ ժողովրդին և ապա շարունակում. «Ինչպես մենք հպարտանում ենք Վարդան Մամիկոնյանով, Դավիթ Բեկով և այլն, այնպես էլ պետք է հպարտանանք այն պատմական հերոսներով ու մեծ հայրենասերներով, որոնք հանդես են գալիս իմ վեպում (ոչ թե նրա համար, որ իմ հերոսներն են, այլ որպես պատմական անձեր)»: Մուշեղ սպարապետը, այդ եզակի գորավարը, որին գնահատում էին և օտարները, Սմբատ Բագրատունին, որ շիկացած շամփուրով է պսակում դավաճան Մերուժանի գլուխը, իշխան Կամսարականը, Պապ թագավորը և մյուսները, որ վաստակեցին հայոց պատմության ամենամեծ փառքը – Զիրավի ճակատամարտը. ոչ թե նահատակվեցին Վարդանանց պես և նահատակությամբ փրկեցին երկիրը, այլ խիզախեցին և թշնամուն ջախջախելով՝ վտարեցին հայ երկրից ու փրկեցին ժողովուրդը: Իսկ առանձնապես պետք է հպարտանանք երի-

²⁰ Նույն տեղում, էջ 461:

²¹ Նույն տեղում:

տասարդ Պապ թագավորով, որ ոչ միայն եղել է մեծ հայրենասեր, այլև ունեցել է պետական մեծ խելք, եղել է մեծ բարենորոգիչ»²²:

Ստ. Զորյանը հիացած էր իր պատմական հերոսով և վիպական գործողությունների մեջ կարողացավ կերտել նրա հայրենաշեն հրաշալի կերպարը: Ոգևորությունը պահպանվեց և հետագա տարիներին. գրեց նոր վեպեր՝ «Հայոց բերդը» (1959), «Վարազդատ» (1967)՝ ստեղծելով IV դարի իրադարձություններն ընդգրկող պատմական եռապատում:

Պատմավեպերը նաև առիթ էին արթնացնելու և շրջանառելու պատմիչների անուններն ու վաստակը՝ Ագաթանգեղոս, Բուզանդ, Խորենացի, Եղիշե, Փարպեցի, նաև հետագա շրջանի մատենագիրներ, որոնց անուններն այդպես էլ չէին հնչել ամբողջ 1920–1930-ական թվականների գեղարվեստական գրականության մեջ: Նաև գործադրվում էր Հայոց լեզվի հարստությունը. գրողները ոճավորում էին իրենց հերոսների խոսքը, և անհրաժեշտություն էր առաջանում օգտագործել գրաբարը, որը ևս օտարվել էր պրոլետարիատների կողմից: Ն. Զորյանը Չարենցին քննադատել է անգամ «դպրություն» բառը կիրարկելու և Ներսես Շնորհալու ոճաբանությունն օգտագործելու համար²³:

Միջնադարի մատենագիրներից բացի հնչեց նաև 1920–1930-ական թվականներից դարձյալ փակի տակ մնացած ու հայկական նացիոնալիզմի պարագլուխ հռչակված Բաֆֆու անունը՝ որպես հայ պատմավիպասանական դպրոցի առաջատարի, որի գեղագիտական սկզբունքներն էլ հիմնավորապես ընկած են Դեմիրճյանի և Զորյանի ստեղծագործության հիմքում:

Այսպես ամրանում է ժամանակների կապը, և ավանդույթը դառնում է արդիականություն, ինչը ժամանակի հրամայական պահանջն էր:

Ե՛վ Դեմիրճյանի, և՛ Զորյանի վեպերը տպագրվեցին մեծ տպաքանակներով ու նպաստեցին թե՛ պատերազմի դաշտում կռվող զինվորի և թե՛, ընդհանրապես, հայ ժողովրդի ոգեղեն զարթոնքին: Սա ազգային ինքնաճանաչման հզոր ազդակ էր:

Այսպես պատերազմը ճանապարհ բացեց պատմական թեմատիկայի առաջ: Իրար հաջորդեցին բանաստեղծություններ ու պոեմներ, թատերգություններ ու վիպական նոր ստեղծագործություններ, որոնցով հանդես եկան Նաիրի Զարյանն ու Գեղամ Սարյանը, Սողոմոն Տարոնցին ու Թաթուլ Հուրյանը, Խաչիկ Դաշտենցն ու Հովհաննես Շիրազը:

Ուշագրավ է Ն. Զորյանի գրական ճանապարհը: Ամբողջ 1920–1930-ական թվականներին նա հանդես էր գալիս որպես հետևողական պրոլետարիատի սխեմատիկ պատկերացումներով գրում էր գյուղի կուլեկտիվացման ու արդյունաբերական շինարարության մասին, չափածո դյուցազներգությամբ փառաբանում Ստալինին և անգամ չափածոյի վերածում կուսակցական որոշումներն ու հրահանգները: Պատերազմը բացեց նաև նրա աչքերը: Այցելելով գործող ճակատ, հանդիպելով հայ զինվորներին, խոսելով նրանց հետ՝ հասկացավ, թե ինչպես պիտի գրողն ու

²² Նույն տեղում, էջ 461–462:

²³ Ն. Զորյան. Գրական լեզվի նացիոնալիստական ազավաղումների դեմ. – «Խորհրդային գրականություն» (Երևան), 1936, թիվ 3–4:

գրականությունը ծառայեն եթե ոչ կյանքի կենդանի խնդիրները լուծելուն, ապա գոնե արծարծելուն, որն այս դեպքում պատերազմն էր իր բոլոր դրսևորումներով՝ ճակատից մինչև թիկունք, բանակից մինչև անհատ:

Պատերազմի տարիներին Չարյանը լույս ընծայեց «Մարտակոչ» (1941), «Արշակ և Շապուհ» (1941), «Ցասման գավաղը» (1942), «Վրեժ» (1942), «Ձայն հայրենական» (1943), «Շիկացած հոգով» (1943), «Լսեք, դարեր» (1943), «Հիտլերը զոոպարկում» (1944) գրքերը: Այս տարիներին գրեց և 1946-ին տպագրեց «Արա Գեղեցիկ» ղիցապատմական ողբերգությունը: Գրողների խմբով եղավ Ղրիմի ռազմաճակատում, գրեց «Տավրիդյան պարանոցում» ուղեգրությունը²⁴: Սկիզբը հայրենի հողի սերն էր և այն կորցնելու տազնապարհ՝ «Դու քաղցր ես հող իմ հայրենի ...», հաջորդ քայլը մարտակոչի ուղերձն է և «Ատելություն գիտություն» (Մ. Շոլոխով): Գերմանիան երևում է երկու կերպարով՝ մի կողմում Գյոթեն ու Բեթհովենն են, մյուսում՝ Հիտլերն ու համակենտրոնացման ճամբարները: Այս ընթացքում գրվում են ինչպես մարտական բնույթի՝ «Այց ռազմաճակատին», «Բլինդաժում», «Ստալինգրադ», այնպես և հայրենական շնչով տոգորված բանաստեղծություններ՝ «Արզաքանդի խնձորները», «Ուղերձ իմ ժողովրդին»: Գրախոսելով Չարյանի «Վրեժ» ժողովածուն՝ Վահրամ Թերզիբաչյանն այսպիսի շեշտադրում է անում. «Հայրենական պատերազմը Նաիրի Չարյանին հաղորդել է ոչ միայն էմոցիոնալ և ինտելեկտուալ նոր բովանդակություն, այլև արվեստի պատկերավորություն, ոճի, նույնիսկ տաղաչափական տեխնիկայի նոր միջոցներ՝ ազգային ձևի խոր առանձնահատկություններով և հարստությամբ»²⁵: Այս մտայնությամբ «Արզաքանդի խնձորները» համեմատում է Գրիգորիս Աղթամարցու «Տաղ ի վերայ նորաչէն տուն ու այգի ունենալու եւ լալու» ստեղծագործության հետ:

Ինքը՝ Չարյանը, 1936-ին Չարենցին քննադատում էր միջնադարը նորոգելու համար, հիմա միջնադարի վերադարձը խրախուսվում է, որովհետև հայրենիքն էր պահանջում:

Ճակատային զինվորի պատմական հիշողությունը նորոգելու, դրանով հայրենասիրական կորովը սխրանքի կոչելու տեսակետից առանձնանում է Չարյանի «Ձայն հայրենական» պոեմը: Սա պատմության այն համառոտ դասագիրքն է, ինչի պահանջը օդի մեջ էր, և այդ մասին ակնարկել ենք արդեն, բայց պատմության դասագիրքն ու դասերը նորովի գեղարվեստական մատուցման պահանջ ունեին: Ճակատամարտը նոր է վերջացել և երիտասարդ սպան կարգում է հայ ժողովրդի նամակը զինվորներին, որ ամբողջ հայոց պատմության հայրենական ճայնն է՝ Չարյանը Նահապետից մինչև Տիգրան Մեծ, հաջորդում են Խորենացին՝ «Հայոց պատմություն»-ը ձեռքին, Վարդան Մամիկոնյանն ու Սասունցի Դավիթը, այսպես տող առ տող հայոց դժվարին երթն է՝ Ավարայրից մինչև Սարդարապատ:

²⁴ «Սովետական գրականություն» (Երևան), 1942, թիվ 5–6:

²⁵ Նույն տեղում, էջ 202:

Այս պոեմի կապակցությամբ ավելացնենք, որ կառուցվածքը՝ որպես նամակ, վերցված է բուն իրականությունից: Այդ տարիներին շատ տարածված էր թիկունքից՝ ճակատ և ճակատից՝ թիկունք մամուլում տպագրվող հրապարակային նամակագրությունը: Այսպես, օրինակ, 1943 թ. փետրվարի 27-ին «Պրավդա»-ում հրապարակվում է «Հայ ժողովրդի նամակը հայ մարտիկներին»: Նամակին կցված է ինչպես «Պրավդա»-ի առաջնորդողը, այնպես և Հ. Օրբելու «Հայերի ոխերիմ թշնամիները» հոդվածը²⁶: Ահա փոխադարձ հաղորդակցության բնօրինակային այս ձևն էլ ընկած է Ն. Զարյանի պոեմի հիմքում:

Ավելացնենք, որ հայ ժողովրդի նամակը ստորագրել էր Հայաստանի 335.000 աշխատավոր, որ, իրոք, ձայն բազմաց էր...

Պատմության իմաստուն պատգամները Զարյանը նորոգեց «Արչակ և Շապուհ» պոեմում և, հատկապես, «Արա Գեղեցիկ» չափածո ողբերգության մեջ, որը նրա ստեղծագործական նվաճումն էր: Սիրո ու հայրենասիրության, պարտքի ու պարտականության զգացումներն այստեղ բացահայտված ու պատկերված են գեղարվեստական բարձր ներշնչանքով:

Պատմական անցյալն այս տարիներին նորոգեցին նաև այլ գրողներ. Մ. Խերանյանն իր հերթին ավելի վաղ գրեց «Արա Գեղեցիկ և Շամիրամ» վիպերգը (1943), տպագրվեցին Թաթուլ Հուրյանի «Ձրիկ» (1945), Խաչիկ Դաշտենցի «Տիգրան Մեծ» (լույս է տեսել 1947-ին) դրամաները, Սողոմոն Տարոնցին հրատարակեց «Ասպետ Լիպարիտ» պատմական պոեմը (1944), «Կրակե քառուղիներով» գրքում (1944) գետեղեց «Պատմական սոնետներ», «Դյուցազնական սոնետներ» շարքերը, անդրադարձավ ազգային էպոսին՝ «Դավթի երգը» (1946), պատմական անցյալի առանձին դրվագներով հուզական բալլադներ հյուսեց Գեղամ Սարյանը, պատմությունը Շիրազի ստեղծագործության առանցքն է, ինչպես երևացող մասով, երբ ոգեկոչում է պատմական հերոսների (Հայկ նահապետ, Տիգրան Մեծ, Վարդան Մամիկոնյան), այնպես և չերևացող, երբ խորհրդածում է ժողովրդի ճակատագրի, անգամ հայ մարդու բախտի մասին:

Հայ գրականությունը պատերազմի դեմ ուղղեց իր բոլոր «գինատեսակները» և մեծ հաղթանակի գործում անպայման իր արժանի ներդրումն ունեցավ: Արթնացավ նաև հոգիներ միավորող քնարական երգը. այն, ինչը 1920–1930-ական թվականներին դատապարտվում էր որպես մեղկ անհատապաշտություն, հեռացում սոցիալիզմի կառուցման հրատապ խնդիրներից, հիմա խրախուսվում էր, քանի որ հոգիներին միավորող զգացմունքային ալիքը գործող բանակ – թիկունք կապն ապահովող ամենավստահելի միջոցն էր: Կոստանդին Սիմոնովի «Սպասիր ինձ, և ես կվերադառնամ, // Միայն երկար սպասիր ...» շատ մեծ տարածում ունեցող բանաստեղծությունը նույնքան և ավելի ներգործող էր, որքան պատմահայրենասիրական դաստիարակիչ խոսքը:

²⁶ «Սովետական Հայաստան», 01. III. 1943:

Այս տեսակետից առանձնահատուկ է Հովհաննես Երրագի պոեզիան: Նրա թե՛ հայրենասիրական, թե՛ սիրային ու խոհական քնարերգությունը հազեցած է արտակարգ խոր հուզականությունը և ներգործման ուժով: Այս տարիներին նա հրատարակեց իր լավագույն բանաստեղծական ժողովածուները՝ «Երգ Հայաստանի» (1940), «Բանաստեղծի ձայնը» (1942), «Երգերի գիրք» (1942), «Լիրիկա» (1946), գրեց ամենայն դժվարություն հաղթահարելու կոչված իր հանճարեղ «Բիբլիական» պոեմը, դեռևս այս տարիներից հյուսում էր «Հայոց դանթեականը» վիպերգի տողերը, որը պետք է շարունակեր մինչև կյանքի վերջին տարիները: Երրագի տիեզերական պատկերամտածողությունը, համեմատությունների վիթխարի չափանիշները, գեղարվեստական մտածողության թարմությունն ասես գրական հրավառության պես երկնքից իջավ ժողովրդի վրա: Երրագն այս և հետագա տարիներին շատ բարձր պահեց հայրենասիրության շահը, մշտապես արծարծեց ազգային հոգևոր ու բարոյական արժեքների անփոխարինելի նշանակությունը, իշխանությունների հանդեպ մնաց անկաշառ, ինչի համար էլ ժողովուրդը թե՛ հայրենիքում, թե՛ սփյուռքում մատահեց նրան, սիրեց ու մեծարեց, հիրավի, որպես համաժողովրդական բանաստեղծ:

Խոր զգացմունքայնությունը են համակված նաև Համո Սահյանի բանաստեղծությունները, որոնք ի մի բերվեցին «Որոտանի եզերքին» գրքում (1946): Եթե Երրագի համար պատմական անուններն էին՝ Մասիսը և Նեմրոթը, Սահյանի համար իր ծննդավայրն էր, հայրենի տունն ու բնաշխարհը: Հայրենի տան ու բնաշխարհի զգացողությունից ծնվեցին նրա՝ այս և հետագա տարիների բոլոր բանաստեղծություններն ու դրանց մեջ նաև «Նաիրյան դալար բարդի»-ն (1944), որը շատ արագ թարգմանվեց ռուսերեն և հայտնի դարձրեց երիտասարդ բանաստեղծի անունը:

Պատերազմը միայն հաղթական «ուռա՛» ու հերոսություն էր, առաջին տարիներին պատերազմը նախևառաջ նահանջ էր, իսկ ամբողջ տևողության ընթացքում՝ նաև մահվան գույժ, որ «սև թղթի» տեսքով մտավ առնվազն 27 միլիոն խորհրդային բնակչի տուն ու ընտանիք: Այս մոտիվն առանձնապես չէր խրախուսվում, պետք էին միայն ոգևորության երգեր և հաղթական դիպաշարեր: Բայց գրվեցին նաև այս սքոզված ողբերգության էջերը. «Ահեղ լուծություն է ճամփաներում, // Սերմնացանները չգարձան տուն...»²⁷,— մղկտում էր Գ. Սարյանը, նա, ով 1941 թ. հունիսի 25-ին «Սովետական Հայաստան» օրաթերթում հանդես եկավ «Խոսք բարի երթի» բանաստեղծությամբ:

«Մենք դեռ նահանջում ենք, մենք դեռ նահանջում ենք // Ճամփաների կողքով, ճամփաները շեղած. // Իսկ մեզ քաջերի տեղ հիշում ու կանչում են // Հեռվից մի հայր մի կին, մի երեխա»,— որպես «Ծանր քայլերգ»²⁸ հնչեցնում էր Հրաչյա Հովհաննիսյանը:

Գրողներից շատերը չվերադարձան, մնացին մամուլում տպագրած նրանց բանաստեղծությունները, գրքերը և արյունոտ նամակները: Հի-

²⁷ Գ. Սարյան. Երկերի ժողովածու 5 Հատորով, հ. 1, Երևան, 1969, էջ 390:

²⁸ Հր. Հովհաննիսյան. Սուրբ դափնու վրա, Երևան, 1970, էջ 14–15:

չենք նրանց անունները՝ Թաթուլ Հուրյան, Դերենիկ Չարխչյան, Ավետիք Դերենց, Արտյոմ Շահբազ, Մուշեղ Բալասանյան, Գրիգոր Կուլոլյան, Խաչիկ Մալխասյան, Գուրգեն Մալով ...

Մի ամբողջ նոր սերնդի գրական ներկայացուցիչներ ասպարեզ մտան պատերազմի տարիներին և բնական է, որ նրանց ստեղծագործության գերիշխող լարը պետք է լիներ պատերազմի ու հաղթանակի հերոսիկան: Այդպիսին են Գ. Էմինի «Նախաշավիղ» (1940), «Խաղաղության ծխամորճը» (1942), «Նորք» (1946), Մ. Մարգարյանի «Բանաստեղծություններ» (1945), Ս. Կապուտիկյանի «Հատուցում» (1942), «Օրերի հետ» (1945), Հ. Սահյանի «Որոտանի եզերքին» (1946), Վ. Դավթյանի «Առաջին սեր» (1947), Պ. Սևակի «Անմահները հրամայում են» (1948), Հր. Հովհաննիսյանի «Իմ կյանքի երգը» (1948) բանաստեղծական ժողովածուները: Ընդհանուր ասելիքը նույնն է, տարբեր են արտահայտման ձևերը: Առանձին բանաստեղծություններում ուրվագծվում են պատերազմի հայտնի և անանուն հերոսների կերպարները: Դավթյանի «Ճանապարհ սրտի միջով» պոեմը, որ լույս տեսավ 1953-ին, նվիրված է հերոսաբար գոհված Հունան Ավետիսյանի կյանքին ու սխրագործությանը:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին հողվածներով, գրախոսություններով գեղարվեստական զարգացումներին մասնակցում էր նաև գրական քննադատությունը, որ մշակում էր գնահատման նոր համակարգ, տեսական ընդհանրացման էր բերում նորաստեղծ գրականությունը: Նշենք Հ. Մամիկոնյանի «Պատերազմական շրջանի սովետահայ գրականության մի քանի հարցերի շուրջը»²⁹, Խ. Սարգսյանի «Դիտողություններ արդի գրականության մասին»³⁰, Գ. Սարգսյանի «Գեղամ Սարյանի «Բալլադները»»³¹ հոդվածները: Մամուլը հարուստ է համանման հրավարակումներով:

Մի բան է Հայրենական մեծ պատերազմի տարիներին ստեղծված գեղարվեստական գրականությունը, մեկ այլ բան՝ այդ պատերազմին նվիրված գրականությունը, որ մեծ թափով շարունակվեց հետագա տարիներին՝ ընդհուպ ԽՍՀՄ-ի փլուզումը: Այն ստացավ որոշակի անուն՝ ճակատային գրականություն: Այդ գրականությունն ստեղծեցին ինչպես պատերազմին մասնակցած գրողները, նշվածներից բացի՝ Ս. Խանզադյանը, Հ. Քոչարը, Ա. Սարոյանը, Շ. Թաթիկյանը, Ք. Թափալցյանը, Խ. Գյուլնազարյանը, Խ. Հրաչյանը, Լ. Հուրունցը, Բ. Հովսեփյանը, Գ. Սևունցը, այնպես և թիկունքում հասակ առնող ապագա գրողները՝ Հ. Մաթևոսյանը, Վ. Պետրոսյանը, Զ. Խալափյանը, Մ. Մնացականյանը, Ռ. Հովսեփյանը, Հ. Մելքոնյանը և ուրիշներ: Հայրենական պատերազմի տարիների ճակատի ու թիկունքի կյանքը գեղարվեստորեն պատկերելու հարցում հայ գրականությունը պատվով կատարեց իր պարտականությունը:

Այն ստեղծագործական ազատությունը, որ պատերազմի տարիներին տրվել էր արվեստին՝ այդ թվում նաև գրականությունը, պատերազմից հետո սահմանափակվեց: Ընդունվեցին կուսակցական նորանոր որո-

²⁹ «Սովետական գրականություն և արվեստ», 1943, թիվ 6–7:

³⁰ «Սովետական գրականություն և արվեստ», 1944, թիվ 8:

³¹ «Սովետական գրականություն և արվեստ», 1944, թիվ 9:

չումներ, որոնք արվեստը մղում էին դեպի 1930-ական թվականների գաղափարական սխեմատիզմը, դրա հետ մեկտեղ վերականգնում նաև քաղաքական բռնությունները:

1946 թ. օգոստոսի 14-ին ընդունվեց ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի որոշումը ««Զվեզդա» և «Լենինգրադ» ամսագրերի մասին»: 1949 թ. հունվարի 11-ին ընդունվեց այս որոշումը վերահսկող մեկ այլ որոշում՝ ««Զնամ-յա» ամսագրի մասին» (1946 թ. օգոստոսի 14-ի որոշման կատարման ստուգում): 1946 թ. օգոստոսի 26-ին հաջորդեց ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի մեկ այլ որոշում՝ «Դրամատիկական թատրոնների խաղացանկի և դրա բարելավման միջոցառումների մասին»: Նույն թվականի սեպտեմբերի 4-ին շրջանառութային մեջ մտավ դարձյալ ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի հերթական մի նոր որոշում՝ ««Մեծ կյանք» կինոնկարի մասին»: Եվ, ի վերջո, 1948 թ. փետրվարի 10-ին ՀամԿ(Բ)Կ Կենտկոմը որոշում ընդունեց «Վ. Մուրադելու «Մեծ բարեկամություն» օպերայի մասին», իսկ փետրվարի 11-ին՝ ««Կրոկոդիլ» ամսագրի մասին»: Սրան էլ եթե ավելացնենք ՀԿ(Բ)Կ Կենտկոմի՝ 1947 թ. դեկտեմբերի 30-ի «Հայաստանի կուսակցական կազմակերպություններում գաղափարական աշխատանքն ուժեղացնելու մասին» որոշումը, պատկերը կդառնա ամբողջական:

Չորս տարում կուսակցական յոթ որոշում, որոնք գրականությունը դատապարտեցին մահացու սխեմատիզմի: Յուրաքանչյուր շեղում պատժվում էր: Քաղաքական հալածանքները նորից սկսվեցին. 1949 թ. հունիսի 13–14-ի գիշերը Հայաստանից արտաքսվեց 2.935 ընտանիք՝ 13.272 մարդ: Երկրորդ աքսորի դատապարտվեցին նաև առաջին աքսորից վերադարձածները, գրողներից՝ Մահարին, Լեռ Կամսարը, Նորենցը, Այազանը:

Պատերազմի տարիներին ասպարեզ մտած գրողների առաջին հաջողված գրքերին հաջորդեցին գաղափարական ճառի վերածված ստեղծագործություններ: Հ. Սահյանն ազնվություն ունեցավ և հետագայում խոստովանեց, որ այդ տարիներին հրատարակած «Առագաստ» (1947), «Սլացքի մեջ» (1950), «Ծիածանը տափաստանում» (1953) բանաստեղծական ժողովածուների համար ամաչում է³²: Անհաջողութային մատնվեցին և՛ ավագները՝ Ն. Զարյան, Գ. Սարյան, Հ. Քոչար, և՛ երիտասարդները՝ Պ. Սևակ, Վ. Դավթյան, Ս. Կապուտիկյան և ուրիշներ:

Այս ամենը գալիս է հաստատելու այն շրջանաբաժանումը, որ Հայրենական մեծ պատերազմի տարիների գրականությունը, ամբողջ արվեստը և մշակույթը պետք է դիտել որպես իր առանձնահատուկ պահանջներն ու դրան համապատասխան գաղափարական և գեղագիտական սկզբունքներն ունեցող միանգամայն առանձին ու ինքնուրույն փուլ ԽՍՀՄ, այդ թվում՝ ՀԽՍՀ մշակույթի պատմութային մեջ:

Դավիթ Գասպարյան – բ. գ. դ., պրոֆ., ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ պատմութային ինստիտուտի նորագույն պատմութային բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ XX դարի

³² Հ. Սահյան. Պոեզիան կօզնի մարդուն. – «Գրական թերթ» (Երևան), 28. IV. 1972:

Հայ գրականություն ու մշակույթի պատմություն, Եղիշե Չարենց: Հեղինակ է 60 գրքի ու հարյուրավոր հոդվածի: grakanagetgasparyan@mail. ru.

REFERENCES

- Charents E. Antip ev chhavaqvads erker, Yerevan, 1984 (In Armenian).
 Charents E. Erkeri zhoghovadsu 6 hatorov, h. 4, Yerevan, 1968 (In Armenian).
 Demirjyan D. Erkeri zhoghovadsu 14 hatorov, h.7, 1983; h.12, 1985; h. 14, 1987, Yerevan (In Armenian).
 E. Charentsi anvan grakanutyun ev arvesti tangaran, D. Demirjyani f., t. 467 (In Armenian).
 “Grakan tert” (Yerevan), 28. IV. 1972 (In Armenian).
 Hovhannisyan Hr. Sure dapnu vra, Yerevan, 1970 (In Armenian).
 Huryan T. Astgh, Baku, 1943 (In Armenian).
 Isahakyan Av. Erkeri zhoghovadsu 6 hatorov, h. 1, 1973; h. 5, 1977, Yerevan (In Armenian).
 “Khorhrdayin grakanutiun” (Yerevan), 1936, tiv 3–4 (In Armenian).
 Saryan G. Erkeri zhoghovadsu 5 hatorov, h. 1, Yerevan, 1969 (In Armenian).
 “Sovetakan grakanutiun” (Yerevan), 1942, tiv 5–6 (In Armenian).
 “Sovetakan grakanutiun ev arvest” (Yerevan), 1943, tiv 3, 4–5, 6–7; 1944, tiv 8, 9 (In Armenian).
 “Sovetakan Hayastan”, 17. VIII. 1941; 25. VIII. 1941; 01. III. 1943 (In Armenian).
 “Sovetakan Hayastan” (amsagir), 1952, tiv 10 (In Armenian).
 Tekeyan V. Erker, Yerevan, 1958 (In Armenian).
 Zoryan St. Erkeri zhoghovadsu 12 hatorov, h. 12, 1990, Yerevan (In Armenian).
 Zoryan St. Pap tagavor, Yerevan, 1944 (In Armenian).

АРМЯНСКАЯ ЛИТЕРАТУРА
 ВРЕМЕН ВЕЛИКИЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ

ДАВИД ГАСПАРЯН

Резюме

Ключевые слова: Великая Отечественная война, армянская литература, 1941–1945 гг., фронт, солдат, писатель, отступление, победа, Чаренц, Исаакян, Демирчян, Зорьян, Зарьян, Сагиян.

22 июня 1941 г. войска фашистской Германии напали на СССР, и началась Великая Отечественная война. На фронт было мобилизовано многонациональное население огромной страны. Известно, что в войне участвовало 600 000 армян, 300 000 – из Армении, половина не вернулась.

Литературу, искусство и культуру времен Великой Отечественной войны следует рассматривать как имеющую свои специфические тре-

бования и соответствующие им идеологические и эстетические принципы автономному веку в истории культуры СССР, в том числе АрмССР.

Армянская литература времен Отечественной войны освобождена от схематизации и ограничений предшествующих лет. В годы войны стала поощряться историческая тематика, были созданы романы «Вардананк» Д. Демирчяна и «Царь Пап» Ст. Зорьяна и много других произведений. Художественная литература в какой-то степени заменила солдатам учебники по истории.

Поощрялась также поэзия, в том числе личная, в которой прославились Ав. Исаакян, Н. Зарьян, Ов. Шираз, А. Сагиян, а также молодые поэты, которые только начали проявляться в литературном жанре: П. Севак, Г. Эмин, С. Капутикян, В. Давтян, Гр. Оганнисян и многие другие.

Армянская литература времен Великой Отечественной войны внесла заслуженную лепту в труднейшее дело завоевания победы.

*Давид Гаспарян – д. филол. н., проф., заслуженный деятель искусств РА, ведущий научный сотрудник отдела новейшей истории Института истории НАН РА. Научные интересы: история армянской литературы и культуры XX века, Египше Чаренц. Автор 60 книг и сотен статей.
grakanagetgasparyan@mail.ru*

ARMENIAN LITERATURE OF THE TIMES OF THE GREAT PATRIOTIC WAR

DAVID GASPARYAN

Summary

Key words: the Great Patriotic War, Armenian Literature, 1941–1945, front, soldier, writer, retreat, victory, Charents, Isahakyan, Demirchyan, Zoryan, Zaryan, Sahyan.

On June 22, 1941, the troops of fascist Germany attacked the USSR, and the Great Patriotic War began. The multinational population of a huge country was mobilized to the front. 600.000 Armenians participated in the war, 300.000 of which – from Armenia, half of them did not return.

Literature, art and culture of the times of the Great Patriotic War should be considered as having an autonomous milestone in the history of the culture of the USSR, including the ArmSSR, with its own specific requirements and the corresponding ideological and aesthetic principles.

The literature of the times of the Great Patriotic War is exempted from the schematization and limitations of previous years. During the war years, historical themes began to be encouraged. As a result, the historical novels “Vardanank” by D. Demirchyan and “King Pap” by St. Zoryan and many other

works on historical subjects were created. Fiction to some extent replaced the history books for soldiers.

Poetry, including personal one, was also encouraged, in which Av. Isahakyan, N. Zaryan, Hov. Shiraz, A. Sahyan, as well as young poets who had just begun to appear in the literary genre, were famous: P. Sevak, G. Emin, S. Kaputikyan, V. Davtyan, Gr. Hovhannisyanyan and many others.

The Armenian literature of the war years made a well-deserved contribution to the difficult task of winning victory.

David Gasparyan – Doctor of Sciences in Philology, Professor, Honored Art worker of the Republic of Armenia. Researcher at the Department of Contemporary History of the NAS RA Institute of History. Scientific interests: the history of Armenian literature and culture of the 20th century, Yeghishe Charents. Author of 60 books and hundreds of articles. grakanagetgasparyan@mail.ru

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ 1919–1920 ԹԹ. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ
(1991–2019 թթ.)*

ԼԻԼԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բանալի բառեր՝ Հայկական հարց, Արևմտյան Հայաստան, ինքնավարություն, Միացյալ և Անկախ Հայաստան, մանդատ, Փարիզի վեհաժողով, համաձայնագիր, հաշտության պայմանագիր, ինքնորոշում, Ազգերի լիգա, Վուդրո Վիլսոն, Հայոց պահանջատիրություն:

Առաջին աշխարհամարտում Գերմանիայի, Օսմանյան կայսրության և նրանց դաշնակից պետությունների պարտությունը բացեց Հայկական հարցի լուծման նոր հեռանկար: Հայաստանի առաջին հանրապետությունը, ազատվելով 1918 թ. Բաթումի հայ-թուրքական հաշտության պայմանագրի կապանքներից, շրջվեց դեպի պատերազմում հաղթանակած Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և ԱՄՆ-ը: Դրանով Հայկական հարցում Հայաստանի Հանրապետության քաղաքականության մեջ սկսվեց նոր՝ 1919–1920 թթ. ընդգրկող փուլը:

1991–2019 թթ. Հայաստանի պատմագրության մեջ գնահատելի աշխատանք է կատարվել 1919–1920 թթ. Փարիզի խաղաղության միջազգային վեհաժողովում ու Ազգերի լիգայում, նաև հայ հասարակական-քաղաքական շրջանակներում Արևմտյան Հայաստանի անկախության, նրա սահմանների և մանդատի վերաբերյալ դիվանագիտական բանակցությունների ու քննարկումների բովանդակությունը և արդյունքները վերաիմաստավորելու ուղղությամբ: Այս հիմնահարցերի վերաբերյալ հրատարակվել են թե՛ պատմագիտական աշխատություններ, թե՛ փաստաթղթերի ժողովածուներ¹ և թե՛ ժամանակակից գործիչների՝ իրադար-

* Ներկայացվել է 31. I. 2020 թ., գրախոսվել է 20. II. 2020 թ., ընդունվել է տպագրության 25. II. 2020 թ.:

¹ Համահայկական խորհրդակցություններ (1912–1920 թթ.): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմ. և պատ. խմբ. Ա. Վիրաբյան, Երևան, 2004, Իտալիայի արտաքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվի վավերագրերը Հայկական հարցի մասին 1913–1923 թթ., կազմ. և թարգմ. Ա. Բալոյան, Հ. Ա. և Բ. Երևան, 2008, Армения в документах Государственного департамента США 1917–1920 гг. Сост. и пер. с англ. Г. Г. Махмурян. Ереван, 2011; Армянский вопрос и геноцид армян в Турции (1913–1919). Материалы Политического архива министерства иностранных дел кайзеровской Германии. Сборник. Отв. ред. В. А. Микаелян. Ереван, 1995; Arbitral Award of the President of the United States of America Woodrow Wilson. Full Report of the Committee upon the Arbitration of the Boundary Between Turkey and Armenia, Washington, November 22nd, 1920. Yerevan, 2011.

ձուլվածությունները քննող երկեր²: Կատարված գիտական հետազոտությունների առանցքային արդյունքը, թերևս, Հայոց պահանջատիրության հարցի նորովի ուսումնասիրումն ու ներկայացումն է, նաև՝ հիմնահարցի վերաբերյալ երևանյան և արտասահմանյան արխիվների փաստազրական նյութի յուրացումն ու շրջանառության մեջ դնելը: Բացի այդ, ներկայացվել է նշված ժամանակահատվածում Հայկական հարցում Գլխավոր դաշնակից տերությունների³ դիրքորոշումն ու քաղաքականությունը, վերագնահատվել է դրա լուծման ուղղությունը հայ ազգային կուսակցությունների, ազգային կյանքը կազմակերպող և ուղղորդող մարմինների, Հայաստանի առաջին հանրապետության պաշտոնական պատվիրակության ու Ազգային պատվիրակության գործունեությունը:

Մինչև 1990-ական թվականները Հայկական հարցում Հայաստանի առաջին հանրապետության և մեծ տերությունների դիրքորոշումներն ու քաղաքականությունը գլխավորապես ուսումնասիրվում էին Սփյուռքում: Նշանակալի է 1990 թ. ՀԽՍՀ ԳԱ արտասահմանյան անդամի պատվավոր կոչմանն արժանացած Լոս Անջելեսի Կալիֆորնիայի համալսարանի Հայաստանի պատմության ամբիոնի ղեկավար, պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանի ներդրումը: Նրա՝ «Հայաստանի Հանրապետություն»⁴ անգլերեն քառահատոր կոթողային աշխատությունը 2005–2016 թթ. թարգմանվել է հայերեն, իսկ «1918–1920 թթ. Հայաստանի Հանրապետության միջազգային հարաբերությունները»⁵ մենագրությունը՝ 2007 թ. ռուսերեն: Ռ. Հովհաննիսյանի մոտեցումների և գնահատականների հիմքում հիմնավորվածության ու հավասարակշռվածության սկզբունքներն են և պատահական չէ, որ Հայկական հարցի Հայաստանյան պատմագրության մեջ դրանք ճշգրտորեն պահպանված են՝ չնայած այդ մասին գրականության մեջ բացակայում են համապատասխան հղումները:

Ըստ Հայաստանյան պատմաբանների, Հայկական հարցն Արևելյան հարցի համատեքստում դիտարկելու Գլխավոր դաշնակից տերությունների միասնական դիրքորոշման գաղափարական հիմքը դրվել էր հետպատերազմյան աշխարհակարգի սկզբունքների մասին 1918 թ.

² Ս. Վրացյան. Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, Ն. Ա դ ո ն ց. Երկեր, կազմ., ծանոթ., ներած. Պ. Հովհաննիսյանի, թարգմ. Վ. Դիլոյան, հ. Ա, Հայկական հարց, Երևան, 1996, Ա. Ա հ ա Ր ո ն յ ա ն. Սարգարապատից մինչև Սևր և Լոզան: Քաղաքական օրագիր 1919–1927, Երևան, 2001, է. Լ ի տ լ. Հայկական հարցը, թարգմ. Գ. Սարգսյան, Երևան, 2003, Ա-Դ ո (Հ. Տ ե Ր-Մ ա Ր տ ի Ր ո ս յ ա ն). Հայության երկունքը, Երևան, 2019:

³ Փարիզի վեհաժողովին մասնակցող Գլխավոր դաշնակից տերություններն էին Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, ԱՄՆ-ը, Իտալիան և Ճապոնիան:

⁴ Ռ. Գ. Հովհաննիսյան. Հայաստանի Հանրապետություն, հ. I, Առաջին տարին, 1918–1919, Երևան, 2005, հ. II, Վերսալից-Լոնդոն, 1919–1920, Երևան, 2014, հ. III, Լոնդոնից-Սևր, փետրվար-օգոստոս, 1920, Երևան, 2015, հ. IV, Սալի և մանգաղի միջև. Մասնատում և խորհրդայնացում, Երևան, 2016:

⁵ P. G. O v a n n e s y a n. Международные отношения Республики Армения, 1918–1920 гг. Пер. с англ. Г. Г. Махмурия. Ереван, 2007.

Հունվարի 5-ին Մեծ Բրիտանիայի վարչապետ Դեյվիդ Լոյդ Զորջի՝ Համայնքների պալատում ունեցած հիմնարար ելույթով և Հունվարի 8-ին ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի՝ Կոնգրեսի երկու պալատների համատեղ նիստում ներկայացված «14 կետեր»-ով: Գայանե Մախմուրյանի համոզմամբ, թուրքական հիմնախնդրի լուծումը կարևոր էր դաշնակիցների համար նույնքան, որքան համաշխարհային տարանցիկ ուղիների ազատութայն, երկրագնդի բնական ռեսուրսների հավասար օգտագործման ապահովումը, միջազգային կազմակերպության՝ Ազգերի լիգայի հիմնումը և դրան Գերմանիայի անդամակցությունը, ծովերի ազատությունն ու ազգային սպառազինությունների կրճատումը, դրանց արտադրության սահմանափակումը, ռազմական ուժերի, այդ թվում՝ ռազմածովային ուժերի ծավալների և ռազմական ծրագրերի հրապարակայնության ապահովումը⁶:

Վահան Մելիքյանն Առաջին աշխարհամարտում հաղթանակած պետությունների թվում կարևորում է ԱՄՆ-ի դիրքորոշումը Հայկական հարցի լուծման գործում՝ նշելով, որ Մեծ Հայաստանի հնարավոր ստեղծման նոր տարբերակներն ու մանդատի՝ Ազգերի լիգայի անունից որևէ պետությանը թուրքիայի տիրույթները և Գերմանիայի նախկին գաղութները կառավարելու իրավունքի լիազորություն տալու խնդիրն առնչվում էին Վ. Վիլսոնի անվան հետ: Հայկական հարցի վերաբերյալ վերջինիս բոլոր հայտարարություններն արտահայտում էին ոչ միայն ԱՄՆ-ում առկա հասարակական կարծիքն, այլև՝ քաղաքականության մեջ իդեալիզմը չբացառող այդ գործչի անձնական հակումները⁷: Հավելենք, որ դրա հետ մեկտեղ Փարիզի վեհաժողովում քննարկվող հարցերի վերաբերյալ Վ. Վիլսոնի դիրքորոշման վրա որոշակիորեն ազդում էին թե՛ նրա հակասություններն ԱՄՆ-ի Կոնգրեսի և Տրանսիայի վարչապետ Ժորժ Կլեմանսոյի հետ, թե՛ Դ. Լոյդ Զորջից ունեցած կախվածությունը:

Հրանտ Ավետիսյանը Փարիզի վեհաժողովում քննարկման առարկա դարձած Կոստանդնուպոլսից մինչև Անդրկովկաս միասնական մանդատի վիլսոնյան նախագծի տեսանկյունից է մեկնաբանում եվրոպական տերությունների մերձավորարևելյան քաղաքականությունը՝ վերհանելով դրա անուղղակի կապը թուրքական կառավարության համաթուրքական նվաճողական ծրագրերի հետ: Պատմաբանը շեշտում է, որ Վ. Վիլսոնի «14 կետեր»-ում և դրանց պաշտոնական մեկնաբանություններում, ապա միասնական մանդատի վիլսոնյան նախագծում ու 1919 թ. հոկտեմբերի 16-ին ամերիկյան զենքերալ Ջեյմս Հարբորդի գլխավորած ռազմական առաքելության կողմից Սենատին ներկայացված Զեկուցագրում⁸ համաթուրքության գաղափարախոսները տեսնում

⁶ Տե՛ս Գ. Գ. Махмуриян. Лига наций, Армянский вопрос и Республика Армения. Ереван, 1999, с. 19–21.

⁷ Տե՛ս Վ. Մելիքյան. Արեւմտահայերի համագումարները եւ Հայկական հարցի փուլերը 1917–1923 թթ., Երեւան, 2007, էջ 22, 23:

⁸ Տե՛ս Papers relating to the foreign relations of the United States. 1919. In two volumes. Vol. II. Washington, 1934, pp. 841–874.

էին Վ. Վիլսոնի կողմից Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության և ինքնիշխանության ճանաչումը⁹: Հ. Ավետիսյանը եզրակացնում է, որ միասնական մանդատի վիլսոնյան նախագծի իրագործման դեպքում չէր բացառվում նոր հնարավորությունների ստեղծումը թուրքական կառավարության համաթուրքական նվաճողական ծրագրերի իրականացման՝ Հայաստանի «վերացման», Կովկասի և անդրկասպյան երկրների թուրք-թաթարների միջև անմիջական կապի հաստատման, ուժեղ և միասնական թուրքական պետության ստեղծման համար¹⁰: Դրանով Արևմուտքը մտադիր էր նոր պատենչ ստեղծել ընդդեմ Ռուսաստանի: Համաթուրքության վտանգավորության խնդիրը դիտարկելով ժամանակի հոլովոլթում՝ նա միանգամայն իրատեսական և հիմնավորված է համարում 1919 թ. հունիսի 16-ին կնքված վրացադրբեջանական «պաշտպանական» համաձայնագրին միանալու գաղափարի մերժումը Հայաստանի առաջին հանրապետության կառավարության կողմից, քանի որ դրա նպատակը գեներալ Անտոն Դենիկինի Կամավորական բանակի առաջխաղացման դեպքում համատեղ հանդես գալն էր: Կարևորելով պատմական փորձի դերն ազգի և պետության առջև ծառայած բարդ ու ճակատագրական իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու գործում՝ Հ. Ավետիսյանը նշում է, որ Ռուսաստանի հարցում Հայաստանը չի կարող և չպետք է կովկասյան ժողովուրդների հակառուսական կողմնորոշումն ունենա, քանի որ այն չի բխում հայ ժողովրդի շահերից¹¹:

Վ. Մելիքյանի կարծիքով, միասնական մանդատին ենթակա վիթխարի և ռազմաքաղաքական առումով կարևոր տարածքում տարբեր ազգերի ու ժողովուրդների, հետևաբար՝ տարբեր շահերի գոյությունը պարտադրում էր մեկ ուժային կենտրոնի հովանավորության հաստատում՝ աշխարհի այդ պայթյունավտանգ գոտում տևական խաղաղության ապահովման նպատակով: Նա նկատում է, որ «ենթատեքստում անպայման նկատի էր առնվում բուլղերիկների կողմից Անդրկուկասը խորհրդայնացնելու քաղաքականութեան գործոնը»¹²: Այս իմաստով պատմաբանն արդիական է համարում Ջ. Հարբորդի այն տեսակետը, որ միասնական մանդատի դեպքում հայերը և թուրքերը կլինեին հարևաններ, երկու կամ երեք մանդատի դեպքում՝ հակառակորդներ¹³:

Գ. Մախմուրյանի փաստարկմամբ, մանդատի գաղափարը դիվանագիտական քննարկումների օրակարգ բերելով Գլխավոր դաշնակից տերությունները նախևառաջ մտահոգ էին իրենց ներքին ու արտաքին պետական խնդիրներով, իսկ ճնշված ժողովուրդների ճակատագիրը ենթակա էր հարմարեցման դրանց լուծման ընթացքին: «Ահա հենց այդ

⁹ Տե՛ս Հ. Ավետիսյան. Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997, էջ 330, 335:

¹⁰ Նույն տեղում, էջ 336, նաև՝ Գ. Ա. Аветисян. Генерал Акоп Баградуни (1879–1943)–ИФЖ, 1997, № 1, с. 54–55.

¹¹ Տե՛ս Հ. Ավետիսյան. նշվ. աշխ., էջ 337–338:

¹² Վ. Մելիքեան. նշվ. աշխ., էջ 24:

¹³ Տե՛ս նույն տեղում, էջ 25:

պատճառով էլ Հայաստանի անկախության գաղափարը հանգեցվում էր վերջինիս ինքնավարությանը մեկ կամ բոլոր մեծ տերությունների հովանու ներքո»¹⁴, – նշում է հետազոտողը: Հղում կատարելով բրիտանական Արտաքին գործերի նախարարության արխիվային փաստաթղթերին՝ Գ. Մախմուրյանը հիմնավորում է Մեծ Բրիտանիայի դիվանագիտության վճռորոշ դերն Արևելյան Հարցի լուծման գործում՝ չնայած ԱՄՆ-ի ընդգծված շահագրգռվածությանը Թուրքիայի ու Անդրկովկասի նկատմամբ միասնական մանդատի հարցում¹⁵: Մատնանշվում է Հայաստանի մանդատի հարցում Լոնդոնի կառավարության՝ իր դաշնակիցներից ավելի արագ ու արդյունավետ գործելու հանգամանքը¹⁶: Պատմաբանի կարևոր եզրահանգումներից է նաև այն, որ բրիտանական դիվանագիտությունը նախապատվություն էր տալիս Արևելյան Հայաստանում և Անդրկովկասում Լոնդոնի ունեցած ֆինանսատնտեսական ու ռազմաքաղաքական շահերին, իսկ Արևմտյան Հայաստանի հարցի լուծումը կախման մեջ էր դրվում Մեծ Բրիտանիայի ռազմական և ֆինանսական դժվարություններից¹⁷:

Գ. Մախմուրյանը և Վ. Մելիքյանը նշում են, որ տարածաշրջանում ԱՄՆ-ի դիրքերի ամրապնդման կանխումը Լոնդոնի կառավարության մերձավորարևելյան քաղաքականության առանցքն էր: Այդ պատճառով էլ, ի հակակշիռ ԱՄՆ-ի, Մերձավոր Արևելքում մանդատի առաջարկ էր արվում նաև Ֆրանսիային: Ավելին, ԱՄՆ-ին և Ֆրանսիային առաջարկվում էին մանդատի՝ նրանց ուժերից վեր, հետևաբար՝ մերժելի տարբերակներ¹⁸: Պատմաբանները նաև շեշտում են, որ Ազգերի լիգան միջազգային իրավական կարևոր հարցերում կախման մեջ էր Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի հրահանգներից ու միջոցներից, ինչն էլ վճռորոշ դեր կատարեց Ազգերի լիգայի Նորհրդի կողմից թե՛ Հայաստանի մանդատը մերժելու, թե՛ նրան ֆինանսական օգնություն տրամադրելուց հրաժարվելու հարցերում¹⁹: Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի հետ ԱՄՆ-ի ունեցած հակասություններից բացի, Հայաստանի մանդատի հարցի ընթացքի վրա էապես ազդում էր նաև կոնկրետ պարտավորություններ ստանձնելուց խուսափելու Վ. Վիլսոնի կեցվածքը: Այդ հանգամանքը Գ. Մախմուրյանը բացատրում է նրանով, որ համաշխարհային պատերազմի ընթացքում ԱՄՆ-ը պատերազմ չէր հայտարարել Օս-

¹⁴ Г. Г. Махмуриян. Лига наций, Армянский вопрос и Республика Армения, с. 35.

¹⁵ Տե՛ս Գ. Գ. Մախմուրյան. Политика Великобритании в Армении и Закавказье в 1918–1920 гг. Время белого человека. Ереван, 2002, с. 97–100.

¹⁶ Տե՛ս Գ. Գ. Մախմուրյան. Лига наций, Армянский вопрос и Республика Армения, с. 37.

¹⁷ Տե՛ս Գ. Գ. Մախմուրյան. Политика Великобритании в Армении и Закавказье в 1918–1920 гг. Время белого человека, с. 162–167.

¹⁸ Տե՛ս Գ. Գ. Մախմուրյան. Лига наций, Армянский вопрос и Республика Армения, с. 76; նաև՝ Վ. Մելիքեան. նշվ. աշխ., էջ 25:

¹⁹ Տե՛ս Գ. Գ. Մախմուրյան. Лига наций, Армянский вопрос и Республика Армения, с. 45–46.

մանյան կայսրությունը, չէր մասնակցել այդ պետության դեմ ռազմական գործողություններին, չէր նպաստել թուրքահպատակ ժողովուրդներին, մասնավորապես՝ արևմտահայերի ազատագրմանը թուրքական տիրապետությունից, իսկ առանց ռազմական գործոնի մանդատ իրականացնելն անհնար էր: Պատմաբանը նկատում է, որ այն ԱՄՆ-ի համար ուներ նաև դրական, պաշտպանիչ նշանակություն, քանի որ Օսմանյան կայսրության դեմ չպատերազմելու պատճառաբանությամբ նա հրաժարվում էր գործ ուղարկել տարածաշրջան: Միանգամայն տեղին է Գ. Մախմուրյանի հնչեցրած այն հռետորական հարցադրումը, որ եթե Օսմանյան կայսրության դեմ չպատերազմելու հանգամանքն այդքան ծանրակշիռ էր ԱՄՆ-ի համար, և նա հետագայում էլ պատերազմ չէր հայտարարելու այդ պետությանը, ապա ԱՄՆ նախագահն ինչպե՞ս էր համոզելու Կոնգրեսին Հայաստանի մանդատի հարցում²⁰:

Այս առումով ուշադրավ է Գ. Մախմուրյանի եզրակացությունը Հայաստանի մանդատի ուրվագծովոյ արդյունքների վերաբերյալ. Հայաստանն ունենալու էր պետական ինքնուրույնության ավելի բարձր մակարդակ, քան Միջագետքն ու Պաղեստինը: Սակայն դրա դիմաց նրա մանդատի ժամկետն ավելի երկար էր լինելու, քան՝ մյուսներինը: Բացի այդ, անորոշ էր մնում հայկական անկախ և միացյալ պետության սահմանների վերջնական ձևավորման՝ Հայաստանի ու հայ ժողովրդի համար կենսականորեն կարևոր հարցը, ինչն էլ կանխորոշեց 1920 թ. թուրք-հայկական պատերազմի անխուսափելիությունը: Եվ քանի որ Հայաստանը չափազանց թույլ էր Թուրքիայի հարձակումից խուսափելու ու դիվանագիտական բանակցությունների միջոցով իր խաղաղ գոյությունն ապահովելու համար, ուստի նրան մնում էր հավաքել առկա բոլոր ուժերը և փորձել համաձայնության գալ Խորհրդային Ռուսաստանի հետ, ինչը, ցավոք, տեղի չունեցավ:

Հայաստանի մանդատը վերցնելուց ամերիկյան Սենատի հրաժարումը Վ. Մելիքյանը բացատրում է ԱՄՆ-ում նախագահ Վ. Վիլսոնի քաղաքական դիրքի թուլացմամբ, Կոնգրեսի երկու պալատներում նրա ղեկավարած Դեմոկրատական կուսակցության մեծամասնության կորստով, ծախսատար ու քիչ արդյունավետ վիլսոնյան արտաքին քաղաքականության նկատմամբ երկրում աճող ընդդիմությունը: Պատմաբանը նշում է, որ ԱՄՆ-ի հրաժարումը Վերսալյան համակարգին մասնակցելուց նշանակում էր ոչ միայն քաղաքական լայն նշանակություն ունեցող երևույթի հաստատագրում, այլև՝ Օսմանյան կայսրության բաժանման հարցի վերադարձ իր ելակետային դիրքին, մասնավորապես՝ 1916 թ. հունվարի 3-ի Սայքս-Պիկոյի անգլո-ֆրանսիական գաղտնի նախագծի սկզբունքներին, իհարկե, առանց Ռուսաստանի²¹: Իսկ Գ. Մախմուրյանը հավելում է, որ, չնայած պատերազմից Ռուսաստանի դուրս գալու, նաև թուրքական պետության պարտության արդյունքում 1918 թ. մարտի 3-ի Բրեստ-Լիտովսկի հաշտության պայ-

²⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 56, 98:

²¹ Տե՛ս Վ. Մելիքեան. նշվ. աշխ., էջ 25:

մանագրի դիվանագիտական ուժը կորցնելու հետևանքով Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան այլևս իրավասու չէին զբաղվելու իրենց նախկին գինակից պետություն՝ Ռուսական կայսրության տարածքային խնդիրներով: Այնուամենայնիվ, ԱՄՆ-ը բնավ չահագրգռված չէր օգտվելու այդ հանգամանքից և ստանձնելու արևմտահայկական այն տարածքի հովանավորությունը, որը ռուսական բանակը գրավել էր 1914–1917 թթ.²²:

Հայաստանյան պատմաբանների աշխատություններում կարևորված է նաև Հայաստանի առաջին հանրապետության կողմից ազգային խնդիրներն ու նպատակները միջազգային ասպարեզում հիմնավոր և ընդունելի ներկայացնելուն ու Հայկական հարցի արդարացի լուծմանը խոչընդոտած պատճառների վերլուծությունը: Մասնավորապես, Վ. Մելիքյանն ընդգծում է, որ հայ ժողովրդի գոյության համար ճակատագրական պահին՝ Առաջին աշխարհամարտի արդյունքների ամփոփման նախօրեին և ընթացքում, հայության ինքնակազմակերպմանն ու համազգային ներկայացուցչությունը խոչընդոտում էր արևմտահայ և արևելահայ առճակատումը: Միանգամայն օրինաչափ համարելով ՀԅԴ բարձր հեղինակությունն ու ազդեցությունը հայ հասարակական-քաղաքական կյանքում՝ պատմաբանը շեշտում է, որ հենց դրա հետևանքով ազգային կյանքից մեկուսացվում էին մյուս առաջատար ազգային ուժերը՝ Ս.-Դ. Հնչակյան և Սահմանադիր-Ռամկավար կուսակցությունները²³:

Վ. Մելիքյանը նկատում է, որ, բացի այդ, Հայաստանի առաջին հանրապետության գոյության ողջ ընթացքում հայ հասարակական-քաղաքական շրջանակներում համազգային ակտիվ, նախաձեռնողական արտաքին քաղաքականության օրակարգ մշակելու փոխարեն շարունակում էին քննարկել Հայկական հարցի բովանդակության և բնույթի, Հայաստանի երկու մասերի իրավական կարգավիճակի հարցերը միասնության մեջ, թե՞ առանձին-առանձին դիտարկելու տեսակետները: Պատմաբանն այդ իրողությունը բացատրում է նրանով, որ տասնամյակներ շարունակ հայ հասարակական-քաղաքական միտքը հայոց պատմական Հայրենիքում հայկական պետականության վերականգնման գաղափարը կապել էր բացառապես Արևմտյան Հայաստանի հետ, իսկ Արևելյան Հայաստանում՝ ընդհուպ բազմազգ Ռուսական կայսրության փլուզումը, հայկական պետականության վերականգնման որևէ ծրագիր կամ նպատակ գոյություն չէր ունեցել: Այդ պատճառով էլ պետականության վերականգնումն Արևելյան Հայաստանի տարածքում այն դեպքում, երբ պատմական Հայրենիքի մեծ մասի խնդիրը տակավին լուծված չէր, արևմտահայերի մի մասի համար խորթ երևույթ էր: Ավելին, տարանջատված ու հատվածական էր նաև Հայաստանի անկախ հանրապե-

²² Տե՛ս Գ. Գ. Махмуриян. Лига наций, Армянский вопрос и Республика Армения, с. 51; Գ. Մ ա խ մ ու ը յ ա ն. Սևրի դաշնագիրը և ԱՄՆ-ի քաղաքականությունը Հայաստանի Հանրապետության նկատմամբ 1919–1920 թթ. – Հայաստանի Հանրապետություն–100: Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, խմբ. Ա. Մարուքյան, Երևան, 2018, էջ 284:

²³ Տե՛ս Վ. Մելիքեան. նշվ. աշխ., էջ 5–6:

տուժյունում, Արևմտյան Հայաստանում, Կովկասում, հեռավոր երկրների հայկական գաղթօջախներում ապաստանած արևմտահայերի գործունեությունը²⁴: Գաղափարաքաղաքական նման միջնորդություն 1919 թ. փետրվարի 6–13-ը Երևանում տեղի ունեցած Արևմտահայերի երկրորդ համագումարի ընդունած «Քաղաքական բանաձևը», Վ. Մելիքյանի արժևորմամբ, «արտահայտում էր անկախություն հռչակած ժողովրդի կամքը»: Այնուհետև, անդրադառնալով «մեկ հայրենիքի», այսինքն՝ «Միացյալ և Ազատ Հայաստանի» գաղափարն իրագործելու համագումարի դիրքորոշմանը՝ պատմաբանը շեշտում է, որ դրանով «վճռական քայլ արուեց հայ ժողովրդի երկու հատուածների մերձեցման, քաղաքական գործիչների հաշտեցման ուղղությունը», ապա ավելացնում «1878 թ. Բեռլինի վեհաժողովից յետոյ, Հայկական Հարցն առաջին անգամ յառնեց համահայկական քաղաքական ծրագրի տեսքով ու նաև որպէս հետևանք՝ համատեղ գործունէութեան եւ փոխադարձ գիջումների»²⁵:

Արևմտահայերի ինքնակազմակերպման, արևմտահայ-արևելահայ առձևակատումը մեղմելու, համագաղափար կենսական շահերը միջազգային ասպարեզում միասնաբար պաշտպանելու տեսանկյունից Վ. Մելիքյանը կարևորում է նաև 1919 թ. փետրվարի 24-ից ապրիլի 22-ը Փարիզում տեղի ունեցած Հայկական ազգային համագումարը²⁶: Համագումարում քննարկված բազմաթիվ հարցերից Վահան Մելիքյանը և Սամվել Պողոսյանը կարևորում են Հայաստանի մանդատի, հայկական ազգային բանակի և Միացյալ Հայաստանի կազմավորման, Ազգային պատվիրակության նոր կազմի ձևավորման, խաղաղության վեհաժողովին ներկայացվելիք հայկական պահանջների, պատերազմի ընթացքում հայ ժողովրդի կրած նյութական վնասի չափը որոշելու հարցերը: Դրանց քննարկման ընթացքում ՀՅԴ-ի և մյուս ազգային կուսակցությունների գործիչների միջև բորբոքված տարաձայնությունները Վ. Մելիքյանը բացատրում է արտաքին քաղաքական իրավիճակով, Առաջին աշխարհամարտում պարտված Օսմանյան կայսրության ու եվրոպական պետությունների միջև ձևավորվող հարաբերություններով²⁷:

Հայ իրականությունը բնորոշ հատվածականությունը և դրա հետևանքներին անդրադարձել է նաև Գ. Մախմուրյանը: Վերլուծելով 1918 թ. դեկտեմբերին Փարիզում Հայկական հարցի լուծման մասին Ազգային պատվիրակության ջանքերով անգլերենով պատրաստված հուշագիրը²⁸ նա եզրակացնում է՝ հեղինակների համոզմունքը, թե հայերը կարող էին հուսալի պատենջ դառնալ Թուրքիայի, Անդրկովկասի թուրք-թաթարների, Կենտրոնական Ասիայի և Թուրքեստանի միջև, չէր համապատասխանում «ո՛չ հայ ժողովրդի իրական դրությունը, ո՛չ էլ նրա քաղա-

²⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 8:

²⁵ Նույն տեղում, էջ 7, 9, 11–12:

²⁶ Տե՛ս Համահայկական խորհրդակցություններ (1912–1920 թթ.), էջ 333–504:

²⁷ Տե՛ս Վ. Մելիքյան. նշվ. աշխ., էջ 20, 23–24, Ս. Պողոսեան. Պողոս Նուբար Փաշա. ազգային գործիչը, Երևան, 2004, էջ 164–170:

²⁸ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 200, ց. 2, գ. 31, թ. 1–17:

քական բարօրությունը, քանի որ դիմակայությունը ապագայի համար միակ և լավագույն հեռանկարը էր»²⁹: Պատմաբանի գնահատմամբ, Պողոս Նուբարի գլխավորած Ազգային պատվիրակությունը Փարիզի վեհաժողովում ներկայանում էր որպես թույլ ու Ազգերի լիգայի մանդատը հայցող ժողովրդի ներկայացուցիչ, իսկ նրա ղեկավարի կողմից հայերի զանգվածային տեղահանության, բռնագաղթի, կոտորածների, դրանց հետևանքների և նշված հանցագործությունների համար մեղավորներին պատժելու անհրաժեշտությունը շեշտելու նպատակն ավելի շատ հոգեբանական ազդեցություն գործելն էր, քան հայ ժողովրդի ու նրա անկախ պետականության իրական հնարավորությունները ներկայացնելը: Նա նաև քննադատում է հայկական միացյալ և անկախ պետության սահմանների որոշումը ոչ թե հայերին, այլ խառը հանձնաժողովի որոշմանը վերապահելու դրույթը՝ շեշտելով, որ հայերն իրենք պետք է որոշեին, թե որքան տարածք կարող էին վերահսկել: Ավելին, նրանք պետք է առաջադրեին մանդատար պետության թեկնածուությունը, բայց ի վիճակի չեղան այդ անելու, քանի որ ՀՀ պաշտոնական պատվիրակությունը չկարողացավ օգտագործել մեծ տերությունների հակասությունները, թեև նրա պահանջները չափավոր ու իրագործելի էին, զերծ ավելորդ կոնկրետացումներից և ծայրահեղություններից³⁰: Բացի այդ, բացասական հետևանքներ ունեցան հայկական պատվիրակությունների ծրագրային դրույթների արմատական տարբերությունները, Պ. Նուբարի մաքսիմալիստական ծրագիրը, լիդերության ճգնաժամը և քամահրական վերաբերմունքը ՀՀ-ի նկատմամբ³¹: 1919 թ. փետրվարի 12-ին ՀՀ պաշտոնական պատվիրակության ղեկավար Ավետիս Ահարոնյանի կողմից Փարիզի վեհաժողովի բոլոր պատվիրակներին ներկայացված հուշագիրը վկայաբերելով Գ. Մխամբուրյանը շեշտում է, որ հենց դա սկիզբ դրեց հայկական հարցում մեծ տերությունների դիվանագիտական այն հնարքին, երբ ավելի շատ խոսվում էր հայ ժողովրդի ողբերգական կորուստների ու ազգային պահանջների, քան գործնականում հնարավոր այն օգուտների մասին, որոնք կարող էր ստանալ Հայաստանը հովանավորող պետությունը: Այս փաստը վկայում է, որ հետպատերազմյան աշխարհակարգը տնօրինող պետությունները բնավ չահագրգռված չէին հայկական հարցի արդարացի լուծմամբ. հետևաբար խուսափում էին այդ ուղղությամբ որևէ գործնական պարտավորության ստանձնումից³²: Իսկ Վ. Մելիքյանի կարծիքով, հուշագրի դրույթներում անիրագործելի ոչինչ չկար, քանի որ 1919 թ. հունվարի 30-ին Վ. Վիլսոնի նախաձեռնությամբ վեհաժողովը որոշում էր ընդունել Հայաստանն ազատագրելու և ԱՄՆ-ը մանդատար պետություն նշանակելու մասին: Նման պայմաններում, երբ Մեծ Հայաստանի ստեղծումը կասկածի ենթակա չէր, խնդիրն առավելապես Հայաստանի սահմանների ճշտման և որևէ պետութ-

²⁹ Г. Г. Махмуриян. Лига наций, Армянский вопрос и Республика Армения, с. 36.

³⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 66–67:

³¹ Նույն տեղում, էջ 64–65, 67:

³² Տե՛ս նույն տեղում, էջ 61:

յան կողմից նրա մանդատն ընդունելու մեջ էր: Դաշնակից տերությունները կարող էին և պետք է այդ հարցը լուծեին Օսմանյան կայսրությանը պարտադրվող հաշտության պայմանագրի շրջանակներում: Մինչդեռ նրանց ուշադրությունը սեռված էր Գերմանիայի հետ հաշտության խնդրին, ինչի հետևանքով Հայկական պահանջների հուշագիրը պատշաճ արձագանք չգտավ³³:

Արարատ Հակոբյանի գնահատմամբ, ՀՀ-ն էր այն առանցքը, որի շուրջ պետք է միավորվեին հայկական մնացյալ հողերն ու ստեղծվեր Միացյալ և Անկախ Հայաստան: Մինչդեռ Պ. Նուբարը, հայ ռամկավարներն ու հայ ժողովրդականները բնավ չէին կարևորում Հայաստանի Հանրապետության գործոնը: Ավելին, նրանք Արևմտյան Հայաստանի հարցը կտրում էին իրատեսական հիմքից և, Միացյալ Հայաստան ասելով, հասկանում էին արևմտահայկական նահանգներն ու Կիլիկիան միասին: Նաև հավակնում էին ապագա Միացյալ Հայաստանի ղեկին տեսնել Պ. Նուբարին և նույնիսկ Փարիզում նրա գլխավորությամբ կազմել էին սովերային կառավարություն³⁴: Իսկ Գալուստ Գալոյանը հավելում է, որ ՀՀ-ին և Արևմտյան Հայաստանին սպառնացող արտաքին վտանգի պայմաններում Պ. Նուբարի կողմից հայկական պատվիրակությունների, նաև նրանց ու Հայաստանի կառավարության միջև տարակարծությունների հրապարակայնացումը էլ ավելի էր նվազեցնում Հայկական հարցի արդարացի լուծման, Միացյալ և Անկախ հայկական պետությունն ստեղծելու գաղափարը կյանքի կոչելու հավանականությունը, մանավանդ Գլխավոր դաշնակից տերությունները դեռևս չէին կորցրել հույսը Ռուսաստանի այն ուժերի նկատմամբ, որոնք ձգտում էին խորհրդային կարգերի տապալմանը և «մեծ ու անբաժան Ռուսաստանի» վերականգնմանը: «Այդ պատճառով էլ աննպատակահարմար գտնվեց ազգային կառավարությունների ներկայացուցիչներին պաշտոնապես խորհրդաժողով թողնելը»³⁵, – նկատում է Գ. Գալոյանը:

1919–1920 թթ. Հայկական հարցի միջազգային դիվանագիտական քննարկումների հետ անմիջականորեն կապված են 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի պայմանագրում Հայաստանի սահմաններին, իրավական կարգավիճակին ու հայ ժողովրդի արդար իրավունքներին վերաբերող հողավածների գիտական վերարժևորման հարցերը: Պատմաբանների գնահատմամբ, Սևրի պայմանագիրը, գիտական հետաքրքրություն ներկայացնելուց բացի, հայերիս համար ունի քաղաքական նշանակություն, քանի որ Արևմտյան Հայաստանի նկատմամբ հայ ժողովրդի անվիճելի և արդարացի իրավունքները հաստատող կարևոր դիվանագիտական փաստաթուղթ է՝ իրավական անժամանցելի հիմք հայոց պահանջատիրության

³³ Տե՛ս Վ. Մելիքեան. նշվ. աշխ., էջ 28:

³⁴ Տե՛ս Ա. Մ. Հակոբյան. Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ.: Անկախության 100-ամյակի առթիվ, Երևան, 2018, էջ 119:

³⁵ Գ. Գալոյան. Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., Երևան, 1999, էջ 104:

Համար³⁶: Ըստ Ստեփան Պողոսյանի և Կարեն Պողոսյանի իրավացի նկատուման, Սևրը «ծնվեց» ոչ այնքան որպես աշխատելուն նպատակադրված պայմանագիր, որքան միջոց թույլ չտալու, որ օսմանահպատակ ժողովուրդները՝ մասնավորապես հայերը, կողմնորոշվեին դեպի Խորհրդային Ռուսաստան, հանձինս ստեղծվելիք Հայաստանի ելք ունենալ դեպի Բաքու և Պարսկաստան, մեկուսացնել Թուրքիան Ռուսաստանից: Նրանք նաև շեշտում են, որ մեծ տերությունները մտադիր չէին մարդկային, նյութական ու ֆինանսական ռեսուրսներ տրամադրելու Սևրի պայմանագրով նախատեսված Հայկական հարցի լուծմանը³⁷:

Գ. Մախմուրյանը Սևրի հաշտության պայմանագիրն արտաքին ուժերով իրագործելու՝ ՀՀ ղեկավարների հույսերը հավասարազոր է համարում հանցագործության ընդգծելով, որ դրա հետևանքով վտանգի տակ էր դրվում ամեն ինչ, այդ թվում՝ ազգային անկախությունը: Նա այդ մտայնության հիմքում տեսնում է ՀՀ-ի կուսակցական-քաղաքական ղեկավարների միակողմանի կողմնորոշումը դեպի Արևմուտք, ինչի միջոցով վերջիններս միայն երկարաձգում էին իրենց իշխանությունը³⁸: Պատմաբանի կարծիքով սխալ էր նաև հուսալ, թե հայկական անկախ պետության սահմանները կարող էին որոշվել ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի Իրավարար վճռով, քանի որ դրանք իրականում պայմանավորված էին հայ-թուրքական հարաբերությունների ընթացքով, իսկ մեծ տերությունների միջամտությունը կարող էր միայն նպաստող, ոչ թե վճռորոշ նշանակություն ունենալ³⁹: Հետազոտողներին հենց այդ եզրահանգման է բերում նաև Գ. Մախմուրյանի կազմած ու ռուսերեն թարգմանած «Հայաստանը ԱՄՆ պետական դեպարտամենտի 1917–1920 թթ. փաստաթղթերում»⁴⁰ ծավալուն ժողովածուում ընդգրկված դիվանագիտական փաստաթղթերի և «Հայաստանը ԱՄՆ-ի քաղաքա-

³⁶ Տե՛ս Լ. Խ ո լ ը շ ու դ յ ա ն. Հայկական հարցը: Բովանդակությունը, ծագումը, պատմության հիմնական փուլերը, Երևան, 1995, էջ 49–50, նաև՝ Կ. Խ ա չ ա տ ը յ ա ն, Գ. Գ ա լ ո յ ա ն. Հայկական հարցը Փարիզի խաղաղության վեհաժողովում: Սևրի պայմանագիրը. – Հայոց պատմություն, հ. 4, գիրք I: Նորագույն ժամանակաշրջան (1918–1945 թթ.), Երևան, 2010, էջ 164, Լ. Հ ո վ Տ ա ն ի ս յ ա ն. Սևրի պայմանագրում Հայաստանին և հայերին վերաբերող հոդվածների պատմական ու իրավական նախադրյալները. – Հայաստանի Հանրապետություն–100: Միջազգային գիտաժողովի գեկուցումների ժողովածու, էջ 261–273:

³⁷ Տե՛ս Ս տ. Պ ող ո ս յ ա ն, Կ. Պ ող ո ս յ ա ն. Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, հ. III (Հայկական հարցը 1920–1922 թվերին), գիրք II, Երևան, 2003, էջ 176, 198–199, 201, 206:

³⁸ Տե՛ս Գ. Գ. Махмуриян. Лига наций, Армянский вопрос и Республика Армения, с. 123.

³⁹ Տե՛ս ն ու յ ն տեղում, էջ 42–43:

⁴⁰ Տե՛ս Armenia в документах Государственного департамента США 1917–1920 гг.

կանուլթյան մեջ 1917–1923 թթ.»⁴¹ ուսերեն մենագրության ուսումնասիրությունը:

Գ. Գալոյանի համոզմամբ էլ, Հայաստանի շահը պահանջում էր մերձենալ Ռուսաստանի հետ: «Հայաստանի Հանրապետության կառավարության ռազմավարական գլխավոր խնդիրն էր իր սահմաններում վերականգնել հայաբնակ այն բոլոր տարածքները, որոնք մինչև 1914 թվականը գտնվում էին Ռուսական կայսրության սահմաններում»⁴², – նշում է պատմաբանը և հավելում, որ տնտեսական ու ռազմավարական շահերով Ռուսաստանի հետ կապված Հայաստանը, սակայն, քաղաքականապես կողմնորոշվել էր դեպի Արևմուտք, ինչն «անհեռատես և անհեռանկար քաղաքականություն էր, որը հետագա չարիքների աղբյուր էր հանդիսանալու»⁴³:

1920 թ. ամռանն ու, հատկապես, Սևրի պայմանագրի կնքումից անմիջապես հետո՝ անխուսափելի դարձած թուրք-հայկական պատերազմի նախօրյակին, հայ քաղաքական գործիչներից շատերը կարծում էին, թե հնարավոր էր համաձայնություն գալ ու հաշտության պայմանագիր կնքել թուրքերի հետ՝ սերյան պահանջներից հրաժարվելու դիմաց նրանցից ետ ստանալով Ալաշկերտն ու Բայազետը: «Իհարկե, կարելի է վիճարկել այդ վարկածի ռեալության շուրջը, բայց, այնուամենայնիվ, կարծում ենք՝ կային համաձայնության գալու հավանականություն որոշ պաշար ու կռվաններ: Սակայն հանրապետության ղեկավարությունը և գրեթե ամբողջ ժողովուրդը չգնաց նման գիծման»⁴⁴, – նկատում է Ա. Հակոբյանը: Պատմաբանն այդ կապակցությամբ հիշատակում է Հովհաննես Քաջազնունու այն միտքը, որ այդ շրջանում Սևրի պայմանագիրն այնքան էր «չլացրել մեր աչքերը, ոգևորել և ինքնավստահ դարձրել մեզ, որ ավելորդ համարեցինք բանակցել թուրքերի հետ»⁴⁵: «Ավելին, այդ ժամանակ նույնիսկ գտնվեցին հայ «գործիչներ», որոնք անարդար համարեցին Սևրի պայմանագիրը՝ դժգոհելով, թե նրանում ընդգրկված էին հայկական մնացած վիլայեթները: Դատողություններ անելով այդ մասին, այնուամենայնիվ, գտնում ենք, որ դժվար էր վստահել ու հավատալ կոմպրոմիսային բանակցություններ վարելու քեմալականների անկեղծությանը»⁴⁶, – նշում է Ա. Հակոբյանը: Նրա համոզմամբ, խորհրդաքեմալական հակահայկական գործակցությունը, քեմալական կառավարությունը սիրաշահելու անգլոֆրանսիական քաղաքականությունը Սևրի պայմանագրի հիման վրա

Պատմամիջակայքի հանրագիտություն 2020 № 1 Историко-филологический журнал

⁴¹ Տե՛ս Գ. Գ. Махмуриян. Армения в политике США 1917–1923 гг. Ереван, 2018.

⁴² Գ. Գալոյան. նշվ. աշխ., էջ 61:

⁴³ Նույն տեղում, էջ 60–61:

⁴⁴ Ա. Հակոբյան. Հայաստանի Հանրապետություն (1918–1920 թթ.), Երևան, 1992, էջ 24:

⁴⁵ Հ. Քաջազնունի. Հ. Յ. Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Երևան, 1994, էջ 33:

⁴⁶ Ա. Հակոբյան. Հայաստանի Հանրապետություն (1918–1920 թթ.), էջ 24:

Հայկական հարցի լուծումը ճախողելու հիմնական պատճառներն էին: Պատմաբանը շեշտում է, որ ՀՀ-ի արևմտամետ արտաքին քաղաքական կողմնորոշումը տվեց ընդամենը Սևրի պայմանագրով ստորագրված Միացյալ, Անկախ, Ազատ Հայաստանի գաղափար, որն այդպես էլ մնաց թղթի վրա. պայմանագիրը չվավերացրին ո՛չ թուրքական կողմը և ո՛չ էլ Անտանտի տերությունները (բացառությամբ Իտալիայի). այն, ցավոք, չիրականացավ⁴⁷: Իսկ Ստ. Պողոսյանը և Կ. Պողոսյանը նկատում են, որ Մոսկվայի դիրքորոշումը միայն առաջին հայացքից էր հակահայկական: Ռուսաստանը, լինելով Քեմալական թուրքիայի դաշնակիցը, դեմ էր Անդրկովկասում նրա դիրքերի ուժեղացմանը՝ քաջ գիտենալով, որ Քեմալը ձգտում էր ոչ միայն տիրանալ Բաքվի նավթին, այլև իրականացնել համաթուրանականության նախնական ծրագիրը՝ ընդհանուր սահման ունենալ թուրք-թաթարական աշխարհի հետ, իսկ համաթուրանականությունն առաջին հերթին ուղղված էր Ռուսաստանի դեմ, քանի որ թուրք-թաթարական ցեղերի մեծ մասի հայրենիքները Ռուսաստանի տարածքում էին⁴⁸:

Համբարձում Կարապետյանի դիտարկմամբ՝ որքան բնական ու անխուսափելի էր Արևմուտքի հետ հույսեր կապելու ՀՀ քաղաքականությունը, նույնքան բնական և անխուսափելի էր նրա շրջադարձը դեպի Սորհրդային Ռուսաստան: Պարզապես հայաստանյան դիվանագետները նկատի չէին առել, որ Ռուսաստանը կբարձրացներ Հայկական հարցը Փարիզի խորհրդաժողովի օրակարգից դուրս բերելու, ապա նաև՝ Սևրի պայմանագրից հրաժարվելու հարցը՝ Հայաստանի ու թուրքիայի միջև բանակցություններում միջնորդի դեր ստանձնելու դիմաց: Պատմաբանի համոզմամբ, Հայաստանը պետք է արագ կողմնորոշվեր, քանի որ թուրքիան և Ռուսաստանը գործում էին թե՛ դիվանագիտություն, թե՛ զենքով: Միաժամանակ, խորհրդաքեմալական վտանգին գումարվելու էին գալիս խորհրդայնացած Ադրբեյջանի հավակնությունները Արցախի, Զանգեզուրի, Շարուրի ու Նախիջևանի նկատմամբ⁴⁹:

Վ. Մելիքյանը իրավացիորեն նշում է, որ Սևրի հիմնահարցի ուսումնասիրողները հիմնականում ուշադրություն են դարձնում հայկական երկու պատվիրակությունների անհամաձայնեցված, երբեմն իրա-

⁴⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 26: Նշենք, որ 1918–1920 թթ. Հայաստանի Հանրապետության արևմտամետ քաղաքականության ու Սևրի պայմանագրով Միացյալ և Անկախ Հայաստան ստեղծելու հույսերի անհեռանկարայնությունն ու անիրական լինելը վկայող հայկական և ռուսական արխիվային արժեքավոր վավերագրեր են տեղ գտել «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն)» (խմբ. Գ. Գալոյան, 2000) փաստաթղթերի և նյութերի ժողովածուում:

⁴⁸ Տե՛ս Ստ. Պողոսյան, Կ. Պողոսյան. Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, հ. III (Հայկական հարցը 1918–1919 թթ.), գիրք I, մաս Բ, Երևան, 2004, էջ 146–147, 150–151, 170, 171, 173:

⁴⁹ Տե՛ս Հ. Կարապետյան. Սևրի պայմանագիրը հայոց ճակատագրում, Երևան, 2004, էջ 64, 81, 87:

րամերժ գործունեությունը, ՀՀ պաշտոնական և Ազգային պատվիրակությունների, նաև հայ ազգային կուսակցությունների միջև հակասություններին՝ գրեթե անտեսելով ՀՀ ռազմական թուլությունը, արտաքին քաղաքականության անկայունությունը, թույլ դիվանագիտությունը, քեմալականության թերազնահատումը և մեծ տերությունների օգնության գերազնահատումը⁵⁰: Նրա կարծիքով, Հայկական հարցի լուծման ճախողումը և Հայաստանի առաջին Հանրապետության անկումը պայմանավորված էին ոչ միայն քեմալաբոլշևիկյան մերձեցմամբ «համալսարհային իմպերիալիզմի» ու Կովկասում այդ «իմպերիալիզմի օջախ Հայաստանի Հանրապետության» դեմ, այլև՝ քեմալականությունը բոլշևիզմի դեմ ուղղելու անգլո-ֆրանսիական քաղաքականությամբ: Դա «յանցաւոր համագործակցութիւն էր, որի պատմա-քաղաքական զնահատականը չի տրուած մերօրեայ Ռուսաստանի եւ Հայաստանի Հանրապետութեան կողմից»⁵¹, – նշում է Վ. Մելիքյանը՝ դրանով իսկ առաջադրելով ռուսական պետության նկատմամբ Հայաստանի երրորդ հանրապետության պաշտոնական դիրքորոշումը ձևակերպելիս անցյալի պատմական դասերը հիմնավորապես հաշվի առնելու, բայց և ծայրահեղությունների մեջ չընկնելու անհրաժեշտությունը:

1920 թ. մարտ–1921 թ. փետրվար ժամանակահատվածում Հայկական հարցն արծարծվել է նաև միջազգային առաջին կազմակերպությունն՝ Ազգերի լիգային անդամակցության, Ազգերի լիգայի կողմից ՀՀ մանդատը հովանավորությունը, ստանձնելու վերաբերյալ դիվանագիտական քննարկումների ընթացքում, որոնք համակողմանիորեն լուսաբանված են էդիտա Գոդոյանի մենագրության մեջ⁵²: Ուսումնասիրության մեջ ուշադրով կերպով ներկայացված են, մասնավորապես, այն իրավական հնարքները, որոնք կիրառվել են 1920 թ. մարտի վերջին Ազգերի լիգայի քարտուղարության իրավական բաժնում Հայաստանի մանդատի հարցի քննարկման ընթացքում: Է. Գոդոյանի համոզմամբ, Ազգերի լիգայի դիրքորոշումը բավական հակասական էր ու անհասկանալի, քանի որ մի կողմից դրական վերաբերմունք էր ցուցաբերվում Ազգերի լիգայի կողմից Հայաստանի մանդատը վերցնելու գաղափարին, իսկ մյուս կողմից էլ այն անհիմն փաստարկներով մերժվում էր:

Պատմության հեզնանքով Հայկական հարցի լուծման վերաբերյալ ամենահայանպաստ փաստաթուղթը՝ 1920 թ. նոյեմբերի 22-ի Վ. Վիլսոնի իրավարար վճիռը, ստորագրվեց այն ժամանակ, երբ ՀՀ-ն ռազմական պարտություն էր կրում թուրք-հայկական պատերազմում և միաժամանակ պատրաստվում էր ընդունել բոլշևիկյան իշխանությունը: Պատերազմի արդյունքում կնքված 1920 թ. Ալեքսանդրապոլի պայմանագրով թուրքիան Հայաստանից զավթեց Կարսի մարզը, Սուրմալուի գավառը, Նախիջևանի, Շարուրի, Շահթախթիի շրջանները, հրա-

⁵⁰ Տե՛ս Վ. Մելիքեան. նշվ. աշխ., էջ 43:

⁵¹ Նույն տեղում:

⁵² Է. Գոդոյան. Հայաստանի առաջին Հանրապետությունը և Ազգերի լիգան, Երևան, 2013:

ժարվեց ինչպես այդ պատերազմի, այնպես էլ Առաջին աշխարհամարտի ժամանակ բնաջնջված և արտաքսված հայերի ունեցվածքի հատուցումից, իսկ Հայաստանին պարտադրեց հրաժարվել Սևրի պայմանագրից: Այդպիսով Քեմալական Թուրքիան իրեն ձեռնտու տարբերակով լուծեց Հայկական հարցը⁵³: Իսկ Գ. Մախմուդյանի դիպուկ գնահատմամբ, 1920 թ. Հայաստանի դեմ պատերազմում տարած հաղթանակով Թուրքիան «չեզոքացրեց» Վ. Վիլսոնի իրավարար վճռի կենսագործումը⁵⁴: Հանուն մեր ազգային իրավունքների պաշտպանություն պատմաբանը ներկա և ապագա հայ սերունդներին կոչ է անում փայփայել հայոց անկախ պետականությունը, չվատնել նրա ներուժն ու հնարավորությունները, չներքաշվել դրանց գերազանցող ներքին և արտաքին գործընթացների մեջ, պետություն քաղաքականությունը ծառայեցնել բացառապես ազգային շահերի պաշտպանությունը՝ միշտ պատրաստ լինելով անմիջապես օգտվելու արտաքին նպաստավոր հանգամանքներից⁵⁵:

Սևրի միջազգային պայմանագրի չիրագործման պատճառների, հայ-թուրքական սահմանի վերաբերյալ Վ. Վիլսոնի՝ 1920 թ. նոյեմբերի 22-ի իրավարար վճռի նշանակություն, հայ-թուրքական առկա սահմանագծի անօրինականություն, նկատմամբ ուշագրավ են Աշոտ Մելքոնյանի հրատարակած դասախոսություններում և, հատկապես, մեծաթիվ հրապարակային ելույթներում ու զանգվածային լրատվամիջոցներին տված հարցազրույցներում հնչեցրած շեշտադրումները: Դրանք խտացված արտահայտում են վերոնշյալ հիմնահարցերի ուսումնասիրմամբ զբաղվող Հայաստանյան մասնագետների կողմից վերջին տարիներին հրատարակված պատմագիտական ու իրավաքաղաքագիտական աշխատություններում ամփոփված հիմնարար եզրահանգումները: Ա. Մելքոնյանի փաստարկմամբ, Հայկական հարցի արդարացի լուծմանը խոչընդոտեց նախևառաջ պայմանագիրը լիովին չվավերացնելն այն ստորագրող պետությունների խորհրդարանների կողմից, հետևաբար՝ նաև ուժի մեջ չմտնելը: Այդ հանգամանքը, սակայն, որևէ կերպ չի ազդում փաստաթղթի վավերականությանը: Սևրի պայմանագիրն օրինապես կմտնի ուժի մեջ, եթե պայմանագիրը ստորագրած բոլոր երկրները վավերացնեն այն: Նա նաև կարևորում է մեծ տերությունների կողմից պայմանագրի կենսագործումը հետաձգելն ու մոռացություն մատնելը և Խորհրդային Ռուսաստանի ռազ-

⁵³ Այս մասին մանրամասն տե՛ս է. Զ ո հ ր ա բ յ ա ն. 1920 թ. Թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997, ն ու լ յ ն ի՝ Նախ-իջևանյան հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները» (1918 թ. դեկտեմբեր-1920 թ. ապրիլ), Երևան, 2002, Լ. Խ ո լ ր շ ու դ յ ա ն. Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Երևան, 2002, Հ ր. Խ. Ս ի մ ո ն յ ա ն. Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991:

⁵⁴ Գ. Գ. М а х м у р я н. Армения в политике США 1917–1923 гг., с. 499.

⁵⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 557:

մաքաղաքական աջակցությունը Մուստաֆա Քեմալ Աթաթուրքին՝ Սևրի ռիսերիմ թշնամուն⁵⁶:

Ինչ վերաբերում է Սևրի պայմանագիրը կյանքի կոչելու հնարավորություններին, ապա, Ա. Մելքոնյանի կարծիքով, «դա ոչ ոք չի պատկերացնում ո՛չ պատերազմի, ո՛չ էլ ուժի գործադրման տարբերակով», «այսօր խոսել իրական հատուցման մասին, ... որը ... իրավաբանորեն արձանագրվեց 1920 թ. օգոստոսի 10-ին մեծ տերությունների կողմից, նշանակում է խոսել Հայաստանի Հանրապետության անվտանգության մասին, բարձրացնել աշխարհով մեկ այն իրողությունը, որ, ցավոք, Հայաստանը գործ ունի նույն ցեղասպան երկրի հետ, որովհետև մերժողականության այդ նույն քաղաքականությունը, որը թուրքերի կողմից տարվում է տասնամյակներ շարունակ, նույն ցեղասպանության քաղաքականության շարունակությունն է»⁵⁷: Դեռևս 2008 թ. ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի նախաձեռնած հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանն ուղղված բանակցային գործընթացն առիթ էր, որպեսզի Ա. Մելքոնյանը հանգամանորեն անդրադառնար այն վտանգավոր հետևանքներին, որ կարող էր թողնել հայ-թուրքական արձանագրությունների վավերացումը Հայկական հարցի արդարացի լուծման վրա⁵⁸: Պատմաբանի համոզմամբ, Հայաստանի և Թուրքիայի միջև գործող սահմանի «դե յուրե» ճանաչման վերաբերյալ արձանագրություններում ձևակերպված դրույթի ընդունումը կնշանակեր հրաժարվել Սևրի պայմանագրից, Հայոց ցեղասպանության դիմաց Արևմտյան Հայաստանով հատուցման խնդրից և ճանաչել ՄԱԿ-ի անդամ Թուրքիայի ու Հայաստանի միջև Ախուրյան-Արաքսով փաստացիորեն գործող սահմանագիծը: Հայաստանը, ըստ նրա, պետք է կարևորի Սևրի պայմանագիրը, որը ՀՀ տարածքը սահմանում է 160.000 կմ², և, որի համաձայն, ՀՀ մաս պետք է կազմի Տրապիզոնի, Էրզրոմի, Վանի ու Բիթլիսի վիլայեթների զգալի տարածքը: Վկայակոչելով թուրքական խորհրդարանում Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուի բացատրությունները այն մասին, թե իբր հայ-թուրքական արձանագրություններով Հայաստանը վերջապես հրաժարվում է Սևրի պայմանագրից ու ճանաչում է Կարսի պայմանագիրը՝ պատմաբանը նկատում է, որ թուրք պաշտոնյայի հայտարարություններն «ինչ-որ իմաստով ճշմարտություն են պարունակում»: զրանք վկայում են՝ «Թուրքիան իրապես վախենում է Սևրի դաշնագրից»⁵⁹:

⁵⁶ Այս մասին տե՛ս Ա. Մելքոնյան. Հայոց պատմություն: Դասախոսությունների ձեռնարկ, Երևան, 1998, էջ 207–208, նաև՝ Է. Լ. Դանիելյան, Ա. Ա. Մելքոնյան. Հայոց պատմություն: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, 2008, էջ 284:

⁵⁷ Ա. Ա. Մելքոնյան. Հայոց պատմության դասերն ու պատգամները, Երևան, 2013, էջ 482–483:

⁵⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 388–389, 407–409, 410, 421–423, 482–483, 506:

⁵⁹ Տե՛ս Ա. Ա. Մելքոնյան. Հայոց պատմության դասերն ու պատգամները, էջ 486–487, նույնի՝ Ցեղասպանություն և հայրենագրվում: Ծանաչումից՝ հատուցում (հոգևածներ և հարցազրույցներ), Երևան, 2015, էջ 286–

Սևրի պայմանագրին և Վ. Վիլսոնի իրավարար վճռին ուղղակիորեն առնչվում են հայերի՝ հայրենիք վերադառնալու, Հայոց ցեղասպանությունից հետևանքների հաղթահարման, Հայոց պահանջատիրության հիմնահարցերը, որոնց ուսումնասիրման ուղղությունը նշանակալի աշխատանք են կատարել Հակոբ Հակոբյանը⁶⁰, Արմեն Մարուքյանը⁶¹ և Արա Պապյանը⁶²:

Այսպիսով, 1991–2019 թթ. Հայաստանյան պատմագիտական միտքը գնահատելի աշխատանք է կատարել Հայկական հարցի 1919–1920 թթ. դիվանագիտական քննարկումները և դրանց արդյունքները լուսաբանելու ուղղությամբ: Ներկայացված փաստարկումներն ու եզրակացությունները պատմագիտական լուրջ հենք են ձևավորել Հայոց ցեղասպանության հիմնահարցի գիտագործնական վերլուծության, հետևանքների վերացման, Հայոց արդար պահանջատիրության հիմնահարցերը պատմաիրավական ու միջազգային-իրավական տեսանկյունից մշակելու համար: Արտահայտված տեսակետները տրամաբանորեն փոխարացնում են միմյանց: Դրանք պատմագիտական մտքի արժեքավոր ընդհանրացումներ են, որոնք արդիական ու գործնական ուղերձներ են պարունակում Հայկական հարցի լուծման և ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործընթացի էության ու բովանդակության, հայկական անկախ պետության դիվանագիտության առաջնահերթությունների և անելիքների, ազգային ուժերի ներքին միասնությունը, անկախ արտաքին քաղաքական փոփոխություններից, պահպանելու կարևորություն վերաբերյալ:

Լիլիթ Հովհաննիսյան – պ. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայոց ցեղասպանության և Հայկական հարցի պատմության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության ու պատմագրության հարցեր: Հեղինակ է 1 մենագրության, 5 գիտամեթոդական ձեռնարկի և շուրջ 40 հոդվածի: lilithovannisian@yahoo.com

287, ն ու յ ն ի՝ Հայաստանի պատմության և ժողովրդագրության հիմնահարցեր (Հոդվածների ժողովածու), Երևան, 2011, էջ 386–394, 412–419, 451–452:

⁶⁰ Հ. Վ. Հակոբյան. Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական ու իրավական հիմքերը, Երևան, 2002:

⁶¹ Ա. Մարուքյան. Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, Երևան, 2014:

⁶² Ա. Պապյան. Հայրենատիրություն: Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր, հոդվածների ժողովածու, Երևան, 2012:

REFERENCES

- A-Do (H. Ter-Martirosyan). Hayutyan erkunke, Yerevan, 2019 (In Armenian).
- Adonts N. Erker, kazm., dsanot., nerads. P. Hovhannisyan, targm. V. Diloyan, h. A. Haykakan harts, Yerevan, 1996 (In Armenian).
- Aharonyan A. Sardarapatits minchev Sevr ev Lozan: Kaghakakan oragir 1919–1927, Yerevan, 2001 (In Armenian).
- Arbitral Award of the President of the United States of America Woodrow Wilson. Full Report of the Committee upon the Arbitration of the Boundary Between Turkey and Armenia, Washington, November 22nd, 1920. Yerevan, 2011.
- Armeniya v dokumentakh Gosudarstvennogo departamenta SShA 1917–1920 gg. Sost. i per. s angl. G. G. Makhmuryan. Yerevan, 2011 (In Russian).
- Armyanskiy vopros i genotsid armyan v Turtsii (1913–1919). Materialy Politicheskogo arkhiva ministerstva inostrannykh del kayzerovskoy Germanii. Sbornik. Otv. red. V. A. Mikaelyan. Yerevan, 1995 (In Russian).
- Avetisyan H. Haykakan hartse 1918 tvakanin, Yerevan, 1997 (In Armenian).
- Avetisyan G. A. General Akop Bagratuni (1879–1943).– IFZh, 1997, № 1 (In Russian).
- Danielyan E. L., Melkonyan A. A. Hayots patmutyun: Hnaguyn zhamanaknerits minchev mer orere, Yerevan, 2008 (In Armenian).
- Galoyan G. Hayastane ev meds terutyunnere 1917–1923 tt., Yerevan, 1999 (In Armenian).
- Gzoyan E. Hayastani arajin Hanrapetutyune ev Azgeri ligan, Yerevan, 2013 (In Armenian).
- Hakobyan A. Hayastani Hanrapetutyun (1918–1920 tt.), Yerevan, 1992 (In Armenian).
- Hakobyan A. M. Hayastani Hanrapetutyune 1918–1920 tt.: Ankakhutyan 100-amyaki aktiv, Yerevan, 2018 (In Armenian).
- Hakobyan H. V. Taragir hayutyan hayrenik veradarnalu pahanji patmakan u iravakan himkere, Yerevan, 2002 (In Armenian).
- Hamahaykakan khorhrdaksutyunner (1912–1920 tt.): Pastatghteri ev nyuteri zhoghovadsu, kazm. ev pat. khmb. A. Virabyan, Yerevan, 2004 (In Armenian).
- Hayastani azgayin arkhiv, f. 200, ts. 2, g. 31, t. 1–17 (In Armenian).
- Hayastani Hanrapetutyune 1918–1920 tt. (kaghakakan patmutyun). Pastatghteri ev nyuteri zhoghovadsu, khmb. G. Galoyan, Yerevan, 2000 (In Armenian).
- Hovhannisyan L. Sevri paymanagrums Hayastanin ev hayerin veraberozh hodvadsneri patmakan u iravakan nakhadryalnere.– Hayastani Hanrapetutyun – 100: Midjazgayin gitazhoghovi zekutsumneri zhoghovadsu, khmb. A. Marukyan, Yerevan, 2018 (In Armenian).
- Hovhannisyan R. G. Hayastani Hanrapetutyun, h. I, Arajin tarin, 1918–1919, Yerevan, 2005, h. II, Versalits–London, 1919–1920, Yerevan, 2014, h. III, Londonits–Sevr, petrvar–ogostos, 1920, Yerevan, 2015, h. IV, Sali ev mangaghi midjev. Masnatum ev khorhrdaynatsum, Yerevan, 2016 (In Armenian).
- Italiayi artakin gordseri nakhararutyan patmakan divanagitakan arkhivi vaveragere Haykakan hartsi masin 1913–1923 tt., kazm. ev targm. A. Baloyan, h. A ev B, Yerevan, 2008 (In Armenian).
- Kadjaznuni H. H. Y. Dashnaksutyune anelik chuni aylevs, Yerevan, 1994 (In Armenian).

- Karapetyan H. Sevri paymanagire hayots jakatagrum, Yerevan, 2004 (In Armenian).
- Khachatryan K., Galoyan G. Haykakan hartse Parizi khaghaghutyanyan vehazhoghovum: Sevri paymanagire.– Hayots patmutyun, h. 4, girk I: Noraguyn zhamanakashrdjan (1918–1945 tt.), Yerevan, 2010 (In Armenian).
- Khurshudyan L. Hayastani bazhanume 1920 tvakanin, Yerevan, 2002 (In Armenian).
- Khurshudyan L. Haykakan hartse: Bovandakutyune, dsagume, patmutyan himnakan pulere, Yerevan, 1995 (In Armenian).
- Litl E. Haykakan hartse, targm. G. Sargsyan, Yerevan, 2003 (In Armenian).
- Makhmuryan G. G. Armeniya v politike SShA 1917–1923 gg. Yerevan, 2018 (In Russian).
- Makhmuryan G. G. Liga natsiy, Armyanskiy vopros i Respublica Armeniya. Yerevan, 1999 (In Russian).
- Makhmuryan G. G. Politika Velikobritanii v Armenii i Zakavkaz'ye v 1918–1920 gg. Bremya belogo cheloveka. Yerevan, 2002 (In Russian).
- Makhmuryan G. Sevri dashnagire ev AMN-i kaghakakanutyune Hayastani Hanrapetutyanyan nkatmamb 1919–1920 tt.– Hayastani Hanrapetutyun–100: Midjazgayin gitazhoghovi zekutsumneri zhoghovadsu, khmb. A. Marukyan, Yerevan, 2018 (In Armenian).
- Marukyan A. Hayots tseghaspanutyanyan hetevankneri hagtaharman himnakhndirner u patmairavakan himnavorunnere, Yerevan, 2014 (In Armenian).
- Melikean V. Arevmtahayeri hamagumarnere ev Haykakan hartsi pulere 1917–1923 tt., Yerevan, 2007 (In Armenian).
- Melkonyan A. A. Hayastani patmutyan ev zhoghovrdagrutyanyan himnahartser (Hodvadsneri zhoghovadsu), Yerevan, 2011 (In Armenian).
- Melkonyan A. Hayots patmutyun: Dasakhosutyunneri dzernark, Yerevan, 1998 (In Armenian).
- Melkonyan A. A. Hayots patmutyan dasern u patgamnere, Yerevan, 2013 (In Armenian).
- Melkonyan A. A. Tseghaspanutyun ev hayrenazrkum: Janachumic` hatutsum (hodvadsner ev hartsazruysner), Yerevan, 2015 (In Armenian).
- Ovanesyan R. G. Mezhdunarodnye otnosheniya Respubliki Armeniya, 1918–1920 gg. Per. s angl. G. G. Makhmuryan. Yerevan, 2007 (In Russian).
- Papers relating to the foreign relations of the United States. 1919. In two volumes. Vol. II. Washington, 1934.
- Papyan A. Hayrenatirutyun: Hayots pahanjatirutyanyan iravakan himunknere ev harakits hartser, hodvadsneri zhoghovadsu, Yerevan, 2012 (In Armenian).
- Poghosyan S. Poghos Nubar Pasha. azgayin gordsiche, Yerevan, 2004 (In Armenian).
- Poghosyan St., Poghosyan K. Haykakan hartsi ev hayots tseghaspanutyanyan patmutyun, h. III (Haykakan hartse 1920–1922 tverin), girk II, Yerevan, 2003 (In Armenian).
- Poghosyan St., Poghosyan K. Haykakan hartsi ev hayots tseghaspanutyanyan patmutyun, h. III (Haykakan hartse 1918–1919 tt.), girk I, mas B, Yerevan, 2004 (In Armenian).
- Simonyan Hr. R. Turk-haykakan haraberutyunneri patmutyunits, Yerevan, 1991 (In Armenian).
- Vratsyan S. Hayastani Hanrapetutyun, Yerevan, 1993 (In Armenian).

Zohrabyan E. 1920 t. turk-haykakan paterazme ev terutyunnere, Yerevan, 1997 (In Armenian).

Zohrabyan E. Nakhidjevanyan himnaharce ev Hayastani “dashnakitsnere” (1918 t. dektember–1920 t. april), Yerevan, 2002 (In Armenian).

ОСВЕЩЕНИЕ ИСТОРИИ АРМЯНСКОГО ВОПРОСА
1919–1920 ГГ. В ИСТОРИОГРАФИИ АРМЕНИИ
(1991–2019 гг.)

ЛИЛИТ ОГАНИСЯН

Резюме

Ключевые слова: Армянский вопрос, Западная Армения, автономия, Единая и Независимая Армения, мандат, Парижская конференция, соглашение, мирный договор, самоопределение, Лига наций, Вудро Вильсон, Армянские требования по международному праву.

В 1991–2019 гг. в историографии Армении была проделана ценная работа по переосмыслению содержания и результатов дипломатических переговоров на Парижской международной мирной конференции и в Лиге наций, а также проходивших в 1919–1920 гг. в армянских общественно-политических кругах дискуссий о независимости, границах и мандате Западной Армении. В частности, всесторонне исследована и оценена политика Великобритании и США в Армянском вопросе. Выявлены практические возможности и перспективы осуществления мандата на Армению. Также проанализированы причины отсутствия единой всеармянской позиции по решению Армянского вопроса. Политическое значение Севрского договора и Арбитражного решения Вудро Вильсона 1920 г. переоценены с точки зрения армянских национальных интересов.

Аргументация и заключения, представленные в исследованиях историков (Г. Махмурян, Г. Галоян, В. Меликян, Э. Зограбян, Гр. Симонян, Л. Хуршудян, А. Акопян, А. Мелконян, А. Марукян, А. Папян) создали серьезную научную основу для разработки таких проблем, как Армянские требования по международному праву и устранение последствий Геноцида армян с международно-правовой точки зрения.

Лилит Оганисян – к. и. н., доцент, старший научный сотрудник отдела истории Армянского вопроса и Геноцида армян Института истории НАН РА. Научные интересы: вопросы истории и историографии Армянского вопроса и Геноцида армян. Автор 1 монографии, 5 научно-методических пособий и около 40 статей. lilithovannisian@yahoo.com

THE ELUCIDATION OF THE 1919–1920 HISTORY
OF THE ARMENIAN QUESTION IN THE
HISTORIOGRAPHY OF ARMENIA
(1991–2019)

LILIT HOVHANNISYAN

S u m m a r y

Key words: Armenian question, Western Armenia, autonomy, United and Independent Armenia, mandate, Paris Conference, agreement, peace treaty, selfdetermination, League of Nations, Woodrow Wilson, Armenian claims under international law.

A valuable work has been done in the historiography of Armenia in 1991–2019 on the recomprehending of the content and results of diplomatic negotiations at the 1919–1920 Paris International Peace Conference and the League of Nations, as well as discussions held in the Armenian socio-political circles on the independence, boundaries and mandate of Western Armenia. In particular, the policy of Great Britain and the USA in the Armenian question is studied and assessed comprehensively. The practical possibilities and prospects of realization of the mandate for Armenia are revealed. Also the reasons of absence of the pan-Armenian position on the solution of the Armenian question are analyzed. The political importance of the 1920 Treaty of Sèvres and Woodrow Wilson’s Arbitral Award is re-evaluated from the point of view of the Armenian national interests.

The arguments and conclusions presented in the works of historians (G. Makhmuryan, G. Galoyan, V. Melikyan, E. Zohrabyan, Hr. Simonyan, L. Khurshudyan, A. Hakobyan, A. Melkonyan, A. Marukyan, A. Papian) formed a serious scientific basis for elaboration of problems of the Armenian claims under international law and removal of consequences of the Armenian Genocide from the international-legal point of view.

Lilit Hovhannisyanyan – Candidate of Sciences in History, Associate Professor, Senior Researcher at the Department of History of the Armenian Question and Armenian Genocide of the NAS RA Institute of History. Scientific interests: main issues of history and historiography of the Armenian question and Genocide of Armenians. Author of 1 monograph, 5 methodical textbooks and over 40 articles. lilithovannisian@yahoo.com

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ «ՀԱՐՃԸ» ՊՈԵՄԻ
ՀԵՐՈՍՈՒՐՅՈՒ ԵՆԹԱԴԻԵԼԻ ՆԱԽԱՏԻՊԸ*

ՀԵՆՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բանալի բառեր՝ Մովսես Խորենացի, Դանիել Վարուժան, Թեմա, սյու-
ժե, Վահրամ Փափազյան, Թինա դի Լորենցո, քնարհարուհի, պարու-
հի, դրամա, պոեմ:

Թվում է՝ կարիք չկա ենթադրություն դիմելու այնտեղ, ուր առկա է
հեղինակի բնաբանը որպես հիշեցում. «... յոյժ գեղեցիկ էր և երգեր
ձեռամբ»¹: Դանիել Վարուժանի «Հարճը» պոեմի այս բնաբանով
մատնանշվում է Խորենացու «Հայոց պատմութեան» Երկրորդ գրքի
ԿԳ գլուխը, ուր համառոտ ակնարկված է սիրային մի արկած՝ հեռա-
նկարում ողբերգական և անավարտ: Այստեղ էլ վերջակետ է դնում
պատմիչը. «... աւելորդ եղև մեզ պատմել զնահատկութիւնն առնն
ցանկասիրի»²: Ավելորդ է թվացել հասունացող դրամատիկական ըն-
թացքը, որ նյութ չի տվել Խորենացուն որպես պատմագրի և հետագա
ժամանակներում ներշնչելու էր մի բանաստեղծի: Պատումն ընդհատ-
վում է լարված մի կետում և շարունակվում բանաստեղծի գրչի տակ
որպես ռոմանտիկական մի ողբերգություն:

Դիպվածը, որպես երկու անձի հանդիպում, լիցքավորված է նա-
խապես: Ինչ-որ բան արդեն եղել է, և պահի դրամատիզմն ունի թաքց-
ված պատճառ: Դա գործողության գսպանակն է և նյութ է տվել բա-
նաստեղծի երևակայությանը: Այս պոեմն իր ներսում դրամա է. մղում
է բեմական դրությունների, եթե հեղինակն իսկապես ծրագրել էր
«Թատերախաղի վերածել «Հարճը»»³: Ընդհանուր տպավորությունն
այնպիսին է, թե նախնական հղացման մեջ սա դրամա է, և հեղինակի
մտքով անցել է մի դասական ոճի ողբերգություն, բայց ոտանավորի
ռիթմական համաչափությունը (տասնհինգ վանկ՝ պեոններ և անա-
պեստ) թիավարության տարերքով նրան հեռացրել է թատրոնի արիե-
րից: Հանգուցային պահերը ցնցումնալից են, բայց չկան դադար խնդ-
րող պահեր: Սա խոսքի համաշունչ մի հորձանք է՝ բեմականությանը
ներհակ: Խնդիրն այն է, թե բանաստեղծը գրքային ներշնչումից բացի
ուճեցե՞լ է այլ աղբյուր կամ տպավորություն: Պատմական նյութն
այստեղ, ինչպես էլ երևա, սոսկ առիթ է, հայոց հեթանոսությունը՝

* Ներկայացվել է 22. I. 2020 թ., գրախոսվել է 27. II. 2020 թ., ընդուն-
վել է տպագրության 03. III. 2020 թ.:

¹ Մովսեսի Խորենացու Պատմութիւնն Հայոց, Տփղիս, 1913, էջ 197:

² Նույն տեղում, էջ 196:

³ Դ. Վ ա Ր ո Ւ Ժ ա ն. Երկեր, Երևան, 1984, էջ 18:

մշուշված իրականություն և բանաստեղծական խոսք: Իսկ այն, ինչ իրականությունից է, արդիական է ու գալիս է կենդանի աղբյուրներից: Այդպիսին է «Հեթանոս երգերի» (1912 թ.) ամբողջ շարքը, ուր կինը ցողանում է երբեմն որպես խորհուրդ և մարմարե կուռք, երբեմն իրական, մերձ ու զգայելի («Ո՛ր, Տալիթա», «Գրկանք», «Արևելյան բաղանիք» և այլն): Հեթանոսության գաղափարն այստեղ ոչ այնքան անցյալի գրքային վերապրումն է, որքան առասպելացված արդիականություն:

«Հարճը» պոեմը, որքան էլ պատմական զրույցից է գալիս, իր հուզական խորքում իրական է՝ կնոջ գաղափարի պոետական վերապրումը դասական ողբերգության շնչով: Իսկ հերոսուհին, թվում է, բեմի հայելուց է դուրս բերված:

Ո՞վ է նա որպես պատմություն մեզ ավանդված անուն և բանաստեղծին ներշնչում տված իրական դեմք:

Ուշադիր կարգանք խորենացու երկում բերված անավարտ զրույցը, ապա Երրորդ գրքի ՄԵ գլխի վերջին պարբերությունը, ուր ակնարկվում է նույն թեման, և անդրադառնանք Վարուժանի պոեմին: Խորենացու բերածը խիստ համառոտ է և շատ բան է ենթադրում միջտողային տարածությունում: Ամեն ինչ սկսվում է գործող անձի բնավորությունից (էթոս): «Տրդատ ոմն յագգեն Բագրատունեայց <...> այր սրտեայ և ուժեղ, կարճ հասակաւ և գծուծ տեսեամբ, զոր փեսայացոյց արքայ Տիրան դուստր իւր յԵրանեակ, որոյ ատեցեալ զայր իւր Տրդատ...»⁴ Երանյակ արքայադուստրը խորշում է ամուսնուց, արհամարում նրան, «աւաղելով զինքն, իբր թե չքնաղագեղ ընդ վատակերպւոյ, և քաջատոհմիկ ընդ վատթար ազգւոյ բնակէ», – գրում է խորենացին: Տրդատը կտրում է կնոջ երկար մազերը, որպես պատիժ, արտաքսում տանից և ինքն էլ խոտվյալ հոգով հեռանում, գնում «ի կողմանս ամրութեանն Մարաց, և հասեալ ի Սիւնեաց աշխարհն»⁵: Չի ասված ինչո՞ւ այդտեղ: Թվում է, թե այս մարդն ինչ-որ մեկին է փնտրում կամ հետապնդում: Դա կարևոր է պատմիչի համար: Տրդատն անհայտ ու աննշան մեկը չէ, և նրան ընթրիքի է հրավիրում Սյունյաց աշխարհի տերը՝ Բակուր նահապետը: Ընթրիքի հրավիրվածն իր հոգեկան տագնապով է եկել, դրսևորվելու առիթ է պետք, և առիթը կին է լինելու: Պատմիչին սա չի զբաղեցրել, բայց նյութ է տվել բանաստեղծի երևակայությանը:

Դառնանք ակզբնաղբյուրին, որի տողամիջյան տարածություններում շատ բան է պահված:

«Եւ յաւուր միում կոչեալ գնա յընթրիս Բակրոյ նահապետին Սիւնեաց, և յուրախանալն զինւով, տեսեալ Տրդատայ զկին մի, զի յոյժ գեղեցիկ էր և երգեր ձեռամբ, որում անունն էր Նազինիկ՝ տրփացաւ և ասէ զԲակուր. «Տուր ինձ զվարձակա զայս». և նա ասէ. «Ոչ տամ, զի հարճն իմ է»»: Իսկ Տրդատ բուռն հարեալ ի կինն՝ յինքն քարշեալ ի բազմականն, շամբշեալ վավաշէր ըստ օրինակի երիտասարդի անարգել

⁴ Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց, էջ 195:

⁵ Նույն տեղում:

տարփառորի: Ընդ որ խանդացեալ Բակրոյ՝ յարեալ հանել զնա ի նմանէ: Բայց յոտն կացեալ Տրդատայ, ծաղկակալ սկտեղքն իբրև զինու վարեցաւ, նա և զբարձակիցսն ի բազմականանցն ի բաց պուղեաց: Եւ անդ էր տեսանել զոմն Ողբսևս՝ զՊենելոպայ զսեղեխս սատակելով, <...> Եւ այնպէս իւր վանսն եկեալ, իսկոյն ի ձի ելեալ՝ հանդերձ հարձիւն ի Սպեր զնաց: Զայս աւելորդ եղև պատմել մեզ զնահատակութիւն առնն ցանկասիրի» (ընդծումն իմն է– Ն. Ն.)⁶:

Կարևորութիւնն չտալով և անավարտ թողնելով իրեն հասած այս զրույցը՝ Խորենացին իր մեկենասի՝ Սահակ Բագրատունու ցանկութեամբ («... զայս պատմել մեզ՝ զքոյդ հարկաւորեաց ընդ վայր խնդիր»)՝ երկրորդ անգամ է անդրադառնում դրան՝ փոխելով կամ ճշտելով անուններն ու ժամանակը: Զրույցը նա կապում է Շապուհ պարսկի (416–419 թթ.) և ոմն Խոսրով Գարգմանցու հետ (Գիրք Երրորդ, գլուխ ԾԵ): Դարձյալ խնջույք է, և «ի խնջոյս ուրախութեան Խոսրով Գարգմանացի ի գինուղ զեխեալ առաջի Շապհոյ՝ զօրեն սեղեխի տուփեցելոյ զհետ ջնարահար քաջամատն կնոջ կրթեր: Ընդ որ ցասուցեալ Շապհոյ՝ հրամայէ ունել զնա ի դահլճին պահել, այլ նա ի վաղակաւորն հաստատեալ զաջն, պէս գունակ Տրդատայ Բագրատունոյ, իւր տունն անցեալ զնայր և ոչ ոք ի սպասաւորացն արքունի համարձակեալ արկանել ի նա ձեռն, յառաջագոյն գիտելով զփորձ առնն» (ընդծումն իմն է– Ն. Ն.)⁸:

Զրույցը երկու տարբերակով է անցել պատմութեան էջերը: Թեմատիկ պայմանաձևը (մոդուս) և իրադրութիւնը (ակտանտ) նույնն են: Խնջույքում իրեն անգուսպ պահողի քայլը երկու տեղում էլ դիտվում է որպէս պատմախնդրութիւն, առաջին տարբերակում նաև սիրանք, ինչպէս իր տան պատիվը պաշտպանող Ողբսևսի պայքարը: Տրդատն իր սիրեցյալ վարձակին է հետ նվաճում, և սա էլ ինքնակամ փախչում է նրա հետ: Մոտիվը նույնն է և նույն սյուժետային հեռանկարն է տեսնվում: Մի նրբերանգ է ավելացված. պալատի սպասավորները չեն համարձակվում կանխել հանդուգն հյուրին: Նազիկիկ անունն այստեղ չի տրված, բայց ջնարահարը նույն ինքն է և ի՞նչ դասի է պատկանում: Տրդատը նրան անվանում է վարձակ, և նրա պահվածքից երևում է, որ իր իրավունքն է պաշտպանում: Թվում է, թե այս մարդն իր սիրուհուն հետապնդելով է եկել-հասել Բակուր նահապետի տուն: Զրույցի երկրորդ տարբերակում այս հերոսը հանգիստ է, դրութեան տերը, և զգուշանում են կանխել նրան: Վարձակը (երկրորդ տարբերակում այս բառը չկա) բացատրվում է որպէս «կին երգեցիկ, երաժիշտ և կաքաւիչ ի խնճոյս և ի թատրոնս (իբր վարձեալ կամ վարձեալ կամ վարուք արձակ)»⁹: Տրդատի խոսքին «զվարձակս զայս», Բակուրը, ինչպէս տեսանք, ասում է՝ «զի հարձ իմ է»: Իսկ հարճը շրջիկ խաղարկուհի չէ, ինչպէս վարձակը, այլ պալատում ապրող «երկրորդ»

⁶ Նույն տեղում, էջ 195–196:

⁷ Նույն տեղում, էջ 332:

⁸ Նույն տեղում:

⁹ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, Վենետիկ, 1837, էջ 795:

դական կին»¹⁰: Այս գրույցում երկու հասկացությունները հակադրված են, և պարզ է, որ հարճի դիրքը բարձր է: Պալատում նա հովանավորված է, իսկ Վարուժանի պոեմում, որ շարունակությունն է Խորենացու պատմածի, Նազինիկը գերեվարված է, կարծես սպասում է իր ասպետին, և հայտնվում է Տրդատը՝ որպես գերուհուն ազատագրող: Այսպես է գրույցի երևակայվող ու տրամաբանական շարունակությունը, որ Վարուժանի պոեմում ավարտվում է ողբերգությամբ: Սա արդեն երրորդ տարբերակն է, որտեղ ամբողջանում են պատումն ու հերոսուհու կերպարը, և այստեղից էլ գնում ենք դեպի բանաստեղծի ներշնչման կենդանի աղբյուրը, փնտրում հերոսուհու նախատիպը:

Հետագայի գրականության մեջ «ձեռամբ երգողն» ու «Չնարահար քաջամատն կինը» դիտվել են որպես պարուհի¹¹, անգամ պանտոմիմի դերասանուհի¹², տողերիս հեղինակն էլ ելնելով իր խնդիրներից՝ տուրք է տվել այդ պատկերացմանը¹³: Այո՛, «ձեռամբ», բայց ինչու՞ պարուհի: Նկատենք, որ միջնադարի հայ մատենագրության մեջ հատկապես վաղ շրջանում, պարը մենապար չի նշանակել, այլ՝ շարք, շրջան, խմբավածություն¹⁴: Իսկ մենապարը բնագրերում ու բառարաններում տրված է կայթ և կաքավ բառերով. օրինակ՝ «... կայթել կաքաւէր թմբկահարիկ աղջիկն»¹⁵: Ձեռքերի խաղը, որպես պարային շարժում, հանդիպում է ուշ միջնադարյան բնագրերում՝ XV դարում: «Բազուկ ձգեր քանց զուռ ճոճան, զոտքն առեալ մանի ճեմէր»¹⁶, – գրել է Հովհաննես Թրկուրանցին: «Երգեր ձեռամբ» խոսքը հնից է գալիս՝ Հին կտակարանի թարգմանությունից. ակնարկվում է Դավիթ սաղմոսերգուի քնար նվագելը. «... եւ Դաւիթն երգէ ձեռամբ իւրով»¹⁷: Երկրորդ վկայությունը Խորենացու երկում է: Այլ վկայություն մեզ հայտնի չէ: Զրույցի երկրորդ տարբերակում ասված է «Չնարահար քաջամատն»։ Նկատենք նաև, որ հնում երգել նշանակել է նվագել և այդպես էլ

¹⁰ Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան, հ. III, Երևան, 1977, էջ 60:

¹¹ Տե՛ս С. Лисициан. Старинные пляски и театральные представления армянского народа, т. I. Ереван, 1958.

¹² Տե՛ս Г. Гоян. Театр древней Армении. М., 1952, с. 219–220, 222, 225.

¹³ Հ. Հովհաննիսյան. Թատրոնը միջնադարյան Հայաստանում, Երևան, 1978, էջ 218:

¹⁴ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, էջ 630: Այս հարցը մանրամասնորեն քննված է տողերիս հեղինակի վերը նշված աշխատությունում (էջ 117–120):

¹⁵ Հ. Հովհաննիսյան. նշվ. աշխ., էջ 227:

¹⁶ Ա. Չոպանյան. Հովհաննես Թրկուրանցի. – «Անահիտ» (Փարիզ), Բ տարի, 1931, թիվ 5–6, էջ 6 (ըստ Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի 615 ձեռագրի):

¹⁷ Աշխարհաբար թարգմանություններում կարդում ենք՝ «Դավիթը քնար էր նվագում» (Աստվածաշունչ մատեան Հին ու Նոր կտակարանների, Ս. էջմիածին, 1999, էջ 344):

բացատրվել է հետագայում¹⁸: Ոչ մի կասկած, ուրեմն, որ Նազինիկը եղել է հարճի վիճակում հովանավորված մի նվագածուհի, քնար նվագող: Իսկ պարուհուն փնտրելու ենք ոչ թե խորենացու բերած գրույցում, այլ Վարուժանի պոեմում և մտածելու, թե որտեղից է հայտնվել:

Վարուժանի «Հեթանոս երգերը», ինչպես նշեցինք, գրվել են 1912 թ., «Չարճը» նույն հղացումներում է և գրվել է 1914 թ., երբ Կ. Պոլսում էր Զարիֆյան-Սևուժյան թատերախումբը և նոր պիեսներ էր ակնկալում պոլսահայ հեղինակներից: «Զարդարյանը, Վարուժանը և ես, – գրում է Հակոբ Սիրունին, – պիտի հայթայթեինք իրեն հայ շունչով թատերախաղեր: Զարիֆյան այդ առթիւ «Ազատամարտի» մեջ կոչ մը հրապարակեց հայ գրողներուն ուղղված՝ հրավիրելով զանոնք թատերախաղեր մշակել»¹⁹: Ճիշտ այդ շրջանում էլ գրվել է «Չարճը», սակայն դրամայի չի վերածվել, որքան էլ մտածվել է այդ մասին:

Եվրոպայում սկիզբ առած պատերազմը սպառնում էր համաշխարհայինի վերածվել, թատերախմբերը խուսափում էին Պոլսից, և կոչ հրատարակելով թատերախաղ ստեղծվել չէր կարող: Գրվել է պոեմ, բայց Սիրունու հարևանցի մի ակնարկը, թե «դերասանուհի մը առիթ եղած էր»²⁰, մեզ միտք է տալիս փնտրելու պոեմի հերոսուհու նախատիպը բեմական միջավայրում: Զարիֆյան-Սևուժյան թատերախմբում կային, իհարկե, բանաստեղծի երևակայությանը տոն տվող դերասանուհիներ, ասենք՝ Սաթենիկ Ադամյանը՝ Սեդայի դերակատարը «Հին աստվածներում»: Բայց հետևենք Վարուժանի և նրա մտերիմ ընկերոջ՝ Վահրամ Փափագյանի խոսքին:

Այսպես, 1908 թ. ձմռան վերջին քսանամյա Փափագյանը Կահիրեում միացել է Գուստավո Սալվինիի իտալական շրջիկ թատերախմբին, որի իրական ղեկավարն ու ուղղություն տվողը եղել է իր արտաքին գեղեցկուժյամբ հռչակված Թինա դի Լորենցոն (1872–1930): Այս խումբն իր առաջնուհու անօրինակ հաջողութուններով ոտքի տակ է առել Հյուսիսային Աֆրիկան, արաբական աշխարհն ու հարավային Եվրոպայի թաց ու չոր ճանապարհները՝ մինչև իսպանական ափեր: Իսկ ո՞վ էր Թինան, որ ձեռնոց էր նետել եվրոպական բեմերի առաջնուհիներին: «Ոչ այնքան դերասանուհի, որքան գեղեցիկ կին, – գրում է Փափագյանը: – Նա իր արվեստի առանցքն էր դարձրել կանացիութունը և երբեմն էրոտիզմի հասնող մի անսանձ արվեստականությամբ ձեռք էր բերել մի էժան ժողովրդականութուն»²¹:

¹⁸ Նոր բառգիր հայկազեան լեզուի, հ. I, էջ 612: Տե՛ս նաև Հ. Վարուժանի. Հացունի. Ճաշեր և խնճույք Հին Հայաստանի մեջ, Վենետիկ-Ս. Ղազար, 1912, էջ 210:

¹⁹ Հ. Սիրունի. Ինքնակենսագրական նոթեր, Երևան, 2006, էջ 197:

²⁰ Սիրունին 1965 թ. գարնանը Երևանում էր: Եղավ հանդիպում գիտութունների ակադեմիայի արվեստի ինստիտուտում (նախկին շենքում): Զրուցել ենք թատրոնի բաժնի սենյակում:

²¹ Վ. Փափագյան. Հետադարձ հայացք, Երևան, 1956, էջ 194:

Խաղացանկում՝ «Օթելլոն» Գուստավոյի համար, մնացածը՝ «Անտոնիոս և Կլեոպատրան», Օսկար Ուայլդի «Սալոմեն», Մետեուլինկի «Մոննա Վաննան», Ֆերդինանդ Լեմմերի «Սամսոն և Դալիլան», Մորիս Դոննեի «Սիրաբանողները» և այլն, Թինան հարմարեցրել է իր կանացի հմայքին ու հրայրքին, և նրա մրցակցուկությանը չեն դիմացել լուրջ դերասանուհիները, անգամ դարավերջի և դարասկզբի մեծագույն դերասանուհին՝ «Դուզեն գգացել է իրեն հիմարացած վիճակում»²²: Այս խմբում մեծ խնդիրներ չեն դրվել տղամարդկանց առջև: Իսկ ի՞նչ խնդիր կարող էր դնել երեսուներես անց գեղեցկուհին իր խմբում հայտնված ամենաերիտասարդ և գեղեցկատես դերասանի՝ Փափազյանի առջև:



Թինա դի Լորենցո

Խաղային նյութի իր որոնումներում Թինան հանդիպել է մի ուշագրավ սյուժեի՝ Խորենացու «Հայոց պատմության» թեմաներով զբաղված մի պոեմում, հեղինակը՝ Վիկտորիա Աղանուր-Պոմպիլի²³, թեման՝ Արայի և Շամիրամի առասպելը, հրաշալի նյութ էրոտիկ մի ներկայացման համար, Արայի դերակատարն էլ իր առջև: Պիե՞ս էր գրվելու: Փափազյանը ծանոթ չի եղել Տիգրան Գալեմճյանի «Արա գեղեցիկ և Շամիրամ» ողբերգությանը, որ ներկայացվել է Կ. Պոլսում 1879 թ. և առիթ դարձել հայերեն ներկայացումների արգելման: Աղանուրի իտալերեն բանաստեղծություններում Թինան գտել է այլ հետաքրքիր թեմաներ ևս ու խորհրդակցել Փափազյանի հետ: «Իմ խորհրդով, - գրում է Փափազյանը, - նա դիմեց նույնիսկ Վարուժանին՝ հանձնարարելով նրան գրել մի թատերական պոեմ այդ նյութերի շուրջ, որը Վարուժանը սակայն թողեց անհետևանք, շնորհիվ իր բնածին անգործնականության» (ընդգծումն իմն է - Հ. Հ.)²⁴: Սա 1908 թվականն է, երբ Վարուժանը չորրորդ տարում Գենտի համալսարանի ուսանող էր, և Փափազյանն էլ սկսել էր իր առաջին շրջագայությունը: Գուստավոյի թատերախումբն ամեն տեղ էր Թինայի շնորհիվ: Փափազյանը ինչու՞ ինքը չի դիմել Վարուժանին, այլ Թինային է խորհուրդ տվել: Լուրջ նշանակություն չտալով նրա արվեստին՝ գուցե մտածել է նա, թե Վարուժանը կարող է ընդառաջ գնալ գեղեցկուհու խնդրանքին: Բայց ի՞նչ լեզվով էր գրվելու «թատերական պոեմը». իտալերե՞ն, և ինչպե՞ս էր

²² О. Синьорелли. Элеонора Дузе. М., 1975, с. 98.

²³ Վիկտորիա Աղանուրը (1855–1910) ծնվել է Պադուայում, սերում է Նոր Զուղայի Աղանուրյանների հայտնի գերդաստանից, գրել է չափածո, իտալերեն, նաև Հայոց պատմության թեմաներով (տե՛ս Գ. Ստեփանյան. Կենսագրական բառարան, հ. 1, Երևան, 1973, էջ 70):

²⁴ Վ. Փափազյան. նշվ. աշխ., էջ 194:

արագորեն դրամա թխվելու շրջագայող մի թատերախմբի համար, որ մի շաբաթից ավել չէր մնում մի քաղաքում՝ իր հետևից տանելով որոշ երկրպագուների, բայց ոչ որևէ հեղինակի:

Որքանո՞վ է ճիշտ պատմված, որքանով է հավաստի և որքանով իրականությունը մոտ այս պատմությունը, բայց իրական է ու տեսանելի լուսանկարում իսկ տրամադրող կերպարն այն դերասանուհու, որ հանդիսատես է խլել ժամանակի բեմական առաջնուհիներից և կարող է ներշնչում տալ մի բանաստեղծի ու իր լույսով կենդանացնել պատմությունամբ ավանդված մի հին զրույց: Հասկանալի է նաև բանաստեղծի «բնածին անգործնականությունը»: Նա չէր կարող արագորեն մի բան հերյուրել տեղնուտեղը խաղացվելու համար: Արվեստում դրսևորվում են ոչ այնքան անմիջականորեն ապրվող, որքան դիտվող ու հիշվող տպավորությունները: Կենդանի իրականության պատկերն ու շունչը գեղարվեստորեն ավարտված ձևի են հանգում տարաբեկումներով և փոխակերպումներով ոչ անմիջապես: Բեմ նախատեսող գրական երկն իսկ դանդաղ խաղ է: Դերասանուհուն հանդիպելու և «Հեթանոս երգերի» միջև չորս տարի է ընկած, իսկ «Հարճը» գրվել է ավելի ուշ: Մի բան են բեմավիճակներն ու հանդիսասրահի մթնոլորտը, և այլ է գրչի շարժումը լույսի մեջ: «Երգեր ձեռամբ» ... Բայց բանաստեղծը հիշելու էր Սալոմեի («Սալոմե») պարը և հույզեր ալեկոծող դերասանուհուն:

Օ՛, այդ մեծ պարն հեթանոս՝ որ Աստղիկի կը ձոնեն,
Գեղեցկության այդ աղոթքն, աղոթքն այդ մսեղեն.
Օ՛, այդ իրանը ճապուկ ելևէջովն ըստինքին ...²⁵

Այս և այլ տողերում խոսում է ոչ այնքան կանացիության խորհուրդը, որքան կենդանի, շնչող իրականությունը: Եվ այն, ինչը գրքային ներշնչում է միջնադարյան տաղերգուների տողերում, զգայելի իրականություն է նոր ժամանակների բանաստեղծի համար: Չորսհինգ տարի է անցել, որ նա ինքնացու բերած զրույցը կարգար բեմից ստացած տպավորությամբ, և մոտ կես դար էր անցնելու (1955 թ.), որ Փափագյանը Վարուժանի պոեմի լույսով մտաբերեր Թինա դի Լորենցո դերասանուհուն: Հետագարձ անդրադարձումների պահեր կան այստեղ: Փափագյանը մատնում է իրեն պոեմ բառով, երբ խոսքը չգրված պիեսի մասին է: Թելադրելու պահին (չի գրել, այլ թելադրել է) նա հիշել է Վարուժանի պոեմը: Մեր առջև այդ պոեմն է, մեր մտքին ինքնացու երկու անավարտ հիշատակումները, մեր ենթադրության մեջ դերասանուհու կերպարը, և այն, ինչ ճշմարիտ է որպես գեղագիտական հայեցում:

²⁵ Դ. Վարուժան. նշվ. աշխ., էջ 156:

Հենրիկ Հովհաննիսյան – արվ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի թատերագիտության բաժնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ արվեստագիտություն, թատրոնի տեսություն և պատմություն: Հեղինակ է 14 գրքի և շուրջ 200 հոդվածի: henrikhovhannisyanyan1936@gmail.com

REFERENCES

- Ajaryan H. Hayeren armatakan bararan, h. III, Yerevan, 1977 (In Armenian).
 Astvadsashunch matean Hin u Nor ktakaranneri, S. Edjmiadsin, 1999 (In Armenian).
 Chopanyan A. Hovhannes Trkurantsi.– “Anahit” (Pariz), B tari, 1931, tiv 5–6 (In Armenian).
 Goyan G. Teatr dpevney Armenii. M., 1952 (In Russian).
 H. Vardan v. Hatsuni. Jasher ev khnjuyk Hin Hayastani mej, Venetik-S. Ghazar, 1912 (In Grabar).
 Hovhannisyanyan H. Tatrone midjnadaryan Hayastanum, Yerevan, 1978 (In Armenian).
 Lisitsian S. Starinnye plyaski i teatral'nye predstavleniya armyanskogo naroda, t. I. Yerevan, 1958 (In Russian).
 Movsisi Khorenatsvoy Patmutivn Hayots, Tpghis, 1913 (In Grabar).
 Nor bargirk haykazean lezui, h. 1, Venetik, 1936, h. 2, Venetik, 1937 (In Grabar).
 Papazyan V. Hetadardz hayatsk, Yerevan, 1956 (In Armenian).
 Siruni H. Inknakensagrakan noter, Yerevan, 2006 (In Armenian).
 Sin'orelli O. Eleonora Duze. M., 1975 (In Russian).
 Stepanyan G. Kensagrakan bararan, h. 1, Yerevan, 1973 (In Armenian).
 Varuzhan D. Erker, Yerevan, 1984 (In Armenian).

ПРЕДПОЛОЖИТЕЛЬНЫЙ ПРОТОТИП ГЕРОИНИ ПОЭМЫ
 «НАЛОЖНИЦА» ДАНИЕЛА ВАРУЖАНА

ГЕНРИК ОГАНИСЯН

Резюме

Ключевые слова: Мовсес Хоренаци, Даниел Варужан, тема, сюжет, Ваграм Папазян, Тина ди Лоренцо, играющая на лире, танцовщица, драма, поэма.

Тема поэмы Даниела Варужана «Наложница» (1914 г.) перенята из 63-й главы второй книги «Истории Армении» Мовсеса Хоренаци. Историк оставил сюжет незавершенным. Его неоконченный сюжет продолжил Даниел Варужан как поэму. Приложив свое поэтическое воображение, поэт представил героиню Назиник, которая в сюжете Мовсеса Хоренаци была женщиной, играющей на лире, как танцовщицу. В данном случае важную

роль сыграл второй вариант первоисточника. Примадонна одной из итальянских гастролирующих театральных трупп Тина ди Лоренцо находилась в поиске любовной темы в кратком содержании произведения Мовсеса Хоренаци, которое было переведено на итальянский. По рекомендации Ваграма Папазяна она обращается к студенту Гентского университета Даниелу Варужану с просьбой написать на эту тему драматическую поэму.

Так, предположительным прототипом Назиник в поэме «Наложница» стала прославленная на театральных подмостках Европы актриса и танцовщица Тина ди Лоренцо.

Գեորգ Օգանիսյան – ծ. Իճ., պրոֆ., լեն-կորրեսպոնդենտ ՈԱՈ ՔԱ, չեվեդյուցիկ օտժեղ թեատրօվեդենա Ինստիտուտ ԻճՈՒՔԱ ՔԱ. Ուսոնկե Ինտերեսե: ԻճՈՒՔԱՅՆԱՆԻԿ, թեորիա և Իճորիա թեատր. Ավտոր 14 կնիգ և օկոլո 200 ժտեյ. henrikhovhannisyanyan1936@gmail.com

THE ASSUMPTIVE PROTOTYPE OF THE HEROINE OF THE POEM
“CONCUBINE” BY DANIEL VARUZHAN

HENRIK HOVHANNISYAN

Summary

Key words: Movses Khorenatsi, Daniel Varuzhan, theme, Vahram Papazyan, Tina di Lorenzo, female harpist, dancer, drama, poem.

The theme of the poem “Concubine” by Daniel Varuzhan is borrowed from Chapter 63 of the first book of Movses Khorenatsi’s “History of the Armenians”. The historiographer left the story unfinished. Its unfinished plot was continued by Daniel Varuzhan as a poem. Applying his poetic imagination, the poet introduced heroine Nazinik, who in the plot of Movses Khorenatsi was a female harpist playing the lyre as a dancer. In the given case, the second version of the original source played an important role. The prima donna of one of the Italian touring theater groups Tina di Lorenzo was in search of a love theme in a summary of the work of Movses Khorenatsi, which was translated into Italian. On the recommendation of Vahram Papazyan, she turned to a student of Ghent University – Daniel Varuzhan, with a request to write a dramatic poem on this subject. Thereby, the actress and dancer Tina di Lorenzo, famous on the stage of Europe, became the alleged prototype of Nazinik in the poem “Concubine”.

Henrik Hovhannisyanyan – Doctor of Sciences in Arts, Professor, Correspondent member of the NAS RA, Chair of the Department of Theatre Studies at the NAS RA Institute of Art. Scientific interests: Art Studies, History and theory of theatre. Author of 14 books and over 200 scientific articles. henrikhovhannisyanyan1936@gmail.com

II

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆ. ՄԱՐԴԸ ԵՎ ԳՈՐԾԸ
(Ծննդյան 140-ամյակի առթիվ)*

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Բանալի բառեր՝ Դավիթ Անանուն, Լեոնային Ղարաբաղ, Բաքու, սպեցի-
ֆիկներ, Հյուսիսային Կովկաս, Վ. Տերյան, Թիֆլիս, Էջմիածին, Երևան,
Արամայիս, Ստ. Շահումյան, Ա. Ղ. Հովհաննիսյան, Հովհ. Թումանյան, Ստ.
Զորյան, «Հայաստանի կոոպերացիա», Ուֆա, Աստրախան:

Դավիթ Անանունը՝ Դավիթ Օհանի (Հովհաննեսի) Տեր-Դանիելյանը, XX
դարի առաջին քառորդի հայ իրականության երևելի դեմքերից է:
Ապրելով ու գործելով հայ ժողովրդի համար բարդ ու հակասական ժամա-
նակաշրջանում՝ նա մեծ էրուզիցիայի տեր այն գործիչներից էր, ով իրա-
դարձություններն ու երևույթները վերլուծելու, եզրակացություններ անե-
լու ինքնատիպ մտածողություն, սեփական տեսակետներն արտահայտելու
խիզախություն ուներ, տեսակետներ, որոնք հակառակ էին ժամանակի
մտայնություններին, անկախ կուսակցական պատկանելիությունից՝ գոր-
ծում էր լավին լավ, վատին՝ վատ ասելու յուրօրինակ կարողությամբ: Լի-
նելով 1920–1930-ական թվականների առաջին բռնադատվածներից՝ եր-
կար տարիներ նրա կյանքը և գործունեությունը, գիտական, քաղաքական
ու գրական ժառանգությունը մի շարք դրդապատճառներով (հիմնակա-
նում՝ քաղաքական) հանիրավի քննադատվել, աղավաղվել ու կեղծվել է¹:
Եվ միայն 1990-ական թվականներից է Դ. Անանունի կենսագործունեու-
թյան որոշ շերտերի օբյեկտիվ անդրադարձ եղել²:

* Ներկայացվել է 14. XII. 2019 թ., գրախոսվել է 21. II. 2020 թ., ընդունվել է տպագրության 05. III. 2020 թ.:

¹ Տե՛ս Ղ. Գրիգորյան, Վ. Հակոբյան. Ուրվագծեր Դավիթ Անանունի կյանքի և գործունեության. – «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես (Երևան), 2019, № 2, էջ 108, ծանոթ. 4, 5: Հեղինակների բնորոշմամբ՝ «սույն ուղենշային հոգվածով նպատակ է դրվում համառոտ ներկայացնելու Դ. Անանունի կյանքն ու գործունեությունը և դրանով իսկ ազդարարվում առաջիկա տարիներին նրա և՛ կյանքի ու գործունեության, և՛ գիտական ժառանգության ու սովմնափրությունից գործընթացի սկիզբը» (նույն տեղում, էջ 109):

² Տե՛ս Ա. Վիրաբյան. Կյանք և ողբերգություն. – «Հայաստան» (Երևան), 20. VI. 1991, Ղ. Բ. Աբրահամյան. Դավիթ Անանունի քաղաքական ճակատագիրը. – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1998, № 1, էջ 19–30 [ի դեպ, հոգվածի ծանոթ. 1-ում (էջ 19) «Հայաստան» թերթում տպագրված Ա. Վիրաբյանի հոգվածի ամիսը՝ VI, նշված է X], ն ու յ -

Դ. Անանունը ծնվել է 1880 թ. մարտի 2-ին Ելիզավետպոլի նահանգի Ջևանչիրի գավառի Մեծ շեն գյուղում (այժմ՝ Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջան): Սկզբնական կրթությունը ստացել է Շուշիի քաղաքային դպրոցում, որտեղ ուսուցումը ուսուցիչներին էր, ապա ինքնակրթությամբ լրացրել թերին³: Պատանեկության և երիտասարդության տարիներն անցկացրել է Բաքվում: 1898 թվականից ծառայել է «Գ. Գ. Թումանով և Կ^օ», «Ա. Ի. Մանթաշով և Կ^օ», «Ա. Ն. Միլով և Ա. Ն. Թաշիրով» նավթային ընկերությունների գրասենյակներում: Այդ տարիների մասին Դ. Անանունը գրել է. «Մեր ֆիրման հեղափոխական կենտրոնի հռչակ ուներ: Մի խումբ ծառայողներս գրչի ու գրքի սիրահարներ էինք: Կարդում էինք, վիճում, թարգմանում, թղթակցություններ գրում թերթերին, գրքեր տարածում, անգամ մեր ձեռագիր ամսագիրը հրատարակում (Արամայիսի հետ)⁴: Մեզ հետ ծառայում էին մտավորականներ,

նի՝ Հայ գրողների նամակները Դավիթ Անանունին.— ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտություններ», 2001, № 2, էջ 198–213, Ա. Մանուկյան. Գրականագետ Դ. Անանունը Դաշնակցության համախոհ (1927 թ.).— «Հայոց Աշխարհ» (Երևան), 1999, № 63, Ա. Զաքարյան. Հուշեր Դավիթ Անանունի մասին (ծննդյան 130-ամյակի առթիվ).— ՊԲՀ, 2010, № 1, էջ 245–252, Վ. Հակոբյան. Դավիթ Անանունի հուշերը Ստեփան Շահումյանի մասին.— «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Գ, 2012, էջ 123–135, Հ. Գրիգորյան, Վ. Հակոբյան. նշվ. հոդվ., էջ 108–128 և այլն:

³ Դ. Անանունի մասին իր ուշագրավ հուշերում գրող ու հրապարակախոս, հասարակական-քաղաքական հայտնի գործիչ Արամայիսը [Միսաք Տեր-Դանիելյան (1874–1954)] գրում է. «Նա (Դ. Անանունը.— Ա. Զ.) դպրոցական մեծ կրթություն չունեց, եթե չեմ սխալվում, միայն Շուշիյա պետական երկրային դպրոցն էր ավարտել, սակայն բնածին, արտասովոր ընդունակության տեր լինելով՝ կարողացել էր ինքնազարգացման, ինքնակրթության ուղիով առաջ գնալ. շուտով էր ըմբռնում կարգացածը, ինչքան էլ այն խրթին լիներ իր չափի մարդկանց համար: Իսկ հիշողությունը... դա մի ուրիշ բան էր. լսածը, տեսածը, կարդացածը չէր մոռանա. այդ պատճառով նա մի հանրագիտարանի էր նման. ինչի մասին հարցնեիր, կթերթեր իր հիշողության էջերը ու կգտներ հարցիդ պատասխանը» (Ա. Զաքարյան. նշվ. հրապ., էջ 246–247): Հայտնի է՝ «Ուսման ընթացքում նա այնքան լավ է տիրապետել ուսուցիչներին (գուցե մասամբ նաև ֆրանսերենին, գերմաներենին), որ հետագայում ուսուցիչից հայերեն է թարգմանում մի շարք հեղինակների (Վ. Վոլկենշտեյն, Տան, Է. Վերհարն, Հ. Հայնե և այլն) բանաստեղծություններ: Ավելին, իր համար ծանր 1920-ական թթ. երկրորդ կեսին Ա. Մուսայանի առաջարկությամբ թարգմանություններ կատարելով՝ կարողանում է պահպանել իր գոյությունը» (Հ. Գրիգորյան, Վ. Հակոբյան. նշվ. հոդվ., էջ 110):

⁴ Արամայիսը գրում է. «1899 թվին ... Դավիթի հետ խորհրդակցելով սկսեցինք «Բանվոր» երկշաբաթաթերթը հրատարակել (ձեռագիր.— Ա. Զ.) ... Թերթը հրատարակից մի քանի համար ու... դադարեց: Թերթը հարուստ էր բովանդակությամբ: Դավիթը տալիս էր դասակարգային պայքար հրահրող թարգմանական ու ինքնուրույն հոդվածներ (մի երկու էլ ոտանավոր. կարծեմ թարգմ.) ... Դավիթն այն ժամանակ թերթերում գրում էր «Դ. Նորեկ» ծածկանունով, հետո դարձավ «Դավիթ Անանուն» (Ա. Զաքարյան. նշվ. հրապ., էջ 246):

որոնք մասնակցել էին Խանասորա արշավանքին: Մեզ հյուր էին գալիս հայ գրողներ (Ավ. Իսահակյան, Դեր. Դեմիրճյան և այլն) և բազմաթիվ չարքաշ հեղափոխականներ (գինվոր, տասնապետ): ... Հաճախ Դուժման էր հյուր լինում և անհատնում պատմություններ անում Հայաստանի ու Պարսկաստանի իր արկածներից: Այդ միջնորդի մեջ ծառայող և բանվոր մի մտերիմ ընտանիք էին կազմում»⁵:

Դ. Անանունն իր քաղաքական հայացքներով հետաքրքիր զարգացում է ունեցել. սկզբում եղել է դաշնակցական, ապա հարել է հնչակյան կուսակցությանը, 1905 թ. մտել է Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության (ՄԴԲՀԿ) մեջ⁶, դարձել նրա ղեկավարներից ու ամենակարկառուն գաղափարախոսներից մեկը: ՄԴԲՀԿ-ականները հայ իրականության և ազգային կյանքի պայմանների մասին խոսելիս հաճա-

⁵ Դ. Ա ն ա ն ու ն. Բաքվի շիրիմները. – «Մշակ» (Թիֆլիս), 23. III. 1919:

⁶ Այդ մասին Դ. Անանունը թողել է բովանդակալից տեղեկություններ. «Աշակերտական նստարանից ինձ ընդգրկել է դաշնակցական հոսանքը և այդ կուսակցության մամուլի ընթերցանությունը: 1898 թ. գրասենյակային ծառայողի պաշտոն գտնելով Բալախանի նավթահանքերում (Բաքվում. – Ա. Զ.) նորից ինձ գտա ծանոթ դաշնակցական միջնորդություն: 3–4 տարի այդ կուսակցության անվանական անդամն ու պատեհ առիթով վճարներ հատուցանողն էի, երբ 1901–1902 թվականներին, ռուսական շարժումների ազդեցության տակ, սկսվեց սթափումն դաշնակցականների մեջ: Բալախանի կուսակցականներից մի խմբակ [(Թ. Նզմալյան, Արամայիս, Հար. Պետրոսյան – Զանգեզուրի 1905 (սխալմամբ գրված է 1915. – Ա. Զ.) – 1906 թթ. ինքնապաշտպանության հերոս Ստեփան Ստեփանյան – Մելիք Եսայան, տողերիս գրողը և այլն)] սկսեց փաստաբանել հայերի համար ռուսական շարժումներին հարելու անհրաժեշտությունը, սակայն սկսված վերազնահատական աշխատանքները խեղդվեցին Հ. Շահրիկյանի և մյուս դաշնակցական առաջնորդների ջանքերով: Նույնիսկ Բալախանի հրավիրվեց Ավ. Ահարոնյանը, որն իր հոստոբական միջոցներով ամրացնելու եկավ դաշնակցական հին պատգամները – գերագույն պարտք համարել թյուրքահայ դատի լուծումը: Դաշնակցականներին այդ գրահավորումը ռուսական շարժումների հանդեպ ստիպեց շատերին, որոնց մեջ և ինձ, սառչելու նրանցից: 1903 թ. ես արդեն սոցիալ-դեմոկրատ էի, առանց հարելու Ռ.Ս.Դ.Բ. կուսակցության: Այդ ժամանակ էլ ծանոթացա Բիբի-Հեյբաթի հնչակյանների հետ, որոնք ունեին բանվորական բազմություն և ջանում էին ամուր օտքերով կանգնել սոցիալիզմի հողի վրա: Սկսվեց իմ գործակցությունը նրանց հետ: Դասախոսում էի գաղտնի խմբերում և թղթակցում Բուլղարիայում հրատարակվող «Վերածնություն» թերթին (թերթը 1903–1904 թթ. Ռուսչուք քաղաքում հրատարակել է Ավետիս Նազարբեկյանը. – Ա. Զ.): Իմ համարումը այնքան մեծ եղավ նրանց մեջ, որ 1904 թ. դեկտեմբերի մեծ և հուշակավոր գործադուլին ընտրվեցի գործադուլային կոմիտեի անդամ: Սակայն մոտիկից շփվելով հնչակյանների հետ՝ նկատեցի, որ նրանք իբրև կուսակցություն՝ անկարող են ազատագրվել անցյալից, պիտի խոսեն սոցիալիզմից, բայց թյուրքահայ դատի շնորհիվ մնան նացիոնալիզմի շղթաներով կաշկանդված: Այդ հեռանկարի հանդեպ իմ որոշումը պարզ էր – միանալ Սոց. Դեմ. Բան. Հայ կազմակերպության հետ: Այդպես էլ արի 1905 թ. սկզբին» [«Նորք» (Երևան), գիրք երկրորդ, հունվար–մարտ, 1923, էջ 278–279]: ՀՅԴ, հնչակյան կուսակցություններին, ՄԴԲՀԿ-ին Դ. Անանունի անդամակցության մասին մանրամասն նաև տես Հ. Գրիգորյան, Վ. Հակոբյան. նշվ. հոդվ., էջ 110–116:

խակի օգտագործում էին «յուրահատուկ» բառը, որի համար էլ հայ բոլշևիկների կողմից ուռևներեն անվանվել են «սպեցիֆիկներ»⁷:

1902 թվականից Դ. Անանունն իրեն նվիրել է հայ մամուլին ծառայելու գործին ու մխրճվել գրական-հրապարակախոսական ասպարեզ՝ ծավալելով բեղմնավոր գործունեություն: Տարբեր վայրերում հրատարակվող մի շարք պարբերականների խմբագիր-հրատարակիչներ Դ. Անանունին խնդրել են աշխատակցել իրենց մամուլին, ըստ այդմ՝ թղթակցել է Բաքվի, Թիֆլիսի, Դոնի Ռոստովի, Երևանի, Պետերբուրգի, Մոսկվայի, Վենետիկի, Վիեննայի, Կ. Պոլսի, Բոստոնի պարբերականներին, ինչպես՝ «Бакинская жизнь», «Կյանք», «Համբավաբեր», «Գաղութ», «Բանվոր», «Բաքվի ձայն», «Երևան», «Մշակ», «Գյուղատնտես», «Գործ», «Կարմիր տարեցույց», «Ամերիկահայ հանրագիտակ», «Արշալույս», «Ռազմիկ», «Նոր հոսանք», «Армянский Вестник», «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», «Նորք» և այլն: Խմբագրել է «Ուղի» (Բաքու, 1909 թ.), «Կոչ» (Բաքու, 1911 թ.), «Նոր կյանք» (Բաքու, 1911–1912 թթ.) երկաթաթաթերթերը, «Մեր ուղին» (Բաքու, 1912 թ.) հանդես-ժողովածուն, «Վերածնունդ» (Բաքու, 1917–1918 թթ.), «Հայաստանի կոոպերացիա» (Երևան, 1919–1920 թթ.) երկաթաթաթերթերը, «Վերածնունդ» (Երևան, 1921 թ.) ամսագիրը:

Հասարակական-քաղաքական գործիչ, պատմաբան-տնտեսագետ, փիլիսոփա-սոցիոլոգ, հրապարակագիր-խմբագիր, գրականագետ, միով բանիվ հայագետ⁸, Դ. Անանունը թողել է գիտական, քաղաքական ու գրական հարուստ ժառանգություն: Դա հիմնականում ցրված է վերը նշված

⁷ ՄԴԲՀԿ-ի («սպեցիֆիկների») ձևավորման, գաղափարախոսություն, ծրագրային և մարտավարություն հարցերի, Դ. Անանունի՝ ազգային հարցի ու դեմոկրատիայի, հայահավաքման, «ազգային-կուլտուրական ավտոնոմիա» գաղափարի, փիլիսոփայական-սոցիոլոգիական հայացքների, Առաջին համաշխարհային պատերազմում հայ կամավորական խմբերի մասնակցությունը և այլնի մասին մանրամասն տես Ս. Կասյան. Սպեցիֆիկները և սպեցիֆիզմը, Թիֆլիս, 1928, Ա. Վիրաբյան. նշվ. հոդվ., Ա. Մ. Հակոբյան. «Սպեցիֆիկներ» (1903–1918 թթ.) (գաղափարախոսություն, ծրագիր, գործունեություն). – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1997, № 2, էջ 34–47, Հ. Բ. Աբրահամյան. Դավիթ Անանունի քաղաքական ճակատագիրը, էջ 19–30, Հայ ազգային և Հայաստանի ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ (1885–1914 թթ.), Երևան, 2003, էջ 177–200, Ս. Օհանյան. 20-րդ դարի սկզբի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն (Երվանդ Ֆրանգյան, Դավիթ Անանուն), փիլ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2008, Վ. Հակոբյան. Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության ձևավորումը և գործունեությունը (1900–1921 թթ.), պատմ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2010, նույնի՝ Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության ձևավորումը և առաջին քայլերը, Երևան, 2015, Հայ պարբերական մամուլի պատմություն 1900–1922 թթ., հ. 2, Երևան, 2017, էջ 675–698, Հ. Գրիգորյան, Վ. Հակոբյան. նշվ. հոդվ. և այլն:

⁸ Այս կապակցությամբ տես Հ. Գրիգորյան, Վ. Հակոբյան. նշվ. հոդվ., էջ 108, ծանոթ. 2:

մամուլի էջերում: Եթե նրա ուսումնասիրությունների, հոդվածների, խմբագրականների, գրախոսությունների, կատարած թարգմանությունների բոլոր նյութերը (իր անունով ու ծածկանուններով) ի մի հավաքվի, ապա դրանք կարող են կազմել տասնյակի հասնող հատորներ՝ ներառյալ նրա «Ռուսահայերի հասարակական զարգացումը» եռահատոր կապիտալ ուսումնասիրությունը:

Դ. Անանունի կենսագործունեության ժամանակաշրջանը բաժանվել է երեք փուլի, իսկ նրա բազմաթիվ ու բազմաբնույթ նյութերում արծարծված հարցերը՝ երեք խմբի (ա. հասարակական, բ. բանասիրական, պատմագիտական, գ. քաղաքական)⁹:

* * *

1900-ական թվականների սկզբից՝ չի եղել մի բնագավառ, ոլորտ, որին անդրադարձած չլինի Դ. Անանունը՝ իր բովանդակալից ու խնդրահարույց նյութերով: Որքան հայտնի է, նրա առաջին հոդվածը՝ «Նամակ Բաքվից» վերնագրով, տպագրվել է 1902 թ. մարտի 20-ին «Մշակ»-ում¹⁰: 1903–1906 թթ. Դ. Անանունը շարունակաբար հոդվածներ է տպագրել այդ թերթում: Վերը՝ տողատակում նշվեց, որ 1903–1904 թթ. նա աշխատակցել է հնչակյան «Վերածնունդ» թերթին: Այստեղ տպագրել է հինգ հոդված և օտար հեղինակների բանաստեղծություններից իր կատարած թարգմանությունները՝ Զրաբերդյան ծածկանունով¹¹: Նկատվել է, որ «Դ. Անանունը հայ իրականության մեջ առաջիններից էր, որ հասարակական-քաղաքական պայքարում քարոզչության նպատակով օգտագործում է նաև գեղարվեստական ստեղծագործություններ», հիմնականում «օտար բանաստեղծների մասամբ գրական, մասամբ քարոզչական բնույթ կրող ստեղծագործությունների թարգմանությունները»¹²:

Այդ տարիներից սկսած Դ. Անանունի հրապարակախոսական գործունեության մեջ առանձնանում են բանվորական կյանքի տարբեր կողմերին վերաբերող հարցերի քննակումներ, խնդիրների վերհանումներ: Հայտնի է, որ 1908 թ. սեպտեմբերից 1918 թ. հուլիսը նա Բաքվում աշխատել է Նավթարդյունաբերողների խորհրդին կից գործող Բանվորների և ծառայողների վնասվածքների վկայման բյուրոյում որպես քարտուղար¹³: Անդրադառնանք բանվորական կյանքին վերաբերող հոդվածներից մի քանիսին: Այսպես, 1906 թ. գրած «Գործարանային կյանքից» վերնագրով հոդվածաչարում¹⁴ հեղինակը բանվորներին իրենց իրավունքների պաշտպանության համար պայքարի է կոչում: 1908 թ. Դ. Անանունը գրում է «Նավթարդյունաբերական բանվորների խորհրդակցության հարցի շուրջ»

⁹ Մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 115–117:

¹⁰ Նույն տեղում, էջ 110:

¹¹ Նույն տեղում, էջ 112:

¹² Նույն տեղում, էջ 114:

¹³ «Նոր Հոսանք» (Թիֆլիս), 1913, № 4–5, հունիս–հուլիս, էջ 842–843:

¹⁴ Տե՛ս «Կյանք» (Թիֆլիս), 08, 22. IV. 1906, 06. V. 1906, «Զայն» (Թիֆլիս), 01. X. 1906:

վերնագրով հոդվածը, որտեղ հավանություն է տալիս նավթարդյունաբերական բանվորների միջազգային ու անկուսակցական սկզբունքներով խորհրդակցություն հրավիրելու կառավարության առաջարկին, ինչը, ըստ նրա, հնարավորություն կտար հայ բանվորներին դուրս բերել ազգային կուսակցությունների ազդեցությունից և նրանց կսովորեցնել ինքնագործունեություն ու պայքարի եվրոպական եղանակներ¹⁵: 1909 թ. «Ուղի» երկաթաթափերթում տպագրված ամենաուշագրավ նյութը Դ. Անանունի հոդվածաշարն է Բաքվի նավթարդյունաբերության վերաբերյալ: Նա վիճակագրական տվյալներ է բերում 1905–1908 թթ. ընթացքում նավթարդյունաբերության անկման, գործազրկության աճի, աշխատանքի շահագործման ձևերի մասին¹⁶: 1911 թ. «Նոր կյանք» երկաթաթափերթում Դ. Անանունը դարձյալ վիճակագրական տվյալներ է բերում նավթարդյունաբերության մեջ հայ բանվորների համալրման աղբյուրների, գրագիտության աստիճանի, հաշմանդամության դինամիկայի ու համանման խնդիրների վերաբերյալ¹⁷: Պարբերականում 1911, 1912 թթ. հոդվածներ է տպագրում «Բանվորների պետական ապահովագրությունը հիվանդությունից», «Բանվորական օրինագծերը Պետական Դումայում» վերնագրերով¹⁸, որոնցում ընդգծում է բանվորական օրենսդրության ընդունման հրատապությունը:

Դ. Անանունի «Բանվորական նոր օրենքները» վերնագրով գրքույկը, որը վերաբերում էր բանվորների ապահովագրության հարցին, գրաքննիչի կարգադրությամբ բռնագրավվում է: Այդ կապակցությամբ նա 1914 թ. հունվարի 3-ին Բաքվից խնդրանքով դիմում է Հովհ. Թումանյանին՝ միջնորդել գրքույկի վրա դրված արգելքը վերացնելու համար¹⁹: Թե գործն ինչ ընթացք է ստացել, մեզ անհայտ է:

Դ. Անանունին մշտապես զբաղեցրել ու մտահոգել է նաև ազրարային հարցը, հայ գյուղացիների սոցիալական ծանր վիճակը: Այսպես, 1906 թ. թիֆլիսում հրատարակվող «սպեցիֆիկյան» «Կյանք» շաբաթաթափերթում նա հանդես է եկել ազրարային խնդիրներով համարվելով այդ հարցերի մասնագետ: 1913 թ. նա գրում է «Կովկասի գյուղացիության վերաբերյալ նոր օրինագիծը» վերնագրով հոդվածը²⁰, որտեղ սուր քննադատության է

¹⁵ «Գործ» (Թիֆլիս), 1908, № 4, մարտի 30, էջ 105:

¹⁶ «Ուղի» (Բաքու), 1909, № 1, էջ 7–11:

¹⁷ «Նոր կյանք» (Բաքու), 1911, № 1–2, դեկտեմբերի 11, էջ 68–72:

¹⁸ Նույն տեղում, էջ 40–53, 1912, № 3–4, փետրվարի 19, էջ 176–181:

¹⁹ Դավիթ Անանունի նամակագրությունից, էջ 171–172:

²⁰ «Նոր հոսանք», 1913, № 7–8, սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 1297–1307:

Այս հարցի մասին Դ. Անանունի մոտեցումները տե՛ս նաև «Բաքվի ձայն», 07. II. 1913: Հոդային օրենքների վերաբերյալ նրա «հետաքրքիր դատողությունների» մասին տե՛ս Ռ. Ն. Սարիսյան. XX դարի սկզբի հայ տնտեսագիտական մտքի ուրվագծերում, Երևան, 1989, էջ 210–211: Տեղին է արձանագրել տնտեսագետ, պրոֆեսոր Ռ. Ն. Սարիսյանը, բարձր գնահատելով Դ. Անանունի տնտեսագիտական հայացքները, մասնավորապես, դրանց դերը «հավաքական հայության» գաղափարի ազգային միասնության գաղափարի, պահանջաձուլության առումով, գրում է. «Հայ մտքի պատմության մեջ կան այնպիսի հեղինակներ, որոնց գործերը ժամանակի հետ ստանում են նոր հնչեղություն: Այդ մտածողներից է Դավիթ Անանունը (Տեր-Դանիելյան): Նրա հետազոտումը

ենթարկում 1912 թ. դեկտեմբերի 20-ի կառավարության որոշումը, որով Անդրկովկասի հինգ նահանգների (Թիֆլիսի, Քուլթայիսի, Ելիզավետպոլի, Երևանի ու Բաքվի) ժամանակավոր-կախյալ և ժամանակավոր-պարտադիր գյուղացիությունը փրկագին վճարելով՝ ազատագրվում է կալվածատերերի լծից: Առաջ անցնելով ասենք, որ Դ. Անանունը 1917 թ. ապրիլ-մայիս ամիսներին Բաքվի «Բանվոր» շաբաթաթերթում տպագրում է «Նամակներ հայ գյուղացիներին» վերնագրով հոդվածաշարը, որտեղ, քննելով ազրարային հարցի լուծման մի քանի ծրագրեր (հողի սոցիալիզացիա, ազգայնացում, ուղղակի բաժանում, մոնիցիալիզացիա), ընդունել է հողի մոնիցիալիզացիայի մենչևեիկյան ծրագիրը՝ որպես ազրարային հարցի լուծման լավագույն միջոց²¹:

Չենք կարող չհիշատակել Դ. Անանունի բազմաթիվ հոդվածներից ու գրախոսականներից «Հայոց կաթողիկոսություն»²², «Լեզվի հարցը», «Հին ու նոր»²³, «Անցյալի մեծարանքը (Հովհաննես Թումանյանի քնարը)» ուշագրավ նյութերը: Այս վերջին հոդվածի մասին ահա թե ինչ է գրում Դ. Անանունը 1911 թ. հոկտեմբերի 14-ին Բաքվից Կ. Միքայելյանին. «Հովհ. Թումանյանի մասին ես պատրաստել էի հոդված մեր ամսագրի համար, որ պիտի անպայման հրատարակենք նոյեմբերից, բայց ստանալով քո նամակը՝ ես հոդվածս ուղարկում եմ քեզ: Ուղարկում եմ, որովհետև ինձ համար անախորժ է մեր թերթերում մի քանի հոդվածներ գետեղել... Չգիտեմ «Գարունի» խմբագիրներին որքան պիտի ախորժ թվա իմ գրելու և դատելու եղանակը: Մենք այնքան քիչ առիթ ենք ունենում տպելու մեր խոհերը, որ երբ առիթ է լինում արտահայտվելու, ապա ջանում ենք շատ բան ասել նվազ էջերում: Դա հայ մարքսիստների թերությունն է ընդհանրապես և իմը մասնավորապես: Օրինակ, ներկա դեպքում իմ Հովհ. Թումանյանին նվիրած հոդվածում կա մի գլուխ «Գյուղի քարոզը», որը կարելի է այլ կերպ խմբագրել, բայց, կրկնում եմ, նպատակահարմարությունը և արտահայտվելու տենչը ինձ դրդեցին գրել այնպես, ինչպես որ նա կա:

Այդ հոդվածը ես քեզ ուղարկում եմ որպես սևագրություն: Դրա սպիտակագրության օրինակը չունեմ: Իմ ձեռքը դյուրընթեռնելի է և դուք դժվարություն չեք հանդիպի: Հոդվածս բաղկացած է 5 թերթից ... Եթե «Գարունը» չընդունի, խնդրում եմ անմիջապես ետ ուղարկել, որ նա

յունները գերազանցապես պատմատեսագիտական բնույթ ունեն: ... Լինելով պատմաբան-տնտեսագետ նա տնտեսական գործոնը դիտում էր որպես հայ ազգային անկախության և ուժի գրավականը: Նրա հայեցողության մեջ թեև չէր սահմանազատվում տնտեսական զարգացման վերաբերյալ հասարակական մտքի ուղղությունների տիրույթը, հաճախ տարրալուծելով դրանք, այնուհանդերձ նշմարվում են կռվաններ, որոնց վրա «պիտի ամրանար ու ծավալվեր հայության հավաքումը» (Ռ. Ն. Ս ա Ր ի ն յ ա ն. Ուրվագիծ արդի հայ տնտեսագիտական մտքի պատմության, գիրք 1, Երևան, 2014, էջ 69–70):

²¹ Տե՛ս Ս. Ա. Խ ո ն դ կ ա Ր յ ա ն. Արևելյան Հայաստանի ազրարային հարաբերությունների պատմությունից: XIX դարի վերջ– XX դ. սկիզբ, Երևան, 1974, էջ 185:

²² «Նոր կյանք» (Բաքու), 1912, № 1–2, էջ 2–9:

²³ «Բաքվի ձայն», 10. II. 1913, 24. III. 1913:

Հասնի մեր թերթին: Եթե կան ձեր ականջին անախորժ էպիտետներ, ապա խնդրում եմ այդ մասին խմբագրական նկատողություն անեք և ոչ թե ջնջեք»²⁴: Հոգվածը, անշուշտ, ընդունվում և տպագրվում է «Գարուն» գրական-քննադատական պամֆլետում²⁵: Այս հոգվածի հիմնական դրույթներով 1913 թ. ապրիլի 6-ին Դ. Անանունը Բաքվի գրական-գեղարվեստական ակումբում դասախոսություն է կարդում²⁶: Հոգվածն ու դասախոսությունն արժանանում են «Գրասեր» ստորագրությամբ Ցուլակ Խանզադյանի «Գրական թյուրիմացություն» վերնագրով քննադատությունը²⁷: Դրան Դ. Անանունը պատասխանում է «Անառագաստ և անդեկ» վերնագրով հոգվածով²⁸: Բանավեճին միջամտում է անվանի գրաքննադատ Հարություն Սուրխաթյանը՝ պաշտպանելով Դ. Անանունին²⁹: Ց. Խանզադյանը (դարձյալ «Գրասեր» ստորագրությամբ) պատասխանում է վերջիններին՝ «Գրական քննադատությունը» վերնագրով երկմասանոց հոգվածով³⁰: Բանավեճը շարունակվում է. Դ. Անանունն անմիջապես արձագանքում է՝ «Գրական շամանիզմ (վերջին խոսքս Գրասերին)» վերնագրով³¹ հոգվածով: Նշենք՝ անվանի գրականագետ Էդ. Ջրբաշյանն անդրադարձել է այս բանավեճին³²:

Դ. Անանունի ծավալած գրական-գրաքննադատական-հրապարակախոսական գործունեությունը չէր կարող անուշադրության մատնվել ու արժանանում է գնահատության: 1913 թ. հունվարի 17-ին Հայ գրողների կովկասյան ընկերության վարչության նախագահ Հովհ. Թումանյանը և անդամ-քարտուղար Գյուլտ քահ. Աղանյանը նրան տեղեկացնում են. «Վարչությունս սրանով հայտնում է Ձեզ, որ Ընկերությանս ընդհանուր ժողովը, համաձայն իր կանոնադրության 4-րդ հոգվածի, գաղտնի քվեարկությամբ ընտրեց Ձեզ Ընկերության անդամ»³³:

Հարկ է նկատել, որ 1913 թ. Դ. Անանունը հանդես է գալիս ժամանակի հասարակական-քաղաքական միտքը զբաղեցնող մի շարք խնդրահարույց հարցերի վերաբերող հոգվածաշարերով: Այսպես, 1913 թ. գրում է «Ազգային հարցը և դեմոկրատիան» վերնագրով հոգվածաշարը³⁴, որտեղ, բանավիճելով բոլշևիկ գործիչներ Վ. Լենինի, Ի. Ստալինի, Ստ. Շահումյանի և մյուսների հետ, զարգացնում ու ամբողջացնում է ազգային-

²⁴ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետ՝ ԳԱԹ), Կ. Միքայելյանի ֆ., թիվ 732:

²⁵ Տե՛ս «Գարուն» (Մոսկվա), 1912, գիրք III, էջ 99–128: Հմմտ. Հովհաննես Թումանյանը ժամանակի գրաքննադատական մտքի գնահատությունը (1890–1913): Կազմեց, ծանոթագրեց և հրատարակության պատրաստեց Եվա Մնացականյանը, Երևան, 2019, էջ 354–371:

²⁶ Տե՛ս «Բաքվի ձայն», 09. IV. 1913:

²⁷ Տե՛ս «Բաքվի ձայն», 18, 21. IV. 1913:

²⁸ «Բաքվի ձայն», 26. IV. 1913:

²⁹ Հ. Սուրխաթյան. Դարձյալ գրական քննադատության առիթով. – «Մշակ», 15, 16. V. 1913:

³⁰ «Բաքվի ձայն», 19. V. 1913, 02. VI. 1913:

³¹ «Բաքվի ձայն», 05. VI. 1913:

³² Տե՛ս Էդ. Ջրբաշյան. Թումանյանի պոեմները, Երևան, 1964, էջ 76–91:

³³ Դավիթ Անանունի նամակագրությունից. – ՊԲՀ, 1984, № 1, էջ 171:

³⁴ «Նոր հոսանք», 1913, № 1, մարտ, էջ 142–154, № 2, ապրիլ, էջ 358–372:

մշակութային ինքնավարության գաղափարը: Հոգվածաշարին Ստ. Շահումյանը, «Այաքս» ստորագրությունները, սուր արձագանքով պատասխանում է «Ազգային-կուլտուրական ավտոնոմիայի մասին» վերնագրով 1914 թ. լույս տեսած գրքուկով³⁵: 1913 թ. Դ. Անանունը գրում է «Դարձյալ ազգային հարցը և դեմոկրատիան» հոգվածը³⁶, որտեղ քննարկում է «Просвещение» ամսագրում (1913, № 3, 4, 5) տպագրված «Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան» վերնագրով մարքսիստ Կ. Ստալինի ծավալուն հոգվածաշարում առաջադրված հարցերն ու մոտեցումները: Ազգային հարցի շուրջ ծավալված «մտքերի փոխանակությունը» Դ. Անանունն ավարտում է Վ. Լենինի և Ստ. Շահումյանի դեմ 1915 թ. գրած, սակայն 1917 թ. լույս տեսած «Մտքի տկարությունը ազգային հարցի լուծման խնդրում» վերնագրով հոգվածով³⁷:

Առաջին համաշխարհային պատերազմի սկզբից ևեթ Դ. Անանունի հրապարակախոսական, գրական ու գիտական գործունեությունը զուգակցվում է հասարակական-քաղաքական գործունե ակտիվությանը³⁸: Նա հայ հասարակական-քաղաքական այն գործիչներից, մտավորականներից է, ով, սխալի գնահատելով հայ ժողովրդի ճակատագրում Ռուսաստանի դերը, համարել է, որ հայ ժողովուրդը պետք է ունենա ռուսական կողմնորոշում: Ու ամենևին պատահական չէ, որ նա մասնակցել է ռուսահայ գրական կապերի պատմության մեջ նշանակալի իրադարձություն համարվող, Մ. Գորկու նախաձեռնություններով 1916 թ. ապրիլի վերջին Պետրոգրադում լույս տեսած «Հայ գրականություն ժողովածու»-ի հրատարակությանը: Ժողովածուն նվիրված էր ռուսահայերի ստեղծագործությանը և կազմված էր Վ. Տերյանի պլանով Պ. Մակինցյանի ու Լ. Քալանթարի աշխատակցություններով, այն յուրովի բողոք էր երիտթուրքերի հայաջինջ քաղաքականության դեմ: Ժողովածուն բացվում է Դ. Անանունի «Հայկական հարցը Ռուսաստանում» վերնագրով XI բաժնից բաղկացած ուսումնասիրություններով³⁹: Նպատակ չունենալով խոսել այս ծավալուն ու արժեքավոր աշխատության մասին ասենք, որ նախքան դրա տպագրվելը Պ. Մակինցյանը հետաքրքիր դիտարկումներով ու առաջարկներով նամակ է գրել հեղինակին⁴⁰:

1916 թ. Բաքվում լույս է տեսնում Դ. Անանունի «Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում (1800–1870)» վերնագրով աշ-

³⁵ Տե՛ս Ստ. Շահումյան. Երկերի լիակատար ժողովածու հինգ հատորով, հ. 2, Երևան, 1976, էջ 373–426:

³⁶ «Նոր հոսանք», 1913, № 6, օգոստոս, էջ 1062–1071:

³⁷ «Գործ» (Բաքու), 1917, № 3, մարտ, էջ 14–30:

³⁸ Մանրամասն տե՛ս Հ. Գրիգորյան, Վ. Հակոբյան. Նշվ. հոգվ., էջ 118–120:

³⁹ Сборник армянской литературы. Под редакцией М. Горького. Петроград, 1916, с. V–XLVI. Գրող Ստեփան Զորյանը «21 օգոստոսի 1916» թվակիր նամակով Դ. Անանունին գրում է. «Սիրելի Դավիթ // “Արմ. Сборник”-ում տպագրված Ձեր հոգվածը մեծ աղմուկ է հանել վրացիների մեջ մի քանի ֆրագների առթիվ: Քուլթայիսում հրապարակվող «Միջօրարի» թերթի 4–5 համարում Կիյա Աբաշիձեն «Իմ-ամ» կեղծանունով հայհոյում է Ձեզ: Անպայման «Մշակում» քաղվածքներ կտանք, որից գաղափար կկազմեք...» (Հ. Բ. Աբրահամյան. Հայ գրողների նամակները Դավիթ Անանունին, էջ 200):

⁴⁰ Տե՛ս ԳԱԹ, Դ. Անանունի ֆ., թիվ 80, թ. 1–2:

խատուլթյան առաջին հատորը: Գրքի առաջաբանում հեղինակը գրում է. «... աշխատուլթյան մեջ մենք ջանացել ենք թափանցել հայ հասարակական կյանքի խորքը, հասկանալ և լուսաբանել այն բոլոր երևույթները, որոնց պատմական դասավորումով կառուցվել է մեր ինքնօրինակ գոյուլթյան պատմանդանը: Այստեղ մենք պատմական անցուդարձերի և դեպքերի նկարագրուլթյամբ չենք զբաղվել: Չեն զբաղեցրել մեզ նաև պատմական գործիչներն իրենց կատարած գործերով: Մեր նպատակն է եղել դիտել մասսայական կյանքը, ըմբռնել հասարակական հաստատուլթյունների իմաստը, հետևել նրանց ծագման, զարգացման և անկման ընթացքին, խելամուտ լինել ժամանակի տիրող և պայքարող գաղափարականուլթյանը, առհասարակ ուսումնասիրել մեր քաղաքացիական զարգացման գործոնները»⁴¹:

... Արխիվային նյութերից, տարբեր անձանց հետ ունեցած նամակագրուլթյունից պարզվում է, որ 1914–1915 թթ. Դ. Անանունը ձեռնամուխ է եղել թերթերի հրատարակուլթյան, սակայն մեզ չհաջողվեց գտնել այդ մասին կոնկրետ որևէ տեղեկուլթյուն: Նկատենք, որ նա այդ նույն ժամանակահատվածում 1914–1916 թթ., հազվադեպ է հանդես եկել մամուլի էջերում: Դրա խոսուեն վկայուլթյունը 1916 թ. սեպտեմբերի 23-ին նրան գրած Աշ. Հովհաննիսյանի նամակի հետևյալ տողերն են. «Վաղուց է չես երևում թերթերում: «Մշակը» չորացավ առանց քեզ. տարաբախտաբար ոչ միայն «Մշակը», այլև «Հորիզոնը». այդ «չբերք կինը» կայտառանում էր, գոնե երբ առիթ էր հանդիսանում նիզակներ ճոճել քո դեմ»⁴²:

1916 թ. ամռանը Դ. Անանունը և Պ. Մակինցյանը նախաձեռնում են Բաքվում հրատարակել «Գործ» անվանումով ամսագիր: Մամուլի էջերում տպագրվում է պարբերականի հավատո հանգանակը, ու աշխատակցելու են հրավիրվում հասարակական-քաղաքական, գրական-մշակութային գործիչներ⁴³: Ինչ-ինչ պատճառներով Դ. Անանունը չի ընդգրկվել ամսագրի խմբագրական խորհրդի կազմում⁴⁴, սակայն պարբերականում տպագրված բովանդակալից հոդվածների հեղինակ է:

Փետրվարյան հեղափոխուլթյունից հետո Դ. Անանունը շարունակում է խմբագրական-հրատարակչական գործունեուլթյունը, և գաղափարակից ընկերոջ՝ Գ. Պիճիկյանի հետ 1917 թ. Բաքվում հիմնում են «Բանվոր» շաբաթաթերթը: Ինչպես նկատվել է, Դ. Անանունը եղել է պարբերականի հիմնական հոդվածագիրը: Նա հանդես է եկել գավառների դրուլթյան մասին, արևելահայոց համագումարի նախապատրաստուլթյան և անցկացման, «Ազգային տերիտորիա» խորագրով Անդրկովկասի վարչական բաժանման խնդիրներին վերաբերող հոդվածաշարերով: Չի եղել որևէ

⁴¹ Դ. Անանուն. Թուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում (1800–1870), հ. առաջին, Բաքու, 1916, էջ 1:

⁴² Դավիթ Անանունի նամակագրուլթյունից, էջ 174:

⁴³ Այս կապակցուլթյամբ Աշ. Հովհաննիսյանը հետաքրքիր նամակներ է գրել Դ. Անանունին. տե՛ս նույն տեղում, էջ 173–174, ԳԱԹ, Դ. Անանունի ֆ., թիվ 74:

⁴⁴ «Գործ» գրական, գիտական, հասարակական և քաղաքական ամսագիրը լույս է տեսել 1917 թ. հունվարի 1-ից 1918 թ. կեսերը: Խմբագիրը Կոստանդին Կրասիլնիկյանն էր:

Հարց կամ թեմա, որին նա անդրադարձած չլինի իր հրապարակումներում սկսած մեծ քաղաքականությունից, վերջացրած դպրոցական-կրթական ու մշակութային խնդիրներով: Ազգային հարցում Անանունը պաշտպանում էր «Անբաժան ու հզոր Ռուսաստանի» գաղափարը: Անդրադարձել է նաև Բրեստ-Լիտովսկի բանակցություններին ու դրանք որակել որպես բոլշևիկների կողմից սեփական երկրի աճուրդի կազմակերպում: Գրել է Բաքվի 1918 թ. մարտյան արյունալի դեպքերի մասին, հուզիչ մահախոսական հասարակական-քաղաքական նշանավոր գործիչ, հայ էսեռների ղեկավար, դեպքերի նահատակ Լևոն Աթաբեկյանի հիշատակին և այլն⁴⁵:

Փետրվարյան հեղափոխությունը ինչպես Ռուսաստանի կազմի մեջ մտնող բոլոր ազգերին, այնպես էլ արևելահայությունը ժողովրդավարական վերափոխումների, ազգային վերածննդի ու իր ներքին կյանքը կարգավորելու հնարավորություններ ընձեռեց: 1917 թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 13-ը Թիֆլիսում տեղի ունեցած Հայոց ազգային համախորհրդակցությունը պետք է լուծում տար ժամանակավոր կառավարության քաղաքականությունն առնչվող և հայ ժողովրդի առջև ծառայած մի շարք կարևորագույն հարցերի: Խորհրդակցությանը մասնակից հայ հասարակության գրեթե բոլոր խավերի՝ տարբեր և զանազան հոսանքների, կուսակցությունների, դասակարգերի ներկայացուցիչները (բոլշևիկները բոյկոտել էին համախորհրդակցությունը) քննարկեցին բազմաթիվ հրատապ հարցեր: Համախորհրդակցությանը հրավիրվել է նաև Դ. Անանունը⁴⁶: Սեպտեմբերի 30-ին Արտիստական ընկերության ակումբի դահլիճում կայացած համախորհրդակցության երկրորդ նիստի օրակարգի առաջին՝ «Քաղաքական մոմենտը և դրա հետ կապված խնդիրները» հարցի հիմնական զեկուցողներ Ս. Վրացյանից ու Տ. Բեգզադյանից հետո հանդես է եկել Դ. Անանունը: «Ահա այստեղ հավաքվել ենք հայ ժողովրդի ներկայացուցիչներ շատ կարևոր խնդիրներ լուծելու: Պետք է մտածենք, թե ինչպիսի քաղաքականություն վարենք երկրի այս դառն դրություն ժամանակ: Արդյո՞ք մեր պատմական անցյալը մեզ իրավունք է տալիս ասելու, թե մեր գործը չէ, մեր տունը գյուղի ծայրումն է: Հայ մտավորականությունը և նրա սխալը և թյուր դաստիարակությունը սնված մասսան կարծում էին, թե մենք գործ չունենք կատարելու սահմանից այն կողմ, իսկ այս կողմը ոչինչ չունենք: Չլինի թե այսպիսի քաղաքականություն [ենք] վարելու: Չարիք առաջ կգա սահմանից այս կողմը գործելու ժամանակ, ասում են սխալ մտածողները: Մեր խելահասությունից է կախված, այնպես որ վտանգ չգա: Սակայն չտարվենք ֆանտազիաներով: Շատերը մտածում են, թե թող ծայրահեղ տարրերը, մեծամասնականներն անցնեն գործի գլուխ, որպեսզի վարկաբեկվեն և այնուհետև դադարեն մասսայի վրա ազդեցություն ունենալուց: Սակայն այս կերպ մտածելով, չարաչար

⁴⁵ Տե՛ս Հայ պարբերական մամուլի պատմություն 1900–1922 թթ., հ. 2, էջ 693–694:

⁴⁶ Հրավերի տեքստում գրված է. «Ազգային համախորհրդակցություն // Թիֆլիս // Տոմսակ №138 // Քաղաքացի Դավիթ Տեր-Դանիելյան // Պատգամավոր Հայ սոց-դեմոկ. կուսակցությունից // Կազմակերպչական բյուրո // 27-ին սեպտ. 1917 թ. // Տոմսակը գուտ անվանական է» (ԳԱԹ, Դ. Անանունի ֆ., թիվ 113, թ. 4):

սխալվում են: Այս գործերակերպի և մտածելակերպի հաջողության դեպքում հայտնությունը հոշոտված կլինի, – ասում է Դ. Անանունը և շարունակում: – Ռուս ժողովրդի հարցը ուրիշ է: Նրանք այնքան բազմաթիվ են, այնպիսի հսկա ուժ և թիվ են կազմում, որ կհոշոտվեն, կջնջվեն, բայց էլի կվերականգնվեն, կվերակենդանանան, իսկ հայերը՝ ոչ: Այս ժողովուրդը մի կատարյալ գերեզմանոց կդառնա այդպիսի պարագայում: Այնպես պետք է անենք, որ վերջին հանգամանքը երբեք տեղի չունենա: Եվ Ռուսաստանը իրենից ավելի լավ քաղաքացիներ ունենա հանձին մեր: Մեր երախտավոր գործիչները կարծել են, թե մեր բախտը և երջանկությունը ռուս ժողովրդի հետ կապված լինելու մեջն է և միայն այդ դեպքում հայ ժողովուրդը կարող է գրաստային վիճակից դուրս գալ: Դժբախտաբար անցյալում եղել ենք այնպիսի մի իշխանության իրավունքի տակ, որ մի կողմից գլխներին բամբակ են, իսկ մյուս կողմից՝ շոյել, նայած իր օգուտներին: Մենք ուզում ենք Ռուսաստանի հետ լինել, առանց մեր առանձին տնակն ունենալու: Ես գալիս եմ մի ըուպե այն եզրակացություն, թե կողմիցիան անհրաժեշտ է: Դեռ 60-ական թվականներին մեր նշանավոր գործիչ Ստ. Նազարյանը քարոզում էր, թե իբրև Ռուսաստանի քաղաքացիներ՝ կազմենք նրա մի մասը: Իմ մի խումբ ընկերներն ինձ հանձնարարել են այսպես ասել, բայց կան նաև ընկերներ, որոնք եկել են այն եզրակացության, թե փրկությունը իշխանությունը դեմոկրատիայի հանձնելու մեջն է: Համենայն դեպս, կողմիցիան եթե կազմվելու էլ լինի, եթե բուրժուազիան ու դեմոկրատիան ձեռք ձեռքի տված գործեն, պետք է վստահ լինենք, որ դեմոկրատիայի ժամանակավոր գործակիցը քար չունի յուր թևի տակ»⁴⁷:

Դ. Անանունի ելույթը տեղիք է տվել բանավեճերի, ինքն էլ մասնակցել է քննարկված մյուս հարցերին: Հարկ չհամարելով անդրադառնալ համախորհրդակցության 12 նիստերի ընթացքում ծավալված քննարկումներին, ընդունված բոլոր որոշումներին⁴⁸ արձանագրեց. «... խորհրդաժողովը ցույց տվեց և համոզեց ամենքին, բոլոր հոսանքների և կուսակցությունների ներկայացուցիչներին, որ ներկա քաղաքական տագնապալից ըուպեին, երբ հայ ժողովրդի համար կյանքի և մահի խնդիրն է լուծվում, անհրաժեշտ է ամենքի միությունը, համագործակցությունը և համերաշխ գործունեությունը»⁴⁹: Համախորհրդակցության աշխատանքների արդյունքում ստեղծվեց 15 անդամից բաղկացած Ազգային խորհուրդ, 6 սեկ-

⁴⁷ Համահայկական խորհրդակցություններ (1912–1920 թթ.): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Կազմ: Ա. Վիրաբյան, Գ. Ավագյան, Ռ. Գրիգորյան, Ա. Կիրիմյան, պատ. խմբ.: Ա. Վիրաբյան, Երևան, 2004, էջ 169–170: Ի դեպ, նկատենք, որ 1917 թ. հունիսին, երբ ժամանակավոր կառավարության որոշումով բանակի ազգայնացման գործընթաց էր սկսվել, Դ. Անանունը գրել է. «Ազգային գործը չէ, որ անվտանգ պետք է պահի Կովկասը: Այդ պաշտոնը վերապահվում է ուժեղ Ռուսաստանին: Ամեն մի հայ պետք է իմաստություն ունենա դատելու, որ իր անվտանգությունը պայմանավորված է Ռուսաստանի ամբողջական անվտանգ գոյությամբ» [«Բանավոր» (Բաքու), 18. VI. 1917]:

⁴⁸ Այդ մասին մանրամասն տես Համահայկական խորհրդակցություններ (1912–1920 թթ.), էջ 159–284:

⁴⁹ «Մշակ», 20. X. 1917:

ցրա. Դ. Անանունն ընդգրկվեց «Ազգամիջյան հարաբերությունների և տեղական իշխանությունների հարցեր» անվանումով 3-րդ սեկցիայում:

Դ. Անանունի ակտիվ մասնակցությամբ 1917 թ. հոկտեմբերի 3–7-ը թիֆլիսում գումարվում է հայ սոցիալ-դեմոկրատների խորհրդակցությունը, որին մասնակցում էր ՌՍԴԲԿ և ՍԴԲՀԿ 70 անդամ՝ Երևանից, Էջմիածնից, Թիֆլիսից, Բաքվից, Շուշիից, Բաթումից: Համաժողովը որոշում է միավորել ուժերը՝ Անդրկովկասում սոցիալ-դեմոկրատական գաղափարների տարածման համար, ստեղծել կազմակերպչական միություն, սակայն միավորումը ինչ-ինչ պատճառներով չի կայանում:

1918 թ. մարտի 30-ից ապրիլի 1-ին Բաքվում տեղի ունեցան ծանր մարտեր մուսավաթական ուժերի և Բաքվի խորհրդային իշխանության (Կոմունայի) զորքերի միջև: Արդյունքում եռօրյա մարտերում Բաքվի կոմունայի և Հայոց ազգային խորհրդի համագործակցության շնորհիվ մուսավաթական խռովությունը ջախջախվեց: Արևելյան Անդրկովկասի բաքվաբնակ հայերի կազմակերպության գործադիր կոմիտեի նախագահ Դ. Անանունին Ազգային խորհուրդը, Հ. Յ. Դաշակցության գործուն անդակցությամբ, «մուսուլմանների հատուկ խնամատար-կոմիսար» նշանակեց քաղաքի հայկական մասում ապրող կամ պատսպարված մահմեդականների վրա: Նրան տրված էր վերջիններիս անվտանգությունն ապահովելու լիազորություն: Նրանց տրամադրվում էր սնունդ և բժշկասանիտարական անհրաժեշտ օգնություն⁵⁰: Խաղաղության հաստատումից հետո Ազգային խորհուրդն իր խնամակալության տակ գտնվող բոլոր մահմեդականներին՝ Դ. Անանունի ու Բաքվի պարսից հյուպատոսի քարտուղարի կազմած արձանագրություններով, պահպանների ուղեկցությամբ փոխադրեց քաղաքի մուսուլմանական մաս:

1918 թ. հուլիսի վերջին Դ. Անանունը «մի խումբ ընկերների հետ հատուկ հանձնարարությամբ»⁵¹ թողնում է Բաքուն՝ Հյուսիսային Կովկասով թիֆլիս, ապա Ղարաբաղ անցնելու համար: Այդ թվականի ամռանն ու աշնանը, ինչպես գրում է Դ. Անանունը, «... ստիպված եղա թափառել Աստրախանի շրջանում և Հյուսիսային Կովկասում»⁵²: Աստրախանում, ապա Պյատիգորսկում հանդիպումներ է ունենում երկրամասում գտնվող ՌՍՖՍՀ Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատին առընթեր Հայկական գործերի կոմիսար Վ. Ավանեսովի տեղակալ, բանաստեղծ

⁵⁰ «Արև» (Բաքու), 11. IV. 1918, Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918–1920 թթ., պատ. խմբագիր՝ Ա. Վիրաբյան, կազմողներ՝ Ս. Միրզոյան, Ա. Ղազիյան, Երևան, 2003, էջ 28:

⁵¹ «Մշակ», 23. III. 1919:

⁵² Դ. Անանուն. Հանդիպումներ Վ. Տերյանի հետ. — «Հայաստանի կոպերացիա» (Երևան), № 13, հուլիսի 15, 1920, էջ 521, նույնի՝ Հանդիպումներ Վ. Տերյանի հետ. — Վահան Տերյան: Տերյանագիտություն և մատենագիտություն: Գիրքը հրատարակության է պատրաստել Ա. Իսոյանը, Երևան, 2011, էջ 145: Ի դեպ, նկատենք, որ Վ. Տերյանի մասին Դ. Անանունի հուշերը տեղ չեն գտել խորհրդային տարիներին հրատարակված «Վահան Տերյանը ժամանակակիցների հուշերում» ժողովածուում (կազմեց, առաջաբանը գրեց և ծանոթագրեց Վ. Պարտիզունին, Երևան, 1964):

Վահան Տերյանի հետ: «Հանդիպումներ Վ. Տերյանի հետ» վերնագրով հուշերում Դ. Անանունը ուշագրավ տեղեկություններ է հաղորդում հանդիպումների մասին: Այդ օրերին նա, որպես «հակահեղափոխական», ձերբակալվում է և նետվում էսենտովկի բանտը. նրա ու մի երկու ուրիշ ձերբակալվածների համար բանաստեղծը «երաշխավոր է կանգնում» և ազատում բանտից: «Եթե Հանքային Ջրերում հալածանքի ենթարկված հայ մտավորականներս, – գրել է Անանունը, – անփորձ մնացինք – ապա այդ պարտական ենք բացառապես Վ. Տերյանին»⁵³:

Հյուսիսային Կովկասում 4–5 ամիս ղեկավարելուց հետո՝ 1918 թ. ղեկ տեմբերի սկզբին, Դ. Անանունը հասնում է Թիֆլիս: Այդ մասին մամուլի հաղորդագրություն մեջ կարդում ենք. «Երկու օր առաջ Հյուսիսային Կովկասից Փոթիի վրայով Թիֆլիս հասավ Դավիթ Անանունը: Նա եղել է Ս. Խաչում, Ստավրապոլում, Պյատիգորսկում, Եկատերինոպոլում և ուրիշ տեղեր ...»⁵⁴: Թիֆլիսում Դ. Անանունը «մի ցասկոտ հողված էր գրել ուղղված հայ հասարակությանը, որտեղ կոչ էր անում շուտափույթ օգնություն հասցնել Հյուսիսային Կովկաս կարիքի ճիրաններում տառապող հայ գրողներին ...»⁵⁵: Իսկ դրա պատճառն այն էր, որ «Շիրվանզադեն հախուռն հարձակում գործեց Վ. Տերյանի վրա, մեղադրելով նրան հայահալած քաղաքականության մեջ: Ես պաշտպանեցի բարեկամիս ու բացատրեցի, որ ընդհակառակը Հյուսիսային Կովկասում հայ մտավորականներս նրա միջամտության ենք պարտական մեր կյանքը: Այս իմաստով էլ լուրեր տպագրվեցին Թիֆլիսի թերթերում: Իսկ այս ճշմարտապատում լուրերի հետևանքը: Մոսկվայում հայ փոքրոզի բոլշևիկների կողմից հալածանք Տերյանի դեմ. թե նա պաշտպանել է հակահեղափոխականներին: Եվ Տերյանն իր մեծասրտության պատճառով զրկվում է հայկական կոմիսարի օգնականի պաշտոնից և ստորադասվում հասարակ կոմունիստների շարքը: Այսպես է պատմում մի արժանահավատ աղբյուր»⁵⁶:

⁵³ Տե՛ս Դ. Անանուն. Հանդիպումներ Վ. Տերյանի հետ. – «Հայաստանի կոոպերացիա», № 13, հուլիսի 15, 1920, էջ 524:

⁵⁴ «Մշակ», 07. XII. 1918: Բաքվի Հայոց Ազգային խորհրդի նախագահ Բագրատ եպիսկոպոսի, խորհրդի գործերի վարիչ Հ. Մանանդյանի, խորհրդի անդամ-քարտուղար Բ. Իշխանյանի Վրաստանում Հայաստանի ղեկավարության ներկայացուցչին հասցեագրած 1918 թ. ղեկտեմբերի 4-ով թվագրված նամակում կարդում ենք. «Ձեր հեռագիրը Դավիթ Անանունի մասին ստացվել է աղճատված և կիսատ. նրան Թիֆլիս ուղարկելու վերաբերյալ խոսքերը պակասում են, գրված է միայն, որ տրվի նրան 500 ռուբլի: ... Դավիթ Անանունը վաղուց է արդեն, որ Բաքվից բացակա է և ինչպես լսել ենք, գտնվում է այժմ Պյատիգորսկում, ուստի և անկարող եղանք Ձեր հայտարարությունը նրա նկատմամբ կատարել» (Հայերի կոտորածները Բաքվի և Երիզավետպոլի նահանգներում 1918–1920 թթ., էջ 152–153):

⁵⁵ Ա. Ջաբարյան. նշվ. հրատ., էջ 252: Հանքային Ջրերում գտնվող հայ մտավորականների և քաղաքացիների նյութական ծանր վիճակի մասին տե՛ս «Մշակ», 19. II. 1919, 12, 14. III. 1919:

⁵⁶ Դ. Անանուն. Հանդիպումներ Վ. Տերյանի հետ. – «Հայաստանի կոոպերացիա», № 13, հուլիսի 15, 1920, էջ 525:

... Իր կենսագործունեության ողջ ընթացքում՝ հատկապես 1918–1920 թթ., Լեոնային Ղարաբաղում տիրող իրավիճակը խորապես մտահոգել է Դ. Անանունին, և նա քանիցս այցելել է երկրամաս, ապա իր տպավորությունները հոգվածաշարերի միջոցով հաղորդել հայ հանրությանը: 1918 թ. դեկտեմբերի 10-ին «Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» նախագահ Հովհ. Թումանյանի՝ Դ. Անանունին հասցեագրած նամակից հայտնի է դառնում, որ, ըստ պայմանավորվածության, հանձնաժողովը նրան հանձնարարել է ուսումնասիրել Ղարաբաղի (Շուշիի և Զեանշիրի գավառների) հայ բնակչության կրած նյութական վնասները և տվել է մեկ ամիս ժամկետ⁵⁷:

Հովհ. Թումանյանը դեկտեմբերի 14-ին գորավար Անդրանիկին գրած նամակում, խոսելով հայ ժողովրդի ծանր վիճակի մասին, նաև նշում է. «Գրաբերս՝ պ. Դավիթ Անանունը, մեր կողմից գալիս է լիազոր՝ Ղարաբաղում կազմակերպելու էս գործը (խոսքը «Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» աշխատանքների մասին է. – Ա. Զ.): Խնդրում եմ աջակցություն ցույց տաս նրան, եթե հարկավոր լինի»⁵⁸:

1918 թ. դեկտեմբերի վերջին Դ. Անանունը Թիֆլիսից մեկնում է Ղարաբաղ: 1919 թ. փետրվարի սկզբին Ղարաբաղից վերադառնում է և փետրվարի 12-ին, որպես երկրամասից նոր վերադարձած գործիչ, մասնակցում է Ղարաբաղի հայրենակցական միության նիստին⁵⁹: Ղարաբաղ կատարած ուղևորության վերաբերյալ յոթ մասից բաղկացած նրա հոգվածաշարը տպագրվում է «Մշակ» թերթի 1919 թ. փետրվար-մարտի համարներում՝ «Ղարաբաղ (ուղևորի դիտողություններ)» վերնագրով: Դրանցում մանրամասն անդրադառնում է 1918 թ. Ղարաբաղում տեղի ունեցած իրադարձություններին, մասնավորապես՝ հայության առաջին երեք համագումարներին, դրանց ընդունած որոշումներին⁶⁰:

Այս ողջ ընթացքում Դ. Անանունը ոչ միայն հետևում է Անդրկովկասում, մասնավորապես հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցող հասարա-

⁵⁷ Տե՛ս Հայ ժողովրդի կորուստները Առաջին աշխարհամարտի տարիներին («Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» փաստաթղթերի և նյութերի ժողովածու), կազմող, առաջաբանի և ծանոթագրությունների հեղինակ Անուշավան Զաքարյան, Երևան, 2005, էջ 44–45: Դ. Անանունն ակտիվորեն մասնակցել է Հովհ. Թումանյանի ղեկավարությամբ գործող վերահիշյալ բյուրոյի աշխատանքներին: Այդ մասին են վկայում նաև բանաստեղծի նամակները Դ. Անանունին՝ թվագրված 28 նոյեմբերի 1919 թ., 1920 թ. հունվարի երկրորդ տասնօրյակ (Հովհ. Թումանյան. Երկերի լիակատար ժողովածու, հ. 10, Երևան, 1999, էջ 340, 342):

⁵⁸ Հովհ. Թումանյան. նշվ. ժող., հ. 10, էջ 300:

⁵⁹ Տե՛ս «Մշակ», 15. II. 1919: Ի դեպ, թերթը փետրվարի 9-ի համարում տեղեկացնում է. «Այս օրերս Ղարաբաղից Թիֆլիս եկած Դավիթ Անանունը (Տեր-Դանիէլեան) վաղվանից մտնում է «Մշակի» խմբագրական կազմի մէջ»: «Մշակի» խմբագիր Լ. Քալանթարի ստորագրությամբ «1919 թ. մարտի 1»-ով թվագրված վկայական է տրվել, ըստ որի՝ նա թերթի խմբագրական խորհրդի անդամ է (ԳԱԹ, Դ. Անանունի ֆ., թիվ 111, թ. 3):

⁶⁰ Տե՛ս «Մշակ», 11, 14, 18, 21, 22, 27. II. 1919, 02. III. 1919:

կական-քաղաքական զարգացումներին, այլև ուշադրություն կենտրոնում է պահում գրական-մշակութային իրադարձությունները: Այսպես, 1919 թ. փետրվարից մայիս փառավորապես տոնվում է մեծն Թումանյանի 50-ամյակը: Հայ, վրացի, ռուս հասարակական-քաղաքական, գրական-մշակութային բազմաթիվ գործիչներ շնորհավորում են Ամենայն հայոց բանաստեղծի հոբելյանը: Անմասն չի մնում նաև Դ. Անանունը. նրա «Հարգանքի խոսք Հովհ. Թումանյանին» վերնագրով հոդվածով է բացվում «Մշակ» թերթի փետրվարի 20-ի համարը:

... Ինչպես հայտնի է, Դ. Անանունը Հայաստանի Հանրապետության պարենավորման նախարարությունից ստացել է նախարարության քարտուղարի պաշտոնը ստանձնելու առաջարկ: Նրան ուղղված Ք. Վերմիշյանի 1919 թ. մայիսի 16-ի նամակից պարզվում է, որ դեռևս ապրիլին նրանց միջև այդ հարցում եղել է պայմանավորվածություն: Մայիսի 3-ին Դ. Անանունը Ք. Վերմիշյանին տեղյակ է պահել իր ուշանալու մասին: Վերջինիս հրաժարականի պատճառով, սակայն, այդ նշանակումը տեղի չի ունենում: Դրանից հետո հունիսի վերջերին, Դ. Անանունը մեկնում է Ղարաբաղ⁶¹: Այդ մասին տեղեկանում ենք Ստ. Զորյանի՝ Ղարաքիլիսայից 1919 թ. հուլիսի 6-ին նրան հասցեագրած նամակից. «Սիմոն Հախումյանը պատմեց, որ իբրև Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ մեկնել ես դեպի Ղարաբաղ, բայց Ադրբեյջանի կառավարությունը քեզ չի ընդունել: Ցավում եմ, որ անհավոյություն ես հանդիպել քո դիվանագիտական առաքելության հենց առաջին քայլին: Բայց մի վհատիր»⁶²:

* * *

1919 թ. հունիսի վերջին – հուլիսի սկզբին Դ. Անանունը Թիֆլիսից փոխադրվում է Երևան ու ակտիվորեն մասնակցում Հայաստանի առաջին Հանրապետության հասարակական-քաղաքական, գրական-մշակութային կյանքին: Այստեղ ևս նա մտադրվում է հիմնել պարբերական ու զբաղվել խմբագրական-հրատարակչական գործունեությամբ: Դրա խոստումն փկայություններից են Ստ. Զորյանի՝ 1919 թ. հուլիսի 6-ին Ղարաքիլիսայից Դ. Անանունին գրած նամակի հետևյալ տողերը. «Այժմ ինձ հետաքրքրում է, թե ինչպե՞ս է առողջությունդ, ի՞նչ ես անելու այսուհետև և ի՞նչ մտադրություններ ունես: Արդյոք աջողվո՞ւմ է «Ազդարարի» հրատարակությունը, թե այդ հարցն էլ քնեց, ինչպես շատ ուրիշ հարցեր: Իմացա, որ Մայիլյանները ուզում են գնել (թե արդեն գնել են) «Մշակը» Երևան փոխադրելու նպատակով: Գիտեմ «Մշակի» վիճակը, Լ. Քալանթարի շնորհիվ, քեզ չէր հետաքրքրում, բայց հիմա պետք է որ հե-

⁶¹ Տե՛ս Հ. Գրիգորյան, Վ. Հակոբյան. նշվ. հոդվ., էջ 121:

⁶² ԳԱԹ, Դ. Անանունի ֆ., թիվ 35: Հմմտ. Հ. Բ. Աբրահամյան. Հայ գրողների նամակները Դավիթ Անանունին, էջ 202: Ըստ 1919 թ. հունիսի 25-ին Դ. Անանունին տրված վկայականի (№ 2411) նա եղել է Հայաստանի Հանրապետության կողմից ներկայացուցիչ «Շուշու հարցի առթիվ» (ԳԱԹ, Դ. Անանունի ֆ., թիվ 111, թ. 7):

տաքրքրի: Որքան գիտեմ Մայիլյանները լուրջ մարդիկ են և կարող են ապահովել թերթը: Ապահով եմ, որ խմբագրի պաշտոնը չես մերժի, եթե առաջարկ լինի: Այս հարցերը շոշափում եմ նրա համար, որովհետև գրական գործը քեզ (ինչպես և ինձ) հետաքրքրում է ավելի, քան որևէ ուրիշ բան»⁶³: Զեռնարկը, սակայն, չի հաջողում:

Շուտով Դ. Անանունը հրավիրվում է աշխատելու ՀՀ ներգաղթի և վերաշինության վարչությունում: Նա իր ծրագրային մտադրությունները, այն է՝ հայահավաքման նպատակով ներգաղթ կազմակերպելու անհրաժեշտության և կարևորության խնդիրը, շարադրում է հուլիսի 24-ին վարչության պետ Ա. Մաքսապետյանին ներկայացրած հետևյալ զեկուցագրում. «Մեր կառավարության օրինական մտահոգությունը պիտի կազմե հայրենիքի նվաճումը: Հայ տարրի ցիրուցան վիճակը պիտի գտնի իր վախճանը, և կառավարությունը համառ ու ծրագրված աշխատանքով պիտի գլուխ բերի հայահավաքման գործը: Հայրենիքի նվաճումը հնարավոր կլինի միայն այն ժամանակ, եթե հայրենիքի սահմաններից դուրս մնացող հայության հատվածներն ու բեկորները դան ամփոփվելու մեզ բաժին մնացած տերիտորիայի վրա: Դա էլ կլինի թերի գործ, եթե Հայաստանի տերիտորիայի վրա գտնվող հայությունը բնակության այնպիսի վայրեր չգրավե, որ դրանով անջատված լինի հայ տարրի քաղաքական-տնտեսական բարգավաճումն ու հզորացումը, ինչպես և պետականության հիմքերի ամրացումը... Մենք սակավաթիվ ժողովուրդ ենք և անթույլատրելի կլինի, եթե հայահավաքման գործը վարենք տարերային եղանակով, որ նշանակում է՝ թե՛ վտանգել ժողովրդի ֆիզիկականը և թե՛ պակաս նպատակահարմար գործ կատարել հայրենիքի նվաճման տեսակետից»⁶⁴: Աշխատանքի նշանակումը, սակայն, ինչ-ինչ պատճառներով տեղի չի ունենում:

1919 թ. սեպտեմբերի 28-ին ստեղծվում է Հայաստանի գրական ընկերությունը, որի վարչության ամենաակտիվ անդամներից է եղել Դ. Անանունը: Կազմակերպվել են գրական միջոցառումներ, որտեղ նա հանդես է եկել և՛ զեկուցումներով, և՛ բացման խոսքերով: Այսպես, նոյեմբերի 29-ին խորհրդարանի դահլիճում տեղի է ունեցել Հայաստանի գրական ընկերության 6-րդ երեկոն, որտեղ բանախոսել է «Մ՛վ ինչպես էր կամենում հավաքել հայոց ազգը՝ Ստ. Նազարյան, Գր. Արծրունի և Բաֆֆի» նյութի մասին, դեկտեմբերի 6-ին էլ բացելով 7-րդ գրական երեկոն և «տաճիկների Կովկասից հեռանալու տարելիցի առթիվ մի քանի խոսքով դրվատեց հայ ցեղի հերոսամարտը և առաջարկեց ... հոտընկալու հարգել ազատության և արդարության համար մարտնչողների հիշատակը»: Դեկտեմբերի 23-ին դարձյալ խորհրդարանի դահլիճում Դ. Անանունը հանդես է գալիս «Սոց. դեմոկրատները և սոց. հեղափոխականները հայ իրականության մեջ» թեմայով և այլն⁶⁵: Բացի այդ, 1920 թ. ապրիլի 29-ին Վրթանես Փափազյանի թաղման արարողության ժամանակ նա Հայաստանի գրական ընկերության կողմից խոսել է գրողի կյանքի ու գործունեության

⁶³ ԳԱԹ, Դ. Անանունի ֆ., թիվ 35: Հմմտ. Հ. Բ. Աբրահամյան. Հայ գրողների նամակները Դավիթ Անանունին, էջ 202:

⁶⁴ ԳԱԹ, Դ. Անանունի ֆ., թիվ 6:

⁶⁵ Համապատասխանաբար տե՛ս «Հառաջ» (Երևան), 03, 10, 27. XII. 1919:

յան մասին⁶⁶: Մայիսի 14-ին էլ ՀՍԴԲԿ-ի կազմակերպած 3-րդ դասախոսությունը բանախոսելու էր «Մեր քաղաքական դեգերումները (Արևելք, թե՛ Արևմուտք)» նյութի մասին⁶⁷:

1919 թ. օգոստոսին Դ. Անանունը նշանակվում է Հայկոտպի պաշտոնաթերթի՝ «Հայաստանի կոոպերացիա» երկաթաթաթերթի խմբագիր: Հայաստանի պառլամենտի կողմից 1919 թ. հոկտեմբերի 28-ին տրված վկայականի համաձայն՝ Դ. Անանունին՝ «Հայաստանի կոոպերացիա» թերթի խմբագրին, «նախագահության կարգադրությամբ թուլյատրված է հաճախել պառլամենտի նիստերին»⁶⁸: Բազմաժանր այս պարբերականում արծարծվում են տնտեսական, հողային, սոցիալական բնույթի խնդիրներ, բերվում են վիճակագրական տվյալներ Հայաստանում տնտեսական տեղաշարժերի, կոոպերացիայի տարբեր ձևերի զարգացման վերաբերյալ: Դ. Անանունի ջանքերով «Հայաստանի կոոպերացիա»-ն էլ ավելի հետաքրքիր բովանդակություն է ստանում, երբ խմբագիրը դիմում է Հայ մտավորականության նշանավոր դեմքերին՝ պարբերականին աշխատակցելու խնդրանքով: Ստեղծվում է «Գրական բաժին», ուր տպագրվում են Հայ և օտար հայտնի գրողների գործերից: Պարբերականին ակտիվորեն աշխատակցում են Ե. Չարենցը, Ստ. Զորյանը, Դ. Դեմիրճյանը, Վ. Թոթովենցը, Արմ. Տիգրանյանը, Հովհ. Թումանյանը, Կ. Միքայելյանը և ուրիշներ, որոնց աշխատակցության շնորհիվ պարբերականը մեծ հետաքրքրությամբ է ընթերցվել հանրության կողմից: Երկաթաթաթերթի էջերում ամենից հաճախակի տպագրվում են Դ. Անանունի հոդվածները և նյութերն ամենատարբեր թեմաներով՝ սկսած հողային խնդրից ու կոոպերատիվներից, վերջացած Հայկական հարցով, միջազգային քաղաքականության հիմնախնդիրներով, հասարակական-քաղաքական, ազգային-կուսակցական բնույթի բազում հարցերով: Այսպես, օրինակ, «Տնտեսական հեռանկարներ», «Լևոն Աթաբեկյան. կյանքը և հասարակական-գրական գործունեությունը», «Մեր քաղաքական դեգերումները» հոդվածաշարերը, «Ղարաբաղ» վերնագրով հոդվածը, բազմաթիվ գրախոսականներ, հիշատակի խոսքեր: Այդ ժամանակաշրջանում Դ. Անանունը Հայաստանի և Հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշման հարցում նախապատվությունը տալիս է արևմտյան կողմնորոշմանը: Այդ ոգով է շարադրված «Ամերիկայի բազուկը» վերնագրով հոդվածը⁶⁹: Ի դեպ, բազմազան թեմաներով գրելու մասին Դ. Անանունը խոսում է դեռևս 1911 թ. Կ. Միքայելյանին ուղղված նամակում. «Առհասարակ, ինձ վիճակվում է գրել բազմազան ուղղությամբ և բովանդակությամբ և դա այն պատճառով, որ մի պարբերական պահանջում է բովանդակության զանազանություն, իսկ դրա համար մեր բարեկամները մատր-մատի չեն խփում և մի բան ուղարկելով հեռու են կենում և հանդիսատես դառնում»⁷⁰:

⁶⁶ «Հառաջ», 05. V. 1920:

⁶⁷ «Հառաջ», 14. V. 1920:

⁶⁸ Տե՛ս ԳԱԹ, Դ. Անանունի ֆ., թիվ 111, թ. 5: «Հայաստանի կոոպերացիա» երկաթաթաթերթը լույս է տեսել 1919 թ. հունվարից, որպես Հայկոտպի վարչության օրգան, հիմնադիր խմբագիրն էր ՀՅԴ գործիչ, հրապարակախոս Սիմոն Վրացյանը:

⁶⁹ Տե՛ս «Հայաստանի կոոպերացիա», № 14, օգոստոսի 31, 1919, էջ 417–419:

⁷⁰ ԳԱԹ, Կ. Միքայելյանի ֆ., թիվ 732:

1920 թ. մարտի 16-ին տրված վկայականի համաձայն՝ Դ. Անանունը «Հայկոտպի Հրատարակչական բաժնի վարիչն է»⁷¹: Նկատենք, որ այս ընթացքում, բացի «Հայաստանի կոոպերացիա»-ն խմբագրելուց, նա Ս. Վրացյանի ու Եր. Հարությունյանի հետ խմբագրել է խորհրդարանի նախագահության նախաձեռնություններով մեկ անգամ տպագրված «Բանակի օրը» թերթը⁷²:

... 1920 թ. հունվարին Դ. Անանունը, Ստ. Զորյանը, Բ. Իշխանյանը, Յ. Խանզադյանն ու այլ համախոհներ ձեռնամուխ են լինում Հայաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության (ՀՍԴԲԿ) ստեղծման գործին և հունվարի 20-ին հանդես են գալիս հայտարարությամբ ու նշանաբանով⁷³: Մայիսի 28–30-ին Ալեքսանդրապոլում տեղի է ունենում կուսակցության խորհրդաժողովը, որն ընդունում է ծրագրային փաստաթուղթ, ընտրում է Կենտրոնական կոմիտե, հանդես է գալիս որպես Հայաստանի անկախության ջերմ կողմնակից և բացասական վերաբերմունք հայտնում խորհրդային իշխանության հաստատման նկատմամբ⁷⁴: Այդ շրջանում գրած բազմաթիվ հոդվածներում և հրապարակային ելույթներում Դ. Անանունն ամեն կերպ սատարում էր Հայաստանի անկախության ամրապնդմանը: Անկեղծորեն պաշտպանելով հայոց անկախ պետականության գաղափարը՝ առանձնապես սուր քննադատության էր ենթարկում հայ հայրենախույս բուրժուազիային, որ «փոխանակ իր կապիտալը ի սպաս դնելու սեփական ժողովրդի անկախության հիմքերն հաստատուն դարձնելու համար ... բլոկադի է ենթարկել հայ հայրենիքը և դավեր է լարում նրա դեմ»⁷⁵:

Մայիսյան ապստամբության ճնշումից հետո Դ. Անանունն ու Բ. Իշխանյանը մեկնում են հանրապետության տարբեր շրջաններ, քաղաքից քաղաք և դասախոսություններ կարդում «բոլշևիկյան հեղաշրջման և այլ նյութերի շուրջ»: Ե. Իշխանյանն իր օրագրային գրառումներում՝

⁷¹ Տե՛ս ԳԱԹ, Դ. Անանունի ֆ., թիվ 111, թ. 8:

⁷² «Բանակի օր» (Երևան), 21. XII. 1919:

⁷³ «Հառաջ», 01, 10. II. 1920:

⁷⁴ «Հառաջ» թերթի 1920 թ. մայիսի 9-ի համարում տպագրված «Պատվիրակություն Հայաստանի վարչապետի մոտ» հաղորդումից տեղեկանում ենք, որ «Հայաստանի հայ ժող. Ս. դեմոկրատ. Բանվ. և հայ Ռամկավար կուսակցությունների ու անկուսակցականների կողմից» մի պատվիրակություն՝ մասնակցությամբ Դ. Անանունի, Ալ. Ասիբեկյանի և Գր. Չախուռչյանի, ներկայացել է Հայաստանի վարչապետին և հայտնել, որ «իրենց բոլոր ուժերը տրամադրում են կառավարության, հայ ժողովրդի, ... Հայաստանի անկախության պաշտպանության գործը միացած ուժերով վարելու համար»: Ի դեպ, Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուն պես ՀՍԴԲԿ Կենտկոմը դիմում է ՀՍԽՀ հեղկոմին՝ հայտնելով իր պատրաստակամությունը նոր իշխանություններին աջակցելու հարցում (տե՛ս Ա. Վ. Իրաբյան. նշվ. հոդվ.): Դա բխում էր կոնկրետ իրադրության մեջ ՀՍԴԲԿ-ի որդեգրած մարտավարությունից: 1920 թ. մայիսյան խորհրդաժողովը կուսակցության մարտավարության մասին իր սկզբունքային դիրքորոշումը որոշելիս հատուկ նշում է Ավգուստ Բեբելի հետևյալ խոսքերը. «Հարկ պատահած դեպքում 24 ժամվա ընթացքում կփոխեն ես իմ տակտիկական դիրքը 24 անգամ» (Վ. Հակոբյան. Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության ձևավորումը և առաջին քայլերը, էջ 118):

⁷⁵ «Նոր սերունդ» (Երևան), 17. III. 1920:

Հունիսի 9-ի տակ գրում է. «Դավիթ Անանունը և Բախչի Իշխանյանը Ալեքսանդրապոլից գալիս են Ղարաքիլիսե և իջևանում մեզ մոտ: Նրանք պտտում էին քաղաքից քաղաք և դասախոսություններ տալիս»⁷⁶: Հունիսի 10-ին Ղարաքիլիսայի ակումբի դահլիճում Դ. Անանունը բանախոսում է «Հայրենիքի ամբողջացման ու հայ ժողովրդի հավաքման մասին» և մասնավորապես ասում. «Դարեր շարունակ գրկված լինելով անկախությունից, հայ ժողովուրդը, գուրկ ազգային պետական կյանքից, ենթակայի հոգեբանությունից ու մտայնությունից դեռ չէ ազատագրվել, երբ իր երկիրը անկախ է դարձած, մեկի մեջ ներքին ուսն է խոսում, մյուսի մեջ ներքին թուրքը. հայը պետք է թոթափի, ներքին օտարից ձերբազատվի, կենտրոնանա ինքը իր մեջ և ինքնուրույնաբար դարձնի իր կյանքը և ջանա ամբողջացնել յուր հայրենիքը»⁷⁷: Հունիսի 12-ին նույն վայրում «Բախչիից հետո դասախոսեց Դավիթը, առաջիկա մեր անելիքների շուրջ և մեր օրինատացիայի մասին: Մենք պիտի ջանանք միջազգային դաշնագրով և օրենքով ապահովել մեր անկախությունը, որի համար կառավարությունը հարկ եղած միջոցների պիտի դիմե Վեհաժողովում (Փարիզի խաղաղություն կոնֆերանսում. – Ա. Զ.), և առավելապես Եռյակ Համաձայնության կառավարությունները պարտավոր են բավարարել իրենց փոքր դաշնակցի արդար պահանջները, մի դաշնակցի, որ իր քանակի 30 %-ից ավելին կորցրեց պատերազմի հետևանքով, մի կորուստ, որ համեմատաբար շատ ավելի մեծ է պատերազմի մեջ մտած պետություններից յուրաքանչյուրի ունեցած կորուստից: Դա արտաքին աշխարհում, իսկ ներսում յուրաքանչյուր հայ յուր ուժերը պետք է ի սպաս դնի հայրենիքի բարգավաճման գործին, ամեն կերպ ջանալով գորավիզ լինել հարազատ կառավարությանը»⁷⁸: Ե. Իշխանյանի գրառումներից նաև պարզվում է, որ Ղարաքիլիսայից հետո Դ. Անանունը և Բ. Իշխանյանը պետք է դասախոսություններ կարդային նաև Դիլիջանում, բայց քանի որ «Դավիթը կազմվածքով նիհար ու թույլ մարդ էր, չէր ուզում կառքով ճամփա գնալ ու տառապել», ուստի խնդրում են Ամերիկյան Նպաստամատուցի նախագահ Դոկտոր Բրաունին իրենց «օթոմօբիլը» տրամադրի, և դրանով Հունիսի 14-ին մեկնում են Դիլիջան, ապա վերադառնում Երևան:

... Խմբագրելով «Հայաստանի կոոպերացիա» երկաթաթաթերթը, ակտիվորեն աշխատակցելով ՀՅԴ բյուրոյի օրգան «Հառաջ» ամենօրյա պաշտոնաթերթին՝ մեկը մյուսի հետևից Դ. Անանունը հրապարակում է հետաքրքիր հոդվածներ, բարձրաձայնում Ղարաբաղը «մայր երկրի» հետ վերամիավորելու հարցը: Շուտով նա ընտրվում է Երևանում ապրող դարբաղցիների Հայրենակցական միության վարչության նախագահ: 1920 թ. ապրիլի 7-ին տեղի է ունենում միության ընդհանուր ժողովը, որտեղ Դ. Անանունը հանդես է գալիս Ղարաբաղում տիրող «մոմենտի լրջության մասին» զեկուցումով: Ժողովում ընդունվում են համապատասխան որոշումներ⁷⁹:

⁷⁶ Ե. Իշխանյան. Լեռնային Ղարաբաղ (1917–1920), Երևան, 1999, էջ 609:

⁷⁷ Նույն տեղում, էջ 609–610:

⁷⁸ Նույն տեղում, էջ 610:

⁷⁹ «Հառաջ», 11. IV. 1920:

Ադրբեջանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Ղարաբաղի տազնապալի վիճակն էլ ավելի է մտահոգում Դ. Անանունին: Հունիսի վերջին նա դիմում է հանրապետության վարչապետ Հ. Օհանջանյանին՝ Հայաստանում աշխատող մի խումբ ղարաբաղցի գործիչներին՝ 26 մարտու, այդ թվում իրեն՝ հատուկ հանձնարարություններով Ղարաբաղ ուղարկելու համար⁸⁰: Սեպտեմբերի 4-ին կրկին դիմում է վարչապետին՝ նրան ուղարկելով «Ղարաբաղ» վերնագրով հոդվածի սրբագրական շարվածքը, որը լույս էր տեսնելու «Հայաստանի կոոպերացիա» երկշաբաթաթերթի հերթական՝ 17-րդ համարում (սեպտեմբերի 15-ին): Ներկայացնելով հոդվածի բովանդակությունը՝ գրություն վերջում նշում է. «Ես հույսով եմ, որ Ղարաբաղի հարցում գիշողություն չի կարող լինել: Ուրախ կլինեմ, եթե իմ հոդվածը այս ուղղություններով ավելի ամրացնի հայ գործիչներին իրենց համոզմունքի մեջ»⁸¹: Ի դեպ, հոդվածում վերլուծելով Հայաստանի ու Ղարաբաղի տնտեսական ամբողջության հիմքերը, փաստական նյութով շարադրելով Ղարաբաղի տնտեսական վիճակը, նշելով, որ Ադրբեջանի հետ կապը ունի զուտ սուբյեկտիվ բնույթ, քանի որ պատճառը Հայաստանի հետ հաղորդակցական ճանապարհների բացակայությունն է՝ հեղինակն արձանագրում է. բավական է «Հայաստանը իր տիրապետությունը տարածի Թարթառի ավազանի վրա (հին հայկական Ծար գավառ), խճուղի անցկացնի Բասար-Գեջարից Գանձասար-Խաչեն մի կողմից, Բասար-Գեջար-Հաթերք-Մարտակերտ մյուս և այն ժամանակ կտեսնենք, որ կարճ ժամանակում Ղարաբաղը հազար կապերով կձուլվի մայր երկրի հետ, և միանգամայն երես կգարձնի Եվլախից ու հաղորդակցության մյուս հանգույցներից: ... Ղարաբաղը ամբողջական Հայաստանից դուրս՝ դա խոց է, որ նախ և առաջ գերեզման պիտի իջեցնե անկախ Ադրբեջանի գաղափարը: Բայց միաժամանակ նա պիտի թունավորե և Հայաստանի անդորրությունը: Եթե Ադրբեջանում խելքը գլխին քաղաքագետներ լինեին՝ նրանք ամենից առաջ պիտի հրաժարվեին Ղարաբաղից: Եթե Հայաստանում հայրենիքի հավաքման համոզված գործիչներ կան՝ նրանք օրնիբուն պիտի խորհեն Ղարաբաղի մասին: Ղարաբաղը Հայաստանին!»⁸²:

⁸⁰ 1920 թ. հունիսի 30-ին Դ. Անանունը Ե. Իշխանյանի հետ լինում է վարչապետ Հ. Օհանջանյանի մոտ, որպեսզի կառավարությունը «լուրջ միջոցների դիմե, Ղարաբաղը վերագրավելու և բացի այդ, դրամական միջոցներ տրամադրելու միություն վարչությունը, պրոպագանդայի գործը կազմակերպելու, գրականություն տարածելու» համար (տե՛ս Ե. Իշխանյան. *նշվ. աշխ.*, էջ 616):

⁸¹ ԳԱԹ, Դ. Անանունի ֆ., թիվ 8:

⁸² «Հայաստանի կոոպերացիա», № 17, սեպտեմբերի 15, 1920, էջ 690–691: Հմմտ. «Գրական թերթ», 22. XII. 1989: Դ. Անանունը Ղարաբաղը, Շուշին վերաշինելու ծրագրեր էլ է մշակել: Այսպես, Ա. Կիսիբեկյանի հետ 1925 թ. հանդիպման ժամանակ վերջինիս ասել է. «... մեր սքանչելի Ղարաբաղը միշտ համեմատել են Շվեյցարիայի հետ: Շվեյցարիան հարուստ է գեղեցիկ լճերով, իսկ Ղարաբաղը լիճ չունի: Ասում եմ Շուշիվա թուրքերին առաջարկենք, որ տեղափոխվեն Աղզամ, իսկ Քարինտակը, Դաշուշենը, Հյունոտը, Արկաթալի գյուղերը տեղափոխվեն և բնակվեն Շուշի թուրքական մասում: Հյունոտի քերծը փակենք, ջուրը կանգնեցնենք, որ դա էլ դառնա մեր լիճը: Հ՞ը, ի՞նչ ես ասում, համաձայն ես» (Ա. Կիսիբեկյան. *Հուշեր*, հ. 2, Երևան, 2011, էջ 111): Արձանագրենք. Դ.

Նկատենք՝ ուղիղ 100 տարի առաջ «խճուղի անցկացնելու» Դ. Անանունի գաղափարը կյանքի կոչվեց մի քանի տարի առաջ:

* * *

Ինչպես վերը նշվեց, Հայաստանի խորհրդայնացման առաջին իսկ օրերից «սպեցիֆիկները» պատրաստակամութուն հայտնեցին համագործակցել ու աջակցել երկրի պետական շինարարության գործին: Դ. Անանունը զբաղվում է կուլտուր-լուսավորական աշխատանքով: Այսպես, 1921 թ. հունվարի 15-ին ՀՍՍՀ պարենավորման ժողովրդական կոմիսարիատի կողմից տրված վկայականի համաձայն՝ նա Կուլտուր-մշակութային բաժնի քարտուղարն է, իսկ ըստ փետրվարի 17-ին տրված վկայականի (№ 28) կոմիսարիատի քարտուղարության Հրատարակչական բաժնի վարիչը (վկայականն ուժի մեջ է եղել մինչև 1921 թ. մարտի 17-ը)⁸³: Այդ պաշտոնում, սակայն, Դ. Անանունը երկար չի մնում⁸⁴:

Հարկ է նկատել, որ Դ. Անանունը եղել է բավականին հեղինակավոր անձնավորություն. դրա մասին է վկայում հետևյալ իրողությունը: 1921 թ. փետրվարյան համաժողովրդական ապստամբության⁸⁵ ճնշումից հետո խորհրդային իշխանությունները փորձում են բանակցությունների ճանապարհով համոզել Լեոնահայաստանի կառավարությանը՝ Գարեգին Նժդեհի գլխավորությամբ, հրաժարվել զինված պայքարից բոլշևիկների ու մահմեդական զինված ուժերի դեմ: Այդ նպատակով մայիսին խորհրդային Հայաստանի պատվիրակությունն արդարադատության ժողկոմ Ա. Կարինյանի գլխավորությամբ մեկնում է Չանգեզուր: Պատվիրակության կազմում էին Կարմիր բանակի ներկայացուցիչ Վ. Մելնիկովը, Երևանի հասարակայնության կողմից՝ Դ. Անանունը, Հ. Մելիքյանը և Ա. Դոն (Հ. Տեր-

Անանունը երբեք չկորցրեց հույսն ու հավատը հարագատ երկրամասի ապագայի նկատմամբ:

⁸³ ԳԱԹ, Դ. Անանունի ֆ., թիվ 111, թ. 11, 9:

⁸⁴ 1921 թ. հուլիսի 7-ին, ի պատասխան Հայկոպի վարչության № 2146 գրություն, որով Հրատարակչական բաժնին առաջարկվում էր «Ծրագիր կազմել ագիտացիական գործունեության համար, ինչպես նաև ներկայացնել հրատարակչական գործի մասին նախահաշիվ 1921 թ. 2-րդ կիսամյակի համար», Դ. Անանունը գեկուցագիր է ներկայացնում, որտեղ մի շարք դիտարկումներ է անում և նկատառումներ հայտնում «Հայաստանի կոոպերացիա» ու «Վերածնունդ» պարբերականների հրատարակության հարցերի շուրջ, խնդրում է հաստատել հաստիքացուցակը և բաժնի անխափան աշխատանքի համար ներկայացնում է մի շարք պահանջներ (մանրամասն տե՛ս նույն տեղում, թիվ 7, թ. 1): Հայկոպի վարչությունը հուլիսի 14-ին Հրատարակչական բաժնի վարիչին «ցանկալի է ունենալ» և «մտադրվում է բանակցել» բառակապակցություններով անորոշ պատասխան է տալիս (նույն տեղում, թիվ 112, թ. 6): Հուլիսի 18-ին Դ. Անանունը դիմում է վարչությանը. «Շնորհիվ ստեղծված քաղաքական պայմանների ծամավա ընթացքում անհնարինը եղավ կարգավորել Հայկոպի հրատարակչական գործը, անգամ պարզել նրա բնույթը: ... Խնդրում եմ այսօրվանից ընդունել իմ հրաժարականը և ինձ ազատ համարել Հրատարակչական բաժնի վարիչի պաշտոնից: Ենթադրում եմ, որ Վարչությունը հաշիվ կառնի իմ երկու տարվա աշխատանքը բացառիկ վարձատրության իմաստով» (նույն տեղում, թիվ 7, թ. 2):

⁸⁵ Փետրվարյան ապստամբության ժամանակ Դ. Անանունի գործունեության մասին տե՛ս Հ. Գրիգորյան, Վ. Հակոբյան. նշվ. հոդվ., էջ 125:

Մարտիրոսյան)⁸⁶: Այդ օրերին Ստ. Զորյանը գրում է Անանունին. «Թիֆլիսի հայ հասարակությունը, որ վերջերս զարմանալի հետաքրքրություն է ցույց տալիս դեպի Հայաստան ու հայ ժողովուրդը, մեծ հույսեր է կապում քեզ հետ այն իմաստով, որ քո առաքելությունը կարող ես վերացնել ժողովրդին սպառնացող աղետը: Կղերականից սկսած մինչև կոմունիստ համոզված են, որ հանդես կբերես քաղաքական մի այնպիսի իմաստություն, որ կհաշտեցնես անհաշտելին ... Չգիտեմ՝ որքան կհաջողվի քո առաքելությունը, բայց մի բան կարող եմ վկայել, որ քո անունը միացնում է շատ-շատերին և հույսեր ներշնչում: Մի խոսքով՝ դու դառնում ես կամ ավելի շուտ դարձել ես համազգային դեմք»⁸⁷: Նկատենք, սակայն, որ այդ առաքելությունը հաջողություն էր պսակվում⁸⁸:

... 1921 թ. կազմակերպվում է ՀՍԽՀ լուսավորության ժողովրդական կոմիսարիատին ենթակա էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտը (հետագայում՝ Մաշտոցի անվան Մատենադարան): Դ. Անանունը հուլիսի 7-ին հրավիրվում է այդտեղ իբրև գիտական աշխատակից՝ «կոմիսար և նախագահ գիտական կոլեգիայի»՝ Կարո Մելիք-Օհանջանյանի և ինստիտուտի գիտնական քարտուղար Երվանդ Տեր-Մինասյանի կողմից⁸⁹: Այստեղ նա հիմնականում զբաղվում է արևելահայության շրջանում հասարակական-քաղաքական շարժումների ուսումնասիրությամբ: Նույն թվականի հոկտեմբերի 7-ին ինստիտուտի գիտնական քարտուղար Ե. Տեր-Մինասյանը գիտական կոլեգիայի անունից դիմում է Դ. Անանունին՝ աշխատակցելու «էջմիածնի Գիտական ինստիտուտի Բանբեր»-ին, որով նպաստած կլինի «ինստիտուտի աշխատանքների և առհասարակ հայ գիտության զարգացմանը»⁹⁰:

էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտը 1921–1922 թթ. նախաձեռնել է դասախոսությունների շարք: Զեկուցողներ են եղել հայագետ-

⁸⁶ Տե՛ս Ա. Հ. Սիմոնյան. Խորհրդային Հայաստանի և Լեռնահայաստանի կառավարությունների ներկայացուցիչների Միսիանի բանակցությունները (1921 թ. մայիս). – ՀՀ ԳԱԱ «Լրագրեր հասարակական գիտությունների», 1998, № 2, էջ 69–79:

⁸⁷ Հ. Բ. Աբրահամյան. Հայ գրողների նամակները Դավիթ Անանունին, էջ 202–203:

⁸⁸ Մանրամասն տե՛ս Ա. Հ. Սիմոնյան. նշվ. հոդվ.: Ինչպես գրում է Եփրեմ Սարգսյանը, Դ. Անանունը, Հ. Մելիքյանն ու Ա. Դոն, ի տարբերություն պատվիրակության անդամներ Վ. Մելնիկովի և Ա. Կարինյանի խոստումների, խորհուրդ են տալիս չհավատալ վերջիններիս: Ա. Դոն իր ճանաչած ու վստահելի ընկերներին ասում էր. «Սուտ են խօսում, մի՛ հաւատաք, խաբում են» (տե՛ս Ա. Դոն. Իմ հիշողությունները, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Ռ. Գասպարյանի և Ռ. Սահակյանի, Երևան, 2015, էջ 20):

⁸⁹ ԳԱԹ, Դ. Անանունի ֆ., թիվ 81, թ. 1: 1921 թ. հուլիսի 13-ին Դ. Անանունին տեղեկացվել է, որ «Լուսժողկոմը հաստատել է Ձեզ ինստիտուտի գիտական աշխատակից» (նույն տեղում, թիվ 112, թ. 5): Վկայականը տրված է 1921 թ. հուլիսի 16-ին. տե՛ս նույն տեղում, թիվ 111, թ. 12: Ի դեպ, Հ. Բ. Աբրահամյան իր «Դավիթ Անանունի քաղաքական ճակատագիրը» վերնագրով հոդվածում (էջ 25) գրում է, որ ինստիտուտի կոլեկտիվը Դ. Անանունին «1919 թ. հուլիսին է» բնտրում գիտական աշխատակից:

⁹⁰ ԳԱԹ, Դ. Անանունի ֆ., թիվ 133ա:

ներ, ճարտարագետներ, պատմաբաններ, արվեստագետներ, այլ մասնագետներ, որոնցից հիշատակենք բազմավաստակ հայագետ Գարեգին Հովսեփյանին, Թորոս Թորամանյանին, Խաչիկ Սամվելյանին, Գրիգոր Չուբարին, Սենեքերիմ Տեր-Հակոբյանին, Երվանդ Տեր-Մինասյանին, Դավիթ Անանունին: Վերջինիս անվան դիմաց գեղուցումների համար նշված են հետևյալ թեմաները. «Բարձր դասը Հայաստանում և Ազերբայջանում», «Հայաստանի տնտեսական հեռանկարները», «Քաղաքատնտեսության սկզբունքները», «Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը և կոոպերացիան Հայաստանում», «Սոցիալ-դեմոկրատները և սոցիալ-հեղափոխականները Հայ իրականության մեջ», «Հայ գյուղագիրները» և այլն:

1922 թ. մայիսի 20-ին ՀՄՍՀ լուսծողկոմատի Հայաստանի (Էջմիածնի) գիտական ինստիտուտի կողմից Դ. Անանունին տրված վկայական-գրութայան մեջ նշված է, որ նա «գործուղվում է Վրաստանի և Ազերբայջանի սահմանները նյութեր ժողովելու Անդրկովկասի տնտեսական զարգացման մասին և ուսումնասիրելու հեղափոխական շարժումը հայերի մեջ»⁹¹:

... Էջմիածնի գիտական ինստիտուտի որոշմամբ, ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Աշ. Հովհաննիսյանի երաշխավորությամբ, 1922 թ. տպագրվում է Դ. Անանունի «Ռուսահայերի հասարակական զարգացումը (1870–1900)» գրքի երկրորդ հատորը, որը հեղինակը նվիրել է «անձնվեր ընկերոջ՝ Զալալ Տեր-Աստվածատուրյանցի հիշատակին»: «Առաջաբանի փոխարեն» վերնագրի տակ կարդում ենք. «Այս աշխատության առաջին հատորը, որ ընդգրկում էր ռուսահայերի հասարակական զարգացման յոթը տասնամյակների պատմությունը, լույս է տեսել 1916 թ.: Պատերազմը և հայկական ողբերգությունն արգելք հանդիսացան, որ ժամանակին ձեռնամուխ լինեի գրելու շարունակությունը: Բայց «խաղաղ» պայմաններն ըստ երևույթին հեքիաթի ոսկի թռչունն է դարձել մեզ համար: Եվ ահա 1921 թ. հունվարին վերսկսեցի կիսատ մնացած աշխատանքը:

Երկրորդ հատորի համար ժողովել էի բազմաթիվ տպագիր աղբյուրներ, գլխավորապես կառավարական հրատարակություններ Անդրկովկասի տնտեսական վիճակի վերաբերյալ: Հաղորդակցության խանգարման պատճառով, այդ աղբյուրները մնացին Երևանից դուրս: Հնարավորություն չեղավ նորից տիրանալ այդ նյութերին և բազմակողմանի տվյալներով ամրապնդել այս կամ այն եզրակացությունը: Սակայն այդ տվյալները պիտի ազդեին գրքի ծավալի վրա, անփոփոխ թողնելով եզրակացությունները: Դ. Ա. 1921. Երևան, 15. IV.»⁹²:

Այդ տարիներին Դ. Անանունի գործունեության շրջանակը չէր սահմանափակվում միայն գրական-հրապարակախոսական, մշակութային շինարարության ոլորտներով: Նա աշխատանք է կատարում նաև Խորհրդային

⁹¹ Նույն տեղում, թիվ 111, թ. 13: Ի դեպ, գրության մեջ նշված է. «Հայաստանի գիտական ինստիտուտը խնդրում է եղբայրական Խորհրդային Հանրապետությունների բոլոր հաստատություններին, անհրաժեշտ աջակցություն ցույց տալ հիշյալ գիտնականին իր աշխատանքների ընթացքում»:

⁹² Դ. Ա ն ա ն ու ն . Ռուսահայերի հասարակական զարգացումը (1870–1900), հ. երկրորդ, Էջմիածին, 1922, էջ ?:

Հայաստանի դպրոցական-կրթական բնագավառում: Այսպես, 1921 թ. հոկտեմբերի 3-ին ՀՍԽՀ էջմիածնի գավառի Հեղկոմի ժողովրդական լուսավորության բաժինը դիմում է Դ. Անանունին գրելով. «Սորանով Դուք հրավիրվում եք Վաղարշապատի II աստիճանի դպրոցում ընդհանուր պատմության ուսուցիչ: Խնդրում եմ այսօրվանից անցնել գործի»⁹³:

Ինչպես հայտնի է, 1921 թ. ամռանը Երևանում հիմնադրվել է Հայաստանի պետական թանգարանը: 1923 թ. փետրվարին թանգարանի Հեղափոխության բաժնի վարիչ է նշանակվել Դ. Անանունը: Դրան դեմ են եղել որոշ բուլշևիկներ, բայց նրանց կարծիքը հաշվի չի առնվել⁹⁴: Դ. Անանունը թանգարանի երախտավորներից է, որը մեծ լուծա է գրել՝ հարստացնելով այդ բաժինն իր եռանդուն ջանքերի շնորհիվ: Նա մշտական շփումների մեջ է եղել Վրաստանում, Ադրբեջանում, Ռուսաստանում և արտասահմանում բնակվող հայ հասարակական, գիտության, մշակույթի, գրականության գործիչների հետ, նրանցից ստացել է Անդրկովկասում հեղափոխական շարժումների վերաբերյալ բազմաթիվ փաստաթղթեր, թերթերի հավաքածուներ, գրքեր, իրեր և հիմնադրել համապատասխան ֆոնդեր: Նկատենք, որ առաջինն ինքն է օրինակ ծառայել. դեռևս 1921 թ. թանգարանին էր նվիրել հնչակյան կուսակցության Բաքվի Բիբի Հեյբաթի արվարձանի կազմակերպության «Ընկեր» մասնաճյուղի արխիվը⁹⁵:

Չափազանց ուշագրավ են Մոսկվայում ՀՍԽՀ-ի լիազոր ներկայացուցիչ Սահակ Տեր-Գաբրիելյանին, ամերիկահայ մանկավարժ, մշակութային գործիչ Հակոբ Խաչմանյանին և հրապարակախոս-խմբագիր Հրաչ Երվանդին Դ. Անանունի գրած, ստացած նամակները, որոնք թանգարանի ու բաժնի հետ կապված մի շարք խնդրանք-հանձնարարականներ, առաջարկներ ու հետաքրքիր այլ մանրամասներ են պարունակում:

Ի դեպ, Պետական թանգարանում ստեղծվել է «Հայոց հարցի» ուսումնասիրության հանձնաժողով, որը կազմել է հետազոտությունների և հրատարակությունների ծրագիր: Լույս է տեսել «Հայաստանի ավտոնոմիան» և Անտանտան: Վավերագրեր իմպերիալիստական պատերազմի չրջանից» վերնագրով ժողովածու (առաջաբանը՝ Աշ. Հովհաննիսյանի, Երևան, 1926, 93 էջ): Դ. Անանունի առաջարկով Աշ. Հովհաննիսյանը գրել է երիտթուրքերի «Միություն և առաջադիմություն» կուսակցության պարագլուխներից, երիտթուրքերի ղեկավար «եռյակի» անդամ, Հայոց ցեղասպանության իրագործման գլխավոր հանցագործներից, «Սահմանադրական» թուրքիայի ռազմական ու պետական գործիչ Ահմեդ Զեմալի «Հայկական հարցը» գրքի առաջաբանը⁹⁶:

⁹³ ԳԱԹ, Դ. Անանունի ֆ., թիվ 112, թ. 7:

⁹⁴ Այդ մասին տե՛ս Հ. Գրիգորյան, Վ. Հակոբյան. նշվ. հոդվ., էջ 125–126:

⁹⁵ «Նորք», գիրք երկրորդ, հունվար–մարտ, 1923, էջ 276:

⁹⁶ Քանի որ տասնամյակներ անց առաջաբանը գրելու շարժառիթը տարակուսանք է հարուցել, Աշ. Հովհաննիսյանը պարզաբանել է. «Ձեմալ փաշայի գրառումների գիրքը բաղկացած է 9 գլխից: ... Իմ առաջաբանով 1927 թ. հրատարակվածը ընդգրկում է «գրառումների» միայն վերջին «Հայկական հարցը» գլու-

Դ. Անանունը 1926 թ. ընտրվում է 1925 թ. ստեղծված ՀՍՍՌ գիտութ-
յան և արվեստի ինստիտուտի պատմահասարակական բաժնի անդամ:
Ինչպես նկատվել է, դա Խորհրդային Հայաստանում նրա վերջին ձեռք-
բերումներից էր⁹⁷:

* * *

Լինելով ժամանակի հասարակական-քաղաքական, գրական-մշակու-
թային անխոնջ գործիչ, գտնվելով իրադարձությունների հորձանուտում,
բնականաբար, Դ. Անանունի մասին կան ժամանակակիցների ուշադրավ
հուշեր: Այսպես, Արամայիսի «Փշրանքներ» հուշագրությունը հետաքր-
քիր տեղեկություններ է պարունակում ժամանակի հայ իրականության
մասին⁹⁸: Դրանում Անանունի կյանքին ու գործունեությանը վերաբերող
հատված կա: «Դավիթը կաբինետային գործիչ էր. հասարակական ելույթ-
ներ իր կյանքում միայն մի քանի անգամ կրիներ ունեցած. անձամբ մաս-
նակցություն էր ունեցել այս կամ այն բռնկումներին, ցնցումներին, բայց
չատ սիրում էր տեսնվել ընկերների հետ, նոր ծանոթություններ հաստա-
տել, ասել, խոսել, վիճել, իր գրածը կարդալ, ուրիշներ լսել ու շատերն էին,
որ խոսակցության ժամանակ վախվախում էին նրա սուր, կծու, շեշտակի
հարվածներից. շատ սրամիտ էր ու հայհոյական, բայց հայհոյական ար-
տահայտությունները, համեմատած մյուսներին, այնքան յուրատեսակ
չարժուկներով ու ծամածռություններով էր տալիս, որ փոխանակ գայրաց-
ներով՝ զվարճացնում էր, — գրում է Արամայիսը: — Այդպես հիշոցաբան,
նույնիսկ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, երբ բոլշևիզմի մասին
ամենամեղմ նկատողությունն անգամ ծանր հետևանքներ էր ունենում,
չէր քաշվում անպատկառ հայհոյանքներով խոսել իր նախկին ընկեր սոց-
դեմոկրատ, այժմ կոմունիստ դարձածների հետ, հայհոյելը կարծես թե
նրա համար օրգանական պահանջ էր»⁹⁹: Ի դեպ, այս վերջին առումով

խը: Այն գերմաներեն հրատարակությունից թարգմանել է Ա. Աթանասյանը:
Առաջաբանում գլխավոր նպատակս է եղել ցույց տալ հեղինակի կեղծարարու-
թյունը: Ջեմալ փաշայի «Հայկական հարցը» գրառումների մեջ տեղ են բռնում այն
առարկումները, որ հեղինակն անում է ուսու և եվրոպական «հայասերներին»
տաճկահայ շարժման մասին: Նրա խորհրդածություններն այս առումով մի բա-
նավե՞ն է առաջին հերթին ցարական Ռուսաստանի «ազատարար» քաղաքա-
կանության փաստաբան Ա. Մանդելշտամի հետ: Նպատակ ունենալով ապագա...
ընթերցողին լիակատար գաղափար տալ բախվող տեսակետների մասին, Հայաս-
տանի հեղափոխության թանգարանը, որպես հրատարակիչ, գրքի վերջում ըն-
դարձակ հավելվածներ է տեղակայել Մանդելշտամի գրքից: Ընդամին նշեմ, որ
Ջեմալ փաշայի «Հայկական հարցը» հրատարակությունը իմ նախաձեռնությու-
նը չէ: Ես այդ գրքի առաջաբանը գրել եմ Դավիթ Անանունի հանձնարարու-
թյամբ (ընդգծումը մերն է. — Ա. Զ.)» [Ն. Մ ա ռ ու խ ա ն յ ա ն. Մտորումներ և
հուշեր ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի մասին (ծննդյան 125-ամյակի առ-
թիվ), Երևան, 2012, էջ 26–27: Տե՛ս նաև՝ էջ 27–31]:

⁹⁷ Տե՛ս Ն. Գրիգորյան, Վ. Հակոբյան. նշվ. հոդվ., էջ 126:

⁹⁸ Ա. Զ ա ռ յ ա ն. նշվ. հրատ., էջ 245–252:

⁹⁹ Նույն տեղում, էջ 247:

Հետաքրքիր դրվագներ կան նաև Ե. Իշխանյանի օրագրային գրառումներում¹⁰⁰:

Հուլիերի պատառիկներ կան նաև Ա. Կիսիբեկյանի գրքում¹⁰¹, Տեր-Եղիշե քահանա Վարդանյանի ձեռագիր Հուլիերում¹⁰²: Հեղափոխության բաժնում աշխատած ժամանակահատվածին է վերաբերում Մորուս Հասրաթյանի Հուլիեր Ե. Չարենցի և Դ. Անանունի մասին¹⁰³: Միքայել Մազմանյանի «Չարենցի Հետ» վերնագրով Հուլիերում ուշագրավ միջադեպ է արձանագրվել Դ. Անանունի Հետ կապված¹⁰⁴:

Որոշ վավերագրերից, Հուլիերից, մամուլի տվյալներից հայտնի է դառնում, որ Բաքվում ապրած տարիներին Դ. Անանունը շփվել, մտերիկից ճանաչել է Բաքվի կոմունայի գործիչներին: Բաքվի 26 կոմիսարների վախճանից ամիսներ անց նա «Բաքվի շիրիմները» վերնագրով հոդվածաշար է տպագրել նրանց մասին¹⁰⁵: «Այս շիրիմները Բաքվում չեն գտնվում: Բայց ուր էլ որ լինեն նրանք—Պարսկաստանում թե Անդրկասպյան երկրի ավագոտ անապատներում— այդ շիրիմները իրանց մեջ ամփոփում են բաքվեցիներին, որոնք 1918 թ. մարտին չկամեցան գլուխ խոնարհել Ադրբեջանի ավատական դասի առաջ և կռվի ձեռնոց վերցրին հանուն Ռուսաստանի և դեմոկրատիայի, — գրում է Դ. Անանունը: — Այդ հայտնի և անհայտ շիրիմների տակ ամփոփվածները կենդանի մարտիկներ էին, երբ անցյալ տարվա հուլիսի վերջին մի խումբ ընկերների հետ ես հատուկ հանձնարարությամբ թողեցի Բաքուն, որ Ռուսաստանի ճանապարհով հասնեմ Ղարաբաղ: Հինգ ամիս տևեց իմ թափառումները Հյուսիսային Կովկասում, մինչև որ կարողացա կտրել բոլշևիկական Արտակարգ Հանձնաժողովի համառությունը, անցաթուղթ ստանալով, մի կերպ պատուել քաղաքացիական կռվի ճակատը և հասնել Անդրկովկաս: Այստեղ ինձ համար պարզվեց Բաքվի ողբերգության մանրամասնությունը և այն վիճակը, որին ենթարկվել են այդ քաղաքի գործիչներից ոմանք: Ճակատագիրը անողոք էր գտնվել մանավանդ Բաքվի բոլշևիկների նկատմամբ: Նրանց իշխանությունը տապալվել էր օգոստոսին, իրանք ձերբակալվել էին, ապա սեպտեմբերի կիսին մուժ դավադրության շնորհիվ մահ գտել Կրասնովոդսկի և Ասխաբադի միջև: Այդ բոլշևիկներից ոմանք եղել են իմ ծանոթները, անգամ բարեկամները: Նրանց հետ վիճել ենք, խոսվել, հաշտվել: Այսօր նրանք գերեզմանի բաժին են դարձել և ինձ վրա ծանրանում է գրական մարդու պարտքը — գնահատել նրանց կյանքի գործը իր լավ ու պակասավոր կողմերով:

¹⁰⁰ Ե. Իշխանյան. նշվ. աշխ., էջ 459–461, 521–523, 609–612, 616–622, 694–695: Ամենայն հավանականությամբ, հենց նման դարձվածքները նկատի ունեն Աշ. Հովհաննիսյանը, երբ Դ. Անանունին գրում էր. «Քո ոսկեբերան դարձվածքներից ինձ ևս մաս ու բաժին հանած կլինես լռությանս համար» (ԳԱԹ, Դ. Անանունի Փ., թիվ 71):

¹⁰¹ Ա. Կիսիբեկյան. նշվ. աշխ., էջ 110–111:

¹⁰² «Մի փոքրիկ իմ օրագրից» վերնագրով այս Հուլիերը ժամանակին մեզ է փոխանցել նշանավոր բանագետ, լուսահոգի Ալվարդ Ղազիյանը:

¹⁰³ Չարենցի Հետ: Հուլիեր /Կազմ. Դ. Գասպարյան, Երևան, 1997, էջ 84, 96:

¹⁰⁴ Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին (Չարենցի Հետ), Երևան, 1961, էջ 71–72:

¹⁰⁵ Տե՛ս Դ. Անանուն. Բաքվի շիրիմները.— «Մշակ», 23, 27, 29. III. 1919, «Հառաջ» (Երևան), 21, 23, 29. XI. 1919, 04. XII. 1919:

«Բաբվի շիրմները» վերտառության տակ ես հետզհետե կխոսեմ Ստ. Շահումյանի, Պրոկոփի Զափարիձեի, Արսեն Ամիրջանի, Բաղդասար Ավագյանի և Մաշադիբեկ Ազիզբեկովի մասին: 26 հրացանագարկ եղած բուշեիկներից այս հինգին ավելի մոտ եմ ճանաչում»¹⁰⁶:

Ստ. Շահումյանի մասին Դ. Անանունը մասնավորապես գրում է. «Ստեփանը Ռուսաստանի Սոց. Դեմ. Բան. Կուսակցության բոլշևիկյան թևին էր պատկանում, անգամ նրա գլխավոր և հարգված գործիչներից մեկն էր թե Անդրկովկասում և թե Ռուսաստանում առհասարակ: Նա կուսակցական մոլեռանդություն ուներ և չէր հաշտվում այն մտքի հետ, որ կազմակերպվի ազգային սոցիալ-դեմոկրատական կուսակցություն: Ես էլ հենց պատկանում էի նման կազմակերպության: Եվ այդ բավական էր, որ նա պատեհ-անպատեհ ամեն մի հանդիպումին վիճեր ազգային կազմակերպության գոյությունը իրավունքի մասին: Քանի անգամ ես նրան առաջարկել եմ աշխատակցել մեր պարբերականներին, բայց նա միշտ հրաժարվել է, առարկելով, որ չի հաշտվում ազգային ս. դեմոկր. գոյության հետ: Երբ 1913 թ. «Նոր-Հոսանքում» լույս տեսավ իմ «Ազգային հարցը և դեմոկրատիան» հոդվածը՝ Ստեփանը Աստրախանից գրեց ինձ, որ ես դաշնակցական եմ դարձել և ինքը այդ պիտի ապացուցի մի գրվածքով: Նա կատարեց իր խոստումը: 1915 թ. (1914 թ. – Ա. Զ.) Արաքս («Այաքս» – Ա. Զ.) կեղծանունով հրատարակեց «Ազգային կուլտուրական-ավտոնոմիայի մասին» վերտառությամբ մի գրքույկ, որի մեջ հետևելով Լենինին և Ստալինին (Ջուղաշվիլի), իրան ցույց է տալիս քաղաքական կենտրոնական ջատագով և ազգային հարցով շահագրգռողներին դասում բուրժուական և քաղքենիական մտածողների շարքում: Ինչ խոսք, որ նա իր գրքույկի մեջ ինձ դասում էր իսկական դաշնակցականների շարքում: Ստեփանի այդ գրքույկին ես պատասխանեցի «Մտքի տկարությունը ազգային հարցի լուծման խնդրում» հոդվածովս, որ տպված է «Գործ» ամսագրի 1917 թ. № 3-ում: Ռուսական հեղափոխությունը և բոլշևիկների գործելակերպը ազգային հարցում եկան ցույց տալու, որ Լենինը և նրա աշակերտ Ստեփանը միակողմանի էին նայում խնդրին 1913–1914 թվականներին: Ազգային ինքնորոշման սկզբունքը մինչև պարզ անջատում պետությունից՝ ավելի մոլեգին պաշտպան չունեցավ, քան բոլշևիկը: Իսկ 1914 թ. Լենինի համար ազգային հարցը գործնական շահագրգռություն էր ներկայացնում միայն բուրժուազիայի համար և նա քարոզում էր պրոլետարիատին հեռու պահել իրան այդ թակարդից: ... Բոլշևիկյան իշխանությունը Բաբվում Ռուսաստանի համար էր աշխատում: «Առանց Բաբվի Ռուսաստանը մի մեծ գյուղ կդառնա», – այդպես էր գրել Լենինը Շահումյանին: Վերջինս շատ անգամ է հայտարարել Բանվորական Խորհրդի նիստերին, որ «մի ազգության շահ» (ակնարկը ուղղված էր հայերին) չի զբաղեցնում բոլշևիկներին: Սակայն Բաբվի ինքնապաշտպանությունը իմ խորին համոզմունքով անուղղակի կերպով շատ բան է փրկել Անդրկովկասի հայերի համար: Եվ որովհետև այդ ինքնապաշտպանության կարևորագույն դեմքերից մեկը Ստ. Շահումյանն էր, – ասել է, որ նրա քաղաքականությունը որոշ պայմաններում համապատասխանում էր թե Ռուսաստանի և թե հայերի շահերին: Այսպիսով ինտերնացիոնալիզմը մեզ կորուստի խորխորատ չի տանում, այլև փրկում է մեզ: Ինտերնացիոնալիստ Ստ. Շահումյանը կամենում էր բո-

¹⁰⁶ «Մշակ», 23. III. 1919:

լորին երջանկացնել, որ երջանկացած լինի և նրան ծնող հարազատ ժողովուրդը: Թող այդ ժողովրդի նահատակ զավակների շարքում իր անմոռաց անունն և հիշատակը ունենա նաև նա»¹⁰⁷:

... 1920-ական թվականներին Երևանում ապրած տարիներին Դ. Անանունը սերտ կապեր է ունեցել կուսակցական ղեկավար մի շարք աշխատողների՝ Ս. Տեր-Գաբրիելյանի, Աշ. Հովհաննիսյանի, Պ. Մակինցյանի, Ս. Լուկաշինի (Ս. Սրապիոնյան) և այլոց հետ, որոնցից շատերի հետ անցել էր սոցիալ-դեմոկրատական կազմակերպության բովով: Այսպես, հայտնի է, որ 1920 թ. դեկտեմբերից 1921 թ. հուլիսը Դ. Անանունը և Ստ. Զորյանը ապրել են լուսժողովում Աշ. Հովհաննիսյանի տանը¹⁰⁸: 1923 թ. Անանունը Հայաստանի պետական թանգարանի Հեղափոխության բաժնի վարիչ է նշանակվել ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Աշ. Հովհաննիսյանի երաշխավորությամբ¹⁰⁹:

Դ. Անանունն ակտիվորեն աշխատակցել է Երևանում հրատարակվող «Նորք» գրական, գիտական և քաղաքական հանդեսին: Պարբերականի 1923 թ. երկրորդ գրքում՝ «Մոտիկ անցյալից» խորագրի տակ, տպագրվել են նրա՝ «Հնչակյանների հարումը Ռուսաստանի հեղափոխությանը ու սոցիալիզմին (ծանոթություններ և վավերագրեր)», իսկ երրորդում՝ «Երկու վավերագիր», ուշագրավ, բազմաթիվ հետաքրքիր մանրամասներ պարունակող նյութերը¹¹⁰:

Դ. Անանունին հետաքրքրել է 1880–1890-ական թվականների ազգային գործիչ Վարդան (Ալեքսանդր) Գոլոշյանի ու նրա ընկերների գործունեությունը: Այդ մասին նա ծավալուն հոդվածով հանդես է եկել «Նորք» հանդեսում՝ «Մոտիկ անցյալից» խորագրի տակ՝ «Վարդան Գոլոշյանը և իր շրջանը» վերնագրով¹¹¹: Սակայն ձեռքի տակ եղած նյութերով չբավարարվելով՝ Հ. Խաչմանյանին ուղղված նամակում խնդրում է նոր տեղեկություններ հաղորդել Գոլոշյանի և նրա խմբի մասին. «Քանի խոսք եղավ Վարդան Գոլոշյանի մասին՝ ապա կխնդրեի, որ իմ կողմից նամակ գրեք Գարեգին Բաղեչյանին (վանեցի, կարծեմ մանր վաճառական, Զրյսի քաղաքում, այդպես են ասել նրան ճանաչողները) և խնդրեք, որ հաղորդե ինձ, թե նրա հետ 1897–1898 թթ. արմենականներից ովքե՞ր են եղել բանտարկված Թիֆլիսում, Երևանում և Թավրիզում: Թող տա մանրամասն ցուցակը, բանտարկվածների հասարակական դիրքը, տարիքը, ապա

¹⁰⁷ «Մշակ», 27, 29. III. 1919:

¹⁰⁸ 1919 թ. սեպտեմբերի 9-ին Դ. Անանունին Երևանում մեկ սենյակ է հատկացվել Սիրական Վարդանյանի տանը՝ Բեբուժովյան փող. № 17-ում (ԳԱԹ, Դ. Անանունի ֆ., թիվ 112, թ. 2), իսկ նոյեմբերի 12-ին Երևանի բնակարանային հատուկ հանձնաժողովը նրան մեկ սենյակ է տվել Աստաֆյան փող. № 71-ում (նույն տեղում, թիվ 111, թ. 6):

¹⁰⁹ Տասնամյակներ անց Աշ. Հովհաննիսյանն ասել է, որ «... ինքն է Խորհրդային Հայաստանի լուսավորության ժողովում եղած ժամանակ, 1921 թվականին (1923 թ., ընդգծումը մերն է.՝ Ա. Զ.) նրան նշանակել հանրապետության հեղափոխության թանգարանի դիրեկտոր, որտեղ աշխատել է մինչև 1926 թվականը» (Ն. Ս ա Ր ո լ խ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 65):

¹¹⁰ Տե՛ս «Նորք», գիրք երկրորդ, էջ 274–315 (ի դեպ, բովանդակության մեջ՝ վերնագրում, Ռուսաստանի փոխարեն գրված է՝ ռուսական), գիրք երրորդ, ապրիլ–սեպտեմբեր, 1923, էջ 321–327:

¹¹¹ Տե՛ս «Նորք», չորրորդ գիրք, 1924, էջ 328–361:

տեղեկությունն այն մասին, թե ով որքան ժամանակ է մնացել բանտում: Այս գործը կարող է կատարել նաև նկարիչ Փանոս Թերլեմեզյանը, որ նույնպես բանտարկված է եղել: Փանոսին հայտնեցեք իմ ողջունները, բարեմաղթությունները և խնդրեցեք Բաղեշյանի հետ միասին կազմելու ինձ հարկավոր տեղեկանքը»¹¹²: Միաժամանակ առաջարկել է այդ ուսումնասիրությունը՝ 80 էջ ծավալով, տպագրել Հ. Խաչմանյանի խմբագրած «Ամերիկահայ հանրագիտակ» տարեգրքում: Հայտնում է, որ «Նյուլթը լույս է սփռում նախորդ դարի 80-ական թվականների ազգային հեղափոխական շարժման վրա և հայտնաբերում է մի շարք դեմքեր»¹¹³: Պարզվում է, որ Դ. Անանունը մտադիր է եղել պատմական այդ նյուլթը հրատարակել առանձին գրքով:

Դ. Անանունն ուսումնասիրել է նաև ազգային-ազատագրական շարժման ռազմավարներից Սարգիս Կուկունյանցի կյանքն ու գործունեությունը և «Զիթենի» ժողովածուում հրապարակել է նրա վեց նամակը, որոնցում, ի դեպ, անդրադարձ կա հայերի նկատմամբ ցարական կառավարության վարած քաղաքականությունը¹¹⁴:

* * *

Ծավալելով գիտական ու հասարակական ակտիվ գործունեություն՝ Դ. Անանունը մի կողմից արժանանում է հարգանքի, մյուսից՝ վաստակում հակառակորդներ: 1926 թ. Վենետիկում՝ Սուրբ Ղազարի վանքի տպարանում, հրատարակվում է «Ռուսահայերի հասարակական զարգացումը (1901–1918 թթ.)» աշխատության երրորդ հատորը: Այստեղ հարկ ենք համարում հատուկ նշել. ինչպես նկատվել է, Դ. Անանունն այս ուսումնասիրության նաև նախորդ երկու հատորներում ու այլ հրապարակումներում «մեծաքանակ նյութերի և վիճակագրական տվյալների օգտագործմամբ փորձել է վերլուծել արևելահայերի տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացման օրինաչափությունները, առաջ է քաշել հայության ազգային համախմբման անհրաժեշտության գաղափարը: Հայ ազգային-ազատագրական շարժման խնդիրների, Հայկական Հարցի լուծման ուղիների վերաբերյալ իր տեսակետներում նա բանավեճի մեջ էր դաշնակցականների և բոլշևիկների հետ. մերժում էր դաշնակցականների ամբոխավարությունը և բոլշևիկների «մոլեռանդ» ինտերնացիոնալիզմը: Նա ժխտում էր նաև դասակարգային գիտակցության դերը պատմության մեջ և առաջնային նշանակություն էր տալիս ազգային պատկանելության գիտակցությանը: Չնայած պատմականությունից մի շարք խտտորումներին՝ XIX դ. հայ ժողովրդի հասարակական զարգացման գործում Ռուսաստանի խաղաղած առաջադիմական դերի վերաբերյալ Դ. Անանունի գնահատականը պահպանում է իր արդիականությունը»¹¹⁵:

¹¹² Գ.Ա.Թ., Հ. Խաչմանյանի Փ., թիվ 334:

¹¹³ Նույն տեղում:

¹¹⁴ Դ. Ա ն ա ն ու ն. Սարգիս Կուկունյանցի հինավուրց նամակները. – «Զիթենի», գրական ժողովածու, Թիֆլիս, 1915, էջ 232–243:

¹¹⁵ Հայոց պատմություն, հ. III, գիրք II, Երևան, 2015, էջ 183:

«Հայուլթյան հավաքման» գաղափարը, որ ընկած էր «Ռուսահայերի հասարակական զարգացումը (1901–1918 թթ.) «ուսումնասիրությունների» ընթացքում, արժանանում է սուր քննադատության՝ «գաղափարական մամուլից մինչև խորհրդային մամուլ ներառյալ»¹¹⁶: Նրան անվանում են «տիրահալածակ», «տիրացու», «ազգայնամոլ», «վնասակար» անձնավորություն: Հրապարակվում են հակասպեցիֆիկյան հոդվածներ, տպագրվում գրքեր, որոնցում գաղափարաքաղաքական բռնաճնշումների համար հող է նախապատրաստվում: Դ. Անանունի շուրջ գնալով օղակը սեղմվում է. 1926 թ. նոյեմբերին նա ազատվում է Պետական թանգարանի Հեղափոխության բաժնի վարիչի պաշտոնից: 1927 թ. մարտի 25–27-ին տեղի է ունենում ՀԿ(Բ)Կ Կենտկոմի չորրորդ պլենումը, որտեղ սուր քննադատության են արժանանում նախկին «սպեցիֆիկները», սպեցիֆիզմի ջատագույնները, Դ. Անանունը¹¹⁷: Այդ ընթացքում նա երկու անգամ լինում է Թիֆլիսում աշխատանք փնտրելու կամ արտասահման (Պարսկաստան) փոխադրվելու թույլտվություն ստանալու համար, սակայն մերժում է ստանում: Հունիսի 1-ից 6-ը տեղի է ունենում ՀԿ(Բ)Կ Կենտկոմի հինգերորդ պլենումը, որը կուսակցական կազմակերպությունների ուղղորդությունը հրափրում է օպոզիցիոներների դեմ պայքարն ուժեղացնելու վրա՝ պահանջելով տույժի ամենախիստ միջոցներ կիրառել կուսակցության այն անդամների նկատմամբ, ովքեր կշարունակեն պաշտպանել հակալենինյան հայացքներ: Պլենումը Աշ. Հովհաննիսյանին ազատում է ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղարի պարտականություններից. ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար է ընտրվում Հ. Հովսեփյանը: Վերջինս «Заря Востока» թերթում հանդես է գալիս «Միասնական ֆրոնտում լենինիզմի դրոշի տակ» վերնագրով հոդվածով, որտեղ «սպեցիֆիկ-մենչևիկ» Դ. Անանունին անվանում է «պրոլետարական հեղափոխության և խորհրդային իշխանության կատաղի թշնամի»¹¹⁸: Այս ամենն ավարտվում է նրանով, որ հուլիսի 28-ին նա Թիֆլիսում Հայաստանի պետական քաղաքական վարչության խնդրանքով ձերբակալվում է և սեպտեմբերին տեղափոխվում Երևան: ՀՍՍՀ պետքաղվարչության հատուկ խորհրդակցության 1927 թ. հոկտեմբերի 15-ի որոշմամբ Դ. Անանունը երեք տարով աքսորվում է Սիբիր¹¹⁹. նրան նախ տանում են Մոսկվա, ապա՝ Տոմսկի շրջանի Նարիմի երկրամասի Իլինո գյուղ¹²⁰: Պատիժը կրելուց հետո ԽՍՀՄ միացյալ պետքաղվարչության որոշմամբ Դ. Անանունը զրկվում է Անդրկովկասում, նաև երկրի կենտրոնական մի շարք վայրերում ապրելու իրավունքից: Սկզբում բնակվում է Ուֆայում, ապա տեղափոխվում է Աստրախան, մեկ-մեկ այցելում է Բաքվում ապրող հարազատներին: Իր կարիքները հոգալու համար Դ. Անանունն Աստրախանում աշխատում է ձկնորսական ցանցեր հյուսող արտելներից մեկում:

¹¹⁶ Այդ մասին մանրամասն տե՛ս Հ. Բ. Աբրահամյան. Դավիթ Անանունի քաղաքական ճակատագիրը, էջ 25–27:

¹¹⁷ Նույն տեղում, էջ 28:

¹¹⁸ Տե՛ս «Заря Востока» (Тифлис), 07. VIII. 1927.

¹¹⁹ Ա. Վիրաբյան. նշվ. հոդվ.: Մեկ այլ տվյալով դա եղել է 1928 թ. ապրիլի 27-ի որոշմամբ. տե՛ս Հ. Գրիգորյան, Վ. Հակոբյան. նշվ. հոդվ., էջ 127:

¹²⁰ Հ. Գրիգորյան, Վ. Հակոբյան. նշվ. հոդվ., էջ 127:

Այդ տարիներին կյանքի դառնությունները լիովին ճաշակած ակադեմիկոս պատմաբան, ակադեմիկոս Աշ. Հովհաննիսյանը վերհիշում է, որ երբ աքսորավայրում էր՝ Միջին Ասիայում, Տաշքենդի մարզի Յանգլիյուլ քաղաքում, «... 1940 թ. աշնանը Տաշքենդի շուկայի մուտքի մոտ հանդիպել է> հայ հասարակական-քաղաքական գործիչ, հրապարակախոս և պատմաբան Դավիթ Անանունի հետ, երբ նա չինական մաշված վերարկուն հագած՝ մուտքի ամենաբանուկ հատվածում մի քարի վրա նստած բաժակով արևածաղիկ էր վաճառում»։ Հանդիպումը եղել է չափազանց հուզիչ. գրկախառնվել են ու «երեսաների պես չեն կարողացել զսպել իրենց բարձրաձայն լացը»¹²¹:

Դ. Անանունին նվիրված հուշերում Արամայիսը գրում է. «1927 (?) թվին Դավիթը ձերբակալվեց ու երեք տարով աքսորվեց Ուֆա: Հետո պատիժն ավելացրին, այնպես որ նրա պատժի սկզբից մինչև պատիժը կրել-վերջացնելը տևեց 10 տարի: 1937-ին (?) վերադարձավ Բաքու, բայց ... մնալ չկարողացավ, գնաց Հաշտարիան, որտեղ ինչպես լսեցի, նորից ձերբակալվել ու բանտարկվել է (ընդգծումը մերն է. – Ա. Ջ.): Այժմ նրա ողջ կամ մեռած լինելն ինձ հայտնի չէ: Իր աքսորանքի օրերին դիմումներ է արել Մոսկվա ու Հայաստան, որպեսզի ազատ արձակեն, չի հաջողվել»¹²²:

Տեր-Եղիշե քահանա Վարդանյանի վերը նշված ձեռագիր հուշերից էլ տեղեկանում ենք, որ 1939 թ. օգոստոսի 16-ին Աստրախանում Դ. Անանունը որպես դաշնակցական դատապարտվում է 10 տարվա կալանքի, բայց «որպես մեծ մարդ տարիքով» թողնում են «Աստրախանի լազերում»։ Մահացել է «<19>44 թ. օգոստոսին ... լազերի մեջ. 3 անգամ նրանից պահանջեցին հրաժարական տուր, քեզ կողարկենք ուր կուզես գնա, բայց նա պատասխանել էր՝ դուք դեռ երեսներ եք, ես սոցիալ-դոմոկրատ եմ և կմնամ ...»:

Ընդունված է, որ Դ. Անանունը մահացել է Աստրախանում 1943 թ.¹²³, հողին է հանձնվել համագյուղացի Հակոբի կողմից: Արդարացվել է 1989 թ.¹²⁴:

Ամփոփենք. վերոշարադրյալը փորձ էր ընդհանուր գծերով ներկայացնել ակադեմիկոս ազգային գործիչ Դավիթ Անանունի կյանքի ու գործունեության ուղին, մի ուղի, որը համակողմանի, խորը և հատուկ ուսումնասիրության կարիք ունի:

Անուշավան Զաքարյան – Բ. Գ. Դ., ՊԲՀ-ի գլխավոր խմբագիր: Գիտական հետաքրքրությունները՝ XX դարասկզբի առաջին քառորդի հայ իրականության հարցեր, Հայկական հարց և Հայոց ցեղասպանություն, հայ-

¹²¹ Ն. Ս ա ռ ու խ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 65:

¹²² Ա. Ջ ա ք ա ղ յ ա ն. նշվ. հրատ., էջ 248:

¹²³ «Հայկական սովետական հանրագիտարանում» (հ. 1, Երևան, 1974, էջ 365) և «Հայկական համառոտ հանրագիտարանում» (հ. 1, Երևան, 1990, էջ 187) Դ. Անանունի ծննդյան թվական է նշված 1879 թ., իսկ մահվան՝ 1942-ը: Ի դեպ, առաջինում նաև գրված է. «1926-ից ապրել է Կովկասի սահմաններից դուրս»:

¹²⁴ Ամենայն հավանականությամբ, այս կապակցությամբ «Գրական թերթ»-ի 1989 թ. դեկտեմբերի 22-ի համարում տպագրվել է հաղորդում Դ. Անանունի մասին և հրապարակվել է նրա «Ղարաբաղ» վերնագրով հոդվածը:

և ուս պատմագրական կապեր: Հեղինակ է 21 մենագրություն ու ժողովածուի, շուրջ 227 հոդվածների ու հրապարակումների:
patmhandes@rambler.ru

REFERENCES

- Abrahamyan H. B. Davit Ananuni kaghakakan jakatagire.– HH GAA “Lraber hasarakakan gitutyunneri”, 1998, № 1 (In Armenian).
- Abrahamyan H. B. Hay groghneri namaknere Davit Ananunin.– HH GAA “Lraber hasarakakan gitutyunneri”, 2001, № 2 (In Armenian).
- A-Do. Im hushoghutyunnere. Arajabane ev dsanotagrutyunnere` R. Gasparyani ev R. Sahakyani, Yerevan, 2015 (In Armenian).
- Ananun D. Rusahayeri hasarakakan zargatsume XIX darum (1800–1870), h. arajin, Baku, 1916 (In Armenian).
- Ananun D. Rusahayeri hasarakakan zargatsume (1870–1900), h. erkrord, Ejmiadsin, 1922 (In Armenian).
- Ananun D. Rusahayeri hasarakakan zargatsume (1901–1918), h. 3, Venetik, 1926 (In Armenian).
- Ananun D. Handipumner V. Teryani het.– “Hayastani kooperatsia” (Yerevan), № 13, hulisi 15, 1920 (In Armenian).
- Ananun D. Bakvi shirimmere.– “Mshak”, 23, 27, 29. III. 1919 (In Armenian).
- Ananun D. Sargis Kukunyantsi hinavurts namaknere.– “Dziteni”, grakan zhoghovadsu, Tiflis, 1915 (In Armenian).
- Ananun D. Handipumner V. Teryani het.– Vahan Teryan: Teryanagitutyun ev matenagitutyun, Yerevan, 2011 (In Armenian).
- “Arev” (Baku), 11. IV. 1918 (In Armenian).
- “Bakvi dzayn”, 07, 10. II. 1913; 24. III. 1913; 09, 18, 21, 26. IV. 1913; 19. V. 1913; 02, 05. VI. 1913 (In Armenian).
- “Banvor” (Baku), 18. VI. 1917 (In Armenian).
- “Banaki or” (Yerevan), 21. XII. 1919 (In Armenian).
- Charentsi het: Husher, Yerevan, 1997 (In Armenian).
- Davit Ananuni namakagrutyunic.– PBH, 1984, № 1 (In Armenian).
- Djrbashyan Ed. Tumanyani poemnere, Yerevan, 1964 (In Armenian).
- “Dzayn” (Tiflis), 01. X. 1906 (In Armenian).
- E. Charentsi anvan grakanutyun ev arvesti tangaran, D. Ananuni f., tiv 6,7, t. 1, 2; 10; 35; 53; 56; 71; 73; 74; 76; 80, t. 1–2; 81, t. 1; 82; 92; 111, t. 2, 3, 5, 6, 7, 9, 11, 12, 13; 112, t. 2, 5, 6, 7; 113 a; 115; H. Khashmanyani f., tiv 334; K. Mikayelyani f., tiv 732 (In Armenian).
- “Garun” (Moskva), 1912, girk III (In Armenian).
- “Gords” (Baku), 1917, № 3, mart (In Armenian).
- “Gords” (Tiflis), 1908, № 4, marti 30 (In Armenian).
- “Grakan tert”, 22. XII. 1989 (In Armenian).
- Grigoryan H., Hakobyan V. Urvagdser Davit Ananuni kyanki ev gordsuneutyun. – “Patmutyun ev mshakuyt” hayagitakan handes (Yerevan), 2019, № 2 (In Armenian).
- Haykakan sovetakan hanragitaran, h. 1, Yerevan, 1974 (In Armenian).

- Haykakan hamarot hanragitaran, h. 1, Yerevan, 1990 (In Armenian).
- Hakobyan A. M. “Spetsifikner” (1903–1918 tt.) (gaghaparakhosutyun, dsragir, gordsuneutyun).– HH GAA “Lraber hasarakakan gitutyunneri”, 1997, № 2 (In Armenian).
- Hakobyan V. Sotsial-demokratakan banvorakan hay kazmakerputyan dzevavorume ev gordsuneutyune (1900–1921 tt.), Yerevan, 2010, (In Armenian).
- Hakobyan V. Sotsial-demokratakan banvorakan hay kazmakerputyan dzevavorume ev arajin kaylere, Yerevan, 2015 (In Armenian).
- Hakobyan V. Davit Ananuni hushere Stepan Shahumyani masin.– “Patmutyun ev mshakuyt” hayagitakan handes, G, Yerevan, 2012 (In Armenian).
- “Hayots Ashkharh” (Yerevan), 1999, № 63 (In Armenian).
- Hayeri kotoradsnere Bakvi ev Elizavetpoli nahangerum 1918–1920 tt., Yerevan, 2003 (In Armenian).
- Hayots patmutyun, h. III, girik II, Yerevan, 2015 (In Armenian).
- Hamahaykakan khorhrdaksutyunner (1912–1920 tt.): Pastatgteri ev nyuteri joghovatsu, Yerevan, 2004 (In Armenian).
- “Hayastani kooperatsia”, № 14, ogostosi 31, 1919; № 17, septemperi 15, 1920 (In Armenian).
- Hay azgayin ev Hayastani u Andrkovkasi socialistakan kusaktsutyuneri patmutyuan aknarkner (1885–1914 tt.), Yerevan, 2003 (In Armenian).
- Hay zhoghovrdi korustnere Arajin ashkharamarti tarinerin (“Hamashkharhayin paterazmits hay zhoghovrdi krads vnasneri knnich handznazhoghovi” pastatgteri ev nyuteri zhoghovatsu), kazmogh, arajabani ev tsanotagrutyunneri heghinak A. Zakaryan, Yerevan, 2005 (In Armenian).
- Hay parberakan mamuli patmutyun 1900–1922 tt., h. 2, Yerevan, 2017 (In Armenian).
- “Haraj” (Yerevan), 21, 23, 29. XI. 1919; 03, 04, 10, 27. XII. 1919; 01, 10. II. 1920; 11. IV. 1920; 05, 14. V. 1920 (In Armenian).
- Hishoghutyunner Eghishe Charentsi masin (Charentsi het), Yerevan, 1961 (In Armenian).
- Hovhannes Tumanyane jamanaki graknadatakan mtiki gnahatutyamb (1890–1913): Kazmets, tsanotagrets ev hratarakutyuan patrastets Eva Mnatsakanyane, Yerevan, 2019 (In Armenian).
- Ishkhanyan E. Lernayin Gharabagh (1917–1920), Yerevan, 1999 (In Armenian).
- Kasyan S. Spetsifiknere ev spetsifizme, Tiflis, 1928 (In Armenian).
- Kisibekyan A. Husher, h. 2, Yerevan, 2011 (In Armenian).
- Khondkaryan S. A. Arevelyan Hayastani agrarayin haraberutyunneri patmutyunits: XIX dari verj – XX d. skizb, Yerevan, 1974 (In Armenian).
- “Kyank” (Tiflis), 08, 22. IV. 1906; 06. V. 1906 (In Armenian).
- “Mshak” (Tiflis), 20. X. 1917; 07. XII. 1918; 11, 14, 15, 18, 19, 21, 22, 27. II. 1919; 02, 12, 14, 23, 27, 29. III. 1919 (In Armenian).
- “Nor kyank” (Baku), 1911, № 1–2, dectemperi 11; 1912, № 1–2; № 3–4, petrvari 19 (In Armenian).
- “Nor hosank” (Tiflis), 1913, № 1, mart; № 2, april; № 4–5, hunis–hulis; № 6, ogostosi; № 7–8, septemperi–hoktember (In Armenian).
- “Nor serund” (Yerevan), 17. III. 1920 (In Armenian).

- “Nork” (Yerevan), girk erkrord, hunvar–mart, 1923; girk errorrd, april–september, 1923; girk chorrord, 1924 (In Armenian).
- Ohanyan S. 20-rd dari skzbi hay pilisopayakan mtki knnakan verludsutyun (Ervand Frangyan, Davit Ananun), Yerevan, 2008 (In Armenian).
- Sarinyan R. N. XX dari skzbi hay intesagitakan mtki urvagdserum, Yerevan, 1989 (In Armenian).
- Sarinyan R. N. Urvagids ardi hay intesagitakan mtki patmutyan, girk 1, Yerevan, 2014 (In Armenian).
- Sarukhanyan N. Mtorumner ev husher akademikos Ashot Hovhannisyan masin (tsnndyan 125-amyaki artiv), Yerevan, 2012 (In Armenian).
- Sbornik armyanskoy literatury. Pod redaktsiey M. Gor’kogo. Petrograd, 1916 (In Russian).
- Simonyan A. H. Khohrdayin Hayastani ev Lernahayastani karavarutyunneri nerkayatsutsichneri Sisiani banaktsutyunnere (1921 t. mayis). – HH GAA “Lraber hasarakakan gitutyunneri”, 1998, № 2 (In Armenian).
- Surkhatyan H. Dardzyal grakan knnadatutyun aritov. – “Mshak”, 15, 16.V.1913 (In Armenian).
- Shahumyan St. Erkeri liakatar zhoghovadsu hing hatorov, h. 2, Yerevan, 1976 (In Armenian).
- Tumanyan Hovh. Erkeri liakatar zhoghovadsu, h. 10, Yerevan, 1999 (In Armenian).
- “Ughi” (Baku), 1909, № 1 (In Armenian).
- Vahan Teryane zhamanakakitsneri husherum, Yerevan, 1964 (In Armenian).
- Zakaryan A. Husher Davit Ananuni masin (tsnndyan 130-amyaki artiv).– PBN, 2010, № 1 (In Armenian).
- “Zarya Vostoka” (Tiflis), 07. VIII. 1927 (In Russian).

ДАВИД АНАНУН: ЧЕЛОВЕК И ДЕЛО
(К 140-летию со дня рождения)

АНУШАВАН ЗАКАРЯН

Резюме

Ключевые слова: Давид Ананун, Нагорный Карабах, Баку, специфика, Северный Кавказ, В. Терьян, Тифлис, Эчмиадзин, Ереван, Арамаис, Ст. Шаумян, Аш. Ованнисян, Ов. Туманян, Ст. Зорьян, «Кооперация Армении», Уфа, Астрахань.

Давид Ананун (Давид Оганесович Тер-Даниелян) – один из видных деятелей армянской действительности первой четверти XX века. Родился в селе Мец шен Нагорного Карабаха в 1880 г. Годы отрочества и юности провел в Баку, служа в нефтяных компаниях. В 1905 г. вступил в Армянскую социал-демократическую рабочую организацию (так называемые «специфики»), стал одним из ее руководителей и крупных идеологов.

Известный общественно-политический деятель, историк-экономист, философ-социолог, публицист-редактор, литературовед Д. Ананун оставил богатое научное, политическое и литературное наследие, разбросанное на страницах периодической печати. Вершиной его трудов является трехтомное исследование «Общественное развитие российских армян» (т. 1, Баку, 1916 г.; т. 2, Эчмиадзин, 1922 г.; т. 3, Венеция, 1926 г.). В своих исследованиях Д. Ананун, используя большое количество материалов и статистических данных, проанализировал закономерности экономического, политического и культурного развития восточных армян, выдвинул идею необходимости национальной консолидации. Относительно путей решения вопросов армянского национально-освободительного движения, Армянского вопроса Д. Ананун находился в полемике с большевиками и АРФ Дашнакцутюн: отрицал демагогию дашнаков и «ярый» интернационализм большевиков. Он не признавал также роль классового сознания в истории и придавал первостепенное значение осознанию национальной принадлежности. Данная Д. Анануном оценка прогрессивной роли России в деле общественного развития армянского народа в XIX в. сохранила свою актуальность.

На протяжении всей жизни Д. Ананун был глубоко озабочен ситуацией, царившей в Нагорном Карабахе, неоднократно посещал край. В статье «Карабах» он обосновывает необходимость воссоединения Карабаха с «матерью-родиной».

В конце июня – начале июля 1919 г. Д. Ананун из Тифлиса переехал в Ереван. Своей литературно-культурно-общественной деятельностью он способствовал становлению Первой Республики Армении. Занимал ряд государственных должностей, был редактором двухнедельной газеты «Коперация Армении». После установления советской власти в Армении принимал энергичное участие в государственном строительстве, в частности, в культурно-просветительской сфере: был научным сотрудником Эчмиадзинского культурно-исторического института, в 1923–1926 гг. – заведующим отделом Революции Государственного музея Армении.

В конце июля 1927 г. Д. Ананун как «яростный враг пролетарской революции и советской власти» был арестован и осужден на три года. После отбывания наказания ему было запрещено проживать в Закавказье, а также в центральных районах страны, и он жил в Астрахани. Спустя некоторое время был вновь арестован и приговорен к десяти годам ссылки. Д. Ананун умер в Астрахани в 1943 г. Реабилитирован в 1989 г.

Д. Ананун – выдающийся национальный деятель; его жизнь и деятельность достойны специального исследования.

Анушаван Закарян – д. филол. н., главный редактор ИФЖ. Научные интересы: вопросы первой четверти армянской действительности XX века, Армянский вопрос и Геноцид армян, армяно-русские историко-литературные связи. Автор 21 монографий и сборников, около 227 статей и публикаций. patmhandes@rambler.ru

DAVID ANANUN: THE MAN AND HIS WORK
(On the occasion of his 140th birth anniversary)

ANUSHAVAN ZAKARYAN

Summary

Key words: David Ananun, Nagorno Karabakh, Baku, specifics, North Caucasus, V. Teryan, Tiflis, Etchmiadzin, Yerevan, Aramayis, St. Shahumyan, Ash. Hovhannisyan, Hovh. Tumanyan, St. Zoryan, "Armenia's Cooperation", Ufa, Astrakhan.

David Ananun (David Hovhannes Ter-Danielyan), is one of the prominent figures of the Armenian reality of the first quarter of the 20th century. He was born in Mets Shen village of Nagorno Karabakh in 1880. He spent his years of adolescence and youth in Baku, serving in oil companies. In 1905 he as a member joined the Armenian Social-Democratic Workers Organization (so-called "specifics") and became one of its leaders and biggest ideologues.

The renowned public-political figure, philosopher-sociologist, historian-economist, publicist-editor, literary critic D. Ananun left a rich scientific, political and literary legacy, which is scattered in the pages of the periodical press. The masterpiece of his works is the three-volume study "Public Development of Russian-Armenians" (vol. 1, Baku, 1916, vol. 2, Etchmiadzin, 1922, vol. 3, Venice, 1926). Using a large number of materials and statistical data in his studies, D. Ananun analyzed the patterns of economic, political and cultural development of Eastern Armenians, put forward the idea of the need for national consolidation. In relation to problems of the Armenian national liberation movement and the ways to solve the Armenian Question, he was in a debate with the Bolsheviks and the ARF Dashnaksutyun. He rejected the demagogy of the ARF Dashnaksutyun and the "ardent" internationalism of the Bolsheviks. He did not accept as well the role of class consciousness in history and gave priority to the consciousness of national belonging. D. Ananun's assessment on Russia's progressive role in the social development of the Armenian people in the 19th century retains its relevance.

Throughout his life activity the situation in Nagorno Karabakh was of great concern to D. Ananun, who visited the region several times. In his article entitled "Karabakh" he substantiates the necessity to reunite Karabakh with the "motherland".

At the end of June and the beginning of July 1919, D. Ananun moved from Tiflis to Yerevan. He contributed to the establishment of the First Republic of Armenia through his literary-cultural-social activities. He held a number of state positions, edited the bi-weekly "Armenia's Cooperation". After the establishment of the Soviet rule in Armenia, D. Ananun took an active part in the construction of the state, particularly in the cultural-educational sphere. He was a researcher at the Cultural-Historical Institute of Etchmiadzin, from 1923

to 1926 – the Head of the Revolution Department of the State Museum of Armenia.

At the end of July 1927, as a “fierce enemy of the proletarian revolution and the Soviet rule”, D. Ananun was arrested and sentenced to three years imprisonment. After serving his sentence, he was barred from living in the Caucasus and in the central part of the country, and he lived in Astrakhan. After some time he was arrested again and sentenced to ten years in exile. D. Ananun died in Astrakhan in 1943. He was rehabilitated in 1989.

D. Ananun, a prominent national figure, deserves special study for his life and activity.

Anushavan Zakaryan – Doctor of Sciences in Philology, Editor-in-Chief of the HPHJ. Scientific interests: issues of the Armenian reality at the beginning of the 20th century, the Armenian Question and the Armenian Genocide, Armenian-Russian historical and literary ties. Author of 21 monographs and collections, around 227 articles and publications. patmhandes@rambler.ru

КУЛЬТУРНО-ПОЛИТИЧЕСКИЙ КОНТЕКСТ И
МЕТАНАРРАТИВ МЕЖДУНАРОДНОГО КОНГРЕССА
ПИСАТЕЛЕЙ В ЗАЩИТУ КУЛЬТУРЫ
(На примере доклада армянского поэта Ваграма Алазана)*

ТИГРАН СИМЯН

Ключевые слова: В. Алазан, конгресс, сталинская пропаганда, культурная политика, советская идентичность, субтекст, гипертекст, метанарратив.

В настоящее время армянский советский поэт Алазан (Ваграм Габузян, 1903–1966) не входит в армянский литературный канон, иными словами, его произведения не преподаются на арменоведческих факультетах вузов Республики Армения. Творчество поэта не особо стимулировало научные исследования большого формата (диссертации, монографии) ни в советскую, ни в постсоветскую эпоху. Вышесказанное можно обосновать скудным списком библиографии о его творчестве¹.

Но Алазан на современном этапе особенно интересен в контексте истории европейского литературно-политического дискурса 1930-х гг., поскольку поэт участвовал в составе советской делегации на международном конгрессе в защиту культуры 1935 г. в Париже. Он был председателем Ассоциации пролетарских писателей Армении (1923–1932), а потом Союза советских писателей Армении (1932–1936). В указанные годы Алазан был также главным редактором газеты «Гракан терт» («Литературная газета») и соучредителем газеты «Авангард» (1923), в которой в советское время издавалась самая прогрессивная литература того времени.

После возвращения из Парижа, в 1936 г. убежденного борца за коммунизм и интересы пролетариата Алазана обвинили в националистической деятельности, и он был осужден на пожизненную ссылку. Пос-

* Представлена 21. VI. 2019 г., рецензирована 01. X. 2019 г., принята к печати 20. XII. 2019 г.

¹ См.: Աղաճյանի Մեծ հոգով այս մարդը (ծննդյան 70-ամյակը). – «Գրական թերթ» (Երևան), 18. V. 1973, Ա. Ափրիսյան. Անկախության դիրք. – «Հայաստանի Հանրապետություն», 30. VII. 1991, Ս. Կապուսիկյան. Մարդ, որն ապրում է մեր մեջ (ծննդյան 70-ամյակի առթիվ). – «Գրական թերթ», 18. V. 1973, Международный конгресс писателей в защиту культуры, Париж, июнь 1935. Доклады и выступления. Редакция и предисловие И. Луппола, переводы Э. Триоле. М., 1936, с. 12.

ле смерти Сталина поэт был реабилитирован. Прожив на свободе года два, он из-за перенесенного инсульта до конца жизни был прикован к постели, с 1956 по 1966 г. В эти годы Алазан не переставал творить, помогала ему его жена Маро, записывая воспоминания поэта о минувших декадах литературной и культурной жизни Советской Армении и СССР в целом. Одним из ключевых сочинений Алазана является книга «Хождения по мукам: воспоминания»², рассказывающая о его страданиях во время сталинских репрессий. По сути, эта книга разоблачает сталинскую эпоху и является *идеологическим антитекстом* всего его литературного творчества.

С культурными «жрецами» компартии (Александр Щербаков, Михаил Кольцов, Илья Эренбург) и центральными актерами-поэтами пролетарской литературы (Александр Безыменский, Владимир Луговский, Семен Кирсанов и т. д.) на международный конгресс в защиту культуры в Париж были отправлены и «советские» писатели с богатым символическим капиталом, такие, как Борис Пастернак, Исаак Бабель, Алексей Толстой и др. В делегацию были включены представители национальных литератур, писатели из братских республик: из Украины – Павло Тычина, Иван Микитенко, Александр Конейчук, Петро Панч; из Беларуси – Якуб Колас; из Грузии – Галактион Табидзе, вместо Тициана Табидзе, который был расстрелян в 1937 г. Из Армении, как уже было сказано, поехал Ваграм Алазан.

Объектом для данной статьи послужили нелитературные тексты Алазана, которые прямо или косвенно относятся к дискурсу и контексту международного конгресса в Париже³. Следует оговорить, что эта тема вообще не была затронута в армяноязычной и русскоязычной критической литературе и ждет своего как минимум предварительного освещения.

Как известно, конгресс в Париже был «срежиссирован» с участием Москвы, когда после Первого съезда советских писателей (13 сентября 1934 г.) И. Эренбург предложил Сталину сплотить «прогрессивные

² См.: Վ. Մ. Ալազանի Տոռապանքի ուղիներով. Հուշեր, Երևան, 1990:

³ См. об этом дискурсе: И. О. Рудая. Первый международный конгресс писателей в защиту культуры от фашизма и британские интеллектуалы. – «История, философия, филология» (М.), 2016, № 1, с. 98–100; А. И. Рубашкина. Пошли толки, что деньги московские... – «Новый мир», 1999, № 3, с. 165–167, 175; М. А. Ариас-Вихиль. Неизвестное письмо Луи Арагона о подготовке Парижского конгресса в защиту культуры (1935) (по материалам Архива А. М. Горького). – Новые российские гуманитарные исследования, 2015, 10–Русский. – <http://www.nrgumis.ru/articles/1954/> – 28. 10. 2019; Литература как автономия: интеллектуалы и идеология в XX в. (Россия и Запад). Тезисы и аннотации докладов на русском и французском языках. 10–11 сентября. М., 2015. – <http://www.nrgumis.ru/articles/1953/> – 29. 05. 2019; Диалог писателей. Из истории русско-французских культурных связей XX века, 1920–1970. М., 2002, с. 111–400.

силы» Запада на идеях «антифашистской» борьбы и «поддержки СССР»⁴. Интересно, что Сталин предугадал и предостерег, чтобы конгресс не стал узко франко-советским или чисто антигерманским⁵. И кроме того, на нем был затронут ряд таких проблем, как культурное наследие, роль писателя в обществе, индивид и общество, гуманизм, нация и культура, достоинство мысли и проблема творчества⁶.

Финансовым агентом Кремля в Париже был М. Кольцов, но формальным организатором конгресса стала группа французов: Луи Арагон, Жан Ришар Блок и Андре Мальро⁷. Анри Барбюс был отстранен из числа организаторов из-за своей просоветской позиции («Сталин. Человек, через которого раскрывается новый мир»), которой мог спугнуть многих известных западных писателей⁸.

В контексте культурно-политических игр важную роль сыграли «периферийные» представители пролетарской литературы из братских республик СССР, которые доказывали в своих докладах главный тезис М. Горького, что есть единственно правильная пролетарская культура, противопоставленная буржуазной. Как в свое время метко отметил литературный критик А. Л. Бем, «культура (пролетарская) противопоставлена культуре буржуазной», породившей фашизм⁹. Сказанное можно также подтвердить высказываниями Алазана. Поэт в своем докладе указывает, что рабочий класс является адресатом, «владельцем и наследником многовековой богатой культуры», а писатели борются «за окончательное торжество социалистического правопорядка, за окончательное освобождение трудящегося человечества. Они ведут борьбу на позициях отстаивания всех лучших ценностей человеческой культуры. Они ставят памятник Генриху Гейне, который разрушен у него на родине (аплодисменты). Они вынимают из костров великолепные произведения передовой мысли человечества (аплодисменты)»¹⁰. Алазан в своей статье «Мои встречи с Максимом Горьким» пишет: «Горький научил нас (пролетписателей) с презрением относиться к кровожад-

⁴ Об этом см. подробнее: А. И. Рубашкина. Указ. раб., с. 164.

⁵ Интересно, что именно так конгресс и воспринимается Б. Пастернаком. См. подробнее: А. Ю. Сергеева-Клятич. Пастернак в жизни. М., 2015.

⁶ Международный конгресс писателей в защиту культуры. Париж, июнь 1935, с. 12.

⁷ А. И. Рубашкина. Указ. раб., с. 165.

⁸ Там же, с. 168.

⁹ А. Л. Бем. Похищение Европы (о конгрессе писателей в защиту культуры). – «Меч» (М.), 8. IX. 1935.

¹⁰ Международный конгресс писателей в защиту культуры. Париж, июнь 1935, с. 336. Про аплодисменты мы узнаем из армянского оригинала (*Վ. Մ. Ալազան. Կուլտուրայի պաշտպանութեան միջազգային կոնգրեսի արդյունքները, Երևան, 1935, էջ 15*), что отсутствует в русском варианте.

ному фашизму и капитализму», что и было отражено в парижском докладе в 1935 г.¹¹

Кроме европейского фашизма и нацизма, Алазан резко критикует и локальных «фашистов» – дашнаков – врагов советской Армении. Эта борьба происходит в литературном дискурсе: советская армянская литература vs. дашнаки¹². На этом заканчивается данная тема, но она развивается дальше уже в его докладе «Результаты международного конгресса в защиту культуры», прочитанном 23 июля в 1935 г. в Ереване и 1 августа в Ленинакане (нынешний Гюмри).

Из сказанного видно, что слишком прямолинейно воспринимается советскими пролетарскими авторами «буржуазная культура», из которой выводится фашистская, национал-социалистическая литература.

Из вышеописанного очевидно, что доклад Алазана не выпадает из контекста задумки Эренбурга, и после упразднения Международного объединения революционных писателей Эренбург предлагает Сталину в своем письме (от 13 сентября 1934 г.) создать антифашистскую организацию писателей с четкой и точной политической программой.

Борьбу с фашизмом можно показать на примере доклада Озолина: «<...> защита культуры – это защита дела пролетариата, защита Советского союза, рычага культуры и будущего человечества»¹³.

Активная защита и прославление СССР¹⁴. Эти тезисы-идеи легли в основу доклада Алазана (и др. представителей братских республик) в Париже, а после в Ереване и в Ленинакане.

Следует указать, что во всех докладах делегатов из СССР (Якуб Колас, Остра Озолин, Гасем Лахути, Галактион Табидзе, Алазан) подчеркивается «начало» коммунистической эпохи – Великая Октябрьская революция 1917 года и сама советская эпоха. Она описывается как историческая цезура. Приведем примеры из докладов грузинского и армянского участников конгресса. Табидзе: «Расцвет грузинской культуры, в частности литературы, начинается с установлением советской власти»¹⁵. Алазан: «Тяжела была участь армянской литературы в прошлом, до торжества Октябрьской революции в Армении. <...> Лишь с восходом солнца Вели-

¹¹ Վ. Մ. Ալազան. Հուշեր, Երևան, 1967, էջ 156:

¹² ՏՄ.: Վ. Մ. Ալազան. Հայ ֆաշիստների դրական անդամատանուժ: Հոդվածներ, Երևան, 1932, էջ 1:

¹³ Международный конгресс писателей в защиту культуры. Париж, июнь 1935, с. 305.

¹⁴ Об эмансипации женщин в СССР см. доклад Ф. И. Панферова «Социалистический реализм». – Международный конгресс писателей в защиту культуры. Париж, июнь 1935, с. 354. Следует напомнить, что первая критика в адрес СССР уже написана Андре Жидом, раскрывшем Западу сталинский миф (А. Ж и д. Возвращение из СССР. М., 1936).

¹⁵ Международный конгресс писателей в защиту культуры. Париж, июнь 1935, с. 315.

кой Октябрьской революции занимается плодотворная заря возрождения армянского народа, его культуры и литературы»¹⁶.

Интересная деталь, что все прибывшие из братских республик СССР поэты в один голос озвучивают наличие наднациональной (советской) идентичности. Примечательно, что и Алазан, и Табидзе, подчеркнув «начало» коммунистической эпохи, указывают на «пятнадцативековое» письменное литературное прошлое. «Армянская литература, – пишет Алазан, – имеет более чем пятнадцативековое прошлое. На ее средневековом небосклоне сверкают такие звезды, как Григорий Нарекский и Нерсес Даровитый (Нерсес Шнорали), к которым в XVIII веке присоединяется величайший армянский ашуг Саят-Нова. Цветы его гения остаются свежими и нетленными до наших дней»¹⁷.

Подобная же логика построения доклада видна и у грузинского представителя. «Грузия, – пишет Табидзе, – является страной древнейшей культуры, ее литература имеет пятнадцативековую давность. Грузинская литература за пятнадцать веков существования оставила богатейшее наследство, она с правом должна быть причислена к рангу больших литератур. Древнегрузинская литература не уступала по значению и диапазону ни одной из литератур христианского средневековья, своеобразно сочетая в себе взаимодействие Востока и Запада»¹⁸.

Как видно из цитат, слишком уж схожее построение текстов, тема и рема докладов развиваются в одной и той же логике. Общие детали дают основу для предположения, что сталинский режим поработал безукоризненно, чтобы доклады по материалу были разными (белорусский, грузинский, латышский, таджикский, армянский), но по логике построения и аргументации одинаковыми. По всей видимости, именно поэтому редактор сборника И. Луппола рассеял «штамповые» доклады по возможности подальше друг от друга, поместив между ними доклады Ами Балакова (Болгария), Лилика Никоса (Греция). Доклад Табидзе отдален от текста Алазана тремя текстами: Кортезао (Португалия), Анна Зегерс (Германия), Майкл Голд (США).

Одной из общих черт в докладах представителей республик СССР является проблема перевода на русский язык советской литературы с национальных языков. Армянские писатели разрушили «замкнутые в себе границы армянской литературы, – пишет Алазан, – вырвались из армянской самососредоточенности», лира армянской советской поэзии «загремела общечеловеческими высокими идеями, в их песнях зазвучала героическая борьба великого русского пролетариата и октябрьская победа – священная песня освобождения угнетенных народов»¹⁹. Конечно, предсоветская армянская литература не была «самососредо-

¹⁶ Там же.

¹⁷ Там же, с. 334.

¹⁸ Там же.

¹⁹ Там же, с. 336.

точной», а была частью мировой литературы (особенно в эпоху христианского средневековья).

Но Алазан подчеркивает другой аспект, что армянская литература советской эпохи, благодаря переводам на русский язык и изданию в авторитетных издательствах, становится достоянием всего СССР. По его мнению, подобного явления не было до этой эпохи. Именно благодаря русскому языку армянская литература становится достигаемой для многих народов СССР: «... достижение нашей литературы, – продолжает Алазан, – становится достоянием великого 170-миллионного народа. Писатель армянского народа, исчисляемого в миллион, становится писателем 170 миллионов»²⁰. Тот же самый мотив очевиден и в докладе украинского представителя Микитенко «Нация и культура»²¹.

Конечно, в советскую эпоху были переведены на русский язык и опубликованы достойные авторы братских республик. На эти переводы правительство СССР потратило колоссальные деньги, что нельзя не интерпретировать в позитивном модусе. Но следует также подчеркнуть, что общность мотивов в докладах представителей СССР свидетельствуют о наличии метанарратива, иными словами, директив «сверху». Разъяснение проблемы перевода на конгрессе с точки зрения цифр было «предоставлено» Всеволоду Иванову. В своем докладе «Положение писателя в СССР» он отмечает: «Советские издательства в 1934 году выпустили только на языках народностей, по одному только разделу художественной литературы восемь миллионов экземпляров книг! Классики печатаются непрерывно. Подавляющее количество изданий расходуется в течение поразительно короткого срока, от месяца до трех месяцев»²².

Таким образом, в среднем каждый 22 (21,25) гражданин СССР имел возможность ознакомиться с переводной художественной литературой из братских республик, а по словам Алексея Толстого («О свободе творчества»), по «поверхностному подсчету, шестьдесят миллионов читателей»²³, то есть каждый третий (2,83) читал художественную литературу. Мифологизированные цифры говорят сами за себя.

Из процитированных текстов можно сделать вывод, что связующим звеном и центральным кодом переводов является русский язык, служащий для межкультурной коммуникации среди братских народов в эпоху СССР. Следует заметить, что переводная литература обогатила еще и русский язык. Но эта литература имела политический аспект. Как отмечает в своем докладе Г. Лахути, советские писатели, «вдохновляясь классическими образцами, создают день за днем при помощи передовых

²⁰ Там же, с. 337.

²¹ Там же, с. 272.

²² Там же, с. 385.

²³ Там же, с. 222.

литератур братских республик свою художественную литературу, национальную по форме, социалистическую по содержанию»²⁴.

Конечно, взаимная рецепция национальных литератур в советскую эпоху существовала еще и благодаря литературным курсам «Литература стран СССР», которые были обязательными в вузовских образовательных программах для филологических факультетов. Но следует отметить, что концепция моделирования литературы («национальная по форме, социалистическая по содержанию») в СССР была великим мифом. Социалистическая литература, по сути, была нужна сталинскому режиму для моделирования советской идентичности в духе теории конструктивизма, когда интеллектуалы, писатели, политики создают новое этническое чувство, в нашем контексте, советское, наднациональное, за счет размежевания национального – дискурс «национального по форме, социалистического по содержанию». Для конструктивиста, «инженера человеческих душ» Сталина была важна вторая часть лозунга («социалистического по содержанию»), а первая часть была ментальным симулякром, созданным на лже-оппозиции форма vs. содержание. Именно поэтому не было места, выражаясь словами американского социолога Крега Калхуна (род. 1952), ни «хорошему» национализму (патриотизм), ни «плохому» национализму (шовинизм)²⁵.

Общеизвестно, что моделирование идентичностей стоит много денег. «К 1935 году, – пишет В. Иванов, – художественная проза оплачивалась от пятисот до восьмисот рублей за авторский лист при тираже в десять тысяч экземпляров, а поэзия – от двух до трех рублей за строчку при тираже в пять тысяч экземпляров. При этом надо отметить, что тиражи изданий художественной литературы значительно выше типовых; например, проза выходит тиражами и пятьдесят и более тысяч, что влечет соответственное повышение ставок гонорара. Писатели, достигшие шестидесятилетнего возраста и имеющие десятилетний стаж литературной работы при советской власти или потерявшие трудоспособность вследствие инвалидности ранее достижения шестидесятилетнего возраста, имеют право на получение пенсии в размере полного среднего заработка за последние три года, предшествующие назначению пенсии»²⁶.

Из вышеприведенного абзаца видно, что политический «верх» платил политически ангажированным «жрецам»-писателям колоссальные деньги. Но эти деньги тратились просто так недолго. Сталин и его репрессивный аппарат уничтожал поэтов, играя нотками «плохого» и «хорошего» национализма. Если нужно было кого-то из писателей ликвидировать или сослать, то была слышна нотка «плохого» национализма. Именно так сталинский режим избавлялся от «израсходован-

²⁴ Там же, с. 303.

²⁵ К. К а л х у н. Национализм. М., 2006, с. 28.

²⁶ Международный конгресс писателей в защиту культуры. Париж, июнь 1935, с. 303.

ного» человеческого материала, т. е. «жрецов»-писателей и переставал платить обещанные деньги.

Наглядным примером вышесказанного является и сам Алазан. Он использовался властями для борьбы с местными правыми силами – дашнаками, которых представлял в контексте европейского фашизма как армянских фашистов-националистов, а в контексте СССР как шовинистов, «плохих» националистов, врагов советской власти, конструируемой сталинской властью в конструктивистском ключе. Та же проблема была решена в советскую эпоху и в Грузии: «Я, – пишет Табидзе, – приехал из страны, населенной многими национальностями, еще недавно разъедаемой национальной рознью и шовинистической духотой. Теперь у нас каждая национальность плечом к плечу с другими республиками гордо шагает вперед, бдительно охраняя знамя содружества народов. Я приехал из страны, где благодаря гениально разрешенному национальному вопросу мирно куется новая, сказочная жизнь»²⁷.

Из статьи Алазана «Агаси Ханджян» (1958) узнаем, что его доклад проходил идеологическое и экспертное рецензирование не только в Армении, но и в Париже. Поэт показал заранее написанный текст своему другу, первому секретарю ЦК КП(б) Армении в 1930–1936 гг. Агаси Ханджяну (1901–1936). Высокопоставленный функционер, прочитав доклад, посоветовал по вопросам средневековой литературы обратиться к авторитетному профессору, арменоведу Мануку Абебяну (1865–1944), чтобы уточнить, принадлежат ли армянские средневековые поэтические тексты – айрены – армянскому средневековому автору, ашугу Наапету Кучаку (XVI в.) или эти тексты – продукты народного творчества²⁸.

Алазан в своих воспоминаниях «Замки и логовища» пишет, что глава советской делегации А. Щербаков, собрав всех докладчиков, оповестил, что на следующий день у них будет встреча с послом СССР во Франции В. В. Потемкиным (в 1934–1937 гг.), и всем им нужно взять доклады с собой. Алазан предоставляет русский перевод доклада, но посол требует также и французский перевод. Ознакомившись с текстом, посол красным карандашом вычеркнул из него большой пассаж, относящийся к деятельности армянских «нацистов»-дашнаков. На возражение Алазана посол отвечает, что дашнаки не стоят того, чтобы о них говорить на международном конгрессе. Посол посоветовал поговорить о них на встрече с представителями армянской диаспоры в Париже²⁹. Судя по эмпирическому материалу, у Алазана никакой встречи с армянской диаспорой в Париже не было, но о «нацистах»-дашнаках он развернуто говорил уже после возвращения в Армению из Парижа, в своем отчете-докладе, прочитанном в Ленинакане.

²⁷ Там же, с. 313–314.

²⁸ Վ. Մ. Ալ ա գ ա ն. Հ ու շ եր, Երևան, 1960, էջ 33:

²⁹ Там же, с. 196–197.

Следует отметить, что Микитенко в своем докладе тоже мельком упоминает об украинских локальных националистах: «Я не хотел бы говорить здесь о ничтожествах из лагеря украинского национализма. Но эти призраки прошлого из темного переднего фашизма твердят замогильным голосом, что большевизм задушил украинскую культуру. Эти мертвецы предлагают нам «освобождение»³⁰. Судя по наличию этого мотива и у Алазана, и у Табидзе, можно предположить, что политический «верх» был не против упоминания местных националистов (= «нацизм»), но в европейском контексте этой темы нужно было касаться сдержанно, что и было сделано. Соответственно, мотив упоминания локальных «нацизм» был элементом политического метанарратива.

В статье-мемуаре «Великий друг армянского народа Анри Барбюс» Алазан пишет, что он свой доклад на конгрессе прочитал на армянском языке. А французский перевод, заранее просмотренный Барбюсом с точки зрения языка, а с идеологической точки зрения, как было сказано, послом Потемкиным, был прочтен французским писателем Жан Ришар Блоком (1884–1947)³¹ на французском языке сразу же после прочтения армянского текста³². Армянский текст полностью соответствовал французскому переводу, поскольку после предложения посла Потемкина, Алазан «собственной рукой красным карандашом стер тот же пассаж, относящийся к дашнакам»³³. Нет также несоответствий между армянским и русским оригиналами.

После выступления Алазана Барбюс и Блок встали из президиума, подошли и поздравили его «за успешный доклад», а затем посадили рядом с собой в президиуме³⁴. Алазан, информируя о подробных деталях своего выступления, добавляет, что оказанную честь он не приписывает «своей личности, а стране и народу», который представлял на международном конгрессе в защиту писателей³⁵. На родном языке зачитал свой доклад не только Алазан, но и представитель Грузии Табидзе³⁶: «На этом международном конгрессе революционных писателей я, народный поэт, представитель одной из социалистических республик – республики Грузия, выступаю на своем родном, грузинском языке. На этом же языке осваиваются лозунги новой, культурной жизни наших городов и сел,

³⁰ Там же, с. 273.

³¹ В 1934 г. Алазан познакомился с Ж. Р. Блоком на Первом всесоюзном съезде советских писателей в Москве (*Վ. Մ. Ալազանի հուշեր, Երևան, 1967, էջ 129*):

³² Там же, с. 132.

³³ *Վ. Մ. Ալազանի հուշեր, Երևան, 1960, էջ 197*:

³⁴ *Վ. Մ. Ալազանի հուշեր, Երևան, 1967, էջ 132*:

³⁵ Там же.

³⁶ Интересно узнать, на каком языке зачитали свои доклады Я. Колас, И. Микитенко, Г. Лахути, О. Озолин.

наших университетов и академии, богатейшее литературное наследие прошлого»³⁷. В этом пассаже ключевым можно посчитать еще и тот факт, что грузинский и, соответственно, другие языки братских республик осваивают новый язык, новояз (Newspeak. – термин Дж. Оруэла) идеологии, пропаганды. Кроме того, как широкий демократический «жест» сталинского режима армянский, грузинский и др. языки были разрешены на международном конгрессе в защиту культуры в Париже, что, в свою очередь, было рекламой сталинского режима в братских республиках в защиту национальных культур союзных республик.

Таким образом, можно заключить, что доклад Алазана прошел через экспертную (Абебян), идеологическую (Ханджян, Потемкин), языковую (Барбюс, Потемкин) инстанции. Анализ показал, что не только доклад Алазана, но и все другие доклады представителей союзных республик СССР были субтекстами идеологического метанарратива. Все тексты были составлены как общий гипертекст в борьбе с фашизмом и активной защитой и прославлением СССР. Доклады из братских республик перекликаются и с актуальной проблемой Европы – нацизмом, который воспринимается как косвенная «эманация» буржуазной культуры. Эта проблема также связывается и с местными «фашизмами» внутри СССР (дашнаки, меньшевики, украинские националисты).

Анализ эмпирического материала показал, что защита и прославление СССР в докладах участников из союзных республик имели свои общие метанарративные элементы, продиктованные политическим «верхом», такие как мифологизация времени и начала новой советской эпохи (Великая Октябрьская революция 1917 г.), наличие наднациональной советской идентичности, перевод национальных литератур на русский язык, акцентирование расширения рецепции (170 млн) национальных литератур (Микитенко, Иванов, Алазан, Табидзе), озвучивание советского литературного мифа: «национальная по форме» и «социалистическая по содержанию» (Г. Лахути). Кроме того, анализ докладов конгресса выявил, что они были по эмпирическому материалу разные, а по логике построения и аргументации одинаковыми, что, в свою очередь, еще раз подчеркивает, что все доклады были написаны по четким директивам политического «верха».

Тигран Симян – д. филол. н., профессор кафедры зарубежной литературы факультета европейских языков и коммуникации ЕГУ. Научные интересы: история немецкой литературы, семиотические проблемы литературы и культуры, история методологии гуманитарных наук, армяно-европейские литературные связи. Автор 1 монографии, 2 учебно-методических пособий и около 120 статей. tsimyan@ysu.am

³⁷ Վ. Մ. Ալ ա դ ա ն. Հ ու շ է ր, Երևան, 1967, էջ 314:

REFERENCES

- Aghavni. Mets hogov ays marde (tsnndyan 70-amyake). – “Grakan tert”, 18.V.1973 (In Armenian).
- Alazan V. M. Hay fashistneri grakan andastanum: Hodvadsner, Yerevan, 1932 (In Armenian).
- Alazan V. M. Kulturayi pashtpanutyanyan mijazgayin kongresi ardyunknere, Yerevan, 1935 (In Armenian).
- Alazan V. M. Husher, Yerevan, 1960 (In Armenian).
- Alazan V. M. Husher, Yerevan, 1967 (In Armenian).
- Alazan V. M. Tarapanki ughinerov. husher, Yerevan, 1990 (In Armenian).
- Apinyan A. Ankakhutyanyan gine. – “Hayastani Hanrapetutyun”, 30. VII. 1991 (In Armenian).
- Arias-Vikhil’ M. A. Neizvestnoe pis’mo Lui Aragona o podgotovke Parizhskogo kongressa v zashchitu kul’tury (1935) (po materialam Arkhiva A. M. Gor’kogo). – *Novye rossiiskie gumanitarnye issledovaniya*, 2015, 10-Russkii. – <http://www.nrgumis.ru/articles/1954> – 28. 10. 2019 (In Russian).
- Bem A. L. Pokhishchenie Yevropy (o kongresse pisatelei v zashchitu kul’tury). – “Mech” (M.), 8. IX. 1935 (In Russian).
- Galtsova E. Neproshedshee vremya. – Radio-peredacha ot 01. 07. 2019. – <https://echo.msk.ru/sounds/2231778.html> – 27. 08. 2019 (In Russian).
- Dialog pisatelei. Iz istorii russko-frantsuzskikh kul’turnykh svyazei XX veka, 1920–1970. M., 2002 (In Russian).
- Zhid A. Vozvrashchenie iz SSSR. M., 1936 (In Russian).
- Kalkhun K. Natsionalizm. M., 2006 (In Russian).
- Kaputikyan S. Mard, vorn aprum e mer mej (tsnndyan 70-amyaki aktiv). – “Grakan tert”, 18. V. 1973 (In Armenian).
- Literatura kak avtonomiya: intellektualy i ideologiya v XX v. (Rossiya i Zapad). Tezisy i annotatsii dokladov na russkom i frantsuzskom yazykakh. 10–11 sentyabrya. M., 2015. – <http://www.nrgumis.ru/articles/1953/> – 29. 05. 2019 (In Russian).
- Manukyan S. Vahram Alazan (tsnndyan 80-amyaki aktiv). – “Grakan tert”, 10. VI. 1983 (In Armenian).
- Mezhdunarodnyi kongress pisatelei v zashchitu kul’tury. Parizh, iyun’, 1935. Doklady i vystupleniya. Redaktsiya i predislovie I. Luppola, perevody E. Triole. M., 1936 (In Russian).
- Kublanovskii Yu. Posleslovie. – “Novyi mir”, 1999, № 3 (In Russian).
- Rubashkina A. I. Poshli tolki, chto den’gi moskovskie... – “Novyi mir”, 1999, № 3 (In Russian).
- Rudnaya I. O. Pervyi mezhdunarodnyi kongress pisatelei v zashchitu kul’tury ot fashizma i britanskii intellektualy. – “Istoriya, filosofiya, filologiya” (M.), 2016, № 1 (In Russian).
- Sergeeva-Klyatis A. Yu. Pasternak v zhizni. M., 2015 (In Russian).
- Frezinskii B. Ya. Pisateli i sovetskie vozhdii. M., 2008 (In Russian).

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԿՈՆԳՐԵՍԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ
ԵՎ ՄԵՏԱՆԱՐԱՏԻՎԸ
(Հայ բանաստեղծ Վահրամ Ալազանի գեկուցման օրինակով)

ՏԻԳՐԱՆ ՍԻՄՅԱՆ

Ա մ փ ո փ ու մ

Բանալի բառեր՝ Վ. Ալազան, կոնգրես, ստալինյան քարոզչություն, մշակութային քաղաքականություն, խորհրդային ինքնություն, սուբտեքստ, հիպերտեքստ, մետանարատիվ:

1935 թ. Փարիզում տեղի ունեցած մշակույթի պաշտպանություն գրողների միջազգային կոնգրեսի աշխատանքներին մասնակցած և գեկուցումով հանդես եկած հայ բանաստեղծ Վահրամ Ալազանի և մյուս մասնակիցների (Գ. Տաբիձե, Ի. Միկիտենկո, Օ. Օզոլին և այլք) գեկուցումները ցույց են տալիս ստալինյան ուղղահայաց իշխանության ու կրեմլյան մշակութային «քրմերի» գործունեության մարտավարությունը: Վ. Ալազանի գեկուցման բովանդակությունը և թեմատիկան վկայում են, որ այն քննարկվել է մասնագիտական (Մ. Աբեղյան), գաղափարական (Գ. Խանջյան, Վ. Պոսյոմկին), լեզվական (Ա. Բարբյուս, Վ. Պոսյոմկին) տեսանկյուններից մինչև ընթերցվելը: ԽՍՀՄ մյուս հանրապետությունների՝ Բելառուսի, Ուկրաինայի, Վրաստանի և այլ երկրների ներկայացուցիչների ելույթները նույնպես ստալինյան գաղափարական մետանարատիվի սուբտեքստեր էին: Բացի այդ, դրանք կարելի է ընկալել իբրև հիպերտեքստ՝ ուղղված ֆաշիզմի և նացիոնալ-սոցիալիզմի դեմ պայքարելուն: Զեկուցումները քաղաքական խոսույթի համատեքստում, բովանդակային առումով եղել են տարբեր, իսկ կառուցման ու փաստարկման տեսանկյունից՝ միօրինակ: Դրանք ևս վկայում են, որ գրվել են քաղաքական դեկլարացիայի պատվերով ու վերահսկմամբ:

Տիգրան Սիմյան – բ. գ. դ., ԵՊՀ-ի եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի արտասահմանյան գրականության ամբիոնի պրոֆեսոր: Գիտական հետաքրքրությունները՝ գերմանական գրականության պատմություն, գրականության ու մշակույթի նշանագիտական խնդիրներ, հումանիտար գիտությունների մեթոդաբանության պատմություն, հայ-եվրոպական գրական կապեր: Հեղինակ է 1 մենագրության, 2 ուսումնասիրության և ձեռնարկի և շուրջ 120 հոդվածի: tsimyan@ysu.am

Историко-филологический журнал
2020 № 1
Историко-филологический журнал
2020 № 1

THE CULTURAL-POLITICAL CONTEXT AND METANARRATIVE
OF THE INTERNATIONAL CONGRESS OF THE WRITERS
FOR THE DEFENSE OF CULTURE
(On the example of the report by the Armenian poet Vahram Alazan)

TIGRAN SIMYAN

S u m m a r y

Key words: V. Alazan, congress, Stalinist propaganda, cultural policy, Soviet identity, subtext, hypertext, metanarrative.

In 1935, a Congress of the Writers for the Defense of Culture was held in Paris where among the participants from the USSR was Armenian proletarian poet Vahram Alazan and other representatives of the Soviet Union Republics (G. Tabidze, I. Mikitenko, O. Ozolin etc.) whose papers presented at the Congress showed the strict “vertical” control of Stalinist directives and the tactics of the cultural “priests” of the Kremlin. The content and theme of Alazan’s report reveal the fact of it having been subjected to an expert’s (M. Abegyan), ideological (G. Khanjyan, V. Potemkin), as well as linguistic (A. Barbusse, V. Potemkin) revision before being read during the congress. The reports by the representatives of other fraternal republics of the USSR (Belarus, Ukraine, Georgia and other countries) also appear to be subtexts of the Stalinist ideological metanarrative. Besides, all the mentioned texts can be perceived as a hypertext directed against fascism and national-socialism as well as a means of active defense and glorification of the USSR. In political discourse, the reports in question also resulted to be different in meaning but similar by the logic of construction and argumentation. This also testifies that all reports were written according to clear directives of the political establishment.

Tigran Simyan – Doctor of Sciences in Philology, Professor at the YSU Department of Foreign Literature of the Faculty of European Languages and Communication. Scientific interests: the history of German literature, semiotic problems of literature and culture, the history of methodology of Humanities, Armenian-European literary connections. Author of 1 monograph, 2 educational-methodological textbooks and over 120 articles. tsimyan@ysu.am

ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ
«ԳԵՂԱՐՎԵՍ» ՀԱՆԴԵՍԻ ԷՋԵՐՈՒՄ*

ՄԱՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

Բանալի բառեր՝ «Գեղարվեստ» հանդես, Գարեգին Լևոնյան, գեղարվեստական կրթություն, դպրոց-մշակույթ կապ, դպրոցական կրթություն, էսթետիկական ընկալում:

1908 թ. Թիֆլիսում լույս տեսավ «Գեղարվեստ» գրական, գեղարվեստական, երաժշտական պատկերազարդ հանդեսի առաջին համարը: Հանդեսի հիմնադիր-խմբագիրն էր գրականագետ, արվեստաբան Գարեգին Լևոնյանը¹: Խմբագրական ուղերձից պարզ է դառնում, որ հիմնադիրը, ավելի քան որևէ մեկը, գիտակցում էր պատմական այդ ժամանակաշրջանում գեղարվեստական պարբերական մամուլի առջև ծառայած խոչընդոտները, սակայն, միևնույն ժամանակ, լավատեսությամբ էր տրամադրված՝ համակված ցանկացած գործի նախաձեռնողին բնորոշ «երազողի» ոգեշնչությամբ: «Երկա՞ր պէտք է ապրի «Գեղարուեստը»: – Այդ հարցին թերահավատությամբ են վերաբերում շատերը, աչքի առաջ ունենալով Կովկասահայ ժողովրդի ներկայ դրուժիւնը և առհասարակ նրա վերաբերմունքը դէպի գրականութիւնն ու գեղարուեստը: Այո՛, իրաւ որ նոյն այդ ժողովուրդը իրենց բնի մէջ մեռցրել է մեր հանդէսից առաջ դուրս եկած մի շարք գեղարուեստական պարբերականներ, ... բայց նոյն այդ ժողովրդի մէջ մենք նկատում ենք այժմ սէր դէպի ինքնազարգացումը, թատրոնը, դասախօսութիւնները, գեղեցիկ հրատարակութիւնները, ընթերցանութեան նիւթ մատակարարող հանդէսները: Մեր հասարակութեան, մեր երիտասարդական շրջանների այդ արթնացումը մի կողմից, որ գրաւական է մեզ «Գեղարուեստի» տարածումի համար, մի խումբ կարող ոյժերի աջակցութեան ծրագրները միւս կողմից, մեզ համարձակութիւն են տալիս ասելու, որ «Գեղարուեստը» պէտք է ապրի և ապրելով հանդերձ հետզհետէ առաջադիմէ, – գրված է ընթերցողներին ուղղված ուղերձում: – Մենք գեղարուեստի սիրու համար դնում ենք այստեղ մեր բոլոր ոյժերը, նիւթական, բարոյական, ֆիզիքական, մեր 12-

* Ներկայացվել է 03. IV. 2020 թ., գրախոսվել է 10. IV. 2020 թ., ընդունվել է տպագրության 10. IV. 2020 թ.:

¹ Գրական-գեղարվեստական պատկերազարդ հանդեսի հրատարակման հնարավորությունը Գ. Լևոնյանն ու Կոմիտասը քննարկում էին դեռևս 1905 թ. էջմիածնում, սակայն այդ ժամանակ գաղափարն իրականացնել չհաջողվեց. տե՛ս Գ. Լևոնյան. Երկեր, Երևան, 1963, էջ 7:

ժամեայ օրական աշխատանքը, յուսալով որ հայ հասարակութիւնն էլ չի խնայիլ իւր սիրալիւր ուշադրութիւնը»²:

Նախատեսվում էր, որ հանդեսն ունենալու է տարեկան տասը համար, յուրաքանչյուրը՝ հստակ ծրագրով: Այսպես, «Գեղարվեստի տեսականը» բաժնում անդրադարձ էր կատարվելու էսթետիկական հարցերին, ինչպես նաև գրականութայն ու արվեստի առանձին ճյուղերի՝ բանաստեղծութայն, երաժշտութայն, նկարչութայն, քանդակագործութայն, ճարտարապետութայն տեսական հարցերին: «Գեղարվեստի պատմականը» բաժինը ներկայացնելու էր պատմական ակնարկներ ոչ միայն հայ ժողովրդի, հարևան ազգերի և Արևմուտքի մշակույթից, այլև նշանավոր արվեստագետների կյանքն ու գործունեությունը: «Գեղարվեստի գրականը» նպատակ ունէր հարթակ ծառայել ժամանակակից գրողների համար, միաժամանակ էջեր տրամադրել թարգմանական երկերին: «Գեղարվեստը ընտանիքում և դպրոցում» խորագրի տակ տպագրվելու էին արվեստի կրթութայնը վերաբերող հոդվածները: «Մատենախոսական-քննական» բաժնում տեղ պետք է գտնեին գրախոսականներ թե՛ գեղարվեստական երկերի, թե՛ թատերական բեմադրությունների, թե՛ ցուցահանդեսների մասին: «Գեղարվեստական նամականին» հայ, ռուս և արտասահմանյան մշակութային կյանքի հայելին էր լինելու: «Երաժշտական երկասիրություններն» ընդգրկելու էին եկեղեցական ու աշխարհիկ երաժշտությունը, ժողովրդական երգերն ու պարեղանակները: «Պատկերահանդես»-ը ընթերցողին էր ներկայացնելու նշանավոր արվեստագետների ստեղծագործությունների վերատպույթություններ, ինչպես նաև օրիգինալ նկարներ ու զարդանկարներ: Առանձին բաժիններով ներկայացվելու էին խմբագրութայն ստացած նամակներն ու արվեստին և գրականութայնը վերաբերվող հայտարարությունները³:

«Գեղարվեստ»-ի հրատարակվելը ողջունեցին մշակույթի մի շարք գործիչներ, ինչն արձանագրված է հանդեսի առաջին⁴ և երկրորդ⁵ համարներում: Այնուհանդերձ, Գ. Լևոնյանի այս համարձակ նախաձեռնությունը սկզբնական պատկերացումից տարբեր ընթացք ունեցավ: Հանդեսը հրատարակվեց մինչև 1921 թ., սակայն նախատեսված տարեկան 10 համարի փոխարեն իր ողջ պատմութայն ընթացքում լույս տեսավ միայն յոթը⁶:

Գեղարվեստական կրթութայն հարցերին նվիրված նյութերը տպագրվել են հանդեսի «Գեղարվեստը ընտանիքում և դպրոցում» բաժ-

² Գ. Լեւոնեան. Մեր ընթերցողներին. – «Գեղարուստ» (Թիֆլիս), 1908, № 1, էջ 109:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 112:

⁴ Տե՛ս Խրախոյս, քաջալերութիւն, բարեմաղթութիւն «Գեղարուստի» հրատարակութեան առթիւ. – նույն տեղում, հավելված:

⁵ Տե՛ս «Գեղարուստ» հանդէսը մամուլի դատաստանի առաջ. – «Գեղարուստ», 1908, № 2, հավելված:

⁶ «Գեղարվեստ» հանդեսի մասին մանրամասն տե՛ս Թ. Գալստյան. Գաղբերն Լևոնյանը և «Գեղարվեստ» հանդեսը, Երևան, 1979: Գրքում սույն հոդվածի թեմային առնչվող անդրադարձը հպանցիկ է:

նում: Դրան հանդիպում ենք «Գեղարվեստ»-ի յոթ համարներից հինգում՝ 1908-ի՝ երկու, 1909, 1911 և 1913 թվականների հանդեսների համարներում: Պարբերականում նման խորագրի ներառումն արդեն իսկ հուշում է, թե որքան էր կարևորում Գ. Լևոնյանը գեղարվեստական կրթության դերը մշակութային դիմագիծ ունեցող հասարակության կրթման գործում: Շարքի առաջին հոդվածը 1908-ի անդրանիկ համարում հենց Լևոնյանի գրչին է պատկանում: «Գեղարուեստական առարկաների դասաւանդութիւնը մեր դպրոցներում» վերտառությամբ այս հոդվածում հեղինակը մատնանշում է գեղարվեստական կրթության կարևորությունը՝ Արևմուտքի փորձն օրինակ ծառայեցնելով. «Ամենքիս յայտնի է, որ բոլոր առաջաւոր ազգերի էլեմենտար, ժողովրդական թէ հանրակրթական միջնակարգ դպրոցներում մտցուած են, որպէս պարտադիր առարկաներ, գեղարուեստներից երկուսի՝ երաժշտութեան (երգի) և նկարչութեան դասատուութիւնը: Այդ երկու առարկաներն են, որ զարգացնելու են մատաղ հասակի լսողութիւնն ու տեսողութիւնը, զարգացնելու են յիշողութիւնը, գեղեցիկի ճաշակը, ազնուացնելու են նրա հոգին և բարքը»⁷: Այնուհետև հոդվածագիրն անդրադառնում է այն հիմնախնդիրներին, որոնք առկա էին հայկական դպրոցներում՝ առարկայի ծավալի հասակեցման հարցը, արվեստի առարկաների «երկրորդական» համարվելու իրողությունը, մասնագիտական պատրաստվածություն ունեցող ուսուցիչների սակավության խնդիրը⁸: Ակնհայտ է դառնում, որ այս խորագրի ներքո տպագրվող հոդվածաշարով Գ. Լևոնյանը ոչ միայն բարձրաձայնում էր գեղարվեստական կրթության ասպարեզում առկա խնդիրները, այլև նպատակ էր հետապնդում գոնե տեսական առումով որոշ բացեր լրացնել:

«Գեղարվեստ»-ի՝ 1908 թ. երկրորդ համարի խնդրո առարկա բաժինը բաղկացած է երկու հոդվածից: «Գեղարուեստական մանկավարժութիւնը Եվրոպայում» հոդվածում հանդեսի խմբագիրը հիմնվում է Ֆրանսիացի մանկավարժ Մարսել Բրաունշվիգի «Գեղարվեստը և երեխան»⁹ աշխատության վրա: Թուուցիկ ներկայացնելով Եվրոպայում գեղարվեստական կրթության վիճակն ու զարգացման միտումները՝ Գ. Լևոնյանն ընդգծում է, որ երեխայի գեղագիտական հայացքների ձևավորման ու զարգացման հարցում դպրոցին զուգահեռ մեծ դեր ունի կատարելու նաև ընտանիքը: Վերջինս «... մեր երկրում, յայտնի է որ, շատ քիչ բացառութեամբ ինքը յետ է ու անպատրաստ այդ տեսակէտից: Առաւելապէս մեր հայ կեանքը, մեր ընտանիքն ու դպրոցը ընդհանրապէս՝ այնքան յետ են մնացել գեղարուեստի հասկացողութիւնից, որ մեծ պարտականութիւն կայ իւրաքանչիւր ուսուցչի և ինտելիգենտ ծնողի վրայ, որ առաջ հոգալ այդ մեծ պակասը լրացնելու, այն չափով, որքան կը

⁷ «Գեղարուեստ», 1908, № 1, էջ 69:

⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 69–70:

⁹ Աշխատության ամբողջական վերնագիրն է՝ «Արվեստը և երեխան. ակնարկ գեղագիտական կրթության մասին». տե՛ս M. Braunschvig. L'art et l'enfant: essai sur l'education esthétique, Toulouse. Paris, 1907.

ներեն տեղական հանգամանքները»¹⁰, – գրում է հոդվածագիրը: Հատկապես գնահատելի է հոդվածի վերջնամասում տեղ գտած խմբագրական խոսքը, որով հանդեսի խմբագրությունը հանձն է առնում «Փոստարկը» ենթաբաժնում կամ նամակներով պատասխանել բոլոր նրանց, ովքեր կցանկանան իմանալ՝ «ա. Ի՞նչպիսի պատկերներով պէտք է զարդարել դասարանները և որտեղի՞ց կարելի է ստանալ դրանք: բ. Ի՞նչ գրքեր և հանդէսներ կարող են կարգալ ուսուցիչները և ծնողները իրենց գեղարուեստական ինքնակրթութեան պակասը լրացնելու համար»¹¹: Նման նախաձեռնությունը հավաստում է, որ Գ. Լևոնյանի ոչ միայն տեսական հոդվածներով, այլ գործնական քայլերով էր ցանկանում նպաստել հայկական դպրոցներում գեղարվեստական կրթության զարգացմանը:

Գ. Լևոնյանի հոդվածին հաջորդում է Ֆրանսիացի կոմպոզիտոր, կոնսերվատորիայի հարմանիոյի դասախոս, Փարիզի համայնքային դպրոցների երգի ծրագրի գլխավոր պատասխանատու, պրոֆեսոր Օգյուստ Շափյուլի «Երաժշտական արուեստը դպրոցում» վերնագրով նյութը¹², որը նույն՝ 1908 թ. լույս էր տեսել Փարիզում հրատարակված «Արվեստը դպրոցում» գրքում¹³: Դրանում գետեղված հոդվածները վերաբերում էին դպրոցում արվեստի ուսուցման մի շարք հիմնահարցերի: Ի դեպ, գիրքը տպագրվել էր Ֆրանսիայի նախագահի բարձր հովանու ներքո 1907 թ. հիմնադրված նույնանուն՝ «Արվեստը դպրոցում» ազգային ընկերության ջանքերով:

«Գեղարվեստ»-ի 1909 թ. երրորդ համարի համապատասխան բաժնում տեղ է գտել Հովհաննես Ակունյանի «Գեղարուեստական եւ պրոֆեսիոնալ զարգացումը» վերնագրով հոդվածը¹⁴, որտեղ խիստ կարևորվում է տարրական դպրոցներում որպես պարտադիր բաղադրիչ գեղարվեստական կրթության ներդրումը: «Մեր տարրական դպրոցի ծրագրի անկատարությունն ու անբավարարությունը ես համարում եմ գեղարուեստական դաստիարակութեան հետևանք: Գեղարուեստական դաստիարակութեան կամ զարգացում ասելով ես հասկանում եմ ճաշակի զարգացում, մեր շրջապատի գեղեցիկն ու շքեղը տեսնելու ընդունակություն. ընդունակություն ներդաշնակն աններդաշնակից, կանոնաւորությունը քաօսից տարբերելու, ընդունակություն գանազանելու բնորոշն ու գլխաւորը երկրորդականից կամ պատահականից, և ընդունակություն իր մտքերն արտայայտելու այս կամ այն գեղարուեստական ձևով, ստեղծելով դրա հետ թէկուզ մի աննշան ինքնուրոյն և գեղեցիկ բան»¹⁵, – ընդգծում է հոդվածագիրը: Հ. Ակունյանն առանձնացնում է հիմնականում նկարչության, կաղապարային մոդելավորման և փայտարվեստի նշանակությունը՝ դրանց միջոցով նաև այլ առարկաների դասավանդման նոր մեթո-

¹⁰ «Գեղարուեստ», 1908, № 2, էջ 81:

¹¹ Նույն տեղում:

¹² Նույն տեղում, էջ 82–87:

¹³ A. Chapius. L'Art musical à l'école.– L'Art à École, par MM. Couyba, Léon Riotor, Frantz-Jourdain. Paris, 1908, pp. 109–112.

¹⁴ «Գեղարուեստ», 1909, № 3, էջ 106–110:

¹⁵ Նույն տեղում, էջ 106:

դիկայի խթանման տարբերակ տեսնելով: Հողվածագիրը նշում է, որ ինքնուրույն որևէ իր պատրաստելը մեծապես կնպաստի երեխայի գիտակցության մեջ մարդկային ձեռակերտ աշխատանքի նկատմամբ հարգանքի ձևավորմանը, ինչն էլ կհանգեցնի կրթված և գիտակից քաղաքացու կերտմանը: Միաժամանակ հեղինակն այն կարծիքին է, որ գեղարվեստական կրթությունը պետք է ներառվի տարրական դպրոցում, քանի որ «եթէ ձեռքի և աչքի կրթելը, դիտողութեան ընդունակութիւնը, ինչպէս և իր մտքերը գեղարուեստական ձևերով արտայայտելու ընդունակութիւնը չեն զարգացել իր ժամանակին, այսինքն ամենավաղ տարիներից, այլևս հնարաւորութիւն չկայ վերադարձնել կորցրածը»¹⁶: Անդրադառնալով ԱՄՆ-ի ու Եվրոպայի դպրոցների փորձին՝ Ակունյանը դրանցից խելամտորեն օգտվելու կոչ է անում: Հողվածն ավարտվում է այն եզրահանգմամբ, որ գեղարվեստական դաստիարակությունը «ինչպէս մտաւոր, այնպէս էլ բարոյական կրթութեան հիմք» է, և դրա զարգացումը պետք է սկսել ամենավաղ հասակից. հետևաբար, այն անհրաժեշտ է ներառել մանկապարտեզի ու տարրական դպրոցի ծրագրերում՝ կապ ապահովելով մյուս առարկաների հետ, ինչն էլ հնարավորություն կտա ուսման հետագա տարիներին ցանկալի արդյունքի հասնել:

«Գեղարվեստ»-ի չորրորդ՝ 1911 թ. համարում խնդրո առարկա բաժնում գետեղված է մանկավարժ, հրապարակախոս Արտաշես Տիրացյանի «Էսթետիկական կրթութիւնը մանկավարժութեան մէջ» վերնագրով հողվածը¹⁷: Դրա առաջին մասում հեղինակն անդրադարձ է կատարում գեղագիտական կրթության պատմությանը, ապա՝ հոգեբանական տեսակետից հիմնավորում գեղարվեստական կրթության կարևորությունը դպրոցում: «Դպրոցում՝ մտաւոր կրթութեան վրայ թափուած աշխատանքը միայն այն ժամանակ է իր նպատակին հասած համարւում, երբ կարելիութիւն է տալիս աշակերտին՝ իր բոլոր իմացութիւնները բերելու մի ընդհանուր, կանոնաւոր սիստեմի. երբ սովորեցնում է աշակերտին՝ մասնաւոր երևոյթների մէջ ընմբռնելու ընդհանուր բնաւորիչ և ուժեղ գծերը և ընդունելու մասնաւորը, իբրև օրինակ ընդհանուր պատկերացումների համար, — ընդգծում է հողվածագիրը: — Այս նպատակին, անշուշտ, մեծապէս կը նպաստի գեղարուեստական արտադրութիւնների ուղիղ ուսումնասիրութիւնը և ճիշտ ըմբռնողութիւնը, որովհետև դրանց մէջ դրւում են մասնակի օրինակների իրենց ուժեղ և բնորոշիչ կողմերով»¹⁸:

1913 թ. «Գեղարվեստ»-ի հինգերորդ համարում, որը տպագրվել է Վենետիկում, թարգմանաբար տեղ է գտել Փրանսիայի Դեկորատիվ արվեստի ազգային դպրոցի պրոֆեսոր Գաստոն Քենիուի «Նկարչութիւնը դպրոցում եւ ճաշակի դաստիարակութիւնը»¹⁹ վերնագրով հողվածը,

¹⁶ Նույն տեղում, էջ 108:

¹⁷ «Գեղարուեստ», 1911, № 4, էջ 123–128:

¹⁸ Նույն տեղում, էջ 127:

¹⁹ «Գեղարվեստ» (Վենետիկ), 1913, № 5, էջ 133–137:

որը ևս տպագրվել է 1908 թ. Փարիզում հրատարակված «Արվեստը դպրոցում» գրքում²⁰:

«Գեղարվեստ»-ի վերջին երկու համարներում՝ 6-ում և 7-ում, խնդրո առարկա թեմային առնչող հոդվածներ չկան:

Ամփոփենք. «Գեղարվեստ» հանդեսի «Գեղարվեստը ընտանիքում և դպրոցում» բաժինն առանձնանում է, թե՛ գաղափարական առումով, թե՛ հոդվածների արդիականությունում ու բարձրացվող խնդիրների կարևորությունում: Հիրավի, չնայած տպագրվել է «Գեղարվեստ»-ի ընդամենը յոթ համար, «բայց իր որակով ու նշանակությամբ խոշոր դեր է խաղում հայ մշակութային կյանքում, մեծ դարկ է տալիս հայ գեղագիտական մտքի զարգացմանը, արվեստի, գրականության և առհասարակ գեղեցիկի պրոպագանդմանը»²¹:

Մանե Մկրտչյան – արվ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սիմվոլիկա-հայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունը՝ XX դարի հայ մշակույթ: Հեղինակ է 1 մենագրության և շուրջ 20 հոդվածի:
mane.mkrtchyan@gmail.com

REFERENCES

- Braunshvig M. L'art et l'enfant: essai sur l'éducation esthétique, Toulouse. Paris, 1907.
- Chapuis A. L'Art musical à l'école. – L'Art à École, par MM. Couyba, Léon Riator, Frantz-Jourdain. Paris, 1908.
- Galstyan T. Garegin Levonyan ev “Gegharvest” handese, Yerevan, 1979 (In Armenian).
- “Gegharvest” (Tiflis), 1908, № 1, 2; 1909, № 3; 1911, № 4; 1913, № 5 (Venetik) (In Armenian).
- Harutyunyan S. Garegin Levonyan.– PBH, 1970, № 3 (In Armenian).
- Levonyan G. Erker, Yerevan, 1963 (In Armenian).
- Quénieux G. Le Dessin a l'école et l'Éducation du goût.– L'Art à École, par MM. Couyba, Léon Riator, Frantz-Jourdain. Paris, 1908.

²⁰ G. Quénieux. Le Dessin a l'école et l'Éducation du goût. – L'Art à École, par MM. Couyba, Léon Riator, Frantz-Jourdain, pp. 89–108.

²¹ Ս. Հ ա ռ ու թ յ ու ն յ ա ն. Գարեգին Լևոնյան.– ՊԲՀ, 1970, № 3, էջ 229–230:

ВОПРОСЫ ХУДОЖЕСТВЕННОГО ОБРАЗОВАНИЯ
НА СТРАНИЦАХ ЖУРНАЛА «ГЕГАРВЕСТ»

МАНЭ МКРТЧЯН

Резюме

Ключевые слова – журнал «Гегарвест», Гарегин Левонян, художественное образование, связь школа – культура, школьное образование, эстетическое восприятие.

В 1908 году в Тифлисе был издан первый номер литературного, художественного и музыкального иллюстрированного журнала «Гегарвест». Основателем и главным редактором журнала был литературовед и искусствовед Гарегин Левонян (1872–1947). Журнал должен был иметь 10 выпусков в год и состоять из определенных разделов. «Теория Гегарвеста» – так назывался раздел, посвященный эстетическим вопросам и теоретическим проблемам литературы и искусства. Раздел «История Гегарвеста» включал обзоры как армянской, так и зарубежной истории и культуры. Раздел «Литература Гегарвеста» служил платформой для современных писателей и переводческих работ. Раздел «Критики и аналитики» должен был включать обзоры произведений искусства, театральных постановок и выставок. «Письма Гегарвеста» рассказывали новости об армянской, русской и зарубежной культурной жизни. «Музыкальные обзоры» были посвящены церковной и светской музыке, народным песням и танцам. «Иллюстрации» представляли читателю произведения известных художников, а также оригинальные картины и орнаменты. Отдельные разделы включали редакционные письма и объявления по искусству и литературе.

Раздел «Гегарвест в семье и в школе» свидетельствовал о том, насколько высоко Г. Левонян ценил роль художественного образования в воспитании подрастающего поколения. В раздел вошли статьи как армянских ученых, так и европейских экспертов. Поднятые вопросы и предложенные методы были современными, изучался также западный опыт для правильной организации художественного образования в школе. Г. Левонян стремился на страницах журнала представить публике все лучшее из изобразительного искусства, литературы и теории искусства. Несмотря на то, что изначальная идея Левоняна реализовалась далеко не полностью, и за всю историю «Гегарвеста»-а (1908–1921) вышло в свет всего лишь семь номеров, журнал, действительно, оставил значимый след в армянской культурной жизни и развитии эстетической мысли.

Манэ Мкртчян – к. иск., старший научный сотрудник отдела искусства армянской диаспоры и международных связей Института искусств НАН РА. Научные интересы: армянская культура XX века. Автор 1 монографии и около 20 статей. mane.mkrtchyan@gmail.com

PROBLEMS OF ART EDUCATION
ON THE PAGES OF JOURNAL “GEGHARVEST”

MANE MKRTCHYAN

Summary

Key words: Journal “Gegharvest”, Garegin Levonyan, art education, connection between school and culture, school education, aesthetic perception.

In 1908, the first issue of “Gegharvest” – the literary, artistic and musical illustrated journal was published in Tiflis. The founder and editor-in-chief of the journal was literary and art critic Garegin Levonyan (1872–1947). The journal was supposed to have 10 issues per year and consist of certain sections. “Gegharvest’s Theory” was called the section devoted to aesthetic issues and theoretical problems of literature and art. The “Gegharvest’s History” section included reviews of both Armenian and foreign history and culture. The “Gegharvest’s Literature” section served as a platform for contemporary writers and translations. The “Critics and Analytics” section was supposed to include reviews of works of art, theatrical productions and exhibitions. “Gegharvest’s Letters” introduced news about Armenian, Russian and foreign cultural life. “Musical Reviews” revealed church and secular music, folk songs and dances. “Illustrations” presented to the reader the works of famous artists, as well as original paintings and ornaments. Separate sections included editorials and announcements about art and literature.

The “Gegharvest in the family and at school” section testified how strongly Garegin Levonyan appreciated the role of art education in the upbringing of the younger generation. The section included articles by both Armenian scholars and European experts. The issues raised and the methods suggested were up-to-date, and the Western experience was also studied for the proper organization of art education at school. On the pages of the journal G. Levonyan strove to present to the public all the best of fine arts, literature and the theory of art. Even though Levonyan’s original idea was never fully realized, and in the entire history of “Gegharvest” (1908–1921) only seven issues were published, the journal really left a significant mark on Armenian cultural life and the development of aesthetic mind.

Mane Mkrtchyan – Candidate of Sciences in Arts, Senior Researcher at the Department of Art of Armenian Diaspora and International Relations of the NAS RA Institute of Arts. Scientific interest: Armenian culture of the 20th century. Author of 1 monograph and over 20 articles. mane.mkrтчyan@gmail.com

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԸ ԿԱՍԵՆԻՑԻ ՀԱՅԿԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (XVI դ.)*

ԳՈՒՐԳԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Բանալի բառեր՝ Կամենից, հայկական գաղութ, հայկական դատարանի արձանագրություններ, անձնանուն, հին շրջան, միջին շրջան, բնիկ հայկական անձնանուններ, փոխառություններ, հնչյունափոխություն, լեհերեն, լեհահայեր, արական անուն, իգական անուն:

Հայ իրականության մեջ դատական գործընթացներ կատարվել են դեռևս հին Հայաստանում: Միջնադարում՝ սկսած XIII դարից, դատական գործընթացներում առաջնորդվում էին Մխիթար Գոշի հայտնի «Դատաստանագրքով»: Հայ տարագիրները դատաիրավական մշակույթը շարունակել են պահպանել նաև հայրենիքից դուրս: Կիլիկիայի հայկական թագավորությունում, օրինակ, գործում էր Սմբատ Սպարապետի կազմած «Դատաստանագրքով»: Անկախ դատական համակարգ ունեին նաև լեհահայ ու ռումինահայ որոշ համայնքներ՝ Իլովում (ներկայում՝ Լվով), Կամենիցում (ներկայում՝ Կամենեց-Պոդոլսկ), Յաչում կամ Յասում (ներկայում՝ Յասսի) և այլուր¹: Սակայն, որպես դատական գործընթացներն արտացոլող վավերաթղթեր, մեր օրեր է հասել միայն Կամենիցի հայ համայնքի ինքնավար դատարանի արձանագրությունների անհամեմատ փոքր մասը՝ ժամանակին հրաշքով փրկվելով բնական և մարդածին աղետներից [հրկիզում (1602 թ.), ռմբակոծություն ու «գերեվարում» (1940-ականներ) և այլն]: Կամենիցահայերի կողմից շուրջ երկուսուկես դար կազմված դատական արձանագրություններից առայսօր հայտնի է 27 ձեռագիր մատյան: Դրանցից մեկի նյութերը (369 հայերեն ձեռագիր արձանագրություն՝ գրի առնված 1559–1575 թթ.)², որոնք լույս են տեսել Վ. Գրիգորյանի աշխատության մեջ, հետաքրքրական են ոչ

* Ներկայացվել է 07. IV. 2020 թ., գրախոսվել է 10. IV. 2020 թ., ընդունվել է տպագրության 28. IV. 2020 թ.:

¹ Այս կապակցությամբ Վ. Գրիգորյանը գրում է. «Հայտնի է, որ լեհահայոց իրավունքի հիմքում ընկած է Մխիթար Գոշի «Դատաստանագրքով», որը լատիներեն թարգմանությամբ ներկայացվել է լեհաց Սիգիզմունդ I թագավորին և մի շարք փոփոխություններով ու լրացումներով հաստատվել նրա կողմից 1519 թ.» [տե՛ս Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները (XVI դ.), աշխատասիրությամբ Վ. Ռ. Գրիգորյանի (այսուհետ՝ Արձանագրություններ), Երևան, 1963, էջ 54]:

² 1–6 թվակիր արձանագրությունների բնագրերը չեն պահպանվել: Հեղինակը դրանք քաղել է «Հանդես ամսօրյա» ամսագրից (Վ. Գրիգորյան. Արձանագրություններ, էջ 86–87):

միայն սոցիալ-տնտեսական, դատաիրավական և այլ առումներով, այլև լեզվաբանական տեսանկյունից. լեզվական նյութն անգնահատելի է մասնավորապես այն տեսանկյունից, որ շարադրանքում հաճախ տեղ են գտել ուղղակիորեն կամ կիսաուղղակիորեն մեջբերված խոսքեր, որոնցում դատական քարտուղարի գրաբարի իմացությունը տեղի է տալիս դատական գործընթացի մասնակիցների անխառն հայերենին, որով, նայած խոսքային իրավիճակին, նրանք հանդես են գալիս զանազան հայտարարություններով ու երկխոսություններով:

Հատկանունների, մասնավորապես՝ անձնանունների ուսումնասիրությունը հայագիտության այն բնագավառներից է, որտեղ, սկսած դեռևս անցյալ դարակեսից, արձանագրվել են որոշակի հաջողություններ ոչ միայն մենագրությունների (որոնց թվում՝ հայկական անձնանունների ու ազգանունների բառարաններ), այլև տասնյակ հոդվածների ու վերջիններիս գրությունների հրատարակմամբ, ինչպես նաև բուհական համակարգում ուսումնական դասընթացների ներդրմամբ³:

Հոդվածում ուսումնասիրվում են Կամենից քաղաքի հայկական դատարանի արձանագրությունների անձնանունները, որոնք հիմք են ծառայում մոտավոր պատկերացում կազմելու Հայաստանից տարբեր ժամանակահատվածներում և տարբեր ճանապարհներով Լեհաստան (1569–1795 թթ.՝ Ռեչ Պոսպոլիտա) գաղթած հայ տարագիրների կողմից օտար միջավայրում գործածված անձնանունների մասին: Քննության նյութ են դառնում նաև կամենիցահայության անձնանունների տարածվածության, կապակցելիական հնարավորությունների, գործածության հաճախականության, ծագումնաբանության և հարակից հարցեր, որոնք զուգահեռաբար լույս կափռեն միջնադարից հայերեն վերաբերող որոշ հարցերի վրա: Խնդրո առարկա բառերի շարքում տեղ են գտել և քննության ենթարկվել լեհահայոց ծագվուն գաղթօջախում ակտիվորեն գործածված

³ Հ. Ա ճ ա ու յ ա ն. Հայոց անձնանունների բառարան, հ. Ա–Ե, Երևան, 1942–1962 (այսուհետ՝ ՀԱԲ, Ա–Ե), Հ. Բ ա ր ս ե ղ յ ա ն. Հատուկ անուն, Երևան, 1964: Г. Н а л б а н д я н. Армянские личные имена иранского происхождения (культурно-историческое, этимологическое исследование), автореферат докт. диссерт. филол. наук. Тбилиси, 1971; Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Մոլսես Խորենացու «Հայոց պատմության» առաջին գրքի անձնանունների լեզվական աղբյուրները. – ՊԲՀ, 1981, № 3, էջ 48–63, ն ու յ ն ի՝ Բնիկ հայերեն արմատներով կազմված հայկական անձնանունները. – ՊԲՀ, 1984, № 4, էջ 32–44, Տ. Ա վ ե տ ի ս յ ա ն. Հայկական ազգանուն, Երևան, 1987, ն ու յ ն ի՝ Հայոց ազգանունների բառարան, Երևան, 2000, Ն. Դ ի լ բ ա ր յ ա ն. Անձնանուններից կազմված տեղանունների իմաստաբանական դաշտը. – «Բանբեր Երևանի համալսարանի», 2003, № 1, էջ 171–177, Հ. Հ ա ր ու թ յ ու ն յ ա ն. Տեղանվանական հիմքերով հայկական ազգանուններ (բ. գ. թ. ատեն. սեղմագիր), Երևան, 2008, Հ. Բ ա ր - խ ու ղ ա ր յ ա ն. Արհեստ, զբաղմունք, մասնագիտություն իմաստային հիմքերով հայկական ազգանուններ (բ. գ. թ. ատեն. սեղմագիր), Երևան, 2009, Հ. Հ ա ր ու թ յ ու ն յ ա ն. Հատկանվանագիտություն (դասընթաց Վանաձորի Հովհ. Թումանյանի անվ. պետական համալսարանի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության մագիստրոսական կրթական ծրագրում):

թե՛ համահայկական տարածում ունեցող հայկական անձնանուններ, թե՛ հիշյալ գաղութում շրջանառված սլավոնական ու սլավոնների կողմից փոխառյալ եվրոպական անձնանուններ:

Արձանագրություններում տեղ գտած անձնանունների ուսումնասիրությունը նպատակ է հետապնդվում պարզելու մի շարք հարցեր, մասնավորապես՝ ա) պահպանվե՞լ են մայր երկրից տարված անձնանունների սկզբնաձևերը, բ) միօրինա՞կ է դրանց արտաբերումը, գ) նոր միջավայրում բարբառակիր տարագիրները կրե՞լ են իրենց հետ տարած անձնանունների կառուցվածքի և հնչյունական կազմի հետ կապված ազդեցություններ, թե՞, ընդհակառակը, իրենք են ազդեցություն գործել փոխառյալ անձնանունների վրա:

Փաստական նյութը քաղել ենք վերոհիշյալ 369 արձանագրություններից՝ առանց էջանշումների, քանի որ առկա է դրանց առցանց տարբերակը: Ուսումնասիրությունը կատարվել է նկարագրական մեթոդով՝ երբեմն կիրառելով նաև համեմատության և զուգադրության մեթոդները՝ եզր ունենալով լեզվական փաստեր արձանագրություններից, ՀԱԲ-ից և Գ. Ջահուկյանի «Բնիկ հայերեն արմատներով կազմված հայկական անձնանունները» հոդվածից, որում հեղինակն անձնանունների պատմական քննությունը կատարում է՝ ըստ հայոց լեզվի՝ իր իսկ առաջարկած շրջանաբաժանման՝ մասնակի փոփոխություններով [այն է՝ հնագույն շրջան (մինչև V դ.), հին շրջան (V դ. վերջերից մինչև XI դ.), միջին շրջան (XII – XVI դդ.), նոր շրջան (XVII – XX դդ.)]⁴, որով էլ առաջնորդվում ենք:

1. Արձանագրություններում համեմատաբար հաճախադեպ են դեռևս հին շրջանից ավանդված ու համահայկական տարածում ունեցող անձնանունները, այսինքն՝ նրանք, որոնք գործածվում էին և՛ Հայաստանում, և՛ նրա սահմաններից դուրս: Հին շրջանից ավանդվածների շարքում առանձնանում են՝

1. 1. բնիկ հայերեն անձնանուններ, որոնք սակավաթիվ են՝

Ասվատուր (փխ.՝ Աստուածատուր)⁵, Աւաբ, Աւետիք, Թաթուկ, Խաչքո (փխ.՝ Խաչիկ), Հար(ա)պետ (փխ.՝ Հայրապետ), Մանուկ, Մխիթար, Մկրտիչ, Տիրատուր,

1. 2. փոխառյալ անձնանուններ, որոնք, չհաշված մասնակի բացառությունները, աստվածաշնչյան, հունաստորական, մասամբ՝ իրանական արական անձնանուններ են, աչքի են ընկնում կենսունակություններ և միջին շրջանում նույնպես ունեն համահայկական տարածվածություն: Օրինակ՝ Աբգար⁶, Աբրահամ, Ահարոն, Անդրէաս, Աննա⁷, Բաղդասար, Գրիգոր, Լէվոն, Խոսրով, Հովսեփ, Կիւրեղ, Ղազար, Մակար, Մարկոս,

⁴ Գ. Ջահուկյան. Բնիկ հայերեն արմատներով կազմված հայկական անձնանունները, էջ 32–33:

⁵ Աստուածատուր, Խաչիկ, Մխիթար՝ ստեղծվել են «օտար անձնանունների թարգմանության միջոցով» (նույն տեղում, էջ 43): Աստուածատուր անձնանվան Ասվատուր տարբերակը մեր կողմից օգտագործված մասնագիտական գրականության մեջ չենք հանդիպում:

⁶ Հանդիպում է նաև Հ նախահավելումով՝ Հաբգար:

⁷ Հանդիպում է նաև Հ նախահավելումով՝ Հաննա:

Յակոբ, Յովհաննէս, Պետրոս//Բեդրէ, Պողոս, Սահակ, Սիմոն, Վարդան և այլն⁸: Ինչ խոսք, աստվածաշնչյան փոխառությունների կենսունակությունն անմիջականորեն պայմանավորված էր նաև նորածինների անվանակոչության ու կնունքի արարողություններին հոգևորականների մասնակցութեան հանգամանքով:

2. Միջին շրջանում շրջանառված և դարձյալ համահայկական տարածում ունեցող անձնանուններից արձանագրություններում առանձնանում են՝

2. 1. բնիկ հայերեն անուններ: Հմմտ. Խաչերես⁹, Խոցադեղ¹⁰, Վարդերես¹¹, Վարդէջուր¹², Տօնական¹³, Տօնավաք¹⁴ արական և Կոհարքո¹⁵, Մանուշակ¹⁶, Նազու¹⁷, Վարդէ¹⁸ իգական անձնանունները:

2. 2. Շուրջ երկու տասնյակ արաբական և թուրք-թաթարական իգական ու արական փոխառություններ (հայկական գաղութի համար՝ գերազանցապես անմիջական փոխառություններ, որ ժամանակին կատարվել են մայր երկրում կամ հետո՝ գաղթի շրջանում): Հմմտ. մի կողմից՝ Ադապէյ,

⁸ Նշված անձնանունների մի մասը՝ Abraham, Andreas, Andrew, Aaron, Damian, Gregory, Jacob, Johannes, Катажина, Luke, Peter և այլն, պայմանավորված վերոնշյալ հանգամանքներով, գործածական են նաև միջին լեհերենում (A. Cieślíkowa. Antroponimia Polski od XVI do końca XVIII w. – “LingVaria”, Rok I, 2006, № 1, pp. 98–101):

⁹ Ավանդվել է XII–XV դդ. (ՀԱԲ, Բ, 492):

¹⁰ Հնագույն վկայությունը՝ 1386 թ. (ՀԱԲ, Բ, էջ 547):

¹¹ Ավանդվել է XII–XV դարերից (ՀԱԲ, Ե, էջ 111):

¹² ՀԱԲ-ում չի հիշատակվում: Արձանագրություններում վկայվել է 1573 թ. 4 անգամ՝ վերաբերելով միևնույն անձին:

¹³ Լեհահայոց շրջանում ընդունված հատկանուն է (1559, 1573, 1574 թթ.): Հնագույն վկայությունը՝ 1422 թ. (ՀԱԲ, Ե, էջ 180):

¹⁴ Լեհահայոց շրջանում ընդունված հատկանուն է (1574 թ.): Հնագույն վկայությունը՝ 1512 թ. (ՀԱԲ, Ե, էջ 181):

¹⁵ Կազմվել է Գոհար վաղ պարսկական փոխառության (ՀԱԲ, Ա, էջ 481) և սլավոնական ծագմամբ -քո բաղադրիչի համադրումով:

¹⁶ Ավանդվել է X դարից (Մանիշակ)՝ նախ գործածվելով որպես արական, ապա՝ իգական անձնանուն (ՀԱԲ, Գ, էջ 200): Հ. Աճառյանն այս գաղթօջախի համար նշում է Մանուշիկ տարբերակը (Հ. Աճառյան. Քննություն Առտիալի բարբառի, Երևան, 1953, էջ 188):

¹⁷ ՀԱԲ-ում չի հիշատակվում: Կարծում ենք՝ տեղի է ունեցել կա՛մ հայերեն Նազուկ հատկանվան վերջնահնչյունի անկում՝ Նազու, կա՛մ փոխառյալ բաղադրյալ անձնանվան կրճատում՝ Նազխաթուն-Նազու (ասվածի օգտին վկայում է արձանագրություններում հանդիպող Խանմելիք իգական անունը, որը զուգահեռաբար գործածվել է նաև Խանու տարբերակով): Նշենք, որ Նազու իգական անունը կենսունակ հատկանուններից է, ինչի մասին վկայում է Ա. Բակունցի «Նամակ ոռոսաց թագավորին» պատմվածքը:

¹⁸ Ըստ Հ. Աճառյանի՝ հիշատակվել է 1728 թ. (ՀԱԲ, Ե, էջ 112), մինչդեռ հանդիպում է ավելի վաղ՝ 31. VI. 1574 թ., քննության առարկա 402 թվակիր արձանագրությունում՝ «իլովցի Անտրիյին կինն՝ Վարդէ»:

Ամանպեկ¹⁹, Ամիր, Այիգպէյ, Այտին, Բահրիք, Դուկապէյ, Եօլպէյ, Էսանպէյ, Էտիլպէյ²⁰, Շատպէյ, Սովունչ Սուլթան արական, մյուս կողմից՝ Ազիզքո²¹, Թուրաչ, Կուլաֆ²², Եօլմելիք, Խանեչքո, Խանմելիք, Ճաշխաթուն, Աննախաթուն, Խախաթուն իգական անձնանունները²³:

2. 3. Փորձելով պահպանել հայրենիքում շրջանառվող հին և միջին շրջանների բնիկ ու փոխառյալ անձնանունները՝ հայ տարագիրները գաղթավայրում, այնուամենայնիվ, սկսում են փոխառել նորերը, որոնք, բնական է, համահայկական տարածում չունեն: Այս խմբի անձնանունների՝

2. 3. 1. զգալի մասը, ինչպես և ենթադրելի է, սլավոնական (մասնավորապես լեհական և ուկրաինական) ծագման արական անուններ են (հայկական գաղութի համար՝ անմիջական փոխառություններ) կամ էլ սլավոնների կողմից եվրոպական այլ լեզուներից փոխառյալ անձնանուններ (հայկական գաղութի համար՝ միջնորդավորված փոխառություններ), ինչպես՝ Բեդր, Գոսդա, Եագուպ, Իլեաչ, Իւան, Իւրքո, Հանուս, Հրիցքո, Հրիհոր, Մաղիյ, Մաչա, Միթքո, Միսքո, Նիկոլ, Ծիմքո, Պիլաչ, Սդանիսլավ, Տեմեան և այլն:

2. 3. 2. Մի մասը իգական անուններ են՝ դարձյալ գերագանցապես փոխառված սլավոնական լեզուներից, մասամբ էլ սլավոնական լեզուների միջոցով միջնորդավորված եվրոպական փոխառություններ են՝ Բրեթասենեայ, Եօլօք, Էլլէզ, Կաթերինա, Հորբինա, Մանա, Մակտա, Մարենքո, Մարուխնա, Շէնքո, Ուսդեանա, Ռամառ, Սարա, Քրասնա:

Թեև հիշյալ շրջանում լեհահայերի կողմից փոխառված լեհական և ուկրաինական անձնանունները մեծաթիվ չեն, սակայն դրանց՝ փոխառյալ այլ անձնանունների և ուղեկցող բառերի հետ գործածությունը վկայում է հիշյալ ժամանակահատվածում ծայր առնող այն գործընթացի մասին, որը, ինչպես հայտնի է, որոշ ժամանակ անց, պայմանավորված տարբեր հանգամանքներով, լեհահայոց գաղութում դարձել է օրինաչափություն՝ աստիճանաբար գործածությունից դուրս մղելով հայկական անձնանունները:

Արձանագրություններում մեծ թիվ ունեն նաև սլավոնական ծագմամբ, ինչպես նաև լեհերի և ուկրաինացիների կողմից փոխառյալ արական, մասամբ իգական այն անձնանունները, որոնցով հիշատակվում են տեղացիները, ավելի հաճախ՝ Կամենիցում առանձին համայնքներ ներ-

¹⁹ Հանդիպում է նաև յ>չ նախահավելումով՝ Ամանպեկ-Յամանպեկ:

²⁰ Ենթադրվում է, որ Էդիլ անձնանունն է, որը ՀԱԲ-ում բերվում է նաև Էդիլ/Էտիլ տարբերակներով, սակայն որպես արաբերենից փոխառյալ արական անձնանուն (ՀԱԲ, Բ, էջ 223):

²¹ Կազմվել է արաբական Ազիզ և սլավոնական -քո ծագմամբ բաղադրիչների համադրումով:

²² ՀԱԲ-ում՝ Գուլաֆ (ՀԱԲ, Ա, էջ 499), որից հեղինակը հարցականով բխեցնում է նաև իգական Կուլաֆչա անունը՝ կազմված նվազափաղաքական ձևությամբ (ՀԱԲ, Բ, էջ 679):

²³ Բէկ բաղադրիչով անձնանուններ գործածվել են նաև միջին լեհերենում. օրինակ՝ Alembek՝ հյ. Աշխարհբեկ (A. Cieślíkowa. Նշվ. հոդվ., էջ 99):

կայացնող՝

1. լեհերը կամ այլազգիները, ինչպես՝ Պրկոչ, Միխայլ, Միքոլայ, Սամույլա, Սավա, Սեպեդիան, Ադեցքո, Սոբոլ, Վոյթ, Տեչկո, Քրիթթոֆ, Քորոլ, Ֆիտրիխ, Ֆրանցքո և այլն, որոնք գերազանցապես հիշատակվում են անուն-հայրանունով կամ անուն-«մականունով»²⁴, ինչպես՝ Անտրիյ Նեզապիթովաքիյ, Անտրուչքո Քրուչենեա, Բանքո Մէյչէքո, Եան Միդրորկա, Եան Մնիխովըյ, Իււքոյ Վարդման, Մացէյ Քուսցիւսքիյ, Միքոլայ Պրիսքիյ, Վասիլիյ Վուլքուվաքիյ, Քիրքան Բոսֆիլիպաքիյ, Քրիթթոֆ Մաչինաքիյ:

2. «Ըոռուզ»-ները (ուկրաինացիներ), ինչպես՝ Անտուլի, Գարբ, Զախարքա, Թացէ, Ժլըքան, Իւան, Խոխուլքա, Հաննայ, Հարասիմ, Մազար, Վասքո, Ֆետոր և այլն, որոնց հետ տարբեր կապակցություններով երբեմն հիշատակվում է հայրանունը, հազվադեպ՝ պապի անունը: Հմմտ. Հրիցքո Քլիմովիչ և Բրոցիք՝ Ֆետորին որդին, Անդոն՝ Միւքոյին որդին, Վասքո՝ Միչքոյին որդին, Ֆետորն Խոխուլքային թորն:

Անդրադառնալով արձանագրություններում տեղ գտած անձնանունների կազմովյանը՝ պետք է կարևորել, որ՝

1. միջին շրջանի բնիկ հայերեն արական անձնանունները գերազանցապես բաղադրյալ են՝ կազմված տարբեր անուններում կրկնվող արմատներով (խաչ, վարդ, տօն), ինչպես՝ Խաչերես, Վարդերես, Վարդէջուր, Տօնական, Տօնավաք:

2. Գերազանցապես բաղադրյալ կազմովյուն ունեն նաև միջին շրջանի թուրք-թաթարական՝

ա) արական անձնանունները, որոնց բաղադրիչներից առաջինը օտար հատկանուն է, իսկ վերջինը՝ տիտղոս ցույց տվող պէկ/պէյ օտար հասարակ անուն՝ Եօլպէյ, Էսանպէյ, Յամանպէկ և այլն, որն անձնանունների հետ գործածվում է «տեր», «իշխան» նշանակությամբ²⁵:

բ) Իգական անձնանունների մի մասը, որոնցում բաղադրիչներից մեկը

²⁴ «Մականուն» բառը լեհահայոց շրջանում ունի մի քանի նշանակություն: Կարծում ենք՝ թիվ 22 արձանագրության մեջ (1572 թ.) այն գործածվել է որպես հայրանուն՝ Տիմադրէս..., որում մականունը հարոնն է: Նույն ժամանակաշրջանում՝ 1563–1564 թթ., մեկ այլ աղբյուրի (Ղ. Ալիչան. Կամենից. Տարեգիրք հայոց, Վենետիկ, 1896) մեջ մականունը բառը գործածվում է երկու նշանակությամբ. մի դեպքում (էջ 33)՝ մերօրյա ընկալմամբ. «... ընդ որս էր ոմն կրօնաւոր Յովանէս, զոր մականունն Ծուռգտակ (ընդգծումը մերն է. – Գ. Խ.)», մյուս դեպքում (էջ 35)՝ որպես նախնիների անուն՝ տոհմանուն՝ «բայց մականունն՝ այսինքն նախնեաց անունն (ընդգծումը մերն է. – Գ. Խ.) Ձեցենովաքիյ է»:

²⁵ Պէկ/պէյ բաղադրիչով կազմովյուններն այլ աղբյուրներում հանդիպում են նաև հարադիր գրություններում, ինչպես՝ Էսան պէյ: Իսկ ուսումնասիրվող այս աղբյուրում հիշյալ անձնանուններից երկուսի (Էսանպէյ, Դուկապէյ) առաջին բաղադրիչները գործածվել են նաև առանց պէկ/պէյ բաղադրիչի, դրանցից առաջինը հանդիպում է հայերեն մի արձանագրության մեջ (թիվ 538)՝ «Ի յայս առուր դատատանին առջեւն եկաւ Սաւայ Վոյթովիչ եւ ասաց. թէ վարձել էի զՊոպրիկն Էսանին որդին», իսկ երկրորդը՝ թիվ 28 արձանագրության հայատառ ղփչաղերեն տեքստում՝ «... պու խատար սպիտակնը մէնիմ օվումտան քիմքի պլիսքիյ չրխաս նա պու սումանը տօիդէդբայ Միխնոյկա Դուկալ եազրլկան ...»:

(կամ երկուսն էլ) տիտղոս, կարգավիճակ ցույց տվող օտար բառեր են (խան, խաթուն, մելիք/մէլիք), ինչպես՝ Խանմելիք, Աննախաթուն, Խախաթուն:

Վերջին երկու ենթախմբերում ընդգրկված բառերից առանձնանում են արական Շատպէյ ու իգական Աննախաթուն, Ճախաթուն անձնանունները, որոնք «Տիրբիդային բարդ անձնանուններ» են՝ «բնիկ Հայերեն և օտարազգի ու անհայտ ծագման բաղադրիչներով»²⁶:

3. Որպես ածանցավոր կազմություններ թվական գերակշռություն ունեն սլավոնական լեզուներում լայնորեն տարածում գտած -KO կամ -KA ձևույթներով ածանցված նորակազմությունները, որոնք արտահայտվել են Հայկական անձնանունների ուղիղ կամ դրանց կարճ տարբերակների և վերը նշված ածանցների համադրությամբ: Նվազափաղաքչական ու այլ նրբամաստներով օժտված այդ ձևույթներով մի շարք անձնանուններ էլ լեհահայերն անմիջականորեն փոխառել են սլավոնական լեզուներից: Նշված ձևույթների խոսկ Կ-ն հիշյալ տարածաշրջանի բարբառակիր լեհահայերի կողմից ենթարկվել է դիրքային հնչյունափոխության՝ որպես կանոն, վերածվելով շնչեղ ք-ի՝ արդյունքում ձևավորելով, համապատասխանաբար, -քո և -քա հնչյունափոխված ձևույթներ: Հմմտ., մի կողմից՝ փոխառյալ անձնանուններն ու դրանց ածանցավոր տարբերակները՝ Եօլօք-Եօլքո, Զախար-Զախարքա, Իւան-Իւաչքո, Խոխուկ-Խոխուկքա, Հանուկ-Հանուկքո, Հօլուկ-Հօլուկիքո, Միխնոյ-Միխնոյկա²⁸, Ռոման-Ռոմքա, Ռոմաչ-Ռոմաչքո, Վոյթ-Վոյթքոյ, Շիմոն-Շիմքոյ, մյուս կողմից՝ հայկական անձնանուններն ու դրանց ածանցավոր տարբերակները՝ Դախթ-Դաքո, Գրիգոր-Գրիքա-Բիրքա, Լէվոն-Լէվքո, Խանէչքո, Պիլաչ-Պիլաչքո և այլն: Հատկանշական է, օրինակ, որ Իւրիյ անձնանվան Իւրքո/Եւրքո ածանցավոր տարբերակներն այնքան են ընդունված ու տարածված, որ դրանց մի քանի տասնյակի հասնող գործածության դիմաց Իւրիյ սկզբնաձևը հանդիպում է ընդամենը չորս անգամ, և դա՝ միայն այն դեպքում, երբ հիշատակվում է միևնույն անձը, որն ազգությունով «հօրով» է:

Առանձնակի ուշադրության է արժանի այն փաստը, որ բացառիկ անձնանուններում -KO ձևույթի խոսկ Կ-ն վերածվում է ձայնեղ գ-ի, ինչպես՝ Հանուկ-Հանքո//Հանգո, Մելգո:

4. Հիշյալ ժամանակաշրջանի ածանցավոր նորակազմություններից են նաև -ուչ փոխառյալ ձևույթով մի շարք հայկական անձնանուններ, որոնցից առաջ, կարծում ենք, տարածված են եղել որոշ փոխառություններ՝ վերոնշյալ ածանցներով, ինչպես՝ Անտրուչ, Գաբրուչ//Քաբրուչ (համապատասխանաբար, Գաբրիել սկզբնաձևից)²⁹, Եօլուչ, Մարուչ, Նորին-Նորուչ,

²⁶ Գ. Զ ա հ ու կ յ ա ն. Բնիկ հայերեն արմատներով կազմված հայկական անձնանունները, էջ 37:

²⁷ Որոշ դեպքերում գործածվել են անձնանունների միայն ածանցավոր կազմությունները, ինչպես՝ Բաբուչքո, Բօնեճեպքո:

²⁸ Միխնոյկա տարբերակը հանդիպում է հայատառ ղփչաղերեն մի քարտեզում (մուրհապ), որտեղ գուգահեռաբար գործածվում է նաև Միխնոյ ձևը (թիվ 208 արձանագրություն):

²⁹ ՀԱԲ-ում չի հիշատակվում:

Տօնական-Տօնուշ, Տեմեան-Տեմուշ³⁰ և այլն:

Որոշ անձնանունների կազմությանը մասնակցում են վերը հիշատակված -քո/-քա և -ուշ ածանցները միաժամանակ՝ -ուշ+քո և ուշ+քա տարբերակներով Անտրուշքո, Տօլուշքա, որոնք նույնպես սլավոնական մշակույթի ազդեցություն են:

5. Մի շարք արձանագրություններում առկա են անձնանուններ՝ կազմված նվազափաղաքչական -իկ ձևությամբ՝ Զատիկ, Խաչիկ և այլն, որը հայերենին բնորոշ էր դեռևս հնագույն շրջանից³¹: Դրանց շարքում կան նաև ամբողջական հատկանունների կարճ տարբերակներ, ինչպես՝ Խոճա-Խոճիկ, Տօնական-Տօնիկ և այլն: Նմանատիպ կազմությամբ անձնանուններում արձանագրվել է -իկ վերջածանցի կ խուլ բաղաձայնի շնչեղացում (ք), ինչպես՝ Բահրիք, Բրօցիք, Ծերիք³², Պրաժնիք, Վարդիք³³, Քլուչնիք և այլն:

Հնչյունային և գրային զուգաձևությունների առումով հատկանշական է, որ՝

1. անձնանունների տարբեր դիրքերում հնչյունափոխվել են՝

1. մի շարք բաղաձայններ, որոնք անձնանունների տարատեսակ փոփոխությունների են ենթարկվել գերազանցապես եռաշարք, երբեմն՝ երկշարք բաղաձայնական համակարգի սահմաններում, ինչպես՝ Աղան³⁴ - Աթան, Անդրի-Անտրի, Անդրոնիկ-Անտրոնիկ, Բանոս-Փանոս, Գասպար-Գասփար, Դալիթ-Թալիթ, Թաթուլ-Դադուլ-Դատուլ, Թացե-Դացե, Կաթերի-նա-Գաթերինա, Զախո-Զախո, Ճալխաթուն-Ճալքադուն, Մակղա-Մակտա, Յակոբ-Հակոբ-Ակոբ-Յակովբ, Պաղէյ-Պաթէյ, Պոպրիկ-Պոպրիք, Պուխտանով-Պուհտանով, Բօս-դա-Գօսդա այլն:

Արձանագրվել է դ և տ բաղաձայնների քմայնացում-փափկացում, որը սլավոնական լեզուներին բնորոշ հատկանիշներից մեկն է և իր ազդեցությունն է թողել կամենիցահայության խոսակցական լեզվի վրա՝ վկայվելով նաև գրավոր խոսքում: Այսպես՝ լեհերեն (այսուհետ՝ լեհ.) Радзишовский-ն, որի՝ и ձայնավորին նախորդած д ձայնեղը լեհ լեզվակիրները հավանաբար արտաբերում էին քմայնացնելով Радзишовский, արձանագրություններից մեկում հայերեն վկայվել է ոչ թե Ռադիշովսկիյ,

³⁰ Հմմտ. լեհ. Damian, հյ. Տեմեան-Տեմուշ, ռուսերեն. Демьян-Демьянушка-Демюшка և այլն:

³¹ Օրինակ՝ Աստղիկ, Եզնիկ, Զուրիկ, Շուշանիկ և այլն:

³² ՀԱԲ-ում բերվում է Ծերիկ՝ հիշատակված 1628 թ. (ՀԱԲ, Բ, էջ 569): Տե՛ս նաև Գ. Զահոուկյան. Բնիկ հայերեն արձանագրություններում կազմված հայկական անձնանունները, էջ 39: Արձանագրություններում Ծերիք-ը, որը նույն Ծերիկ-ի հնչյունափոխված տարբերակն է, հիշատակվել է 1575 թ.:

³³ Խաչիկ-Խաչքո զարգացման մեջ տեղի է ունենում երկու կարգի հնչյունափոխություն. ա) ի-ն, շեշտակորույս լինելով, սղվում է, բ) կ-ն, կախված դիրքից, շնչեղանում է: Այսպես նաև՝ Վարդիկ-Վարդքո:

³⁴ Աղան տարբերակը ՀԱԲ-ում բացակայում է, սակայն Աթանէս բառահոգիվածում, հիշատակվում է Աթան կարճ տարբերակը՝ վկայված 1680 թ. (ՀԱԲ, Ա, էջ 67): Արձանագրություններում հանդիպում է Աղան և Աթան տարբերակներով (երկուսն էլ տարբեր արձանագրություններում). մի քանի անգամ հիշատակվել են՝ սկսած 1572 թ.:

այլ Ռածիշովսքիյ տարբերակով. դատարանի քարտուղարն այն գրառել է այնպես, ինչպես լսել է՝ հավատարիմ մնալով նաև լեհահայոց խոսվածքին բնորոշ ձ>ծ հնչյունափոխությունները: Այս նույն «օրինաչափություն» սահմաններում T խուլ բաղաձայնն է ենթարկվել ձ>ց հնչյունափոխության, համաձայն որի՝ Тепловский-ն հիշատակվում է Յեփլովսքիյ հնչյունափոխված ձևով, Шляхтина-ն՝ Շլախցինայ, իսկ Шляхтинский-ն՝ Շլախցինսքիյ ձևով:

1. 2. Որոշ ձայնավորներ և երկբարբառներ: Հմմտ. Ագսէնդ-Օգսէնդ, Ազիլգըռ-Այիլգըռ, Անդրեաս-Անդրիաս, Եօլմէլիք-Եօլմելիք, Եղիաբեթ-Ախսաբեթ, Իւան-Իւոն, Կիւրեղ-Կուրեղ, Կրիկոր-Կրէկոր, Հրիհոր-Հրեհոր, Մաթսին-Մաթըսին³⁵, Նորսէս-Նէրսէս, Շըմքոյին-Շիմքոյին, Պիլիյին-Պիլլիյին, Պոհտան-Պահտան, Տօ-նավաք-Տօնօվաք, Ֆետոր-Ֆետօր և այլն:

1. 3. Աչքի է գարնում այն փաստը, որ հին և միջին շրջանների համահայկական անձնանուններից քչերն են հիշատակվում իրենց սկզբնական կազմով՝ ինչը վկայում է խոսակցական լեզվի գերակայության մասին նույնիսկ պաշտոնական գրավոր խոսքում: Այսպես՝

1. 3. 1. մի դեպքում տեղ են գտել թե՛ ելակետային ձևեր, թե՛ մեկ կամ մի քանի անփոխված տարբերակներ: Օրինակ՝ Անդրեյ անձնանունը հանդիպում է նաև Անդո-Անդրէ-Անդրուխ-Անդրուչ-Անդրուչքո տարբերակներով, Յովհաննէս-ը՝ Յովհաննէս-Յոհաննէս-Հանէս-Յոհան-Ոհան, Գրիգոր-ը՝ Գրիգորէց-Գրիքա-Հրիհոր, Հանուս-ը՝ Հանքո-Հանգո, Թադէոս-ը՝ Թաթոս-Դադոց, Վասիլիյ-ն՝ Վասիլ-Վասքո տարբերակներով,

1. 3. 2. մյուս դեպքում որևէ արձանագրության մեջ չգործածված սկզբնաձևերի փոխարեն հիշատակվել են դրանց ժողովրդախոսակցական տարբերակները միայն, որոնք ենթարկվել են ոչ միայն կառուցվածքային, այլև հնչյունական անմիօրինակ փոփոխությունների: Հմմտ., համապատասխանաբար, չգործածված Աթանէս, Աստուածատուր, Գէորգ, Թէոդորոս, Հայրապետ, Նիկողայոս սկզբնաձևերը և արձանագրություններում տեղ գտած Ադան-Աթան, Ասվատուր, Գէոր, Թորոս, Հարապետ-Հարպետ, Նիկօլ կարճ տարբերակները: Ավելին՝ հիշատակվել են միևնույն անձնանվան երկուսից ավելի զուգաձևություններ՝ բաղաձայնների ու ձայնավորների խոսակցական լեզվի կնիքը կրող տարատեսակ փոփոխություններով, ինչպես՝ Գաբրուչ-Գաբրուս-Գաբրոս-Գաբուու-Գափրուս-Գաբրուչ-Քրբրուչ³⁶, Գումբէլ-Բամփէլ-Գումփէլ, Մաթիյ-Մադիյ-Մադէյ, Ռոմա-Ռոմաչ-Ռոմաչքո-Ռոմաչքո-Լոմաչքո, Փրօքօբ-Բրօքօբ-Բրօքօբ:

Հետաքրքրական է, որ, լինելով պաշտոնական վավերաթղթեր, արձանագրություններում միևնույն անձը երբեմն հիշատակվում է անվան տարբերակներով, ինչը հանդիպում է անգամ նույն վավերաթղթում: Այսպես՝ 395 թվակիր արձանագրության մեջ դատարանի քարտուղարը ոմն Նանեչքոյի հանգուցյալ ամուսնու անունը հիշատակում է Գրիգորեց ձևով, սակայն արձանագրությանը կցված հայատառ ղփչաղերենով պարտամուրհակի մեջ հիշյալ Գրիգորեցը կենդանության օրոք հիշա-

³⁵ Մաթէոս-ի կարճ ձևի (Մաթոս//Մաթուս) տրականն է, ինչի մասին վկայում է Մաթըսին տարբերակը:

³⁶ Հմմտ. լեհ. Gabrysz, Gabryś.

տակվել է նաև Գրիգոր տարբերակով. «Մէն Գրիգոր Սովունչ օղլու գամ-էնէցլի ...» (Ես՝ Գրիգոր՝ Սովունչի որդի, կամենեցացի ...): Տրդատ Հանրահայտ անձնանունը թիվ 459 արձանագրության մեջ գործածվել է չորս անգամ, որոնցից ոչ մեկը սկզբնաձևին չի համապատասխանում՝ Տրդաթ-Դրդաթ-Դրդատ-Դրդադ: Անդրէաս անձնանունը թիվ 170 արձանագրության մեջ ունի երեք տարբերակ՝ որոնցից ոչ մեկը սկզբնաձևին չի համապատասխանում՝ Անդրեաս-Անդրիաս-Անտրիաս: Վասիլ անձնանունը թիվ 563 արձանագրության մեջ ունի նաև Վասքո, Ամանպեկ-ը թիվ 561 արձանագրության մեջ՝ Յամանպեկ տարբերակը և այլն:

Միևնույն անձի անվան տարբերակները հիշատակվում է նաև տարբեր արձանագրություններում: Այսպես՝ Ոմն Խաչքոյի հոր անունը (Հովսեփ) տարբեր արձանագրություններում հանդիպում է մեկական անգամ՝ Ովսէփ-Ուսէփ զուգաձևություններ և այլն: Այսպես նաև՝ Բավել-Բավլէ, Էտիլպէյ-Էտիլ, Խանմելիք-Խանու, Միխայլ-Միխնո, Ուլուխոճա-Խոճա և այլն:

1. 4. Զուգաձևության յուրատեսակ դրսևորում (այսպես կոչված, անձնանունային համարժեքություն) կարելի է համարել արձանագրություններում հիշատակված որոշ անձնանունների հայկական և սլավոնական տարբերակները: Ընդ որում, կան դեպքեր, երբ այդ նույն տարբերակներով անձն է անվանվում: Այսպես՝ հայկական դատարանի նույն դատավորը բազմաթիվ դեպքերում հիշատակվում է Սէրհիյ Իւաչքո, երբեմն՝ Սարգիս Իւաչքո անուն-հայրանունով: Ավելին՝ Սէրհիյ է անվանվում մեկ այլ դատավոր նույնպես՝ Սարգիս Զախնոյին, սակայն ընդամենը մեկ անգամ (թիվ 488 արձանագրություն): Ասվածը նշանակում է, որ վերոհիշյալ անձնանվան հայկական (Սարգիս) և սլավոնական (Սէրհիյ) համարժեքները տվյալ բառային անփոփոխակի երկու փոփոխակներն են՝ տարբեր լեզուներով: Հմմտ. նաև Սարգիսն մուսթիք-Սէրհիյն մուսթիք (թիվ 603 և 493 արձանագրություններ), Գրիգոր-Գրիգորէց (թիվ 395 արձանագրություն) և այլ համարժեքներ³⁷: Ակնհայտ է միջմշակութային փոխազդեցությունը: Լինելով միևնույն հավատակիրները՝ Կամենիցի երեք համայնքն էլ՝ ա) մի դեպքում գործածում են այնպիսի անձնանուններ, որոնք միևնույն իրողությունը նշանակող յուրօրինակ համանիշներ են, ինչպես լեհահայերեն (այսուհետ՝ Հյ.) Զատիկ և լեհ. Պասքա (Pascha) արական անունները, բ) մյուս դեպքում միևնույն աղբյուրներից փոխառում են անձնանուններ՝ յուրաքանչյուրն իր հնչյունական համակարգով, արտասանական բազայով և այլ գործոններով պայմանավորված: Այդպիսիք են աստվածաշնչյան անունները՝ լեհահայոց խոսվածքին բնորոշ ուղղագրություններ: Հմմտ. Հյ. Յակոբ-Ակոբ-Յակովբ և լեհ. Եագուբ-Եագուպ, Հյ. Սիմոն ու լեհ. Շիմոն, Հյ. Մաթէոս-Մաթոս և լեհ. Մատվեյ-Մադիյ, Հյ. Աբրահամ ու լեհ. Ավրամ արական անձնանունները:

1. 5. Արձանագրություններում նկատելիորեն հաճախադեպ են ուղղագրական զուգաձևությունները՝

³⁷ Օտար, հատկապես, անսովոր հնչյունական կազմով և, բնական է, դժվար արտասանություններ անձնանունների փոխարեն դրանց կրողներին սլավոնական արտասանություններով մոտ անձնանուններով կոչելու սովորությունը մասնավորապես ռուսական միջավայրին բնորոշ է առայսօր:

1. 5. 1. միևնույն կամ տարբեր արձանագրություններում, ինչպես՝ Աննախաթուն-Աննա Խաղուն, Խաչերես-Խաչէրէս, Սալա-Սաւա, Իւրքո-Եւրքո, Կոկո-Կօկո, Թարգոչ-Թագորչ, Սարգուլա-Սաքուլա,

1. 5. 2. որոշ անձնանունների քերականական ձևերում, հմմտ. Աֆէնտի-քա՝ Աֆէնտիքին-Աֆէնտիքային, Վարդան Մղտեսուն-Մղտեսին, Բանդէն (փխ.՝ Բանդեան),

1. 5. 3. միջձայնավորային տարածքում՝ յ ձայնակապ գրել-չգրելու հետ կապված, որտեղ, ի դեպ, նկատվում է կատարյալ անհետևողականություն: Հմմտ. Սամուլաին-Սամուկային, Իւր-քոյին-Իւրքոյին, Խաչքոյին-Խաչքոյին, Հանուքային-Հանուքոյին, Մաշաին-Մաշային, Մղտեսին-Ռիթքիյին, Նազուլին-Նազուլին, Բանդէյին-Բավլէյին//Բեդրէյին և այլն:

Արձանագրություններում զուգաձևությունների հաճախակիությունը բերում է այն հետևություն, որ միևնույն կամ տարբեր վավերաթղթերում հանդիպող լեզվական փաստերը վկայում են դատարանի քարտուղարի՝³⁸ անհետևողականության կամ էլ դատարանի քարտուղարի և դատական գործընթացում ընդգրկված(ներ)ի տարբեր բարբառակիրներ, երբեմն՝ տարբեր լեզվակիրներ լինելու մասին:

Ամփոփենք. Կամենից (Կամենեց-Պոդոլսկ) քաղաքի հայկական համայնքի դատարանի դատական նիստերի հայերեն արձանագրություններում (1559–1575 թթ.) տեղ են գտել բազմաթիվ անձնանուններ, որոնք ծագումնաբանորեն, ժամանակագրորեն, գործածության հաճախականությամբ և այլ առումներով ներկայացնում են տարբեր շերտեր: Բանն այն է՝ Ռեչ Պոսպոլիտայի տարածքում գտնվող լեհահայոց գաղութն անվանակոչության հարցում հանդես է բերում անմիօրինակ մոտեցում. փորձելով պահպանել հայրենիքում շրջանառվող հին և միջին շրջանների անձնանունները՝ գաղթավայրում փոխառում է նոր անձնանուններ:

Արձանագրություններն ամբողջությամբ շարադրված են հնչյունային ուղղագրությամբ (գրությունը համապատասխանում է արտասանությանը), որին զուգահեռ առկա են նաև ավանդական ու ձևաբանական ուղղագրության տարրեր: Հնչյունական ուղղագրության են ենթարկվել ոչ միայն հայերեն, այլև փոխառյալ բառերը, որոնց թվում՝ դատարարավարական եզրույթներն ու անձնանունները: Մասնավորապես, համահայկական տարածում ունեցող (գործածվում էին և՛ Հայաստանում, և՛ գաղթօջախներում) անձնանուններից քչերն են պահպանել սկզբնական հնչյունական կազմն ու ուղղագրությունը, մինչդեռ մեծ թիվ են կազմում նրանք, որոնք հիշատակվել են բարբառային և/կամ խոսակցական տարբերակ(ներ)ով՝ ենթարկվելով ոչ միայն հնչյունական, այլև կառուցվածքային անմիօրինակ փոփոխությունների՝ վերջին դեպքում կրելով նաև օտար միջավայրի ազդեցությունը: Թվական գերակշռություն ունեն սլավոնական լեզուներին բնորոշ ածանցավոր նորակազմությունները: Բարբառակիր տարագիրների կողմից հնչյունական,

³⁸ Անշուշտ, այս դեպքում դատարանի տարբեր քարտուղարների և նրանց տարբեր բարբառակիրներ լինելու վարկածները բացառվում են, քանի որ 1560–1605 թթ. արձանագրությունների հեղինակը միևնույն անձնավորությունն է՝ «Կամինիցի ավագերեց տեր Հովհաննեսը, որ մահացել է 1610 թ. 84 տարեկան հասակում» (Արձանագրություններ, էջ 20):

մասամբ նաև՝ կառուցվածքային փոփոխությունների են ենթարկվել նաև լեհական, ուկրաինական և վերջիններիս միջոցով փոխառյալ գրեթե բոլոր անձնանունները:

Արձանագրություններում հաճախադեպ են հին շրջանից (V դ. վերջերից մինչև XI դ.) վկայված և համահայկական տարածում ունեցող արական անձնանունները, որոնք, բացառությամբ բնիկ հայկական մի քանի անունների, գերազանցապես աստվածաշնչյան ու հունական, մասամբ՝ իրանական փոխառություններ են: Առանձին խումբ են միջին շրջանում (XII–XVI դդ.) շրջանառված համահայկական անձնանունները, որոնց մի մասը հայկական ծագում ունի, մյուսները՝ արաբական և թուրք-թաթարական փոխառություններ են (հայկական գաղութի համար՝ մեծամասամբ անմիջական փոխառություններ, որոնք ժամանակին կատարվել են մայր երկրում կամ գաղթի շրջանում):

Արձանագրություններում մեծաթիվ են սլավոնական (լեհական և ուկրաինական) ծագման արական ու իգական անձնանունները, որոնցով հիշատակվում են Կամենիցի հիշյալ համայնքների ներկայացուցիչները: Թեև լեհահայերը նշված շրջանում հիմնականում անվանակոչում են հին և միջին շրջանների բնիկ հայկական անձնանուններով, այնուամենայնիվ տեղ են տվել նաև սահմանափակ թվով արաբական, թուրք-թաթարական ու սլավոնական անձնանունների: Վերջիններս, սակավաթիվ լինելով հանդերձ, վկայում են հայ-սլավոնական մշակութային փոխադրեցությունների մասին և լեզվական խոստեն փաստեր են լեհահայերի առնվազն երեք սերունդների՝ անվանակոչության հարցում հանդես բերած մոտեցումների փոփոխության, որի հետևանքով լեհահայոց գաղութում հետագայում սահմանափակվում, ապա դադարում է հայկական անձնանունների շրջանառությունը տեղը գիջելով սլավոնականներին:

Գուրգեն Խաչատրյան – բ. գ. դ., պրոֆ., Վանաձորի Հովհ. Թումանյանի անվ. պետական համալսարանի հայոց լեզվի ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ հայոց լեզվի պատմություն, ժամանակակից հայերենի շարահյուսություն: Հեղինակ է 5 մենագրության և շուրջ 100 հոդվածի: gxachatryan@yahoo.com

REFERENCES

- Ajaryan H. Knnutiun Artiali barbari, Yerevan, 1953 (In Armenian).
 Ajaryan H. Hayots andznanunneri bararan, h. A–E, Yerevan, 1942–1962 (In Armenian).
 Avetisyan T. Haykakan azganun, Yerevan, 1987 (In Armenian).
 Avetisyan T. Hayots azganunneri bararan, Yerevan, 2000 (In Armenian).
 Alishan Gh. Kamenits, Taregirq hayots, Venetik, 1896 (In Armenian).
 Barkhudaryan H. Arhest, zbaghmunk, masnagitutyun imastayin himkerov haykakan azganunner (b.g.t. aten. seghmagir), Yerevan, 2009 (In Armenian).
 Barseghyan H. Hatuk anun, Yerevan, 1964 (In Armenian).
 Cieślíkowa A. Antroponimia Polski od XVI do końca XVIII w.– “LingVaria”, Rok I, 2006, № 1.

Dilbaryan N. Andznanunnerits kazmvads teghanunneri imastabanakan dashte.– “Banber Yerevani hamalsarani”, 2003, tiv 1 (In Armenian).

Djahukyan G. Movses Khorenatsu “Hayots patmutyan” aragin grki andznanunneri lezvakan aghbyurnere. – PBH, 1981, № 3 (In Armenian).

Djahukyan G. Bnik hayeren armatnerov kazmvads haykakan andznanunnere.– PBH, 1984, № 4 (In Armenian).

Grigoryan V. R. Ardzanagrutyunner, Yerevan, 1963 (In Armenian).

Narutyunyan H. Teghanvanakan himkerov haykakan azganunner (b.g.t. aten. seghmagir), Yerevan, 2009 (In Armenian).

Kamenets-Podolsk kaghaki haykakan datarani ardzanagrutyunnere (XVI d.)` ashkhatasirutyamb V. R. Grigoryani, Yerevan, 1963 (In Armenian).

Nalbandyan G. Armyanskie lichniye imena iranskogo proickhozhdeniya (kul’turno-istoricheskoye, etimologicheskoe issledovaniye), (avtoreferat dokt. dissert. filol. nauk), Tbilisi, 1971 (In Russian).

ЛИЧНЫЕ ИМЕНА В АРМЯНСКИХ СУДЕБНЫХ ПРОТОКОЛАХ КАМЕНИЦИ (XVI в.)

ГУРГЕН ХАЧАТРЯН

Резюме

Ключевые слова: Каменица, армянская колония, армянские судебные протоколы, антропоним, древний период, средний период, исконно армянские личные имена, заимствования, фонетические чередования, польский язык, польские армяне, мужское имя, женское имя.

В протоколах судебных заседаний армянской общины Каменицы (ныне – Каменец-Подольск) 1559–1579 годов упоминаются многочисленные личные имена, которые весьма разнятся как с точки зрения происхождения и частотности употребления, так и отражения в них той или иной исторической эпохи. В этих протоколах нередко упоминаются зафиксированные еще в древний период (с V по XI вв.) и имеющие общеармянское распространение мужские личные имена, которые, исключая исконно армянские по происхождению имена, восходят к библейскому или греческому, частично персидскому источнику и являются заимствованиями. Отдельную группу составляют имеющие распространение в XII–XVI вв. общеармянские антропонимы, часть из которых исконно армянские, а другая – арабские или татаро-турецкие заимствования, которые имели место в языке еще на родине или в период миграций. Хотя в то время в среде польских армян было принято нарекать типично армянскими именами, характерными для древнего и среднего периодов, все же употребляются также имена славянского происхождения. Последние, несмотря на весьма ограниченное число, свидетельствуют об армяно-славянских культурных контактах и являются красноречивым фактом для, по крайней мере,

трех поколений армянских переселенцев, говорящем об изменении подходов при наречении именем.

Гурген Хачатрян – д. филол. н., проф., заведующий кафедрой армянского языка Ванадзорского государственного университета им. Ов. Туманяна. Научные интересы: история армянского языка, синтаксис современного армянского языка. Автор 5 монографий и около 100 статей. gxachatryan@yahoo.com

PERSONAL NAMES IN ARMENIAN COURT RECORDS OF KAMENETS (16th c.)

GURGEN KHACHATRYAN

Summary

Key words: Kamenets, Armenian colony, Armenian court records, anthroponyms, old period, middle period, original Armenian personal names, borrowings, phonological alternations, Polish, Polish Armenians, male name, female name.

In the minutes of the court hearings held by the Armenian Community of Kamenets (now Kamenets-Podolsk) of 1559–1575, numerous personal names are mentioned that vary greatly in terms of both the origin and frequency of use, and the reflection of a particular historical era in them. In these protocols of rather frequent occurrence are common Armenian male names recorded still in the old period (from the 5th to the 11th centuries), which, with the exception of some originally native Armenian names, are primarily Biblical and Greek names and partially of Iranian origin presenting borrowings. Common Armenian anthroponyms widely used in the Middle Ages (12th–16th cc.) make a separate group, a part of which are of Armenian origin, the others are Arabic and Turkish-Tatar borrowings made in the language still at homeland or during the period of migration. Although at that time it was customary among the Polish Armenians to call typical Armenian names characteristic of the old and middle periods, names of Slavic origin were also used. The latter, despite a very limited number, testify to Armenian-Slavic cultural contacts and are an eloquent fact for at least three generations of Armenian immigrants, talking about a change in approach when giving a name.

Gurgen Khachatryan – Doctor of Sciences in Philology, Prof., Head of the Chair of Armenian Language at Vanadzor State University after Hovh. Tumanyan. Scientific interests: History of the Armenian Language, Syntax of Modern Armenian. Author of 5 monographs and over 100 articles. gxachatryan@yahoo.com

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԴՐԱԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ
ՀԱՅՈՑ ՏՈՆԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ *

ԳՈՀԱՐ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

Բանալի բառեր՝ տոն, ժողովրդական քրիստոնեություն, ազգային-եկեղեցական տոներ, տոնացույց, տոնահանդեսային մշակույթ, հեթանոսական, Հայկյան տոմար, Հայ Առաքելական Եկեղեցի, տաճար, ծես, արարողություն:

Ազգաբանության մեջ վերջին ժամանակներս ավելի ու ավելի հաճախակի հանդիպող «ժողովրդական քրիստոնեություն» հասկացությունը, զանազան կողմերից լուսաբանվելով, աստիճանաբար իր կայուն տեղն է զբաղեցնում գիտական գրականության մեջ՝ ընկալվելով որպես ժողովրդական կրոնի ճյուղերից մեկը:

Անցյալ դարասկզբին լյութերական քարոզիչ Պաուլ Դրյուսի առաջադրած religiöse Volkskund եզրույթը սկզբնապես արտացոլել է պաշտոնական կրոնի մեջ ժողովրդական մշակույթի տարրերը կամ ժողովրդական մշակույթում՝ կրոնականի: Հետագայում տարբեր մեկնաբանությունների (նաև՝ քննադատության) արժանանալով՝ ժողովրդական կրոնը նորանոր իմաստներ է ստացել և կիրառվել քրիստոնեության, իսլամի, հրեից, հնդուական, չինական ու շատ այլ կրոնների առնչությամբ: Քրիստոնեության մեջ այն ունի տարատեսակներ՝ ժողովրդական կաթոլիկություն, ժողովրդական ուղղափառություն, որոնցից յուրաքանչյուրը հանդես է գալիս իր բազմազան դրսևորումներով¹:

Հայագիտության մեջ խնդրո առարկային առավել հանգամանալից անդրադարձել է Արծրունի Սահակյանը, ով «ժողովրդական քրիստոնեության դրսևորումները միջնադարյան Հայաստանում» մենագրությամբ

* Ներկայացվել է 04. II. 2020 թ., գրախոսվել է 17. II. 2020 թ., ընդունվել է տպագրության 24. II. 2020 թ.:

¹ S e u D. Y o d e r. Toward a Definition of Folk Religion.– “Western Folklore”, 1974, 33 (1), pp. 1–15; J. B o w k e r. Folk Religion.– The Concise Oxford Dictionary of World Religions. Oxford University Press, 2003 (2000); J. A. K a p a l ó. Folk Religion in Discourse and Practice.– “Journal of Ethnology and Folkloristics”, 2013, 1 (1), pp. 3–18; A. A. П а н ч е н к о. Исследования в области народного православия: Деревенские святыни Северо-Запада России. СПб., 1998; Y u. A n t o n y a n. Religiosity and Religious Identity in Armenia: Some Current Models and Developments.– Acta Ethnographica Hungarica, 2011, 56 (2), pp. 315–332. И. Л е в и н. Двоеверие и народная религия в истории России (пер. с англ. А. Л. Топоркова и З. Н. Исидоровой). М., 2004.

յան մեջ այն բնութագրում է որպես ժողովրդի կողմից պարզեցված, մարդ-աստված անմիջական հարաբերությունների միջոց. «Պարզեցվում էր նախ և առաջ նոր կրոնի գաղափարախոսական հիմքը կազմող առասպելաբանությունը, դուրս են մնում բազմաթիվ երկրորդական հերոսներն ու միջադեպերը»²: Հեղինակը կարծում է, որ «հայ ժողովրդական քրիստոնեության ամենաառանձնահատուկ կողմը ժողովրդական խաչապաշտությունն է, որը միջնադարում եղել է մի ամբողջական գաղափարական և կրոնահայեցողական համակարգ»³:

Ժողովրդական քրիստոնեության մասնավոր օրինակների են նվիրված ազգագրագետների որոշ հոդվածներ⁴:

Սույն հոդվածում դիտարկելու ենք ժողովրդական քրիստոնեության երևույթը հայերիս տոնական կյանքում պահպանված սովորույթների, ծեսերի, պատկերացումների համատեքստում, որոնք հեթանոս ժամանակներից ժառանգված վերապրուկներին միաձույլ են ներկայանում՝ ազգային ավանդութակարգի զգալի մաս կազմելով: Բայց նախքան դրանց լուսաբանմանն անցնելը, տեսնենք, թե ինչ է տոնն առհասարակ, որքանով է կարևոր հասարակության համար, ինչու է բոլոր ժամանակներում զգալի դեր կատարել և հիմա էլ կատարում աշխարհի ժողովուրդների, այդ թվում՝ հայերիս կյանքում ու կենցաղում:

Տարբեր ժողովուրդների տոներին ու դրանց հետ կապված ծեսերին, սովորույթներին, հավատալիքներին և բազում այլ մանրամասների անդրադարձել են մի շարք ազգագրագետներ, պատմաբաններ, դիցաբանություն ու կրոնի հարցերով զբաղվող մասնագետներ: Նրանց հետազոտություններից ակնհայտ է, որ տոնը հոգևոր մշակույթի հնագույն ոլորտներից է, հասարակության կողմից սահմանված և օրացույցում ամրագրված միջոցառում՝ նվիրված նշանակալի կամ սրբազնացված որևէ իրադարձության կամ անձի հիշատակմանը: Նշվում է տվյալ հանրության ավանդույթներին համապատասխան եղանակով, և տոնակատարության ընթացքում տեղի է ունենում մարդու աշխարհիկ ու հոգևոր բնույթների անմիջական շփում, ինչը օգնում է կանոնակարգել կյանքի ամենօրյա ընթացքը⁵:

² Ա. Սահակյան. Ժողովրդական քրիստոնեության դրսևորումները միջնադարյան Հայաստանում, Երևան, 2014, էջ 5:

³ Նույն տեղում, էջ 234:

⁴ Տե՛ս Կ. Բագեյան, Գր. Աղանյան. Ժողովրդական քրիստոնեության դրսևորումները գյուղերիցիների տոնածիսական վարքում. – «Գիտական աշխատություններ», ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2014, № 14, էջ 80–86, L. Abrahamyan, Z. Hambardzumyan, G. Shagoyan, G. Stepanyan. The Chain of Seven Pilgrimages in Kotayk, Armenia: Between Folk and Official Christianity. – Sacred Places, Emerging Spaces Religious Pluralism in the Post-Soviet Caucasus. New York, Oxford, 2018, pp. 70–96.

⁵ Տոների և ծեսերի մասին հարուստ գրականությունից տե՛ս В. Н. Топоров. Праздник. – Мифы народов мира (այսուհետև՝ МНМ), т. 2. М., 1982, с. 329–331; Календарные обычаи и обряды народов Зарубежной Европы. М.,

Հայագիտության մեջ նույնպես քիչ չեն ուսումնասիրությունները, որոնցում լուսաբանվում է տոնի բազմաբնույթ էությունը: Ուշադրության արժանի է եկեղեցական տոնի բնութագրումն Արտակ արքեպիսկոպոս Մանուկյանի կողմից. «Տօն նշանակում է հանդիսաւոր հանգիստ ու ազատ օր: Հանգիստ՝ առօրեայ գրադումներից, աշխատանքից. ազատ օր՝ ծառայելու և նուիրուելու համար օրուայ խորհրդին, Աստծու փառաբանութեան և կրօնական պաշտամունքին»⁶: Եվ սա պատահական բնութագիր չէ, քանզի դարեր շարունակ քրիստոնյա հայերիս հասարակական-մշակութային կյանքի կարևոր մաս են կազմել ազգային-եկեղեցական տոները, որոնք հավատավոր ժողովուրդը նշել և հիմա էլ նշում է Հայ Առաքելական Եկեղեցու հովանու ներքո:

Հրանուշ Խառատյան-Առաքելյանը Հայ ժողովրդական տոներին նվիրված իր աշխատության մեջ գրում է. «Քրիստոնեության ընդունումից հետո, ինչպես աշխարհի շատ ժողովուրդների մոտ, հայ ժողովրդի ավանդական տոնացույցը ևս վերածվեց քրիստոնեական աշխարհայացքի և համակարգված օրացույցի կադապարով և այդ կերպ գոյատևեց ավելի քան մեկուկես հազարամյակ: Այսօրվա եկեղեցական տոնացույցն անվանապես արտացոլում է այդ մեկուկես հազարամյակի ընթացքում մեր ժողովրդի կենցաղում լիարյուն կյանքով ապրած բուն ժողովրդական և եկեղեցական տոների ամբողջությունը»⁷: Հեղինակը կարծում է, որ «տոների մեջ ամբողջացել, ընդհանրացել, նույնացել են ժողովրդականն ու եկեղեցականը: Ժողովրդականը հաճախ դարձել է եկեղեցական և ընդունվել եկեղեցու կողմից, եկեղեցական-քրիստոնեականն էլ իր հերթին դուրս է եկել եկեղեցու պատերից և դարձել ժողովրդի կենցաղի անբաժանելի մասը», այդ իսկ պատճառով էլ ժողովրդական տոները «լիիրավ կարող են կոչվել ազգային-եկեղեցական»⁸:

Անժխտելի է, որ հայոց տոնահանդեսներում, եկեղեցական արարողակարգից զատ, պահպանվել են հնամենի շատ սովորույթներ, ծեսեր, պատկերացումներ, որոնք ժամանակի հոլովույթում կենսունակ են գտնվել և, ժողովրդի ավանդապահության շնորհիվ, արմատավորվել կենցաղում: Պատմությունից հայտնի է, որ քրիստոնեության տարածման սկզբնական փուլում նոր հավատքի տաճարները կառուցվում էին

1973, 1977, 1978, 1983; Календарные обычаи и обряды народов Западной Азии. М., 1997; Календарные обычаи и обряды народов Восточной Азии. М., 1985; С. В е l l. Ritual Theory, Ritual Practice. New York, 1992; J. G. Frazer. The Golden Bough: A Study of Magic and Religion (a new abridgement). Oxford University Press, 1998; Л. А. А б р а м я н. Первобытный праздник и мифология. Ереван, 1983; С. А. А р у т ю н о в, С. И. Р ы ж а к о в а. Культурная антропология. М., 2004.

⁶ Ա. արքեպ. Մանուկեան. Հայ եկեղեցու տօները, Թեհրան, 1969, էջ 5:

⁷ Հր. Խառատյան-Առաքելյան. Հայ ժողովրդական տոները, Երևան, 2005, էջ 7:

⁸ Նույն տեղում, էջ 8: Տե՛ս նաև Հր. Խառատյան. Տոնը և տոնահանդեսի մշակույթը Հայաստանում, Երևան, 2010, էջ 3–7:

Հին՝ հեթանոսական մեհյանների ու այլ սրբարանների տեղում, հաճախ՝ նույն քարերով, և քրմերից ոմանք էլ դառնում էին եկեղեցու սպասավորներ: Ագաթանգեղոսը, որի «Պատմութիւն Հայոց»-ն ամբողջութեամբ նվիրված է Հայոց դարձի նկարագրութեանը, այս մասին գրում է գրեթե յուրաքանչյուր հեթանոսական մեհյանն ավերելու տեսարանը նկարագրելիս⁹: Իսկ երբ Գրիգոր Լուսավորչի և Տրդատ Գ-ի կողմից ձևավորվում էր նոր տոնացույցը, հնուց եկող շատ ավանդույթներ հարմարեցվեցին նոր կրոնին¹⁰, ինչն արվում էր, որպեսզի վերջինս արագ տարածվի ոչ միայն նորակազմ հոգևոր դասի շրջանում, այլև՝ ժողովրդական զանգվածների մեջ: Եվ քրիստոնեական տոների մեծ մասի նախատիպերը կարելի է գտնել հեթանոսական ծիսասովորութային համակարգում, որը մեծ ազդեցություն է գործել ինչպես ժողովրդական, այնպես էլ եկեղեցական տոնացույցի վրա: Արդյունքում՝ ձևավորվել է ազգային-եկեղեցական մի ուրույն տոնակարգ, որն ավելի քան 1700 տարի բավարարում է հանրութեան զգալի մասի հոգևոր պահանջները:

Վերը հիշատակված Ա. արքեպ. Մանուկյանն այս կապակցությամբ գրում է. «Տօնական օրերի հանդիսութիւնների մէջ, բացի եկեղեցական արարողութիւններից, իրենց գոյութիւնն են պահել ժողովրդական որոշ սովորոյթներ և հեթանոսական շրջանից մնացած կրօնական ու ազգային ավանդութիւններ. յաճախ հեթանոսական ազգային սովորոյթները և քրիստոնէական տօները միասնաբար ընդելուզուած ներկայանում են եկեղեցում և ժողովրդի բարեպաշտական զգացումների մէջ: ... Դժբախտաբար, հեթանոսական շրջանից մնացած ազգային ավանդութիւնների մասին կցկտուր և անորոշ գաղափար ունենք: Մեզ հասել են միայն անուններ, առանց կրօնական տօնակատարութիւնների և պաշտամունքի մասին գիտելիքներ տալու. մինչև իսկ չգիտենք հեթանոսական շրջանի տօների բնոյթը, ... մնացել է միայն ժողովրդական սովորութիւնը, որն իր արտայայտութիւնը գտնում է քրիստոնէական տօների հետ միաժամանակ»¹¹: Այս դիտարկումը, երկհատ ունենալով, ինքը՝ հոգևորական հեղինակը, յուրաքանչյուր տոն ու սուամնասիրելիս նկատի է առնում նաև հին՝ հեթանոսական շրջանի հետ կապը և ըստ այդմ մեկնաբանում տոնի բնույթն ու խորհուրդը:

Մյուս ուսումնասիրողները նույնպես (Ասյա Օդաբաշյան, Ժենյա Խաչատրյան, Էմմա Պետրոսյան, Լիլիթ Սիմոնյան, Ս. Մկրտչյան և այլք) հայ ժողովրդական տոնացույցում նկատում են դրա հնագույն շերտերը՝ բնապաշտական հավատալիքներից ակունքվող պաշտամուն-

⁹ Տե՛ս Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց (աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց), Տփղիս, 1909:

¹⁰ Ա. արքեպ. Մանուկյանն այս առթիվ գրում է. «Ս. Գր. Լուսավորչը երբ կործանեց մեհյանները, այդ վայրերում եկեղեցիներ կառուցեց և հեթանոսական տօները փոխարինեց քրիստոնեական տօներով» (Ա. արքեպ. Մանուկյան. նշվ. աշխ., էջ 11):

¹¹ Նույն տեղում, էջ 10:

քային ու ծիսական տարրերը, որոնք հեռավոր անցյալից մեր օրերն են հասցրել նախաքրիստոնեական տոնահանդեսների շունչը և ոգին¹²:

Մեր դիտարկումները թույլ են տալիս արձանագրել, որ նախաքրիստոնեական անցյալի հավատքային, առասպելադիցաբանական և ծիսաարարողական համակարգի տարաբնույթ բաղադրիչներ շարունակել են գոյատևել քրիստոնյա միջնադարում ու նոր շրջանում՝ կերտելով մի ուրույն սովորութեան մշակույթ: Այստեղ միաձուլվ հանդես են գալիս հին հավատալիքների, դիցաբանությունների, միջնադարյան քրիստոնեական սովորությունների և ազգային-եկեղեցական արարողակարգի զանազան տարրեր, որոնք հասարակության կյանքում ու կենցաղում այնքան նշանակալի դեր են կատարել, որ պահպանվել են դարեր շարունակ՝ հասնելով մինչ մեր ժամանակները¹³: Հոգևոր-մշակութային նման ավանդույթներն ազգաբանություն մեջ ընդունված է ներառել ժողովրդական քրիստոնեություն հասկացություն մեջ, քանզի ժողովուրդն է դրանց կենսականություն հաղորդողը և պահպանողը:

Տոների և հիշատակի օրերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով, որն ընդունվել է Ազգային ժողովի կողմից 2001 թ. հունիսի 24-ին, սահմանված և ամրագրված է ներկայիս տոնական օրացույցը, որում պետական տոներին ու հիշատակի օրերին զուգակցված է ազգային-եկեղեցական հանդիսակարգը¹⁴: Հետագա լրացումներից տոնացույցը շարունակել է ճշգրտվել, սակայն խնդրո առարկա տոնակարգի ընդհանուր պատկերը չի փոխվել: Ընդ որում, նշված պաշտոնական փաստաթղթում ազգային տոների մի մասն է ներառված, մյուս մասը՝ ոչ, քանզի դրանք գուտ եկեղեցական տոնահանդեսներ են: Վերջին-

¹² Տե՛ս Ա. Օդաբաշյան. Ամանորը հայ ժողովրդական տոնացույցում. – Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 9, Երևան, 1978, էջ 7–173, ժ. 4. Նաչատրյան, է. Ն. Պետրոսյան. Համընթացի տարեկան տոներն ու խաղերը (ԺԹ դարի վերջ – Ի դար). – Համչէն եւ համչէնահայութիւն (գիտաժողովի նիւթեր), Երևան-Պեյրուս, 2007, էջ 223–246, Յ. Ստրոյան. Праздники армян в контексте европейской культуры. Ереван, 2011; Լ. Սիմոնյան. Տոմարային ծիսաշար, հ. Ա, Նոր Տարի, Սուրբ Ծնունդ, Երևան, 2006, Ս. Մկրտչյան. Հայոց տոնածիսական մշակույթ, Երևան, 2016:

¹³ Տե՛ս Գ. Դ. Վարդուհան. Վաղ միջնադարեան Հայաստանի հոգևոր մշակույթը (հեթանոսությունից դէպի քրիստոնեություն). – «Բազմավէպ» (Վենետիկ), 2010–2011, № 1–2, էջ 279–307, նույնի՝ Հայոց հին հավատքի անդրադարձները ներկայիս տոնակարգում. – Երևանի Վ. Բրյուսովի անվ. պետական լեզվաբանական համալսարան. «Գրականության և մշակույթի արդի հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողով, պր. Ե, Երևան, 2014, էջ 256–264, նույնի՝ Проявления народного христианства в современной праздничной жизни армян и русских. – «Вестник Ереванского государственного университета языков и социальных наук им. В. Брюсова», 2017, № 1, с. 639–651.

¹⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության օրենքը Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին. – www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1274&lang=arm.

ներս կանոնակարգված են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ամենամյա օրացույցում. դրանց մեջ կան անշարժ տոներ՝ ամրագրված նշման օրով, և շարժական՝ նշման փոփոխական օրով, ինչը պայմանավորված է դարերի ընթացքում մշակված եկեղեցական տոնացույցով:

Իսկ ինչպիսի՞ն է եղել մեր հեթանոս նախնիների տոնացույցը, և ինչպե՞ս էին նրանք նշում տոները: Հնագիտական, բանահյուսական, մատենագրական, ազգագրական, տոմարագիտական և այլ աղբյուրների համադրական քննությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ նախնյաց տոնական կյանքը հնում ընթացել է բնության երևույթներին ու փուլերին համաքայլ, մարդկանց տնտեսական գործունեությունը սերտորեն կապակցված և գործող օրացույցով կարգավորված: Տոնի ծիսաշարի գաղափարական հենքը բնապաշտական պատկերացումներն ու հավատալիքներն էին՝ կապված բնության տարրերի (հող, ջուր, օդ, կրակ) և տարերքի (որոտ-կայծակ, ջրհեղեղ, երկրաշարժ, հրաբուխ և այլն), կենդանական ու բուսական աշխարհի, երկնային լուսատուների ու մոլորակների հետ:

Տոնը հաճախ նվիրված էր լինում տվյալ բնակավայրի (կամ հանրություն) հովանավոր աստծուն կամ աստվածներին (կամ էլ՝ աստվածացված տիրակալին), որոնց սրբավայրերում էլ հավաքվում էր ժողովուրդը: Տոնահանդեսը սկսվում էր տաճարի, բազիլի, մեհյանի կամ այլ սրբատեղի ներսում ու շրջակայքում, ծիսակատարությունն իրականացվում էր քրմական դասի հովանու ներքո: Հանդիսությունը կիզակետին էր հասնում աստվածներին նվերներ, ընծաներ մատուցելով, երկնավորների բարեհաճությունը նվաճելու համար բույսեր, պտուղներ, կենդանիներ, թռչուններ զոհաբերելով: Ապա բակերում, մերձակա դաշտերում կամ ժողովրդի կողմից սրբազնացված որևէ վայրում շարունակվում էր ժողովրդական տոնակատարումը, որն ուղեկցվում էր աղմկալի և խրախճալի ձեսերով, երգ ու պարով, խաղերով և մրցություններով, թատերական մանրապատումներով ու լարախաղացների ելույթներով, այլազան ուրախ և խառնամբուխ միջոցառումներով¹⁵:

Քրիստոնեությունը պետականորեն ընդունելուց հետո հայոց առաջին հայրապետ Գրիգոր Լուսավորիչը, ինչպես վերը նշվեց, հին տոների զգալի մասը հարմարեցրեց նոր կրոնին և եկեղեցական տոնացույցին: Միջնադարի տոնակարգն արդեն արտացոլված էին Հիսուս Քրիստոսին, Մարիամ Աստվածածնին, Սուրբ Խաչին և սրբերին առնչվող ավետարանական պատումները: Կարգվեցին նաև տոներ՝ ի հիշատակ ազգային կամ եկեղեցական նշանավոր դեմքերի, ինչպես, օրինակ, Վարդանանց, Թարգմանչաց տոները կամ Հռիփսիմյան կույ-

¹⁵ Հին աստվածներին նվիրված տաճարների, տոների, ձեսերի, զոհաբերությունների մասին տե՛ս Կ. Վ. Մելիք-Փաշայան. Անահիտ դիցուհու պաշտամունքը, Երևան, 1963, Ս. Գ. Հ մ ա յ ա կ յ ա ն. Վանի թագավորությունից պետական կրոնը, Երևան, 1990 (նաև՝ Ուրարտուի կրոնի վերաբերյալ բազմաթիվ այլ աշխատություններ), Г. Д. Вардумян. Дохристианские культы армян.— Армянская этнография и фольклор, т. 18. Ереван, 1991, с. 59–162; Э. Петросян. Боги и ритуалы Древней Армении. Ереван, 2004.

սերի օրերը: Տոնի հանդիսավոր արարողակարգը կատարվում էր եկեղեցում, վանքում, մատուռում, ժամատանը, գավիթում կամ այլ սրբավայրում՝ հոգևոր հայրերի գլխավորությամբ և հավատացյալ ժողովրդի մասնակցությամբ: Տոնահանդեսն ուղեկցվում էր հոգևոր երգերի՝ շարականների կատարմամբ, Աստվածաշնչից հատվածներ ընթերցելով և օրվա խորհրդին առնչվող արարողություններով¹⁶: Եվ ինչպես հեթանոս հնադարում, այնպես էլ քրիստոնյա միջնադարում՝ տոնահանդեսի պաշտոնական մասից հետո, ժողովրդական տոնախմբությունը՝ յուրաքանչյուր գավառում իրեն հատուկ ծեսերով ու սովորություններով, շարունակվում էր տանը կամ դրսում՝ բնության գրկում, ժողովրդի կողմից սրբազնացված բացօթյա վայրում, որևէ սուրբ քարի, ծառի, աղբյուրի մոտ՝ երբեմն ուղեկցվելով մատաղով ու ծիսական կերուխումով¹⁷:

Ներկայումս Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, ըստ Մայր Աթոռի օրացույցի, ամեն տարի նշում է 50-ից ավելի շարժական ու անշարժ տոներ, որոնք բաժանվում են 3 խմբի՝ Տոներ (ուրախ կամ տխուր առիթով), Սրբոց օրեր, Պահոց օրեր: Տոներն իրենց հերթին լինում են՝ ա. Տերունի (Սուրբ Ծնունդ, Տեառնընդառաջ, Ծաղկազարդ, Զատիկ, Համբարձում և այլն), բ. Աստվածածնի (Վերափոխումն Աստվածածնի, Ծնունդ Ս. Կույսի), գ. Խաչի (Խաչվերաց, Վարագա Սուրբ Խաչ): Տաղավար տոներին (Սուրբ Ծնունդ և Հայտնություն, Զատիկ կամ Սուրբ Հարություն, Վարդավառ կամ Պայծառակերպություն, Վերափոխումն կամ Սուրբ Աստվածածին, Խաչվերաց կամ Սուրբ Խաչ) սովորաբար հաջորդում են ննջեցյալների հիշատակի օրերը՝ մեռելոցները: Տոները, որպես կանոն, սկսվում են նախորդ օրվա՝ նախատոնակի երեկոյան ժամերգությամբ¹⁸:

Քննություն առնենք մի քանի տոն, որոնցում առավել ահնառու են անցյալից ժառանգված ժողովրդական տոնահանդեսին բնորոշ գծերը, տեսնենք, թե ինչ հին հավատալիքներ ու դիցաբանական կերպարներ են մասնակից եղել այս կամ այն տոնի ձևավորմանը, և թե որքանով են անցյալի ավանդույթները պահպանվել տոնի ներկայիս ծիսասովորութակարգում:

Նոր տարի. Տարեսկիզբը հայոց մեջ տարբեր դարաշրջաններում տարվա տարբեր եղանակներին է նշվել ու մի քանի անվանումներ է ստացել՝ Ամանոր, Նավասարդ, Կաղանդ և այլն: Նոր տարին եկեղեցական տոն է, այլ օրացուցային, թեպետ եղել է ժամանակ, երբ տարեսկիզբն ազդարարվել է Սուրբծննդյան տոնահանդեսով, և Նավասար-

¹⁶ Կարծիք կա, որ առաջին շարականները մեծ ազդեցություն են կրել հեթանոսական տաճարային երգեցողությունից [տե՛ս Գր. Հակոբյան. Շարականների ժանրը հայ միջնադարյան գրականության մեջ (V-XV դդ.), Երևան, 1980]:

¹⁷ Հայաստանի տարբեր գավառներում ժողովրդական տոների ու ծեսերի մանրամասն նկարագրությունները տե՛ս «Ազգագրական Հանդէս» (Շուշի-Թիֆլիս), 1-26 գրքեր, 1896-1917:

¹⁸ Տե՛ս Օրացույց, 2020, Սուրբ Էջմիածին, Մայր Աթոռ:

դի 1-ը համապատասխանել է հունվարի 6-ին (ինչին կանդրադառնանք ստորև): Օրացույցի սկիզբը խորհրդանշող այս տոնը դարեր շարունակ ժողովրդի կողմից եղել է ամենասիրվածը, և, հատկապես, նրանում են պահպանվել հնուց եկող շատ ավանդույթներ, որոնցում միահյուսված են հեթանոսական ու քրիստոնեական դարաշրջանների իրողությունները:

Վաղնջական ժամանակներում մեր նախնիները գարնան գալուստով են տարին նշել՝ Արեգ ամսվա առաջին օրը՝ մարտի 1-ին, կամ օրահավասարի օրը՝ մարտի 21-ին, երբ բնության զարթոնքի հետ կարծես վերածնվում էր ձմեռվա ցրտերին ընդհատված կյանքը: Հեռավոր անցյալում Հայկական լեռնաշխարհի բնակիչները, ովքեր տարվա չորս եղանակների բնակլիմայական գոտու առանձնահատկություններին էին հարմարեցնում իրենց կյանքն ու տնտեսական գործունեությունը, տարեգլուխը նշում էին երկրագործական, անասնապահական, արհեստագործական աշխատանքների սկիզբն ազդարարող զանազան բնապաշտական ծեսերով ու միջոցառումներով:

Պատմական ժամանակներում արդեն տարին սկսվում էր Նավասարդի 1-ից՝ այն օրվանից, երբ, Մովսես Խորենացու երկում պահպանված ավանդույթյան համաձայն, Հայկ նահապետն ահեղ մարտում հաղթեց բռնակալ Բելին՝ դնելով Հայոց պատմության սկիզբը¹⁹: Հայք երկրի հիմնադիր, ազգածին աստված Հայկը ոչ միայն տարածական առումով է ճշգրտել հայերիս տեղը Հին Աշխարհում, այլև դարձել է ժամանակն ու դրա հաշվարկը՝ օրացույցը խորհրդանշող անվանադիր նախահայր, քանզի նրա անվամբ է կոչվել Հայոց Բուն տոմարը, իսկ նրա ուսուրերի ու դուստրերի անուններով՝ 10 ամսանուններ, որոնցից առաջինը Նավասարդն էր²⁰: Տոմարագիտական հաշվարկների վրա հիմնվելով՝ Հայր Առաքել Ալիշանը եզրակացրել է, որ հարկ է «առանց տարակուսանքի ընդունելու Հայկայ շրջանին և մեր ազգութեան սկիզբը՝ Քրիստոսէ առաջ 2492 տարին և մեր ազգային գերագոյն տօնին համար օգոստոսի 11–23-ը»²¹:

Նավասարդը հնում շատ մեծ ժողովրդականություն էր վայելում և նշվում էր մոտ երկու շաբաթ: Ազաթանգեղոսն այն բնութագրել է որպես Ամանոր դիցի և նորահաս պտուղների ուրախալի տոն. «... դիցն Ամանորոյ ամենաբեր նոր պտղոց տաւնին, հիւրընկալ դիցն Վանա-

¹⁹ Հայկ նահապետի պատմությունը տե՛ս Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց (քննական բնագիրը և ներածութիւնը Մ. Աբեղեանի և Ս. Յարութիւնեանի), Երևան, 1991, գ. 1, գլ. Թ–ԺԳ:

²⁰ Ինչպես Անանիա Շիրակացին է նշում՝ «Նաւասարդի, Հոռի, Սահմի և Մահեկի, Արեգ, Մարերի դասերք էին Հայկին. Տրէ, Քաղոց, Արաց և Հրոտից որդիք էին Հայկին: Իսկ մարգաց և հարաւանց, զոր այժմ ահկի կոչեն, այս ի գործոց անուանեցան, զի այն ժամանակս ամառնային էին սոքա» (Անանիա Շիրակացի. Տիեզերագիտութիւն և տոմար, Երևան, 1940, էջ 76–77):

²¹ Ղ. Ալիշան. Յուշիկք հայրենեաց Հայոց, հ. Ա, Վենետիկ–Սբ. Ղազար, 1869, էջ 95:

տրի, զոր յառաջագոյն իսկ ի նմին տեղւոջ պաշտէին յուրախութեան Նաւասարդ աւուր»²²: Տարվա ամենակարևոր տոնահանդեսը լինելով՝ այն նվիրված էր Անահիտ, Արամազդ, Աստղիկ, Վահագն, Նանե, Միհր, Տիր դիցերին ու դիցուհիներին, որոնց 7 զոհասեղանները գտնվում էին Աշտիշատում՝ Արածանիի ափի նշանավոր պաշտամունքային կենտրոնում: Տարոն ու Բագրևանդ գավառների սահմանագլխին, Նպատ լեռան շրջակայքում և, հատկապես, Բագավանում էին հավաքվում համաշխարհական տոնախմբության մասնակիցները՝ արքան իր ոսկեդիրպակ շքեղ վրանով, նախարարները, իշխաններն ու հոգևորականներն իրենց գունազեղ վրաններով և, վերջապես, ուխտավորները՝ հասարակ վրաններով:

Նավասարդի առաջին օրը մեր հեթանոս նախնիները բերքահավաքի, հունձքի, ընտանի կենդանիների ծնի տոնախմբություններ էին անում: Տոնակատարման մնացած օրերին հողագործը ցուցադրում էր հավաքած բերք-բարիքը, խաշնարածը՝ ստացած մթերքը, արհեստավորը՝ պատրաստած իրը: Հավատում էին, թե աստվածներն այդ օրերին լողանում են Եփրատ և Արածանի գետերում, հետո բարձրանում մոտակա գագաթներն ու դիտում տոնահանդեսը, որի մասնակիցներին օթևան էր տալիս Վանատուր հյուրընկալ աստվածը:

Նավասարդյան խաղերն էին անցկացվում տոնի ընթացքում, որոնց ժամանակ մարզիկները մրցում էին տարբեր մարզաձևերում՝ վազք, հեռացատկ, կռիվամարտ, գնդակախաղ, ըմբշամարտ, ձիարշավ, ռազմական խաղեր՝ սրամարտ, սուսերամարտ, նիզականետում, տեղի էին ունենում զորավարժություններ և այլն: Տոնահանդեսը զարդարում էին նաև արվեստների՝ երգի ու պարի, գուսանական և ճարտասանական ելույթների մրցույթները: Հաղթողների գլխին վարդահյուս պսակ էին դնում ու մեծարում «պսակավոր» տիտղոսով: Այս համաշխարհական տոնահանդեսի առավոտն ու արքայական որսարշավն է կարոտով հիշում Արտաշես արքան իր կյանքի վերջալույսին՝ ասելով.

Ո՛ տայր ինձ զծուխ ծխանի
Եվ զառաւօտն Նաւասարդի,
Զվազելն եղանց եւ զվարդելն եղջերուաց,
Մեք փող հարուաք եւ թմբկի հարկանեաք,
Որպես օրէն է թագաւորաց²³:

Ողջ միջնադարի ընթացքում, որքան էլ բարեփոխումներ են կատարվել Հայոց Մեծ և Փոքր տոմարներում, Նավասարդը նշվել է կամ օգոստոսի 11-ին, կամ մարտի 1-ին, կամ էլ՝ մարտի 21-ին: Բացառությու-
ն է 1759 թ. Սիմեոն Երևանցի կաթողիկոսի կազմած նոր «անշարժ» տոմարը, որում տարեսկիզբ սահմանվեց հունվարի 6-ը. թերևս այն

²² Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, 836:

²³ Տե՛ս Կ. Կոստանեանց. Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, թուղթ 33, էջ 87:

տրամաբանությունը, որ քանզի մեր թվարկությունը սկիզբ է առնում Քրիստոսի ծննդյան թվականից, տարին էլ պետք է սկսվի նրա ծննդյան օրվանից: 1807 թ. Մինաս Կամսարականը (Երևանցի) ևս տոմարը բարեփոխելով՝ տարեգրությունը հարմարեցրեց Տիրոջ ծննդյան օրվան: Սակայն Սուրբծննդյան տարեմուտը կարճ տևեց՝ շուտով փոխարինվելով դարերի փորձությունն անցած դարնանային կամ ամառային տարեսկզբի ավանդույթներով²⁴:

Ուշ միջնադարում՝ Նավասարդը նշվում էր աշնան վերջերին՝ նոյեմբերի 10-ին հաջորդող կիրակի օրը՝ այգեկությունը ու նախաթողից հետո, երբ բերքահավաքը և խաշնարածական աշխատանքներն արդեն ավարտված էին, տնտեսական տարվա շրջափուլն էլ եզրափակված, ու հայ մարդը հանգիստ կարող էր վայելել տոնը: Եվ թեպետ աշնանային Նավասարդը գրանցված չէր ոչ եկեղեցական, ոչ էլ քաղաքացիական տոնացույցում, նրա ծիսակարգը նույնպես միտված էր ոչ միայն նոր տարվա սկիզբն ազդարարելուն, այլև բնության բերրիությունն ու դրանով պայմանավորված՝ հասարակության բարօրությունն ու կյանքի լիությունն ապահովելուն²⁵:

Նավասարդը ժողովրդական ավանդույթում դարեր շարունակ պահպանվել է որպես ամենասիրելի տոներից մեկը՝ տարբեր գավառներում հանդես գալով տարբեր ծիսակարգերով: Ներկայիս եկեղեցական տոնացույցում այն դրսևորվում է որպես Բուն Հայոց թվականի սկիզբ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրացույցի առաջին էջում, Տիրոջ թվականի հետ միասին, ամեն տարի ամրագրվում է նաև Հայկյան թվականը՝ Ք. ա. 2492 թվից հաշված²⁶:

Հայոց մեջ Նոր տարին հունվարի 1-ին սկսել են նշել ոչ վաղ անցյալում, համաձայն ընդհանուր քրիստոնեական ավանդույթի, ընդ որում՝ արևմտահայ միջավայրում և որոշ գաղթօջախներում XIX դարից ի վեր, արևելահայ միջավայրում XX դարի սկզբներից: Այժմյան Ամանորն անցյալից ժառանգել է տոնի համաժողովրդական բնույթը, ուրախալի միջոցառումները, իրար նվերներ անելու և այցելություններ կատարելու սովորույթը, տոնածառ զարդարելու ու տոնապետ պապի ավանդույթները և այլն: Հիմա մենք ամանորյա սեղանը լցնում ենք բոլոր տեսակի ուտեստներով և ըմպելիքներով, թեպետ ըստ եկեղեցական օրացույցի՝ պահոց շրջան է, որն ավարտվում է Սուրբ Ծնունդին՝ հունվարի 6-ին: Նոր տարվա առատ սեղանը վերջին ժամա-

²⁴ Տոմարական այս մանրամասները տե՛ս Հ. Ս. Բաղալյան. Օրացույցի պատմություն, Երևան, 1970, էջ 116, Բ. Ե. Թումանյան. Տոմարի պատմություն, Երևան, 1972, էջ 117–131:

²⁵ Ամանոր-Նավասարդի մասին առավել մանրամասն տե՛ս Ա. Օդաբաշյան. նշվ. աշխ., էջ 7–173:

²⁶ Օրացույց, 2020, էջ 1: Հայկ նահապետի, Բուն Հայոց թվականի և Նավասարդի մասին տե՛ս Գ. Վարդումյան. Հայկազունները և Նավասարդյան տոները. – «Հայկազունիներ. առասպել և պատմություն» միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու, Երևան, 2013, էջ 212–221:

նակներում ձևավորված ավանդույթ է, որի հիմքում ընկած է տարին լիությամբ սկսելու հանրային ձգտումը:

Տարեմուտի տոնն ուղեկցվել և ուղեկցվում է տոնածառով ու տոնապետով: Անցյալում տոնածառը հասկերից էր հյուսվում և զարդարվում էր թարմ կամ չոր մրգերով ու ինքնաշեն խաղալիքներով. հիմա, քանի որ Ամանորը ձմռանն է տոնվում, փշատերև եղևնին կամ սոճին են տոնածառ դարձել: Տոնածառի ավանդույթը նույնպես հնագույն ծագում ունի և ակունքվում է ծառին աղերսվող բնապաշտական հավատալիքներից, որը դարերի ընթացքում բյուրեղացել է Կենաց Ծառի վերաբերյալ պատկերացումներում: Արևելահայ միջավայրում տոնապետը Պարթև պապն էր՝ քուրքը հագին, գավազանը ձեռքին, արևմտահայ միջավայրում՝ Կաղանդ պապը²⁷: Այնուհետ Ձմեռ պապն ու Չյունանուշը դարձան Նոր տարվա տոնավարները, ապա՝ Սանտա Կլաուսը, որը, իբր, հյուսիսային Լապլանդիայից է ճամփա ընկնում՝ ոսկե կառքին ոսկե եղջերուներ լծած, և որի իրական նախատիպն է եղել III–IV դդ. սասանազլխին ապրած, բարեգլթությամբ հայտնի Սուրբ Նիկողայոս Զմյուռնիացի Սքանչելագործ հայրապետը²⁸:

Վերջին ժամանակներս նկատվում է ամառային Նավասարդի ավանդույթների, այդ թվում և Նավասարդյան խաղերի վերականգնման գործընթաց, որը զարգացման միտում ունի: Ցանկալի կլիներ նաև ձմեռային Ամանորի տոնապետ Պարթև պապի վերադարձը ժողովրդական ծիսակարգ, ինչը լրացուցիչ ազգային երանգ կհաղորդեր տոնակատարությանը:

Սուրբ Ծնունդ (Աստվածահայտնություն). Հայ Առաքելական Եկեղեցու ամենամեծ տոնն է Հիսուս Քրիստոսի Ծնունդը և Հայտնությունը, որ նշվում է Մկրտություն հետ հունվարի 6-ին՝ անխաթար պահելով հին համաքրիստոնեական ավանդույթը²⁹: Անցյալում խստա-

²⁷ Անունը լատիներեն calendae – «նորալուսին, ամսագլուխ» բառից է: Պարթև, Կաղանդ և Ձմեռ պապերի ու տոնածառի մասին տե՛ս Ա. արքեպ. Մանուկեան. նշվ. աշխ., էջ 30–35:

²⁸ Տե՛ս Սուրբ Նիկողայոս Հայրապետի սքանչելիքների մասին. – Վարդ Սրբոց, հ. Գ, Աբ. էջմիածին, 2010. – surbzoravor.am/post/view/surb-nikoghayos-hayrapeti-sqancheliqneri-masin; Սուրբ Նիկողայոսի Սանտա Կլաուս դառնալու պատմությունը տե՛ս B. H a n d w e r k. From Saint Nicholas to Santa Claus. – www.national-geographic.com/news/2018/12/131219-santa-claus-origin-history-christmas-facts-st-nicholas/; Who is Saint Nicholas. www.stnicholascenter.org/who-is-st-nicholas/.

²⁹ Հռոմի եկեղեցին IV դ. որոշում ընդունեց Տիրոջ Ծնունդը նշել դեկտեմբերի 25-ին, մկրտությունը՝ հունվարի 6-ին: Պատճառներից մեկն էլ, թերևս, այն էր, որ Հռոմեական կայսրությունում տարածված միթրայականությունը մրցակցում էր նորամուտ քրիստոնեության հետ: Կարծիք կա, որ տակավին ձևավորման փուլ ապրող Կաթողիկե եկեղեցին Սուրբծննդյան տոները հարմարեցրեց միթրայական օրերին, որպեսզի նոր կրոնն արագ տարածվի, և հնդ-իրանական աշխարհից Հռոմ հասած Միթրայի պաշտամունքը տեղը զիջի Քրիստոսի ուսմունքին, ինչն աստիճանաբար տեղի ունեցավ: Այս թեզն ինչ-քան կողմնակիցներ, այնքան էլ հակառակորդներ ունի և ժխտվում է հիմ-

գույնս պահպանվել է տոնին նախորդող պատր, որը բացվել է միայն Սուրբ Ծնունդին՝ ձկնով, կարմիր գինով, առատ յուղով եփված քաղցր կամ անխառն փլավով ու մյուս ծիսական ուտեստներով³⁰: Տոնը ներառում է Զրորհնեքի արարողությունը նախատոնակի ճրագայուցյին՝ խորհրդանշելով Հիսուսի մկրտությունը Հորդանան գետում Հովհաննես Մկրտչի կողմից:

Օծյալ Փրկչի կերպարը նույնպես իր նախատիպերն է ունեցել հին կրոններում, որոնցում քիչ չեն եղել ժողովրդի ու երկրի հովանավորներ, ովքեր իրենց հերոսական վարքով փրկչական գործառույթ են իրականացրել: Հին հայոց դիցապաշտական համակարգում նման կերպարներ էին Հայկյանները, որոնք հայ ցեղը ձևավորեցին և կերտեցին Հայք աշխարհը՝ ետ մղելով բռնակալ օտարներին: Եվ գուցե սա էր գաղափարաբանական պատճառներից մեկը, որ հոգևոր լույսը մարմնավորող Հիսուս Քրիստոսի ուսմունքն առաջինը պետականորեն ընդունվեց հայոց միջավայրում, որտեղ Սուրբ Ծնունդն արդեն 1700 տարուց ավելի է, ինչ նշվում է Հայ Առաքելական Եկեղեցու արարողակարգով և ժողովրդական սովորույթներով:

Որքան էլ տոնը եկեղեցական է, ժողովուրդը մեծապես մասնակից է թե՛ հունվարի 5-ի Սուրբ ծննդյան պատարագին, թե՛ դրան հետևող Զրորհնեքին: Հանդիսավոր արարողությունից հետո մարդիկ օրհնված մոմեր և ջուր են տանում տուն՝ հավատալով, որ դրանք բարեբեր ու բուժիչ հատկություններ ունեն և իրենց զերծ կպահեն դժբախտությունից ու հիվանդությունից: Մինչ օրս պահպանված այս սովորույթներն ուղեկցվում են ճրագայուցի պատարագին հնչող Փրկչի ծննդյան ավետիսի՝ «Քրիստոս ծնաւ և հայտնեցաւ, մեզ և ձեզ մեծ աւետիս», «Օրհնեալ է յայտնութիւնը Քրիստոսի» խոսքերով, որոնք հավատավոր ժողովրդի մեջ տարածված են որպես իրար ողջունելու, միմյանց առնչվելու բանաձև և նոր լիցք են հաղորդում հնամենի ավանդույթին: Ներկայումս Սուրբ Ծնունդը հանրության կողմից ընկալվում է որպես Ամանորին հաջորդող ազգային-եկեղեցական տոնահանդես, որն արտացոլում է հայերիս աշխարհիկ-հոգևոր նկարագրերի միասնությունը, և որին հաղորդակցվում ենք անցյալից ժառանգված կարգով:

Տրդնեզ (Տեսունընդառաջ). Տրնդեզը նույնպես ակունքվում է հնագույն ժամանակներից: Այն նվիրված էր արևային աստված Միհրին, նշվում էր ձմռան ցրտերին՝ փետրվարի 14-ին, և ամիսն էլ հայկական օրացույցում կոչվում էր Մեհեկան, այսինքն՝ Միհրական: Տոնն աղերսվել է հուր երկնային արևի և հուր երկրային կրակի պաշտամունքին: Տրնդեզի խարույկով մեր նախնիները նպատակ են ունեցել հողը տա-

նականում աստվածաբանների ու հոգևորականների կողմից. ինչպես Ա. արքեպ. Մանուկյանն է նկատում՝ «Յիսուսի Ծննդեան թուականը դաւանական հարց չէ, այլ լոկ տոմարական հաշիվ, և այս օրերին այլևս վիճելի խնդիր չէ եկեղեցիների համար» (Ա. արքեպ. Մանուկեան. նշվ. աշխ., էջ 46):

³⁰ Սուրբ Ծնունդի մասին առավել մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 39–50:

քացնելու՝ այդպիսով բնության ուժերին գորակցելու, որպեսզի գարունը շուտ գա և ջերմ օրեր բերի:

Քրիստոնեության շրջանում հին տոնի ժողովրդական ծեսերը պահպանվել են: Դարձյալ խարույկ են վառել, շուրջը պտտվել, երգել-պարել, իսկ երբ կրակը հանդարտվում էր, իրար ձեռք բռնած ցատկում էին վրայով, հատկապես նորապսակ զույգերը՝ պսակի զգեստը հագած («մի տեսակ կրկնապսակ էր կատարվում, երկրորդ հարսանիք»³¹), որպեսզի կրակի սրբագործող ուժը նորակազմ ընտանիքից հեռացնի չարը և զույգին պտղաբերություն ապահովի: Այս նպատակին առավել հաստատապես հասնելու համար հաճախ հարսի ու փեսայի զգեստների փեշերից թելեր էին հանում ու նետում կրակի մեջ: Կրակի մոխիրը շաղ էին տալիս դաշտերում, որ բերքն առատ լինի, խարույկի ծխի ուղղությունը էլ զանազան գուշակություններ անում: Այդ մոխրից, որին բուժիչ ու բարեբեր հատկություններ էին վերագրում, լցնում էին ծննդկանի և հիվանդի ապուրի, ընտանի կենդանիների կերի մեջ, քսում էին երեխաների վզին ու դեմքին, որպեսզի չհիվանդանան, հաց թխելիս մի պտղունց գցում թոնրի կրակի մեջ և այլ պահպանիչ գործողություններ անում:

Եկեղեցական տոնացույցում Տրնդեզը վերածվել է մանուկ Հիսուսի տաճարընծայման տոնի և կոչվել Տեառնընդառաջ՝ «Տօն քառասնօրյա գալստեանն Քրիստոսի ի տաճարն»³²: Տոնի բովանդակությունն այն է, որ Մարիամն ու Հովսեփը նորածնին տանում են տաճար՝ Աստծուն ընծայելու, որտեղ նրանց ընդառաջ է գալիս խոր ծերություն հասած Սիմոն ծերունին: Նա իր գիրկն է առնում մանկանը և գոհություն հայտնում Աստծուն, որ տեսավ փրկության լույսը: Տեառնընդառաջի հիմնական խորհուրդը լույսի ներբողն է՝ «Լոյս ի յայտնութիւն հեթանոսաց», Հիսուս Քրիստոսի փառաբանումը որպես «անսկիզբ բանի», Սուրբ Կույսից մարմին ստանալը՝ Աստծո որդու մարդեղանալը և տաճարին ընծայվելը³³:

Ինչպես անցյալում, այժմ էլ Տեառնընդառաջի նախատոնակին՝ փետրվարի 13-ի երեկոյան ժամերգությունը, հայկական բոլոր եկեղեցիներում երգվում են տոնի շարականները, որից հետո ներկաներին բաժանվում են մոմեր, իսկ հանդիսադիր եկեղեցականը վառում է խորանի սեղանին դրված մոմերը: Ժամերգությունից հետո հավատացյալները վառում են իրենց մոմերն ու տանում տուն: Երեկոյան թե՛ եկեղեցու, թե՛ տների բակերում խարույկներ են վառվում, որոնց շուրջ տեղի են ունենում այն ծեսերը, որոնք ժառանգվել են հինավուրց Տրնդեզից՝ երգ, պար, ուրախություն, կրակի վրայով ցատկել: Այս առթիվ Ա. արքեպ. Մանուկյանը գրում է. «Եկեղեցական արարողությունից յետոյ, հինաւուրց սուրբութեան համաձայն, եկեղեցու բակում կրակ է վառուում: Հրաւառութեան մասին քրիստոնեական և եկեղեցական

³¹ Հր. Խ ա ո ա տ յ ա ն-Ա ո ա ք ե լ յ ա ն. նշվ. աշխ., էջ 54:

³² Տե՛ս Օրացոյց, 2020, 13-14 փետրվարի:

³³ Տեառնընդառաջի մանրամասն նկարագրությունը տե՛ս Ա. արքեպ. Մ ա ն ու կ ե ա ն. նշվ. աշխ., էջ 59-70:

որևիցէ օրենք և կանոն գոյութիւն չունի: Ընդհակառակը՝ տոնացոյցի մէջ կրակ վառելը և շուրջը պտտելը համարուած է խոտելի, դատապարտելի որպէս հեթանոսական շրջանից մնացած սովորութիւն»³⁴: «Խոտելի է շրջելն զհրով»՝ գրված է Մայր Աթոռի «Օրացոյց»-ի փետրվարի 13-ի էջում:

Տեսաւնընդառաջի խարույկավառութիւնը, անկասկած, սերում է հեթանոս ժամանակների միհրական տոների արևապաշտական և կրակապաշտական ծեսերից, Տրնդեզ անունն էլ հայոց Տիր աստծո հետ է կապվում, ով Արամազդի դպիրն էր, երազահան ու երազացոյց, պաշտվում էր Երազմուլն վայրում: Միհրն էլ արևի ու կրակի աստվածն էր, բարութիւն, իրավունքի և արդարադատութիւն հովանավորը, որին ձոնված սրբարաններից Գառնիի տաճարը հեթանոս անցյալից պահպանված միակ տաճարն է այժմյան Հայաստանում³⁵: Միհրի պաշտամունքն այնքան է սիրված եղել հայոց մեջ, որ միջնադարում նոր մարմնավորումներ է ստացել «Սասնա Մոեր» էպոսի Մեծ և Փոքր Մհերների կերպարներում, մինչդեռ Հին Աշխարհում՝ Հնդկաստանից մինչև Հռոմեական կայսրութիւնը ներառյալ, մեծապես տարածված Միթրայի պաշտամունքը՝ միթրայականութիւնը, իր տեղը զիջել է քրիստոնեութիւնն ու մահմեդականութիւնը³⁶:

Ներկայումս Տրնդեզն ավելի ու ավելի մեծ ժողովրդականութիւն է վայելում ինչպէս Հայաստանում և Արցախում, այնպէս էլ Սփյուռքում. ամենուր տոնակատարութիւնը մասնակցում են նորապսակներն ու նրանց հարազատ-բարեկամները՝ տոնն իրավամբ վերածելով կրկնապսակի:

Ծաղկազարդ. Չմեռը կամաց-կամաց նահանջում է, յոթաբաթյա Մեծ Պասն ավարտին է մոտենում գարնանային երկու տոնով՝ Ծաղկազարդով և Զատիկով, որոնք հնում խորհրդանշել են տաք օրերի գատումը ցրտերից, բնութիւնը գարթոնքն ու կյանքի վերածնունդը:

Ծառ ու ծաղկի, շրջակա բուսական աշխարհի հետ մարդու ամենօրյա անմիջական շփումներով պայմանավորված՝ ձևավորվել են տարբեր բուսատեսակների, պտուղի, տերևի, հասկի հետ կապված զանազան երկրագործական հավատալիքներ: Սրանք սկիզբ են դրել Համաշխարհային կամ Տիեզերական ծառի (Arbor Mundi) գաղափարին, որը միավորում է աշխարհի բոլոր ոլորտները՝ ճյուղեր-երկինքը, բուն-երկիրը, արմատներ-ստորերկրաբլթը: Համաշխարհային ծառի տարբերակները՝ Կենաց կամ

³⁴ Նույն տեղում, էջ 59–60:

³⁵ Միհրի մասին տե՛ս Գ. Դ. Երվանդյան. Бог солнца Мипр – покровитель добра и справедливости у армян.– Вопросы истории Армении (сборник научных статей), НАН РА, Институт истории. Ереван, 2014, № 15, с. 3–19.

³⁶ Հայոց Միհրի և հռոմեական Միթրայի համեմատական քննութիւնը տե՛ս Գ. Դ. Երվանդյան. Мифо-эпический образ армянского Мипра в контексте сравнительного анализа с римским Митрой.– Международная конференция «Трансформационные процессы в эпоху Принципата. Включение Рима в осевое время». Российско-Армянский (Славянский) университет. Ереван, 2015, с.191–219.

Դրախառն, Պտղաբերության, Երկնային, Իմացության, և Հակադիր՝ Չարի, Մահվան, Անդրաշխարհի ու այլ նման ծառերն առնչվում են Երկրի առանցքի (Axis Mundi), Համաշխարհային լեռան, Համաշխարհային մարդու կամ Առաջնամարդու մասին առասպելություններին³⁷:

Ծաղկազարդը, ակունքվելով նշված հնամենի պատկերացումներից, բնության վերածննդի տոնն էր, երբ նշմարելի էր ծառերի բողբոջումն ու առաջին ծաղիկների հայտնվելը դաշտերում: «Ծաղկազարդի օրը ժողովրդական սովորությունների միջոցով տօնակատարվում էր գարնանային եղանակի սկզբնաւորութիւնը»³⁸: Ծաղկազարդը ժողովրդի մեջ կոչվել է նաև Ծառզարդար, Ծառկոտրուկ, քանզի այդ օրը տները, տաճարները զարդարել են արմավենուց, ձիթենուց, ուռենուց կոտրած ճյուղերով ու ոստերով: Որպես եկեղեցական տոն՝ այն Մեծ Պասի նախավերջին՝ Գալստյան կիրակին է և նշվում է Զատիկից մեկ շաբաթ առաջ՝ հիշատակելով Քրիստոսի երկրորդ գալուստն ու կրելով փրկագործության խորհուրդը: «Յիսուսը հանդիսաւոր կերպով, նստած աւանակի վրայ, մուտք է գործում Երուսաղէմ: Ժողովուրդը խանդավառ ընդունելութիւն է ցոյց տալիս ձիթենու և արմաւենու ոստեր առած և զգեստները ճանապարհի վրայ փռած, որպէսզի նրանց վրայով անցնի, և աղաղակում է՝ «Ովսաննա՛, օրհնութիւն նրան, որ գալիս է Տիրոջ անունով»³⁹:

Տոնի ժողովրդական ավանդույթով ողջ համայնքը հավաքվում էր եկեղեցում՝ մասնակից լինելու ուռենու ճյուղերն օրհնելու արարողությանը: Շաբաթից կիրակիի կեսգիշերն անց ողջ եկեղեցին լցվում էր ուրախ ձայներով ու երեխաների աղմուկով: Մեծ Պասի ընթացքում առաջին անգամ նշանադրություններ էին կատարվում եկեղեցում, նույնիսկ այն դեպքերում, երբ նշանվել ձգտողներից որևէ մեկի ծնողները դեմ էին այդ միությանը, Ծաղկազարդի գիշերվա նշանը համարվում էր Աստծո օրհնած և ընդունելի: Տոնի այժմյան արարողակարգը հիմնականում պահպանել է անցյալի ավանդույթը՝ ուռենու ճյուղերի օրհնությունը, պսակադրությունները, որոնց առթիվ բացվում է խորանի վարագույրը, որ փակ էր Մեծ Պասի ընթացքում: Տոնին մասնակից ժողովուրդը օրհնված ճյուղերն ու պսակները տուն է բերում և պահում մինչև հաջորդ Ծաղկազարդը:

Անշուշտ, ծառի ու ծաղկի պաշտամունքից ակունքվող այս տոնի հնամենի խորհուրդը քչերին է հայտնի, նույնքան քիչ է հայտնի նաև տոնի քրիստոնեական բովանդակությունը, սակայն ժողովուրդը հիմա էլ սիրով մասնակից է լինում գարնան զարթոնքն ու կյանքի հարատևությունն ավետող, նորակազմ ընտանիքն օրհնող տոնահանդեսին,

³⁷ Այս ամենի մասին հարուստ գրականությունից տե՛ս R. Cook. The Tree of Life. Image of the Cosmos. New York, 1974; В. Н. Топоров. Растения.— МНМ, т. 2, 1982, с. 368–371; Ն ու յ ն ի՝ Мировое дерево, т. 1, 2. М., 2010.

³⁸ Ա. ար ք ե պ. Մ ա ն ու կ ե ա ն. նշվ. աշխ., էջ 113:

³⁹ Ն ու յ ն տեղում, էջ 107:

եկեղեցուց տուն վերադառնալով՝ հույսերով ու լավագույն սպասումներով լի տրամադրությամբ:

Զատիկ. Ծաղկազարդի հաջորդ կիրակի օրը նշվող Զատիկը՝ Հիսուսի Հրաշափառ Հարուժյան տոնը, քրիստոնյա աշխարհի ամենակարևոր տոնահանդեսներից է և Հայ Եկեղեցու հնագույն տաղավար տոներից մեկը: Զատիկ հասկացությունը եկեղեցին մեկնում է որպես մարդու զատումն իր մեղքերից, առավել ևս այս տոնին նախորդել է Մեծ պասը, որի հիմնական գաղափարը պահպանողության միջոցով մաքրվելն է, մեղքերից ազատվելը: Պողոս առաքյալը Հիսուսին հենց Զատիկ էլ կոչում է՝ «Քրիստոս, մեր զատիկը, մորթվեց»⁴⁰, և, հատկապես, «յարուժեան դէպքի ու գաղափարի շուրջ է որ միացան ու հաւաքուեցին սկզբնական շրջանի քրիստոնեաները և Քրիստոսի ծնունդն ու Յարուժիւնը գլխաւոր և կարևոր տօները համարուեցին»: Եվ «... եթե Յարուժիւնը կատարուած դէպքի ճիշտ և ուղիղ արտայայտիչ բառն է համարուում, Զատիկը գործ է ածուում միայն օրուայ տօնը հայեցի տարազով բացայայտելու համար»⁴¹:

Հեթանոս ժամանակներում գարնանային այս տոնը պատկերացվել է որպես սառն օրերից տաք օրերի գատումը, երբ բնությունն արդեն կանաչ է հագնում, զարթնում ու վերածնվում ձմռան նիրհից: Ժողովրդական պատկերացմամբ՝ Հազարան հավքը նստում է Մասիսի գագաթին ու բազմագույն ձվեր ածում, որոնք գլորվելով սարն ի վար՝ դառնում են երփներանգ ծաղիկներ, ու գարունը գալիս է Հայոց աշխարհ: Հնում Զատիկը գարնանային օրահավասարին է նշվել՝ լինելով բնապաշտական այն տոնակատարությունը, որն ազդարարում էր Նոր տարվա՝ Ամանորի սկիզբը, կյանքի վերածնունդն ու զարթոնքը ցրտերից հետո:

Հայ Առաքելական Եկեղեցին Քրիստոսի Հարուժյան տոնահանդեսը նշում է մարտի 21-ին հաջորդող լիալուսնի կիրակի օրը: Հավատացյալները միմյանց ողջունում են «Քրիստոս յարեալ ի մեռելոց», «Օրհնեալ է յարուժիւնը Քրիստոսի» խոսքերով: Տիեզերքի՝ անսկիզբ ու անվախճան բնույթն են խորհրդանշում Հիսուսի մահն ու վերածնունդը, նրա հարուժյունը և երկինք համբառնալը: Դիցաբանական նախատիպերը մեռնող-հառնող աստվածներն են եղել՝ շումեր-աքքադական Դումուզին, բաբելական Թամմուզը, փռուգիական Ատտիսը, եգիպտական Օսիրիսը, հունական Ադոնիսը, հնդկարիական Միթրան և այլք: Հայոց դիցական միջավայրում այդպիսիք էին Արա Գեղեցիկը և Միհրը՝ արևային կերպարներ, որոնք իրենց հեռանալով ու վերադարձով խորհրդանշում էին բնության անվերջ շրջապտույտը:

Հեթանոսությունից քրիստոնեությունն են անցել նաև հին ժողովուրդների առասպելներում տեղ գտած Համաշխարհային կամ Տիեզերական նախաստեղծ ձվի (Mundane Egg) մասին պատկերացումները,

⁴⁰ Աստուածաշունչ Մատեան Հին և Նոր Կտակարանների (վերահրատարակութիւն), Երևան, 1999 (Կորնթացիներին, Ա, 5):

⁴¹ Ա. արքեպ. Մանուկեան. նշվ. աշխ., էջ 134:

որից ծնվում է ողջ աշխարհը: Հաճախ այն հենց Արարիչն է, որն ստեղծում է երկինքն ու երկիրը սպիտակուցից և արևը՝ դեղնուցից⁴²: Հիսուսի Հարուժյան տոնում ձուռն նոր կյանքի խորհրդանիշն է՝ զատկական ծիսակարգում հանդես գալով հավկիթի տեսքով: Պատահական չէ, որ քրիստոնյա ժողովուրդների միջավայրում պահպանված սովորույթներից ամենատարածվածն են հավկիթ ներկելն ու հավկիթախաղը:

Հայերիս կենցաղում Ձատկվա ծիսական ուտեստներն են ձուկը, քաղցր փլավն ու գինին, որոնք զարդարում էին նաև Սուրբ Ծնունդի կամ ժողովրդի մեջ Փոքր Ձատիկ կոչվող տոնի սեղանը: Ձատկական խորհրդանշաններից են գարնանային թարմ կանաչեղենը, ծլեցրած հատիկեղենը⁴³ և գատիկ միջատը, որը որոշ բարբառներում կոչվում է Մարիամաբլոջ, այսինքն՝ Տիրամոր միջատ⁴⁴:

Վարդավառ. Ամառային շոգերին է նշվում Վարդավառի բնապաշտական ջրատոնը, որը նույնպես նախաքրիստոնեական ծագում ունի: Հայտնի է, որ ջուրն աշխարհակազմ հիմնարար տարերքներից է, որը հնագույն առասպելներում հանդես է գալիս որպես նախասկիզբ, ամենայն ինչի ելման վիճակ: Երկնային, երկրային և ստորգետնյա ջրերի մասին հավատալիքներ են ձևավորվել բոլոր ժողովուրդների մեջ: Աշխարհարարման առասպելներում պատմվում է, թե ինչպես ողջ երկրագունդը դուրս է հանվում նախաստեղծ Օվկիանոսի հատակից: Դիցաբանական պատկերացումներում Ջուրը համընդհանուր բեղմնավորման ու ծնունդի միջավայրն է, որը մաքրագործող ու սրբագործող հատկույթյամբ է օժտված, և որում լողանալու սրբազան ծեսը վերածնվելու խորհուրդն ունի⁴⁵: Հայերիս պաշտամունքում առանձնահատուկ տեղ է գրավել Ծով Ծիրանին՝ տիեզերական օվկիանոսը կամ երկնային ծովը, որն ամեն ինչի ծնողն ու նախաստեղծն է համարվել, այսինքն՝ տիեզերքը և երկինքը բացի օդայինից, նաև ջրային տարերքի միջոցով են ընկալվել⁴⁶:

⁴² Տե՛ս В. Н. Топоров. Яйцо мировое.— МНМ, т. 2, с. 681; D. A. Leeming. Creation Myths of the World.— An Encyclopedia, Book 1, 2010, p. 144.

⁴³ Քրիստոնյա ազգերից միայն հայերիս մեջ է պահպանվել այդ սովորույթը՝ ակունքվելով հեթանոս անցյալից և խորհրդանշելով ծլարձակվող նոր կյանքը: Ծեսը հետագայում, հավանաբար, մեզ հարևան իրանական ցեղերի միջոցով է անցել մահմեդական աշխարհ, որտեղ Նովրուզին՝ Նոր տարվա գարնանային տոնին, նույնպես հատիկեղեն են ծլեցնում:

⁴⁴ Այս միջատը հնդեվրոպական որոշ այլ լեզուներում ևս կապվում է Աստծո կամ Աստվածածնի հետ, ինչպես հուն. πασχαλίτσα, ռուս. божья коровка, գերմ. Marienkäfer, անգլ. ladybug:

⁴⁵ Տե՛ս С. С. Аверинцев. Вода.— МНМ, т. 1, с. 240.

⁴⁶ Տե՛ս Գ. Վարդուհանյան. Ջրի պաշտամունքը Հայոց մեջ. КУЛЬТ ВОДЫ у армян. — ՀՀ ԳԱԱ պատմության և արևելագիտության ինստիտուտների և «Այաս» ծովային հետազոտությունների ակումբի «Ծովի մշակույթը մարդկության մշակույթն է քաղաքակրթությունների երկխոսությունում» գիտա-ժողովի նյութեր, Երևան, 2010, էջ 121–127 (հայ.), 291–297 (ռուս.):

Վարդավառի տոնը, ժողովրդական ավանդության համաձայն, կարգվել է Նոյ նահապետի կողմից՝ ի հիշատակ աշխարհակործան ջրհեղեղի, որից փրկվելով՝ տապանը հանգրվանել է Արարատի վրա: Հայոց սրբազան լեռան ստորոտին վերընձյուղվել է մարդկության պատմությունը՝ սկիզբ դնելով նաև հայ ժողովրդի պատմությանը: Ամառվա տապին իրար ջրցողելով՝ մարդկության երկրորդ սկզբի խորհուրդը գոյատևել է դարեդար՝ վերածվելով տոնահանդեսի, որի հնադարյան հովանավորներն Անահիտ և Աստղիկ դիցուհիներն էին:

Քրիստոնեության օրոք Վարդավառը դարձել է Հիսուսի Պայծառակերպության կամ Այլակերպության տոնը՝ կապված Տիրոջ կյանքի այն դրվագին, երբ նա Պետրոս, Հակոբոս և Հովհաննես առաքյալների հետ բարձրանում է Թաբոր լեռ աղոթելու: Մինչ նա աղոթում էր, աշակերտները, օրվա աշխատանքից հոգնած, քնում են: Հանկարծ Հիսուսի դեմքը արևի լույսի պես փայլում ու պայծառանում է, զգեստը՝ սպիտակում ձյան նման: Քիչ հետո երևում են Մովսեսն ու Եղիան և խոսում Հիսուսի հետ: Ողջ լեռը ողողած լույսից աշակերտները զարթնում են ու լսում Աստծո ձայնը՝ «Դա՛ է իմ սիրելի որդին, իրե՛ն լսեցեք»: Օրվա շարականը գովերգում է Թաբոր լեռան վրա պատահածը՝ «Լեռան վրա այլակերպվելով, ցոյց տուեցիր Քո աստուածային զօրութիւնը: Քեզ փառաւորում ենք, ո՛վ իմանալի լոյս»⁴⁷: Այսպես, վաղեմի ջրատոնին փոխարինելու եկած Պայծառակերպության տոնը միջնադարում ներկայացրել է այլակերպված Քրիստոսին և Աստծո որդուն հետևելու պատգամը՝ պահպանելով հանդերձ հնուց ավանդված ջրցողման սովորույթը, որը ներկայումս ևս տոնի ժողովրդական հիմնական ծեսն է: Գյուղերում կա նաև բնության գրկում մատաղ անելու ավանդույթը, որը հնագույն գոհաբերությունների մերօրյա վերապրուկ է:

Առաջին հայացքից իրար հետ կապ չունեցող ջրատոնն ու Տիրոջ պայծառակերպության դրվագը ժողովրդական ծիսակարգում մեկտեղվում են ջրով սրբազործվելու և Աստծո Որդուն փառաբանելու խորհուրդներով, որոնք երկուսն էլ արժեքավոր են հավատավոր հայի համար:

Վերափոխումն Աստվածածնի. Հիսուսի Պայծառակերպությանը հաջորդում է Սուրբ Աստվածածնի տոնը, որը Տիրամոր՝ երկինք առ Աստված փոխվելն է խորհրդանշում, և նույնպես տաղավար տոն է: Ավանդության համաձայն՝ Սուրբ Կույսը խաղաղ է հեռացել այս աշխարհից: Նրան հուղարկավորել են առաքյալները և բարեպաշտ մարդիկ: Բարդուղիմեոսը ներկա չէր, և, երբ լսում է նրա վախճանի լուրն ու այցելում թաղման վայրը մյուս առաքյալների հետ, «գերեզմանաքարը վերցնում են և Տիրամոր մարմինն այնտեղ չեն գտնում. յետագային եկեղեցական հայրերը հիմնուելով այս ավանդութեան վրայ, հաստատում են Վերափոխումն Ս. Աստուածածնի տօնը»⁴⁸:

⁴⁷ Ա. արքեպ. Մանուկեան. նշվ. աշխ., էջ 177–178: Տոնի մասին տե՛ս նաև Վ. Դևրիկյան. Պայծառակերպությունը և Վարդավառի տոնը, Երևան, 2006:

⁴⁸ Ա. արքեպ. Մանուկեան. նշվ. աշխ., էջ 192:

Տոնը նշվում է օգոստոսի 15-ի մոտակա կիրակի օրը և հայտնի է նաև *Խաղողօրհնեք անվամբ*, քանզի Հայ Առաքելական բուրք եկեղեցիներում օրհնվում է խաղողի առաջին բերքը, որից հետո միայն կարելի է այն ճաշակել (ինչպես ընդունված էր խնձորի բերքից օգտվել միայն Վարդավառին խնձորօրհնեքի ծեսից հետո): Հին աշխարհում խաղողի և գինու տոները տարածված են եղել մանավանդ հունահռոմեական միջավայրում (գլխոնիսոսյան խրախճանքներ, գինու տոներ՝ վինալիաներ և այլն): Օգոստոսին նշվող *Խաղողօրհնեքը* հեթանոսական Նավասարդի «նոր պտղոց» տոներն է հիշեցնում, երբ բերքի երախայրիքն էին նվիրաբերում աստվածներին, ապա՝ ծեսի մասնակիցներով ճաշակում:

Տոնն ակունքներով աղերսվում է նաև Վանի թագավորության Մհերի Դուան արձանագրությունում բազմիցս հիշատակվող Խալդյան տոներին, որոնցում խաղողուտ հիմնելու, խշմարելու, էտելու, խնամելու, բերքահավաքի գանազան ծեսեր էին կատարվում⁴⁹: Եվ պատահական չէ, որ հենց խաղողօրհնեքի ծեսն է պահպանվել Հայ Եկեղեցու տոնակարգում, որով առաջին բերքն ընծայվում է աստծուն և օրհնվում, ապա՝ մատուցվում ժողովրդին: Ընդ որում, քրիստոնյա աշխարհում, թերևս, միայն Հայ Եկեղեցին է նման տոն նշում՝ այդ կերպ ևս պահելով գինին իբրև Հիսուսի արյուն գիտելու հուշը:

Ամփոփելով՝ նշենք, որ քննության առնված տոներում ժողովրդական քրիստոնեության դրսևորումներն այսքանով չեն սահմանափակվում. դրանք առկա են ազգային-եկեղեցական մյուս տոներում ևս, որպեսզի են Սուրբ Սարգիսը, Բարեկենդանը, Համբարձումը, Խաչվերացը և այլն, որոնց չանդրադարձանք նյութի ծավալի պատճառով:

Հավելենք, որ անցյալում հայոց բոլոր տոներն ուղեկցվել են տոնածառով: Դրա արմատները հասնում են Կենաց Ծառի հնագույն պաշտամունքին, որի քրիստոնեական արձագանքներն Աստվածաշնչյան դրախտի Անմահություն և Իմացություն ծառերն են: Այժմյան տոնակարգում միտում է նկատվում վերականգնելու միջնադարից եկող տոնածառային ավանդույթը՝ յուրաքանչյուր տոն ուղեկցելով իրեն հատուկ ծառով՝ հաճախ հասկահյուս (խաչբուռ) կամ ծաղկահյուս խաչի տեսքով (հարս ու փեսի և այլ ծառեր), թարմ պտուղներով, չոր մրգերով, ինքնաչեն խաղալիքներով զարդարված:

Այսպիսով, ազգային-եկեղեցական տոների մեծ մասը (նաև մյուսների որոշ ծեսեր) ակունքվում են հնուց, միջին դարերում միաձուլվում քրիստոնեական գաղափարախոսությունն ու սովորութակարգին, ինչի արդյունքում հեթանոսական ժամանակների հավատալիքների և դիցաբանության որոշ տարրեր շարունակում են գոյատևել՝ կերտելով ժողովրդական ծիսապաշտամունքային համակարգը: Հայ ժողովուրդն այս կերպ հազարամյակների ընթացքում պահպանել է իր ազգային նկարագիրը, նախաքրիստոնեական անցյալից ժառանգած պաշարը՝ քրիստոնեության սրբազրված, դարձրել ապրելակերպ ու սերնդեսերունդ փոխանցել: Ժողովրդական քրիստոնեության ավանդույթներ

⁴⁹ Տե՛ս Ս. Գ. Հ մ ա յ ա կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 76:

րը վաղ միջնադարից ի վեր որոշակի երանգ են հաղորդել հասարակութայն տոնական կյանքին, կենսունակ են մնացել մինչ այժմ: Եվ արդի տոնակարգը ներառում է ինչպես անցյալից ժառանգած, այնպես էլ ներկայումս ձևավորված տոներն ու տոնահանդեսները, որոնք մեկ ամբողջություն կազմելով՝ յուրովի արտացոլում են հայոց ազգային մտածելակերպն ու հոգևոր-մշակութային ավանդույթները:

Գոհար Վարդումյան – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, հին դարերի պատմության բաժնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ հին հայոց կրոն, դիցաբանություն, պաշտամունքի վերապրուկները հետագա դարաշրջաններում: Հեղինակ է 1 մենագրության, ավելի քան 100 հոդվածի, համահեղինակ 1 ուսումնական ձեռնարկի: gohar.vardumyan@gmail.com

REFERENCES

- Abrahamyan L., Hambardzumyan Z., Shagoyan G., Stepanyan G. The Chain of Seven Pilgrimages in Kotayk, Armenia: Between Folk and Official Christianity. – Sacred Places, Emerging Spaces Religious Peuralism in the Post-Soviet Caucasus. New York, Oxford, 2018.
- Abramyan L. A. Pervobytnyi prazdnik i mifologiya. Yerevan, 1983 (In Russian).
- Agatangeghay Patmutiun Hayots (ashkhatuteamb G. Ter-Mkrtchean ev St. Kanayeants), Tpghis, 1909 (In Grabar).
- Alishan Gh. Yushikk hayreniats Hayots, h. A, Venetik-Sb. Ghazar, 1869 (In Armenian).
- Anania Shirakatsi. Tiezeragitutivn ev tomar, Yerevan, 1940 (In Grabar).
- Antonyan Yu. Religiosity and Religious Identity in Armenia: Some Current Models and Developments.– Acta Ethnographica Hungarica, 2011, 56 (2).
- Arutyunov S. A., Ryzhakova S. I. Kul’turnaya antropologiya. M., 2004 (In Russian).
- Astudsashunch Matean Hin ev Nor Ktakaranneri (verahratarakutivn), Yerevan, 1999 (In Armenian).
- Averintsev S. S. Voda.– Mify narodov mira, t. 1. M., 1980 (In Russian).
- “Azgagrakan Handes” (Shushi-Tiflis), 1–26 grqer, 1896–1917 (In Armenian).
- Badalyan H. S. Oracuyci patmutyun, Yerevan, 1970 (In Armenian).
- Bazeyan K., Aghanyan Gr. Zhoghovrdakan qristoneutyan drsevorumnere gyumretsineri tonadsisakan varqum.– “Gitakan ashkhatutyunner”, HH GAA Shiraki hayagitakan hetazotutyunneri kentron, 2014, № 14 (In Armenian).
- Bell C. Ritual Theory, Ritual Practice. New York, 1992.
- Bowker J. Folk Religion.– The Concise Oxford Dictionary of World Religions. Oxford University Press, 2003 (2000).
- Cook R. The Tree of Life. Image of the Cosmos. New York, 1974.
- Devrikyan V. Paydsarakerputyune ev Vardavari tone, Yerevan, 2006 (In Armenian).
- Frazer J. G. The Golden Bough: A Study of Magic and Religion (a new abridgement). Oxford University Press, 1998.

- Hakobyan Gr. Sharakanneri zhanre hay mijnadaryan grakanutyany mej (V–XV dd.), Yerevan, 1980 (In Armenian).
- Handwerk B. From Saint Nicholas to Santa Claus.– www.nationalgeographic.com/news/2018/12/131219-santa-claus-origin-history-christmas-facts-st-nicholas/.
- Hayastani Hanrapetutyany orenqe Hayastani Hanrapetutyany toneri yev hishataki oreri masin.– www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1274&lang=arm (In Armenian).
- Hmayakyan S. G. Vani tagavorutyany petakan krone, Yerevan, 1990 (In Armenian).
- Kalendarnye obychai i obriady narodov Vostochnoy Azii. M., 1985 (In Russian).
- Kalendarnye obychai i obriady narodov Zapadnoy Azii. M., 1997 (In Russian).
- Kalendarnye obychai i obriady narodov Zarubezhnoy Yevropy. M., 1973, 1977, 1978, 1983 (In Russian).
- Kapaló J. A. Folk Religion in Discourse and Practice.– “Journal of Ethnology and Folkloristics”, 2013, 1 (1).
- Khachatryan Zh. K., Petrosyan E. Kh. Hamshentsineri tarekan tonern u khagherye (ZhT dari verj –I dar). – Hamshen ev hamshenahayutivn (gitazhoghovi nivter), Yerevan–Peyrut, 2007 (In Grabar).
- Kharatyan-Arakelyan Hr. Hay zhoghovrdakan tonere, Yerevan, 2005 (In Armenian).
- Kharatyan Hr. Tone ev tonahandesi mshakuyte Hayastanum, Yerevan, 2010 (In Armenian).
- Kostaneants K. Grigor Magistrosi Tghtere, Aleksandrapol, 1910 (In Armenian).
- Leeming D. A. Creation Myths of the World. – An Encyclopedia, Book 1, 2010.
- Levin I. Dvoeverie i narodnaya religiya v istorii Rossii (per. s angl. A. L. Toporkova i Z. N. Isidorovoy). M., 2004 (In Russian).
- Manukean A. arkep. Hay ekeghetsu tonere, Tehran, 1969 (In Armenian).
- Melik-Pashayan K.V. Anahit ditsuhu pashtamunqe, Yerevan, 1963 (In Armenian).
- Mkrtychyan S. Hayots tonadsisakan mshakuyt, Yerevan, 2016 (In Armenian).
- Movsisi Khorenatsvoy Patmutivn Hayots (qnnakan bnagire ev neradsutyune M. Abeghyani ev S. Yarutiuneani), Yerevan, 1991 (In Grabar).
- Odabashyan A. Amanore hay zhoghovrdakan tonacuycum.– Hay azgagrutyun ev banahyusutyun, h. 9, Yerevan, 1978 (In Armenian).
- Oracoys, 2020, Surb Edjmiadsin, Mayr Ator (In Armenian).
- Panchenko A. A. Issledovaniya v oblasti narodnogo pravoslaviya: Derevenskie svyatyni Severo-Zapada Rossii. SPb., 1998 (In Russian).
- Petrosyan E. Bogi i ritualy Drevney Armenii. Yerevan, 2004 (In Russian).
- Petrosyan E. Prazdniki armyan v kontekste yevropeyskoy kul'tury. Yerevan, 2011 (In Russian).
- Sahakyan A. Zhoghovrdakan kristoneutyany drsevorumnere midjnadaryan Hayastanum, Yerevan, 2014 (In Armenian).
- Simonyan L. Tomarayin dsisashar, h. A, Nor Tari, Surb Dsnund, Yerevan, 2006 (In Armenian).
- Surb Nikoghayos Hayrapeti sqancheliqneri masin.– Varq Srbots, h. G, Sb. Edjmiadsin, 2010.–surbzoravor.am/post/view/surb-nikoghayos-hayrapeti-sqancheliqneri-masin (In Armenian).
- Toporov V. N. Mirovoe derevo, t. 1, 2. M., 2010 (In Russian).

- Toporov V. N. Prazdnik.– Mify narodov mira, t. 2. M., 1982 (In Russian).
- Toporov V. N. Rasteniya.– Mify narodov mira, t. 2. M., 1982 (In Russian).
- Toporov V. N. Yaitso Mirovoe.– Mify narodov mira, t. 2. M., 1982 (In Russian).
- Tumanyan B. E. Tomari patmutyun, Yerevan, 1972 (In Armenian).
- Vardumyan G. D. Bog solntsa Mihr – pokrovitel’ dobra i spravedlivosti u armyan.– Voprosy istorii Armenii (sbornik nauchnykh statey), NAN RA, Institut istorii. Yerevan, 2014, № 15 (In Russian).
- Vardumyan G. Djri pashtamunqe hayots medj. Kul’t vody u armyan.– HH GAA patmutyan yev arevelagitutyan institutneri ev “Ayas” dsovayIn hetazotutyunneri akumbi “Dsovi mshakuite mardkutyan mshakuytn e qaxaqakrtutyunneri yerkkhosutyunum” gitazhoghovi nyuter, Yerevan, 2010 (In Armenian, In Russian).
- Vardumyan G. D. Dokhristianskie kul’ty armyan.– Armyanskaya etnografiya i fol’klor, t. 18. Yerevan, 1991 (In Russian).
- Vardumyan G. Haykazunnere ev Navasardyan tonere.– “Haykazuniner. araspel ev patmutyun” midjazgayIn gitazhoghovi hodvadsneri zhoghovadsu, Yerevan, 2013 (In Armenian).
- Vardumyan G. D. Hayots hin havatqi andradardznere nerkayis tonakargum.– Yerevani V. Bryusovi anv. petakan lezvabanakan hamalsaran. “Grakanutyan ev mshakuyti ardi himnakhndirner” midjazgayin gitazhoghov, pr. E, Yerevan, 2014 (In Armenian).
- Vardumyan G. D. Mifo-epicheskiy obraz armianskogo Mihra v kontekste sravnitel’nogo analiza s rimskim Mitroy.– Mezhdunarodnaya konferentsiya “Transformatsionnye protsessy v epokhu Printsipata. Vklyuchenie Rima v osevoe vremya”. Rossiysko-Armianskiy (Slavyanskiy) universitet. Yerevan, 2015 (In Russian).
- Vardumyan G. D. Proyavleniya narodnogo khristianstva v sovremennoy prazdnichnoy zhizni armyan i russkikh.– “Vestnik Yerevanskogo gosudarstvennogo universiteta yazykov i sotsial’nykh nauk im. V. Bryusova”, 2017, № 1 (In Russian).
- Vardumyan G. D. Vagh midjnadarean Hayastani hokevor mshakoyte (hetanosutivnits depi khristoneutivn).– “Bazmavep” (Venetik), 2010–2011, № 1–2 (In Armenian).
- Yoder D. Toward a Definition of Folk Religion.– “Western Folklore”, 1974, 33 (1).

ПРОЯВЛЕНИЯ НАРОДНОГО ХРИСТИАНСТВА В ПРАЗДНИЧНОЙ ЖИЗНИ АРМЯН

ԳՕԱՐ ՎԱՐԴՄՅԱՆ

Ր Ե Յ Ո Մ Ե

Ключевые слова: праздник, народное христианство, национально-церковные праздники, праздничный календарь, праздничная культура, языческий, Хайкидский календарь, Армянская Апостольская Церковь, храм, обряд, церемония.

В общественно-культурной жизни армян, исповедующих христианство более чем 1700 лет, особое место занимают такие праздники, как Св.

Рождество, Сретение Господне, Вербное Воскресенье, Воскресение, Преображение Господне, Преображение Богородицы и др., которые в течение многих веков народ справлял под покровительством Армянской Апостольской Церкви. Известно, что многие дохристианские традиции, в частности народные праздники и связанные с ними обычаи, влились в христианскую обрядность и в бытовую культуру народа.

На основе археологических, фольклорных и, особенно, этнографических данных установлено, что в языческом прошлом праздничная жизнь протекала в соответствии с экономической деятельностью общества, которая, в свою очередь, неразрывно была связана с природной средой. Праздники были посвящены какому-либо знаменательному событию, правителю или богам. Празднества проводились в храмах, капищах, святилищах или на природе.

С принятием христианства был составлен праздничный календарь, в котором нашли отражение христианские реалии, связанные с Иисусом Христом, Марией Богородицей, святыми, крестом, а также с важными историческими событиями и личностями. Празднование совершалось уже в церквях, монастырях, священных местах и сопровождалось торжественным церемониалом. Однако, как в древности, так и в средневековье, народ справлял празднество по-своему, после официальной части продолжая его на лоне природы, в каком-нибудь священном месте, или дома, в кругу родных и близких. Вся эта неофициальная часть праздника после церковной церемонии и составляла *народное христианство*, которое, начиная с раннего средневековья, придает особый национальный оттенок праздничной жизни общества. Многие его обряды и обычаи сохранились вплоть до наших дней, отражая армянский менталитет и традиции духовной культуры народа.

Гоар Вардумян – к. и. н., ведущий научный сотрудник Института истории НАН РА, заведующая отделом истории древних веков. Научные интересы: древнеармянская религия, мифология, отголоски культа в последующие эпохи. Автор 1 монографии, более чем 100 статей, соавтор 1 учебного пособия. gohar.vardumyan@gmail.com

MANIFESTATIONS OF FOLK CHRISTIANITY IN THE FESTIVE LIFE OF ARMENIANS

GOHAR VARDUMYAN

Summary

Key words: holiday, folk Christianity, national-church holidays, holiday calendar, festive culture, heathen, Haykid calendar, Armenian Apostolic Church, temple, ritual, ceremony.

In the social and cultural life of Armenians, professing Christianity for more than 1700 years, special place occupy such holidays as Holy Christmas, the Presentation of the Lord to the Temple, Palm Sunday, the Resurrection, the Transfiguration of Jesus Christ, the Transfiguration of Holy Virgin, the Holy Cross, etc. For many centuries, people have celebrated them under the patronage of the Armenian Apostolic Church. It is known that with the adoption of Christianity, many pre-Christian traditions, especially folk festivals and connected with them customs, merged into Christian rituals and everyday life of the people.

On the basis of archaeological, folklore and, especially, ethnographic data, it was established that in the pagan past the festive life proceeded in accordance with the economic activity of the society, which was inseparably connected with the natural environment. Holidays were devoted to some significant event or the ruler or gods. Festivities were held in temples, sanctuaries or in nature.

With the adoption of Christianity, a holiday calendar was made, which reflected the Christian realities associated with Jesus Christ, Holy Virgin, saints, the cross, as well as important historical events and personalities. The celebrations took place in churches, monasteries, sacred places, and were accompanied by a solemn ceremony. But both in ancient and medieval times, people celebrated the holiday in their own way, after the official part they continued it in the lap of nature, in some sacred place, or at home, with family.

All this unofficial part of the holiday after the church ceremony is hence “folk Christianity”, which since the early Middle Ages has given a special national air to the festive life of society, and many of its rites and customs have survived to the present day, reflecting the Armenian mentality and traditions of the spiritual culture of the people.

Gohar Vardumyan – Candidate of Sciences in History, Leading Researcher at the NAS RA Institute of History, Head of the Department of Ancient History. Scientific interests: ancient Armenian religion, mythology, cult echoes in later eras. Author of 1 monograph, more than 100 articles, co-author of 1 textbook. gohar.vardumyan@gmail.com

ԱՐՑԱԽԻ ԲԵՐՁՈՐ ԳԱՎԱՌԻ ՊԱՏՄԱԿԱՆ
ՀԱՐԱՐ ԳՅՈՒՂԸ*

ՄՀԵՐ ՔՈՒՄՈՒՆՑ, ԶՈՀՐԱԲ ԸՌՔՈՑԱՆ

Բանալի բառեր՝ Հարար, Արցախ, Սյունիք, ավանդազրույց, պատմա-մշակութային հուշարձաններ, ստուգաբանություն, տեղանուններ:

Հարար գյուղը գտնվում է Արցախի Հանրապետության Քաջաթաղի շրջանի արևելքում՝ շրջկենտրոն Բերձորից 40 կմ հարավ-արևելք, Արաքսի Հակարի վտակի միջին հոսանքի ձախակողմյան սարալանջերին, գետափից ուղիղ գծով 7–8 կմ հեռու, ՀՀ Սյունիքի մարզի Կոռնիձոր գյուղից 10 կմ արևելք: Ըստ նոր վարչական բաժանման՝ Հարարը Խաչգետիկ և Աղավնատուն գյուղերի հետ ներառվում է Քաջաթաղի շրջանի Աղավնատուն գյուղական համայնքի մեջ: Այստեղ կա 28 տնտեսություն՝ 114 բնակչով, որից 8-ը (35 բնակչով)՝ Աղավնատուն գյուղում, 9-ը (33 բնակչով)՝ Հարարում, 11-ը (46 բնակչով)՝ Խաչգետիկում¹:

Հարարի պատմաաշխարհագրական դիրքի վերաբերյալ այսօր կարծիք կա, ըստ որի այն ընդգրկվել է պատմական Արցախ նահանգի Բերձոր գավառի մեջ՝ ավելի ուշ Բերդաձոր կամ Հակարի/Հագարու կոչված գավառում, իսկ ուշ միջնադարում մաս է կազմել Հարավային Արցախի Դիզակի մելիքության²: Մեկ այլ տեղեկության համաձայն՝ Հարարը պետք է որ ընդգրկված լիներ Սյունիք նահանգի Աղահեճք կամ Հաբանդ գավառների մեջ³, թեպետ այդ դեպքում գյուղի անունը պետք է նշված լիներ Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմություն» մեջ արտագրված Տաթևի վանքին հարկատու գյուղերի հին ցանկում⁴:

1856 թ. Հարարն ընդգրկված էր Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուր գավառում և 1897 թ. մարդահամարով ուներ 523 բնակիչ, բոլորը՝ հայեր: Բնակչության թվաքանակն այլ էր 1914 թ.՝ 412 մարդ, իսկ 4

* Ներկայացվել է 27. XII. 2018 թ., գրախոսվել է 04. VIII. 2019 թ., ընդունվել է տպագրության 06. IX. 2019 թ.:

¹ Հարարը վերաբնակեցվել է 1994 թ.: Ներկայիս բնակիչները Հայաստանի տարբեր բնակավայրերից են՝ Հրազդանից, Երևանից և այլն:

² Այս մասին մանրամասն տե՛ս Ա. Յակոբեան. Պատմա-աշխարհագրական եւ վիճաբարդիտական հետազոտություններ (Արցախ եւ Ուտիք), Վրեննա-Երեւան, 2009, էջ 107–108, 284–286, 293–294:

³ Տե՛ս Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Երևան, 1963, էջ 32 և քարտեզը:

⁴ Ստեփանոս Սիւնեցի. Պատմութիւն տանն Սիսական, Մոսկվա, 1861, էջ 371–379:

տարի հետո գրեթե եռապատկվել էր՝ 1.078 մարդ: Ըստ հուշարձանագետ Սամվել Կարապետյանի՝ 1918–1920 թթ. հայ-թաթարական բախումներից հետո՝ 1921 թ., մարդահամարով գյուղում մնացել էր 55 հայ բնակիչ⁵:

Ժամանակին Հարարն իր տեղանքի և բնակլիմայական պայմանների շնորհիվ, համեմատած շրջակա մյուս բնակավայրերի հետ, բավականին մեծ ու բարեկարգ է եղել և կարևոր նշանակություն է ունեցել Սյունիք-Արցախ պատմական տարածքների քաղաքական ու տնտեսական առնչությունների համար: «Դիզակի Հարար հայկական գյուղը, որը Գորիսի շրջանի Կոռնիձոր գյուղից գտնվում է մի քանի կիլոմետր հեռավորության վրա, նշանակալի դեր է խաղացել Ղարաբաղ-Ջանգեղուրի 1918–1921 թթ. ազատագրական պայքարի ընթացքում՝ գաղտնի հաղորդակցության համար գլխավոր կամուրջ հանդիսանալով հայկական այդ երկու գավառների միջև, — գրում է ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանը: — 19-րդ դարի վերջին Հարարն ուներ մի քանի հազար բնակիչ, Հարավային Արցախի կրթության կարևոր օջախներից էր, որտեղ միջնադարում գրվել են արժեքավոր ձեռագրեր: Գտնվելով տարանցիկ ուղիների վրա՝ գյուղը նաև առևտրի նշանավոր կենտրոն էր, ուներ ընդարձակ քարվանսարաններ, ուր իջևանում էին Պարսկաստանից Շուշի, Գանձակ և ավելի հեռուներ գնացող առևտրական քարավանները»⁶:

Ինչպես նկատում ենք, Հարարի բնակչության վերաբերյալ Ս. Կարապետյանի և Հ. Սիմոնյանի հաղորդումների մեջ հակասություն կա: Այս դեպքում, կարծում ենք, պետք է վստահել մարդահամարի տվյալներին՝ որպես բնակչության թվի փաստացի արձանագրում:

Ծագումով հարարցիների բանավոր տեղեկությունների համաձայն՝ այնտեղ զարգացած են եղել տարբեր արհեստներ, գործել են իջևանատներ⁷, ինչն էլ վկայում է, որ Հարարն առևտրի համար տարանցիկ բնակավայր էր⁸: Եղել են ժամանակներ, երբ գյուղում ապրել են 2.000-ից ավելի հայ բնակիչներ, իսկ բնակավայրը՝ քաղաքատիպ: Հարար-

⁵ Մանրամասն տե՛ս Ս. Կարապետյան. Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Երևան, 1999, էջ 179–180:

⁶ Հ. Սիմոնյան. Անդրանիկի ժամանակը, Երևան, 1996, էջ 457:

⁷ Մինչև օրս նշմարվում է Պետրոսաշենի՝ ժայռի վրա կառուցված և պարիսպներով պատված Բալախանումի տունը, որը, ըստ արժագյաղուկցի վաստակաշատ մանկավարժ Մանվել Հակոբյանի, իջևանատուն է եղել: Կարծիք կա նաև, որ Ղոչարխաջի դպրոցը, որտեղ հաճախում էին շրջակա Հարարի, Թեգխարաբի, Պետրոսաշենի և այլ բնակավայրերի աշակերտները, հին ժամանակներում նույնպես եղել է իջևանատուն (ներկայումս այդ դպրոցի պատերն են նշմարվում): Ցավոք, Հարարում, Արփագյաղուկում և Սպիտակաշենում որևէ իջևանատուն այսօր պահպանված չէ:

⁸ Հարարցիների կարծիքով իրենց գյուղն ունեցել է 2.000 տարվա պատմություն, իսկ շրջակայքում եղել են բազմաթիվ հինավուրց հուշարձաններ: Այս տեղեկությունները հավաքել ենք Արցախում, Կոռնիձոր և Տեղ գյուղերում բնակվող ծագումով հարարցիներից (Տեղ գյուղից՝ Պետունց Սուրիկ և ուրիշներ):

ցիները հատկապես հիշում են իրենց հարյուրից ավելի աղբյուրները՝ Թաղբանդ, Յուրտ աղբյուր, Զլզլան աղբյուր, Խաչգետիկ աղբյուր և այլն, նաև՝ դրանցից գոյացած լճակները: Տեղագիր Մակար Բարխուդարյանցը գրում է, որ Հարար (Յարար) գյուղի բնակիչները գաղթել են Ղարադաղից ու ավելացնում. «Հողն բեկական, տեղական բերքերն միևնույն, գերազանց օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք 100 տ. եկեղեցի չունին, քահանայ մի: Ծուխ 134, ար. 532, իգ. 482»⁹:

Յավոք, հարարցիների խոսվածքն ամբողջությամբ չի պահպանվել, բայց հավանական է՝ այն նախապես՝ մինչև այս տարածք պարսկահայերի գալը¹⁰, եղել է նույն խոսվածքը, որն այժմ պահպանվել է Սյունիքում և կազմել է Հակարի-Աղավնոյի գետահովտի բնակչության ընդհանուր հաղորդակցման մաս:

Հարարում գործածված լեզվի վերաբերյալ մասամբ տեղեկություններ ենք հայթայթում ոչ միայն ծագումով հարարցիներից¹¹, այլև շրջակա տարածքում պահպանված տեղանուններից¹² Դիմանա յուրդ, Մէծ յուրդ, Արփադադուկա յուրդ, Ճըղարին թումբ, Վաքո՛ յուրդ անդուր, Սևբարէր, Աղբարէր, Գյազին թումբ, Սաքյունց սար, Թիլակէն յուրդ, Մաննին խութ, Դուղին տակը, Կիզիրտէղին թումբ, Յէսսուն տակը, Պրտաուին ծօր, Մէծ կէտ, Ծօրին էնգյունար, Ղուցէն տափր, Խամրհատր, Կյօղին ծօրը, Մըսրօտին թումբը, Դէրին անդրուրը, Մկրտումի թումբը, Ճըղացին ծօր, Զինգանա կապ, Ղու արխաջ, Պօց անդուր, Կիճի ճուր, Ապրէսին քար, Մէծ քար, Ափուն¹³ քար, Խումարաց կյունէր, Տըղըցու թաղ, Քարանդրուր, Սաքյունց անդրուր, Կոլխօղին անդուր, Գյօլէն տափր, Թըռամին անդրուր, Լվըքարէր, Ղաշղա գյուն, Ղաշղա քար, Կէճակտըվածի¹⁴ ծրմակը, Յէլիճա, Ա/Ը/լմանա յուրդ, Գյունում արխի ծմակ,

⁹ Մ. եպ. Բարխուդարեանց. Արցախ, Բագու, 1895, էջ 401 (տե՛ս <http://www.digilib.am> կայքում):

¹⁰ Հավանաբար, նրանք եկել են 1840 թ. հետո (համ. Ս. Կարապետյան. նշվ. աշխ., էջ 180):

¹¹ Մեր հարցումներով հաստատվեց, որ հարարցիների խոսակցականը մոտ է եղել Գորիսի՝ Տեղ և Կոռնիձոր գյուղերի խոսվածքին: Հարարի շրջակայքից մնացած միակ հայկական գյուղն Արփադադուկն էր, որի խոսվածքն էլ փոխչիման հետևանքով հետագայում մասամբ նմանվել է Խճաբերդ, Տումի և շրջակա գյուղերի՝ «Ս» ճյուղին պատկանող Հաղրութի, Շաղախ-Խճաբերդի խոսվածքներին:

¹² Նշենք, որ արցախցի գրողներ Վարդան Հակոբյանի «Զատիկը ջրավազանի հատակին» (2010), «Երամականչ» (2007) և Ալեքսանդր Հասրաթյանի «Դավիթ պապի տոհմածառը» (2012) երկերում ներկայացված են Հարարը, այնտեղ ապրող մարդն ու բնությունը (մեր շնորհակալությունն ենք հայտնում Արցախի գրողների միության նախագահ, հարարցի Վ. Հակոբյանին՝ մեզ տրամադրած տեղեկությունների համար):

¹³ Ըստ ավանդազրույցի՝ այս բնակատեղում եղել է գրող Բաֆֆին, երբ շրջագայել է Արցախում: Ափուն կոչվող քարի տակ նա նստել-հանգստացել է, այդ ժամանակից էլ քարը կոչվել է Ափուն < Բաֆֆու քար (այս մասին մեզ պատմեց Վ. Հակոբյանը):

¹⁴ Կայծ բառը Հաղրութում հնչվում է կած-ակ, Սյունիքում՝ կէծ-ակ:

Ամբողջի¹⁵ սուրբ, Թեսխարաբ (հին ավերակ բնակատեղի), Կատարվանք, Ղըլուվէն քար¹⁶ և այլն:

Այս տեղանունների մեծ մասը նույն հնչողությամբ կա Գորիսի շրջանի Կոռնիձոր, Տեղ, Խնձորեսկ և այլ գյուղերում: Հաղրութի խոսվածքի հետ ունեցած առնչության մասով նշենք՝ Հարարում սահմանականի ներկան կազմվում էր այնպես, ինչպես Սյունիքի խոսվածքներում՝ Կոռնիձոր, Տեղ և այլն՝ -ում մասնիկով: Մասամբ նկատվում են ձևեր, որոնք մոտ են Կապանի գյուղերի խոսվածքին: Ազդեցություններ գրանցվում են նաև Հաղրութի խոսվածքից¹⁷: Տարածքի բնակիչները՝ աղուլեցիների, հարարցիների, հակեցիների սերունդները, ապրում են Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում, Արցախի Հանրապետության Մարտունու, Մարտակերտի, Ասկերանի շրջաններում, մայրաքաղաք Ստեփանակերտում¹⁸:

Տարբեր ժամանակներում՝ մինչև գյուղի վերջնական հայաթափումը՝ 1930-ական թվականներ, Հարարում եղել են բնակչության ներհոսք և արտահոսք: Շամախու Քեօվուջ գյուղի նկարագրության մեջ Մ. Բարխուդարյանցը գրում է, որ վերջինիս բնակիչները եկել են «Վարանդա գաւառի Աւետարանոց, Ծովատեղ, Մամնա, Ղավախան և Հարար գյուղերից»¹⁹:

Հարարի մասին պահպանված կցկտուր տեղեկություններից կարելի է ենթադրել, որ, իսկապես, ժամանակին այս գյուղը տարբերվել է Արցախի և Սյունիքի հայկական մյուս գյուղերից: Այն ունեցել է հին, ընդարձակ գերեզմանոց՝ շքեղ տապանաքարերով, քարաշեն աղբյուրներ, մի քանի հարկանի բնակելի տներ, բնական և արհեստական այրերից կառուցված ձմեռանոցներ, 4 առանձին թաղամասեր, որոնք, ըստ էության, առանձին գյուղեր են եղել²⁰. «Հարարը բաժանուած է չորս մասի, որոնք առանձին-առանձին գիւղ են կազմում եւ պաշտօնական

¹⁵ Ավանդագրույց կա, որ երբ Վարդան Մամիկոնյանը վերափոխվել է, գինվորները նրան հասցրել են Ամբ/ու/տեղ, որը դժվարանցանելի վայր է: Այդտեղ կարմրավուն քար կա: Ասում են, թե այն Վ. Մամիկոնյանի արյունից է կարմրել: Հենց այստեղ է Կարմր/ի/ր քարը:

¹⁶ Մինչև հիմա էլ Հարարի կողքին պահպանվում է այդ շատ մեծ, երկար քար/քարայրը, որի մասին կխոսվի ստորև:

¹⁷ Երվանդ Լալայանը նշում է, որ տարբեր էին «Ղարաղչլաղ, Հարար և Մաղաւուզի Ղարաղչլաղ» բարբառները [Ն. Լալայան. Զանգեզուր (Բնակիչներ). – «Ազգագրական հանդես» (Շուշի), 1898, № 2, էջ 52]:

¹⁸ «Աղուլի» հայրենակցական միության անդամները կարծում են, որ «պետք է համաժողովրդական և պետական մակարդակով հիշատակվեն XX դարասկզբին Ազրբեջանի կողմից իրականացված տեղահանության և ցեղասպանության դեպքերը» (տե՛ս <https://armenpress.am> կայքում):

¹⁹ Մ. եպ. Բարխուդարյանց. Աղուլանից երկիր եւ դրացիք (Արցախ), Երեւան, 1999, էջ 97: Իհարկե, չի կարելի լրիվ բացառել, որ այս դեպքում առկա է տպագրական վրիպակ, և հեղինակն իրականում նկատի է ունեցել ոչ թե Հարար, այլ՝ Հարավ գյուղը (հմմ. Մ. եպ. Բարխուդարյանց. Արցախ, էջ 109–110):

²⁰ Այս մասին տե՛ս Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բարսեղյան. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Երեւան, 1991, էջ 384:

տեղերում կրում են միեւնոյն Հարար անունը, իսկ իրենց մէջ յայտնի են որոշ անուններով, այն է՝ Թէգ-խարաբ, Արփագեաղուկ, Գօնաղ-գեօրմազ եւ Սեչմանլու ...»²¹:

Հարար գյուղը հաճախ հարձակումների է ենթարկվել: Մինչև օրս էլ այս դեպքերի մասին հիշողություններ են պահպանվել հատկապես Տեղ և Կոռնիձոր գյուղերում, որ վերաբերում են արդեն XX դարի առաջին կեսին: Ծագումով հարարցիները և տեղացիներն իրենց մեծերի պատմություններից հիշում են, թե ինչպես են ժամանակին օգնել հարազատ հարարցիներին՝ ապաստան ու բնամթերք տալով: Այսպես, օրինակ, Ա-Դոն գրում է. «135 տուն ժողովուրդը կողոպտեց մինչև վերջին թելը ...: Ապա նա գերի ընկաւ շրջապատող թուրքերի ձեռքը: Խեղճ հայեր, օրեր շարունակ նրանք ապրում էին մահաւան սարսափի, բարոյական եւ հոգեկան տանջանքների տակ, նրանք կտրւած դրսի աշխարհից, չը գիտէին ինչ էր կատարւում դուրսը, չը գիտէին, որպիսի վախճան սպասում է իրենց: Եւ երբ այդ բոլորից յետոյ զօրքը զնաց ազատելու, նրանք չէին հավատում իրենց աչքերին: Ինչպէս դահճի սրից փախածը, նրանք հեռացան այդ ծանօթ վայրերից, այլեւս չը վերադառնալու պայմանով, գնացին մի այլ տեղ ապաստան փնտռելու: Հարարն ունեցավ բաւական մարդկային գոհեր ...»²²: Այս առիթով «Մշակ»-ը գրում է. «Երկար ժամանակ Օձաբերդ, Հարար, Թեսխարաբ գիւղերը հարստահարվում էին ալիանլուցեղի յայտնի աւազակների յարձակումներից ու կողոպուտներից. այդ ցեղը բացի աւազակութիւնից, ոչ մի արհեստ չունի, եւ ապրում է հայ ժողովրդի ... վաստակած աշխատանքով ...»²³:

Հարարի հետագա ճակատագրի մասին այսպիսի տեղեկություններ կան. «1918 թ. Հարարը ենթարկվեց թուրքերի հարձակմանը, ավերվեց, իսկ բնակչութեան մեծ մասը սպանուի ենթարկվեց կամ հեռացավ այլ վայրեր: Գյուղում մնացին սակավաթիվ հայեր: 1920 թ. Դոն և Նժդեհը ազատագրեցին Հարարը, և Կոռնիձոր-Հարար-Խձաբերդ գծով Ղարաբաղը միացավ Հայկական Հանրապետութեանը: Խորհրդային իշխանութեան տարիներին ինչպես Ղարաբաղի շատ գյուղեր, Հարարը նույնպես թուրքացվեց»²⁴: 1919 թ. հունվարի 15-ից ոչ միայն Հարարը, այլև Սպիտակաչեն, Պետրոսաչեն գյուղերը հայաթափվում են Ղարաբաղի ու Զանգեզուրի նահանգապետ նշանակված Սուլթանովի հրամանով, ով, օգտվելով անգլիացիների հովանավորութունից, կարողացավ վերջնականապես սեպ խրել Սյունիքի և Արցախի միջև. Հարարը «վերջին թելն» էր: 1925 թ. այն դուրս մնաց նաև Ղարաբաղի Հաղրուլթի շրջանից, ընդգրկվեց Ադրբեջանի ԽՍՀ Լաչինի շրջանի մեջ. «Երկու հազարամյակ «Հարար» անունը կրած հայկական նշանավոր

²¹ «Նոր-դար» (Թիֆլիս), 09. IV. 1899:

²² Ա-Դօ. Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905–1906 թթ.) (փաստական, վիճակագրական, տեղագրական լուսաբանութիւններով), Երևան, 1907, էջ 263:

²³ «Մշակ» (Թիֆլիս), 24. III. 1899:

²⁴ Հ. Սիմոնյան. նշվ. աշխ., էջ 457:

գյուղը 30-ական թվականներին վերանվանվեց Ջաֆարաբադ՝ Ադրբեյջանի կոմկոսի կենտկոմի նախկին քարտուղար Միր-Ջաֆար Բադիրովի պատվին, իսկ 1953 թ. նրա մերկացումից, պաշտոնազրկումից և գնդակահարությունից հետո վերանվանվեց Աշաղը Փարաջան»²⁵:

Խորհրդային շրջանում Ադրբեյջանին բռնակցված Հարարի մասին տեղեկությունները սակավ են: Նշենք, որ այստեղ ապրող թյուրքերը²⁶, որքան հնարավոր է եղել, փորձել են ջնջել հայկական հետքերը:

Մի ավանդազրույցի հետքերով

Ասկերանի շրջանի Հարավ գյուղի բնակիչները պատմում են, որ իրենց արմատները Գորիսից են: Նախկինում գյուղը եղել է քիչ վերև՝ Սեգիքաու սրբավայրի մոտ, որտեղ հին ժամանակներում Հարար անունով մի բնակավայր է եղել, որն էլ, հավանաբար, բնակեցվել է պատմական Մյուս Հաբանդ գավառի Հարար գյուղից այդտեղ տեղափոխված գաղթականներով: Նշում են նաև, որ Հարար գյուղը մնացել է հողի տակ, բայց թե ո՞ր Հարարի մասին է ավանդազրույցի այս հատվածը և ո՞ր ժամանակաշրջանն է ընդգրկում, հայտնի չէ²⁷: Մյուսնիքի համար հիմնական ճանապարհները դեպի Արցախ անցել են այս գյուղով:

Հարարի մասին վերոնշյալ ավանդազրույցը, անշուշտ, ունի պատմական հիմքեր, և խոսքը, կարծում ենք, ոչ թե Ասկերանի շրջանի մի բնակավայրի մասին է, որ շփոթում են տեղացիները, այլ ներկայիս Հարարի, քանի որ նախկինում, ինչպես նշվեց, իրարից անջատ գտնվող չորս բնակավայրերի համար եղել է Հարար ընդհանրական տեղանուն, որ հետո փոխվել են՝ Աշաղը Փարաջան՝ «Ներքին Փարաջան» և Յուխարը Փարաջան՝ «Վերին Փարաջան», ապա այլ անուններով գյուղեր, որոնք այսօր հիմնականում վերականգնված են:

Այս ավանդազրույցի որոշ հիմքեր գտնում ենք պատմական վկայություններում²⁸, մասնավորապես, թե ինչպես են հարարցիները գաղթել և հաստատվել տարբեր վայրերում: XIX դ. կեսերին Գոտչավանքի վարդապետ Առաքել Կոստանդյանցն իր «Արցախի պատմություն» աշխատանքի²⁹ «Քուրդ կոչուղ մի ազգի մասին, որ կատարում է Մահմադի աղանդը եւ սաստիկ չարագործ է» գլխում պատմում է ներկայիս Քաշաթաղի տարածքում հաստատված քրդերի մասին:

²⁵ Նույն տեղում:

²⁶ Թյուրքեր եզրույթը օգտագործում ենք էթնոլեզվային առումով նկատի ունենալով թյուրքական լեզվախմբին պատկանող լեզուներով խոսող ցեղային հանրությունները:

²⁷ Վ. Գասպարյան. Հարավցիների երազանքն է գյուղում ունենալ գործող եկեղեցի (տե՛ս <http://www.asu.am> կայքում):

²⁸ Այս մասին կարելի է տեսնել XIX դարավերջի և XX դարասկզբի մամուլում՝ «Մշակ»-ում, «Նոր-դար»-ում և Ա-Դօ-ի գրքում:

²⁹ Պատմություն մի մասի հրատարակությունը տե՛ս Ա. Մաղալյան. Առաքել Կոստանյանցի «Պատմություն Գոտչայ վանուց» աշխատությունը. – «Բանբեր Մատենադարանի», Երևան, 2008, № 18, էջ 283–305:

«Քանի որ նրանք այնպիսի չարագործութեամբ բազմացան եւ տարածուեցին այն գաւառում, նաեւ ծնուեցին հսկաներ եւ աճեցին, եղան քաջամարտիկներ ու անյաղթ, գունդ-գունդ դարձած ընտիր երիվարներով սփռուեցին, տարածուեցին բոլոր գաւառներում. նրանց ոտքը ձգուեց մինչեւ Արարատ երկիրը, Գողթն, Արցախ գաւառը, եւ որքան կամեցան, անսանձ երիվարները ձգեցին, արձակեցին»³⁰, – գրում է Ա. Կոստանդյանցը: Տարածքի քրդերը բավական երկար ժամանակ տիրապետող են լինում Քաջաթաղի շրջանում և մեծ թափով բազմանում են, որի արդյունքը եղավ Կարմիր Քրդստանը³¹: Նրանք այնքան էին շատացել, որ արդեն XX դարասկզբին մեծամասնություն էին կազմում³² հատկապես հայերի համեմատությունով. Հակարի գետի ավազանում հայկական բնակավայրերից մնացել էին Հակը (Մինքենդ), Ալղուլին և Հարարը: Քրդերն այս տարածքում հաստատվել էին դեռևս XVIII դարի երկրորդ կեսից՝ Փանահ խանի օրոք (գուցե՝ մի փոքր ավելի վաղ): Եվ հենց այդ ժամանակից նրանք սկսեցին հարձակվել ու թալանել հայկական գյուղերը: Ասպատակությունների հետևանքը եղավ նաև Որոտանի և Հակարիի ափամերձ պատմական բնակավայրերի վերացումը: «Եւ ում պատահեցին. թէ՛ քարաւանների, թէ՛ ճանապարհորդների, անխնայ կողոպտում էին, մերկացնում իրենց ունեցուածքից: Այս ձեւով ցրում էին դաշտային, լեռնային տեղերը, աւար խփում, ընդդիմացողներին առանց խնայելու անողորմ տանջանքներ էին տալիս, ոմանց շնչապառ անում, ոմանց սպանում՝ դիակները թողնելով ճանապարհին, նրանց ունեցուածքը խլելով՝ դառնում էին իրենց տեղերը»³³, – գրում է Ա. Կոստանդյանցը:

Ասկերանի Հարավ գյուղի բնակիչների համար գուցե հենց այս պատմությունն է հիմք եղել ավանդազրույցի համար, որովհետև, ըստ շարադրված վկայությունների, հիշյալ ժամանակաշրջանում Հարարը մեծ մասամբ դատարկվել էր: Իսկ թե ինչու են նշում, թե իրենց նախնիները եկել են Գորիսից, դա էլ կազմում է մի այլ զրույցի հիմք, ըստ որի՝ Հարարցիների նախնիները եղել են սյունեցիներ, և նույնիսկ տոհմեր կան, որոնց շառավիղները տարածված են եղել Հարարում ու Կոստանդիստանում (նաև՝ Տեղում):

Ըստ տեղեկությունների՝ Հարարում երկար ժամանակ ապրել է 1 հայ ընտանիք, որն էլ տեղափոխվել է հարևան Արփազյաղուկ. այսպիսով, ավարտվում է Հարարի երբեմնի հայկականությունը³⁴:

³⁰ Տե՛ս Ա. Կոստանդյանց. Արցախի պատմություն (աշխատասիրութամբ՝ Բ. Գ. Դ., պրոֆ. է. Մկրտչյանի), Երևան, 2019, էջ 208:

³¹ 1923 թ. հուլիսի 16-ին Ադրբեյջանի ԽՍՀ Կենտրոնական գործադիր կոմիտեի որոշմամբ կազմավորվեց Կարմիր Քուրդիստան գավառը (Հ. Աբրահամյան. Թուրք ազերիների կամայականությունները Արցախում. – «Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու», Երևան, 2015, էջ 4):

³² Տե՛ս Դ. Բաբայան. Красный Курдистан: геополитические аспекты создания и упразднения. – «21-й век» (Ереван), 2005, № 2, с. 116.

³³ Ա. Կոստանդյանց. նշվ. աշխ., էջ 208:

³⁴ Այս տեղեկությունը մեզ հաղորդել է Վ. Հակոբյանը:

Հարար անվան ծագումը

Հարար գյուղն ունեցել է մի քանի անուններ՝ Հարար, Fərəcan / Aşağı Fərəcan, Yukarı Fərəcan/, Ջաֆարաբադ: Բնակավայրի՝ աղբյուրների տեղեկություններով մեզ հասած 3 անունից առաջինը Հարարն է, որը գյուղը կրում էր հայերով բնակեցված լինելու շրջանում: Անունը հիշատակվում է XVII դարի կեսից՝ 1671 թ. գրված Ավետարանի հիշատակության մեջ: Մինչ այդ նույնանուն բնակավայրի հիշատակություն մեզ չի հանդիպել³⁵:

Թե ինչ է նշանակում Հարար, մինչև օրս հստակ մեկնաբանություն չկա: Այս հարցը, կարծում ենք, տեղագրական և պատմագագագրական հետազոտություններից հետո միայն կարելի է հստակեցնել: Այնուամենայնիվ, հավանական ենք համարում, որ արդյունքները կամբողջանան ներքոնշյալ տեսակետներից մեկում.

1. Հարար արաբերեն նշանակում է գիհի ծառ³⁶, որ Սյունիք-Արցախում ասում են կէնէ/կյէնի ծառ: Հարարցիների շրջանում պահպանվել է գրույց, ըստ որի՝ դեռևս Արաբական խալիֆայության շրջանում արաբներն այստեղից իրենց երկրներ պարբերաբար արտահանել են գիհի ծառը, որը մեծ արժեք ունի փայտամշակման արհեստի բնագավառում: Հիմա էլ Հարարում կա դանդաղ աճող այդ ծառը, որը, սակայն, անհետացման եզրին է: Զրույցներից իմանում ենք, որ այդտեղ եղել են փայտամշակման արհեստանոցներ (մեր գրուցակից հարարցիներն ասում են՝ «գործարաններ»): Հնարավոր է, որ Հարար անունն առաջացած լինի գիհի բառի արաբերեն տարբերակից, քանի որ այն հայերի կյանքում ծիսական նշանակություն ունեցող ծառ է: Գիհի-կենուց են պատրաստել չարխափան նշանները³⁷:

Քիչ հավանական ենք համարում արաբերենից թյուրքերենին անցած *harar /girār/girāra(t) /جَارَ/دَرَجَ/*³⁸ «պարկ, ծղոտե պարկ» նշա-

³⁵ Ձի կարելի բացառել, որ գյուղն ունեցել է այլ անուն, որը հետագայում փոխարինվել է Հարարով:

³⁶ Գենի, գի, ճխնի, ցրդի, ցրդենի, ցիրդ, արտուճ, արտակ, հարար, մատիտածառ (նոճագիների ընտանիքին պատկանող մշտադալար թուփ կամ ծառ) (այս մասին տե՛ս Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, 1971, էջ 554): Հետաքրքրության համար նշենք, որ Եթովպիայում նույնպես գոյություն ունի Հարար անունով մի քաղաք, որն ուղագրավ է 80-ից ավելի մզկիթներով, իսկ տարածաշրջանում էլ հայտնի է սուրճի ու գարեջրի արտադրությամբ: Այս քաղաքը տեսարժան վայրեր չատ ունի, բայց առավել հետաքրքրական են գիհի ծառի անտառները, որոնք փոխված են քաղաքի կիսաանապատային մասերում [Հարար քաղաքի մասին տե՛ս Ա. Թէրզիպաշեան. Հարար: (Ճամբուլ նոթերէս).– «Արեւ» (Կահիրե), Ժէ տարի, 13. XII. 1932, էջ 2]:

³⁷ Այս մասին մանրամասն տե՛ս Ք. Տեր-Պավթյան. Գրիգոր Նարեկացու գրուցապատում վարքի աղբյուրներից.– «Էջմիածին» (Էջմիածին), 2003, դեկտեմբեր, թիվ ԾԹ (ԺԲ), էջ 36–43:

³⁸ S. Nişanyan. Nişanyan sözlük, Çağdaş türkçenin etimolojisi. İstanbul, 2018 (տե՛ս <https://www.nisanyansozluk.com> կայքում):

նակությամբ բառի հետ կապելը, մանավանդ, որ քիչ գործածական է այդ լեզվում և Սյունիք-Արցախ բարբառախմբի բառապաշարում էլ բացակայում է:

2. Ա. Կոստանդյանցը նշում է, որ բնակավայրի Հարար անունը ծագում է Հայարար՝ հայ և արար (արարել) բառից: Հայտնի է, թե հեղինակն այլ վկայությամբ է նշում բառի ծագումը, թե՞ սեփական մեկնաբանությունն է արձանագրում³⁹:

3. Անհավանական չենք համարում նաև, որ այն առաջացած լինի հայերենի արար՝ առնել բայանվան նախդրավոր անվանական ձևից՝ գրբ.՝ հարար՝ «չինվածք կամ կավվածք» իմաստից⁴⁰:

Պատմական հուշարձաններ

Հարար գյուղի հուշարձանների շարքում նշվում են X դ. եկեղեցի, Փարաջան (Aşağı Fərəcan) – Գյուլաբերդ-Ծաղկաբերդ (Güləbird) ճանապարհին գտնվող մի կամուրջ, հին գերեզմանատուն, որոնցից կամ ոչինչ չի մնացել, կամ էլ՝ կիսավեր վիճակում են: Ժամանակին մամուլը երբեմն անդրադարձել է Հարարի պատմական արժեքներին, և մեր օրերում էլ վավերագրեր են հրատարակվել պատմական Հարարում ու նրա շրջակայքում մնացած հուշարձանների մասին⁴¹:

1930-ական թվականներից հետո քանդվել է գյուղի մոտակայքում գտնվող հայոց գերեզմանատունը, և տեղն անասնագոմ կառուցվել, որի պատերի մեջ կան նաև հայկական շիրմաքարերի բեկորներ: Ըստ ակնատեսների՝ եղած խաչքարերը թաղել են հողի տակ՝ գոմի հիմքում: Հանգստարանի տեղում 2 խաչքար և մի քանի տապանաքար են մնացել: Կիսաքանդ անասնագոմի հարևանությամբ արհեստական հողաթումբ կա, որի երեսին մի քանի մեծ քարեր են երևում: Հնարավոր է դրանք ժամանակին խաչքարեր են եղել⁴²:

Գյուղում կիսավեր վիճակում պահպանվել է մոտ 10 x 5 մ արտաքին չափեր ունեցող միջնադարյան եկեղեցին: Ծովի մակերևույթից մոտ 1.300 մետր բարձրությամբ գտնվող այս սրբատունը, հավանաբար, կառուցվել է XII–XIII դդ., հնարավոր է՝ ավելի վաղ: XVI դ. այն վերակառուցվել է և, ըստ 1671 թ. նույն եկեղեցում գրված Ավետարանի հիշատակության, կոչվել է Սուրբ Ստեփանոս: 1841 թ. եկեղեցին նորից է վերակառուցվել և վերանվանվել Սուրբ Հռիփսիմե: Ըստ մատենագրության՝ այս սրբատանը միջնադարում գրվել է 3 Ավետարան: Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող «Մաշտոց» ժողովածուներից մեկի մասին հիշատակվում է. «Ստեղծվել է Պաղտասար դպիրի ձեռքով և Մարտիրոս քահանայի պատվերով, 1666 թվա-

³⁹ Ա. Կոստանդյանց. նշվ. աշխ., էջ 208:

⁴⁰ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. I, Երևան, 1979, էջ 308:

⁴¹ Տես Ս. Կարապետյան. նշվ. աշխ., էջ 179–183:

⁴² Խորհրդային տարիներին Հարար է այցելել Սերո Խանզադյանը և գրել տեղի հուշարձանների մասին («Սովետական Հայաստան», 1984, № 6, էջ 31):

կանին Հագարան երկրի Հարար գյուղում»⁴³: 2 տարի անց ստեղծվել է մեկ այլ «Մաշտոց», որի հիշատակարանում գրված է եղել՝ «Ռձժէ թուին [=1668 թ.] ... յերկիրս Հագարեան ի գեօղն, որ կոչի Հարար»⁴⁴: Եվ մի 3-րդ գրչագրի Ավետարանի հիշատակարանում կարգում ենք. «... արդ, գրեցաւ կենսաբեր սուրբ Աւետարանս ձեռամբ մեղապարտ եւ սուտանուն Պաղտասար դպրի, ի թուաբերութեանս Հայոց ՌձԻ [=1671 թ.], ի յերկիրս Հագարեան, ի գեօղս որ կոչի Հարար, ընդ հովանեաւ Սրբոյս Ստեփաննոսի ...»⁴⁵:

Դեռևս XX դարասկզբին Հարարի եկեղեցին գործող է եղել: «Արարատ» հանդեսը գրում է, որ 1905 թ. ապրիլին եկեղեցու քահանա է ձեռնադրվել Համբարձում Գրիգորյան Աղանյանցը⁴⁶:

Այժմ պահպանված է Հարարի եկեղեցու հարավային պատը, որոշ չափով նաև՝ արևմտյանը, որի մեջ խաչքար է ագուցված⁴⁷: Մուտքը հարավային կողմից է՝ սրբատաշ քարերով: Բարավորը խաչաքանդակով տապանաքար է: Մուտքի շեմը նույնպես տապանաքար է՝ 108 x 70 x 35 սմ չափերով, որի աջ կողմում հագիվ երևացող երկտողանի արձանագրությունն է: Ըստ Ս. Կարապետյանի՝ տապանաքարը XII–XIII դդ. գործ է՝ հետևյալ գրությունով. «... /ԿԱՆԳՆԵՅԻ ԶԽ/Ա/ՉՍ ԲԱՐԵԽ/ԱՒՍՈՒԹԻԻՆ ՄԱԻՐ ԻՄՈՅ ԹՈՒ ... Ե ...»: Մկրտումթյան ավագանը, որ համարվում էր կորած, վերջերս գտնվել է և պահվում է գյուղի բնակիչներից մեկի տանը: Եկեղեցին կառուցված է հիմնականում սպիտակ թերթաքարերից՝ կրաշաղախով, պատերի մեջ ագուցված են մի քանի տապանաքար ու խաչքար: Հյուսիսային պատը կից է հողապատնեչին և նրա կեսից ավելին քանդված է: Սուրբ խորանին կից ավանդատներ չկան: Միանավ շինություն թաղը նստած է եղել 2 կամարի վրա, որոնցից այժմ միայն հետքերն են մնացել:

Այստեղ պահպանված 2 խաչքարն էլ արձանագրությունն չունի: Անմշակ սևագույն բազալտե խաչքարերից մեկն ունի մոտ 75 x 75 x 30 սմ չափեր, մյուսը՝ 100 x 85 x 28 սմ: Գտնվում են գերեզմանոցը պահող բլրակի գագաթին՝ հարավարևմտյան կողմում՝ թփերի տակ: Տապանաքարերը գտնվում են բլրակի ներքին մասում, տեղահանված

⁴³ Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի (կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան), հ. Ա, Երևան, 1965, ձեռ. № 3437:

⁴⁴ Տե՛ս Հ ա յ կ ու ն ի Ուղեգնացական ակնարկներ. – «Մեղու Հայաստանի» (Թիֆլիս), 01. XII. 1885:

⁴⁵ Վ. Վարդանյան. Ցուցակ հայերեն ձեռագրաց Լոնդոնի Վելքոմ ինստիտուտի գրադարանի. – «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1986, № 15, էջ 323: Հարարի այս, ինչպես նաև հարևան Փարաջանց և Գետուզ գյուղերի ձեռագրերի մասին մանրամասն տե՛ս Ս. Կարապետյան. նշվ. աշխ., էջ 161, Ա. Յակոբեան. նշվ. աշխ., էջ 285–286:

⁴⁶ «Արարատ» (Վաղարշապատ), 1905, ապրիլ, էջ 312:

⁴⁷ Եկեղեցին անմխիթար վիճակում է և անհրաժեշտ է այն հիմնանորոգել: Տարածքը պատմական է, Քաջաթաղի շրջանի հարավային թևի այս մասի բնակավայրերում եկեղեցի գրեթե չկա. նույն եկեղեցին ժամանակին ծառայել է որպես սրբատուն և այժմ էլ կարող է ծառայել նաև Հաղբութի շրջանի Վաղակեր, Սպիտակաչեն ու մոտակա գյուղերի բնակչությանը:

են: 121 x 80 x 36 սմ չափերով ուղղանկյուն տապանաքարն ունի հետևյալ արձանագրությունը. «ԱՅՍ Է՝ ՏԱՊԱՆ ՀԱՐԱՐԵՑԻ / ՄԱՐՏԻՐՈՍԻ ՈՐԴԻ ԴԱՎԻԹԻՆ, / ՕՎ ՈՐ ԳԱՐՏԱՅ. ՌՄՂԵ [1846 թ.] / ՄԵԿ ԲԵՐԱՆ Ա[ՍՏՈՒԱ]Ծ ՈՂՈՐՄԻ ԱՍԻ»: Մոտակա մեկ այլ՝ գրեթե նույն չափերի տապանաքարի եռատող արձանագրություն է. «ԱՅՍ Է՝ ՏԱՊԱՆ ՀԱՐԱՐԵՑԻ ԴԱՎԻԹԻՆ, ՈՐԴԻ ՊՕՂՈՍԻ, / ԹՎԻՆ ՌՄՁՁ [1837 թ.]»: Տապանաքարի աջակողմյան անկյունը կոտրված է. բարեբախտաբար, կոտրված մասը տեղում է, ունի զարդանախշեր: Երրորդ արձանագիր տապանաքարն ունի 95 x 40 x 30 սմ չափսեր: Նույն արձանագրությունը չրջափակված է զարդանախշ չրջանակով. «ԱՅՍ Է՝ ՏԱՊԱՆ⁴⁸ / ՄԵԿ ՈՐԴԻ Մ/ԱՐ/ԳՍԻ Ա[ՍՏՈՒԱ]Ծ ՈՂՈՐՄԻ. / 1871 ԱՄԻ»: Տապանաքարի հակառակ երեսին 2 խաչ է քանդակված՝ մեջտեղում՝ հավերժության նշանը:

Գերեզմանոցի հյուսիսարևմտյան կողմում ճանապարհի հետք կա, որի 2 կողմում քարեր են շարված: Հնարավոր է՝ դրանք շիրմաքարեր են, որոնք թյուրքերը շարել են ճանապարհի եզրերին. Քաշաթաղի չրջանի մի շարք գյուղերում ևս այդպես են վարվել՝ Մագրայում, Զիրիկում, Մովսեսաշենում և այլն:

Հին գերեզմանատեղից մի ճանապարհ է իջնում դեպի Հակարի գետի ափ: Ճանապարհն անցնում է քարանձավային համալիրի մոտով: Կա 40-ից ավելի քարանձավ, և դա, հավանական է, ժամանակին բնակատեղի է եղել:

Հարարից ուղիղ գծով մոտ 6 կմ դեպի հարավ՝ բարձրագիր ժայռոտ բլրի վրա, կառուցված է Ամուտեղի եկեղեցին: Այս սրբատունը եղել է տարածքի հայ բնակչության գլխավոր ուխտատեղին: Ոմանք նշում են, որ եկեղեցու իսկական անունն Ամեն տեղ է եղել, որը հետո դարձել է Ամրտեղ: Եկեղեցուց մի քանի կիլոմետր հյուսիս-արևելք՝ մեկ այլ ժայռեղեն բարձր զանգվածի վրա, երևում է միջնադարյան ամրոցը, որը Մ. Բարխուդարյանցն անվանում է Ղալալու: Ըստ Ա. Հակոբյանի՝ դա Մովսես Դասխուրանցու հիշատակած պատմական Կառնակաշն է⁴⁹: Այստեղ նաև եկեղեցու ավերակ է եղել:

Այսպիսով, պատմական Հարարը հայկական ազատագրված գյուղերի պատմական նկարագրի վերականգնման համատեքստում դեռ ուսումնասիրության խիստ կարիք ունի: Կան բնական բոլոր պայմանները, որ բնակավայրը դառնա մեծ ու բարեկարգ ավան, որի մասին վկայում է նրա պատմական անցյալը:

Մհեր Քուսուրյան – բ. գ. թ., դոցենտ, Գորիսի պետական համալսարանի հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների ֆակուլտետի դեկան, Սյունիքի հայագիտական հետազոտությունների կենտրոնի հիմնադիր-տնօրեն: Գիտական հետաքրքրությունները՝ լեզվաբա-

⁴⁸ Այս բառի Տ տառը գրված է գեղեցիկ և աջ թեքված:

⁴⁹ Ա. Յակոբյան. նշվ. աշխ., էջ 295–296: Հմմ. Մ. եպ. Բարխուդարյանց, Արցախ, էջ 42:

Նուրթյուն, բանագիտութիւն, հուշարձանագիտութիւն: Հեղինակ է 1 մենագրութեան և շուրջ 60 հոդվածի: prof1972@mail.ru

Զոհրաբ Ընթոյան – Քաջաթաղի շրջվարչակազմի «Մերան» պաշտոնաթերթի գլխավոր խմբագիր: Գիտական հետաքրքրութիւնները՝ լրագրութիւն, հուշարձանագիտութիւն, տեղանվանագիտութիւն: Հեղինակ է շուրջ 200 հոդվածի: zoriknew@mail.ru

REFERENCES

- Abrahamyan H. Turk azerineri kamayakanutyunnere Artsakhum. – “Mesrop Mashtots hamalsarani Iratu”, Yerevan, 2015 (In Armenian).
- A-Do. Hay-turkakan endharume Kovkasum (1905–1906 tt.) (pastakan, vichakagrakan, teghagrakan lusabanutivnnerov), Yerevan, 1907 (In Armenian).
- Ajaryan H. Hayeren armatakan bararan, h. 1, Yerevan, 1971 (In Armenian).
- “Ararat ” (Vagharshapat), 1905, april (In Armenian).
- “Arev” (Kahire), ZhE tari, 13. XII. 1932 (In Grabar).
- Babayan D. Krasnyi Kurdistan: geopoliticheskie aspekty sozdaniya i uprazdneniya. – “21-y vek” (Yerevan), 2005, № 2 (In Russian).
- Barkhutareants M. ep. Artsakh, Bagu, 1895 (In Armenian).
- Barkhutareants M. ep. Aghuanits yerkir ev dratsiq (Artsakh), Yerevan, 1999 (In Armenian).
- “Edjmiadzin” (Edjmiadzin), 2003, dektember, tiv DsT (ZhB) (In Armenian).
- Remyan S. T. Hayastane est “Asahkharhatsoyts”-i (pordz VII dari haykakan kartezi verakazmutyan zhamanakakits kartezagrakan himqi vra), Yerevan, 1963 (In Armenian).
- Gasparyan V. Haravtsineri yerazanqn e gyughum unenal gortsogh yekegheci (<http://www.asu.am>) (In Armenian).
- Hakobyan T. Kh., Meliq-Bakhshyan St. T., Barseghyan H. Kh. Hayastani ev harakits shrjanneri teghanunneri bararan, h. 3, Yerevan, 1991 (In Armenian).
- Haykuni. Ughegnacakan aknarkner. – “Meghu Hayastani” (Tiflis), 01. XII. 1885 (In Armenian).
- Karapetyan S. Hay mshakuyti hushardzannere Khorhrdayin Adrbejanin brnaktsvats shrjannerum, Yerevan, 1999 (In Armenian).
- Kostandyants A. Artsakhi patmutyun (ashkhatasirutyamb` b. g. d., prof. E. Mkrtchyan), Yerevan, 2019 (In Armenian).
- Lalayan E. Zangezur (Bnakichner). – “Azgagrakan handes” (Shushi), 1898, № 2 (In Armenian).
- Maghalyan A. Arakel Kostanyanci “Patmutivn Gtchay vanuts” ashkhatutyune. – “Banber Matenadarani”, Yerevan, 2008, № 18 (In Armenian).
- Tsutsak dzeragrats Mashtotsi anvan Matenadarani (kazmecin` O. Yeganyan, A. Zeytunyan, P. Antabyan), h. A, Yerevan, 1965, dzer. № 3437 (In Armenian).
- “Mshak” (Tiflis), 24. III. 1899 (In Armenian).
- Nishanyan S. Nishanjan sozluk, Chakhdash turkchenin etimolojisi. Istanbul, 2018 (<https://www.nisanyansozluk.com>) (In Turkish).

- “Nor-dar” (Tiflis), 09. IV. 1899 (In Armenian).
Nor bargirg haykazean lezui, h. I, Yerevan, 1979 (In Armenian).
“Sovetakan Hayastan”, 1984, № 6 (In Armenian).
Simonyan H. Andraniki jamanake, Yerevan, 1996 (In Armenian).
Stepanos Siunetsi. Patmutivn tann Sisakan, Moskva, 1961 (In Grabar).
Vardanyan V. Tsutsak hayeren dzeragrats Londoni Velqom instituti gradarani. – “Banber Matenadaran”, Yerevan, 1986, № 15 (In Armenian).
Yakobyan A. Patma-ashkharhagrakan ev vimagragitakan hetazotutivnner (Artsakh ev Utik), Vienna–Yerevan, 2009 (In Armenian).

ИСТОРИЧЕСКОЕ СЕЛО ҺАРАР АРЦАХСКОГО УЕЗДА БЕРДЗОР

МГЕР КУМУНЦ, ЗОГРАБ ЭРКОЯН

Резюме

Ключевые слова: ҺАраp, Арцах, Сюник, сказание, историко-культурные памятники, этимология, топонимы.

Историческое село ҺАраp, которое играло важную роль в политической, экономической и культурной жизни Арцаха и Сюника, изучено недостаточно. Название села упоминается с XVII века, и неизвестно, как оно называлось ранее. Вероятнее всего, наименование ҺАраp имеет смысловое значение «имение» или «строение». Население села много раз подвергалось нападению со стороны соседних тюркских и курдских деревень, из-за чего многие Һарарцы вынужденно переселялись в другие места. Существует множество сказаний о селе ҺАраp, свидетельствующих о том, что этот населенный пункт раньше был большим и значительным. В селе сохранились армянская церковь, кладбище и другие памятники, которые нуждаются в детальном изучении. В настоящее время ҺАраp имеет немногочисленное население, однако можно надеяться, что в будущем это селение вернет себе былую славу.

Мгер Кумунц – к. филол. н., доцент, декан факультета гуманитарных и обществоведческих специальностей Горисского государственного университета, основоположник-директор Центра арменоведческих исследований Сюника. Научные интересы: языковедение, филология, исследование памятников. Автор 1 монографии и около 60 статей. prof1972@mail.ru.

Зограб Эркоян – главный редактор официальной газеты «Меран» Капатахского района. Научные интересы: журналистика, исследование памятников, топонимика. Автор около 200 статей. zoriknew@mail.ru

HISTORICAL VILLAGE HARAR IN THE BERDZOR DISTRICT
OF ARTSAKH

MHER KUMUNTS, ZOHRAB ERKOYAN

Summary

Key words: Harar, Artsakh, Syunik, legend, historical-cultural monuments, etymology, toponyms.

Historical village of Harar, which has played an important role in the political, economic and cultural life of Artsakh and Syunik, is not sufficiently investigated. The village dates back to the 17th century but it is unknown how it was named before. The name “harar” is most likely to have derived from the meaning of “estate” or “construction”. Many times the Armenian residents of Harar were attacked by Turkish and Kurdish tribes, due to which many villagers had to migrate from their homeland. There exist many legends about Harar and they provide evidence that the settlement used to be large and significant in the past. The Armenian church, graves, and other monuments that have been preserved in Harar need to be investigated in detail. Nowadays, Harar has little population, but we hope that this settlement will once gain back its past glory in the future.

Mher Kumunts – Candidate of Sciences in History, Associate Professor. Dean of the Faculty of Humanities and Social Sciences at Goris State University, Founder-Director of Syunik Center for Armenian Studies. Scientific interests: linguistics, philology, monumentology. Author of 1 monograph and about 60 scientific articles. prof1972@mail.ru

Zohrab Yerkoyn – Editor-in-Chief of “Meran” official newspaper of the Kashatagh district. Scientific interests: journalism, monumentology, toponymy. Author of about 200 articles. zoriknew@mail.ru

ՓԱՌՆԱՎԱԶԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱԳԱՎՈ՞Ր
(Մ. ք. ա. VII դարի վերջին քառորդ)*

ՌՈՒՍԼԱՆ ՅԱԿԱՆՅԱՆ

Բանալի բառեր՝ Փառնավազ, Վիդառնա, Նաբուգոդոնոսոր, Սեբեոս, Մովսես Խորենացի, Հայաստան, Հայկական լեռնաշխարհ, Ուրարտու, Ասորեստան, Մարաստան:

Վաղմիջնադարյան ու միջնադարյան հայ պատմիչները՝ բացառությամբ Սեբեոսի, ով, հետևելով Մովսես Խորենացուն, հայկական պետությունն առաջացումը կապում են Ասորեստանի անկման և Մարաստանի անմիջական հովանավորության հետ: Մեր աշխատանքներից մեկում¹ խնդրի վերաբերյալ մանրամասն անդրադարձել ենք Մովսես Խորենացու և Սեբեոսի հիշատակությունների տարբերություններին՝ նշելով, որ Պատմահայրն Ասորեստանի անկման վերաբերյալ ձեռքի տակ ունեցել է երկու տարբերակ՝ «բաբելական» ու «մարական»: Նա հունարեն դպրոցի ազդեցությամբ իր ձեռքի տակ եղած երկու աղբյուրներից նախապատվությունը տվել է «մարական» Ասորեստանը կործանողին և հայոց առաջին արքային թագադրողի դերը վերագրել է ո՛չ թե Բաբելոնիայի արքաներ Նաբուպլասարին (մ. թ. ա. 626–605 թթ.) կամ Նաբուգոդոնոսոր II-ին (մ. թ. ա. 605–562 թթ.), այլ՝ Մարաստանի արքա «Վարբակ»-Կիաքսարին²: Այս էլ այն դեպքում, երբ Սեբեոսը նախապատվությունը տվել է առաջին «բաբելական» տարբերակին: Դեռ ավելին, Սեբեոսի հիշատակությունները հաստատվում են սեպագիր աղբյուրների կողմից³:

Փաստորեն, Սեբեոսի հիշատակությունները հակասում են Մովսես Խորենացու վկայություններին: Եվ եթե Պատմահայրը Հայաստանի տվյալ ժամանակաշրջանի պատմությունը և հայոց թագավորության հաստատումը կապում է Մարաստանի հետ, ապա Սեբեոսը՝ Բաբելոնի: Դեռ ավելին, Սեբեոսի մոտ Խորենացու Պարույր Սկայոր-

* Ներկայացվել է 26. IX. 2019 թ., գրախոսվել է 17. X. 2019 թ., ընդունվել է տպագրության 06. XI. 2019 թ.:

¹ Ռ. Յակոբյան. Ասորեստանի անկման Խորենացու և Սեբեոսի տարբերակները. – «ՎԷՄ», 2017, № 4, էջ 230–239:

² Մովսիսի Խորենացու Պատմությունը Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղյանի և Ա. Հարությունյանի, Տփղիս, 1913, I, ԻԱ:

³ Ռ. Յակոբյան. Ասորեստանի անկման Խորենացու և Սեբեոսի տարբերակները, էջ 230–239:

դու փոխարեն հանդես է գալիս Փառնավազը⁴: Վերջինս, ըստ ՊատմաՏոր, հայոց նահապետների ցուցակի Պարույրի թոռն է⁵:

Անդրադառնալով ժամանակաշրջանի իրադարձություններին՝ Սեբեոսը գրում է. «Այս Փառնաւազ հնազանդեալ նաբուգոդոնոսորայ արքայի ի Բաբելոն (ընդգծումը մերն է– Ռ. Յ.): Եւ ապա յայնմհետէ Բաբելացոց և Մարաց թագաւորքն տիրեցին մինչև ցԱղեքսանդր Մակեդոնացի...»⁶: Մինչ Փառնավազի մասին այս հիշատակությունը՝ Սեբեոսը հաղորդում է, որ Հայաստանին Շամիրամի տիրելուց հետո «յայնմհետէ Ասորեստանեայց թագաւորքն տիրեցին մինչև ցմեռանելն Սենեքարիմայ. ապա ապստամբեցին յԱսորուց թագաւորացն ծառայութենէ:

Եւ տիրէ ի վերայ նոցա Զարեհ որդի որդուց Արամենակայ, ... ապա Արմոգ. ապա Սարհանգ. ապա Շաւաշ. ապա Փառնաւազ»⁷:

Այնուհետև Սեբեոսը ներկայացնում է Փառնավազի սերունդներին՝ տեղորոշելով նաև նրանց տիրապետության սահմանները, որոնք համընկնում են Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան շրջաններին՝ Մեծ Հայքի Աղձնիք և Ծոփք նահանգներին. «Սա (Փառնավազը – Ռ. Յ.) ծնաւ զԲագամ և զԲագարատ. և Բագարատ ծնաւ զԲիւրատ, և Բիւրատ ծնաւ զԱսպատ: Եւ որդիքն Բագարատայ ժառանգեցին զժառանգութիւնս իւրեանց ի կողմանս արևմտից, այս ինքն է Անգեղ տուն. վասն զի կոչեցաւ Բագարատ և Անգեղ...»⁸:

Հետաքրքիր է նաև Հայկ Հակոբյանի կողմից Մովսես Խորենացու և Սեբեոսի հայոց նահապետների ցանկերի համադրումը: Այս պարագայում Սեբեոսի ցանկի ճյուղազրույթությունում ներկայացված են նաև Արամենակ/Արամանեակ/-ի չորս որդիներն ըստ ավագության՝ Զարեհ–Հարմա–Կաղմոս–Արամայիս: Փառնավազը Զարեհի սերնդից չորրորդն է՝ Արմոգ–Սարհանգ–Շավարշ–Փառնավազ: Վերջինիս հաջորդներն են Բագամն ու Բագարատ Անգեղը: Արամայիսի սեբեոսյան ճյուղազրույթունը համապատասխանում է հայոց նահապետների Խորենացու ցանկին՝ Ամասիա–Գեղամ–Հարմա–Արամ–Արա Գեղեցիկ: Ինչպես երևում է, Արամայիսի սերնդից չորրորդն Արամն է՝ Արա Գեղեցիկի հայրը⁹:

Հայ պատմագիտական մտքի ներկայացուցիչները, հիմք ընդունելով Միքայել Չամչյանցի կողմից Հայկագուն նահապետների առաջարկած անհայտ ծագման թվազրումները, փորձել են կազմել իրենց արքայացանկերը: Մ. Չամչյանցը Փառնավազի գահակալման

⁴ Սեբէոս. Պատմութիւն, աշխատասիրութեամբ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979, Ա, 30:

⁵ Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց, I, ԻԲ:

⁶ Սեբէոս. նշվ. աշխ., Ա, 30:

⁷ Նույն տեղում, Ա, 20–25:

⁸ Նույն տեղում:

⁹ Հ. Հակոբյան. Տիգրան Մեծը և Հայկագունիները համաձայն Խորենացու և Սեբեոսի. – Հայկագունիներ, Երևան, 2013, էջ 43–44, հավելված Գ. 2:

Համար տալիս է 13 տարի¹⁰: Ըստ Բաբելեն Հարուժյունյանի՝ Փառնավագր կառավարել է մ. թ. ա. 586–573 թթ. և եղել է Երվանդ Սակավակյացի նախորդն ու Էրիմենա–Արմանի–Արամի թոռը¹¹: Քիչ այլ է Վալերի Խաչատրյանի կարծիքը. ըստ նրա՝ Փառնավագր կառավարել է մ. թ. ա. 624–611 թթ., և նա ոչ թե Էրիմենայի թոռն է, այլ հենց ինքն է՝ Էրիմենան¹²:

Էրիմենայի թեման այստեղ ամենաուշագրավն է, որը, կարծես թե, իներցիայի ուժով շարունակվում է նաև այսօր՝ անուշադրուժյան մատնելով կամ միտումնավոր անտեսելով ուրարտագիտության նվաճումները: Մինչդեռ 2004 թ. հրատարակված Երվանդ Գրեկյանի հոդվածից պարզ դարձավ, որ Ռուսա Էրիմենայորդուն պետք է փնտրել ոչ թե Ռուսա III Արգիշթիորդու հաջորդների մեջ, այլ՝ նախորդների՝ մ. թ. ա. VIII դարի 4-րդ քառորդում¹³: Այսօր ապացուցված կարելի է համարել, որ Ռուսա II Էրիմենայորդին կառավարել է մ. թ. ա. 713–708 թթ.¹⁴:

Ինչպես արդեն նշեցինք, ըստ Սեբեոսի, Փառնավագի սերունդների տիրապետության սահմանները համընկնում են Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան շրջաններին՝ Մեծ Հայքի Աղձնիք և Ծոփք նահանգներին: Այժմ տեսնենք, թե տվյալ ժամանակաշրջանի քաղաքական իրադարձությունների վերաբերյալ ինչ են հաղորդում համաժամանակյա սեպագիր աղբյուրները:

Ըստ նորբաբելոնյան «ժամանակագրությունների»՝ մ. թ. ա. 609 թ., 608 թ. և 607 թ. բաբելոնյան զորքերը Նաբոպալասար արքայի գլխավորությամբ հայտնվում են Հայկական լեռնաշխարհի սահմանամերձ գոտիներում¹⁵, իսկ նրա կառավարման 17-րդ տարում՝ մ. թ. ա. 609 թ., արդեն Հայկական լեռնաշխարհի մատույցներում էին. «(70–75) Աքքադի արքան իր զորքերին օգնության շտապեց և ... [...] բարձրացավ դեպի Իգալլա (և) բազմաթիվ լեռնային քաղաքներ ... [...] հրի մատնեց նրանց [...]: Այդ ժամանակ (այդ օրերին) [...] զորքերը մինչև Ուրաշտուի շրջան [չա]րժվեցին ե[րկրում(?)] ... [...] թալանեց նրանց: Կայազորը, որ արքան [...] նրանց մեջ(?)

¹⁰ Մ. Չամչյանց. Հայոց պատմություն, հ. Ա, Երևան, 1985, էջ 101:

¹¹ Բ. Հ. Հարուժյունյան. Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի հնագույն պատմության մի քանի խնդիրների շուրջ (մ. թ. ա. VII–VI դդ.), Երևան, 1998, էջ 84:

¹² Վ. Ն. Խաչատրյան. Հայաստանը մ. թ. ա. XV–VII դարերում (Հայոց հին պատմություն), Երևան, 1998, էջ 31:

¹³ Ե. Գրեկյան. Գյովելեքի ուրարտական արձանագրությունը. – ՊԲՀ, 2004, № 1, էջ 248–249:

¹⁴ Ե. Գրեկյան. Կառլ Ֆրիդրիխ Լեման-Հաուպտը և ուրարտական արքայացանկը «Երեք Ռուսաներ»-ի խնդրի շուրջ. – «ՎԷՄ», 2017, № 2, էջ 23–37:

¹⁵ A. K. Grayson. Assyrian and Babylonian Chronicles. New York, 1975. Chron. 3; 4; J.-J. Glassner. Mesopotamian Chronicles. Atlanta, 2004. Chron. 22; 23.

կանգնեցրեց՝ տեղահանեցին (և) [...] բարձրացան ... (?) քաղ[աք]: Աքքադի արքան իր երկիրը վերադարձավ»¹⁶:

Մ. թ. ա. 608 թ. կամ Նաբոպալասարի կառավարման 18-րդ տարում բաբելական զորքերը՝ գահաժառանգ Նաբուգոդոնոսորի գլխավորությամբ, նոր արշավի ելան. ռազմական գործողությունները ծավալվեցին Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան տարածքներում՝ Բիթ-Նանունիայի լեռներում. «(1-4) Նաբու-ապալ-ուծուրի (Նաբոպալասարի – Ռ. Յ.) տասնութերորդ տարին, Ուլուլու¹⁷ ամսին՝ Աքքադի արքան իր զորքերը հավաքագրեց և Տիգրիսի երկայնքով շարժվեց դեպի Բիթ-Նանունիայի լեռները՝ Ուրաշտուի երկրի շրջանում: Քաղաքները հրի մատնեց (և) մեծ քանակությամբ ավար զավթեց ...»¹⁸:

Ինչպես նախորդ արձանագրության մեջ, այնպես էլ այստեղ, որևէ խոսք չկա բաբելացիների կողմից տարածքային նվաճումների մասին. այս անգամ էլ բաբելացիները, մի քանի քաղաք հրի մատնելով և ռազմագերիներ վերցնելով, վերադառնում են Բաբելոն:

Բիթ-Նանունիայի տարածքը, կարծես թե, հաստատապես տեղորոշվում է Իզալլայից հյուսիս կամ հյուսիս-արևմուտք՝ համապատասխանելով «Աշխարհացույցյան» Աղձնիք նահանգի Անգեղտուն կամ էլ այդ նահանգի որևէ այլ գավառի¹⁹: Այս դեպքում նույնպես հայտնի չէ էլ Բիթ-Նանունիայում բաբելացիներին դիմադրություն ցույց տված հանրույթի էթնիկական պատկանելությունը: Փոխարենը, սակայն, տեսնում ենք, որ բաբելացիներն արշավանք են կատարում դեպի Հայկական լեռնաշխարհի մատույցներ՝ նպատակ ունենալով զարգացնել իրենց առաջխաղացումը, բայց բախվում են ինչ-որ ուժերի և ետ վերադառնում:

Հաջորդ՝ մ. թ. ա. 607 թ. կամ Նաբոպալասարի կառավարման 19-րդ տարում բաբելացիները կրկին Նաբոպալասարի և գահաժառանգ Նաբուգոդոնոսորի գլխավորությամբ արշավի են ելնում: Արձա-

¹⁶ Արձանագրության գիտական տառադարձման, հայերեն թարգմանության և մեկնաբանության վերաբերյալ տե՛ս Ռ. Յականյան. Էթնոքաղաքական տեղաշարժերը Մերձավոր Արևելքում և Հայկական լեռնաշխարհում մ. թ. ա. VII–VI դդ., Երևան, 2018, էջ 161–162, նույնի՝ Ասորեստանի անկման խորհանցու և Սեբեոսի տարբերակները, էջ 231–232, նույնի՝ Ասսուրա-բաբելոնյան հակամարտությունը և Նաբոպալասարի Հյուսիսային արշավանքները. – ՊԲՀ, 2011, № 1, էջ 262–264:

¹⁷ Օգոստոս-սեպտեմբեր (Ռ. Յականյան. Էթնոքաղաքական տեղաշարժերը Մերձավոր Արևելքում և Հայկական լեռնաշխարհում մ. թ. ա. VII – VI դդ., էջ 275):

¹⁸ Ռ. Յականյան. Նաբոպալասարի (Ք. ա. 626–605 թթ.) կառավարման 18-րդ տարին (BM 22047, 1–13) և «Bīt-^mḪa-a-nu-ni-a»-ի տեղադրության հիմնախնդիրը. – «Միջագային գիտաժողովի նյութեր», Վանաձոր, 2012, էջ 16–17:

¹⁹ Բիթ-Նանունիայի տեղորոշման վերաբերյալ մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 28, նաև՝ էջ 29-ի քարտեզը:

նագրության այն հատվածները, որտեղ խոսվում է բաբելոնացիների մղած մարտերի ու ավարի մասին, վնասված են և հիշատակվող տեղանունը միանշանակորեն չի վերականգնվում: Տարբերակները տեղիք է տալիս մասնավորապես արձանագրության 11-րդ տողը՝ «նա նվաճեց բոլոր լեռները (լեռնային տարածքները)՝ մինչև [...(?)...]»: Սեպագրագետներ Ա. Ք. Գրեյսոնն ու Զ.-Զ. Գլասսները վնասված հատվածը վերականգնում են որպես՝ Ուրարտու²⁰, իսկ ասորագետ Զ. Ռիդն առաջարկում է վերականգնել «tam-[tim(?)]»՝ մինչև «Ծովի (ըստ հեղինակի՝ Վանա լճի) շրջան»²¹: Անկախ այն հանգամանքից, թե որ տեղանվան վերականգնումն է համապատասխանում իրականությանը, միևնույն է, բոլոր դեպքերում էլ այն տեղորոշվում է Հայկական լեռնաշխարհում:

Քննարկվող նյութի վերաբերյալ սեպագիր-աղբյուրագիտական տեղեկություններն այսքանով սահմանափակվում են, դրանից դուրս բոլոր եզրակացությունները, ըստ ամենայնի, ենթադրություններ են:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում այն հանգամանքը, որ, ըստ Սեբեոսի, Նաբուգոդոնոսորին հնազանդված Փառնավագի տիրույթները համապատասխանում են Իզալլայից հյուսիս ընկած տարածքներին և Բիթ-Նանունիային: Սեպագիր աղբյուրն այս պարագայում ոչ միայն համահունչ է Սեբեոսի հիշատակությանը, այլև համադրվում է նաև ժամանակագրական առումներով²²: Դեռ ավելին, ինչպես վերը նշվեց, բաբելոնյան զորքերը Հայկական լեռնաշխարհում մարտեր էին մղում հենց Բաբելոնիայի ապագա արքա՝ դահաժառանգ Նաբուգոդոնոսոր II-ի գլխավորությամբ: Անչափ կարևոր հանգամանք, որը վրիպել է տվյալ ժամանակաշրջանի հայոց պատմություն ուսումնասիրողների տեսադաշտից:

Այսպիսով, ինչպես տեսանք, հնարավոր է Փառնավագի կառավարումը թվագրել մ. թ. ա. VII դարավերջի տասնամյակով և մ. թ. ա. VI դարասկզբով ու ներառել Հայկազուն-Երվանդունիների արքայացանկում, որպես Հայաստանի թագավոր: Նա կառավարել է մ. թ. ա. 610 թ. առաջ և 607 թ. հետո ընկած ժամանակահատվածում, որն ըստ Արտակ Մովսիսյանի, համապատասխանում է Մյուս Հայկակի (Հայկակ Բ) կառավարման թվականներին՝ մ. թ. ա. 609–573 թթ.²³: Հետաքրքիր է, որ այս հարցում պատմաբանն առաջնորդվում է Մ. Չամչյանցի թվագրությամբ և վերջինիս ու Խորենացու ցանկերով. Մ. Չամչյանցը Պա-

²⁰ A. K. Grayson. Նշվ. աշխ. Ժամանակագրություն 4, 11; J.-J. Glassner. Նշվ. աշխ. Ժամանակագրություն 23, 11:

²¹ J. E. Reade. Why did the Medes invade Assyria?. – “History of the Ancient Near East, Monographs – V”, Continuity of Empire (?): Assyria, Media, Persia, Padova, 2003, p. 154f.

²² Р. Цаканян. Армения от Хайка до Парнаваза: миф и реальность. – «Метаморфозы истории» (Псков), 2018, вып. 12, с. 127–147.

²³ Ա. Մովսիսյան. Միտանիի թագավորությունը և Հայկազունի նահապետների ու արքաների ցանկը. – Հայկազունիներ, Երևան, 2013, էջ 84, ծանոթ. 7:

րույրից հետո իր ցանկից հանել է *Խորենացու Հրաչյային, Փառնավազին, Պաճույճին, Կոռնակին ու Փավոսին*, որի արդյունքում Պարույրին հաջորդում է Մյուս Հայկակը, Երվանդ Սակավակյացը, ապա՝ Տիգրան Երվանդյանը²⁴: Մյուս Հայկակի առումով Ա. Մովսիսյանը գրում է, որ նա, մեծ հավանականությամբ, նույնպես եղել է նոր իշխանության՝ Հայկազունի-Երվանդականների պետության հիմնադիրը: Այլ կերպ ասած, ըստ հեղինակի, «Հայկ» անունը մեզանում վերածվել է հիմնադիր-տիրակալի պատվատիրոջ²⁵:

Շատ հետաքրքիր է նաև Մյուս Հայկակի վարկածը, սակայն նշենք, որ նրա վերաբերյալ տեղեկությունները, բացի Մովսես Խորենացու ցանկից, իսպառ բացակայում են: Դա էլ այն դեպքում, երբ Փառնավազի անունը, ինչպես տեսանք, հիմնավորապես կա Մովսես Խորենացու ցանկում և Սեբեոսի մոտ: Դեռ ավելին, նրա գործունեության տարածաշրջանն ու ժամանակաշրջանը հաստատվում են նորբաբելական «ժամանակագրություններով»:

Վերոշարադրյալը, սակայն, դեռևս հիմք չի կարող լինել, որպեսզի Փառնավազին դիտարկենք որպես գոյություն ունեցող պատմական անձի: Նորբաբելական «ժամանակագրություններում», ինչպես տեսանք, բացի տեղագրական անուններից, այլ անուններ չկային, իսկ վաղմիջնադարյան պատմիչների հաղորդումները բավարար չեն դա հաստատելու համար: Որպեսզի մեր եզրակացությունն արհեստածին բնույթ չստանա, դիմենք հարակից գիտության՝ համեմատական լեզվաբանության օգնությանը²⁶: Հետաքրքիր է, որ անվանաբանական առումով Փառնավազ անունը գործածական է առնվազն մ. թ. ա. IX դարից՝ մարերի շրջանում²⁷:

Այսինքն՝ «Փառնավազ» անունը, ինչպես հայ նահապետների մի շարք այլ անուններ, Խորենացու և Սեբեոսի մոտ՝ իրանական կամ հնդիրանական են: Փառնավազ նահապետ-արքայի անունը, ինչպես պարզվում է, ոչ միայն հատուկ էր հնդիրանական աշխարհին, այլև տարածված է եղել: Դեռ ավելին՝ ժամանակագրորեն ևս այն բավական գործածական էր մ. թ. ա. VI դարասկզբին, անգամ Հայկական լեռնաշխարհի արևմտյան և հարավարևմտյան շրջաններում: Վերջինիս մասին է վկայում Արամ Քոսյանի մի ուշագրավ բացահայտում: Նա նշում է, որ Հայկական լեռնաշխարհում՝ մասնավորապես Իսովա-Մոփքում, առկա են հնդիրանցիների հետքեր, ինչի վկայությունը մ. թ. ա. XV–XIV դդ. թվագրվող խեթական երկու տեքստում հիշա-

²⁴ Մ. Չամչյանց. նշվ. աշխ., էջ 101:

²⁵ Ա. Մովսիսյան. նշվ. աշխ., էջ 84:

²⁶ Հոգևածում ներկայացված համեմատական լեզվաբանության հատվածի համար երախտագիտություն ենք հայտնում հայագետ-հնդեվրոպաբան Հրաչ Մարտիրոսյանին:

²⁷ W. Hinz. Altiranisches Sprachgut der Nebenüberlieferungen. Wiesbaden, 1975, p. 94f.; M. Mayrhofer. Iranisches Personennamenbuch, Band I, Die Altiranischen Namen. Wien, 1979, № 57.

տակվող հնդիրանական անձնանուններն են²⁸: Նրա կողմից առաջին անգամ իրենց գիտական տառադարձմամբ, թարգմանություններ ու մեկնաբանություններով աշխարհին ներկայացված այդ տեքստերից, այստեղ կարևոր է KBo XVI 42-ի համապատասխան հատվածը²⁹: Այս տեքստի 26-րդ տողում հիշատակված է «^mÚ-it-tar-n[a(-)]» անունը: Այն մինչ օրս հայտնի հին իրանական «Viⁿdarna» անվան կիրառման ամենավաղ ձևն ու հիշատակությունն է³⁰: Այսպիսով, ինչպես երևում է, «Փառնավագ» և «Վ/Ուրիդարնա» անունները ոչ միայն պատկանում են նույն լեզվամշակութային տարածքին, այլև հանդես են գալիս նույն տարածքում³¹:

Լեզվաբանական վերլուծության ենթարկելով Փառնավագ /P ‘aṛnawaz/ անունը, գտնում ենք, որ այն համապատասխանում է պարթևական Farnbāz [prnbzw]-ին, հունական՝ «Φαρνάβαζος»-ին, արամեական՝ Prnbzw-ին: Փառնավագ անվան առաջին «փառնա» բաղադրիչը ծագում է իրանական farnah (*xwarnah-/farnah-), farn, frh, prh, /farrah/ (հմմտ. հայերեն «փառք» բառի հետ), իսկ երկրորդը՝ «վագ»-ը, կարծում ենք, կարելի է թարգմանել նաև որպես «նա, ով փառք ունի» կամ «փայլող փառք»: Լեզվաբան Մ. Մայրհոֆերն այն ծագած է համարում Viḍaṭ.x^varənah ձևից և թարգմանում՝ «նա, ով (farnah) փառք է գտնում»: Farr(ah)/x^varənah – անունն արտացոլում է նաև հունական «Φαρνάβαζος» ձևը³²:

Ըստ Հ. Մարտիրոսյանի, Փառնավագ անունը ծագում է իրանական *Vinda-farnah – «Farnah-գտնող / շահող» ձևից՝ հին պարսկերեն [մարական(?)]' Vindafarnā [Vi-i-d-f-r-n-h]³³, միջին էլամերեն Minda-

²⁸ A. K o s y a n. An Aryan in Iṣuwa. – “Iran and the Caucasus” (Leiden), 2006, vol. 10/1, p. 1ff.; Ն ու յ ն ի՝ Արիացիները Պարսկությանում. – «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», 2006, հ. XXV, էջ 247–248, ն ու յ ն ի՝ Հայոց վաղ պետականության պատմության մի խնդրի շուրջ. – «Բանբեր Հայագիտության», 2014, № 1, էջ 9–10:

²⁹ A. K o s y a n. An Aryan in Iṣuwa, էջ 4:

³⁰ Ա. Ք ո ս յ ա ն. Հայոց վաղ պետականության պատմության մի խնդրի շուրջ, էջ 11:

³¹ Չպետք է մոռանալ, որ Մեծ Հայքի «Աշխարհացոյցյան» վարչաքաղաքական բաժանումն ավելի ուշ շրջանի է պատկանում: Նշվող ժամանակահատվածում Իսուվա-Ծոփքն ավելի ընդարձակ էր, քան՝ «Աշխարհացոյցյան» Ծոփք նահանգը և, ամենայն հավանականությամբ, իր մեջ ներառում էր նաև Աղձնիքի մի մասն ու հարակից մի շարք այլ տարածքներ:

³² M. M a y r h o f e r. Նշվ. աշխ., № 57:

³³ Անվան հիշատակությունը կա Բեհիսթունյան արձանագրությունում. W. King and R. C. Thompson. The Sculptures and Inscription of Darius the Great on the Rock of Behiston in Persia: A New Collation of the Persian, Susian and Babylonian Texts. London, 1907, “Vidafarnā nāma Vahayasparahayā puça Pārsa” («Վինդաֆարնա որդի Վահայասպարայի՝ պարսիկ») Col. III, 84,

parna³⁴, արամեական՝ Wndprn, հունական՝ Ἰνταφέρνης, պարթևական՝ Windafarn [wyndprn], միջին պարսկերեն և ասորերեն՝ Gundafarr:

Վինդաֆարնա անունը հնդիրանական է եղել նաև հայտնի Կյուրոս Մեծի (մ. թ. ա. 550–529 թթ.) ժամանակներում³⁵: Վինդաֆարնան Դարեհ Աքեմենյանի այն 6 համախոհներից էր, ովքեր նրան օգնեցին սպանել մոգ Գառամատային³⁶: Անունը, սակայն, կարծում ենք, եզակի է. Իսուվա-Մոփքից և Բեհիսթունյան նույն արձանագրությունից³⁷ հայտնի վերոհիշյալ «^mÚitarn[a]-Viⁿdarna» անունը պետք է, որ ծագած լինի նույն արմատից, ինչ-որ Վինդաֆարնայի անունը:

Չի բացառվում, որ սեբեոսյան Փառնավազն ու խորենացիական Պարույրը կարող էին նաև ժամանակակիցներ լինել: Առաջինի իշխանությունը, ինչպես որ տեսանք, «համընկնում էր» Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան շրջաններին, իսկ երկրորդի պարագայում, ելնելով հայ պատմիչների հիշատակություններից՝ հավանական գոտի կարող է լինել Լեռնաշխարհի հարավարևելյան շրջաններին: Ակնհայտ է, որ մ. թ. ա. VII դարավերջին ու մ. թ. ա. VI դարասկզբներին, երկու հզոր և դաշնակից տերությունները՝ Նորբաբելոնյան թագավորությունն ու Մարաստանը՝ ողջ տարածաշրջանը՝ Մերձավոր Արևելքը, բաժանելու էին ազդեցություն գոտիների: Վերջինից անմասն չպիտի մնար նաև Հայկական լեռնաշխարհը:

Ինչևէ, ինչպես տեսանք, Փառնավազը գործել է Նորբաբելոնիայի ազդեցություն գոտիներում, իսկ Պարույրը, հնարավոր է՝ Մարաստանի: Եվ անկախ այն հանգամանքից, թե ինչպիսին պիտի լինի Հայկագուն-Երվանդունիների արքայացանկը, միևնույն է՝ այնտեղ, ակնհայտորեն, պիտի լինի նաև Փառնավազի անունը՝ որպես Հայաստանի թագավորի: Փաստացի, մ. թ. ա. VII դարի վերջին ու մ. թ. ա. VI դարի առաջին կեսին Հայաստանի այս կամ այն շրջաններում կառավարած, մասամբ թվագրվող ու օտար աղբյուրների կողմից հաստատվող երկու թագավոր ունենք՝ Փառնավազն ու Տրգրան Հայկազն/Երվանդյանը:

Այսպիսով, վերոշարադրյալը թույլ է տալիս վերանայելու մինչ օրս պատմագրություն մեջ մ. թ. ա. VII դարավերջին և մ. թ. ա. VI դարա-

86, 88; Col. IV, 83. Տե՛ս նաև՝ Հ եր ո գ ո տ ո ս. Պատմություն ինը դրքից, թարգմ. բնագր. և ծանոթ.՝ Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1986, III, 118–119:

³⁴ Անունն արձանագրության աքքադական և էլամական հատվածներում նույն կերպ է նշած՝ (տե՛ս W. King and R. C. Thompson. Նշվ. աշխ., սյուն III, 40, 89):

³⁵ Ք ս ե ն ո փ ո ն. Կյուրոպեդիա, թարգմ. և ծանոթ.՝ Ս. Կրկյաշարյանի, Երևան, 2000, VIII, 3, 21:

³⁶ W. King and R. C. Thompson. Նշվ. աշխ., սյուն III, 76–92:

³⁷ Նույն տեղում, “Vidarna nāma Bagābigna hayāpuça Pārsa” («Վինդարնա որդի Բագաբիգնայի՝ պարսիկ»), Col. II, 19, 21; Col. IV, 84: Էլամական տարբերակի՝ Mitarna, Miturna (Col. II, 13, 15, Col. III, 91), աքքադական տարբերակի՝ Ūmidarna-, Ū (-) darna, արամեական՝ Wdrn, լիկիան՝ Widrna, հունական՝ Ἰδάρνης, Idarnēs, Idarnēs և այլն (տե՛ս M. Mayrhofer. Նշվ. աշխ., № 58, էջ 29):

սկզբին Հայկական լեռնաշխարհում տիրող քաղաքական իրավիճակի վերաբերյալ հայտնի նախկին տեսակետները:

Ռուսլան Ցականյան – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Հին Արևելքի բաժնի գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Հին Առաջավոր Ասիայի և Հայկական լեռնաշխարհի պատմությունն ու մշակույթ: Հեղինակ է 1 մենագրության և շուրջ 30 հոդվածի: roslantsakanyan@yahoo.com

REFERENCES

- Chamchyants M. Hayots patmutyun, h. A, Yerevan, 1985 (In Armenian).
 Glassner J.-J. Mesopotamian Chronicles. Atlanta, 2004.
 Grayson A. K. Assyrian and Babylonian Chronicles. New York, 1975.
 Grekyan Ye. Gyoveleki urartakan ardzanagutyune. – PBH, 2004, № 1 (In Armenian).
 Grekyan Ye. Karl Fridrikh Leman-Haupte yev urartakan arkayatsanky «Yerek Rusaner»-i khndri shurj. – “VEM”, 2017, № 2 (In Armenian).
 Hakobyan H. Tigran Medse yev Haykazuninere hamadzayn Khorenatsu yev Sebeosi. – Haykazuniner, Yerevan, 2013 (In Armenian).
 Harutyunyan B. H. Hayastani, hay-iranakan haraberutyunneri yev Arajavor Asiayi hnaguyn patmutyan mi kani khndirneri shurj (m. t. a.VII–VI dd.), Yerevan, 1998 (In Armenian).
 Herodotos. Patmutyun ine grkits, targm. bnagr. ev dsanot` S. Krkyasharyani, Yerevan, 1986 (In Armenian).
 Hinz W. Altiranisches Sprachgut der Nebenüberlieferungen. Wiesbaden, 1975.
 Khachatryan V. N. Hayastanye m. t. a. XV–VII darerum (Hayots hin patmutyun), Yerevan, 1998 (In Armenian).
 King W. and Thompson R. C. The Sculptures and Inscription of Darius the Great on the Rock of Behiston in Persia: A New Collation of the Persian, Susian and Babylonian Texts. London, 1907.
 Kosyan A. An Aryan in Išuwa.– “Iran and the Caucasus” (Leiden), 2006, vol. 10/1.
 Kosyan A. Ariatsinere Pakkhuvayum. – “Merdzavor ev Mijin Arelvelqi erkner ev zhoghovurdner”, 2006, h. XXV (In Armenian).
 Kosyan A. Hayots vagh petakanutyun mi khndri shurj.– “Banber Hayagitutyun”, 2014, № 1 (In Armenian).
 Ksenopon. Kyuropedia, targm. ev dsanot` S. Krkyasharyani, Yerevan, 2000 (In Armenian).
 Mayrhofer M. Iranisches Personennamenbuch, Band I, Die Altiranischen Namen. Wien, 1979.
 Movsesi Khorenatsvoy Patmutiun Hayots, ashkhatuteamb M. Abeghyani yev S. Harutyunyan, Tpghis, 1913 (In Grabar).
 Movsisyan A. Mitannii tagavorutyune ev Haykazuni nahapetneri u arkaneri tsanky.– Haykazuniner, Yerevan, 2013 (In Armenian).

- Reade J. E. Why did the Medes invade Assyria?. – “History of the Ancient Near East, Monographs – V”, Continuity of Empire (?): Assyria, Media, Persia, Padova, 2003.
- Sebeos. Patmutivn, ashkhxatasiruteamb G. V. Abgaryani, Yerevan, 1979 (In Grabar).
- Tsakanyan R. Assura-babelonyan hakamartutyuny yev Nabopalasari Hyusisayin arshavanknere. – PBH, 2011, № 1 (In Armenian).
- Tsakanyan R. Nabopalasari (К.а. 626–605 tt.) karavarman 18-rd tarin (BM 22047, 1–13) yev “Բի՛-՝ՄԴա-а-nu-ni-а”-i teghadruyan himnakhndire.– “Mijazgayin gitazhoghovi nyuter”, Vanadzor, 2012 (In Armenian).
- Tsakanyan R. Asorestani ankman Khorenatsu yev Sebeosi tarberaknere. – “VEM”, 2017, № 4 (In Armenian).
- Tsakanyan R. Armeniya ot Khayka do Parnawaza: mif i realnost’. – “Metamorfozy istoriy” (Pskov), 2018, vyp. 12 (In Russian).
- Tsakanyan R. Etnokaghakakan teghasharzhere Merdzavor Arevelkum yev Haykakan lernashkharhum m.t.a. VII–VI dd., Yerevan, 2018 (In Armenian).

ПАРНАВАЗ – ЦАРЬ АРМЕНИИ?
(Последняя четверть VII века до н. э.)

РУСЛАН ЦАКАНЯН

Резюме

Ключевые слова: Парнаваз, Видарна, Навуходonosор, Себеос, Мовсес Хоренаци, Армения, Армянское нагорье, Урарту, Ассирия, Мидия.

В своем монументальном труде Мовсес Хоренаци, в основном, отдавал предпочтение греческим источникам. Отсюда и берет начало «мидийская» версия о падении Ассирийского государства. Но под рукой М. Хоренаци находились и другие источники, согласно которым падение Ассирии рассматривалось с точки зрения Вавилона. По М. Хоренаци, первого армянского царя короновал не Набопаласар или Навуходonosор, а мидиец «Варбакес»-Киаксар. А у Себеоса мы встречаем только «вавилонский» вариант, где приведенные выше события привязываются к Вавилону. В своем труде Себеос отмечает, что Парнаваз покорился царю Вавилона Навуходonosору, и с тех пор цари вавилонян и мидиян господствовали до Александра Македонского. Себеос сообщает, что владения Парнаваза располагались в юго-западных районах Армянского нагорья – в Ахдзнике (*Աղձնիք*) или в Цопке (*Isuwa, Մոփք*), в частности, в уезде Ангелтун (*Անգեղտուն*). Имя Парнаваза есть и в списке армянских царей-патриархов у М. Хоренаци. Сообщения Себеоса сходны и с «Вавилонскими хрониками». Из последних видно, что во время ассиро-вавилонского конфликта (626–605 гг. до н. э.) вавилонское войско, во главе которого стоял царь Набопаласар и наследник трона Навуходonosор, по крайней мере, три раза (в 609–608 гг. до н. э.) появлялись на подступах к Армянскому нагорью.

Руслан Цаканян – к. и. н., научный сотрудник отдела Древнего Востока Института востоковедения НАН РА. Научные интересы: история и культура Древней Передней Азии и Армянского нагорья. Автор 1 монографии и около 30 статей. rooslantsakanyan@yahoo.com

PARNAWAZ – THE KING OF ARMENIA?
(The last quarter of the 7th century B.C.)

RUSLAN TSAKANYAN

Summary

Key words: Parnawaz, Vidarna, Nabuchadnezzar, Sebeos, Movses Khorenatsi, Armenia, Armenian Highland, Urartu, Assyria, Media.

In his monumental work Movses Khorenatsi mainly preferred Greek sources. It is here that the “Median” version of the fall of the Assyrian state originates from. Nevertheless, M. Khorenatsi obviously possessed with other sources, too, according to which the fall of Assyria was considered from the point of view of Babylon. Under the hand of M. Khorenatsi there were two versions according to which the first Armenian king was crowned not by Nabopalassar or Nebuchadnezzar, but by the Median king “Varbakes”– Cyaxares. And in the study of Sebeos we meet only the “Babylonian” version, where the abovementioned events are bound to Babylonia. Sebeos notes, that “This Parnawaz submitted to king Nebuchadnezzar of Babylon. And since then the kings of the Babylonians and Medians reigned up to Alexander the Great”. Sebeos reports that the possessions of Parnawaz were located in the southwestern regions of the Armenian Highland – in Ałdznik (*Աղձնիք*) or Sopena (Isuwa, *Ծոփք*), in particular, in the region of Angełtun (*Անգեղտուն*). The name of Parnawaz occurs in the list of Armenian kings-patriarchs in M. Khorenatsi’s work. The records of Sebeos also converge with the “Babylonian Chronicles”. From the latter it becomes obvious that during the Assyrian-Babylonian conflict (626–605 B.C.), the Babylonian army, led by king Nabopalassar and Nebuchadnezzar, the heir to the throne, appeared at least three times (609–607 B.C.) on the borders of the Armenian Highland.

Ruslan Tsakanyan – Candidate of Sciences in History. Researcher at the Department of the Ancient Orient of the NAS RA Institute of Oriental Studies. Scientific interests: the history and culture of Ancient Near East and Armenian Highland. Author of 1 monograph and over 30 articles. rooslantsakanyan@yahoo.com

ԱՎԱԴԵՄԻԿՈՍ ՆԻԿՈԼՈՋ ԲԵՐՁԵՆԻՇՎԻԼՈՒ ԶՈՒՇԵՐԸ
Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ ԶԵՏ ԶԱՆԴԻՊՄԱՆ ՄԱՍԻՆ
(1945 թ. հոկտեմբեր, Սոչի)*

Բանալի բառեր՝ Ն. Բերձենիշվիլի, է. Խոշտարիա-Բրոսե, Ս. Ջանաչիա, ԽՍՀՄ, Ի. Վ. Ստալին, Հայեր, Ուրարտու:

1998 թ. Թբիլիսիում հրատարակվող «Ծիսկարի» ամսագրի առաջին համարում (էջ 96–110) վրացերեն լեզվով¹ լույս է տեսել Խորհրդային Վրաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, պատմաբան Նիկոլոզ Բերձենիշվիլու հուշերը՝ Վրաստանի Կ. Կեկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտի Ն. Բերձենիշվիլու անվան սենյակի վարիչ Դոդո Լոմիձեի աշխատասիրությունը և նույն ինստիտուտի նախկին փոխտնօրեն էդիշեր Խոշտարիա-Բրոսեի ներածական խոսքով: Այդ հուշերը վերաբերում են 1945 թ. հոկտեմբերին Սոչիում ԽՍՀՄ առաջնորդ Ի. Վ. Ստալինի հետ վրաց պատմաբանների եռօրյա հանդիպումներին, որտեղ առաջնորդն իր գիտություններն ու պատմագիտական դիտարկումներն է ներկայացրել նրանց՝ իր դժգոհությունը Հայտնելով 1943 թ. լույս տեսած «Վրաստանի պատմություն» դասագրքի առնչությունը:

Հուշագրությունում տեղ են գտել նաև Առաջավոր Ասիայի ու Անդրկովկասի երկրների, ժողովուրդների և պետությունների հին շրջանի պատմությանն առնչվող Ի. Վ. Ստալինի պատմագիտական հայացքները, որոնք մասնավորապես վերաբերում են ժողովուրդների ծագմանը, ազգակցությանն ու հարևանությանը: Զրույցների ընթացքում Ստալինն անդրադարձել է նաև հայոց հին շրջանի պատմության և հայերի ծագման խնդիրներին, ընդհանուր, հարևանցի կարծիք հայտնել հայերի մասին: Հայտնի է, որ ԽՍՀՄ առաջնորդը դպրոցահասակ տարիքից հատուկ հետաքրքրություն է դրսևորել հասարակագիտական առարկաների՝ մասնավորապես պատմության նկատմամբ: Նա խիստ ընթերցասեր է եղել, ունեցել է մեծ գրադարան: Պետք է նշել, որ Ստալինի կողմից ներկայացված պատմագիտական որոշ դրույթներ և տեսություններ բավականին ընդունված ու տարածված են եղել XIX դարավերջի և XX դարասկզբի եվրոպական ու նախա-

* Ներկայացվել է 03. XII. 2019 թ., գրախոսվել է 23. I. 2020 թ., ընդունվել է տպագրության 27. I. 2020 թ.:

¹ Խորին շնորհակալություն ենք հայտնում Վրաստանի Կ. Կեկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտի գիտաշխատող Բաչո Կեկելիային՝ սույն հրատարակման վրացերեն բնագիրը մեզ տրամադրելու, նաև Թբիլիսիում գործող հայկական «Ալիք մեղիա» զանգվածային լրատվամիջոցի աշխատակից Նորիկ Գասպարյանին՝ այն վրացերենից հայերեն թարգմանելու հարցում աջակցելու համար:

խորհրդային գիտական շրջանակներում, որոնք ստալինյան ցուցումներով ստացել են խորհրդային պաշտոնական պատմագիտության քաղաքացիություն: Այսօր դրանցից շատերը հնացած են, ոչ արդիական:

ԽՍՀՄ առաջնորդն այս կամ այն առիթով նաև մտքեր է փոխանակել խորհրդային Վրաստանի ներկայի ու ապագայի մասին, հետաքրքրվել երկրում տեղի ունեցող դրական փոփոխություններով և առաջընթացով, ապագայում իրականացվելիք աշխատանքներով:

Մեր խմբագրությունում և ծանոթագրություններով ստորև համառոտ ներկայացնում ենք է. Խոշտարիա-Բրոսեի ներածական խոսքում տեղ գտած գիտարկումները, ինչպես նաև ակադեմիկոս Ն. Բերձեցիշվիլու հուշագրության առավել հետաքրքրական հատվածները՝ հատկապես այն դրվագները, որտեղ Ի. Վ. Ստալինն անդրադարձել է Հայոց պատմությանն ու հայերին:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԽՈՒԴԱՆՅԱՆ

Է. ԽՈՇՏԱՐԻԱ-ԲՐՈՍԵԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔԸ

1945 թ. հոկտեմբերին Սոչիում հանգստանալու ժամանակ՝ պատմության շուրջ գրուցելու նպատակով, ԽՍՀՄ առաջնորդ Ի. Վ. Ստալինն իր մոտ է հրավիրում ակադեմիկոսներ Սիմոն Զանաշիային և Նիկոլոզ Բերձեցիշվիլուն: Նա ծանոթացել էր վերջիններիս հեղինակությունում 1943 թ. լույս տեսած «Վրաստանի պատմություն» դասագրքին և ցանկանում էր իր կարծիքը հայտնել հեղինակներին: Անկասկած, պատերազմը նոր ավարտած Խորհրդային Միության ղեկավարի, Գերագույն հրամանատարի կողմից Վրաստանի պատմությունում հետաքրքրվելը պատահական չէր: Վրաստանի աշխարհաքաղաքական դիրքը կարևորագույն դերակատարություն ուներ ԽՍՀՄ արևելյան քաղաքականությունում: Մյուս կողմից՝ պատերազմում Գերմանիայի դաշնակից Թուրքիայի խնդիրը և նրա հետ կապված հարաբերությունները ենթակա էին կարգավորման (ավելի ուշ այս հարցն առաջ է քաշվել ԽՍՀՄ կողմից): Սակայն տվյալ դեպքում՝ Ստալինի հետ հանդիպման ժամանակ, քննարկումը վերաբերել է միայն Վրաստանի պատմությանը: Այստեղ, բնական է, խոսվել է Ստալինի՝ վարժարանում սովորելու տարիների հիշողությունների, առանձին հեղափոխական գործիչների և գիտնականների բնութագրման, քաղաքականության, Վրաստանի տնտեսության ու հեռանկարների շուրջ:

Ն. Բերձեցիշվիլին հարկ է համարել Ստալինի հետ հանդիպման փաստերն ու տպավորությունները գրի առնել օրագրում, այնուհետև՝ առանձին գրառումների տեսքով, ինչը նշանակում էր, որ դրանք տարածում կգտնեն հանրության լայն շրջանակներում: Այս ամենով հանդերձ՝ նա նպատակ է ունեցել նաև բնութագրել Ստալինին՝ ցուցադրելով նրա կյանքի կենցաղային կողմերը: Գրառումներից երևում է,

Историко-филологический журнал
2020 № 1
Պատմագրամաթիկական հանդես

որ Վրաստանի պատմության վերաբերյալ Ստալինի հետ տեղի ունեցած քննարկումները խորը փորձագիտական մակարդակով են տարվել: Կասկած չկա, որ նա արտակարգ պատրաստված է եղել: Թե՛ նրա դիտարկումները, թե՛ ցանկությունները, իրոք, ուշադրության արժանի են թվացել: Եվ այս ամենն իր հետքն է թողել ինչպես «Վրաստանի պատմության», այնպես էլ Նիկո Բերձենիշվիլու հետագա աշխատությունների վրա (Գիորգի Սասկաձեն, դասակարգային և ներդասակարգային պայքարի գործոնը պատմական զարգացման գործընթացում և այլն): Հասկանալի է, որ Ստալինն ուղղակիորեն ծանոթացել էր «Վրաստանի պատմություն» դասագրքի վրացական տարբերակին, իսկ ռուսերենը ներկայացրել էր Սիմոն Զանաշիան: Դրանից հետո Ստալինը ցանկություն էր ունեցել ծանոթանալու նաև հեղինակների հետ: Կարճ ժամանակ անց Սիմոն Զանաշիան և Նիկո Բերձենիշվիլին ստիպված են եղել խորհրդային և հանրապետական թերթերում Վրաստանի հարավի պատմական հողերի վերաբերյալ նամակ հրապարակել²:

² 1946 թ. լույս տեսած «Հայաստան և Հայ դատը (վավերագրեր)» աշխատությունում պատմաբան Գաբրիել Լազյանը նշում է, որ 1945 թ. դեկտեմբերին (այսինքն՝ Ստալինի հետ հանդիպումից մոտ մեկուկես ամիս անց) Ս. Զանաշիան և Ն. Բերձենիշվիլին նամակ են հրապարակել նախ Թիֆլիսի «Կոմունիստ», ապա՝ «Պրավդա», «Իզվեստիա», «Կարմիր Աստղ», «Տրուդ» թերթերում, որտեղ պահանջ էին ներկայացնում Վրաստանի պատմական հողերի վերադարձը իրենց ժողովրդին՝ ներառյալ Տրապիզոնի շրջանը: Հեղինակը գրում է նաև, որ 1946 թ. փետրվարի 25-ին «Աստղիեյթիդ Պրես»-ի Մոսկվայի թղթակիցը տեղեկացրել է, որ Վրաստանի կոմկուսի Կենտրոնական կոմիտեի քարտուղար Կանդիդ Չարկվիանին «Պրավդա» թերթում պաշտոնապես հաստատել էր 1945 թ. դեկտեմբերի 20-ին վրացի երկու պատմաբանների պահանջը Թուրքիայի նկատմամբ՝ Սև ծովի շուրջ 180 մղոն ձգվող մի տարածքի վերաբերյալ: Իր խոսքում Կ. Չարկվիանին նշում է, թե Վրաստանը 25 տարվա ընթացքում ձգտել է այդ պահանջի կատարմանը. «Վրացի ժողովուրդին երազը իրականացած է, որ է Վրաստանի հողային ամբողջութեան վերահաստատումը: Վրացական հողի սահմաններէն դուրս մնացած է անմահական վրացական երկիր մը՝ Արդուին, Արտահան, Օլթի, Թորթում, Իսպիր, Բաբերդ, Կիւմիւլ-խանէ, Կիրասոն եւ Տրապիզոն» [տե՛ս Գ. Լ ա գ ե ա ն. Հայաստան և Հայ դատը (վավերագրեր), Գահիրէ, 1946, էջ 372]: Նշենք, որ այս բոլոր տեղանունները նշված էին երկու պատմաբանների նամակի մէջ: 1957 թ. վերահրատարակված այս աշխատությունում հեղինակը որոշ փոփոխություններ է կատարել՝ մասնավորապես հավելելով, որ վրացի գիտնականները իրենց հողային պահանջները Թուրքիայի նկատմամբ հիմնավորելու համար «չուրջ չորս հազարամեակ դեպի ետ կ'երթան մինչեւ Հիթլերներու եւ Սուպարիններու շրջանը – երկրորդ հազարամեակի մէջ նախաքրիստոնէական շրջանի – եւ մեծ հանգրուաններով իրենց պատմութեան դարաշրջանները քննութեան առնելով՝ կը հասնին մինչեւ մեր օրերը: Արդարութեան տուրք տալով պիտի ըսենք, որ վրացի գիտնականները Կարսը վրացական հող այդ նամակին մէջ երբե՛ք չեն հռչակեր եւ անոր միակցումը Վրաստանի այդ նամակով երբեք չեն պահանջեր: Ո՛չ թէ Կարսը վրացական հռչակելով՝ անկէ մեծահոգօրեն կը հրաժարին, այլ զայն իսպառ, երբե՛ք եւ բնաւ վրացական չեն նկատեր» [տե՛ս Գ. Լ ա գ ե ա ն. Հայաստան և Հայ դատը (Հայ և ռուս յարաբերութիւններու լոյսին), Գահիրէ, 1957, էջ 363–

Հարկ է նշել, որ գրառումներում առանձնահատուկ հետաքրքրական են Ստալինի անձի բերձեցիշվիլիական նկարագրությունը: Օրինակ՝ նա «վրաց կոմունիստ» և «վրաց հայրենասեր է», որ «Ստալինը մեր ժամանակվա բարձրագույն և ամենափայլուն պետական համակարգի՝ Խորհրդային Միության հեղինակն է, որտեղ Վրաստանի, ինչպես նաև բոլոր դաշնակիցների ապագան ապահովված է» և այլն:

Ստալինի կողմից վրաց ակադեմիկոսների հյուրընկալման վերաբերյալ բերձեցիշվիլիական արխիվներում վերջինիս գրառումների առկայությունը վրաց հասարակությանը երկար ժամանակ է, ինչ հայտնի էր, և նրանց հանդեպ հետաքրքրությունը մեծ էր, սակայն մինչ Ն. Բերձեցիշվիլու անձնական արխիվը պահվում էր Կ. Կեկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտում (մշակվում էր), այս նյութերով հետաքրքրվողների համար դրանք անհասանելի էին:

Ստալինի մասին հասարակության մեջ տարբեր կարծիքներ գոյություն ունեն: Թե՛ Վրաստանում, թե՛ Ռուսաստանում, թե՛ ամբողջ աշխարհի պատմության մեջ Ստալինի դերակատարության վերջնական գնահատականը, թերևս, ապագայի գործ է, իսկ մենք հարկ ենք համարել հասարակությանը տրամադրել Ն. Բերձեցիշվիլու բնութագրումը, որպեսզի հետաքրքրվող բոլոր անձանց հնարավորություն տրվի անձամբ դատել, թե որքան է այն համապատասխանում իրականությանը:

ՀԱՏՎԱԾՆԵՐ Ն. ԲԵՐՁԵՆԻՇՎԻԼՈՒ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

«1945 թվականի հոկտեմբերն էր: Մեծ պատերազմը ավարտած և հաղթանակած ընկեր Ստալինը հանգստանում էր ծովի ափին: Ընկեր Ստալինը կարգացել էր մեր «Վրաստանի պատմություն» դասագիրքը և հեղինակների հետ հանդիպման անհրաժեշտություն էր տեսել:

Հոկտեմբերի 14-ին ընկեր Կ. Չարկվիանին այժմ հանգուցյալ ակադեմիկոս Ս. Ջանաշիային և ինձ իր մոտ հրավիրեց: Ասաց՝ ընկեր Ստալինն ասել է. «Եթե հեղինակները դեմ չեն, Վրաստանի պատմության վերաբերյալ մի քանի նկատառում ունեմ»:

Հոկտեմբերի 19-ին շարժվեցինք և 20-ին արդեն ընկեր Ստալինի հյուրն էինք: Մեր հյուրընկալությունը տևեց 3 օր: Հոկտեմբերի 23-ին հետ վերադարձանք և կասեմ նաև ուրիշների անունից՝ տխրեցինք, որ բաժանվում ենք նման մարդուց:

Ընկեր Ստալինի «նվերները» բարձած գնում էինք՝ Վրաստանի պատմության, վրաց մշակույթի, գրականության, գրական լեզվի, վրաց ազգի զարգացման հեռանկարների վերաբերյալ առաջնորդող

364]: Այդուհանդերձ, 1947 թ. հոկտեմբերի 24-ին Միացյալ Ազգերի կազմակերպության քաղաքական կոմիտեի նիստում խորհրդային պատվիրակ Անդրեյ Վիշինսկին հայտարարում է, թե Կարսը վրացական հող է, և արդար է, որ վերադարձվի Վրաստանին՝ մատնանշելով վրաց ակադեմիկոսների հրատարակած հոդվածը, որտեղ, ինչպես ասվեց, որևէ խոսք չկար Կարսի՝ Վրաստանին պատկանելու վերաբերյալ:

գաղափարներով: Որքան բան սովորեցի այս 3 օրվա ընթացքում, որքան գիտական ունակություն մեզ տվեց այս հանճարի հետ զրույցը: Որքան հեշտ և պարզ էին երևում բոլոր հարցերն այս տիտանի համար: Որքան վարպետորեն է բացատրում և կապում հարցի դժվարությունը, որքան վարպետորեն է նա ընկալում այն, ինչ կենցաղային և առաջնորդող է թվում: Ընկեր Ստալինը Վրաստանի պատմության վերաբերյալ բազում հարցեր առաջ քաշեց և յուրաքանչյուրի վերաբերյալ սկզբունքային կարծիք հայտնեց: Իր յուրաքանչյուր զրույթ ընկեր Ստալինը հանճարեղ կերպով փաստարկված էր ներկայացնում (ըստ Ստալինի՝ բոլոր կարծիքները փաստաթղթավորված պետք է լինեն, և «կարծում եմ» փաստարկն անպետք խոսակցություն է), և մեր նպատակն այս փաստարկները համապատասխան խորությունը ու ճշտությունը հասկանալն էր:

Մասնավորապես, մեր զրույցի առարկան ընկեր Ստալինի հետ եղել է հետևյալը. վրացիների ծագումն ու հին արևելյան մշակույթի ժողովրդի հետ հարևանության հարցը, Վրաստանի ֆեոդալական միապետության հարցը: Մասնավորապես, խոսք է գնացել, հիշում եմ, Դավիթ Շինարարի մասին: Վրաստանը ֆեոդալական շրջանի ավելի ուշ ժամանակներում, այսինքն՝ վրացիների պայքարը բարձր մշակույթի կրող ժողովրդի (օսմանազղբաշական) միջավայրի հետ: Հերակլի պայքարը Վրաստանի փրկության համար և թավաղների դերը պետականության փլուզման գործում: Վրաց հասարակության ծագման-կազմավորման հարցը ցարիզմի դեմ պայքարի ժամանակաշրջանում: Վրաստանի և աշխարհի պատմության բազում այլ հարցերի շուրջ այս աննման անձնավորությունը մեզ առաջնորդող կարծիքներ հայտնեց, և պետք է ասեմ, որ ես ընդհանրապես չզարմացա, թե որտեղ ու երբ է ընկեր Ստալինը ժամանակ գտել այս հատուկ հարցերի համար: Երբ դեմ առ դեմ նայում էի մարդուն, ով աշխարհի ազատագրման անչափ բեռը, ինչպես Ամիրանը, վերցրել էր իր ուսերին, և անվերջ էներգիայով օժտված, մարդկությունը հպարտորեն տանում է դեպի երջանկության գագաթ:

(1945) 19/12 Ն. Բ. »:

ՀՅՈՒՐ ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻՆ (ՍՈՉԻ, 1945. 10. 20–23)

14.10. Ընկեր Կանդիդի մոտ. «Եթե հեղինակները համաձայն են, մի քանի նկատառում ունեմ «Վրաստանի պատմության» վերաբերյալ: Համաձայն եք, թե՞ ցանկություն չունեք»: Հավատում էի և չէի հավատում:

19.10. Ուղևորվելու օրը: Խառնաչփոթի մեջ եմ: Ոչ ոքի չեմ ասում, որ մեր հյուրընկալության համար չպատրաստվեմ: Կդիտարկվի որպես անհամեստություն: Այսօր պետք է ներկա լինեմ Բարաթաշվիլու օրվան, ինձ և Սիմոնին հրավիրել են ...

19.10. Կայարանում: Ծինամձղվրիշվիլին³ ստեթոսկոպով (լսափողակ – Հ. Խ.)... Ընկեր Կանդիդն էլ է եկել: Էքսպրես Թբիլիսի–Սոչի: Ընկեր Կանդիդի մարտավարականորեն հասարակ լինելն ու բարեսրտութունը և մեր հյուրընկալի «էպիկականորեն հասարակ լինելը» հանդարտեցնում է իմ նյարդայնությունը (չնայած այս հուսալի բանաձևը ընկեր Ստալինի հետ հանդիպման համար մի քիչ վտանգավոր է: Այն ամբողջը չէ, և Ստալինին տեսնելու ուրախությունը պետք է հաշվի առնել: Հանճարի էպիկական պարզությունը կիսելը՝ մասնակցությունը, նման անսամբլին անդամակցելը դժվար է: հասարակ լինելը բանաձև է, և հանճարը այստեղ նույնպես կտրում է ինչպես ածելին...): Խելացի, գործունյա Կանդիդը չորրորդ անգամ խոսեց Ստալինի՝ հինգ տարվա համար նախատեսված աշխատանքների մասին: Ուրախալի հեռանկար է ...

20.10. Անձրևոտ առավոտ: Գազրայում այս վայրերը, որ նման են դրախտի, դեռ չէի տեսել: Այստեղ ինչ-որ տեղ հովազները պարտության են մատնել Դադիանիի և Գուրիելիի միասնական արշավին ... Դուրեկան տեսավայրը դանդաղեցնում է ամպամած օրը: Ծովն արեկոծվում է, սակայն չի խառնվում: Անցանք Բգիփին, Գանթիադի կուտնտեսություն (Պիլենկովո): Շփոթությունն ավելի ու ավելի էր այցելում ինձ: Ուր որ է կհասնենք:

Մերթընդմերթ չէի հավատում, չէի կարող պատկերացնել, որ մեր ժամանակների ամենամեծ մարդուն եմ տեսնելու՝ Ադլեր, Խոստա, Մացեստա, թունել... Ընկեր Կանդիդը չի կարող մեզ սփոփել. «Կարծում եմ՝ հենց այսօր ընկեր Ստալինը կընդունի ձեզ»: Մենք ցանկանում էինք հետաձգել մինչև վաղը... Վճիռ հրապարակելու նման լարված եմ: Իմ պայուսակը սարսափելի է թվում. այն լի է գրքերով: Դրանք կարող էին անհրաժեշտ լինել ընկեր Ստալինի հետ հանդիպման ժամանակ... Սիմոնի հասարակ հանդարտությունը տեսնում եմ՝ նա նույնպես անհանգիստ է, ապա ինձ ինչ է պատահել:

Սոչի, կայարան: Անձրև է մաղում: Ծանոթացանք գեներալ-լեյտենանտ Վլասիկի և ուրիշների հետ: Նստեցինք ավտոբուս: Քիչ անց հայտնվեցինք Մացեստայում՝ «Дача № 1»: Պրոֆեսոր Միխեիլ Ծինամձղվրիշվիլին ինձ հետ մրցում էր հետ ընկնելու համար: Կոկիկ, երկհարկանի տան դիմաց կանգնեցինք, вестибюль ենք մտնում: Մեզնից առաջ ներս մտնողները հանում էին իրենց վերարկուները, տալիս ինչ որ մեկի ձեռքը... Ստալինը: Ընկեր Կանդիդը ներկայացրեց մեզ: Ծինամձղվրիշվիլին ժպտաց, ձեռքն առաջ սեղմեց և կրկին դիմեց Վլասիկին. «Две комнаты наверху, две внизу. Разместите». (Ինձ թվաց՝ Ստալինը հոգնած էր: Տխրեցի...): Ընկեր Չարկվիանին և Ծինամձղվրիշվիլին տեղավորվեցին վերևում, ես ու Սիմոնը՝ ներքևում: Պետք է հանգստանանք: Գործ անենք:

³ Միխեիլ Դորոֆեևիչ Ծինամձղվրիշվիլի (1882–1956)– վրացի պետական գործիչ, խորհրդային բժիշկ-թերապևտ, Վրացական ԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1946 թ.), Վրացական ԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր և նախագահություն անդամ:

Շատ քիչ ժամանակ անցավ, և ընկեր Կ. Չարկվիանին ներս մտավ. ընկեր Ստալինը մեզ էր ցանկանում տեսնել ...

Երբ եկանք, ընկեր Ստալինը խոսում էր Ծինամադղվրիշվիլու հետ: Կանգնած էր: «Садитесь, я привык стоять». Նստեցինք: Կանգնած ծխամորճ էր ծխում, ժպտում էր. «А вы Мачавариани помните?», – հարցրեց Ծինամադղվրիշվիլուն: «Нет».

«Я вот имел несколько замечаний к вашей истории, точнее, два основных замечания».

Մեր գիրքը գրված էր իր դիմաց, թերթում էր: Չի բավարարում առաջին գլուխը: Ավելին է ուզում իմանալ վրացիների հարևանների ծագման, նմանություն մասին (ընդգծումը մերն է – Ն. Խ.)⁴, Առաջավոր Ասիայի հին մշակութային ժողովրդի հետ՝ Շումեր-Սուբար-Ուրարտուի մասին⁵: Կարթագենը չի համարում հրեաների բարեկամ ... ինչպես նաև լիբիացիներին, բասկեր, էտրուսկներ ... «Հույները ուշ են եկել: Եգիպտացիները նրանց անվանում էին ավազակներ, թափառականներ» ... Այս ամենը ուսումնասիրված է ... Ավելի շատ բան է հարկավոր: Արևելքի պատմության ուսումնասիրման համար դուք ավելի լավ պայմաններ ունեք, քան արևմտեվրոպացիները: Կովկասյան լեզուներ, ազգագրություն ... Շատ հակափաստարկներ ունեք եվրոպացիների կարծիքների հանդեպ ... (փաստարկված համարձակությունը գիտություն մեջ, անարգանքը տիրող կարծիքների խախտման մեջ): Հայերը ուշ են եկել, երևի հեծելազորը գրավել է Ուրարտուն: Բնակչությունը վտարել են կամ խառնվել ...: Լեզվի ընթացաշրջանի վերաբերյալ Մառի տեսությունը չի անհանգստացնում: Լեզվի հարցը հարևան ժողովուրդների համար պարզելու-հստակեցնելու գլխավոր հարցն եմ համարում ... Լեզվի կառուցվածքը շատ անհատական և հստակ իրողություն էր պատկերացնում: Գողանում էր վրացերենի տարբերությունները, կարգում էր վրաց

⁴ Այսուհետ բոլոր ընդգծումները մերն են:

⁵ Հետաքրքրական է, որ հայտնի ուրարտագետ Գ. Մելիքիշվիլին, ով 1946 թ. դարձավ կոմկոուսի անդամ, իր հետագա աշխատություններում, այդ թվում՝ «Вестник древней истории» գիտական հեղինակավոր ամսագրում 1953 թ. լույս տեսած «Урартские клинообразные надписи» հոդվածաշարերում, ինչպես նաև 1960 թ. հրատարակված համանուն ծավալուն աշխատությունում, փորձ է կատարում այս կամ այն անհայտ ու մոտավոր նշանակության ուրարտերեն բառերը, ինչպես նաև որոշ տեղանուններ բխեցնել քարթվելական արմատներից ամենից հաճախ հիմնվելով բառերի արտաքին նմանության վրա: Բացի այդ, Գ. Մելիքիշվիլին աշխատում է համոզել ընթերցողին, որ դեռևս նախաուրարտական և ուրարտական շրջանում Հայկական լեռնաշխարհը՝ մասնավորապես նրա հյուսիսային, արևելյան և հյուսիսարևելյան հատվածները, այս կամ այն չափով բնակեցված են եղել քարթվելական ցեղերով ու ցեղամիություններով: Հարկ է նշել, որ նախքան Գ. Մելիքիշվիլու գիտական ասպարեզ մուտք գործելը, վրաց գիտական շրջանակներում ընդհանուր առմամբ չէին դիտարկվում նման մոտեցումներ կամ առնվազն դրանք «գիտականացված» չէին, հետևաբար, ակնհայտ է երիտասարդ ուրարտագետի վրա ստալինյան հայացքների ազդեցությունն ակադեմիկոսներ Ս. Ջանաշխայի և Ն. Բերձենիշվիլու միջոցով:

և միտանեթիի այսրկովկասյան ժողովրդի լեզուների փոխակապակցվածության մասին ...

Լեզվի ձևակերպումը պատկերացնում էր որպես հազարավոր տարիների աշխատանքի պտուղ (Формирование языка – это результат тысячелетней работы): Մտածում էր նրա մասին, որ Մառը իրեն երկու նամակ էր գրել երկար պարբերություններով և բարձր ոճով... Ասում էր՝ չեմ պատասխանել: Գոնե գիտակցում էր, որ Մառը ուշադրության արժանի շատ բան ունի: Հավատում էր Պավլովին, Օրբելու ֆիզիոլոգիային կասկածանքով է նայում: Երկրորդ Օրբելուն, «որը նստած էր հուշարձանների վրա» (над арх. памятниками что сидит), էլ ավելի էր հավատում:

Կոմարովը Օրբելուն առաջարկում էր ակադեմիայի նախագահություն: Կոմարովը (выступить словом не может, докладывать не может) հին ակադեմիկոսներին այնքան էլ սուրբ չի պատկերացնում:

Ստալինի երկրորդ դիտողությունը վերաբերում էր մեր պատմության ավարտին: Երևում է՝ մեր տեքստն այնպիսի տպավորություն չի թողնում, ինչպիսին ցանկանում ենք: Անհրաժեշտ էր գտնում, որ վերջում ասվի Վրաստանի ընտրության վերաբերյալ, որ Վրաստանի վերջը տվեցին ֆեոդալական բաժանվածությունը և բարդ արտաքին գործոնները, որ Օսմանյան կայսրությունն ու Իրանը միշտ անընդունելի են եղել. Իրանի հպատակության տակ Վրաստանին ֆերեյդանացում էր սպասվում, իսկ Օսմանյան կայսրության հպատակության տակ՝ Թուրքիա (ֆեոդալական հարաբերությունների ամենաբարբարոս ձևը) ... որ Ռուսաստանը (ընտրությունը), ճիշտ է, չարիք էր, սակայն պատմական այն պայմաններում՝ փոքրագույնը: Ոչինչ չենք ասում: Ամբողջովին ճիշտ նկատողություն է (это было зло, но в тех исторических условиях это было наименьшее зло): Իմ բանաձևը ճիշտ էր համարում, որ Վրաստանը եվրոպական երկիր է եղել և որ նա էլի կվերադառնա եվրոպական զարգացման ճանապարհին ... (Հետևաբար, ինձ անհրաժեշտ է վերջին պարբերությունը՝ պարսիկներ-օսմանցիների մշակույթի բացակայության, Վրաստանի եվրոպականության և Ռուսաստանի հետ նրա կապի առաջընթացի մասին): Թերթում է գիրքը ... «Հերակլը լավ մարդ է եղել, պայքարել է Վրաստանի միասնականության համար ...»: Ծինամձղվրիշվիլին աշխուժացավ (արդյո՞ք ցանկանում էր մասնակցել զրույցին). «А мне кажется, что тут Ираклий недостаточно выпукло показан». Ինչ կարող ենք անել: Ընթերցողի անձեռնմխելի իրավունքն է: Ընկեր Ստալինը չհամաձայնեց. «Нет, я думаю, он достаточно выпукло показан». Ծինամձղվրիշվիլին լռեց ...

Սաակաձեին հավատում է, չնայած նրա սխալները լավ գիտի (սիրում է Անտոնովսկայայի ումանը):

<...> ... Հավանում է Դավիթ Շինարարին ...

Ճաշի հրավիրեց: Ծառայող կինը սեղան է բացում ... Ընկեր Ստալինը քայլում է ... Գորիի հոգևոր ուսումնարանն ու վարժարանն է հիշում: Ծինամձղվրիշվիլին էլ է փորձում ինչ-որ բաներ հիշել անցյալից ...

<...> ... Քարտեզները տվել են, որպեսզի նկարեմ: Լավ եմ նկարել: Ձեռքին իմ աշխատությունն է: Գովում է, հասցնում ամպերին: Հետո էլ նայում է: Ես գլուխս իջեցրի՝ ավարտեց: Կանչեց ինձ. «Этo я тебя хвалил, несчастный» և գրեց՝ երևում է իմ գովասանքը չի հավանել:

<...> ... Նստեցինք ճաշի: Հինգ հոգի ենք: Ստալինն ավստներից վերցրեց կափարիչները, նայեց գինիներին: Կոնյակ լցրեց: Մեզ առաջարկեց: Ստիպված էինք: Նստեց և անցավ ճաշի: Մենք նույնը արեցինք:

Հյուրասիրում է ընկեր Ստալինը, թամադայություն առաջարկում, կատակներ է անում: Ձգձգել չի սիրում⁶: Մեկ-մեկ աշխատանքային զրույցներ են լինում Կանդիդի և ընկեր Ստալինի միջև: Սրամիտ է (ամեն հարցի փաստաթղթավորումն անպայման պահանջ է: «Я думаю»-ի փաստարկն անհիմն շատախոսություն հոմանիշն է...): Ընկեր Կանդիդը գործով, ռազմավարությամբ, փաստաթղթերով հստակ կանգնած է: Ընկեր Ստալինը հավանում է նրան ... գործից խոնարհ պաշտոնի է անցնում: Կենաց է ասում (սեղանի շուրջ նստածներին չեն վերաբերում կենացները): Վերջացրինք ճաշը, գնացինք հանգստանալու: Ի՞նչը կհանգստացներ: Ուրախությունն այնպես էր պատել, որ կողքերիս թևեր էի զգում: Ոչ էլ Սիմոնը հանգստանալու ցանկություն ունի: Խոսում ենք սպավորությունների մասին ...

Ժամը 8-ին նորից ընկեր Ստալինի մոտ էինք: Թեյ հյուրասիրեց, մեր պատմության մասին զրույցները շարունակվում են: Հարցը նորից վերաբերում է հնագույն շրջանին. զարմացնում է՝ երբ է կարդացել այս գրականությունն Արևելքի պատմությունից⁷... Առաջնորդող ուղղութ-

⁶ Ի. Ստալինը, չնայած ռուսական միջավայրում մշտապես գտնվելուն, պահպանել էր վրաց ժողովրդական կենցաղը, հյուրասիրության և հյուրընկալության ավանդույթներն ու սովորույթները:

⁷ 2011 թ. Ս. Պետերբուրգում խորհրդային ականավոր ուրարտագետ Բ. Բ. Պիոտրովսկու հիշատակին լույս տեսած գրքի նախաբանը սկսվում է հետևյալ տողերով. «В 1951 г. Сталин читал статью Б. Б. Пиотровского «Урарту» (1951). Читал раздраженно, с карандашом в руках. И по всему было ясно, что взялся он за нее не просто так» (Б. Б. Пиотровский. История и культура Урарту. СПб., 2011, с. 7). Ինչպես ասվում է հաջորդ տողերում, Ստալինին այդ հոդվածը, որը հրատարակվել էր «По следам древних культур» (1951) ժողովածուում, ուղարկել էր հատուկ նպատակով և մեկնաբանությունով «Պրավդա»-ի խմբագրությունը: Ժողովածուում տեղ գտած մյուս հոդվածները Ստալինը չկարդաց: Նրան հատկապես դուր չէր եկել հոդվածի նախաբանում Բ. Պիոտրովսկուն տրված «Ուրարտուի առաջին հայտնագործող» գովասանքը: Ստալինին, ամենայն հավանականությամբ, հանգիստ չէր տալիս այն իրողությունը, որ խորհրդային ժողովրդի պատմական ինքնության տարրերից էր այն, որ Ուրարտուն «ԽՍՀՄ տարածքում հնագույն պետությունն» էր: Հատկապես այն, որ Կարմիր բլուրի (Թեյշեբաինի) պեղումների մասին գրում էին դասագրքերում, պատմում էին դպրոցական դասաժամերին, համալսարանական դասախոսություններին: Բ. Պիոտրովսկին Լենինգրադի շրջափակման տարիներին գրած «История и культура Урарту» (1944) աշխատանքի համար

յուններ էր ցույց տալիս ... նորից անդրադառնում է քարտեզների հարցին (Միմոնի խնդրանքով), անհրաժեշտ էր գտնում քննարկում անցկացնել Մերձավոր Արևելքի պատմության հնդեվրոպական տեսակետից լուսաբանված տեսությունների գործնական քննադատություն (հարցնում է, թե ուր է Հրոզնին, չի հավանում Լեման Հաուպտին ...)⁸:

Թեյեցինք: Կանդիդը բարձրացավ իր սենյակ (ինչ որ բան էր ուզում բերել): Միմոնը պատմության ուսուցիչներն թարգմանությունը տվեց ընկեր Ստալինին: Նա դա այնպես հասկացավ, իբր, մենք իր նկատողությունները չենք ընդունում: Ժպտալով հարցրեց: Միմոնը գույնը դցած պատասխանեց: Ընկեր Ստալինն այդ ժամանակ ասաց. «Это у вас хорошая книга выйдет ...». Դա մեզ համար ամենաբարձր գնահատականն էր, որ կարող էինք պատկերացնել: Մեր ուրախությունը նույնպես հասկանալի է: Դեռևս թեյի ժամանակ ընկեր Ստալինը նշեց, որ գրքի ապրոբացիայի մասին ոչինչ չկա: Դա նրան դուր չէր եկել: Պահանջեց, որ այս գիրքն ապրոբացված լինի ազգային կոմիսարների խորհրդի կողմից (ведь по этой книге должны будут равняться истории Украины, Белоруссии и других республик): Ընկեր Ստալինի հայտարարությունը՝ առայժմ, իհարկե, Խորհրդային Միության ժողովրդի ոչ մի պատմություն գոյություն չունի:

123.10. Ժամը 3-ն է, գնում ենք հրաժեշտ տանք ընկեր Ստալինին: Մնացածը կգրեմ Թբիլիսիում/:

Դա (նՄՆՄ ժողովուրդների պատմությունը) կուսումնասիրվի այն ժամանակ, երբ յուրաքանչյուր հանրապետության պատմությունն

1946 թ. արժանացել էր Ստալինյան մրցանակի: Այդուհանդերձ, վերը նշված ժողովածուի էջերին Ստալինի ձեռքով գրված գազրելի «ха-ха!»-ները, ընդգծումները, զիզգապներն ու ալիքաձև գծերը կասկածի տեղ չեն թողնում, որ նա դժգոհ էր մնացել: Առաջնորդի նման կտրուկ արձագանքը կապված էր Ուրարտու, Հայաստան, հայ, հայոց լեզու, հայկական մշակույթ հիշատակությունների հետ՝ չնայած, որ տեքստում դրանք քիչ են հանդիպում: Որոշ վկայությունների համաձայն՝ կյանքի վերջին տարիներին ինտերնացիոնալիստ և ազգայնականության հակառակորդ Ստալինը հոգեպես վերադարձել էր իր ազգային արմատներին և հետզհետե սկսել էր վերածվել վրացի շովինիստի (տե՛ս Բ. Բ. П и о т р о в с к и й. История и культура Урарту, с. 7–9. Նաև՝ Բ. С. И л и з а р о в. Тайная жизнь Сталина. М., 2003, с. 261–267):

⁸ Խորհրդային առաջնորդը հուշագրության այս և հաջորդ այլ հատվածներում մեծ նշանակություն է տալիս կովկասյան ժողովուրդների պատմությանն ու ազգագրությանը՝ դրանք մրցակցության մեջ տեսնելով հնդեվրոպաբանության (այդ թվում՝ հայագիտության) ձեռքբերումների հետ: Տպավորություն է ստեղծվում, թե Ի. Ստալինն այդպիսով ցանկանում էր կովկասյան ժողովուրդներին՝ մասնավորապես վրացիներին, ներկայացնել տեղաբնիկությանն ու բարձր մշակույթի կրողների դիրքերից, և, կարծես թե, ըստ իրեն՝ մինչ այդ եվրոպական պատմաբանները բավարար չափով ու պատշաճ խորությամբ չեն ուսումնասիրել այդ խնդիրները, և լինելով հնդեվրոպացիներ՝ առաջնահերթություն են տվել հնդեվրոպաբանությանը՝ անտեսելով կովկասյան ժողովուրդների պատմության և ազգագրության ուսումնասիրությունը:

ուսումնասիրված կլինի: Միմոնի դիտարկմանը, որ «Խորհրդային Միության պատմություն» աշխատողները (հեղինակները, պրոֆեսոր-դասախոսները) այդ պատմությունում նոր բովանդակություն չեն ավելացնում, այլ նկատի ունեն Ռուսաստանի պատմությունը և, որ, նրանց կարծիքով, ստացվում է՝ միայն անունն է փոխվել, Ստալինն ավելացրեց. «Да. Историю России без Украины и Белоруссии». Իսկ անվանումը փոխելու մասին ժպիտով և միգուցե մի փոքր հեզմանքով նշեց. «Да. Перемена этого названия нам стоила революции. Но ведь революции происходят не из-за названий» (միտքը սա էր, հնարավոր է բառացիորեն փոխանցված չլինի):

Խոսք եղավ Ուրարտուի Հայկական տեսության մասին: Ստալինի կարծիքով, պարզ է՝ մինչ Հայերի գալն այստեղ բարձր մշակույթի տեր մարդիկ էին ապրում: Եկան քոչվոր Հայերը: Հայկական տեսությունը հիմք չունի, Հայերը հնդեվրոպական լեզվի ժողովուրդ են⁹ (Люблю – ишь՝ սիրում եմ, սիրում եմ՝ Ստալինի օրինակներն են): Смешанные с Грузинами. Ընկեր Ստալինի Грузины-ն ավելի լայն հասկացություն է, քան քարթլ-գան-սվանականը: Ընկեր Ստալինն այս եզրույթի ընդլայնման անհրաժեշտություն է տեսնում: Նա այստեղ նույնպես հանճարեղ է. պատմությունը գիտություն է, ճշմարտություն, այն փաստարկված սիլոգիզմ է, իրական և ոչ թե ֆորմալ ու այդքանով ներկայի հետ համաձայնություն մեջ է: Գիտությունը պետք է այս համաձայնությունը հայտնաբերելու գիտելիք ունենա ... (ճշմարտություն է՝ «վրացի» եզրույթը պետք է ընդլայնվի: Դա անհրաժեշտ է: Ինչպես պատմական գիտությունների տեսանկյունից, այնպես էլ այն ժամանակվա Վրաստանի քաղաքականության տեսանկյունից ...): Հարցրեց Միմոնին՝ հնա-

⁹ Նկատի ունի հնդեվրոպական նախահայրենիքից Հայերի գաղթի վերաբերյալ տեսությունը: Մասնավորապես, խոսքն այն ժամանակ խիստ տարածված Հայերի ծագման բալկանյան տեսության մասին է: Եթե եվրոպական հնդեվրոպաբանության և Հայագիտության մեջ հնդեվրոպական նախահայրենիքի ու Հայերենի կրողների նախնական տեղայնացման խնդիրները համարվում էին խիստ վիճարկելի և տեսական, ԽՍՀՄ առաջնորդ Ի. Ստալինի հրահանգով այն որպես անքննելի ճշմարտություն փաստացիորեն պարտադրվեց ԽՍՀՄ ակադեմիական շրջանակներին ու ներառվեց բուհական և դպրոցական դասագրքերում: Այն բոլոր հետազոտողները, ովքեր այդ տեսությունը հակասող մոտեցումներ էին արտահայտում, խստորեն քննադատվում էին գիտական շրջանակների կողմից, և նրանց առաջ քաշած մոտեցումները պիտակավորվում էին որպես հակագիտական կամ մերձգիտական: Ներկայումս գոյություն ունեն հնդեվրոպական նախահայրենիքի ու Հայերենի կրողների նախնական տեղադրության վերաբերյալ շուրջ մեկ տասնյակի հասնող տեսություններ, որոնցից որևէ մեկին արևմտյան գիտությունն առայժմ վերջնական գնահատական չի տվել, մինչդեռ ետխորհրդային երկրներում շարունակում են գերակա մնալ Ստալինի կողմից քաղաքական նպատակներով առաջ քաշված Հայերի ծագման բալկանյան տեսությունը և դրանից բխող ենթատեսություններն ու եզրակացությունները:

րավո՞ր է՝ хетско-грузинская группа. Միմոնը ասաց. «Грузинская-ն փոքր-ինչ համարձակ է երևում»: «Бойтся», – ժպտաց Ստալինը ...

Հավանում է Տուրակին, չի հավանում Ստրուվեին, հավանում է Պավլովին, չի հավանում Ի. Օրբելուն:

Մի անգամ ասաց. «Ведь Грузия самостоятельна экономически и культурно ...». Առաջնորդող խոսք է: Նրա ճիշտ ընկալումը, հասկանալն ու իրականացնելը մեր պարտքն է ...

Հետաքրքիր է. ես մինչև ընկեր Ստալինին տեսնելն այնպես էի պատկերացնում, որ նա սառը դրույթներով էր առաջ շարժվում: Պարզվում է՝ ընկեր Ստալինն ամեն մի դրույթ հանճարեղ կերպով փաստարկում էր, և ամբողջ դժվարությունն այդ փաստարկման հասկանալու-հայտնի դարձնելու, ընկալելու-ուսումնասիրելու մեջ է: Հետաքրքրվում էր Թբիլիսիի բնակչության կազմով, վրաց բնակչության տեղաշարժմամբ ... երբ ընկեր Չարկվիանին ասաց, որ վրացիներն ավելի շատ են, քան մնացած այլ բնակիչները, նա նշեց. «А все-таки грузины не имеют абсолютного большинства ...». Հետաքրքրվում էր Ախալցխի կողմերում՝ Քլուխորի, Յալբուզի, Ախալ Շավիի շրջաններում վրացիների վերաբնակեցման հարցով:

Հետաքրքրվում էր՝ աշխատում են, թե՞ ոչ աջարացիները, քոբուլեթցիները, նրանց կանայք ... նշում էր, որ աբխազները ծուլ են ...

Կռադատում էր մեր կառավարության միջոցառումները Հարավային Օսեթիայի և Աբխազիայի դպրոցներում (վրացացում):

Գովաբանում է հյուսիսային օսերի պահվածքն այս պատերազմի ժամանակ, նշում է չեչեն-ինգուլների վրդովեցուցիչ պահվածքը և նրանց արժանի պատիժը ...

Օսմանյան էմիրարների աշխատանքի պատճառով են այս դժբախտ ադիգեյցիները և չեչեն-ինգուլները նման պահվածք ցուցաբերել:

Իսկ հիմա Օսմանյան կայսրությունը չոքել է և երկու ոտքն էլ ծալել ... [նշում է պարսիկների-օսմանցիների մշակույթի բացակայությունը (ապամշակութայնությունը): Ինչպես հիմա, այնպես էլ ամբողջ ուշֆեոդալական դարաշրջանում: Այս միջավայրը ես պետք է ընդգծեմ պատմության մեջ]:

Հետաքրքրվում է մեր լեզվագիտությունը, Մերձավոր Արևելքի ուսումնասիրման գործով [(այստեղից մենք առաջնորդող եզրակացություն պետք է անենք): Հետաքրքրվում է մեր համալսարաններով, դրանց որակական տվյալներով: Ձգում եմ ցանկանում է լսել, որ մեր համալսարանները ոչ մեկից չպետք է հետ մնան ...]:

Ստալինն ատում է ընդհանրական բառակապակցություններ, անապացուցելի դատողություններ. «Այս ախտով հիմնականում կոմունիստներն են տառապում. նրանք սիրում են համաշխարհային մասշտաբով քննարկումներ անցկացնել, խոսում են դիալեկտիկական մատերիալիզմի մասին և փաստարկված երկու բառ չեն կարող ասել: Նույնիսկ զբաղետ արձանագրություն չեն կարող կազմել, կազմակերպչական հավակնություններ ունեն»: Հիշում է Բուխարինի հավակնությունները. «Տաբատը չէր կարողանում ձգել, միշտ նրանից

ցած էր սահում, չեմ հիշում որևէ նիստի մասնակցենք և ուրիշի վերարկուն, ուրիշի գալուցները կամ գլխարկը չհագներ և այս թշվառը ցանկանում էր կազմակերպչական հարցերով զբաղվել»:

Ընկեր Ստալինն անհրաժեշտություն էր համարում «մեր երիտասարդների ուսման ծրագրավորումը». «Мы же гос. хозяйство планируем, а хозяйство без людей разве бывает?». Դեմ չէ, որ մեր երիտասարդները բժշկական ֆակուլտետի հակվածություն ունեն, սակայն անհրաժեշտ էր համարում այլ ֆակուլտետների հզորացումը. իրավաբանական, պատմական, ինժեներական: «Իմ կինն ասաց՝ ցանկանում եմ ինժեներական դիմել», ես ուժ գործադրեցի և տարա պատմական: Սա ավելի անհրաժեշտ ոլորտ է: Մենք այստեղից լավ քաղաքական գործիչներ կստանանք: Անհրաժեշտ է իրավաբանական ոլորտի հզորացում: Մենք բազում իրավաբանների կարիք ունենք: Աշխատանքային փաստաթղթերի դասավորում, արտահայտման ճշտություն, այդ գործը մեզանում բաց է թողնված, պետք է զբաղվել»: («Մերոնք ընտելացել են պատերազմելուն, ռազմական գործ են սովորել, իսկ դիվանագիտության չեն տիրապետում և հաճախ վտանգավոր սխալներ են թույլ տալիս»):

(Ընկեր Ստալինի համար օտար է կոլտնտեսության հանդեպ կոպիտ բռնությունը, նյութական հետաքրքրվածությունն այստեղ որոշիչ բնույթ պետք է կրի):

Ընկեր Ստալինին դուր չի գալիս հայերի պարծենկոտությունը պատմության մեջ (ընդհանրապես ուշադրություն է դարձնում հայերի այս կողմին) և բացատրում է այս իրողությունը նրանով, որ պատմությունը հայերին երբեք երես չի տվել, հիվանդագին «խստորիզմ»-ով են տառապում:

Նշում է նաև Օսմանյան կայսրության հետամնացությունը: Համեմատում է Խորհրդային Ադրբեջանի հետ և վերջինիս դասում է 3 անգամ ավելի բարձր ...:

<...>... 22.10. Ժամը 5-ին ճաշեցինք առանց Ստալինի: Միջանցք դուրս եկա և պատահաբար հանդիպեցի ընկեր Ստալինին: Ձեռքիս թերթ կար: Ինձ նայեց, ժպտաց, հարցրեց. «Ի՞նչ է տեղի ունենում երկրում»: «Խաղաղություն», – ես նույնպես ժպտով պատասխանեցի: «Ինչ որ բան կերա՞ք»: «Այո, շնորհակալություն»: «Ձեմ հավատում», – պատասխանեց և շարունակեց. «А где документ?». Խնդաց և գնաց:

Ընկեր Ստալինը հետաքրքրվում էր երաժշտությամբ: Հատկապես սիրում է գուրիական երաժշտությունը:

<...>... Ընկեր Ստալինին հետաքրքրում է վրացական ազգագրությունը (հերկման զենքի պատմությունը): Պատմական խնդիրները լուծելիս ազգագրությանը մեծ նշանակություն է տալիս:

Հետաքրքրվում է մեր հնագիտությամբ: Շատ էր հավանել իրերը: Ուշադրությամբ լսում է Բագինեթի պեղումների մասին պատմությունները ... Հնագիտական պեղումների հաճախակիացման անհրաժեշտություն է տեսնում՝ մասնավորապես Արևմտյան Վրաստանում:

Օսմանյան Վրաստանը, երևում է, ցավալի է իր համար: Քարտեզի վրա Իշխանն է փնտրում (նկարը ցույց տվեցինք): Ուսումնասիրում է է. Թաղաիշվիլու «Հնագիտական արշավախումբ Թորթումի կիրճում» գիրքը: «Այս ամենը հիմա ոչնչացված կլինի ...»: Խոսում է լազերի վերաբերյալ: Նրանց լեզվի մասին հարցեր է տալիս: Նշում է Զմյուռնիայի և Ստամբուլի մոտակայքում վրաց բնակչության մասին:

Բնութագրում է վրաց տոհմերին՝ քիզիկղելներին, քարթլիներին, հատկապես սիրում է գուրիացիներին: Հիշում է 1902 թվականից գուրիացի գյուղացիների համարձակությունը, 1905 թվականից նրանց անկեղծությունը, մենչևիկ գուրիացիներին (հիշեցնում է Նոյ Ժորդանիային՝ «Նոյ Պետրեին» – «Նոյ Խունչուզային», Բենիա Չխիկվիշվիլուն, Կարլո Չխեիձեին: Նրանց համարում է հարգանքի նմուշ: Ակակի Ծերեթելուն, Լորթքիփանիձեին, Արսենիձեին):

<...>... Բնութագրում է քաղաքործչներ Կարլո Չխեիձեին, Խոմերիկին, Ռամիշվիլուն, Ժորդանիային, Ծերեթելուն ... Բնութագրում է Ռուզվելտին, Չերչիլին, Էտլին, Տրումենին, Բորնսին, Բևինին ...

Նշում է ռուսների առողջություն-անկոտրումությունը, գերմանացիների առողջ լինելը, անգլո-ամերիկացիների առողջ լինելը (նրանց լավ սնունդը, ռեժիմը, հիգիենան): Ամերիկացիների կոպտությունը (տեխնիկայում), իտալացիների շատախոսությունը, իսկ տեխնիկայի ոլորտում հաջողությունները:

<...>... Ռումինիային մեծ ապագա է կանխատեսում. հարուստ երկիր է (անտառ, հաց, գինի, նավթ, հանքեր):

Հետաքրքրվում է Վրաստանի ոռոգման համակարգերով (քարտեզի վրա փորձում է գտնել), դրական է նայում Սամգորի խնդրին, միայն պահանջում է, որ Վրաստանում բամբակ նույնպես ցանեն, հետաքրքրվում է Վրաստանի ձեռք բերած շրջաններով ... Հետաքրքրվում է մետաղագործական գործարանով (խողովակներ), Քուլթայիսում ավտոմեքենաների գործարանով, էլեկտրաէներգիայի հարցերով, թեյով և Վրաստանի թեյագործական շրջաններով, նրանց մատակարարմամբ ...

Հետաքրքրվում է գիտաշխատողների կյանքով և աշխատանքի պայմաններով ... դրա համար հենց հիմա կփախչենք... Мы не могли уделить должного внимания научным работникам. Мы много их потеряли. Они безропотно, тихо гибли ...¹⁰

¹⁰ ԽՍՀՄ առաջնորդն այստեղ անհասկանալի «չքմեղություն» է գրսե-վորում: Բ. Պիտորովսկին իր՝ ետմահու հրատարակված «Страницы моей жизни» ինքնակենսագրական գրքում մանրամասնորեն ներկայացնում է, թե ինչպես են էրմիտաժի և այլ գիտական հաստատությունների բազում հանրահայտ ու կարկառուն ներկայացուցիչներ ու գիտաշխատողներ 1935–1938 թթ. ենթարկվել բռնաճնշումների՝ մեղադրվելով տրոցկիստա-կան-բուխարինիստական խմբակներին հարելու կամ ազգայնականության մեջ: Թեև նրանց մեծամասնությամբ անց էին անցնում արձակել և վերականգնել նախկին աշխատանքում, այդուհանդերձ, մեծ է եղել խորհրդային գիտությանը հասցված բարոյական-մտավոր վնասը: 1935 թ. Ն Գ Ժ Կ-ի կողմից ձերբակալվում է հենց ինքը՝ Բ. Պիտորովսկին, ով որոշ ժամանակ բանտում անցկացնելուց հետո առանց որևէ բացատրության ազատ է արձակվում և ապա արհամիությունը դիմելով՝ վերականգնվում

Историко-филологический журнал
2020 № 1
Պատմագիտական հանդես

<...>... Անհանգստանում է Զաքարթալայի վերաբերյալ: Սերգոյին կշտամբում է:

Ասում է՝ ազգային հարցի հանդեպ կոմսոմոլական մոտեցման հետևանք է, ցանկացել է Բորչալուն հանձնել հայերին...

Որքան են սիրում ընկեր Ստալինին: Ինչպես է մեկ-մեկ կատակներ անում սեղան բացող կնոջ նկատմամբ ... ինչպես են հոգ տանում, որ ընկեր Ստալինը հանհանգստանա:

Ընկեր Ստալինը ծնողի նման ջերմ է, ժպտացող, ուրախ, ասողի նման, արագ մտածողություն:

Մի բան հարցնես՝ կպատասխանի: Իբր ոչ էլ լսում է: Սուր պատասխանը միշտ պատրաստ է ...

Բաց քարթլիական ծիծաղ ... անհապաղ քննադատական մտածողություն ունի:

«Մարքսը խաբում էր կոմունաներին, որ համակրանքով էր նայում ամբսոլյուտիզմի դեմ պայքարին: Աբսոլյուտիզմը պրոգրեսի տեսանկյունից ավելի ընդունելի է՝ համարվում է ժողովրդական ուժերին, դասերի պայքարն ընդլայնում է, խորացնում»:

Դժբախտ Իվան Ահեղ. «Նա մահապատժի է ենթարկում երկու հոգու, հետո երկու ամիս աղոթում է, ներում հայցում Աստուծոց», եթե նա համարձակորեն հարվածեր, գուցե 1605–1613 թվականների իրադարձությունները չլինեին:

<...> ... Ըստ Ստալինի՝ «Քրմերը՝ каста ученых звездочетов, инженеров»:

«Քրիստոնեությունը ոչնչացնում էր ստրկությունը և ֆեոդալական հարաբերություններ էր ստեղծում: Ազնաուրների դերը ռազմական, տնտեսական (տնտեսության առաջատարներ, բարելավում բերողներ), հանրության ձուլումը:

<...> ... Ստալինն ու եկեղեցին. «Պատերազմին պատասխանեք պատերազմով: Այսօր հոգևորականությունն ընդհանրապես այլ կերպ է պահում իրեն, և մենք մեր ծրագրի համաձայն հավատքի ազատության վերաբերյալ ազատություն տվեցինք եկեղեցուն»:

<...> ... 19-րդ դարի Վրաստանի պատմությունը ըստ Ստալինի. Վրաստանի հասարակության աճ և ցարիզմի դեմ պայքար: Առաջին բանաձևը ներառում է Վրաստանի զարգացում «Քարթլի-Կախեթի-Իմերեթի-Սամեգրելոյից» Վրաստան: Վրաստանից (քրիստոնեական) մինչև

նախկին աշխատանքում: Գիտաշխատողների նկատմամբ բռնաճնշումները նոր թափ են ստանում 1937 թ., որին զոհ են դառնում բազում պատմաբաններ, հնագետներ և հարակից այլ գիտակարգերի ներկայացուցիչներ ԽՍՀՄ բոլոր հանրապետություններից (տե՛ս Բ. Բ. Пиотровский. Страницы моей жизни. М., 2009, с. 102, 114, 121–125, 144–145): Մեկ այլ ականավոր խորհրդային գիտնական Ի. Մ. Դյակոնովը, 1995 թ. լույս տեսած «Книга воспоминаний» գրքում մանրամասնորեն ներկայացնում է ոչ միայն ստալինյան ժամանակաշրջանի բռնաճնշումները և թելադրված գաղափարախոսական հայեցակարգերը գիտնականների հանդեպ, այլև՝ տվյալ ժամանակահատվածին բնորոշ բացասական իրողություններն ու բարքերը:

Վրաստան (ազգային), ֆեոդալական հարաբերություններից բուրժուական հարաբերություններ, գյուղացուց մինչև պրոլետարիատ, արհեստավոր-վաճառականներից՝ կապիտալիստներ ...

Երկրորդ բանաձևը ներառում է վրաց հասարակության ցարիզմի դեմ պայքարի տարբեր փուլեր:

Վրաց ֆեոդալների պայքարը ցարիզմի դեմ: Բատոնիշվիլիները, թավադները (ժողովրդի անունից փորձում էին ներկայանալ «ֆեոդալական միապետական» ընդդիմություն) այս շարժման պարտությունը 1832 թվականին ... գյուղացիների պայքարը ցարիզմի դեմ: (Հատկանշական են 1841, 1856 թվականների գյուղացիական շարժումները):

Թերեքի ջուր խմածների պայքարը ցարիզմի դեմ ...

Ազգի (բուրժուական) ստեղծման ժամանակ ազգայնականության (բուրժուական և իր պայքարը ցարիզմի դեմ), պրոլետարիատ/ինտերնացիոնալիզմ/ և իր պայքարը ցարիզմի դեմ ...

Եթե հաղթեր բուրժուական դասակարգը, կստանայինք անկախ բուրժուական Վրաստան: Հաղթեց պրոլետարիատը և ստացանք Խորհրդային Միությունում անկախ սոցիալիստական Վրաստան ...

Հերակլի կտակի խախտում կլինեք, եթե հաղթեր բուրժուական. «Իրական անկախ բուրժուական Վրաստան չէր կարող լինել և իր գործող ուժերի պառակտումը վրաց ժողովուրդը չէր կարող իրականացնել ...»:

Ըստ Ստալինի՝ պատմությունը պետք է լինի հայրենասիրական (խորը ճշմարտություն է: Հայրենասիրության և պատմության հարաբերությունների մասին ինչ-որ տեղ նկատառում ունեմ, որտեղ առաջ եմ քաշել այս դրույթը): Խոսքը վերաբերեց նաև «չարյաց փոքրագույնին»՝ Վրաստանի միացումը Ռուսաստանին, Ռուսաստանի առաջնահերթ դերին (օբյեկտիվորեն) և այսպես ներկայացված Վրաստանի պատմությունը *разве не достаточно патриотично будет?* և հավելեց՝ միևնույն ժամանակ պետք է ներկայացված լինի վրաց հասարակության աճը ցարիզմի դեմ անվերջ պայքարի պայմաններում:

Ընկեր Ստալինի պատմական տեսանկյունից՝ «հետամնացներին ծեծում են» (ցարական Ռուսաստանի պատճառով է ասել) ամենից լավ երևում է մեր պատմության օգտակարությունը 19-րդ դարի պատմությունում ...

Պատմությունը հայրենասիրական գիտություն է ...

Այն հասկացողությամբ, որ հայրենասեր է հասարակության առաջնային դասը, գործող դասը ...

<...>... Չարյաց փոքրագույն (այն միևնույն է չարություն է, չնայած փոքրագույն): Հերակլն ավելի լավ ելք չունեք ... Князья доканали государственность Грузии.

Եզրակացություն. եթե դա չարություն է, ուրեմն Հերակլի ցանկությունը պայքարն է եղել, որպեսզի այդ չարությունը, որն ուղղորդում էր վրացիների բազմադարյա փախուստը ոռուս ժողովրդի հետ կապերից, սկզբից ևեթ կանխվեր: Այսինքն՝ պայքար ազատության համար Ռուսաստանի հետ կապեր պահպանելով: Հերակլի այս ցանկությունը կան-

խատեսեց մեծն Բարաթաշվիլին, իսկ պրոլետարիատը, փաստացի, իրականացրեց այն:

«Перекрыть» ... (Սաակաձե)՝ սկզբունքը օտար ուժեր օգտագործելու ընդունելի-անընդունելի լինելն է տարբերում: Եթե դա ծառայում է առաջընթացին, ընդունելի է, և ընդհակառակը:

Ազնաուլուլթյան դերը. «Цементирующий элемент феодального общества, воинство. Носители феодальной культуры ... ».

Քրիստոնեությունից դերը. ծառայում էր Ֆեոդալական Հարաբերությունների խորացմանը, ամրապնդմանը և ստրկության ոչնչացմանը: Այստեղից եզրակացություն. քրիստոնեությունը նոր (պրոգրեսիվ) Հասարակության կրոնը, պրոգրեսիվ մեծ ուժ է:

Վրաց Հասարակության զարգացումն ու պայքարը ցարիզմի դեմ (19-րդ դարի Վրաստանի պատմությունը մեկ նախադասությունում):

<...>... Դավիթ Աղմաշենեբելի (Շինարար – Ն. Խ.)՝ Абсолютизм на час (ես նույն կարծիքին էի):

Կասկածում է, որ Թիֆլիսում նույն տիպի կոմունաներ լինելը 11-րդ դարում, ինչպիսին եղել են եվրոպական քաղաք կոմունաներում: (Այո, կասկածելի է. եթե Թիֆլիսն ու վրացական քաղաքները այդպիսին լինեին, Դավիթի աբսոլյուտիզմը մեկ ժամանոց չէր լինի) ...

«Я за абсолютизм», – նշում է Մարքսի սխալը: Մարքսը ի հայտ է գալիս քաղաք կոմունաների կողմից պայքարի աբսոլյուտիզմի ժամանակ, նրանց կողմից: Երկրի միավորմանը, դասերի միջև պայքարի ընդլայնմանն ու ամրապնդմանն է աջակցում ...

Օսմանական և իրանական մշակույթին չի հավատում [Համաձայն է Մարքսի հետ. Ֆեոդալական Հարաբերությունների բարբարոսական աստիճան իրոք, Ֆեոդալական Հարաբերությունների ցածր աստիճան է, ապա ինչ, երբ հողը մասնավոր սեփականություն էր (իհարկե Ֆեոդալական), չէր մշակվում, և որտեղ իսանը կամ փաշան աշխատող չէր ուղարկում, Ֆեոդալ չէր կարող դառնալ, որտեղ նույնիսկ մշակված չէ Ֆեոդալական էթիկա ...]

«Մարդկանց վերաբնակեցրին և մշակույթի տեսանկյունից մի ամբողջ աստիճան հետ քաշեցին», – ասում է պարսիկների մասին (խոսքը վերաբերում է Ֆերեյդանցիներին):

Եվ մի՞թե նման բան տեղի չի ունեցել բոլոր նրանց հետ, ովքեր կիսել են Իրանի կամ օսմանյան մշակույթը՝ Սամցխե Սաաթաբազո, Աջարիա ... և մնացած վրացիները կամ Ազրբեջանը ...:

«Մահմեդականությունը հաղթել է քրիստոնեությանը, հեշտությունում, հայտնիությունում, պրակտիկությունում»:

Մտածում էր, թե ինչպես Քարթլիում իմացան ապստամբության վերաբերյալ կոչի մասին: Հեղափոխությունը պարտվել է, քարթլիները հավաքվել են: Եկել է Ստալինը և խորհուրդ տվել զերծ մնալ ելույթներից, որ դրա ժամանակը չի: Վերավորված գոռացել են՝ դու նույնպես թավաղների կողմն ես անցել: Չհավատացին: Դուրս եկան և խիստ պատժվեցին ...

Կատակում է՝ հայերը ձեզնից առաջ անցան: Այս պատերազմում նրանք գեներալ Բաղրամյան ունեն: Իսկ դուք վրացիներդ ... Կանգիդն ասում է, որ մենք ավելի մեծ գեներալ ունենք: Ծինամձղվրիշվիլին պատրաստ է ասել, որ այդ մեծ գեներալը հենց Ստալինն է: Ընկեր Ստալինը, միևնույն է, հարցնում է (կատակով)՝ Դուք ո՞վ ունեք: Ասում եմ. «Դա մենք հայերին կասենք ...»: Ժպտաց ... և խոսքը փոխեց՝ այն կենտրոնացնելով Լեսելիձեի շուրջ:

<...>... Հրեաների պահվածքն այս պատերազմում՝ Խորհրդային Միության ամենից քիչ հերոսներ (համամասնորեն) ունեն: Տնտեսական կազմակերպություններն ավելի լավ են վարում: Որտեղ մեկը հայտնվում է, ուրիշներին (այլ հրեաների) հավաքում է: Պատերազմով ուրիշները կղբաղվեն: Ոչ ոք չի հասցնի տաք և անվտանգ տեղ զբաղեցնել: Պետք է ասել, որ նրանց թվում կային նաև անվախ պատերազմողներ, հերոսներ, սակայն՝ հազվադեպ: Իսկ ընդհանրապես ...

Ո՞վ է ընկեր Ստալինը (սովետական ազգային հայացք). ընկեր Ստալինը բոլորովին նոր մարդ է: Սովետական մարդ: Նա ազգութային վրացի է (ոչ միայն ծագմամբ), համոզմունքով կոմունիստ, պրակտիկ գործունեություններ պետական գործիչ (խորհրդային պետություն և Խորհրդային Միության ստեղծող-կազմակերպիչ), բազմազգ սովետական պետության ղեկավար: Առաջին պարտականություններն այս պետության, այս հայրենիքի, այս օրգանական միության, այս մշակութային միասնության հայրենասերն է: Եզրակացություն. սա նշանակում է, որ նա Վրաստանի հայրենասեր է: Ընկեր Ստալինը վրաց կոմունիստ է, նույնքան և վրացի հայրենասեր: Այսօր լինել հայրենասեր առանց Խորհրդային Միության նկատմամբ հայրենասիրության՝ հետամնացություն է, կոմունիստի համար անհամատեղելի մի բան (նաև հայկական, ռուսական, ուկրաինական և այլ տեսակի հայրենասիրությունը): Խորհրդային Միության կառուցվածքի հանձարեղությունը (հետագայում ամբողջ աշխարհի կազմակերպման մեջ) այն է, որ դա չի հակասում միութենական հանրապետությունների շահերին, դա հենց այդ հանրապետությունների շահերի համաձայնեցվածության մարմնացումն է:

Երբ ընկեր Ստալինն ասում է՝ «Ես ասել եմ վրացիներին», նա այդպիսով չի հեռանում Վրաստանից, նրանում խոսում է Խորհրդային Միության մի պետական գործիչ, ով հավասար պայմաններով է խոսում յուրաքանչյուր միութենական հանրապետության ժողովրդի՝ ռուսների (նրանք այդպիսին են և այդպես), հրեաների հետ: Նա, որպես Խորհրդային Միության ղեկավար, բոլոր միութենական հանրապետությունների հավասար իրավունքների արտահայտողն է: Նույն կերպ ասած՝ ընկեր Մոլոտովը կասեր՝ «Ես ասել եմ ռուսներին», իսկ Միկոյանը՝ «Ես ասել եմ հայերին»:

<...>... Ընկեր Ստալինի պատմական մի արտահայտության համար:

«Перекрыть». ընկեր Ստալինի այս բանաձևն արդարացիորեն ընկալելու համար անհրաժեշտ է հիշենք իր սկզբունքը պատմական մտածողության մեջ՝ պատմությունը դասակարգելի միջև պայքար է (խոսքը դասակարգային հասարակության մասին է), այն ամենը, ինչ աջակ-

ցում է դասակարգային պայքարի ընդլայնմանը, խորացմանը, այսինքն՝ հանրային առաջընթացին, ընդունելի է, ցանկալի է: Այսպես է, օրինակ, Ֆեոդալական հարաբերությունների հայտնվելը ստրկատիրությունից հետո, այսպիսին է եղել Ֆեոդալական հարաբերությունների կառավարման աստիճանի ի հայտ գալը, այսպիսին է եղել արևելյան տիպի համակարգի հայտնվելը Ֆեոդալական խառնաշփոթի փոխարեն, այսպիսին է եղել բուրժուական հարաբերությունների հաղթանակը Ֆեոդալական հարաբերությունների հանդեպ: Եվ այսպես շարունակ ...

<...>... Եթե նման ինչ-որ բան ծառայում է այնպիսի նպատակի, որը ենթադրում է հասարակության առաջընթաց կամ «կխորացնի դասակարգերի միջև պայքարը (դա ընդունելի է և հակառակը): Վերջինիս դեպքում դա հանցագործություն է, երկրի դավաճանություն: («Երկիրը», մեր տեսանկյունից, դասակարգային հարաբերությունների պարագայում այն դասն է ներկայացնում, որը, հիմնականում, առաջընթացի կրող է, որի հաղթանակը ենթադրում է դասակարգային պայքարի ընդլայնում-խորացում): Սակայն օտար ուժի ընտանեացման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել այդ ուժի բնությունը: Եթե այն արդարացնում է ընդունողի նպատակները, ապա արդարացված է: Սակայն եթե այդ օտար ուժը ոչնչացնում է դասակարգային պայքարի հիմքերը, ապա ընդունողը սխալ է (նպատակներն արդեն էական չեն): Երկրի հանդեպ նման սխալ թույլ տալը հավասար է հանցագործության: Իսկ քաղաքական գործչի սխալը դժվար է տարբերել հանցագործությունից»:

V-VI դարերում ազնուները հրավիրեցին պարսիկներին և վերականգնեցին թագավորի (հին) իշխանությունը, XI դարում ազնուները հրավիրեցին բյուզանդացիներին, Գիորգի 11-րդը հրավիրեց թուրքերին, Դավիթ Աղմաշենեբեկին՝ ղփչաղներին: Սա «հրավիրների ամենապարզ օրինակներն են, որոնք սկզբունքային վեճի առիթ են դարձել Դավիթի կողմնակիցների և Դավիթին դեմ հանդես եկողների միջև ... Իսկ հրավիրող Դավիթը «Շինարար» անուն է ստացել: Գիորգի Սաակաձեն հրավիրել է պարսիկներին (և դա նույնպես սկզբունքային վեճի առարկա է դարձել, սակայն ի տարբերություն՝ Դավիթի մեղադրողներն այն առավելությունն ունեին, որ «հրավիրված» Շահ-Աբասը Վրաստանը մի կողմ չպրտեց, այն դեպքում, երբ Դավիթը հրավիրված ղփչաղների հետ Վրաստանը «կառուցեց»: Նույն կերպ էին տրամադրում նաև Գիորգի Երրորդի դեմ ապստամբած թուրքերը, իսկ ուշֆեոդալական Վրաստանում կառավարության թե ազնուները կողմից նման ձևով օսմանցիներին հրավիրելը սովորական երևույթ էր (Աթաբագ, Գուրիելի, Ռաճայի էրիսթավի, Աբաշիձե, Գիվի Ամիլխսորի, Աբդուլա Բեգ, Քսանիի էրիսթավի, Ալեքսանդրե Բաքարի Բատոնիշվիլին, կախերի թագավոր Ալեքսանդրե Երկրորդը, Թեյմուրազը, Վախթանգ Վեցերորդը ռուսներին հրավիրում էին ոչ միայն օսման-պարսիկների դեմ: Ավելին Հերակլն ու Սոլոմոն Առաջինը: Երկուսի նպատակն էլ եղել է «Перекрыть внутреннюю слабость ...»: Հերակլի հեռատեսությունն այստեղ նույնպես երևում է. հրավիրված ուժին գնահատում է սեփական օգտա-

գործման տեսանկյունից և փորձում է այս ուժը դնել ցանկալի սահմանների շրջանակներում, իսկ հնարավոր թե անհրաժեշտ սպասվող վնասից սկզբից ևեթ զերծ մնալ: Սա էր տրակտատը: Այնպես որ, Հերակլն օտար ուժեր հրավիրելու հարցը սկզբունքորեն դրեց և սկզբունքորեն լուծեց: Նա փաստացի հաշվի առավ հրավերի լավ և վտանգավոր կողմերը ... իր կտակի պաշտպաններն այս գործում եղել են Լիոնիձեն, Սոլոմոն Երկրորդը, Բարաթաշվիլին, Ճավճավաձեն, իսկ դեմքը՝ կոմունիստական կուսակցությունն ու առաջնորդ ընկեր Ստալինը: Գիորգի 13-րդը նույնպես հրավիրել է ... Հուլյսը կորցրած հիվանդի նման):

Տրակտատը (Գեորգիեյան – Հ. Ն.) վրացական տեսանկյունից, հրավիրված ուժի օգտագործումն է հօգուտ Վրաստանի: Այդպիսով, դրա խախտումն այս ուժի ազատագրումն է եղել ... գրավման վերածված հրավերը՝ չարություն ...

Երբ ընկեր Ստալինը խոսում է Ռուսաստանի նախաբուրժուական կենտրոնացման մասին և դրա պատճառներից մեկը (որն աջակցել է միացման-կենտրոնացման գործընթացի արագացմանը) արտաքին գործոնի փաստն է համարում (մոնղոլներից պաշտպանվելու անհրաժեշտություն է տեսնում: Սա այն խորը իրական-պատմական իրողությունն է հետևանքով ստացած դրույթն է, որը ընկեր Ստալինն ասել է բազմիցս «Перекрыть»-ի տեսքով): Նամակ Բոլշակովին, մեր հետ զրույցի ժամանակ (և դա այն է, որ արտաքին փաստերը պետք է առանձնացնել ներքին փաստերից, արտաքին գործոններն անջատել ներքին զարգացումից, պատմության մեջ անհնար և արդարացված է, որ հանրության պատմությունը ոչ միայն ներքին հարաբերությունների արդյունք է, և ոչ էլ միայն արտաքին հարաբերությունների արդյունք: Այդ իրադարձությունները փոխկապակցված են, չնայած վերջնական սահմանողը հիմնականում ներքին իրադարձություններն են): Ընկեր Ստալինի այդ դրույթը Վրաստանի պատմության ամենադժվար դրվագներից մեկն արդարացված հասկանալու բանալի է տալիս: Նրա մասին, թե ինչպես պետք է հասկանանք, այսինքն՝ ինչ է նշանակում Վրաստանի քաղաքական բաժանման փաստը III–V դարերում: Սա նույն իրադարձությունն է եղել, ինչպիսին Կիևյան Ռուսաստանի տրոհումը: Այսինքն՝ այս փաստը ցուցանի՞չ է, որ Վրաստանը զարգացման հետևանքով տրոհվեց: Այդ դեպքում կստացվեր, որ Կիևյան Ռուսաստանն ավելի առաջատար երկիր է եղել, քան XV դարի Վրաստանը, և որ XIV–XV դարերը մեզ մոտ վաղ Ֆեոդալիզմի ժամանակաշրջան է եղել ...

Հատկանշական է. Դավթի պատմիչն առաքելական գործ է համարում իր պետության կողմից օտար երկրների գրավումը: Պատրաստ է եղել բոլոր երկրները Քրիստոսին նվիրաբերել և այդ պատճառով երկրորդ Պավլեն է ստեղծել ... Իսկ Թամարի պատմիչը հափշտակորեն վերագրում է թագավորին (այստեղ նկատի ունի Դավթին) և գովաբանում է այն իրավական թագավորին, որը չի գրավում, այլ վերածնում է պարտված ժողովրդին: Երկու իրար հակասող գաղափարախոսություն, երկու գարգացումների մասին ...

Դեմնայի ապստամբության ժամանակ Օրբելիները պարսիկներին հրավիրել են Գիորգիի դեմ:

Օրբելիների պահվածքը մոնղոլների գալու ժամանակ (անցում, բերում, մեծարում):

<...>... Перекрыть ...

Մեր պատմության մեջ քիչ չեն տեղեկություններն այն մասին, որ թագավորը կամ Ֆեոդալները սեփական պայքարի համար օտար ուժերի են դիմել (Լեոնտիից հետո) ... Սկզբունքային վեճի առարկա, ինչպես երևում է, բազմիցս է եղել: Մեզ մոտ հայտնի է օտար ուժի կիրառման մի քանի ձև ... Հերակլի տրակտատի սկզբունքը պակաս չէր հաշվի առել Դավիթ Շինարարը, ինչպես դա փաստարկված տեղեկացնում է իր պատմիչը ... Դավիթն ուսումնասիրել է ղփչաղներին, հաշվի է առել հնարավորությունները, օգուտը, որը պետք է ստանար երկիրը իրենց հրավերով և чтобы перекрыть внутреннюю слабость в борьбе с внешними и внутренними врагами. Որոշել է նրանց բերել, սակայն այնպես է կարգավորել նրանց գործը, որ նրանք անվտանգ են եղել Վրաստանի զարգացման համար և միայն ծառայել են նրա զարգացմանը: Այս սկզբունքի վրա է կանգնած պատմաբանը. երկրի (Վրաստանի) անկախության պաշտպանությունը, պետականության հզորացումը (միացում, զարգացում): Այս սկզբունքով է շարժվել Հերակլը, Սաակաձեն (համենայն դեպս դա նկատի ունեն թբիլեյին, Արչիլը) ... Սակայն շատերն են եղել, ովքեր այս սկզբունքին չեն հետևել՝ օսմանացիներին հրավիրող կառավարությունները (Դադիանիներ, Գուրիեյներ, Աթաբեգ, /թավաղները/ Ամիլխոր, Քսանի էրիսթավի, Աբաշիձե, Ռաճայի էրիսթավի) ...

Ֆեոդալական պետություն.

Թշնամու հետ խոսում է ղեկավարը (երբ կենտրոնը ուժ չունի):

Թշնամու կողմն է անցնում ղեկավարը (երբ կենտրոնը ղեռես պայքարում է):

Թշնամուն կհետևի այս կամ այն ղեկավարը (և կպայքարի իր նմանների դեմ):

Հարություն Խուզանյան – ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հին դարերի բաժնի կրտսեր գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Հայկական լեոնաշխարհի, Կովկասի ու Անդրկովկասի երկրների պատմություն և հնագիտություն: Հեղինակ է 7 հոդվածի:


harutyunkhudanyan@gmail.com

ԱՆՈՒՇԱՎԱՆ ՋԱԲԱՐՅԱՆ. Ռուս կոմպոզիտոր Թոմաս Հարտմանը
և Կոմիտասը, *Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2019, 108 էջ**:

АНУШАВАН ЗАКАРЯН. Русский композитор Фома Гартман и Ко-
митас. Ереван, изд-во «Гитутюн» НАН РА, 2019, 108 с.

Բանալի բառեր՝ Թ. Հարտման, Ս. Գորոդեցկի, Հովհ. Թումանյան, Կոմիտաս, Թիֆլիս, «Կոմիտասի անվան ընկերություն», համերգ, դասախոսություն, Ե. Թադևոսյան, Ա. Չոպանյան, Գ. Լևոնյան, Մ. Բաբայան:

Կոմիտասի 150-ամյա հոբելյանը նշանավորվեց նրա մասին պատմող նոր գրքերով, հոգվածներով ու հանդիսություններով: Այդ



համընդհանուր երախտագիտական դրսևորումների մեջ ուշագրավ երևույթ էր բանասիրական գիտությունների դոկտոր, «Պատմաբանասիրական հանդես»-ի գլխավոր խմբագիր Անուշավան Ջաբարյանի «Ռուս կոմպոզիտոր Թոմաս Հարտմանը և Կոմիտասը» գիրքը, որը հայերեն նույն նյութը կրկնում է նաև ռուսերենով: Սա խիստ շահեկան է. այն յուրօրինակ նվեր է ոչ միայն հայ ընթերցողին, այլև՝ ռուս: Բացի այդ, որոշակի արժեք է երիտասարդների համար. այն առավել հնարավորություն է ընձեռում մեր նոր սերնդի մեջ թուլացող ռուսաց լեզվի իմացությունը խորացնելու և միաժամանակ մշակութային նոր գիտելիքներ ստանալու խնդրում:

Գիրքը բաղկացած է «Ընթերցողին», «Թոմաս Հարտմանը Կոմիտասի մասին», «Թիֆլիսի «Կոմիտասի անվան ընկերությունը» բաժիններից, «Ամփոփում»-ից ու «Հավելված»-ից:

Թոմաս Հարտմանը (1885–1956)՝ ռուս երաժշտական արվեստի անվանի ներկայացուցիչը, որը կոմպոզիտոր էր, երաժշտության տեսաբան, հիացած էր Կոմիտասի արվեստով: Հարտմանի «Ալվան ծաղիկ» բալետը բեմադրել է Պետերբուրգի Մարիինյան թատրոնը, որը բալետի գծով ցարդ առաջատար է ողջ աշխարհում:

Հարտմանը ստեղծագործել է մի ժամանակահատվածում, երբ արվեստի ու գրականության մեջ ավանգարդիստական երևույթները

* Ներկայացվել է 27. XI. 2019 թ., ընդունվել է տպագրության 16. XII. 2019 թ.:

դառնում են առաջատար: Նրա համար առաջնակարգ կոմպոզիտորներ էին Կլոդ Դեբյուսին ու Մորիս Ռավելը, իսկ նկարչության մեջ՝ Ֆրանսիացի իմպրեսիոնիստները: 1917-ի ռուսական հեղափոխությունները, ի թիվս այլ ռուս մտավորականների, Հարտմանին (նա ծագումով գերմանացի էր) բերում է Թիֆլիս, ուր հայկական մտավոր կյանքը Հովհաննես Թումանյանի գլխավորությամբ վերելք էր ապրում: 1919–1921 թթ. ռուս երաժշտագետը դասավանդում է տեղի կոնսերվատորիայում, մտերիմ հարաբերություններ է հաստատում ինչպես ռուս բանաստեղծ Սերգեյ Գորոդեցկու, կոմպոզիտոր Նիկոլայ Չերեպանինի, այնպես էլ՝ հայ գրական-մշակութային, հասարակական գործիչների՝ մասնավորապես Հովհ. Թումանյանի, Եղիշե Թադևոսյանի, Սպիրիդոն Մելիքյանի, պրոֆ. Զավրիյանի և ուրիշների հետ:

Թիֆլիսում Հարտմանը մոտիկից ծանոթանում է Կոմիտասի ստեղծագործություններին, որոնք նրա մտավոր գանձարանում գյուտի արժեք են ստանում և ակնհայտ ոգևորությամբ «Закавказское Слово» թերթի՝ 1919 թվականի փետրվարի 28-ի ու մարտի 1-ի համարներում «ժողովրդական երգը և այն հավաքողները» խորագրի ներքո հրատարակում է «Կոմիտաս Վարդապետ» վերնագրով մեծածավալ հոդվածը՝ բաղկացած երկու մասից: Այն իր դիտարկումներով ու գնահատականներով մշտապես հետաքրքիր է կոմիտասագետների համար:

Ռուս կոմպոզիտորը հոգվածի առաջին մասում հանգամանորեն ներկայացնում է Կոմիտասի կյանքն ու գործունեությունը, երկրորդ մասում վերլուծում է նրա ստեղծագործությունները, քննում երկերը՝ ցուցադրելով «դրանց մնայուն գեղագիտական արժեքը, նշում երգահանի բարձր ձիրքը և նրա անգնահատելի ներդրումը հայկական երաժշտության պատմության մեջ» (էջ 32):

Ինչպես նկատում է Ա. Զաքարյանը, «Կոմիտաս Վարդապետ» «հոգվածից ակնհայտ է դառնում Թ. Հարտմանը քաջատեղյակ է նաև հայ ժողովրդի պատմության ծալքերին, մասնավորապես ժողովրդի կյանքում հայոց եկեղեցու ունեցած կարևոր դերին» (էջ 33):

Հարտմանի՝ Կոմիտասին նվիրված այս հոդվածը ռուսերենից հայերեն է թարգմանել մանկավարժ, երաժշտագետ, Կոմիտասի մտերմուհի Մարգարիտ Բաբայանը՝ Արշակ Չոպանյանի «Անահիտ» հանդեսի էջերում տպագրելու համար: Այդ թարգմանությունը ղեկավարած է գրքի «Հավելված»-ում: Այն խիստ կարևոր է, որովհետև թարգմանության տողատակերում Մ. Բաբայանը և Ա. Չոպանյանը Հարտմանի հաղորդած որոշ փաստերի առթիվ կատարում են ճշգրտումներ, դիտարկումներ: Օրինակ, ըստ Հարտմանի, Թումանյանը Կոմիտասի խնդրանքով «Անուշ» պոեմը վերածել է օպերայի լիբրետոյի, մինչդեռ Թումանյանը չի կատարել նրա խնդրանքը, և Կոմիտասը ստեղծել է միայն օպերայի որոշ մեներգերի երաժշտությունը:

Հոգվածի շարունակությունը դառնում է Հարտմանի գործնական քայլը՝ «Կոմիտասի անվան ընկերություն» ստեղծումը 1919 թ. մայիսի սկզբին, որը նպատակ ուներ պահպանել ու տարածել նրա տպագրված ու անտիպ գործերը, բացի այդ, զբաղվել հանճարեղ հայի առողջական

խնդիրներին նյութական ու բարոյական աջակցություն ցուցաբերելու լրջագույն գործով: Այդ նպատակով էլ ընկերությունը մայիսի 21-ին «Արտիստական ընկերություն» թատրոնի լեփ-լեցուն դահլիճում կազմակերպում է Կոմիտասին նվիրված երեկո-համերգ: Ներածական խոսքերով հանդես են գալիս գրականագետ Մ. Մատենճյանը և «Ընկերության հիմնադիրների գլուխ կանգնած պրոֆ. Թ. Ա. Հարտմանը, ով մեկ անգամ չէ իր հոգվածներում նշել Կոմիտասի մեծ ձիրքը ու նրա այն վաստակը, որ պետք է գնահատի մեր հայ մտավորականությունը» (էջ 35–36): Վերջինս խոսում է Կոմիտասի երաժշտական տաղանդի, նրա երկերի նշանակության մասին:

Հարտմանի խոսքից իմանում ենք, որ 1914-ին Փարիզի Համաշխարհային երաժշտական համագումարում Կոմիտասի երգերը ունկնդրելուց հետո հիացմունքի խոսքեր են հայտնել Կլոդ Դեբյուսին, անմահ «ժան Կրիստոֆ» վեպի հեղինակ Ռոմեն Ռոլանը և Դեբյուսիի կենսագիր, Ֆրանսիացի նշանավոր երաժշտության քննադատ Լուի Լալուան (էջ 103): Տողատակում Մ. Բաբայանն ավելացնում է, թե Փարիզի հայկական եկեղեցում Կոմիտասը հանդես է եկել դասախոսություններ, նաև երգել ու նվագել է սրինգի վրա: Այդ ելույթն այնքան ներգործող է եղել, որ համագումարին ներկա եղած օտար ու ֆրանսիացի նշանավոր երաժիշտները հետագայում «գմայլանքով յիշում էին վարդապետի աննման գեղարուեստը» (էջ 103): Համեստ Կոմիտասին հրճվանք է պատճառել ոչ թե սեփական անձի հաջողությունը, այլ իր տոհմիկ երաժշտության հանրահայտ դառնալը: Միջազգային համագումարի ժամանակ ունեցած հաջողությունը նրա մեջ ծնում է թանկ երազանք՝ Պոլսում բացել հայկական երաժշտանոց՝ կոնսերվատորիա:

XX դարասկզբին հատուկ ուշադրություն կար ժողովրդական երգը դեպի դասական երաժշտություն բերելու կարևոր խնդրում: Ռուս հանրահայտ երաժշտական արվեստի տեսաբան Տանեևը համոզված էր, որ ռուսական ժողովրդական երգերը պետք է ձայն առ ձայն ոճով մշակել: Հարտմանի կարծիքով «Հանճարեղ Կոմիտասը նախազգայութեան ոյժով գործադրեց այդ ոճը եւ այնպիսի կատարելութեամբ, որ հազիւ իր արեւմտեան արուեստակիցներից մինը կարողանար իրագործել... Ո՞վ նրանից լաւ կարող էր պաշտպանել ժողովրդական երգի հոգին» (էջ 101):

Ա. Զաքարյանը գրում է. «Հավելված»-ում գետեղել ենք նաև Կոմիտասի մասին այս ելույթը՝ «Մ. Բաբայանի առաջաբանով՝ «Թոմաս Հարտման և Կոմիտաս Վարդապետ» վերնագրով ու նրա թարգմանությունում՝ «Դասախոսություն Կոմիտասի մասին կարգացուած Թիֆլիզում 1919 թուին» նյութը, որը ևս տպագրվել է «Անահիտ» հանդեսում (1935, թիվ 1–2, էջ 74–80): Այստեղ էլ կան Մ. Բաբայանի ու Ա. Զոպանյանի կողմից կատարված մի շարք ծանոթագրություններ՝ ուշադրավ դիտարկումներով ու մեկնաբանություններով: Այս նյութը հետագայում վերահրատարակվել է «Ժամանակակիցները Կոմիտասի մասին» ժողովածուում (Երևան, 1960), սակայն փոփոխված վերնագրով՝ «Կոմիտաս», առանց Մ. Բաբայանի ներածական խոսքի, չկան Ա.

Չոպանյանի դիտարկումները, կան բնագրային շեղումներ, լեզվաոճական, կետագրական, բառային բացթողումներ (տե՛ս ժողովածուի էջ 54-ից 61-ը), իսկ «Ծանոթագրություններ»-ի մեջ էլ նշված է, որ դասախոսութայն տեքստը «Անահիտ»-ում տպագրվել է 1934 թ. (տե՛ս էջ 331):

Ի դեպ, «Անահիտ»-ում տպագրված Թ. Հարտմանի նյութերի սկզբնաղբյուրները նշված չեն: Առաջինի դեպքում գրված է՝ տպագրվել է 1919 թ. Թիֆլիսում լույս տեսնող ռուսերեն թերթերից մեկում, իսկ երկրորդի մասին ասվում է, որ ռուս կոմպոզիտորը դասախոսությամբ հանդես է եկել այդ նույն թվականին Թիֆլիսում» (էջ 42):

Անշուշտ, ցանկալի էր, որ Թ. Հարտմանի «Դասախոսութիւն Կոմիտասի մասին կարդացուած Թիֆլիզում 1919 թուին» նյութը Ա. Զաքարյանի կողմից թարգմանվեր ռուսերեն ու գետեղվեր «Հավելված»-ում:

Ինչևէ. Ա. Զաքարյանը մեզանում XX դարասկզբի հայ իրականութայն, Հայկական հարցի և Հայոց ցեղասպանութայն, XIX դարավերջի ու XX դարասկզբի հայ-ռուսական մշակութային և գրական կապերի նվիրյալ մասնագետ է, ու նրա այս ձեռնարկն ունի ակնհայտ գիտաճանաչողական արժեք:

Գիրքը տպագրվել է ՀՀ ԳԱԱ խմբագրական-հրատարակչական խորհրդի և Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ ԳԱԱ հայագիտական հետազոտությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի աջակցությամբ: Խմբագիրն արվեստագիտութայն դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Աննա Ասատրյանն է:

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ


Բ. գ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականութայն և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ հին և միջնադարյան հայ գրականութուն, բանահյուսութուն, ժամանակակից հայ գրականութուն, հայագիտութուն, գրական կապեր: Հեղինակ է 30 գրքի և շուրջ 500 գիտական հոդվածի:

aelita.dolukhanyan@gmail.com

ՀՈՎՅԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ. Նորահայտ փաստաթղթեր, կազմող՝
Համո Սուքիասյան, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ,
2019, 120 էջ*:

Բանալի բառեր՝ Թումանյան, նորահայտ փաստաթղթեր, Հայ հայրենակցական միությունների միություն, Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդ, վավերագրեր:

Հովհ. Թումանյանի 150-ամյակին նվիրված ոչ մեծաքանակ հրատարակությունների շարքում իր առանձնահատուկ տեղն ունի պ. գ. թ., ղոցենտ Համո Սուքիասյանի կազմած և ծանոթագրած «Հովհաննես Թումանյան. Նորահայտ փաստաթղթեր» (խմբագիր՝ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյան) խորագրով փաստաթղթերի ժողովածուն: Նկատենք, որ Թումանյանի մասին հրեյանական գիտական հրատարակությունները հիմնականում իրականացվեցին ՀՀ ԳԱԱ գրականության և պատմության ինստիտուտների կողմից՝ Հայագիտական ուսումնասիրությունները Ֆինանսավորող համահայկական հիմնադրամի նյութական աջակցությամբ:



Տասնամյակներ շարունակ՝ զրեթե մի ամբողջ դար, հատկապես խորհրդային տարիներին թումանյանագիտության և հայագիտության այլ ոլորտների ուսումնասիրության կենտրոնում եղել են Հովհ. Թումանյանի գեղարվեստական երկերը: Անցյալ դարի 60-ական թվականներից անվանի թումանյանագետներ էդ. Ջրբաշյանը, Ա. Ինճիկյանը, Հր. Թամրազյանը, Լ. Հախվերդյանը, Մ. Ջանփոլադյանը և այլք ստեղծեցին արժեքավոր ու մնայուն աշխատություններ: Այնուամենայնիվ, քաղաքական հասկանալի պատճառներով Թումանյանի կյանքի ու գործունեության բազմաթիվ դրվագներ և պոետի ազգային գործունեության առանձին ոլորտներ մատնվել են անուշադրության, չրջանցվել կամ պարզապես հպանցիկ շեշտադրումներով միտումնավոր ու սխալ մեկնաբանվել: Երևույթ, որը պայմանավորված է երկու հանգամանքով. առաջին՝ բանաստեղծի գործունեությունը հիմնականում ազգային ուղղվածություն ունեւ, հետևաբար, քաղաքական կաշկանդումների պայմաններում նրա լուսաբանումը թերի կլիներ, և երկրորդ՝ Թումանյանը եղել է հիմնականում գրականագետների և ոչ պատմաբանների կամ հումանիտար ոլորտի

* Ներկայացվել է 25. XI. 2019 թ., ընդունվել է տպագրության 17. XII. 2019 թ.:

այլ գիտնականների ուշադրության կենտրոնում, մինչդեռ բանաստեղծը շատ ավելի արտասովոր երևույթ է, քան կոնկրետ անհատ, քանի որ իր կարճ կյանքի ընթացքում կարողացել է գործել ազգային ու հանրային կյանքի հնարավոր բոլոր բնագավառներում և ամենուր եղել առաջնակարգ ու առաջնորդ: Հետևաբար, Ամենայն Հայոց բանաստեղծի՝ հատկապես ազգային գործունեությունը գիտական լուրջ ուսումնասիրության կարիք ունի: Հենց այս համատեքստում պետք է գնահատել Հ. Սուքիասյանի խնդրո առարկա ժողովածուն:

Առաջաբանում հեղինակը ներկայացնում է թուվմանյանի գործունեությունը լուսաբանող, նոր բացահայտումների հիմք հանդիսացող փաստաթղթերի բնույթը, ժամանակագրությունը, ձեռքբերման աղբյուրները և գիտական կառուցվածքային այն մոտեցումները, որոնցով ներկայացված են վավերագրերը:

Ժողովածուում զգալի թիվ են կազմում Հայ հայրենակցական միությունների միություն (ՀՀՄՄ) պատմությունը վերաբերող նյութերը, որոնք լրացնում են նաև թուվմանյանի կենսագրությունը, քանի որ այդ միությունը գործել է բանաստեղծի նախագահությունում: Ուշագրավ են նաև Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի (ՀԱԽ) նիստերի արձանագրությունները: Ժողովածուում գետեղված բանաստեղծի՝ 1918 թ. մարտի 30-ի ելույթները վրիպել են նույնիսկ նրա տարեգրությունը կազմողների հայացքից, մինչդեռ հուլիանիստ բանաստեղծի խոսքերը Հայ ժողովրդին «ինչ գնով էլ լինի» բնաջնջումից փրկելու մասին են, դարավոր թշնամու հետ կռիվը շարունակելու, միաժամանակ խաղաղ թուրք ազգաբնակչության նկատմամբ «էքսցեսներ» թույլ չտալու համար «ամեն միջոց գործ դնելու» մասին (էջ 10): Աշխատանքում ներառված են նաև Ալեքսանդրապոլում 1918 թ. ապրիլի 8-ի Հայ ղեկավար գործիչների արտակարգ խորհրդակցության, ՀԱԽ-ի մայիսի 19-ի, հունիսի 24-ի, հուլիսի 6-ի նիստերի և այլ արձանագրությունները: Որոշ փաստաթղթեր էլ հավաստում են ՀՀՄՄ գոյություն ու գործունեության անհրաժեշտություն ու կարևորությունը ժամանակի համար (էջ 38–40):

Պատմական վավերագրերի շարքում ներառված են նաև թուվմանյանի ստորագրությամբ պաշտոնական հեռագրեր ու նամակներ, որոնք առայսօր տեղ չեն գտել բանաստեղծի գիտական հրատարակություններից և ոչ մեկում: Ինչպես բանաստեղծի կենսագրությունի, այնպես էլ Հայ ժողովրդի պատմության տվյալ շրջափուլի համար արժեքավոր են մասնավորապես Կ. Պոլսում գտնվող Հայ պատվիրակության նախագահ Ավ. Ահարոնյանին հասցեագրված Բաթում գործուղված պատվիրակության՝ 1918 թ. հուլիսի 4-ի ծավալուն նամակը Էսսադ փաշայի հետ բանակցությունների մասին, ՀՀՄՄ գրությունները Վրաստանի ՀԱԽ-ին (1918 թ. սեպտեմբերի 13, հոկտեմբերի 2, 11), ՀՀՄՄ կենտրոնական խորհրդի հրավերը Հաշտության համազումարին հուշագիր ներկայացնելու համար գումարվող հանձնաժողովի նիստին մասնակցելու մասին (1918 թ. նոյեմբերի 1), բանաստեղծի դիմում-գրությունը ՀԱԽ գաղթականական բաժնին՝ Ղազախի հայույթ-

յանն օգնելու խնդրանքով (1919 թ. մարտի 24), Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի անունից Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությանն ուղղված գրությունը (1919 թ. հունիսի 28), ՀՀ հանրային կրթության և արվեստի նախարարությանն ուղղված դիմումը հայ գրողներին նպաստ հատկացնելու մասին և այլն: Տասնյակ փաստաթղթեր հավաստում են ՀՀՄՄ և ՀԱԽ համագործակցությանն ուղղված բանաստեղծի ջանքերի մասին:

Ժողովածուում մի առանձին խումբ են կազմում բանաստեղծի կեսդարյա և 60-ամյա հոբելյանների հետ կապված փաստաթղթերը: Իհարկե, այս վավերագրերի մի մասի բովանդակությունն ինչ-որ չափով հայտնի էր պարբերական մամուլից, սակայն վավերագրական ճշգրտությունը ներկայանում են առաջին անգամ: Դրանք վկայում են, որ բանաստեղծն իր ժամանակակիցների կողմից գնահատվել ու փառաբանվել է շատ ավելի, քան նրա սերնդակից հանճարներից ու գործիչներից որևէ մեկը: Այդ վավերագրերում թումանյանը հռչակվել է հայ ժողովրդին դեպի արև ու ազատություն առաջնորդող «մարգարե», ժամանակի թանձր խավարը ճեղքող «ազգային հոգու կրակ», «սուրբ զգացմունքներով և ճշմարտության... իսկական առաջնորդ», ով միշտ իր ազգի կողքին է եղել «ձախորդության թէ փորձանքի ժամին», «ազգային հոգու ձյունապատ բարձունքներից» ազգի գոյության հեռունները նայող, ազգի «վիշտն ու ցաւը, իր յոյան ու լոյսը, իր ժպիտն ու թախիծը» կախարդիչ հնչյուններով երգող բանաստեղծ: Եվ այս խոսքերի տակ ստորագրել են 21 հայրենակցություններ, այդ թվում՝ Ղարաբաղի, Ալեքսանդրապոլի, Ախալքալաքի, Կարսի, Նախիջևանի, Լոռու ներկայացուցիչները:

Ինչպես թումանյանագիտությունը, այնպես էլ պատմագիտությունը հայտնի են 1921 թ. փետրվարյան ապստամբություն օրերին թումանյանի գործունեությունը: Նրա կյանքի դրամատիկ ու ողբերգական օրերը կապվում են ինչպես ցեղասպանության տարիների հետ, երբ դարավոր թշնամին էր թափում հայի արյունը, այնպես էլ՝ 1921 թ. ժողովրդական ապստամբության ու քաղաքացիական զինված բախումների հետ, երբ արթուն էր ներքին թշնամին, և հայն էր ոթում հայի արյունը: Թումանյանը, վտանգելով իր կյանքը, անցնում է կրակահերթերի միջով և հասնում Երևան հաշտարար առաքելությանը, ինչը, ցավոք, բանաստեղծին չի հաջողվում: Երկու կողմերն էլ դժգոհ էին, նրանց թվում էր, թե թումանյանն այս կամ այն կուսակցության շահն էր պաշտպանում, մինչդեռ բանաստեղծն ազգային շահից բացի այլ շահ չուներ: Նրա կյանքի՝ հատկապես այս շրջափուլի մասին ժամանակակիցների հուշերում հաճախ են հանդիպում իրարամերժ կարծիքներ ու գնահատականներ: Այս իմաստով առանձնահատուկ կարևորություն են ներկայացնում պահպանված փաստաթղթերը: Դրանց հրապարակման սկիզբը դրեց ակադեմիկոս էդ. Ջրբաշյանը՝ «Պատմա-բանասիրական հանդես»-ի 1988 թ. № 2-ում հրապարակելով թումանյանի «Իմ Երևան գալու առիթով» հոդվածը: Հ. Սուքիասյանը

հրապարակել է Թումանյանին ուղղված բոլշևիկների ռազիոհեռագիրը, որից պարզվում է Թումանյանի՝ 1921 թ. մարտի 21-ի Գ. Օրջոնիկիձեին ուղղված հեռագիրը բոլշևիկները բռնագրավել են: Հրավիրելով բանաստեղծին տեղափոխվել բոլշևիկյան ճամբար՝ ռազիոհեռագրի հեղինակներն արտահայտում են իրենց դժգոհությունը Թումանյանից. «Ձեր միակողմանի տեղեկատվությամբ, ինքներդ էլ չգիտակցելով, վատ ծառայություն եք մատուցում հայ աշխատավոր ժողովրդին» (էջ 62):

«Հովհաննես Թումանյան. Նորահայտ փաստաթղթեր» ժողովածուում գետեղված են նաև բանաստեղծի կյանքի վերջին սխրանքի՝ Հայաստանի օգնության կոմիտեի գործունեության, նրա՝ Կ. Պոլիս ուղևորության հետ կապված վավերագրեր, որոնցում պահպանվել են Թումանյանի ելույթների սղագրությունները:

Հատկանշական է, որ գրքում ներառված փաստաթղթերը (1923 թ. մարտի 28, մայիսի 29, 1925 թ. ապրիլի 19) վերաբերում են նաև Թումանյանի մահից հետո նրա ընտանիքի, զավակների, մասնավորապես, Համլիկի կյանքի դժվարություններին: Խորհրդային իշխանություններին ուղղված նրանց դիմումների մի մասը մերժվում էին քաղաքական նկատառումներով:

Քանի որ ժողովածուում փաստաթղթերը գետեղված են ժամանակագրական կարգով, այն եզրափակում են բանաստեղծի 60-ամյակին առնչվող վավերագրերը, որոնք միաժամանակ Հայաստանի խորհրդային շրջանի տվյալ փուլի հանրային-քաղաքական կյանքի, գրական բարքերի, ժամանակի գաղափարական կաշկանդումների վառ արտահայտություններ են: Իհարկե, գնահատվում էր Թումանյանի մեծութունը, և լայնածավալ համընդհանուր միջոցառումներ էին ծրագրվում կրթական բոլոր հաստատություններում, գրադարաններում, թանգարաններում, կազմակերպվում էին մեծարանքի երեկոներ, հանդեսներ, Թումանյանական շաբաթներ ամենուր, այդ թվում՝ բանակում, հրատարակվում էր բանաստեղծի գործերի ու նրա կյանքի և գործունեության մասին գրականություն, ու այս ամենի համար հանձնարարվում էր ՀՍԽՀ լուսժողովոմ Ա. Մուսվյանին գտնել համապատասխան գրամական միջոցներ: Այնուամենայնիվ, անկախ հոբելյանը, ըստ ամենայնի, պատշաճ նշելու իշխանության ջանքերից, գրվում էին հոգվածներ, նաև իշխանական շրջաններից հնչում էին կարծիքներ, մեղադրանքներ Թումանյանի ստեղծագործության ազգայնականության մասին: Լինում էին դեպքեր, երբ արգելվում էին որոշ հեղինակների՝ [Վ. Մահիկյան (Երեմյան), Գ. Վանանդեցի, Պ. Մակինցյան] բանաստեղծի մասին այլակարծություն չհանդուրժող բոլշևիզմի դիրքերից գրված հոգվածները: Լուսժողովոմատի գրության մեջ Թումանյանը բնութագրվում է «նացիոնալիստ», որի «իզեոլոգիան ռեակցիոն է և ուտոպիստական»: Ն. Դաբաղյանի թեզիսներում Թումանյանը ներկայացվում է իբրև դաշնակցական, որը, թեև հրաժարվել է անդամությունից, սակայն չի հրաժարվել «ազգայնական գործունեությունից» և իր «Հայոց լեռներում», «Հայոց վիշտը», «Մեր նախորդներին» ու այլ գործերում

«պասիվ նացիոնալիզմի», «կրոնական բարոյախոսական, միստիկական, իդեալիստական աշխարհագրագողություն» արտահայտիչ է, հաճախ հայացքն ուղղում է նահապետական անցյալն ու իդեալականացնում այն, «Ֆետիշացնում է» բնությունը, չի պատկերացնում ազգամիջյան ընդհարումների դասակարգային պատճառները, պացիֆիստ է և այլն, և այլն:

Աշխատությունը կցված է հավելված՝ անձնանունների և տեղանունների ցանկերի ընդգրկումով: Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրված փաստաթղթերի ժողովածուն մեծ չէ, սակայն հարուստ է ծանոթագրություններով, որոնք գիտական ճշգրիտ տեղեկատվությամբ մեկնում և ավելի հստակեցնում են վավերագրերի բովանդակությունը: Ցանկալի է, որ աշխատանքն իր շարունակությունն ունենա և ստեղծվի Ամենայն հայոց բանաստեղծի ազգային գործունեությունը լուսաբանող մի ստվարածավալ հատոր, որը նոր լույս կսփռի ոչ միայն Թումանյանի կյանքի, այլև XX դարի առաջին երկու տասնամյակների պատմության վրա:

Հ. Սուքիասյանի «Հովհաննես Թումանյան. Նորահայտ փաստաթղթեր» ժողովածուն արժեքավոր ներդրում է Թումանյանագիտության մեջ:


ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բ. գ. դ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի դասախոս: Գիտական հետաքրքրությունները՝ հայ դասական գրականություն, Թումանյանագիտություն: Հեղինակ է 10 մենագրության և շուրջ 200 գիտական հոդվածի: sushovh@mail.ru

ՎԱՅԱՆ ՄԵԼԻՔՅԱՆ. Արևմտահայ հասարակական-քաղաքական կյանքը 1917–1918 թթ.: Էրզրումի պաշտպանությունը և անկման պատճառները 1918 թ., *Երևան, «Զանգակ» հրատ., 2019, 246 էջ**:

Բանալի բառեր՝ Արևմտյան Հայաստան, Արևմտահայերի համագումար, Էրզրում, Երզնկա, Անդրանիկ, Թորգոմ, Սեբաստացի Մուրադ, գնդապետ Մորել, Անդրկովկասյան Սեյմ:

Հայոց պատմության հիմնական վճռորոշ ժամանակաշրջանի՝ XX դարասկզբի իրադարձությունների մասին գրվել են բազմաթիվ աշխատություններ, սակայն դեռ մնում են հարցեր,



Դրանց թվին են դասվում 1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Արևմտյան Հայաստանի շուրջ ծավալվող դրամատիկ իրադարձություններն ու այդ շրջանի հայ հասարակական-քաղաքական կյանքը: Պ. գ. դ. Վ. Մելիքյանի ներկայացվող աշխատության մեջ մասնագիտական հարուստ գրականության, արխիվային նյութերի, ժամանակի մամուլի և սկզբնաղբյուրների հանգամանալից քննության հիման վրա տրված են պատմական այդ իրադարձության ու դրան առնչվող կնճռոտ

մի շարք հարցերի պատասխանները:

Մենագրությունը հրատարակության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը: Այն բաղկացած է նախաբանից, երեք գլխից՝ «Արևմտահայ հասարակական-քաղաքական կյանքը բոլշևիկյան հեղաշրջումից հետո», «Էրզրումի պաշտպանությանը նախորդող ռազմաքաղաքական զարգացումները (1917 թ. դեկտեմբեր – 1918 թ. հունվար)» և «Էրզրումի գոյամարտը և անկման պատճառները», «Եզրակացություն» և «Վերջաբանի փոխարեն» բաժիններից, սկզբնաղբյուրների ու գրականության ցանկից և ռուսերեն ամփոփումից:

Նախաբանում արժևորվում է 1917 թ. Փետրվարյան հեղափոխության արդյունքում ձեռք բերված Արևմտյան Հայաստանի վերաշինության գործը՝ որպես այստեղ ազգային-քաղաքացիական իշխանության հաստատման գործընթացի սկիզբ: Ընդգծվում է Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Անդրկովկասում հաստատված նոր իշխանության՝ Կո-

** Ներկայացվել է 24. II. 2020 թ., ընդունվել է տպագրության 09. III. 2020 թ.:*

միսարիատի բնորոշ առանձնահատկությունը Ռուսաստանում հաստատված խորհրդային իշխանության հանդեպ՝ ի տարբերություն Կոմիսարիատի մաս կազմող հայ ազգային իշխանության, նրա վրաց-թաթարական մեծամասնությունը հակախորհրդային ուղղվածությունից բացի ուներ նաև հակառուսական ուղղվածություն (էջ 6–7):

Պատմաբանը հստակ ձևակերպում է այն միտքը, որ բուլշևիկյան հեղաշրջումից հետո արևմտահայության առաջնահերթ խնդիրը մնում էր ինքնակազմակերպման գործը: Ընդգծվում են ընդհանուր նպատակի բաղկացուցիչ մաս կազմող արևմտահայերի համագումար հրավիրելու, արևմտահայերից բաղկացած գործառնների կազմակերպման և Կովկասյան ռազմաճակատի պաշտպանության խնդիրները: Մատնանշվում է այն հանգամանքը, որ հարցն այս կամ այն չափով ուսումնասիրած պատմաբանները էրզրումի անկման պատասխանատվությունը միակողմանիորեն պայմանավորել են հայկական զինվորական ուժերի և, հատկապես, Անդրանիկի գործունեությամբ (էջ 9): Հեղինակը կարևորում է հարցերի համակողմանի լուսաբանման անհրաժեշտությունը:

Աշխատության առաջին գլխում ներկայացվում է Արևմտյան Հայաստանի իրավիճակը ռուսաստանյան երկու հեղափոխությունների միջև ընկած ժամանակաշրջանում: Ցույց է տրվում, որ երկրամասի գեներալ-կոմիսարության կառույցներում դեռևս շարունակվում էր նախկին ցարական շրջանի գործելակերպը: Հանգամանորեն լուսաբանվում է արևմտահայերի 2-րդ համագումարի նախապատրաստական աշխատանքների ընթացքն ու այդ գործում զգալի դերակատարում ունեցած ազգային մարմինների գործունեությունը, առանձին գործիչների տեսակետները, նրանց միջև առկա հակասությունները և այլն: Այս համատեքստում պրոֆեսոր Վ. Մելիքյանն առանձնացնում ու կարևորում է Արամ Մանուկյանի տեսակետը կամ, հեղինակի բնորոշմամբ, Արամի քաղաքական կանխատեսումը և ժամանակի թելադրած գլխավոր մարտահրավերը, ըստ որի՝ անկախ այն հանգամանքից, թե ինչպիսի ընթացք կունենա Հայկական հարցը մեծ տերությունների վարած քաղաքականության մեջ, տարակույս լինել չի կարող այն հարցում, որ թուրքական պետությունը հայ ժողովրդին շարունակում է դիտել որպես պանթուրքիզմի քաղաքականությունը խոչընդոտող տարր: Հետևաբար, 1917 թ. դեկտեմբերին Կովկասյան ռազմաճակատում հաստատված զինադադարը թուրքերի Արևելյան Հայաստան չներխուժելու երաշխիք լինել չի կարող (էջ 20): Այստեղից արվում է մյուս կարևոր հետևությունը՝ անհրաժեշտ է հնարավորինս կարճ ժամկետում կազմակերպել հայկական ազգային զինուժը, որը պետք է փոխարինի Կովկասյան ռազմաճակատն արագորեն լքող ռուսական զորքին և դիմազրավի թուրքերի հավանական հարձակումը:

Ուշադրություն է դարձվել Արևմտահայ ու Արևելահայ ազգային խորհուրդների միջև եղած հակասության հարցին: Այն լուսաբանվել է նաև Դաշնակցություն—ՀԺԿ, Դաշնակցություն—Անդրանիկ փոխհարաբերությունների համատեքստում: 1917 թ. դեկտեմբերին երևանում

կայացած արևմտահայերի խորհրդակցությունը զուգընթաց բացահայտվում է հայ հասարակական կյանքում տիրող իրավիճակը, բարոյահոգեբանական մթնոլորտը, որի պայմաններում փորձ էր արվում կազմակերպելու Արևմտյան Հայաստանը պաշտպանելու համար հայկական զինուժը: Ներկայացվում են զորակոչի կազմակերպման պայմանները, դրան խոչընդոտող հանգամանքները: Վ. Մելիքյանը նկատում է, որ պատմական հանգամանքերի բերումով արևմտահայ մտավորական կարող ուժերը հայտնվել էին Արևմտյան Հայաստանից և Անդրկովկասից դուրս, որը բացասական ազդեցություն էր թողել արևմտահայերի ինքնակազմակերպման գործի վրա: Անդրադառնալով թիֆլիսում կայացած արևմտահայերի 2-րդ խորհրդակցությանն ու նրա որոշումներին՝ ցույց է տրվում, որ այն հետևում էր անդրկովկասյան միացյալ կառավարության ու նրա՝ ՀՅԴ խմբակցության որդեգրած գերմանաթուրքական կողմնորոշման քաղաքական գծին:

Հայկական հարցում Անտանտի փոխհարաբերությունների լույսի ներքո հեղինակը վերլուծում է Կովկասյան ռազմաճակատի, այսինքն՝ Արևմտյան Հայաստանի պաշտպանության հիմնահարցի ուղղությամբ հայ քաղաքական-ռազմական ուժերի ծավալած գործունեությունը: Լուսաբանվում են ՀՅԴ Վասպուրականի շրջանային, Հայ Սահմանադրական-ռամկավար կուսակցության պատգամավորական և Բաքվում հաստատված արևմտահայերի ժողովները, ինչպես նաև՝ այս համատեքստում նեղկուսակցական, հատվածական մտածողության դրսևորումներն ու դրանց բացասական հետևանքները:

Աշխատության երկրորդ գլխում Վ. Մելիքյանը ցույց է տալիս Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու Կոմիսարիատի վարած քաղաքական գիծը, վրաց մենչևիկների, կովկասյան թաթարների, ինչպես նաև թուրքերի հեռահար քաղաքական նպատակները: Ընդգծվում է այն հանգամանքը, որ հայության շահերի տեսանկյունից ձեռնադրել էր Կովկասյան ռազմաճակատում ու Անդրկովկասում ռուսական զորքերի ներկայությունը և երկրամասը Ռուսաստանի կազմում մնալը՝ անկախ Ռուսաստանի քաղաքական կարգերից: Հիմնավոր փաստերով ամրագրվում է այն տեսակետը, որ պատերազմի մեջ գտնվող թուրքիայի տնտեսական ներքին դրուժյունը մի կողմից, մյուս կողմից՝ պաղեստինյան ճակատում թուրքերի ծանր դրուժյունը խթանեցին 1917 թ. վերջին Ռուսաստանի հետ զինադադար կնքելուն:

Հեղինակը մատնացույց է անում Արևմտյան Հայաստանից ռուսական զորքերի դուրսբերման պայմաններում տիրող իրավիճակին, մի շարք հայրենասեր ռուս սպաների (Պ. Ավերյանով, Վ. Լյախով, Ալ. Կուլեբյակին և այլն) ռուսական զորքն անհապաղ հայ զինվորականությունամբ փոխարինելու և վերջիններիս կամավոր ռուս սպաների կողմից մարզելու հայամետ դիրքորոշմանը: Սրա հետ մեկտեղ հեղինակը ցավով է արձանագրում այն իրողությունը, որ հայերի պարտավորական տրամադրությունները, հայ զինուժերում մեծ չափերի հասնող դասա-

լքությունն ու ցածր կարգապահությունը, չդադարող կուսակցական հակամարտությունն աղետավոր հետևանքներ ունեցան:

Աշխատութեան երրորդ գլխում նախ լուսաբանվում են Երզնկայի շուրջ ծավալվող իրադարձությունները, ցույց է տրվում, որ համատարած դասալքության ու ռազմաճակատի պաշտպանության կազմալուծման պայմաններում հայ և ռուս զինվորականության մեջ գտնվեցին հայրենասեր ու վճռական անհատներ (գնդապետ Ն. Մորել, կապիտան Կաֆիև, Սեբաստացի Մուրադ, Խրիմյան և այլն), որոնք թուրքազորական գերակշիռ ուժերի ճնշման տակ թեպետ կարճատև, բայց ուժեղ դիմադրություն ցույց տվեցին և կարողացան ապահովել Երզնկայից ու շրջակա բնակավայրերից գաղթող հազարավոր մարդկանց պաշտպանությունը: Հեղինակն այս նահանջն արդարացնում է՝ ընդգծելով այն տխուր իրողությունը, որ մի կողմից ցրտաշունչ ձմռան, մյուս կողմից՝ օգնական ուժերի իսպառ բացակայության պայմաններում փոքրամասն ջոկատի ջանքերով ու նրա պաշտպանության տակ գտնվող գաղթականության ոչնչացումն անխուսափելի էր:

Վերլուծելով ռազմաքաղաքական իրադարձությունների զարգացման հնարավոր ուղիները՝ Վ. Մելիքյանն ընդգծում է, որ թուրքական առաջխաղացումն Անդրկովկաս շարունակվելու էր, քանի որ թուրքերը դրանով փորձում էին կյանքի կոչել պանթուրքիզմի ծրագիրը:

Էրզրումի շուրջ ծավալվող իրադարձությունների համապատկերը լուսաբանելիս հեղինակը կարևորում է մի շարք զինվորական գործիչների [գեներալներ՝ Թ. Նազարբեկյան, Գաբրիել Ղորղանյան, գնդապետ Ն. Մորել, Սեպուհ (Արշակ Ներսիսյան), Թորգոմ (Արշակ Երվանդյան և այլն)] հուշագրությունների ու հաղորդագրությունների մանրագնին ուսումնասիրությունը:

Գլխի՝ «Էրզրումի գոյամարտը» ենթագլխում ցույց է տրվում, որ 1918 թ. փետրվարի դրությամբ քաղաք-ամրոցում ռուսական զորքերի հեռանալուց հետո մնացած հսկայական քանակությամբ զենք-զինամթերքը, պարենն ու հանդերձանքը լրիվ բավարար էին քաղաքի պաշտպանության համար: Սրա հետ մեկտեղ շեշտվում է նաև, որ բացակայում էր, թերևս, ամենակարևորը՝ քաղաքը պաշտպանելու կոչված ուժերի դիմադրության ոգին ու կամքը: Արժարծելով Էրզրումում տիրող հասարակական-քաղաքական իրավիճակի հարցը՝ Վ. Մելիքյանն ուշադրություն է հրավիրում արատավոր երևույթի վրա, որ քաղաքում գործող հայկական կազմակերպությունները և առանձին գործիչները փոխանակ համախմբվելուն, յուրաքանչյուրն իր հերթին քաղաքային իշխանության դերը ստանձնելու հավակնություններ էին դրսևորում: Վերլուծության է ենթարկվել Էրզրումում անկախ հայկական պետականություն հռչակելու փաստը, ինչպես նաև Թորգոմի, Հ. Զավրիյանի, Սեբաստացի Մուրադի և այլ հայտնի գործիչների Էրզրումում ծավալած գործունեությունը: Վեր է հանվել առանձին պաշտոնյաների՝ մասնավորապես Տիգրան Աղամալյանի արատավոր գործելակերպը:

Աշխատության մեջ մանրագնին քննության է ենթարկվել Թիֆլիսից մինչև Էրզրում Անդրանիկի ծավալած նախապատրաստական-կազմակերպական և արդեն բուն Էրզրումում նրա ղեկավարությունում իրականացված պաշտպանական միջոցառումների ու դիմադրության կազմակերպման ուղղությամբ ծավալված գործունեությունը: Կատարվել են փաստական ճշգրտումներ: Քաջատեղյակ լինելով Անդրանիկի՝ հատկապես այդ շրջանի գործունեությունը լուսաբանող աշխատություններին՝ հեղինակն իր մտեցումներն է ներկայացրել բարդ ու հակասական բնույթ ունեցող այնպիսի հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են՝ Անդրանիկի և Հայոց ազգային խորհրդի կամ Անդրանիկի ու ՀՅԴ առանձին գործիչների փոխհարաբերությունները, Էրզրումի պաշտպանության կազմակերպման հարցում նրանց միջև առկա տարածայնությունները: Անդրանիկի գործունեությունը լուսաբանելիս Վ. Մելիքյանը հիմնավոր փաստերով ցույց է տալիս գեներալ Ի. Օդիշելիձեի բռնած դավաճանական ընթացքը: Այնուհանդերձ, խորհելու տեղիք է տալիս այն փաստը, որ Սարիղամիշում Անդրանիկի հետ հանդիպման ժամանակ Ի. Օդիշելիձեն դատապարտել է հայ զինվորների երկչոտությունը (էջ 163)՝ ակնհայտորեն նկատի ունենալով Կարսում և այլ վայրերում Էրզրումի պաշտպանության համար Անդրանիկի հավաքագրած զինվորների մասսայական դասալքությունը:

Պատմաբանը ցավով է փաստում այն իրողությունը, որ հայ իրականության մեջ տիրող բարոյահոգեբանական անկման պայմաններում միայն Անդրանիկի, Սեպուհի, Թորգոմի և մի խումբ այլ գործիչների հայրենասիրությունն ու վճռականությունը բավարար չէր թշնամուն դիմագրավելու համար: Կարծում ենք, որ այս համատեքստում պատահական չէ Հայոց ազգային խորհրդին ուղղված Անդրանիկի՝ սուր քննադատական խոսքի մեջբերումը, որից ուղղակիորեն հասկացվում է, որ մեր ազգային ղեկավար մարմինն ամբողջությամբ չէր ընկալել պահի ճակատագրական ու բախտորոշ նշանակությունը: Էրզրումի անկման խորքային պատճառների մասին խոսելով Վ. Մելիքյանն աչքաթող չի անում նաև բուլղարիկների կողմից ստորագրած Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, որով Կարսը, Արդահանն ու Բաթումը հանձնվում էին թուրքերին. հանգամանք, որը շահարկում էր Սեյմի վրաց-թաթարական մեծամասնությանը՝ իրացնելով իր հակառուսական քաղաքականությունը:

Երրորդ գլխի՝ «Էրզրումի անկման արձագանքները և հետևանքները» ենթագլխում Վ. Մելիքյանը շեշտում է, որ յուրաքանչյուր կողմ փորձում էր հիմնավորել իր ճշմարտացիությունն այն պայմաններում, երբ Անդրկովկասյան Սեյմը և նրա նախագահ Ա. Ջրենկելին դեռ Երզնկայի զինադադարի համատեքստում արդեն վճռել էին Էրզրումի, Կարսի և ողջ Արևմտյան Հայաստանի հանձնումը: Թուրքական հարձակման պայմաններում Սեյմում իշխող պարտվողական տրամադրություններն ընդգծելու նպատակով մեջբերում է արվում ժամանակի նշանավոր երգիծաբան Լեռ Կամսարից՝ «Եվ ժողովի նստան Կովկասեան եղբայրները Թիֆլիսի մէջ, թէ ինչպէս ընեն, որ առանց կռուելու

յաղթեն տաճիկին» (էջ 216): Սրանով աշխատության հեղինակը կարծես ցանկանում է ի ցույց դնել երկրամասը ղեկավարելու կոչված գործիչների քաղաքական ողջ իմաստակությունը:

Հակադրվելով հայ զինվորականության որոշ ներկայացուցիչների (գնդապետ Օսիպյան, գեներալ Հախվերդյան) կարծիքին, ըստ որի՝ Արևմտյան Հայաստանի մի բուռ քաջարի պաշտպանները չէին կարող դիմագրավել թուրքական բանակի հարձակմանը՝ պատմաբանը հիմնավոր փաստերով ցույց է տալիս, որ էրզրումի գրոհին մասնակցել է մոտ 3000-ի հասնող թշնամական ուժ, այն դեպքում, երբ մայիսյան հերոսամարտերի ժամանակ հայկական ուժերը ջախջախեցին ավելի մեծաքանակ թուրքական ուժերի:

Արդարացի քննադատության շեշտն ուղղված է նաև Հայոց ազգային խորհրդի, ՀՅԴ և Հայ զինվորական միության դեմ, որոնք հայկական զինուժի պարտավորական տրամադրությունների, դասալքության, էրզրումի և, ընդհանրապես, Արևմտյան Հայաստանի պաշտպանության փլուզման մեջ ունեին իրենց մեղքի բաժինը: Հեղինակը մասնավորապես շեշտում է այն հանգամանքը, որ ստեղծված պայմաններին քաջածանոթ դաշնակցությունը ռազմաճակատում թուրքերից կրած առաջին պարտություններից հետո ոչ թե պետք է ուշացած մեղադրանքներ հնչեցներ ու մեղավորներ փնտրեր, այլ պարտավոր էր իր ձեռքը վերցնել գործի ողջ նախաձեռնությունը: Էրզրումի անփառունակ անկման ողջ դրամատիզմը շեշտելու համար Վ. Մելիքյանը կրկին օգտագործում է Լեո Կամսարի բնորոշումը՝ «Տաճիկները մեր թնդանոթներու տեղատարափ լուռթեան տակ քաղաք մտան» (էջ 216): Երգիծաբանի կծու հեգնանքով գրված այս տողերի հետևում զգացվում է պատմաբանի թեպետ զսպված, բայց արդարացի ցասումը հայ կյանքի ղեկավարությունը ստանձնած ուժերի անհեռատես գործողությունների նկատմամբ:

Մի շարք հարցադրումներին շատ դեպքերում հեղինակը պատասխանում է ոչ թե իր, այլ ժամանակի հայտնի պարբերականների («Մշակ», «Վան-Տոսպ», «Հորիզոն» և այլն), ռազմական ու քաղաքական գործիչների (Ս. Վրացյան, Հ. Բաղրամյան և ուրիշներ), գրողների [Ատրպետ (Ս. Մուրոյաջյան), Վ. Թոթովենց, Հ. Թումանյան] խոսքերով: Ուշագրավ են երգիծական մեջբերումները, որոնք տվյալ ժամանակի հայ հասարակական-քաղաքական կյանքում տիրող իրավիճակի, տրամադրությունների խտացված արտահայտություններն են:

Աշխատության հեղինակի ձևակերպումները պարզ են, հետևությունները՝ հստակ, իսկ գեղարվեստական խոսքի օգտագործումն աշխատության լեզվին ու ոճին հաղորդել է պատկերավորություն: Գրքում արծարծված բոլոր հարցերը թեզիսների ձևով ամփոփվում են «Եզրակացություններ» բաժնում: Ցույց է տրվում, որ էրզրումի անկման անմիջական հետևանք եղավ Կարսի անկումը, իսկ վերջին հաշվով այն կանխորոշեց նաև Արևմտյան Հայաստանի կորուստը:

Շատ ինքնատիպ է աշխատության «Վերջաբանի փոխարեն» բաժինը: Այստեղ Վ. Մելիքյանն անդրադառնում է էրզրումի բերդապահ

Տրետանու պետ, կապիտան Տվերդոխլեբովի՝ «Էրզրումի անցքերը» վերնագիրը կրող օրագրություններին, որոնք օգտագործել է Ջեմալ փաշան իր «Հայկական հարցը» ուսումնասիրության մեջ: Հեղինակը համոզիչ փաստարկներով մերկացնում է ռուսական պետության ազգային շահերը դավաճանած և թուրքերի հետ գործակցած ռուս սպայի գործելակերպն ու հակահայկական տրամադրությունները և ցույց է տալիս Հայոց ցեղասպանության գլխավոր պատասխանատուներից մեկին՝ Ջեմալ փաշայի՝ հայությունը պատահած ողբերգական իրադարձությունների պատճառը միայն ռուսական քաղաքականության մեջ փնտրելու միտումը: Ընդգծվում է այն հանգամանքը, որ Ջեմալ փաշան, այս օրագրությունն օգտագործելով, նպատակ է ունեցել ոչ միայն վարկաբեկելու հայ ժողովրդին, այլև՝ անուղղակիորեն արդարացնելու թուրքական ցեղասպան քաղաքականությունը:

Աշխատության մեջ կարմիր թելի պես անցնում է այն միտքը, թե արդյո՞ք հնարավոր էր թուրք-բոլշևիկյան համագործակցության, Սեյմի վրաց-թաթարական մեծամասնության հակահայկական դիրքորոշման պայմաններում սեփական ուժերով պաշտպանել Էրզրումը, Կարսը և հայկական այլ տարածքներ: Բերված փաստարկները հուշում են, որ ճակատագրական այդ շրջանում հայրենիքի պաշտպանության գաղափարի շուրջ միավորվելու դեպքում իրատեսական էր Էրզրումի և Արևմտյան Հայաստանի զգալի մասի պաշտպանությունը:

Երկու նկատառում. գրքի ամբողջական վերնագիրն է «Արևմտահայ հասարակական-քաղաքական կյանքը 1917–1918 թթ.: Էրզրումի պաշտպանությունը և անկման պատճառները 1918 թ.», սակայն աշխատության կազմի վրա նշված է միայն «Էրզրումի պաշտպանությունը և անկման պատճառները 1918 թ.» վերնագիրը: Բացի այդ, գրքում հեղինակի հետևություններն ու եզրակացությունները հաճախ կրկնվում են:

Մեր խորին համոզմամբ, բացի պատմագիտական արժեքից, այս աշխատությունն արդիական հնչեղություն ունի: Այն մեկ անգամ ևս վերահաստատում է այն ճշմարտությունը, որ վճռական պահերին հույսը պետք է դնել միայն սեփական ուժերի վրա: Նկատենք, այսօր Հայոց պետության առջև ծառայած կարևոր մի շարք խնդիրների բարեհաջող լուծումները մեծապես պայմանավորված են համազգային միասնության, հայրենասիրության ու վճռականության առկայությամբ, այսինքն՝ գաղափարների ու առաջնահերթությունների, որոնց կյանքի կոչումը շուրջ մեկ դար առաջ այնքան անհրաժեշտ էր մեր ժողովրդին: Վ. Մելիքյանի սույն մենագրությունն արժեքավոր ներդրում է հայ պատմագիտության մեջ:


ԳԵՂԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Պ. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նոր պատմության բաժնի ավագ գիտաշխատող, Հայաստանի ազգային ազդարային համալսարանի դասախոս: Գիտական հետաքրքրությունները՝ հայ հասարակական-քաղաքական մտքի և ազգային կուսակցությունների պատմություն: Հեղինակ է 2 մենագրության և շուրջ 20 հոդվածի: gegham.hovhannisian@mail.ru

ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ. Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր. գիրք 1. Գեղարքունիքի մարզ, *Երևան*, «Ասողիկ» հրատ., 2018, 402 էջ*:

Բանալի բառեր՝ հայերենագիտություն, բարբառագիտություն, բարբառ, խոսվածք, բարբառային համապատկեր, բարբառային միավորներ, բարբառային հատկանիշներ, Մշո բարբառ, Բայազետի բարբառ, Դիազինի բարբառ, Գանձակի միջբարբառ, Մակուի խոսվածք, Արծափի խոսվածք, բարբառային բնութագրեր:

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտն իր գոյությունը յոթուկես տասնամյակում հսկայածավալ աշխատանք է կատարել հայերենագիտության, մասնավորապես՝ հայ բարբառագիտության բնագավառում:



Բարբառագիտությունը, լինելով հայերենագիտության կարևորագույն ճյուղերից մեկը, մշտապես եղել է ինչպես օտարագրի ուսումնասիրողների, այնպես էլ հայ բարբառագետների ուշադրության կենտրոնում: Հայ լեզվաբանության երախտավորներ Հրաչյա Աճառյանի, Արարատ Ղարիբյանի, Էդուարդ Աղայանի, Գևորգ Զահուկյանի և այլոց գիտական մեծ վաստակի զգալի մասը կազմում են բարբառագիտական աշխատանքները: Իսկ ինստիտուտի բարբառագիտության բաժնի

վաստակաշատ բարբառագետներ Հովհաննես Մուրադյանի, Ալբերտ Խաչատրյանի, Մարո Մուրադյանի, Անի Հանեյանի, Դարիկո Կոստանդյանի ու այլոց ջանքերով տարիներ շարունակ ստեղծվել են հայերենագիտության այս ոլորտի արժեքավոր և մնայուն ուսումնասիրություններ:

Այսօր էլ շարունակում են արդիական մնալ հայերենի առանձին բարբառների համաժամանակյա և տարաժամանակյա քննության, մերձավոր խոսվածքների, բարբառների ու բարբառային խմբերի համեմատական և պատմական ուսումնասիրության, բառապաշարի շերտերի, իմաստային խմբերի տարածագործառական բնութագրման, բարբառային հատկանիշների ու գուգաբանությունների տարածման սահմանների ճշտման, ինչպես նաև հարակից մյուս հարցերը: Այդուհանդերձ, դեռևս չկա այն համապարփակ աշխատանքը, որն ընդգրկուն ներկայացնի մեր երկրի տարածքի արդի ողջ բարբառային համապատկերը: Հենց այս

* Ներկայացվել է 23. IV. 2020 թ., ընդունվել է տպագրության 05. V. 2020 թ.:

Հանգամանքը հաշվի առնելով Լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժինը Հայաստանի բարբառային միավորների և հատկանիշների տարածման արդի պատկերի ձևավորման, բարբառային քարտեզների կազմման նպատակով իրականացնում է «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր» համալիր ծրագիրը:

Հետազոտությունը, որի առաջին փուլը կատարվել է 2013–2015 թթ.՝ ինստիտուտի տնօրեն Վիկտոր Կատվալյանի և բարբառագիտության բաժնի աշխատակիցներ Հասմիկ Խաչատրյանի, Ժաննա Միքայելյանի, Գարիկ Մկրտչյանի կողմից, իրականացվել է Գեղարքունիքի մարզում՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի Ֆինանսական աջակցությամբ:

Կատարված հավաքչական մանրակրկիտ աշխատանքների, համապատասխան գիտական գրականության և ինստիտուտում առկա՝ Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով զբանցված նյութերի հիման վրա տրվել են Գեղարքունիքի մարզի բնակավայրերի բարբառային բնութագրերը, դրանք համալրվել են բարբառային և բանահյուսական հարուստ նյութերով, ժողովրդագրական տեղեկություններով ու փաստական տվյալներով, որոնք էլ ձևավորել են տարածքի բարբառային միավորների ու դրանց հատկանիշների տարածման համընդգրկուն պատկերը:

Բանասիրական գիտությունների դոկտոր Վ. Կատվալյանի աշխատասիրություններ է ամբողջացել «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր» խորագրով ուսումնասիրությունների շարքի անդրանիկ՝ «Գեղարքունիքի մարզ» հատորը, որը Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ հրատարակել է «Ատողիկ» հրատարակչությունը: Պատասխանատու խմբագիրն է բանասիրական գիտությունների թեկնածու Նազիկ Հովհաննիսյանը:

Աշխատությունը, որն արձանագրում է բարբառային հայերենի արդի վիճակը Գեղարքունիքի մարզի շուրջ վեց տասնյակ բնակավայրերում, բաղկացած է երեք մասից և յոթ գլխից:

Առաջին մասում ընդհանուր տեղեկություններով ներկայացվում են տարածքի բնակավայրերում այսօր գործառու Մշո, Բայազետի ու Դիադինի բարբառները, Գանձակի միջբարբառը, Մակուի և Արծափի խոսվածքները:

Երկրորդ մասում այբբենական կարգով ներկայացվում են մարզի բնակավայրերը՝ իրենց բարբառային խոսքի գործառական հատկանիշներով և զարգացման միտումներով, բարբառային բնութագրերով, ինչպես նաև խոսվածքային առանձնահատկություններով: Բարբառային հատկանիշները համեմատական կարգով ներկայացվում են նաև Գ. Զահուկյանի մշակած բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման աղյուսակներով:

Երրորդ մասը ընդգրկում է գիտական տառադարձությունները գրանցված բարբառային կենդանի խոսքի բազմաթիվ տարաբնույթ նմուշներ:

Աշխատության վերջում գետեղված է նաև մարզի տարածքի խոսվածքների բարբառային բառերի ցանկը, որտեղ յուրաքանչյուր բառային միավոր նաև տարբերակված է ըստ բնակավայրերի:

Բարբառագիտական աշխատանքները լույս են սփռում ոչ միայն հայերենագիտության, ընդհանուր ու համեմատական լեզվաբանության, այլև հայոց պատմության, ազգագրության, բանահյուսության, ձեռագրագիտության և հարակից այլ բնագավառների խնդիրներին: Նման առաքելություն ունի նաև հայ բարբառագիտական առկա գրականությունը ևս մեկ ուշագրավ միավորով համալրող, արժեքավոր այս աշխատանքը, որը ծնվել է տարիների աշխատանքով ու նվիրումով:

Ցանկալի կլինեք արժեքավոր այս աշխատանքում գետեղված տեսնել նաև մարզի բնակավայրերի բարբառային հատկանիշները, դրանց տարածման սահմանները լուսաբանող լեզվաաշխարհագրական քարտեզներ: Սակայն, կարծում ենք, որ դա կարող է իրականացվել նաև ամփոփ բոլոր մարզերն ընդգրկող լրացուցիչ հատորի ձևով:

Վ. Կատվայանի «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր. գիրք 1. Գեղարքունիքի մարզ» ուսումնասիրությունը նախատեսված է լեզվաբանների, բարբառագետների, ազգագրագետների, ուսանողների, ինչպես նաև, ընդհանրապես, հայագիտությամբ հետաքրքրվողների համար: Այն կարող է կարևոր նյութ մատուցել հայագիտական հետազոտ ուսումնասիրություններին, նպաստել հայ բարբառագիտության, հայոց լեզվի պատմության հարցերի պարզաբանմանը, օգտակար կլինի նաև ժողովրդագրական, հանրագիտարանային-տեղեկատու աշխատանքներ կատարող մասնագետներին:

Հուսանք, որ այս աշխատանքը նախադեպ կդառնա ոչ միայն Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերի, Արցախի Հանրապետության և Ջավախքի բարբառային համապատկերների ուսումնասիրության ու հրատարակման գործում, այլև կունենա իր տրամաբանական շարունակությունը՝ հնարավորինս ընդգրկելով նաև մեր պատմական հայրենիքի կորուսյալ հատվածների բարբառները:

ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ


Բ. գ. թ., ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Նախիջևանի և Վայոց ձորի տարածքների բարբառների ուսումնասիրություն: Հեղինակ է 1 մենագրության, ավելի քան երկու տասնյակ գիտական հոդվածի: artva@list.ru

ԳՈՂԱՐ ԿԱՐԱԳՅՈՉՅԱՆ. Նախիջևանը եվրոպացի ճանապարհորդների ուղեգրություններում (XIII–XVII դդ.), Երևան, «Գիտություն» հրատ., 2019, 250 էջ*:

ГОАР КАРАГЕЗЯН. Нахичеван в записках европейских путешественников (XIII–XVII вв.). Ереван, изд-во «Гитутюн», 2019, 250 с.

Բանալի բառեր՝ Նախիջևան, ճանապարհորդներ, Արարատ, Վիշապասար, Նոյ, մշակութային հիշողություն, սրբազան տարածություն, երկրի կերպար:

Տեղեկատվական համակարգված հոսքերի առատությունը բնորոշվող XXI դարի հումանիտար գիտելիքն իր գոյություն համար նոր



«արդարացումներ» է փնտրում¹: Այսօր տեղեկությունը (ինֆորմացիան) որպես գիտելիքի հիմնական միավոր դադարում է գերակա լինելուց. դուրս գալով սեփական սահմաններից՝ այն ինքն իրեն փնտրում է դրսից՝ այսպիսով ձգտելով դեպի մետաոլորտներ: Հայագիտությունը նույնպես տեղեկությունը հաղթահարելու, դրանով իսկ բարձրանալու և իր խնդիրը վերևից դիտելու, մի խոսքով՝ ինտելեկտուալ դառնալու կարիք է զգում: Նմանատիպ փորձերը շատ չեն հայ իրականության մեջ, բայց կան, ինչը հույս է ներշնչում, որ մեր գիտությունը հեռու է

սպառված համարվելուց:

Նման փորձերից մեկն է, կարծում ենք, Գոհար Կարաբյոզյանի՝ «Նախիջևանը եվրոպացի ճանապարհորդների ուղեգրություններում (XIII–XVII դդ.)» ռուսերենով շարադրված աշխատությունը (հայերեն և անգլերեն ընդարձակ ամփոփումներով), որում հեղինակը, վերնսավածի ոճով, ձգտում է դրսից դիտել «Նախիջևան տարածությանը»

* Ներկայացվել է 03. III. 2020 թ., ընդունվել է տպագրության 10. III. 2020 թ.:

¹ «Արդարացում» բառն այստեղ օգտագործում ենք ճիշտ այն իմաստով, ինչ Անալների պատմական դպրոցի ներկայացուցիչները սրանից զրեթե մեկ դար առաջ՝ որպես պատասխան այն վտանգներին, որոնք նոր տեխնոկրատ իրականության և վիճակագրական-սոցիոլոգիական մեթոդների գերակայության պայմաններում սպառնում էին պատմական-հումանիտար խորը գիտելիքին (M. Bloch. Apologie pour l'histoire ou métier d'historien. Paris, 1949, p. 15):

և վերականգնել, ինչպես ինքը՝ հեղինակն է նշում, նրա «կերպարի կառուցվածքն ու դինամիկան»² (էջ 204): Ճիշտ է, պատմաբանն այստեղ շահեկան դիրքում է, քանի որ նրա հետազոտության առարկան պատմական հիշողությանը հագեցված մի տարածաշրջան է. ընդ որում, այդ հագեցվածությունն ապահովում են ինչպես տեղական, այնպես էլ օտար գրական-պատմական աղբյուրները: Սակայն, մյուս կողմից, պարզ է նաև, որ առանց հեղինակային խորաթափանցության անհնար է բարձրացնել որևէ լուրջ խնդիր, եթե նույնիսկ դրա մասին կա մեծ քանակությամբ տեղեկատվություն: Ահա այստեղ է, որ բացահայտվում է ստեղծագործողի (իսկ գիտական աշխատանքը ոչ այլ ինչ է, եթե ոչ ստեղծագործության օբյեկտիվ ձև) թուխքը, ինչը և բնորոշում է հեղինակին որպես այդպիսին: Ինչքան նա բարձրանում է նկարագրական-տեղեկատվական մակարդակից, այնքան մեծանում է նրա ստեղծագործության արժեքը:

Նախիջևանն իր աշխարհագրական դիրքով և այդ դիրքի արդյունքում ձևավորված յուրահատուկ «կերպարով», հիրավի, բացառիկ մի կենսատարածք (լանդշաֆտ) է իրենից ներկայացնում: Մի կողմից այն գտնվում է Հայկական լեռնաշխարհի սրտում տարածվող Արարատյան գոգավորության համակարգում և իր վրա է կրում այդ լեռնաշխարհի մշակութային ու քաղաքական անցյալի խորը կնիքը: Այս տեսանկյունից պատահական չէ, որ Նախիջևանում ի հայտ են գալիս լեռնաշխարհի նյութական և հոգևոր մշակույթին բնորոշ բոլոր տիպի հուշարձանները/սկզբնաղբյուրները (ժայռապատկերներ, վիշապաքարեր, խաչքարեր, եկեղեցիներ, ամրոցներ, դամբարաններ, սեպագրեր, հայկական վիմագրեր և այլն), որոնք վկայում են այս տարածքի՝ լեռնաշխարհի ընդհանուր պատմամշակութային զարգացումներում ամբողջությամբ սերտաճած լինելու մասին:

Սակայն, մյուս կողմից, շնորհիվ իր մերձարարատյան տեղադրություն (Նախիջևանը մշտապես ընկալվել է որպես Արարատի ստորոտին գտնվող քաղաք), այն դառնում է համաշխարհային պատմության մի առանցքային կետ (axis mundi), որի շուրջ ստեղծված համակենտրոն նարատիվը բացատրում է ոչ միայն այս կենսատարածքի անունը որպես առաջին մարդու բնակավայր-իջևանավայր (αροβατήριον, ինչպես այն արդեն առկա է Հովսեփոս Փլավիոսի մոտ), այլև, նորից օգտագործելով հեղինակի եզրը, վերարտադրում է նրա համընդհանուր «կերպարը»: Սա այն բացառիկ ղեկքերից է, երբ աշխարհագրական

² Գրքում քննարկվող մի շարք տեսական խնդիրների զարգացմանը կարելի է հետևել հեղինակի հետևյալ աշխատություններում՝ Գ. Լ. Կարա-գեջյան. *Արմենիա և արմենիացիները ֆրանսիական գրականության մեջ*. Երևան, 1988; *Ն ու լ յ ն ի՝* Роль армян в трансмиссии культур. Памятники французской средневековой литературы в контексте культурного обмена. Երևան, 2010; *Ն ու լ յ ն ի՝* Арарат – сакральная территория. По запискам европейских путешественников. Երևան, 2015; *Ն ու լ յ ն ի՝* Армянский мир в «Путешествии в Левант» Турнефора. Երևան, 2017.

ուղենիչը, մասնավորապես՝ Արարատ լեռը, դառնում է գաղափարական ուղենիչ՝ սահմանելով կոնկրետ տարածքի ինքնությունը:

Այս երկու առանձնահատկությունները հանդերձ Նախիջևանը վերածվում է մի յուրահատուկ լանդշաֆտի, «կոնտակտային» և նույնիսկ «սահմանային» գոտու, որը բնորոշվում է մշակութային հիշողության յուրահատուկ բազմազանություններով. մի հանգամանք, որը տարածքը դարձնում է էլ ավելի գրավիչ ու դրանով իսկ դեպի իրեն ձգում մարդկանց տարբեր խմբերի (էթնիկ, ռազմական, կրոնական) և առանձին անձանց (ուխտագնացներ, միսիոներներ, առևտրականներ, ճանապարհորդներ): Ահա այստեղ է, որ վերադառնում ենք քննարկվող գրքի բուն բովանդակությանը. չէ՞ որ այն Նախիջևանը ներկայացնում է առաջին հերթին օտարերկրացու, մասնավորապես՝ ճանապարհորդի հայացքով, և պատասխանում այն հարցին, թե աշխարհի այս անկյունը ի՞նչ կոնկրետ դեր է խաղում միջնադարյան մարդու «աշխարհի մոդելում», ժամանակի ու տարածության նրա ընկալումներում³:

Ճանապարհորդական ժանրը (жанр хождения), թեև բնույթով միջնադարյան երևույթ է, իր արմատներով վերադառնում է դեպի պատմության խորքերը: Վաղ հասարակության մեջ ճանապարհորդում էին սահմանից անդին գտնվող և խորհրդավորության մշուշով պատված աշխարհները ճանաչելու նպատակով: Այս իմաստով նման ճանապարհորդները գրեթե չունեին պրակտիկ նպատակներ կամ դրանց պրակտիկությունը խիստ լատենտ էր (այս ոճի ճանապարհորդի արխեստիպային կերպար կարող է լինել, օրինակ, շումերական Գիլգամեշը): Ինչքան մոտենում ենք մեր ժամանակներին, այնքան ճանապարհորդության մեջ ավելանում են կիրառական տարրերը, որոնք միտված են ոչ միայն ճանաչելու այցելության ենթակա տարածքները, այլև փոփոխելու դրանք: Այդ տարրերի մեջ էին, օրինակ, լրտեսությունը, միսիոներությունը կամ առևտրական գործունեությունը: Այս ճանապարհորդներն իրենց գործունեության համար որպես ենթատեքստ էին օգտագործում թիրախային տարածքի բնակչության արժեհամակարգը, աշխարհագրական և պատմամշակութային ուղենիչները (նման ճանապարհորդի արխեստիպ կարող է լինել, օրինակ, զարգացած և ուշ միջնադարի եվրոպացի ճանապարհորդը)⁴:

Ընդ որում, ինչպես ճանապարհորդի, այնպես էլ ճանապարհորդի կողմից ներկայացվող հեռավոր երկրի կերպարը նույնպես արխեստիպային է իր բնույթով: Այսպես, օտար կամ հեռավոր երկիրը ներկայացվում է կամ շատ դրական (հմտ. այս համատեքստում՝ «գրախոս», «հարստություն», «պրեստիժային առարկա», «գերբնական երևույթ»

³ Այս մասին մանրամասն տե՛ս А. Я. Гуревич. Категории средневековой культуры. М., 1972.

⁴ Սա չի նշանակում, որ միջնադարյան ճանապարհորդը միայն պրակտիկ նպատակներ ուներ. չմոռանանք, որ միջնադարում ճանապարհորդությունն ընկալվում էր նախևառաջ որպես ուխտագնացություն դեպի սուրբ վայրեր, ձգտում տեղափոխվելու սովորական-մեղսական տարածքներից դեպի սրբազան տարածքներ (նույն տեղում, էջ 67):

բանալի բառերը), կամ շատ բացասական (հմմտ.՝ «անդրաշխարհ», «բարբարոսներ», «մարդակերներ», «վայրենություն» եզրերը) երանգներով⁵: Իսկ այն մարդիկ, ովքեր ունակ էին մեծ տարածություններ անցնել՝ հաղթահարելով օտարությունների դժվարությունները, ընկալվում էին որպես գերբնական ուժի կրողներ՝ հերոսներ կամ սրբեր. վաղ եվրոպական աշխարհայացքում նրանք ընկալվում էին որպես mearcstapa («սահմանն անցնողներ»): Այդպիսին էր, օրինակ, Բեովուլֆը⁶:

Վերոհիշյալ հարցադրումների համատեքստում քննարկվող աշխատանքն անդրադառնում է Նախիջևանի տարածաշրջանին՝ XIII–XVII դդ. եվրոպական ճանապարհորդների ավանդած տեղեկությունների լույսի ներքո: Մասնավորապես, նախ քննարկվում են XIII–XV դդ. (Գիյոմ դը Ռուբրուկ, Ռոջեր Բեկոն, Յոհան Շիլտբերգեր և այլք), ապա XVI դ. (Պարսից Դոն ժուան, Էնթոնի Ջենկինսոն, Ռոբերտ Շիրլի և այլք) ու XVII դ. (Ջոն Նյուբերի, Ժան-Բատիստ Տավերնիե, Ժան Շարդեն, Պոլ Լուկա և այլք) եվրոպացի ճանապարհորդների գրառումները: Ընդ որում, վկայությունների առյուծի բաժինն ընկնում է XVII դ., ինչը պայմանավորված էր տարածաշրջանի նկատմամբ՝ տարատեսակ հետաքրքրությունների կտրուկ աճով:

Եթե փորձենք գնահատել ներկայացվող աշխատանքի բուն արժեքը վերն ասվածի համատեքստում, ապա կարելի է շեշտել երեք կարևոր առանձնահատկություն:

1. Նախ, փաստորեն, առաջին անգամ շրջանառության մեջ են դրվում մեծ քանակության գրական-պատմական նյութեր, որոնց հիմնական մասը, ի դեպ՝ մի քանի լեզուներով, հեղինակային թարգմանությունն արդյունք են: Այդ նյութերը՝ կախված տվյալ ճանապարհորդի հետաքրքրություններից ու նկարագրական ոճից, բազմազան թեմաներ են շրջանառում Նախիջևանի մասին: Այսպես, եթե Ժ.-Բ. Տավերնիեն մեծ տեղ է հատկացնում երթուղու և դրա առանձին կետերի նկարագրությանը, ապա Ժ. Շարդենը շեշտը դնում է պատմամշակութային ոճի իրողությունների փաստարկման վրա. մինչդեռ Պ. Լուկան նկարագրության հիմքում շեշտում է հետաքրքրաշարժ-արկածային-առասպելական տարրը:

Այս բոլոր ոճերի կիրառման արդյունքում երկրամասի վերաբերյալ շրջանառվում են տարատեսակ տեղեկություններ (աշխարհագրություն, պատմական հուշարձաններ, ավանդազրույցներ և այլն), որոնցում կարծես գոյակցում են անցյալն ու ներկան, պատմությունը և առասպելը, էթնիկ ու սոցիալական, սակրալ և պրոֆան տարածություններ:

⁵ Այս մասին հմմտ. M. W. Helms. Ulysse's Sail: An Ethnographical Odyssey of Power, Knowledge and Geographical Distance, Princeton, 1988; M. L. Ruiz. G. Priego. Die Reise als Initiation, in: Götter und Helden der Bronzezeit: Europa im Zeitalter des Odysseus, 25. Ausstellung des Eurorats, Nationalmuseum Kopenhagen. Bonn, 1999, S. 46–47.

⁶ H. Tiefenbach, H. Steuer, P. Kehne. Grenze, in: Reallexikon der Germanischen Altertumskunde, Bd. 13. Berlin, 1999, S. 3–15.

յունները (пространство): Յուրաքանչյուր դարաշրջան պատմաաշխարհագրական և առասպելաբանական բնույթի կարևոր խորհրդանիշների հետ միաժամանակ ստեղծում է որոշակի երկրամշակութային կերպարներ (Երնջակ ամրոցը, Ջուղան կամ Աստապատն իր պատմությամբ ու ներկա վիճակով և այլն): Սակայն, դրա հետ մեկտեղ, շրջանառվում են կրկնվող-կայուն մոտիվներ և կերպարներ, որոնք կազմավորվում են արդեն գոյություն ունեցող նախատիպի հիման վրա (Նախիջևանը որպես մարդկության «առաջին բնակավայր», երկրամասի ավերումն ու վերականգնումը և այլն)՝ վերստեղծելով լրացուցիչ նարատիվներ (Նոյան տապանի իջման վայրը, Նոյի, նրա կնոջ՝ Նոյեմզարի ու քրոջ թաղման վայրերը, սրբերը և նրանց շիրիմներն ու մասունքները, բնական ու մարդաստեղծ սրբազան տարածքները և այլն):

Այս իմաստով ճանապարհորդները հատուկ քննարկման առարկա են դարձնում բուն Նախիջևանի խորհրդանիշը՝ Երնջակ գավառի կենտրոնում վեր խոյացող Վիշապասարը: Այս սուրբ լեռան մասին բերվում են բազմաթիվ ավանդազրույցներ, որոնք իրենց զուգահեռներն են գտնում հայկական՝ պատմական, հնամշակութային և ազգագրական սկզբնաղբյուրներում:

Ասվածի համատեքստում ընթերցողի առջև Նախիջևանն աստիճանաբար հառնում է, առաջին հերթին, որպես սրբազան մի կենսատարածք, որը լի է այդ սրբազանությունն արդարացնող բազմաթիվ կենդանի վկայություններով: Ընդ որում, բացի բնիկ հայերից, սրբազանության գաղափարի կրողն են դառնում նաև եկվոր եվրոպացիները (ճանապարհորդները և տարածքում հաստատված կաթոլիկ միսիոներներն ու նրանց համայնքները, որոնք աստվածաշնչական Նախիջևանում վերագտել էին իրենց երկրորդ հայրենիքը):

2. Աշխատանքի երկրորդ կարևոր արժանիքն այն է, որ անժխտելի ապացույցներ է բերում Նախիջևանի տարածքում հայկական հետքի մշտական առկայության ու խոր արմատների մասին. այս իմաստով գիրքն ունի հիրավի ռազմավարական նշանակություն և առաջին հնարավորության դեպքում այն արժեք թարգմանել անգլերեն:

Նախիջևանի տարածքը բազմիցս ենթարկվել է օտար ներխուժումների: Եկվորների մի մասը փորձել է գրավել երկրամասի տարածքը, մյուս մասը (մահմեդական իշխանությունները կամ կաթոլիկ միսիոներները)՝ հոգին: Այս համատեքստում քննարկվող աշխատությունը փաստում է կարևոր մի բան. հնարավոր է տիրանալ տարածքին, տեղահանել բնիկ ժողովրդին, ոչնչացնել նրա պատմամշակութային արժեքները, բայց հնարավոր չէ հեշտությամբ ազապտացվել տվյալ տարածությունը, քանի որ այն ներծծված է այնտեղ ապրող տեսակի նախնիների ոգով: Ահա այդ ոգին է կերտում պատկանելությունն ու ոչ քաղաքական կարգավիճակը կամ առկա սահմանները: Հարյուրամյակներ, եթե ոչ հազարամյակներ են անհրաժեշտ լանդշաֆտը կերպափոխելու համար: Վերջին հարյուրամյակում Նախիջևանի լիակատար հայաթափության արդյունքում սկսվեց նախկին սրբազան տարածքի ապասրբազնացումը (դեսակրալիզացիան), սակայն այնտեղ ապրող

բնիկ ժողովրդի ոգին դեռևս չի հեռացել իր կենսատարածքից: Կրկնենք. տեղական ժամանակ է պետք տարածությունը սեփականացնելու համար, քանի որ այն միայն բնական ու մարդկային ռեսուրս է: Այս իմաստով բացառիկ մի վկայություն ունի Ժ.-Բ. Տավերնիեն. «Երբ հայերը տեսնում են Արարատը, – գրում է ճանապարհորդը, – համբուրում են հողը, ապա աչքերը վեր բարձրացնելով խաչակնքվում և աղոթում են» (էջ 94): Ասվածը ցույց է տալիս տարածության և դրա ուղենիշի նկատմամբ այնպիսի մի վերաբերմունք, որի զգացական ենթատեքստի ձևավորման համար, հիրավի, հազարամյակներ են պետք և նույնքան էլ՝ այդ զգացումը մոռանալու համար: Ուրեմն, տարածությունը շնչում և ապրում է առաջին հերթին պատմական հիշողությամբ:

3. Եվ, ի վերջո, քննարկվող աշխատանքի երրորդ կարևորագույն արժանիքն այն է, որ պատմական տեղեկատվությունը բարձրացնում է ինտելեկտուալ դիսկուրսի մակարդակի, եթե կարելի է ասել մետամակարդակի: Մասնավորապես, հենվելով համապատասխան մասնագետների և տեսական դպրոցների ձեռքբերումների վրա՝ կոնկրետ հարցադրման օրինակով, հեղինակը քննարկման առարկա է դարձնում պատմական տեղական գործընթացների (Մ. Բլոկ, Ռ. Բարտ), սրբազան և հասարակ/պրոֆան տարածքների (Մ. Էլիադե) կամ կոլեկտիվ ու մշակութային հիշողության (Յ. Ասման) հետ կապված խնդիրները: Այս պարագայում հայագիտական հարցադրումը դառնում է համաշխարհային գիտություն համապատասխան դիսկուրսի առարկա:

Այսքան դրական հատկանիշների հետ՝ ցանկալի կլիներ, եթե գրքի նկարներն ավելի լավ որակի լինեին ու համարակալած հղումներ ունենային, գրականության ցանկում ինիցիալ-ազգանուն գրվածքը միասնական լիներ (երբեմն գրվում է ինիցիալը, երբեմն՝ հեղինակի անունը), իսկ տեքստում երրորդ գլխի ենթավերնագրերը համարակալած՝ ճիշտ այնպես, ինչպես բովանդակության մեջ է: Ինչևէ. իրականում արված է փայլուն աշխատանք, որն իր բովանդակության և ոճի մեջ ոչ միայն տեղեկատվական, այլև տեսական-մեթոդաբանական էական նորույթներ է պարունակում:

ԱՐՄԵՆ ԲՈՒՌՆՅԱՆ

Պ. գ. Թ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, տնօրենի տեղակալ՝ գիտական գծով: Գիտական հետաքրքրությունները՝ Առաջավոր Ասիայի ու Հայկական լեռնաշխարհի վաղ հասարակությունների նյութական և հոգևոր մշակույթ, սրբազան լանդշաֆտ, ինքնություն խնդիրներ: Հեղինակ է 3 մենագրության և շուրջ 100 հոդվածի: arsenbobokhyan@yahoo.com

Կոմիտասական (ժողովածու), հ. 3: Հատորի խմբ.՝ Ա. Ասատրյան, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2019, 267 էջ, 16 էջ նկ., նոտա*:

Բանալի բառեր՝ Արարատ Աղասյան, Աննա Ասատրյան, Աննա Արևշատյան, Անահիտ Բաղդասարյան, Աելիտա Դոլուխանյան, Ազատ Եղիազարյան, Լիլիթ Երնջակյան, Անուշավան Զաքարյան, Սուսաննա Հովհաննիսյան, Մհեր Նավոյան, Տաթևիկ Շախկուլյան, Լուսինե Սահակյան, Նազենիկ Սարգսյան, Մարիաննա Տիգրանյան:

Կոմիտաս Վարդապետի կյանքի և ստեղծագործական ժառանգության բազմակողմանի ուսումնասիրությունն ու հրատարակությունը մշտապես եղել է ՀՀ ԳԱԱ (նախկինում՝ ՀՍՆՀ ԳԱ) արվեստի ինստիտուտի գործունեության կարևորագույն ուղղություններից:



Այդ մեծածավալ ու երկարամյա աշխատանքի արգասիքն էր Կոմիտասի երկերի ակադեմիական հրատարակությունը 14 հատորով, որն իրագործվել է 1960–2006 թթ. (խմբագիրներ՝ Ռ. Աթայան և Ռ. Գյուղակյան): Դրան զուգահեռ Արվեստի ինստիտուտը զարկ է տվել նաև կոմիտասագիտության զարգացմանը. 1969 և 1981 թթ. գիտական խորհրդի որոշմամբ հրատարակվել են «Կոմիտասական» հոդվածների ժողովածուի առաջին և երկրորդ հատորները (խմբագիր՝ Ռ. Աթայան)¹, որոնցում ներառված են Կոմիտասի գործունեության, ստեղծագործական, բանահավաքչական, երաժշտագիտական և հասարակական-լուսավորչական ոլորտների տարաբնույթ հարցերին նվիրված ուսումնասիրություններ, ինչպես նաև՝ հուշագրական հրապարակումներ²:

2019 թ. Կոմիտասի ծննդյան 150-ամյա հոբելյանի շրջանակում Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ լույս ընծայվեց «Կոմիտասական» հոդվածների ժողովածուի երրորդ հատորը [խմբագրական խորհրդի կազմում ընդգրկված են Ա. Աղասյանը, Ա. Ասատրյանը (գլխավոր խմբագիր), Ա. Արևշատյանը, Ա. Դոլուխանյանը, Լ. Երնջակյանը և Մ. Նավոյանը]: Դրանում ամփոփված հոդվածներում

* Ներկայացվել է 15. IV. 2020 թ., ընդունվել է տպագրության 17. IV. 2020 թ.:

¹ Կոմիտասական, հ. 1, Երևան, 1969, Կոմիտասական, հ. 2, Երևան, 1981:

² Այդ մասին տե՛ս գրախոսվող ժողովածուի «Ինստիտուտի կողմից» ներածական խոսքում (էջ 5–6):

անդրադարձ է կատարվում Կոմիտասի կյանքին և ժամանակակիցներին, նրա ստեղծագործական ու բանահավաքչական գործունեության առանձին դրսևորումներին, երաժշտատեսական հայացքներին, ինչպես նաև լուսաբանվում են Կոմիտասի կերպարի արտացոլումները կերպարվեստում, գրականության մեջ ու հայ կոմպոզիտորական արվեստում:

ժողովածուն բացվում է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանի «Կոմիտասը հայ նկարիչների և քանդակագործների աչքերով» հոդվածով, որտեղ հեղինակը ներկայացնում է Կոմիտասին նվիրված՝ գեղարվեստական առավել նշանակալից արժեք ունեցող, ինչպես նաև վավերագրական կարևորություն ներկայացնող կերպարվեստի գործերը: Հոդվածագիրը դիտարկում է Կոմիտասի կերպարով ներշնչված մի շարք նկարներ և քանդակներ՝ ստեղծված XX դարասկզբից մինչ մեր օրերը:

Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանի «Արշակ Չոպանյանը Կոմիտասի ստեղծագործական ճակատագրում» հոդվածում լուսաբանվում է հանճարեղ երաժշտի մտերիմ բարեկամ և համախոհ՝ Ֆրանսահայ գրող, քննադատ, բանասեր, լրագրող ու հասարակական գործիչ Արշակ Չոպանյանի (1872–1954) անուրանալի վաստակը Կոմիտասի ստեղծագործական ճակատագրում: Հանգամանորեն ներկայացվում են երկու արվեստագետների անձնական ու ստեղծագործական առնչությունների դրվագները, արժևորվում է Ա. Չոպանյանի դերը Կոմիտասի առաքելությունը եվրոպական գիտական ու գեղարվեստական շրջանակներին ճանաչելի դարձնելու գործում: Մանրամասն քննելով Ա. Չոպանյանի՝ Կոմիտասի գործունեության գլխավոր ուղղությունները լուսաբանող հրատարակումները, որոնք հրատարակվել են եվրոպական և սփյուռքահայ մամուլում, Ա. Ասատրյանը բացահայտում է նրա մեծ վաստակը կոմիտասագիտության մեջ՝ ընդգծելով ու վերահաստատելով այն միտքը, որ հենց Ա. Չոպանյանին է վերապահված կոմիտասագիտության հիմնադրի կոչումը:

Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Արևշատյանը «Կոմիտաս Վարդապետ և Գրիգոր Գապասաքալյան. խաղագիտական առնչություններ» հոդվածում դիտարկում է XVIII դարավերջի և XIX դարասկզբի երաժիշտ-տեսաբան Գրիգոր Գապասաքալյանի տեսական աշխատությունների նշանակությունը Կոմիտասի խաղագիտական հետազոտություններում: Հեղինակը փաստում է, որ Գապասաքալյանի մի շարք սկզբունքներ և տեսակետներ ուղղորդիչ դեր են ունեցել Կոմիտասի համար նրա խաղաբանական որոնումների ընթացքում՝ ծառայելով որպես միջնադարյան երաժշտության գիտական ու գործնական տեսության յուրօրինակ հանրագիտարան:

Արվեստագիտության թեկնածու, դոցենտ Անահիտ Բաղդասարյանի «Հնչյունի նմանակումը կամ կետային նմանակումը (իմիտացիան) Կոմիտաս վարդապետի ստեղծագործություններում» հոդվածում քննութայան է առնվում նմանակման ինքնատիպ դրսևորումներից մեկը՝ հնչյունի կամ կետային նմանակումը Կոմիտասի խմբերգային երկերում:

Վերլուծելով կեսային նմանակման կիրառման կոմիտասյան սկզբունքները՝ հոգվածագիրը նշում է, որ դրանք, բխելով հայ մոնոդիկ երաժշտության ոճական առանձնահատկություններից, միաժամանակ որոշակի աղերսներ ունեն XIX դարի և, հատկապես, XX դարի դասական կոմպոզիտորական արվեստի տարբեր ուղղությունների հետ (պուլանտիլիզմ, դոդեկաֆոնիա, սոնորիկա և այլն):

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աելիտա Դուրխանյանի «Ֆրանսիացի նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Մակլերը Կոմիտասի մասին» հոգվածի առանցքում բազմափաստակ հայագետի հուշերն ու տպավորություններն են Կոմիտասի անձի, գործունեության և հայ երաժշտության մասին՝ ամփոփված «La musique en Arménie» («Երաժշտությունը Հայաստանում», 1917) գրքույկում: Ֆ. Մակլերը, մասնավորապես, ներկայացնում է Կոմիտասի մտքերը, տեսակետներն ու պարզաբանումները հայ մոնոդիկ երաժշտության տարբեր ճյուղերի (գեղջկական, հոգևոր, գուսանական) մասին:

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ազատ Եղիազարյանի հոգվածը նվիրված է Կոմիտասի կերպարի մարմնավորման առանձնահատկություններին բանաստեղծական արվեստում՝ Եղիշե Չարենցի «Կոմիտասի հիշատակին Requiem Aeternam» և Պարույր Սևակի «Անլուբլի գանգակատուն» պոեմներում:

«Բազմալեզվությունը և ինքնությունը հայ աշուղական ավանդույթում Կոմիտասի դրույթների լույսի ներքո» հոգվածում արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Լիլիթ Երնջակյանը լուսաբանում է երաժշտական ինքնության և հայկականության կոմիտասյան ըմբռնումները հայկականի ու արևելյանի առնչության համատեքստում: Թեև հայ ազգային երաժշտական ինքնության կոմիտասյան հարացույցը չէր ընդգրկում արևելյան տարբեր լեզուների կիրառմամբ բնորոշվող աշուղական երաժշտությունը, սակայն, ինչպես նշում է հեղինակը, «Կոմիտասի առաջնային գիտահետազոտական խնդիրները չեն սահմանափակել նրա ստեղծագործական հետաքրքրությունների լայն տեսադաշտը, որտեղ, բացի գեղջուկ և հոգևոր երաժշտությունից, ընդգրկված են միջնադարյան գուսանական, աշուղական և քաղաքային ժողովրդական երաժշտության նմուշները» (էջ 141):

Բանասիրական գիտությունների դոկտոր Անուշավան Զաքարյանը «Թոմաս Հարտմանը «Կոմիտասի անվան ընկերության» ստեղծման առկունքներում» հոգվածում ներկայացնում է 1919 թ. Թիֆլիսում ուսուցիչ կոմպոզիտոր և դիրիժոր Թոմաս Հարտմանի ջանքերով հիմնադրված «Կոմիտասի անվան ընկերության» գործունեությունը, որը նպատակ ուներ համերգ-երեկոների միջոցով պրոպագանդել ու տարածել կոմպոզիտորի երկերը, ինչպես նաև նյութական աջակցություն ցուցաբերել Փարիզում նրա կեցության և բուժման ծախսերն ապահովելու գործում: Ընկերությունը մեծ հաջողությամբ համերգներ է կազմակերպել Թիֆլիսում, Երևանում ու Բաթումում, ընդ որում՝ համերգների սկզբում Հարտմանը հանդես է եկել Կոմիտասի ստեղծագործական դիմանկարը ներկայացնող ներածական ելույթներով: Հոգվածում արժևորվում է

Հարտման-մտավորականի բացառիկ դերը՝ Կոմիտաս-արվեստագետին, հատկապես նրա կոմպոզիտորական արվեստն ըստ արժանվույն ու խորագնին ըմբռնելու, գնահատելու և ճանաչելի դարձնելու տեսանկյունից:

Բանասիրական գիտությունների դոկտոր Սուսաննա Հովհաննիսյանը «Կոմիտասը թուրմանյանական վավերագրերում» հոդվածում լուսաբանում է իր իսկ բնորոշմամբ՝ հայ ազգի հավաքական ամբողջութունը ներկայացնող երկու տարեկից արվեստագետների անձնական ու ստեղծագործական առնչությունները, որոնք արձանագրված են Հովհաննես Թուրմանյանի հեղինակած հոդվածներում, նրա զբաժ ու ստացած նամակներում, ինչպես նաև՝ Թուրմանյանի մասին հուշերում, նրա ընտանիքի անդամների արխիվային նյութերում, նրանց նամակներում և հուշերում: Հոդվածը համապարփակ պատկերացում է տալիս Կոմիտասի անձի և գործունեության թուրմանյանական արժեքման մասին, ներկայացնում երկու արվեստագետների ստեղծագործական ու անձնական առնչակցության վերաբերյալ մի շարք փաստեր, նաև՝ Կոմիտասի կենսագրությունն ամբողջացնող որոշ ուշագրավ տվյալներ:

Կոմիտասի տեսական հայացքներում և դրանց հետ սերտորեն փոխկապակցված ստեղծագործական գործունեության մեջ սկզբունքային նշանակություն ունեցող երկու իրողությունների քննությանն է դիմում արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Մհեր Նավոյանը «Կոմիտասի երաժշտատեսական երկու հիմնադրույթ (ընդհանուր բնութագիր)» հոդվածում: Քննվող հիմնադրույթներից առաջինը Կոմիտասի առաջարկած ձայնակարգային հնչյունաշարն է՝ իր որոշակի կառուցվածքային օրինաչափություններով, որը, ինչպես շեշտում է հեղինակը, Կոմիտասի հայտնագործությունն է և զուգահեռներով հանդերձ նույնական չէ որևէ այլ համակարգի հետ: Ըստ հոդվածագրի՝ կոմիտասյան երաժշտատեսական երկրորդ հիմնադրույթը «Ներդաշնակության հենքի» ուսմունքն է, որի կիրառության յուրօրինակ կերպն ընկած է Կոմիտասի բազմաձայնության կազմակերպման հիմքում:

Արվեստագիտության թեկնածու Տաթևիկ Շախկուլյանի «Կոմիտասը և «Սասնա ծռեր» էպոսի երգերը» հոդվածը նվիրված է «Սասնա ծռեր» էպոսի՝ Կոմիտասի գրառած երգերի վերլուծությանը: Հեղինակը դիտարկում է այդ երգերի բովանդակային մոտիվները, երաժշտական ոճի առանձնահատկություններն՝ ըստ ասացողների, մեղեդիական կառուցվածքի սկզբունքները, որոնք ներկայացվում են նաև համակարգչային վերլուծության մեթոդով (մեղեդիական գծագրերի գրաֆիկական պատկերման եղանակով), ընդ որում՝ վերլուծության ընթացքում հաշվի է առնվում նաև բանաստեղծական տեքստի իմաստային կապը մեղեդու կառուցվածքային որոշակի օրինաչափությունների հետ: Քննելով նշված երգերի կառուցվածքը հայ երաժշտության հնչյունաշարերի մասին Կոմիտասի հիմնաքարային տեսության դիրքերից՝ հոդվածագիրը ցույց է տալիս էպոսի երգերի կատարյալ համապատասխանությունն այդ տեսության հետ:

Արվեստագիտության թեկնածու, դոցենտ Լուսինե Սահակյանը «Կոմիտաս Վարդապետը և հայ կոմպոզիտորական դպրոցը» հոդվածում արժևորում է Կոմիտասի առաքելության պատմական դերն ու լուսաբանում Կոմիտասի ստեղծագործական աշխարհայացքի, նրա ոճական սկզբունքների նշանակությունը հայ արդի կոմպոզիտորական արվեստում: Հեղինակը դիտարկում է XX դարի երկրորդ կեսի և ժամանակակից հայ դասական երաժշտության տարբեր ներկայացուցիչների՝ Կոմիտասի հետ ունեցած տարաբնույթ կապերի ու առնչությունների շրջանակը:

Արվեստագիտության դոկտոր Նազենիկ Սարգսյանն «Անտունի»՝ առաջին բալետը Կոմիտաս Վարդապետի և Մեծ եղևունի մասին» հոդվածում անդրադառնում է XX դարի երկրորդ կեսի հայ երաժշտության դասական էլզար Հովհաննիսյանի «Անտունի» բալետին (բալետմաստեր Մաքսիմ Մարտիրոսյանի բեմադրությամբ)՝ քննության առնելով դրա ժանրային, ոճական, կառուցվածքային և այլ առանձնահատկությունները:

Ժողովածուն եզրափակվում է արվեստագիտության թեկնածու Մարիաննա Տիգրանյանի «Հարսանեկան օֆիտի երգերը Կոմիտասի գրառումներում» հոդվածով: Հեղինակը ներկայացնում է Կոմիտասի գրառած հարսանեկան օֆիտի երգերի՝ ծիսական արարողակարգի հետ կապված մանրամասները, անդրադառնում երգերի տեքստերի բովանդակությանը, վերլուծում բանաստեղծական տեքստի և մեղեդու կառուցվածքային սկզբունքները, երաժշտատոճական առանձնահատկությունները:

Ամփոփելով՝ նշենք. «Կոմիտասական» հոդվածների ժողովածուի երրորդ հատորն արժեքավոր համալրում է կոմիտասագիտության ոլորտում: Հուսով ենք՝ սույն շարքը կլինի շարունակական ու հետագայում ևս կհարստացնի Կոմիտասի կյանքի և գործունեության տարբեր շերտերի ուսումնասիրությունը նոր ու արժեքավոր գիտական հրապարակումներով:

ԳԱՅԱՆԵ ԱՄԻՐԱՂՅԱՆ

Արվ. թ., ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունը՝ երաժշտական միջնադարագիտություն: Հեղինակ է 1 մենագրություն և 10-ից ավելի գիտական հոդվածի: gayane.amiraghyan@gmail.com

ՄԵԾԱՆՈՒՆ ԳԻՏՆԱԿԱՆԸ, ԱԶԳԱՅԻՆ–ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉԸ
(Գ. Բ. Ղարիբջանյանի ծննդյան 100-ամյակի առթիվ)*

«Այժմ, երբ լրանում է Ձեր 75 տարին, ավելի պարզ է երևում, թե որքան համապատասխանում է Ձեր գործունեությունը մեր ժողովրդի և հայրենական գիտության շահերին: Ձեր մեծ եռանդը թույլ է տալիս Ձեզ ուղղել հասարակության ուշադրությունը դեպի գիտական, հասարակական, քաղաքական այն հարցերը, որոնք այսօր կարևոր են մեր ժողովրդի համար»:

ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ



Լրացավ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Գևորգ Բագրատի Ղարիբջանյանի ծննդյան 100-ամյակը: Սերունդների հիշողության մեջ նա հետք է թողել իբրև Անդրկովկասի սոցիալիստական, կոմունիստական կազմակերպությունների և հեղափոխական շարժումների, հայ նշանավոր գործիչների կյանքի ու գործունեության, ազգային-ազատագրական պայքարի ուսումնասիրման և լուսաբանման, հայ-ուսական հարաբերությունների պատմության հարցերի,

Հայկական հարցի ու Հայոց ցեղասպանության բնագավառներում խոշոր վաստակ ունեցող, գիտակազմակերպչական հմտությամբ առանձնացող, քաղաքական ուրույն ճանապարհ անցած անձնավորություն:

Գ. Ղարիբջանյանը ծնվել է 1920 թ. մայիսի 5-ին Ալեքսանդրապոլ քաղաքում (հետագայում՝ Լենինական, այժմ՝ Գյումրի)՝ մանկավարժ, հրապարակախոս, բուլչեիկ, Մայիսյան ապստամբության ղեկավարներից Բագրատ Ղարիբջանյանի ընտանիքում: Մինչև 1934 թ. ապրել ու սովորել է Լենինականում, ապա տեղափոխվել է Երևան, 1935–1937 թթ. ուսումը շարունակել Երևանի Ն. Կրուպսկայայի անվան (այժմ՝ Ն. Աղբալյանի) միջնակարգ դպրոցում: 1937 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) պատմության ֆակուլտետ: Նկատենք, որ դեռևս ուսանողական տարիներին ի հայտ է եկել նրա պատմագիտական կողմնորոշումը. 1941-ին ուսանողական գիտական նստաշրջանի նյութերի ժողովածուում տպագրվել է «Ալեքսանդրապոլի բոլ-

* Ներկայացվել է 05. III. 2020 թ., ընդունվել է տպագրության 25. III. 2020 թ.:

չևիկյան կազմակերպության գործունեությունը 1917 թվին» ծավալուն գեկուցումը: 1941-ի հուլիսին ԵՊՀ-ի չորրորդ կուրսի գերագանցիկ, Ստալինյան թոշակառու ուսանողը կամավոր մեկնել է բանակ՝ կարճատև զինվորական դասընթացներ անցնելով Վրաստանի Թեթլի քաղաքի ռազմահետևակային ուսումնարանում, լեյտենանտի կոչումով որպես գնդացրային դասակի, ապա՝ վաշտի հրամանատար մարտնչել է Անդրկովկասյան, Կալինինյան և Արևմտյան ռազմաճակատներում: Ի դեպ, հենց պատերազմի դաշտում 1942 թ.՝ իր ծննդյան օրը, ընդունվում է կոմունիստական կուսակցության շարքերը և մինչև կյանքի վերջը հավատարիմ մնում նրա գաղափարներին: 1943 թ. հոկտեմբերին Ռուդնյայի, Սմոլենսկի ազատագրման համար մղված մարտերում Գ. Ղարիբջանյանը վիրավորվել է, ապաքինվելուց հետո շարունակել զինվորական ծառայությունը: Եղել է զինվորական թղթակից Անդրկովկասյան ռազմաճակատի «ԲԳԿԲ մարտիկ» (հետագայում՝ «Լենինյան դրոշ») թերթում, պատերազմի ավարտից հետո ծառայել է 89-րդ հայկական Թամանյան դիվիզիայի «Կարմիր զինվոր» թերթում՝ դրսևորելով ժուռնալիստ-հրապարակախոսի փայլուն ունակություն: Այդ ընթացքում զուգահեռաբար սովորել է ԵՊՀ-ում, ընդունվել ասպիրանտուրա:

Գ. Ղարիբջանյանը գորացրվել է 1948-ի սեպտեմբերին¹: Նշենք, որ, լինելով Հայրենական մեծ պատերազմի մասնակից և վետերան, նա սրբություն է պահպանել պատերազմում զոհվածների հիշատակը, իր մարտական ընկերների սխրանքների կենդանի հիշողությունը, որոնց բացմիցս անդրադարձել է գիտական-հրապարակախոսական գործերում, հրապարակային ելույթներում:

Ասպիրանտուրան ավարտելուց հետո Գ. Ղարիբջանյանը 1948 թ. պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն՝ «Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կազմակերպությունը 1917–1920 թվականներին» թեմայով, ստանում պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Հրատարակում է իր առաջին ուսումնասիրությունները՝ նվիրված հայ ժողովրդի նոր և նորագույն ժամանակների սոցիալական ու ազգային-ազատագրության պատմության հարցերին՝ «Պայքար սովետական իշխանության հաղթանակի համար Հայաստանում (1917–1921 թթ.)» (1953 թ.), «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռեվոլյուցիան հայ ժողովրդի ազատարարն է» (1954 թ.), «Մայիսյան ապստամբությունը Հայաստանում 1920 թվականին» (1955 թ.) և այլն: 1955 թ. Գ. Ղարիբջանյանը պաշտպանում է դոկտորական ատենախոսություն՝ «Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարում» թեմայով, որը նույն թվականին հրատարակում է հայերեն և ռուսերեն: Մենագրությունը ներկայացնում է Հայաստանի տնտեսական ու քաղաքական կացությունը XIX դարավերջերին և XX դարասկզբներին, ցույց է տալիս սոցիալիստական հե-

¹ Տե՛ս Կ. Ա. Հարությունյան, Մ. Գ. Սահակյան. Նրանք մարտնչել են հանուն Հայրենիքի, Երևան, 1988, էջ 180–181:

ղափոխության նշանակությունը հայ ժողովրդի պատմական ճակատագրում:

Գ. Ղարիբջանյանին 1957 թ. շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում: 1965 թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1971-ին՝ ակադեմիկոս: 1977–1982 թթ. Գ. Ղարիբջանյանը եղել է ՀԽՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ապա՝ Պատմության ինստիտուտի Հայ հասարակական մտքի և մամուլի պատմության բաժնի վարիչ: 1985 թ. մինչև 1999 թ. ղեկավարել է ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների գիտական տեղեկատվության կենտրոնը: 1965–1976 թթ. եղել է ԽՍՀՄ բարձրագույն և միջնակարգ կրթության մինիստրությանն առընթեր բարձրագույն ատեստացիոն հանձնաժողովի անդամ: Գլխավորել է ԳԱ նախագահությանն առընթեր Արտասահմանյան գաղափարական հոսանքների պրոբլեմային խորհուրդը (1978 թ.) և ԽՍՀՄ ԳԱ «Միջազգային բանվորական և ազգային-ազատագրական շարժումների պատմության» կոմպլեքսային պրոբլեմի գիտական խորհրդի հայկական սեկցիան (1979 թ.), եղել է մի շարք գիտական խորհուրդների անդամ: Գիտական-հետազոտական աշխատանքներին զուգահեռ ծավալել է գիտամանկավարժական գործունեությունը: 1947–1999 թթ. դասախոսել է ԵՊՀ-ում և այլ բուհերում:

Գիտամանկավարժական աշխատանքը Գ. Ղարիբջանյանը հաջողությամբ զուգակցել է կուսակցական ու պետական պաշտոնների հետ: 1948–1950 թթ. եղել է Հայաստանի ԼԿԵՄ Կենտկոմի քարտուղար, 1951–1954 թթ.՝ ԽՄԿԿ Կենտկոմին առընթեր Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի ԽՄԿԿ պատմության սեկտորի վարիչ, 1968–1977 թթ.՝ նույն մասնաճյուղի տնօրեն: 1954–1961 թթ. Գ. Ղարիբջանյանը Հայաստանի կոմկուսի Կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի, գիտության, կուլտուրայի և ուսումնական հաստատությունների բաժինների վարիչի տեղակալ էր, դպրոցական բաժնի վարիչ: Ավելի քան յոթ տարի՝ 1961–1968 թթ., եղել է ՀԿԿ Լենինականի քաղկոմի առաջին քարտուղար: Ընտրվել է ԽՄԿԿ XXII և XXIII համագումարների պատգամավոր, ԽՍՀՄ VI–VII, ՀԽՍՀ VIII–IX գումարումների Գերագույն խորհրդի պատգամավոր, 1954–1981 թթ.՝ ՀԿԿ ԿԿ անդամ, 1966–1969 թթ.՝ ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի անդամության թեկնածու:

Իսկապես, զարմանալ կարելի է, թե նման պատասխանատու պաշտոններում գտնվելով, ինչպես է Գ. Ղարիբջանյանը կարողացել գրել ու տպագրել 75 գիրք ու գրքույկ, շուրջ 400 գիտական, հրապարակախոսական, հուշագրական և գրական հոդվածներ²:

Բազմիցս գրվել է, որ Գ. Ղարիբջանյանը, ապրելով խորհրդային իշխանության տարիներին, իր գիտական հետաքրքրությունների դաշտ է բերել թեմաներ ու խնդիրներ, որոնց մի մասն այսօր վերանայվում և վերարժևորվում է, սակայն չի կորցնում գիտական արժեքը: Քանզի գրելով աշխատություններ Անդրկովկասում հեղափոխական շարժումների

² 1941–1982 թթ. Գ. Ղարիբջանյանի աշխատությունների ժամանակագրական ցանկը տե՛ս Գևորգ Բագրատի Ղարիբջանյան, Երևան, 1982, էջ 39–71:

մասին՝ պատմաբանը երբեք կույ չգնաց գիտական ու գաղափարախոսական կաշկանդումներին, մշտապես հայացք հառեց ազգային-ազատագրական պայքարին՝ դրանք հաճախ գուգադրելով հեղափոխական շարժումներին: Դրանով իսկ Գ. Ղարիբջանյանը խորհրդային պատմագիտության մեջ ձևավորեց մի նոր գիտական հայեցադրույթ, ըստ որի՝ հեղափոխական շարժումներն ու ազգային-ազատագրական պայքարը շատ հաճախ ունենին նույն խնդիրները, նույն ենթատեքստերը: Անդրադառնալով ազգային ազատագրության խնդիրներին, անգամ այնպիսի աշխատությունների մեջ, ինչպիսիք են «Վ. Ի. Լենինը և Անդրկովկասը» (եռահատոր, 1970–1975 թթ.), «Վ. Ի. Լենինը և Անդրկովկասի ժողովուրդների ազատագրումը» (1960 թ.), «Վ. Ի. Լենինը և Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները (1893–1924)» (1967 թ.), «Վ. Ի. Լենինը և հայ գործիչները» (1980 թ.) և այլն, պատմաբանն առաջին պլան է մղել սեփական ժողովրդի գոյության հարցերը³:

Լինելով Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի տնօրեն՝ Գ. Ղարիբջանյանը բարձրաձայնում էր ազգային-ազատագրության մասին [«Հայ ժողովրդի ազատագրական պայքարը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին» (1986 թ.)], իր աշխատություններում ներկայացնում ազգային գործիչների, որոնց անուններն արգելքի տակ էին: 1989-ին գրելով բուլղար ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի մասին («Ակնարկներ հայ-բուլղարական բարեկամության պատմության»)՝ ակադեմիկոսն այդ շարժումը միջոց էր դարձրել անդրադարձ կատարելու Անդրանիկ Օզանյանին, ներկայացնելու մեր ժողովրդի պատմության մեջ հիբրավի եզակի ժողովրդական առաջնորդին: Ուսումնասիրվող նյութի քաջ իմացության հետ մեկտեղ՝ Գ. Ղարիբջանյանը խորհրդանշում էր նաև գիտական խիզախությունը: Հենց դա էլ նրան տարավ մի շարք թեմաների հետազոտմանը, ազգային խնդիրների կարևորմանը: Գիտական խիզախման, ազգային-ազատագրական պայքարին նվիրվածության արգասիք էր նաև նրա «Տարոնի արծիվը» (1996 թ.) աշխատությունը, որը նվիրված էր Մախյուտոյին՝ Սմբատ Բորոյանին, մի անհատականության, ով իրենով պայմանավորեց ֆիդայական շարժման բազմաթիվ ձեռքբերումներ: Չմոռանանք նաև Գ. Ղարիբջանյանի համարձակ ու անաչառ մոտեցումները մեր ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող, Ադրբեջանի կազմում գտնվող Նախիջևանի ԻՆՍՆ-ն և Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայկական ԽՍՀ-ին միացնելու հարցում ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Քոչինյանին 1966 թ. նոյեմբերի 12-ին ուղղված գրությունը՝ ԽՄԿԿ Կենտկոմ ուղարկվելիք տեղեկանքի կապակցությամբ⁴:

³ Այս թեմայով Գ. Ղարիբջանյանի ուսումնասիրությունների մասին մանրամասն տե՛ս Ա. Ն. Մնացականյան. Գեորգ Ղարիբջանյան (ծննդյան 60-ամյակի առթիվ). – ՊԲՀ, 1980, № 2, էջ 246–247, Գեորգ Բագրատի Ղարիբջանյան, էջ 13–16:

⁴ Տե՛ս Ակադեմիկոս Գեորգ Ղարիբջանյան: Գիրքը կազմել և հրատարակություն են պատրաստել Բագրատ և Ստեփան Ղարիբջանյանները, Երևան, 2015, էջ 23–25: Նկատենք, որ Գ. Ղարիբջանյանի 95-ամյակին նվիրված այս ժողովածուն ընդգրկում է նմուշներ նրա գիտական ու գրական ժառանգության:

Ղեկավարելով ԳԱ հասարակական գիտությունների գիտական տեղեկատվության կենտրոնը՝ Գ. Ղարիբջանյանը լայնածավալ աշխատանք է կատարել հայագիտության բնագավառում: Այստեղ նրա ղեկավարությամբ կատարվել են այնպիսի ուսումնասիրություններ, ինչպիսիք են՝ «Հայոց պատմության հիմնահարցեր», «Հայկական հարցը և Հայոց ցեղասպանությունը», «Արաբական աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին» և այլն: Ղարաբաղյան շարժման առաջին տարիներին՝ 1989 թ., նրա խմբագրությամբ լույս տեսավ «Վերակառուցումը և ազգային հարաբերությունները (Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների շուրջ)» ուսումնասիրությունը:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ պատմաբանին հետաքրքրել են XIX դարավերջը և XX դարասկիզբը՝ մեր պատմության բարդագույն շրջանները, որոնք գծվարին տարիներ էին քաղաքական ու կուսակցական խմորումներով, գաղափարախոսական հակասություններով: Գ. Ղարիբջանյանի բոլոր կենսագիրները նշել են, որ նա պատմությանն ու պատմականությանն անդրադառնում էր յուրովի՝ հավատարիմ մնալով պատմական իրողություններին, միաժամանակ ներկայացնում իր սեփական մեկնաբանությունները՝ համադրականության շնորհիվ հասնում պատմաշրջանի ամբողջական ընկալմանը: Պատմություն և իրադարձություն, պատմություն ու անհատ՝ ահա այն գիտական հետազոտման շրջանակը, որով Գ. Ղարիբջանյանը ներկայացնում է Ստեփան Շահումյանին, Բոգդան Կուլենյանցին, Ալեքսանդր Մյասնիկյանին, Ստեփան Արավերդյանին և շատ ուրիշներին: Խորհրդային պատմագիտությունը գրեթե անդրադարձ չէր կատարել Ստ. Շահումյանին և Ալ. Մյասնիկյանին, կցկտուր էին նրանց մասին պատկերացումները, խեղաթյուրված էին Բաքվի կոմունային գործունեությանը վերաբերող տեղեկությունները: Ընդգծված ու կարևորված չէր Ստ. Շահումյանի դերը, մասնավորապես, Անդրկովկասի հեղափոխական իրադարձությունների ձևավորման և մարքսիզմի տարածման գործում: Գ. Ղարիբջանյանը, համակողմանիորեն ներկայացնելով ինչպես Ստ. Շահումյանի կենսագրությունը, այնպես էլ Բաքվի կոմունայի պատմական նշանակությունը, առաջինը մեր պատմագիտության մեջ վերջինիս գոյության մեջ տեսավ ու արժևորեց հայապահպանության գործում, ինչին հետագայում անդրադարձավ մեկ անգամ ևս՝ գրելով «Բաքվի կոմունան ի նպաստ հայապահպանության» բովանդակալից և ուշագրավ հոդվածը⁵, որը նոր լույս է սփռում Բաքվում հայ ավանդական կուսակցությունների գործունեության վրա: Խորհրդային տարիներին արգելվում էր գրել Հնչակյան և Դաշնակցական կուսակցությունների դրական դերի մասին, մինչդեռ Գ. Ղարիբջանյանը, օգտագործելով հարուստ աղբյուրագիտական նյութ,

յունից, ժամանակակիցների հոդվածներ և հուշ-բնութագրումներ նրա մասին, ինչպես նաև՝ կյանքին ու գործունեությանն առնչվող փաստաթղթեր, նյութեր,⁵ խոստեն լուսանկարներ:

⁵ Տե՛ս ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1999, № 1, էջ 34–47:

իրական գնահատական տվեց Դաշնակցության ու Բաքվի կոմունայի կապին, հայերի անվտանգությունը միտված համատեղ քայլերին:

Գ. Ղարիբջանյանը մի քանի առիթներով գիտական հետաքրքրությունների կենտրոն է բերել զորավար Անդրանիկ Օզանյանին: Նրա հանդեպ սերն այնքան մեծ էր, որ, լինելով Լենինականի կուսքաղկոմի առաջին քարտուղար, Հայաստանում առաջին անգամ փողոց անվանակոչեց մեծ զորավարի անունով՝ Ա. Օզանյան՝ չվախենալով ասեկոսեններից ու հետապնդումներից: Ընդ որում, այդ փողոցը ձգվում էր դեպի հայ-թուրքական սահման՝ դեպի Կարս: Անդրանիկի կյանքն ու գործն ակադեմիկոսի համար յուրատեսակ գիտական հավատամք դարձան. 1990 թ. հրատարակեց «Ժողովրդական հերոս Անդրանիկը» մենագրությունը (որը, ի դեպ, նման վերնագրով առաջին գիրքն է՝ տպագրված Խորհրդային Հայաստանում), երբ ձևավորվում էր մի նոր ազգային-ազատագրական պայքար՝ Ղարաբաղյան շարժումը: Նորահայտ փաստառատ նյութերի միջոցով պատմաբանը վեր հանեց ու պատասխանեց բազմաթիվ պատմական խրթին հարցերի, լուսաբանեց, մասնավորապես, Անդրկովկասում ազգամիջյան բախումների դրդապատճառները, թուրք-թաթարական նկրտումները: Եվ Ղարիբջանյանի աշխատությունը, որը նաև լույս տեսավ ռուսերեն, պատմության ու ներկայի ինքնատիպ գուգակցումն էր. այդ գրքի միջոցով բացահայտվում էին պատմական այնպիսի իրողություններ, որոնք նպաստում էին նաև Ղարաբաղյան հիմնահարցի ամբողջական ընկալմանը: Ի դեպ, անուրանալի է Գ. Ղարիբջանյանի ջանքերը «Զորավար Անդրանիկ» հայոց համազգային միությունից ստեղծման գործում (եղել է միությունից նախաձեռնող խմբի, ապա՝ նախագահության անդամ, ընտրվել միությունից պատվավոր նախագահ):

Իր գիտակցական ողջ կյանքն ապրելով խորհրդային իշխանության օրոք՝ Գ. Ղարիբջանյանը դարձավ այդ իրականության առաջամարտիկներից մեկը, ամեն ինչ ծառայեցրեց իր ժողովրդի բարգավաճմանը, ձեռքբերումների արձանագրմանը: Ի տարբերություն շատերի, նա բռնապետություն չէր համարում կոմունիստական իշխանությունը, ուրախանում էր, որ հատկապես այդ տարիներին հնարավոր դարձավ վերածնել Հայաստանը, ստեղծել հզոր գիտություն և մշակույթ: Նա նաև անկախ պետականության շրջանի դեմքերից էր, որովհետև իր աշխատություններով նպաստեց անկախության գաղափարի ամրապնդմանը: Ազգային պետության գլխավոր հիմնախնդիրներից մեկը՝ Յեղասպանության ճանաչումը, նրա համար սոսկ կոչ ու կարգախոս չէր, ըստ այդմ՝ մի շարք աշխատություններ նվիրեց մարդկության դեմ գործված մեծագույն ոճիրներից մեկին և Յեղասպանության իրողության արժևորումը գիտական շրջանառության մեջ դրեց օտարազգի մտավորականների գնահատումներով, նրանց հաղորդած տեղեկությունների հետազոտմամբ:

Ականավոր պատմաբանը «Հայոց ցեղասպանությունը և համաշխարհային հասարակայնությունը» վերնագրով ռուսերեն մենագրության մեջ (1989 թ.) անդրադարձ է կատարել Յեղասպանության փաստի համաշխարհային արժևորմանը, ներկայացրել առաջադեմ մտավորականության կարծիքն ու վկայությունները: Հայերի գանգվածային կոտորածների դեմ

բողոքի ձայն են բարձրացրել Մաքսիմ Գորկին, Վալերի Բրյուսովը, Սերգեյ Գորոդեցկին (Ռուսաստան), Անատոլ Ֆրանսը, Անտուան Մեյեն, Ժակ դը Մորգանը (Ֆրանսիա), Արմին Վեգները, Յոհաննես Լեփսիուսը, Հենրի Մորգենթհաուն, Յոզեֆ Մարկվարտը (Գերմանիա) և շատ ուրիշներ: Ըստ էության, Գ. Ղարիբջանյանն առաջիններից է գիտական շրջանառության մեջ դրել մամուլում, տարբեր աղբյուրներում սփռված նրանց նյութերը, դրանց միջոցով ներկայացրել Ցեղասպանության դատապարտման ու ճանաչման առաջին արձագանքները:

Ուրույն գործ է նաև «Հայոց ցեղասպանությունը պատմության դատաստանի առաջ» վերնագրով ռուսերեն ուսումնասիրությունը (1996 թ.): Գրքույկը բացվում է ռուս անվանի գրող, հրապարակախոս, Արևմտյան Հայաստանում հայկական կոտորածներին ակնատես Սերգեյ Գորոդեցկու «Հայաստանին» հայտնի ձոն-բանաստեղծությամբ: Իբրև բնաբան՝ հեղինակն ընտրել է Անատոլ Ֆրանսի խոսքը. «Ոնցոտված է հայոց ոգին, բայց այն կրկին կհառնի: Այն քիչ արյունը, որ նա դեռ պահել է իր երակներում, գերթանկ արյուն է, որից կծնվեն հերոսական սերունդներ: Մի ժողովուրդ, որը չի ուզում մեռնել, չի մեռնի երբեք»: Անշուշտ, պատահական չէր, որ ուսումնասիրության համար նման բնաբաններ էր ընտրում պատմաբանը. այդպես նա Ցեղասպանության միջազգային ճանաչման համար նախադրյալներ էր ստեղծում, իր ուսումնասիրությունից մեջ տալիս այս եզրի բացատրությունը, օգտագործում բազմաթիվ նոր ի հայտ եկած փաստաթղթեր ու վկայություններ:

Գ. Ղարիբջանյանի գիտական ահռելի կենսագրությունը համադրվել է նաև աշխատանքային հարուստ կենսագրությունը, որի ամենապայծառ ու հագեցած շրջանն առնչվում է Լենինական-Գյումրուն, երբ 1960-ականներին եղավ իր ծննդավայր քաղաքի ղեկավարը, նրա վերաշինության նախաձեռնողը: Բազմաթիվ անդրադարձներ են եղել Գ. Ղարիբջանյանի գործունեության այս շրջանին, ներկայացվել է այն հսկայական ազգաչեն աշխատանքը, որը կատարել է⁶:

Գ. Ղարիբջանյանի գիտնական անձի, քաղաքացու, հայի, մարդ-անհատականության դիմանկարն անկատար կլիներ, եթե չհիշատակեինք մի կարևորագույն փաստ. հայտնի իրողություն է, որ նաև նրա ջանքերի շնորհիվ 1990-ականների սկզբին հիմնավորվեց Գիտությունների ակադեմիայի պահպանման անհրաժեշտությունը:

Հատուկ ուզում ենք ընդգծել Գ. Ղարիբջանյանի կողմնորոշումը. այն է՝ հայ ժողովուրդն ունեցել է և ունի մշտական ու հուսալի բարեկամ՝ ի դեմս ռուս մեծ ժողովուրդի: Հիշենք ու հիշեցնենք. երբ Ղարաբաղյան շարժման օրերին Հայաստան ներխուժելու թուրքական իրական վտանգ կար, նա այն քչերից էր, ով սթափ գնահատելով իրավիճակը՝ հրապարակայնորեն հայտարարեց. «Երբ ռուսական տանկերը Հայաստանում են, հայը կարող է հանգիստ լինել»: Դրա խոստովանությունները է, որ այսօր Հայաստանի սահմանները հայ գինիորների հետ պահպանում են

⁶ Մանրամասն տե՛ս «Գյումրի: Քաղաքը և մարդիկ» ժողովածուում (Երևան, 2009 թ.) և Հ. Կ. Գաբրիելյանի «Լենինական» գրքում (Երևան, 1984 թ.):

ուսական զորքերը: Լինելով այդ տարիներին ծնունդ առած «Ռուսաստանի բարեկամներ» հասարակական կազմակերպության հիմնադիրներից մեկը՝ կարողացավ կամուրջ դառնալ նորանկախ Հայաստանի և Ռուսաստանի գիտնականների, մտավորականների հետ համագործակցության, բարեկամական կապերի ամրապնդման գործում:

Գ. Ղարիբջանյանն առաջին հայ պատմաբաններից էր, որի աշխատությունները տպագրվել են Ռուսաստանում, Ուկրաինայում, Վրաստանում, Ադրբեյջանում, Անգլիայում, Գերմանիայում, Լեհաստանում, Հունգարիայում, Բուլղարիայում: Տիրապետելով մի քանի լեզուների (գերմաներեն, մասամբ՝ անգլերեն, լեհերեն, բուլղարերեն)՝ բազմիցս մասնակցել է միջազգային գիտաժողովների, գիտական գործուղումներով (սկսած 1956 թ.) եղել է աշխարհի բազմաթիվ երկրներում: Մեծ ճանաչում ուներ Խորհրդային Միությունում. նրա հետ մարդկային սերտ հարաբերություններ էին հաստատել ինչպես հայ, այնպես էլ ռուս նշանավոր գիտնականներ, գրողներ, արվեստագետներ, ռազմական ու պետական գործիչներ: Ձերմ բարեկամություն էր կապված մարշալ Հովհաննես Բաղրամյանի, Համազասպ Բաբաջանյանի, Անաստաս և Արտեմ Միկոյանների, Տիգրան Պետրոսյանի հետ: Նրան բարձր են գնահատել Մարտիրոս Սարգսյանը, Դմիտրի Նալբանդյանը, Նիկողայոս Նիկողոսյանը, Արամ Խաչատրյանը, Վալենտինա Տերեշկովան, Մստիսլավ Ռոստրոպովիչը, Վասիլի Սոլովյով-Սեդոյը, Լյուդմիլա Ջիկիրյան, Դավիթ Օյստրախը, Ռասուլ Համզատովը և շատ ուրիշ անվանի դեմքեր: Գ. Ղարիբջանյանն ուշագրավ, անաչառ հուշագրություններ ունի Ավետիք Իսահակյանի, Արամ Խաչատրյանի, Վիկտոր Համբարձումյանի, Մարտիրոս Սարգսյանի, Հովհաննես Բաղրամյանի, Հովհաննես Շիրազի, Պարույր Սևակի և նշանավոր այլ գործիչների մասին, որոնց հետ եղել է մտերիմ հարաբերությունների մեջ:

Ակադեմիկոսը հեղինակություն ուներ նաև Սփյուռքի տարբեր շրջանակներում: Առաջիններից մեկն էր, ով հրավիրվեց մասնակցելու Ցեղասպանության 75-ամյակին նվիրված ռեկոնչման արարողություններին՝ որպես հայրենասիրության պատվավոր հյուր. կարգաց դասախոսություններ՝ այդպես նաև Ցեղասպանագիտության հայաստանյան ձեռքբերումները հասանելի դարձնելով Սփյուռքին:

Գ. Ղարիբջանյանը, ինչպես ասվեց, գիտություն անխոնջ կազմակերպիչ էր, վաստակաշատ մանկավարժ: Շուրջ կես դար ԵՊՀ-ում և հանրապետության այլ բուհերում դասավանդել է հայոց պատմություն, վարել հատուկ դասընթացներ, մեծապես աջակցել երիտասարդ գիտնական ու մանկավարժական կադրերի պատրաստման գործին: Բազմիցս եղել է թեկնածուական ու դոկտորական ատենախոսությունների ընդգրկմախոս:

Մեծանուն գիտնականը ճանաչված ու անխոնջ հասարակական գործիչ էր՝ Ժուռնալիստների (1960 թ.) և Գրողների (1976 թ.) միությունների, Հայրենական մեծ պատերազմի վետերանների միության նախագահությամբ:

յան անդամ, Սովետահունգարական բարեկամության ընկերության հայկական բաժանմունքի հիմնադիր և անփոփոխ նախագահ (1968 թ.), «Գիտելիք» ընկերության նախագահության ու ԽՍՀՄ Փիլիսոփայական ընկերության (1975 թ.) անդամ: Օժտված բնատուր ձիրքով՝ գրել է բանաստեղծություններ, առակներ, երգիծական պատումներ, հուշեր⁷:

Հայրենիքը բարձր է գնահատել Գ. Ղարիբջանյանի գործունեությունը. Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի գործում ցուցաբերած խիզախության, մարտական ու աշխատանքային ծառայությունների համար փոխգնդապետը պարգևատրվել է 30 շքանշանով ու մեդալներով, այդ թվում՝ «Խիզախության համար» մեդալով, «Հայրենական պատերազմի II աստիճանի» շքանշանով, 2 անգամ արժանացել է Աշխատանքային կարմիր դրոշի (1960, 1966 թթ.), «Պատվո նշան» (1971 թ.), «Ժողովուրդների բարեկամության» շքանշանների (1980 թ.), Ստ. Շահումյանի անվան թիվ 1 մրցանակի (1979 թ.), Խ. Աբովյանի, Ս. Ի. Վավիլովի մեդալների, «Գեորգի Դիմիտրով» հոբելյանական մեդալի: Եղել է Քուլթայիսի (1964 թ.) և Լենինականի (1968 թ.) պատվավոր քաղաքացի:

Ավելացնենք. Գ. Ղարիբջանյանը լայնախոհ մտավորական էր, կյանքի մարդ, մեծ հումորի տեր, պարզ ու հասարակ, անկեղծ և անմիջական, բարյացակամ անձնավորություն, ընտանիքին անձնատուր եղած մարդ, կենցաղում ծայրահեղ համեստ:

Գ. Ղարիբջանյանը փոթորկումներով լեցուն կյանք է ունեցել, եղել են նաև վայրիվերումներ, նյութվել են դավեր, սակայն անկոտրում կյանքով՝ հպարտությամբ նայել է ապագային: Դրա խոստուն վկայություն են 1975 թ. նրա գրած հետևյալ տողերը.

Ձեր խորամանկ ու կեղծավոր դավերի դեմ,
Խարդախության ու մեղրածոր կոչերի դեմ,
Ես պարզում եմ անկեղծության սուրբ դրոշս,
Թեկուզ ընկնեմ հպարտության սուրը ձեռքիս,
Իմ մայր հողը ինձ չի դավի,
Ժողովուրդն իր ջերմ սրտում ինձ կպահի,
Ես հպարտ եմ իմ անկոտրում հպարտությամբ⁸:

Մեծանուն գիտնականն ու ազգային-պետական գործիչը վախճանվեց 1999 թ. դեկտեմբերին:

Ընթերցողի մոտ բնական հարց կարող է ծագել՝ ինչո՞ւ է հենց տողերիս հեղինակը խոսք ասում ակադեմիկոս Գ. Ղարիբջանյանի 100-ամյակի առթիվ: Ասեմ՝ 1977 թվականից աշխատելով Գիտությունների ակադեմիայի համակարգում՝ նախ Հրատարակչության խմբագիր, ապա «Լրաբեր հասարակական գիտություններ»-ի ամսագրի, այնուհետև «Պատմա-

⁷ Տե՛ս Ակադեմիկոս Գևորգ Ղարիբջանյան, էջ 26–81:

⁸ Նույն տեղում, էջ 56:

բանասիրական հանդես»-ի պատասխանատու քարտուղար, հասկանալի է՝ տարիներ շարունակ չփվել եմ ակադեմիկոս Գ. Ղարիբջանյանի հետ, զգացել նրա ջերմ, ուշադիր և հոգատար վերաբերմունքն անձիս հանդեպ՝ և՛ որպես շարքային խմբագիր, և՛ որպես գիտաշխատող: Բացի այդ, նրա որդիների, ակադեմիայի աշխատակիցները՝ փրիստոփայական գիտությունների թեկնածու Բագրատ և պատմական գիտությունների թեկնածու Ստեփան Ղարիբջանյանների ընկերն եմ (ի դեպ, նրանց հետ սովորել եմ միևնույն՝ Ն. Կ. Կրուպսկայայի, այժմ՝ Ն. Աղբալյանի անվան դպրոցում), ճանաչում եմ թոռանը՝ պատմական գիտությունների թեկնածու Գևորգին, աշխատել նրա զարմիկի՝ տաղանդավոր դիվանագետ Գեղամ Ղարիբջանյանի հետ:

Մեզանում քչերն են եղել Գևորգ Բագրատի Ղարիբջանյանի նման գիտնական ու մարդ, ում բնորոշ է եղել հավատարմութունը դավանած գաղափարներին, քաղաքական և բարոյական այն սկզբունքներին, որով ապրել ու գործել է:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

«ԿՈՄԻՏԱՍ – 150» ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ*

Բանալի բառեր՝ Կոմիտաս, կոմիտասագիտություն, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՀ ԿԳՄՄՆ գիտությունների կոմիտե, գիտական նստաշրջան, հայ երաժշտություն:

Տասնամյակներ շարունակ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը կոմիտասագիտության ճանաչված կենտրոնն է և ծանրակշիռ ներդրում ունի Կոմիտասի ստեղծագործական ժառանգության ուսումնասիրության ու հրատարակման գործում: Կոմիտասի ծննդյան 100-ամյա հոբելյանին նվիրված՝ 1969 թ. նոյեմբերի 17-ին ՀՍՍՀ ԳԱ նիստերի դահլիճում Արվեստի ինստիտուտի, Հայաստանի կոմպոզիտորների միության և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի գումարած գիտական միացյալ նստաշրջանում ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը բացման խոսքում ասաց. «Կոմիտասը հավաքեց հայ ժողովրդական երգերն ու մեղեդիները, մաքրեց դրանք անհարազատ նստվածքներից, մեծագույն վարպետությամբ մշակեց և այդպիսով ստացված շողշողուն, հղկված ազամանդի բյուրեղները վերադարձրեց ժողովրդին: Այդ անզուգական հարստությունը ընդմիջտ մտավ մեր մշակույթի գանձարանը՝ որպես նրա կարևորագույն մասը»¹:

Կոմիտասի ժառանգության ուսումնասիրությունն Արվեստի ինստիտուտում դեպքից դեպք, հոբելյանից հոբելյան չի իրականացվում: Այն ինստիտուտի մշտական հետաքրքրությունների կենտրոնում է: Եվ, այդուամենայնիվ, 2019 թ. նրա համար անցավ կոմիտասյան նշանաբանի ներքո, ու ինստիտուտի գիտական գործունեության առանցքը կազմեցին կոմիտասագիտական միջոցառումները, որոնք կարելի է պայմանականորեն բաժանել երկու խմբի՝ գիտական նստաշրջաններ և գիտական հրապարակումներ:

Հոբելյանական միջոցառումների եզրափակիչ ակորդը դարձավ Արվեստի ինստիտուտի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ, ՀՀ ԿԳՄՄՆ գիտությունների կոմիտեի ֆինանսավորմամբ, 2019 թ. նոյեմբերի 29–30-ը գումարված «Կոմիտաս–150» գիտական նստաշրջանը, որի արդյունքները կարևոր հանգրվան դարձան կոմիտասագիտության զարգացման արդի փուլում: Հայաստանի Հանրապետության պատմության մեջ առաջին անգամ գումարվեց գիտական նստաշրջան, որի բոլոր զեկուցումների առանցքում բացառապես Կոմիտասի կյանքն ու գործունեությամբ

* Ներկայացվել է 16. III. 2020 թ., ընդունվել է տպագրության 27. III. 2020 թ.:

¹ Տե՛ս Ա. Մ ա տ ու ը յ ա ն. Կոմիտասի ծննդյան 100-ամյակի տոնակատարությունը. – ՊԲՀ, 1970, № 1, էջ 263:

յունն էր, ինչպես նաև՝ նրա կերպարը հայ արվեստում ու գրականութ-
յան մեջ:

Նստաշրջանի աշխատանքներին մասնակցեցին Արվեստի, Մ. Աբեղ-
յանի անվան գրականութայն, Պատմութայն ինստիտուտների, Մատե-
նադարանի, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի,
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալ-
սարանի, Երևանի պետական համալսարանի գիտնականներն ու դասա-
խոսները:

Նստաշրջանի բացումն ու լիազումար նիստը տեղի ունեցան նոյեմ-
բերի 29-ին ԳԱԱ նախագահութայն նիստերի դահլիճում: Բացման խոս-
քով հանդես եկավ ԳԱԱ հայագիտութայն և հասարակական գիտութ-
յունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի
Սուվարյանը:

Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնութայն
խոսքը հաղորդեց Մայր Աթոռի Կոմիտաս Վարդապետի և Հովհաննես
Թումանյանի ծննդյան 150-ամյակներին նվիրված միջոցառումների
կազմակերպման հոբելյանական հանձնախմբի ատենապետ, պ. գ. դ.,
պրոֆ. Գերաշնորհ Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը:

Գիտութայն կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի ողջույնի
խոսքը ներկայացրեց կոմիտեի գլխավոր քարտուղար, ֆիզիկամաթե-
մատիկական գիտությունների դոկտոր Լևոն Մարդոյանը:

Լիազումար նիստում (նախագահ՝ ակադեմիկոս Յու. Սուվարյան),
արվ. դ., պրոֆ. Աննա Ասատրյանը «Կոմիտասը և հայ երաժշտութայն
հետազա ընթացքը» բանախոսութայն մեջ մի կողմից բացահայտեց, որ
Կոմիտասն իր ստեղծագործական ոչ երկարատև կյանքի ընթացքում
ծավալել է բազմակողմանի ու արդյունաշատ գործունեություն՝ մեծա-
պես կանխորոշելով հայ երաժշտութայն զարգացման հետազա ուղի-
ները, իսկ մյուս կողմից՝ առաջին անգամ անդրադարձավ այն բացառիկ
դերին, որն ունեցել է Կոմիտասի կերպարը հայ արվեստում: Հայ երա-
ժշտութայն մեջ ստեղծվեցին նրան նվիրված արժեքավոր ստեղծագոր-
ծություններ. նա այն եզակի հայ կոմպոզիտորներից է, ում կերպարը
մարմնավորվեց երաժշտական թատրոնում, խթանեց հայ գրականութ-
յան առաջընթացը ևս. նրան են նվիրվել բազմաթիվ չափածո ու արձակ
ստեղծագործություններ: Կոմիտասը նպաստեց հայ կերպարվեստի զար-
գացմանը. նրա կերպարին են անդրադարձել հայ նկարիչներից ու քան-
դակագործներից շատերը թե՛ նրա կենդանութայն օրոք, թե՛ հետազա-
յում:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Ասողիկ աբեղա Կարապետ-
յանը «Սուրբ Էջմիածնի վարդապետը» վերնագրով գեկուցման մեջ նկա-
տեց, որ տարբեր մենագրություններում և գիտական հոդվածներում Կո-
միտասը ներկայացվել է որպես հալածյալ: Սակայն Հայաստանի ազգա-
յին արխիվում գտնվող մի շարք վավերագրերի ուսումնասիրութայն
արդյունքում բանախոսը պարզել է՝ Կոմիտաս Վարդապետը ոչ թե հա-
լածվել է, այլ զոհ է դարձել այն մթնոլորտի, որը ձևավորվել էր Արևել-
յան Հայաստանում, ի մասնավորի՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում,

որը պետականության բացակայության պայմաններում ազգահավաք և ազգապահպան առաքելություն էր իրականացնում:

1909 թ. Ֆրանսիացի արևելագետ-հայագետ Ֆրեդերիկ Մակլերն այցելել է էջմիածին, ծանոթացել Կոմիտասի հետ և նրա մասին բացառիկ հուշեր թողել իր ուղեգրության մեջ, ինչպես նաև՝ «Երաժշտությունը Հայաստանում» արժեքավոր գրքուկում: Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բ. գ. դ., պրոֆ. Աելիտա Դոլուխանյանը «Ֆրանսիացի նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Մակլերը Կոմիտասի մասին» վերնագրով գեկուցման մեջ գիտական շրջանառության մեջ դրեց Կոմիտասի անձին ու գործին Մակլերի տված գնահատականները, որոնք, ինչպես նկատեց բանախոսը, «կոմիտասագիտության համար մշտապես արդիական են»:

Նստաշրջանի լիազումար նիստը եզրափակեց Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, բ. գ. դ. Վարդան Դերիկյանը՝ Կոմիտասի և Մ. Աբեղյանի մարդկային ու ստեղծագործական առնչությունները լուսաբանող գեկուցմամբ: 1885-ին Սողոմոն Սողոմոնյանը ծանոթանում է Գևորգյան ճեմարանի լսարանականի շրջանավարտ Մ. Աբեղյանի հետ: Մոտ մեկ տարի անց՝ 1886-ին, վերջինիս խոսքերով Սողոմոնը գրում է «Սիփանա քաղեր» խմբերգը, որով միշտ եզրափակում էր իր կազմած խմբական երգեցողությունները: Հետագայում գրականագետը, ի պատասխան Կոմիտասի անհիմն քննադատներին, գրում է «Կոմիտաս վարդապետ և յուր գործը» («Նոր-դար», 1903, թիվ 119, 120, 121) ու «Ժողովրդական երգարան» և «Հազար ու մի խաղ» («Արարատ», 1904) հոդվածները, իսկ հետագայում՝ «Հիշողություններ Կոմիտասի մասին» արժեքավոր հուշագրությունը:

Այնուհետև գիտական նստաշրջանի նիստերը շարունակվեցին Արգականում ԳԱԱ գիտաժողովների տանը:

Առաջին նիստը (համանախագահներ՝ ԳԱԱ թղթակից անդամներ Արարատ Աղասյան ու Աելիտա Դոլուխանյան) մեկնարկեց Արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, արվ. դ., պրոֆ. Լիլիթ Երնջակյանի «Կոմիտասը և հայ աշուղական երգարվեստը» գեկուցմամբ, որը նվիրված էր հայ երաժշտագիտության մեջ գրեթե չուսումնասիրված ոլորտներից մեկին՝ հայ աշուղական արվեստի ծագումնաբանական և գեղարվեստական հիմքերի մեկնաբանմանը՝ Կոմիտասի հոդվածներում ձևակերպված ազգային երաժշտական ինքնության պատկերացումներին առնչվող դատողությունների լույսի ներքո: Կարևորելով Կոմիտասի բազմաբնույթ ստեղծագործական հետաքրքրությունների դաշտում ընդգրկված միջնադարյան գուսանական, աշուղական և քաղաքային ժողովրդական երաժշտության բարձրարժեք նմուշներն ու դրանց ինքնատիպ մարմնավորումները Կոմիտասի անավարտ երաժշտաբանական ներկայացումներում՝ Երնջակյանն արտահայտեց այն միտքը, որ «Կոմիտաս աշուղական արվեստ հարաբերությունում առաջնությունը պետք է տալ Կոմիտաս ստեղծագործող արվեստագետին, և ոչ թե հետագոտողին»:

Արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի վարիչ, արվ. դ., պրոֆ. ՄՀեր Նավոյանը «Կոմիտասի երաժշտատեսական հայացքների երկու հիմնադրույթ» վերնագրով բանախոսության մեջ նկատեց, որ Կոմիտասի տեսական հայացքներում և ստեղծագործության մեջ նրա առաջարկած հնչյունաչարի ու «Ներդաշնակության հենքի» գաղափարների կանխադրութային նշանակությունը փաստելի է: «Այդ են վկայում կոմիտասյան բազմաձայնության մեջ հաճախ հանդիպող օկտավաների, կվարտաների և կվինտաների առանձին և կրկնապատկված ու բազմապատկված հարմոնիկ կիրառությունները, որոնց արդյունքում ձևավորվել են օկտակորդներ, կվինտակորդներ և կվարտակորդներ, նաև այդ ինտերվալների համակցությամբ ձևավորված ակորդները, – նկատեց բանախոսը: – Դրանք կազմում են կոմիտասյան հարմոնիկ «բառապաշարի» կարևորագույն շերտերից մեկը: Գծային մտածողության տեսանկյունից ևս կոմիտասյան արվեստի հույժ կարևոր և նորարարական գաղափարներից մեկը՝ բազմաձայնակարգայնությունը, կառուցվում է հենց նույն հիմքով ու դրանից բխող տրամաբանությամբ»:

Արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, արվ. դ., պրոֆ. Աննա Արևշատյանը «Տիգրան Մանսուրյանի՝ Կոմիտասին և Հայոց ցեղասպանությանը նվիրված ստեղծագործությունները» զեկուցման մեջ քննության առավ Տ. Մանսուրյանի Ռեքվիեմը (2011), որն իր արժանի տեղն է գրավել վերջին շրջանի կանտատային-օրատորիալ ժանրում ու հաջողությամբ կատարվել աշխարհի տարբեր երկրներում: Կոմիտասին է նվիրված Մանսուրյանի Sonata da chiesa-ն ալտի և դաշնամուրի համար (2015), որն առաջին անգամ հնչեց Ստամբուլի այն եկեղեցում, ուր աքսորվելուց առաջ իր վերջին պատարագն է մատուցել Կոմիտասը:

Նստաշրջանի առաջին նիստը եզրափակվեց հայ հոգևոր երաժշտությանը նվիրված զեկուցումներով: Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երաժշտության պատմության ամբիոնի վարիչ, արվ. թ., դոցենտ Լուսինե Սահակյանը հանդես եկավ «Որոշ դիտարկումներ «Կոմիտաս-եկեղեցի» առնչությունների շուրջ» զեկուցմամբ, իսկ Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող, արվ. թ. Արուսյակ Թամրազյանը լուսաբանեց Կոմիտասի գիտական գործունեության առանձին ուղղություններից մեկը, այն է՝ Կոմիտասի՝ հայ միջնադարյան հոգևոր ժառանգության ուսումնասիրությունները:

Երկրորդ նիստում (նախագահ՝ արվ. դ. Լիլիթ Երնջակյան), Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բ. գ. դ. Սուսաննա Հովհաննիսյանը «Կոմիտասը թրվածանյանական վավերագրերում» զեկուցման մեջ ներկայացրեց Կոմիտասի ստեղծագործության, նրա կյանքի և, մասնավորապես, թրվածանյանի հետ բարեկամության մասին ուշագրավ ու նորահայտ փաստեր, որոնք պահպանվել են թրվածանյանական վավերագրերում՝ բանաստեղծի և նրա մասին հոգվածներում, գրած ու ստացած նամակներում, հուշերում, լուսանկարի ընծայագրում, բանաստեղծի ընտանիքի անդամների արխիվներում,

պարբերական մամուլի էջերում և այլն: Բանախոսն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրեց այն փաստը, որ Կոմիտասը 1917 թ. ժամանակի երաժշտական հանրության կողմից միաձայն ընտրվել է Թումանյանի հիմնած «Հայկազյան ընկերության» միջոցով ձևավորվող ազգային ակադեմիայի իսկական անդամ:

Արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, արվ. թ. Մարիաննա Տիգրանյանը «Երկու վարդապետ՝ Կոմիտաս և Սահակ Ամատունի» գեկուցման մեջ նկատեց, որ Սուրբ Էջմիածնի միաբան Սահակ վրդ. Ամատունու և Կոմիտասի փոխհարաբերությունների մասին մեզ գրեթե ոչինչ հայտնի է, բացառությամբ՝ իրադարձությունների ականատես, Կոմիտասի դասընկեր Շահան Սիմոնի հուշերի: Վերջինիս վկայությամբ Գևորգյան ճեմարանում սովորելու տարիներին Սահակ Ամատունին Կոմիտասի սիրելի ուսուցիչն է եղել: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Ս. Ամատունին և Կոմիտասը հետագայում էլ ջերմ հարաբերություններ են ունեցել: Կոմիտասն Օշականում այցելել է իր ուսուցչին, նրանից ժողովրդական երգեր ձայնագրել: Անկասկած, Ամատունին էլ ուշադիր հետևել է իրեն վաղուց գերազանցած աշակերտի հաջողություններին:

«Պատմաբանասիրական հանդես»-ի գլխավոր խմբագիր, բ. գ. դ. Անուշավան Զաքարյանը հիմնավորեց ուսուցիչը կոմպոզիտոր Թոմաս Հարտմանի դերը Թիֆլիսում «Կոմիտասի անվան ընկերության» ստեղծման գործում: 1919 թ. փետրվարի սկզբին հանգամանքների բերումով հայտնվելով Թիֆլիսում, նկատեց բանախոսը, շփվելով հայ գրական-մշակութային գործիչների՝ Հովհ. Թումանյանի, Ե. Թադևոսյանի, Սպ. Մելիքյանի, պրոֆ. Զավրիյանի և այլոց հետ՝ Թ. Հարտմանը գրուցել է հայ ժողովրդական երգարվեստի, նաև՝ Կոմիտասի մասին: Դրա արդյունքը լինում է այն, որ նա սկսում է զբաղվել հայ երաժշտության ուսումնասիրության փորձերով՝ ժողովրդական ժառանգության ուսումնասիրությամբ, տպագրում վերլուծական մի քանի հոդված, դասախոսություններ է կարդում նրա կյանքի ու ստեղծագործության մասին: Ռուս կոմպոզիտորի ջանքերով էլ 1919 թ. մայիսի սկզբին Թիֆլիսում հիմնվում է «Կոմիտասի անվան ընկերություն»-ը: Մայիսի 21-ին Արտիստական ընկերության լեփլեցուն դահլիճում տեղի է ունենում ընկերության կազմակերպած՝ Կոմիտասին նվիրված երեկո-համերգ, որով սկսվում է նրա երկերի պրոպագանդային և զրամական նպաստի հանգանակությունը: Համերգ-երեկոները Թիֆլիսում կրկնվում են մի քանի անգամ, համերգներ են կազմակերպվում նաև Երևանում, Բաթումում: Ընկերության հիմնումը հայ երաժշտական մշակույթի պատմության հիշարժան էջերից է:

ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պ. գ. թ. Արմեն Կարապետյանը հանդես եկավ «Կոմիտաս-Սևակ. ժողովրդի ողբերգությունը որպես անձնական ճակատագիր» վերնագրով գեկուցումով:

Երկրորդ նիստի աշխատանքները եզրափակեց Արվեստի ինստիտուտի գիտաշխատող Անի Հակոբյանի «Օրորի ժանրը Կոմիտասի գրառումներում» գեկուցումը, որտեղ հետազոտողն ի մի բերեց, ենթատեսակավորեց ու վերլուծեց Կոմիտասի բանահավաքչական գործունեության ողջ

ընթացքում գրառված և Կոմիտասի «Երկերի ժողովածու»-ի ակադեմիական հրատարակության IX–XIV հատորներում իբրև ազգագրական նյութ գետեղված թվով 13 օրոք:

Երրորդ նիստում (համանախագահներ՝ արվ. դ. Աննա Ասատրյան ու բ. գ. դ. Անուշավան Զաքարյան) Արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, արվ. թ. Տաթևիկ Շախկուլյանը, անդրադարձ կատարելով Կոմիտասի ֆոլկլորագիտական գործունեությանը, լուսաբանեց «Կոմիտասը և «Սասնա ծռեր» էպոսի երգերը» թեման: Էպոսի երգերի՝ Կոմիտասի առաջին պահպանված գրառումները վերաբերում են 1900-ականների սկզբին: Դրանք նա գրառել է Նախո Աբրահամյանից, Զատիկ Խապոյանցից և Տիգրան Զիթունուց: Ըստ այդմ, հետազոտողը եզրակացրեց, որ էպոսի երգերի գրառման ավանդույթի հիմքը դրել է Կոմիտասը: Նա ծրագրել էր իրականացնել «Սասնա ծռեր» էպոսի վրա հիմնված օպերային ստեղծագործություն, ինչի վկայությունն են արխիվային ձեռագրերը:

Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող, բ. գ. թ., դոցենտ Եվա Մնացականյանը «Կոմիտասն իր նամակների հայելիում» զեկուցման մեջ ամփոփ վերլուծություն է ներկայացրեց Կոմիտասի նամակներում առկա հոգեբանության ու մտածողության խտացված այն տիրույթները, որոնցում «Վարդապետը բացահայտվում է իբրև իր միջավայրի ու երկրի զավակ, իբրև համաշխարհային ճանաչման հասած բացառիկ երաժիշտ և իբրև անհատականություն՝ իր մարդկային բարձրակիր ձևերաշխարհով, հոգու մակընթացություններով, դրամատիկ ապրումներով: Նաև մեր օրերի գեղարվեստական գիտակցության տեսանկյունից իմաստավորվում են որոշ դրույթներ»:

Երևանի պետական համալսարանի դասախոս, արվ. թ. Հուլիսիմե Վարդանյանն անդրադարձավ գծանկարիչ Ռուզուֆ Խաչատրյանի կերտած Կոմիտասներին: Կոմպոզիտորի 100-ամյակին նվիրված ցուցահանդեսում Ռ. Խաչատրյանն արժանացել է Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության մրցանակին, իսկ Կոմիտասի դիմանկարը զարդարել է նրա հոբելյանին նվիրված ալբոմի շապիկը: Մեծ երգահանին ներկայացնող Խաչատրյանի հաջորդ ստեղծագործությունը Մայր Աթոռի Ֆոնդերում պահվող «Կոմիտասը» լեկասն է, որը ստեղծվել է 1988-ին և հետագայում նվիրաբերվել Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ին: Այդ գործը երբևէ չէր ցուցադրվել և առաջին անգամ հանրությանը ներկայացվեց Կոմիտասի ծննդյան 150-ամյա հոբելյանի շրջանակներում անցկացվող «Թանգարանային գիշեր» միջոցառման ընթացքում, նկատեց բանախոսը:

Բ. գ. թ. Արդա Մարտիրոսյան-Մարանջյանի (Մոսկվա) զեկուցումը նվիրված էր Կոմիտասի՝ մի քանի տասնյակ բանաստեղծությունների ուսումնասիրությանը, որոնք նրա կյանքի օրոք չեն հրատարակվել: Բանախոսն ասաց, որ Կոմիտասի բանաստեղծության գրական ակունքներից մեկը հազարամյա ճանապարհ անցած Շարակնոցն է, և, մասնավորապես, նկատեց, որ Կոմիտասի «Քո երազում» բանաստեղծության պատկերային համակարգը հիշեցնում է Սուրբ Տիրամորը փառաբանող շարականները:

«Կոմիտաս-150» գիտական նստաշրջանը եզրափակեց Աննա Ասատրյանի «Կոմիտասը Հովհաննես Չեքիջյանի գնահատմամբ և մեկնաբանմամբ» գեկուցումը: Նա նկատեց, որ Մասեստրոն մի կողմից Կոմիտասի խմբերգային արվեստի լավագույն ու անգերազանցելի մեկնաբանն է, իսկ մյուս կողմից՝ Կոմիտասի խմբերգային արվեստի անդուլ պրոպագանդիստը Հայաստանում և աշխարհում: Նա իր 869 համերգների ընթացքում մշտապես հնչեցրել է կոմիտասյան խմբերգային երաժշտութունը: Բանախոսը քննութայն առավ Հովհ. Չեքիջյանի այն հոդվածները, որոնք լույս են տեսել Կոմիտասի ծննդյան 100-ամյա հոբելյանի կապակցությամբ 1969 թ. հանրապետական և համամիութենական մամուլում:

Գիտական նստաշրջանի ավարտին՝ նոյեմբերի 30-ին, տեղի ունեցավ Արվեստի ինստիտուտի տնօրեն, ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, արվ. դ., պրոֆ. Արարատ Աղասյանի՝ Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, ԳԱԱ հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի աջակցությամբ «Կոմիտաս-150» գիտական նստաշրջանին ընդառաջ լույս տեսած «Կոմիտասը հայ նկարիչների և քանդակագործների աչքերով (կոմպոզիտորի ծննդյան 150-ամյակի առթիվ)» եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) պատկերազրքի շնորհանդեսը: Աշխատություն մեջ հայ արվեստաբանության ոլորտում առաջին անգամ համակողմանիորեն ուսումնասիրվել ու լայնորեն ներկայացվել է Կոմիտասի կերպարը հայ նկարիչների և քանդակագործների ստեղծագործություններում: Պատկերազրքում ներկայացված ստեղծագործություններն ունեն ինչպես գեղարվեստական ակնհայտ արժանիքներ, այնպես էլ պատմամշակութային ու վավերագրական կարևոր նշանակություն: Գրքի պատասխանատու խմբագիրն է Աննա Ասատրյանը, ով նաև առաջաբանի հեղինակն է:

Շնորհանդեսի ընթացքում՝ հեղինակի խոսքից հետո, պատկերազրքի մասին կարծիքներ հայտնեցին Աննա Ասատրյանը, Աելիտա Դոլուխանյանը, Լիլիթ Երնջակյանը, Աննա Արևշատյանը, Անուշավան Զաքարյանը և Լուսինե Սահակյանը:

Գիտական նստաշրջանը եզրափակվեց դեկտեմբերի 1-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցած հոբելյանական համերգով, որին մասնակցեցին Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբը և Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը՝ Հովհ. Չեքիջյանի ու Ս. Սմբատյանի ղեկավարությամբ:

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ*

Իմ սար ու ձորից ձեռք չեմ քաշելու,
Նրանց համար եմ կյանքս մաշելու ...

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ



Կան մեծություններ, որոնք երբ կողքիդ են և նվիրումով, լուռ ու անձայն, առանց թմբկահարելու շարունակում են իրենց գործունեությունը, դու մի տեսակ այնքան հանգիստ ես, այնքան ապահով. չէ՞ որ նրանք կան, ապրում են և արարում: Եվ երբ նրանք մի օր հանկարծ հեռանում են, նոր ես զգում այն ծանր, անդառնալի՜ և անհափեղի՜ կորուստը, թիկունքիդ խոր անդունդը, որն այլևս չի լցվելու: Նոր ես զգում, որ, նրանց հեռանալով՝ գունազրկվում ես նաև դու, իսկ շուրջդ դատարկություն է:

Սամվել Կարապետյանն այդ մեծություններից էր ...

Ո՞վ էր հուշարձանագետ, հայրենագետ Սամվել Գևորգի Կարապետյանը. Վան-Վասպուրականի Արճեչ գավառի Բերդաղ գյուղից սերված Բաղդասար պապի գերդաստանում 1961 թ. հուլիսի 30-ին երևանում ծնված մի հայորդի: Մարդ, որ մանկուց փորձում էր ճանաչել Մեծ Հայրենիքից մեզ բաժին հասած Հայաստանի ամեն սարն ու ձորը, քանդված վանքը և կանգուն եկեղեցին, ամեն քարն ու թուփը:

1978 թ. ավարտել է Երևանի Միսաք Մանուչյանի անվան թիվ 48 միջնակարգ դպրոցը: Դեռևս դպրոցական տարիներից էր սկսել իր ճամփորդությունները՝ երբեմն դասընկերների հետ, երբեմն էլ՝ մեն-մենակ: Դպրոցն ավարտելուց հետո, անսալով մոր հորդորներին, փորձում է ուսումը շարունակել համալսարանում, սակայն կտրվում է ՍՍՀՄ պատմություն առարկայից: Ուսապարկի մեջ դնելով Մակար Բարխուտարյանցի «Արցախ» աշխատությունը՝ 17-ամյա պատանին սկսում է իր առաջին ճամփորդությունը Հայաստանից դուրս և առաջին անգամ՝ դեպի Արցախ աշխարհ, որն այն ժամանակ Ադրբեջանի կազմում էր: Սովետական վտանգավոր ժամանակներում նժարի վրա էր դրել՝ աշխատել Վրաստանում, թե՞ Ադրբեջանում: Առաջնայինը համարեց Ադրբեջանը, որտեղ ևս ըուպե առ ըուպե անհետանում էին հայոց հետքերը:

* Ներկայացվել է 07. IV. 2020 թ., ընդունվել է տպագրության 10. IV. 2020 թ.:

1978–1980 թթ. աշխատել է Երևաննախագիծ ինստիտուտում՝ որպես բանվոր, 1980–1997 թթ.՝ ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գլխավոր վարչությունում (այժմ՝ գործակալություն)՝ որպես տեխնիկ, ավագ տեխնիկ, ճարտարապետ, ավագ ճարտարապետ:

Արդեն 1978 թ. սկսում է զբաղվել Արցախի (այդ թվում՝ Հյուսիսային Արցախի) և Կուրի ձախափնյա շրջանների (Բուն Աղվանքի) հուշարձանների ու բնակավայրերի պատմության ուսումնասիրությամբ: 1978–1987 թթ.՝ մինչև Արցախյան ազատամարտի սկիզբը, տարիներ շարունակ բազում խոչընդոտներով լի ճամփորդությունները հաջորդում էին միմյանց: Միակ նվիրյալն էր, որ ոտքով շրջել է Կուրի ձախ ափին գտնվող հայաբնակ վայրերում և փորձել գոնե թղթին հանձնել Երկիր մուրափից օր օրի անհետացող հայկական հարյուրավոր պատմական հուշարձանները՝ վանքեր, եկեղեցիներ, բերդեր, կամուրջներ, տներ, աղբյուրներ, գերեզմանոցներ, խաչքարեր, տապանաքարեր, լուսանկարել, չափագրել դրանք: Սամվելը եղել է Հյուսիսային Արցախի գրեթե բոլոր բնակավայրերում: Եվ այդ ամենի համար, ավա՛ղ, շատ թանկ վճարեց. կորցրեց առողջությունը, վատացավ տեսողությունը, իսկ մազաթափությունն արդեն իսկ խոսում էր ահուկի նյարդային լարվածության մասին. չէ՞ որ համարյա ամեն ճամփորդության ժամանակ օրերով, երբեմն էլ շաբաթներով «հյուրընկալվում» էր սովետական «եղբայրական» Ադրբեջանի ազգային անվտանգության նկուղներում: 1978–1989 թթ. ընթացքում Սամվելը Խորհրդային Ադրբեջանի տարածքում կատարել է մոտ 40 գիտարշավ:

Աշխարհում, սակայն, միևնույն հետաքրքրությունը և նպատակն ուներ ևս մեկ նվիրյալ հայ՝ ճարտարապետ Արմեն Հախնազարյանը: Իրարից անկախ ու առանց իրար ճանաչելու՝ երկու հայորդիները նույն աշխատանքն էին կատարում, մեկը՝ թուրքիայում (Արևմտյան Հայաստան և Կիլիկիա), մյուսը՝ Վրաստանում ու Ադրբեջանում: Երկուսն էլ «հայկական հուշարձանների որս» էին անում, փորձում ժամանակից առաջ ընկնել և փշուր-փշուր հավաքել ամեն ըզուրկ վանդալների ձեռքով ոչնչացվող հայկական արժեքները: Իր գործունեությամբ Ա. Հախնազարյանն արդեն հասցրել էր թուրքական պետության համար կոչվել «անցանկալի անձ», և արգելվել էր նրա մուտքն այդ երկիր: Տարիներ հետո՝ 2015 թ., նույն բախտին արժանացավ նաև Ս. Կարապետյանը, այս անգամ՝ «եղբայրական» Վրաստանում:

Օրերից մի օր նախախնամությունը պիտի ծանոթացներ երկու հայրենանվեր անձնավորություններին իրար հետ: 1990 թ. Ա. Հախնազարյանն ու Ս. Կարապետյանը որոշում են համագործակցաբար շարունակել իրենց հույժ կարևոր աշխատանքը:

1990–1993 թթ. Ս. Կարապետյանն անցնում է Վրաստան, Ջավախքից հասնում Բոլնիս, Մառնեուլ, Դմանիս, ինչպես նաև՝ Ախալցխա և Կախեթ: Այստեղ ևս փորձում է կռիվ տալ ժամանակի հետ, լուսանկարում դեռևս չոչնչացված հայկական հետքերը, կարդում արձանագրութ-

յունները, փշուր-փշուր ամբարում և թղթին հանձնում յուրաքանչյուր սրբազան մասունք:

Արցախյան ազատամարտի ժամանակ, երբ մեկը մյուսի հետևից ազատագրվում էին հայոց շրջանները, Ս. Կարապետյանը, թողնելով ղեպի Վրաստան կատարվող ճամփորդությունները, հաղթանակած զորքի հետևից մտնում էր Արցախի տվյալ շրջանը, լուսանկարում այն ամենը, ինչ դեռևս չէր հռչակել թուրքը: Թանկ էր ամեն ռոպեն. չէ՞ որ տարածքները վերադարձնելու շռուկներ կային:

1998 թ. Հայաստանում պետական գրանցում ստանալուց հետո Ս. Կարապետյանը ստանձնում է դեռևս 1978 թ. Գերմանիայում Ա. Հախնազարյանի հիմնած Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպության (ՀՃՈՒ Տ/Կ, հետագայում՝ հիմնադրամ) Երևանյան գրասենյակի տնօրենի պարտականությունները մինչև իր մահը:

2000 թ. փետրվարի 22-ին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն երջանկահիշատակ Լևոն Հախվերդյանի բարի կամեցողությամբ Արվեստի ինստիտուտի հարկաբաժնում՝ Բաղրամյան 24 գ հասցեում, տեղի է ունենում ՀՃՈՒ Տ/Կ գրասենյակի բացումը:

Հայաստանի Հանրապետությունում հիմնադրամի պաշտոնականացումն ու գրասենյակի հիմնումը նոր հորիզոններ են բացում. անվանի հուշարձանագետն օրավուր ծավալվող աշխատանքները պատշաճ մակարդակով առաջ տանելու համար ներգրավում է մասնագետ նոր ուժերի, ինչպես նաև՝ դուներ բացում սկսնակների համար: Սկսվում են տասնամյակների ընթացքում կուտակված բազմաթիվ նեգատիվների, պոզիտիվների, լուսանկարների, չափագրությունների, քարտեզների և հարակից այլ նյութերի թվայնացման, մամուլից քաղված և արխիվայի նյութերի մշակման աշխատանքները:

Ս. Կարապետյանը թեև արդեն վատառողջ էր, սակայն որոշել էր մեծ շուքով նշել հիմնադրամի՝ Երևանյան գրասենյակի բացման 20-ամյակը: Հուզմունքով և հույսով էր սպասում այդ օրվան: Ավա՛ղ... Փետրվար ամիսը ծանր և կորստաբեր դարձավ հիմնադրամի աշխատակիցների ու ողջ հայության համար. 2009 թ. փետրվարի 19-ին հավերժացավ Ա. Հախնազարյանը, իսկ 2020 թ. փետրվարի 27-ին՝ Ս. Կարապետյանը:

Այսօր մեզ հետ չէ անվանի հուշարձանագետը, հայրենի կածաններով քայլող նվիրյալ հայր: Ողջ կյանքի ընթացքում Ս. Կարապետյանն արեց ամեն հնարավորն ու անհնարինը: Հեղինակ է ավելի քան 500 հոդվածի, որոնցից շուրջ 100-ը հրատարակվել են հայաստանյան և արտերկրի գիտական հանդեսներում: 1989 թ. համահեղինակել է Հայաստանի ճարտարապետությունը նվիրված իտալական շարքի 19-րդ՝ «Ղարաբաղ» հատորը (“Documenti di Architecture Armena”): Նրա հեղինակած շուրջ երկու տասնյակի հասնող աշխատություններն անվերջ կարելի է թվարկել. 1992 թ.՝ «Գետաշեն», 1995 թ.՝ «Զավախքի խաչքարերը», 1997 թ.՝ «Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը», 1998 թ.՝ «Վրաց պետական քաղաքականությունը և հայ մշակույթի հուշարձանները», 1999 թ.՝ «Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում» (լույս է տեսել նաև ուղևորներն՝ «Памятники

армянской культуры в зоне Нагорного Карабаха», 2000 և անգլերեն՝ «Armenian Cultural Monuments in the Region of Karabagh», 2001), 2002 թ.՝ «Շուկավեր» (համահեղինակությամբ՝ Սանդուխտ Ասլանյանի), 2003 թ.՝ «Թիֆլիսի քաղաքագլուխները» (լույս է տեսել նաև ռուսերեն՝ «Мэры Тифлиса», 2003), 2004 թ.՝ «Հյուսիսային Արցախ» (լույս է տեսել նաև անգլերեն՝ «Northern Artsakh», 2007), 2005 թ.՝ «Կովկասյան թանգարանի հայկական հավաքածուն» և «Հայերը Կախեթում», 2006 թ.՝ «Ջավախք» (լույս է տեսել նաև անգլերեն՝ «Javakhk», 2011), 2008 թ.՝ «Ախալցխա», 2009 թ.՝ «Արցախի կամուրջները» և «Հայաստան» պատկերազարդ մեծադիր գիրք-ալբոմը (երկրորդ անգամ հրատարակվել է 2014 թ. նվիրված Մեծ եղեռնի 100-րդ տարելիցին), 2010 թ.՝ «Արցախի հրաշալիքները», «Արցախի հայ ճարտարապետության մահմեդական հուշարձանները», 2011 թ.՝ «Անի-1050», «Հուշագրական ժառանգություն», 2012 թ.՝ «Նախիջևան» քարտեզագիրք (լույս է տեսել նաև անգլերեն՝ «Nakhijevan: Atlas», 2012), 2013 թ.՝ «Զեռնարկ հայրենատիրության», «Ոսկեպարի պատմական հուշարձանները», «Ջիլիգայի պատմական հուշարձանները», 2014 թ.՝ «Ակունք և Կաթնաղբյուր գյուղերի պատմական հուշարձանները», «Զառ և Սևաբերդ գյուղերի պատմական հուշարձանները», «Նորգյուղ և Մայակովսկի գյուղերի պատմական հուշարձանները», «Կոտայք գյուղի պատմական հուշարձանները», «Կապուտան գյուղի պատմական հուշարձանները», 2015 թ.՝ «Առինջ գյուղի պատմական հուշարձանները», «Եղեռն՝ եղեռնից հետո. հ. Ա», 2016 թ.՝ «Եղեռն՝ եղեռնից հետո», «Արցախ» քարտեզագիրք (լույս է տեսել նաև անգլերեն՝ «Artsakh: Atlas», 2016), 2017 թ.՝ «Ադրբեջանը քաղաքակրթությունից դուրս», 2019 թ.՝ «Աղնջաձոր, Թառաթումբ, Քարագլուխ, Սալլի գյուղերի պատմական հուշարձանները», «Նոջիվանք» գրքի անգլերեն տարբերակը՝ «Khojivank» և այլն:

2010 թ. արդեն ՀՀՈՒ հիմնադրամը ստանում է պետական ֆինանսավորում: Ս. Կարապետյանը հիմք է դնում մի ամսագրի՝ «Վարձք» վերնագրով, որը յուրօրինակ է և եզակի իր տեսակով (2010–2016 թթ. ընթացքում լույս է տեսել 12 համար):

Նրա գործունեության թագն ու պսակը, սակայն, կազմում է և պիտի կազմի «Հայաստանի պատմություն» 36-հատորյա գրքաշարը, որը նվիրվում է Մեծ եղեռնի անմեղ զոհերի հիշատակի ոգեկոչման 100-ամյակին: Գրքաշարի նպատակն է Հայաստանի պատմությունն առաջին անգամ ներկայացնել գավառ առ գավառ, յուրաքանչյուրը՝ գյուղ առ գյուղ (սրբազան Հայրենիքի 10.000 բնակավայրերը): Հատորներից յուրաքանչյուրը նվիրված է լինելու Պատմական Հայաստանի (Մեծ և Փոքր Հայքերի) մեկ կամ մի քանի գավառներին: Ցավոք, լույս ընծայվեց ընդամենը չորս հատոր՝ Ա. 2015 թ.՝ «Հայոց ձոր», Բ. 2017 թ.՝ «Սալմաստ» (լույս է տեսել նաև անգլերեն՝ «Salmast», 2019), Գ. 2018 թ.՝ «Արծկե», Դ. 2019 թ.՝ «Մուսավականք»:

Ս. Կարապետյանի մասին կարելի է անվերջ խոսել. ազգի նվիրյալ, գիտելիքների անսպառ պաշար, հզոր կամք և եռանդ ունեցող մշակութային արժեքների պահպան, անչափելի ժառանգություն թողած

գիտնական, ազգագրագետ, վիճակագրագետ: Շուրջ երեսուն տարի նա մեն-մենակ մի քանի ինստիտուտի գործ է կատարել: Նման աշխատունակութիւնն ունեւր, թերեւս, միայն Հրաչյա Աճառյանը:

Մեծ գիտնականի համար թանկ էր ամեն ռուպեն, ամեն վայրկյանը, որը չէր ապրել հանուն պաշտելիքի: Իսկ պաշտամունքը մեկն էր՝ Հայրենիքը. «Ես պաշտամունք ունեմ՝ Հայրենիքս է: Ինձ ուժեղ եմ զգում այդ պաշտամունքով»:

Ուր էլ լինեւր, ուր էլ գնար, ժողովուրդը սիրում էր նրան, իր ծոցից ելած զավակն էր համարում: Գարդմանա աշխարհում գարդմանցի էր, Բանանցում՝ բանանցեցի, Զավախքում՝ ջավախքցի, իսկ Արցախում նրան բուլորն էին ճանաչում: Իր աշխատակիցներով կամ երբեմն էլ մենակ նրան կարելի էր հանդիպել ամենուր՝ Արցախում, Վրաստանում, Արևմտյան Հայաստանում, Պարսկաստանում, Հնդկաստանում, Հյուսիսային Կովկասում: Հաճախ էին չրջապատում, տարբեր հարցերից խոսում, պատմում իրենց դարդ ու ցավից, գլուղից, եկեղեցուց, գերեզմանոցից, այս կամ այն խաչքարից:

Պարզ ու հասարակ էր, համեստ: Ազնվական կեցվածք ունեւր: Ո՛չ կոչումների էր ձգտում, ո՛չ տիտղոսների և աթոռի: Շատերը չէին սիրում նրան ճշմարիտ խոսքի համար: Սակայն նա անաղմուկ և աննկատ շարունակում էր իր գործը. հասկացողը հասկանում էր, գնահատողը՝ գնահատում:

«Վանքերի տղեն» ... այսպես էին կնքել նրա անունը: Կա՞ առավել մեծ ուրախութիւն, երբ գնահատանքդ տալիս է հասարակ ժողովուրդը:

Գնահատված էր Ս. Կարապետյանը: Իր աշխատութիւնների ցանկի նման կարելի է կազմել նաև նրան շնորհված տիտղոսների, շքանշանների ցանկը: Ահա դրանք. 2001 թ. Հայաստանի հրատարակչների ազգային ասոցիացիայի կողմից ՀՃՈԻ հրատարակչությանը շնորհվել է դիպլոմ՝ «Հայաստանի լավագույն գիրք» ցուցահանդեսի գլխավոր մրցանակին արժանանալու համար: 2001 թ. պարգևատրվել է ԼՂՀ կառավարութիւնի «Մերոպ Մաշտոց» շքանշանով՝ Ազգային կենսագործունեութիւնի և բարգաւաճման առաջընթացին նպաստող ակնառու նվաճումների համար: 2004 թ. «Հյուսիսային Արցախ» աշխատութիւնն արժանացել է ԼՂՀ կառավարութիւնի Եղիշէի անվան ամենամյա գրական մրցանակին: 2004 թ. Պուրճ Համուտի Հայ կաթողիկէ Մերոպեան Արուեստից վարժարանի կողմից արժանացել է գնահատանքի և երախտագիտութիւնի գրի: 2007 թ. Հումանիտար գիտութիւնների գարգացման բնագավառում «Կովկասյան թանգարանի հայկական հավաքածուն», «Հայերը Կախեթում» և «Ջավախք» աշխատութիւններն արժանացել են ՀՀ Նախագահի մրցանակին: 2008 թ. «Պատմական Հայաստանի տարածքում կատարած ծավալուն ուսումնասիրութիւնների և հայ ինքնութիւնի պահպանութիւնի գործում ունեցած բացառիկ ծառայութիւնի համար» պարգևատրվել է ՀՀ Ազգային ժողովի պատվո մեդալով ու «Պատմական հուշարձանների հնավայրերի ուսումնասիրման և վերականգնման գործում ունեցած զգալի ավանդի համար»՝ ՀՀ մշակութի նախարարութիւնի պատվոգրով: 2010 թ. պարգևատրվել է ՀՀ պաշտպանութիւնի նախարարութիւնի «Դրաստամատ

Կանայան» մեղալուծ: 2012 թ. պարզեցատրվել է ՀՀ մշակույթի նախարարութան Ոսկե մեղալուծ՝ Հուշարձանների պահպանության ոլորտում ունեցած նշանակալի ավանդի, մշակույթի բնագավառում երկարամյա, անբասիր աշխատանքային գործունեության համար: 2012 թ. Ալպինիզմի և լեռնային տուրիզմի հայկական Փեդերացիայի կողմից արժանացել է դիպլոմի՝ Հայկական Հուշարձանների պահպանման ազգանվեր գործի համար: 2014 թ. արժանացել է «Վահագն» ռազմահայրենասիրական, բարեգործական, հասարակական կազմակերպության պատվոգրի՝ Ազգային և հայրենանվեր գործունեության համար, շնորհվել է «Հայրենիքի ձայն» տիտղոսակոչում, ինչպես նաև՝ պարզեցատրվել «Վահագնի» հուշարձանի կողմ: 2015 թ. Հայկյան մրցանակաբաշխության ժամանակ շնորհվել է Հատուկ մրցանակ՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների շրջանակներում իրականացված «Եղեռն՝ եղեռնից հետո» ծրագրի համար: 2016 թ. ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից պարզեցատրվել է «Մոմիկ ճարտարապետ» ոսկե մեղալուծ՝ Հայկական ճարտարապետության ուսումնասիրության և հանրահռչակման գործում ներդրած նշանակալի ավանդի համար: 2017 թ. Հայկական աշխարհագրական նախագծի կողմից Արշավային մշակույթի զարգացման գործում մեծ ավանդ ունենալու համար արժանացել է «Անվերջ բացահայտվող Հայաստան» շնորհակալագրի: 2017 թ. արժեհամակարգային «Վերելք» կառույցի կողմից շնորհվել է Հայկ Ասատրյանի անվան ամենամյա մրցանակ՝ Ազգային ինքնաճանաչողության և ազգային ինքնակազմակերպման ասպարեզում նշանակալի աշխատանքներ կատարելու համար: 2018 թ. Հայկական աշխարհագրական նախագծին աջակցելու և ակտիվ մասնակցության համար արժանացել է «Ռանչպարների կանչը» շնորհակալագրի: 2018 թ. «Արարէ» հայագիտական հիմնադրամի կողմից հայանպաստ գործունեության համար արժանացել է շնորհակալագրի: 2019 թ. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կողմից արժանացել է շնորհակալագրի՝ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի՝ 2018–2019 ուստարվա գործունեությանը մեծապես աջակցելու համար:

Ս. Կարապետյանն այլևս մեզ հետ չէ: Անդառնալի է նրա կորուստը բոլորիս՝ ողջ հայության, սգակիր ընտանիքի, ընկերների, հարազատների և գործընկերների, անգամ անծանոթների համար: Սակայն անմահ է նա. նրա ազգանվեր գործունեությունը կհավերժի հայ ճարտարապետության երկնածիրում: Դարերին են այն հնարավորն ու անհնարինը, ինչ արեց, ինչ ժառանգություն թողեց հետագա սերունդներին՝ աշխատություններ, հողվածներ, մտորելու տեղիք տվող մտքեր, կարծիքներ, անելիքներ:

Հանգչի՛ր խաղաղությամբ, մե՛ծ հայ, հայ ճարտարապետության նվիրյալ...

ՀԱՍՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Պատմամանկավարչական հանրագիտություն 2020 № 1 Историко-филологический журнал

ՈՒՂԵՑՈՒՅՑ ԶԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԶԱՍԱՐ

«Պատմաբանասիրական հանդես»-ի էջերում լուսաբանվում են հայ ժողովրդի պատմության, գրականության, լեզվի, արվեստի ու մշակույթի, փիլիսոփայության հարցերը, պատմագրության, ընդհանուր բանասիրության և հայագիտության տեսական խնդիրները, հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական և մշակութային կապերը մյուս ժողովուրդների հետ:

Հանդեսն ունի հոդվածների, հաղորդումների, քննարկման ու բանավեճի, հրապարակումների, գրախոսության, մեր երախտավորները, մեր հոբելյարները, գիտական կյանք, լրատու բաժիններ: Հոդվածները տպագրվում են հայերեն և ռուսերեն՝ համապատասխան ամփոփումներով, անվճար:

Պարբերականը լույս է տեսնում 4 ամիսը մեկ անգամ, տարեկան 3 համար, յուրաքանչյուր համարի ծավալը 20 տպ. մամուլ (320 էջ):

Հանդեսի պաշտոնական կայքէջը՝ <http://academhistory.am/hy>
պատմաբանասիրական-հանդես.html

Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ patmhandes@rambler.ru,
patmhandes@yahoo.com

ՀՈՂՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

1. Հոդվածի ծավալը պետք է լինի մինչև 15 էջ (ավելի մեծ ծավալը՝ խմբագրության որոշմամբ), տեքստի լայնությունը՝ 12.5 սմ, երկարությունը՝ 21 սմ, միջտողային տարածությունը At least՝ 13:

2. Հայերեն տեքստը «Grqee Nor» տառատեսակով՝ շեղ (*italic*), ընդգծված տեքստը (բառը)՝ ուղիղ, 12 տառաչափով, ռուսերենը՝ «Times New Roman»՝ 11.5:

3. Հոդվածի վերնագիրը պետք է լինի «Arial Armenia» տառատեսակով, ՄԵԾԱՏԱՌԵՐՈՎ (հայերենի չափը 12, ռուսերենինը՝ 11), գրվում է կենտրոնում, իսկ դրա ներքևում՝ հեղինակի անուն-ազգանունը՝ ՄԵԾԱՏԱՌԵՐՈՎ (հայերենը՝ «Grqee Nor» տառատեսակով, չափը՝ 11, ռուսերենը՝ «Times New Roman»-ով, չափը՝ 10):

4. Հաջորդ տողում գրվում են «Բանալի բառեր»-ը՝ առնվազն 10 բառ կամ բառակապակցություններ (ուղիղ):

5. Հոդվածի վերջում տրվող ամփոփումները պետք է ունենան տեքստի սեղմ բովանդակությունը (կես էջի չափով կամ 6–7 նախադասություն): Եթե հոդվածը հայերեն է, ապա ամփոփումները պետք է լինեն ռուսերեն ու անգլերեն, իսկ եթե ռուսերեն է՝ հայերեն

և անգլերեն: Հայերենի ու անգլերենի տառաչափը 11.5, ռուսերենինը՝ 11:

6. Ամփոփումների տեքստից առաջ պետք է ՄԵԾԱՏԱՌԵՐՈՎ գրել հոդվածի վերնագիրը (տառաչափը՝ 11), ներքևում հեղինակի անուն-ազգանունը (կենտրոնում) և ՄԵԾԱՏԱՌԵՐՈՎ (տառաչափը՝ 10): Հաջորդ տողում՝ կենտրոնում, գրվում են համապատասխանաբար՝ «Ամփոփում», «Резюме», «Summary» բառերը ցրիվ, տառաչափը՝ 10: Յուրաքանչյուր ամփոփման տեքստից առաջ գրվում են համապատասխան լեզվով «Բանալի բառեր»-ը, իսկ տառաչափը՝ ամփոփման տեքստի տառաչափով: Բոլոր լեզուներով տրվող «Բանալի բառեր»-ը պետք է լինեն նույնական:

7. Հոդվածի տեքստի վերջում գրվում են հեղինակի (հեղինակներին) մասին հակիրճ տեղեկություններ՝ գիտական աստիճանը, աշխատավայրը, գիտական հետաքրքրությունների ոլորտը, հրատարակված աշխատանքների քանակը: Որից հետո գրվում է հոդվածի օգտագործված գրականության ցանկը՝ լատինատառ տառադարձմամբ (այբբենական կարգով):

8. Ռուսերեն ամփոփումից հետո ռուսերենով գրվում է հեղինակի մասին տեղեկությունը, իսկ անգլերենից հետո՝ անգլերենով:

ՀՂՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

ա) Հղումների տառաչափը. հայերենը՝ 11, ռուսերենը՝ 10.5, այլ լեզուներով՝ 11:

բ) Գրքի վրա հղման դեպքում գրվում է հեղինակի անվան սկզբնատառը, ազգանունը՝ ամբողջությամբ և ցրիվ, որից հետո գրվում է միջակետ, այնուհետև՝ մեծատառով գրքի վերնագիրն առանց չափերտների, ստորակետով՝ հրատարակության վայրը, թիվը, էջը:

գ) Ժողովածուների դեպքում նախ նշվում է օգտագործված հոդվածի վերնագիրը, գրվում է միջակետ ու անջատման գիծ, ապա գրվում է ժողովածուի վերնագիրը, խմբագրի կամ կազմողի տվյալները, հրատարակության վայրը, թիվը, էջը:

դ) Հղված ամսագրերի դեպքում տրվում է հոդվածի հեղինակի անուն-ազգանունը, վերնագիրը, այնուհետև գրվում է միջակետ ու անջատման գիծ, չափերտների մեջ նշվում է ամսագրի անվանումը, հրատարակության վայրը, թիվը, համարը, էջը: Թերթերի դեպքում չափերտների մեջ նշվում է թերթի անունը, այնուհետև՝ փակագծում հրատարակության վայրը, որից հետո՝ ամսաթիվը (օրինակ՝ 01. II. 1998): Վերը նշվածը վերաբերում է նաև ռուսերեն ու այլ լեզուներով հղումներին:

դ) Կայքերին տրվող հղումների դեպքում գրվում է հոդվածի կամ հոդվածի հեղինակի տվյալները և վերնագիրը, ապա գրվում է միջակետ ու անջատման գիծ, նշվում՝ կայքի հասցեն:

Հոդվածները գրախոսվում են, մերժման դեպքում չեն վերադարձվում:

РУКОВОДСТВО ДЛЯ АВТОРОВ

На страницах «Историко-филологического журнала» освещаются вопросы истории, литературы, языка, искусства и культуры, философии армянского народа, общетеоретические вопросы историографии, общей филологии и арменистики, политические, экономические и культурные связи армянского народа с другими народами.

Журнал имеет разделы статей, сообщений, обсуждений и дискуссий, публикаций, рецензий, наши заслуженные деятели, наши юбиляры, научная жизнь, хроника. Статьи печатаются на армянском и русском языках с соответствующими резюме, бесплатно.

Журнал выходит раз в 4 месяца, 3 номера в год, объем каждого номера – 20 печ. листов (320 с.).

Официальный сайт журнала: <http://academhistory.am/hy/սլոյմաբանական-հանդես.html>

Электронная почта журнала: patmhandes@rambler.ru,
patmhandes@yahoo.com

СТРУКТУРА И ТЕХНИЧЕСКОЕ ОФОРМЛЕНИЕ СТАТЬИ

1. Объем статьи должен быть до 15 страниц (бóльший объем – по решению редакции), ширина текста – 12,5 см, длина – 21 см, интервал At least – 13.

2. Армянский текст – шрифт «Grqee Nor», курсив (*italic*), выделенный текст (слово) – прямо, размер шрифта 12; русский текст – «Times New Roman» – 11,5.

3. Заглавие статьи – шрифт «Arial Armenia», прописными буквами (на армянском языке размер 12, на русском – 11), помещается в центре, под ним пишется имя и фамилия автора прописными буквами (на армянском языке шрифтом «Grqee Nor», размер 11, на русском – «Times New Roman», размер 10).

4. На следующей строке пишутся «Ключевые слова» – минимум 10 слов или словосочетаний (курсивом).

5. Резюме, прилагаемые к статье, должны заключать в себе ее краткое содержание (полстраницы или 6–7 предложений). Если текст статьи на армянском языке, то резюме должны быть на русском и английском языках, если текст статьи на русском, резюме – на армянском и английском. На армянском и английском языках размер шрифта 11,5, на русском – 11.

6. Перед текстом резюме пишется прописными буквами заглавие статьи (размер 11), ниже, в центре – имя и фамилия автора прописными

буквами (размер 10). На следующей строке, в центре пишется соответственно «Անժնվանում», «Резюме», «Summary» вразбивку, размер 10. Перед текстом каждого резюме даются «Ключевые слова» на соответствующем языке, размер шрифта такой же, как в тексте резюме. «Ключевые слова» на всех языках должны быть одинаковыми.

7. После текста статьи пишутся краткие сведения об авторе (авторах): ученая степень, место работы, сфера научных интересов, количество опубликованных работ. Затем помещается библиография статьи в латинской транслитерации (в алфавитном порядке).

8. После резюме на русском языке помещаются краткие сведения об авторе на русском языке, а после резюме на английском языке – на английском.

ОФОРМЛЕНИЕ СНОСОК

а) Размер шрифта: на армянском языке – 11, на русском – 10,5, на других языках – 11.

б) При ссылке на книгу, пишутся инициал имени автора, фамилия полностью, вразбивку, после чего ставится точка, затем без кавычек, с прописной буквы пишется заглавие книги, после запятой – место, год издания, страница.

в) При ссылке на сборник пишутся имя и фамилия автора, заглавие использованной статьи, ставятся точка и тире, затем пишется заглавие сборника, данные редактора или составителя, место, год издания, страница.

г) При ссылке на журналы пишутся имя и фамилия автора, заглавие статьи, затем ставятся точка и тире, пишется название журнала в кавычках, место, год издания, номер, страница. При ссылке на газеты пишется в кавычках название газеты, затем в скобках место издания, после чего указывается дата (например, 01. II. 1998). Вышеуказанное относится также к сноскам на русском и других языках.

д) При ссылке на сайт пишутся данные статьи или автора статьи, затем ставятся точка, тире, указывается адрес сайта.

Статьи рецензируются, в случае отказа не возвращаются.

A GUIDELINE FOR THE AUTHORS

In the pages of “Historical-Philological Journal” issues of the history, literature, language, art and culture, philosophy of Armenian people, theoretical questions of historiography, general philology and armenology, the political, economic and cultural ties of Armenian people with other nations are elucidated.

The journal has segments for articles, reports, discussions and debates, publications, reviews, our honoured workers, our jubilees, scientific life and news. Articles are published in Armenian and Russian in the journal with appropriate summaries and free of charge.

The periodical is published once for 4 months, 3 issues a year, the volume for each issue is 20 printing press (320 pages).

The official webpage of the Journal: <http://academhistory.am/hy>

Historical-Philological Journal: պատմաբանասիրական-հանդես.html

The email of the Journal: patmhandes@rambler.ru,
patmhandes@yahoo.com

THE STRUCTURE OF THE ARTICLE AND TECHNICAL DESIGN

1. The volume of the article should be up to 15 pages (in case of larger volume with the decision of the Editorial), the width of the text – 12.5 cm, length – 21 cm, line spacing - at least 1.3 cm.
2. The Armenian text should be in “Grqee Nor” font type, italic, the highlighted text (word) should be straight, with 12 font size, the Russian text should be in “Times New Roman” with 11.5 font size.
3. The title of the article should be in “Arial Armenian” font type, with CAPITAL LETTERS (the font size of Armenian text – 12, Russian text – 11), is put in the centre, and below it – the name and surname of the author in CAPITAL LETTERS (Armenian with “Grqee Nor” font type, the sizes – 11, Russian – “Times New Roman”, font size – 10).
4. In the next line the “Key words” – at least 10 words or word combinations (straight).
5. The summaries placed at the end of the article should have a brief content of the text (half of a page or 6-7 sentences). If the article is in Armenian then the summaries should be both in Russian and English. The font size for Armenian and English – 11.5, for Russian – 11.
6. Before the text of the summaries the title of the article should be written with CAPITAL LETTERS (font size: 11), below – the name and surname of the author (in the centre) with CAPITAL LETTERS. In the

centre of the next line, accordingly the words of «Ամփոփում», «Резюме», “Summary” are written in separate letters, with the font size of 10. Before each text of summary, the “Key words” are accordingly written in the given language, and the font size should be the same as the text of summary. The “Key words” should be identical in all languages.

7. At the end of the text of the article, brief information about the author (authors) are written – the scientific degree, workplace, the scope of scientific interests, the quantity of the published works, after which the list of the used literature is placed in Latin transliteration (in alphabetical order).
8. After the summary in Russian, the information about the author is placed in Russian, and accordingly, after the summary in English – the English one.

THE DESIGN OF REFERENCES

- a) The font size for footnotes; Armenian – 11, Russian – 10.5, other languages – 11.
- b) In case of a reference to a book, the initial letter of the author’s name and his/her surname in separate letters are written, after which a semicolon is put, then there come the title of the book without quotation marks, and with separated commas, the place, date and page of the publication.
- c) In case of collections of articles, firstly the title of the used article is mentioned, a semicolon and a dash are put, then the title of the collection of articles, the data of the editor or the compiler, the place, date and page of the publication are written.
- d) In case of referred journals, the name and surname of the article’s author, title are given, then a semicolon and a dash are put, the name of the journal, the place, date, issue and page of the publication are mentioned in quotation marks.
- e) In case of newspapers, the name of the paper, then the place and date are mentioned in brackets (for example 01. 02. 1998). The aforementioned points concern the references also in Russian and other languages.
- f) In case of references made to websites, the data of the article or the author of the article as well as the title are mentioned, then a semicolon and a dash are put, subsequently the website address is mentioned.

The articles are reviewed and in case of refusal they are not returned.

ՀԱՅԵՐԵՆ ԵՎ ՌՈՒՄԵՐԵՆ ԱՅՐՈՒԲԵՆՆԵՐԻ
ԳՐԱԴԱՐՉԱՅԻՆ ԼԱՏԻՆԱՏԱՌ ԱՂՅՈՒՄԱԿ

Հայերեն բնիկ	Eastern Armenian Transliteration	Western Armenian Transliteration	Русский	Russian Transliteration
ա	a	a	а	a
բ	b	p	б	b
գ	g	k	в	v
դ	d	t	г	g
ե	e	e	д	d
զ	z	z	е	e ye
է	e	e	ё	ë yë
ը	e	e	ж	zh
թ	t	t	з	z
ժ	zh	zh	и	i
ի	i	i	й	i y
լ	l	l	к	k
խ	kh	kh	л	l
ծ	ds	dz	м	m
կ	k	g	н	n
հ	h	h	о	o
ձ	dz	tz	п	p
ղ	gh	gh	р	r
ճ	j	j	с	s
մ	m	m	т	t
յ	h y –	–	у	u
ն	n	n	ф	f
շ	sh	sh	х	kh
ո	vo o	–	ц	ts
չ	ch	ch	ч	ch
պ	p	b	ш	sh
զ	dj j	ch	щ	shch
ր	r	r	ъ	”
ս	s	s	ы	y
վ	v	v	ь	”
տ	t	d	э	e
ր	r	r	ю	iu yu
ց	ts	ts	я	ia ya
ւ	v u	u		
փ	p	p		
ք	k	k		
և				
օ	o	o		
ֆ	f	f		

Երկհնչյուններ	Diphthongs
ու	u v
ոյ	ui oy o
այ	ai ay a
իւ	iu
յու	iu
եա	ia ya
յա	ia ya

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈՂՎԱԾՆԵՐ, ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

I

Մկրտիչ Դանիելյան – «Պատմաբանասիրական հանդես»-ի հիմնադիր խմբագիրը
(ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանի ծննդյան 110-ամյակի առթիվ).....3

ԽՐԻՍՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ԾՆԵՂՅԱՆ
200-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Աննա Ասատրյան – Ամենայն Հայոց կաթողիկոս Ս. Տ. Մկրտիչ Ա Վանեցի
Խրիմյանը և հայ երաժշտությունը.....24

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ
ՀԱՂԹԱՆԱԿԻ 75-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Դավիթ Գասպարյան – Հայրենական մեծ պատերազմի տարիների
հայ գրականությունը.....42

Լիլիթ Հովհաննիսյան – Հայկական հարցի 1919–1920 թթ. պատմության
լուսաբանումը Հայաստանի պատմագրության մեջ (1991–2019 թթ.)60

Հենրիկ Հովհաննիսյան – Դանիել Վարուժանի «Հարճը» պոեմի հերոսուհու
ենթադրելի նախատիպը81

II

Անուշավան Զաքարյան – Դավիթ Անանուն. մարդը և գործը (ծննդյան
140-ամյակի առթիվ).....90

Տիգրան Սիմյան – Մշակույթի պաշտպանության գրողների միջազգային
կոնգրեսի մշակութային-քաղաքական համատեքստը և մետանարատիվը
(հայ բանաստեղծ Վահրամ Ալազանի զեկուցման օրինակով) (ռուս.).....128

Մանե Մկրտչյան – Գեղարվեստական կրթության հարցերը «Գեղարվեստ»
հանդեսի էջերում141

Գուրգեն Խաչատրյան – Անձնանունները Կամենիցի հայկական դատարանի
արձանագրություններում (XVI դ.)149

Գոհար Վարդումյան – Ժողովրդական քրիստոնեության դրսևորումները
հայոց տոնական կյանքում163

Սիեր Քունունց, Ջոհրաբ Ըռքոյան – Արցախի Բերձոր գավառի պատմական
Հարար գյուղը187

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Ռուսլան Ցականյան – Փառնավազը Հայաստանի թագավո՞ր (մ. թ. ա. VII դարի վերջին քառորդ)	201
---	-----

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Հարություն Խուրանյան – Ակադեմիկոս Նիկոլոզ Բերձենիշվիլու հուշերը Ի. Վ. Ստալինի հետ հանդիպման մասին (1945 թ. հոկտեմբեր, Սոչի).....	212
--	-----

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աելիտա Դոլուխանյան – Անուշավան Ջաքարյան. Ռուս կոմպոզիտոր Թոմաս Հարտմանը և Կոմիտասը	233
Սուսաննա Հովհաննիսյան – Հովհաննես Թումանյան. Նորահայտ փաստաթղթեր..	237
Գեղամ Հովհաննիսյան – Վահան Մելիքյան. Արևմտահայ հասարակական- քաղաքական կյանքը 1917–1918 թթ.: Էրզրումի պաշտպանությունը և անկման պատճառները 1918 թ.	242
Արտակ Վարդանյան – Վիկտոր Կատվալյան. Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր. գիրք 1. Գեղարքունիքի մարզ.....	249
Արսեն Բոբոխյան – Գոհար Կարագյոզյան. Նախիջևանը եվրոպացի ճանապարհորդների ուղեգրություններում (XIII–XVII դդ.)	252
Գայանե Ամիրադյան – Կոմիտասական (ժողովածու), հ. 3.....	258

ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

Անուշավան Ջաքարյան – Մեծանուն գիտնականը, ազգային-պետական գործիչը (Գ. Բ. Ղարիբջանյանի ծննդյան 100-ամյակի առթիվ).....	263
---	-----

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Աննա Ասատրյան – «Կոմիտաս – 150» գիտական նստաշրջան.....	273
---	-----

ԼՐԱՏՈՒ

Հասմիկ Հովհաննիսյան – Սամվել Կարապետյան	280
Ուղեցույց հեղինակների համար	286
Ուղեցույց հեղինակների համար (ռուս.)	288
Ուղեցույց հեղինակների համար (անգլ.)	290
Հայերեն և ռուսերեն այբուբենների գրադարձային լատինատառ աղյուսակ.....	292

СОДЕРЖАНИЕ

СТАТЬИ, СООБЩЕНИЯ

I

- Մկրտիչ Դանիելյան** – Редактор-основоположник «Историко-филологического журнала»
(к 110-летию со дня рождения академика М. Г. Нерсисяна).....3

К 200-ЛЕТИЮ СО ДНЯ
РОЖДЕНИЯ ХРИМЯН АЙРИКА

- Աննա Ասատրյան** – Католикос Всех Армян Մկրտիչ I Բանեցի Հրիմյանի և
արмянская музыка..... 24

К 75-ЛЕТИЮ ПОБЕДЫ
В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ

- Դավիթ Գասպարյան** – Армянская литература времен Великой Отечественной войны42

- Լիլիթ Օգանիսյան** – Освещение истории Армянского вопроса 1919–1920 гг.
в историографии Армении (1991–2019 гг.)60

- Գենրիկ Օգանիսյան** – Предположительный прототип героини поэмы «Наложница»
Даниела Варужана81

II

- Անուշավան Զաքարյան** – Դավիթ Անանուն: անձը և գործը (к 140-летию со дня
рождения).....90

- Տիգրան Տիմոսյան** – Культурно-политический контекст и метанарратив международного
конгресса писателей в защиту культуры (на примере доклада армянского поэта
Ваграма Алазана) (на русск. яз.)128

- Մանե Մկրտչյան** – Вопросы художественного образования на страницах журнала
«Гегарвест»141

- Գրիգոր Խաչատրյան** – Личные имена в армянских судебных протоколах
Каменицы (XVI в.)149

- Գոար Վարդույան** – Проявления народного христианства в праздничной жизни армян163

- Միգր Կումունց, Զոգրաբ Էրկոյան** – Историческое село իԱրար Арцахского
уезда Бердзор.....187

ОБСУЖДЕНИЯ

- Րուսլան Շահնազյան** – Парнаваз – царь Армении? (последняя четверть VII века до н. э.) ...201

ПУБЛИКАЦИИ

- Арутюн Худанян** – Воспоминания академика Николоза Бердзинишвили о встрече с И.В. Сталиным (октябрь 1945 г., Сочи)212

РЕЦЕНЗИИ

- Аэлига Долуханян** – Анушаван Закарян. Русский композитор Фома Гартман и Комитас..233
Сусанна Ованесян – Ованес Туманян. Нововыявленные документы237
Гегам Оганнисян – Ваан Меликян. Западноармянская общественно-политическая жизнь 1917–1918 гг. Оборона и причины падения Эрзрума 1918 г.242
Артак Варданян – Виктор Катвалян. Диалектная панорама Республики Армения, книга 1: Гегаркуникская область.249
Арсен Бобохян – Гоар Карагезян. Нахичеван в записках европейских путешественников (XIII–XVII вв.)252
Гаянэ Амирагян – Комитасиана (сборник), т. 3258

НАШИ ЗАСЛУЖЕННЫЕ ДЕЯТЕЛИ

- Анушаван Закарян** – Именитый ученый, национально-государственный деятель (к 100-летию со дня рождения Г. Б. Гарибджаняна)263

НАУЧНАЯ ЖИЗНЬ

- Анна Асатрян** – Научная сессия «Комитас–150».....273

ХРОНИКА

- Асмик Оганесян** –

Самвел Карапетян

280
 Руководство для авторов.....286
 Руководство для авторов (на русск. яз.)288
 Руководство для авторов (на англ. яз.)290
 Таблица латинской транслитерации армянского и русского алфавитов292

CONTENTS

ARTICLES, REPORTS

I

- Mkrtich Danielyan** – Editor-Founder of the “Historical-Philological Journal” (To the 110th birthday anniversary of Academician M. G. Nersisyan)3

TO THE 200TH BIRTH ANNIVERSARY
OF KHRIMYAN HAYRIK

Anna Asatryan – Catholicos of All Armenians Mkrtych I Vanetsi Khrimyan
and Armenian music24

TO THE 75TH ANNIVERSARY OF THE VICTORY
OF THE GREAT PATRIOTIC WAR

David Gasparyan – Armenian literature of the times of the Great Patriotic War.....42

Lilit Hovhannisyán – The elucidation of the 1919–1920 history of the Armenian Question
in the historiography of Armenia (1991–2019)60
Henrik Hovhannisyán – The assumptive prototype of the heroine of the poem
“Concubine” by Daniel Varuzhan.....81

II

Anushavan Zakaryan – David Ananun: the man and his work (On the occasion of his
140th birth anniversary)90
Tigran Simyan – The cultural-political context and metanarrative of the International
Congress of the Writers for the defense of culture
(On the example of the report by the Armenian poet Vahram Alazan)128
Mane Mkrtychyan – Problems of art education on the pages of journal “Gegharvest”141
Gurgen Khachatryan – Personal names in Armenian court records of Kamenets
(16th c.)149
Gohar Vardumyan – Manifestations of folk Christianity in the festive life of Armenians.....163
Mher Kumunts, Zohrab Erkoyan – Historical village Harar in the Berdzor district
of Artsakh187

DISCUSSIONS

Ruslan Tsakanyan – Parnawaz – the king of Armenia?
(The last quarter of the 7th century B.C.)201

PUBLICATIONS

Harutyun Khudanyan – The memoirs of Academician Nikoloz Berdzenishvili on
the meeting with I. V. Stalin (October 1945, Sochi).....212

REVIEWS

Aelita Dolukhanyan – Anushavan Zakaryan: Russian composer Thomas Hartmann and Komitas	233
Susanna Hovhannisyan – Hovhannes Tumanyan; Newly-found documents	237
Gegham Hovhannisyan – Vahan Melikyan. The social-political life of Western Armenians in 1917–1918; the defense of Erzurum and the reasons for the fall in 1918.....	242
Artak Vardanyan – Viktor Katvalyan. Dialectical overview of the Republic of Armenia, Book I; Gegharkunik province.....	249
Arsen Bobokhyan – Gohar Karagyozyan. Nakhijevan in the travelogues of European travelers (13th-17th cc.)	252
Gayane Amiraghyan – Komitasiana (digest), vol. 3.....	258

OUR HONOURED SCHOLARS

Anushavan Zakaryan – The renowned scientist, national-state figure (On the occasion of G. B. Gharibjanyan’s 100th birthday anniversary)	263
---	-----

SCIENTIFIC LIFE

Anna Asatryan – “Komitas – 150”: Scientific session	273
--	-----

NEWS

Hasmik Hovhannisyan – <table border="1" style="display: inline-table; vertical-align: middle;"><tr><td>Samvel Karapetyan</td></tr></table>	Samvel Karapetyan	280
Samvel Karapetyan		
A guidance for the authors	286	
A guidance for the authors (Russ.)	288	
A guidance for the authors (Eng.)	290	
Latin transliteration table of the Armenian and Russian alphabets.....	292	

Հայերեն բաժնի խմբագիրներ

Ուսերեն բաժնի խմբագիր
Հայերենի սրբագրիչ
Անգլերենի խմբագիր
Համակարգչային ձևավորում և էջադրում

Редакторы армянского отдела

Редактор русского отдела
Корректор армянского отдела
Редактор английского отдела
Компьютерный дизайн и пагинация

Editors of Armenian segment

Editor of Russian segment
Proofreader of Armenian segment
Proofreader of English segment
Computer design and pagination

Թամար Ջաքարյան
Լիանա Օհանյան
Կարինե Ալեքսանյան
Աղավնի Շահինյան
Հարություն Խուդանյան
Գոհար Հովհաննիսյան

Тамар Закарян
Лиана Оганян
Карине Алексанян
Агавни Шагинян
Арутюн Худанян
Гоар Оганнисян

Tamar Zakaryan
Liana Ohanyan
Karine Aleksanyan
Aghavni Shahinyan
Harutyun Khudanyan
Gohar Hovhannisyann

Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան-19, Մարշալ Բաղրամյան պող. 24-գ, հեռ. (010)581872
Адрес редакции: 0019, Ереван-19, пр. Маршала Баграмяна, 24 г, тел. (010)581872
Address: 24G Marshal Baghramian av., 0019, Yerevan, Armenia, tel. (010)581872

Հանդեսի պաշտոնական կայքէջը՝ <http://academhistory.am/hy/պատմաբանասիրական-հանդես.html>
Официальный сайт журнала: <http://academhistory.am/hy/պատմաբանասիրական-հանդես.html>
Official site of the journal: <http://academhistory.am/hy/պատմաբանասիրական-հանդես.html>

Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ patmhandes@rambler.ru, patmhandes@yahoo.com
Электронная почта журнала: patmhandes@rambler.ru, patmhandes@yahoo.com
E-mail of the journal: patmhandes@rambler.ru, patmhandes@yahoo.com

*Հրատ. պատվեր № 1011
Ստորագրված է տպագրության 22.05.2020 թ.:
Տպագրական 19 մամուլ: Թուղթ №1, 70x100:*

ՀՀ ԳԱԱ տպարան, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:

Изд. заказ № 1011
Подписано к печати 22.05.2020 г.
Печ. 19 л. Бумага № 1, 70x100.

Типография НАН РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24.